ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2(2) 2018

Երևան - 2019

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Մ. Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Կ. Ա. Գևորգյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Վ. Հովհաննիսյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Վ. Ն. Այվազյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
Երևանի պետական
համալսարան

Խմբագրության հասցեն՝ ՀՀ,
0025, Երևան, Ալեք
Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության
ֆակուլտետ:
Հեռ.՝ (060) 71-02-43

Էլ. կայք՝ publications.ysu.am
publishing.ysu.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝
համամիտ չլինելով
հեղինակների
տեսակետներին:

e-mail: law@ysu.am
Տպագրական 29 մամուլ:

Տպաքանակը՝ 100
Հանձնված է շարվածքի՝
15.01.2019
Հանձնված է տպագրության՝
02.05.2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արթուր Վաղարշյան
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ..... 7
Ալվարդ Ալեքսանյան
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ .. 17
Կարեն Ամիրյան
ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 29
Հայկ Մարտիրոսյան
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ... 41
Վիկտորյա Օհանյան
ՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ. ՓԱՓՈՒԿ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ
(NUDGE THEORY) ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ..... 49
Վարդան Այվազյան
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 65
Անահիտ Մանասյան
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀԻՐԱՎԱԿԱՆ
ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 79

Սամվել Մուրադյան
ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ 93
Գևորգ Դանիելյան
ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ 111
Կարեն Հակոբյան
ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԺԵՔԸ 129
Հասմիկ Ենգոյան
ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԻՄՔ 141
Սայադ Բաղալյան
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 150
Արսեն Հովհաննիսյան
ՀԱԿԱՄԱՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳԵԼՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 162
Արմենուհի Չիֆլիկյան
ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 176
Սոնա Թևանյան
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՆ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՕԲՅԵԿՏ 190
Վահե Հովհաննիսյան
ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ 203

Սերգեյ Մեղրյան
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ (ԳՈՐԾՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) 216
Аида Искоян
ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ИСПОЛЬЗОВАНИЯ И ОХРАНЫ РАСТИТЕЛЬНОГО МИРА СЕНОКОСОВ И ПАСТБИЩ 238
Տիգրան Մարկոսյան
ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 250
Օլիմպիա Գեղամյան
ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ՈՒ ԱՌԿԱ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ... 262
Հեղինե Գրիգորյան
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀՀ-ՈՒՄ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ 276
Տիգրան Խաչիկյան
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ Ի ՊԱՇՏՈՆԵ ՊԱՐԶՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 292
Աշխեն Ղարսլյան
ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 302
Աննա Մարգարյան
ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱՄ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 320

Աննա Վարդապետյան
ԲԼԱՆԿԵՏԱՅԻՆ ՆՈՐՄԵՐՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 335
Ժենյա Ստեփանյան
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԵՎ ԴԱՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 352
Գոհար Հակոբյան
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԴԵՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ 370
Սամվել Դիլբանդյան
ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 386
Սերգեյ Մարաբյան
ՀԵՏԱԽՈՒՉՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ՉԵՐԲԱԿԱԼԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ՀԵՌԱԿԱ (ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ) ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)..... 396
Վահե Ենգիբարյան
ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 415
Նելլի Աղաբաբյան
ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 430
Արման Սարգսյան
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 454

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Արթուր Վաղարշյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակի առիթով նկարագրական-փաստագրական շատ հրապարակումներ եղան: Եղան նաև ելույթներ, որոնք ամեն ինչ չափում ու հաշվարկում էին փողով ու դրանից ելնելով՝ հարձակում գործում Հայ առաքելական սուրբ եկեղեցու վրա, բացասական գնահատում նրա դերակատարությունը պատմության ընթացքում: Այս կապակցությամբ նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ XX դարասկզբին հայոց պետականության հիմնադրման նախադրյալներին, այսինքն՝ գործոններին, որոնք պայմանավորեցին ազգային պետության հիմնադրումն ու կայացումը:

Հայագիտության մեջ տարածված հիմնական տեսակետը Հայաստանի անկախացումը և պետության հիմնադրումը կապում է միայն երկու գործոնի հետ՝ ա) Առաջին համաշխարհային պատերազմը և ռուսական հեղափոխությունները, բ) 1918 թ. մայիսյան հերոսական պայքարը[1]:

Ակնհայտ է, որ պատմագիտական տեսանկյունից հարցի բովանդակությունն էապես նեղացվում է: Փորձենք պետականագիտության դիրքերից վեր հանել հայոց պետության հիմնադրման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններն ու նախադրյալները և ցույց տալ, որ այդ գործընթացը և համապատասխան նախադրյալների ստեղծումը հայ ժողովրդի պատմության հազարամյակներ տևող զարգացումների հետևանք են:

---

[1] Այդ մասին տե՛ս Հայոց պատմություն/ Խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշներ, -Եր.: «Զանգակ-97», 2010, Հ. 4, Գիրք I, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.)/ Խմբագրակազմ՝ Վ. Ղազախեցյան և ուրիշներ, էջ 18, Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, պրոֆ. Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ, -Եր., 2012, էջ 521-522:

Որպեսզի վեր հանենք, թե որոնք են Առաջին Հանրապետության հիմնադրման նախադրյալները, պետք է հասկանանք, թե ինչ է պետությունը: Պետության դասական, համառոտ բնութագիրը ենթադրում է երեք համակարգային տարր՝ տարածք, բնակչություն, կառավարման ապարատ:

«Պետությունը կատեգորիա է, որի միջոցով նշվում է ինստիտուտների, մարմինների և կանոնների հատուկ (մասնագիտացված) համակարգը, որը բնակչությունից առանձնացված, իշխանության, կառավարման և կարգուկանոնի ապահովման կազմակերպություն է: Այն պետք է օժտված լինի հետևյալ բնութագրերով՝ ա) ինքնիշխանություն (ինքնավարություն), բ) գերակայություն, լեգիտիմություն և իրական իշխանություն որոշակի տարածքի և անձանց շրջանակում, գ) հնարավորությամբ հարկադրել իր պահանջների կատարումը, ինչպես նաև փոխել հարաբերությունները և նորմերը»: Պետության այս բնորոշման հեղինակը Ե. Գրինինն է[1]: Մեկ այլ տեսաբան՝ Ի. Հոմերովը, պետությունը համարում է «տարածքային, լեգալ, իրավասուբյեկտ, ինքնիշխան, հրապարակային, համընդհանուր կազմակերպություն»[2]:

Պետությունը որպես կառավարման ապարատ (կառուցակարգ) օժտված է հրապարակային քաղաքական իշխանությամբ, որն ունի մի քանի ձևականացված հատկանիշներ՝

ա) հրապարակային քաղաքական իշխանությունը միավորում է իշխանության **հպատակներին** (ժողովրդին, երկրի բնակչությանը) **տարածքային հատկանիշով**, ստեղծում է ենթարկվածների տարածքային կազմակերպություն, քաղաքական ասոցիացիա՝ միավորված հանրային-իշխանական հարաբերություններով ու ինստիտուտներով,

բ) հրապարակային քաղաքական իշխանությունն իրականացվում է հատուկ ապարատի կողմից, որը չի համընկնում հասարակության բոլոր անդամների հետ, գոյություն ունի հարկերի շնորհիվ:

---

[1] Տե՛ս **Гринин Л.Е.,** Государство и исторический процесс: Эпоха формирования государства: Общий контекст социальной эволюции при образовании государства. Изд. 2-ое, перераб. и доп., М., Изд. ЛКИ, 2011, էջ 24:

[2] Տե՛ս **Гомеров И.Н.,** Государство и государственная власть: предпосылки, особенности, структура,М., 2002, էջ 487:

Այդ ապարատը կառավարում է հասարակությունը հարկադրանքի, ընդհուպ բռնության միջոցով,

գ) հրապարակային քաղաքական իշխանությունն օժտված է ինքնիշխանությամբ և օրենսդրման մենաշնորհով[1]:

Ինչպես նկատում ենք, բոլոր տեսաբանները հատկապես շեշտադրում են պետության վերը նշված երեք համակարգային տարրերը: Տարածքը և բնակչությունը պետության հիմնադրման բնական նախադրյալներն են[2]: Պետությունը պետք է ունենա երկրագնդի ցամաքի որևէ մաս, որտեղ կարող է հռչակվել, հիմնադրվել և, ի վերջո, հաստատել իր գերիշխանությունը: Գերիշխանության հասնելու միջոցը կառավարման կազմակերպական կառույցն է, իսկ օբյեկտը՝ աշխարհագրական տարածքն ու այնտեղ ապրող բնակչությունը: Հետևաբար, հպատակ բնակչությունը պետության առաջացման, հիմնադրման, նրա ինքնիշխանության հաստատման բնապատմական, սոցիալական անհրաժեշտ հիմքն է:

Հայ ժողովրդի դեպքում խոսքը կարող էր գնալ ազգային-հայկական պետության հիմնադրման մասին, իսկ դա նշանակում էր, որ բնակչության հիմնական մասը պետք է իր ինքնագիտակցությամբ իրեն համարեր հայ, արդյունքում դրսևորեր քաղաքական համաժողովրդական կամք՝ ունենալու ազգային պետություն: Հակառակ դեպքում, այսինքն՝ եթե չկար սոցիալական հիմքը, ազգային պետության հիմնադրումը մնում էր հարցական, իսկ մեր օրերում այդ գործոնը կարող է հարցականի տակ դնել առկա պետության գոյությունը:

Հայոց պետության վերածննդի առաջնային նախադրյալը, հիմքն էթնիկ իմաստով ազգն էր: Այս տեսանկյունից պատմական տարօրինակությունը, զարմանահրաշ օրինաչափությունն այն էր, որ հայ ժողովուրդը, որի հայրենիքը բզկտված ու բաժանված էր տարբեր քաղաքակրթություններին պատկանող մի քանի պետությունների միջև, լինելով սփռված երկրագնդի և հայոց աշխարհի տարբեր մասերում, այսինքն՝ չլինելով համախմբված, չլինելով

[1] Տե՛ս Проблемы общей теории права и государства. Под общ. ред. В.С. Нерсесянца, М., 1999, էջ 83:

[2] Տե՛ս **Վաղարշյան Ա.,** Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ, Եր., Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 66-70:

միասնական տարածքային, քաղաքական ու տնտեսական ընդհանրություն, XIX դարում կարողացավ դառնալ ազգ՝ ընդհանրություն, որին բնորոշ էին միասնական էթնիկ ինքնագիտակցությունը, լեզուն, մշակույթը, կրոնը և այլն:

Այնպես որ՝ պետութենագիտության տեսանկյունից հայոց պետության վերածննդի, հիմնադրման նախադրյալներն ու պատճառներն էին ոչ միայն Առաջին աշխարհամարտը, ռուսական հեղափոխությունը, Մայիսյան հերոսամարտերը, այլ նաև սոցիալական նախադրյալը, առաջին հերթին՝ հայոց ազգի ձևավորումը, իսկ այնուհետև՝ նրա հատված առ հատված կենտրոնացումն Արևելյան Հայաստանում: Այս նախադրյալներից հայ ազգի կազմավորման գործում գլխավոր դերակատարը Հայ առաքելական սուրբ եկեղեցին էր և հայոց հավատքը: Ազգությամբ հայ բնակչության կենտրոնացման համար պարտական ենք Ռուսական կայսրությանն ու Հայ առաքելական սուրբ եկեղեցուն, նրանց վարած քաղաքականությանը, որովհետև նրանք են իրականացրել հայահավաքությունը կամ նպաստել դրան[1]:

Այսպիսով, մեր կարծիքով, որպեսզի ցամաքային տարածքի որևէ հատվածում գտնվող բնակչությունը կարողանա հռչակել ազգային պետություն, ապա դրա համար անհրաժեշտ են մի շարք ներքին և արտաքին նախադրյալներ, մասնավորապես՝

ա) ազգային մշակութային-կրթական,

բ) կրոնական-ազգային,

գ) ազգային քաղաքական ինքնակազմակերպում,

դ) ռազմական-պաշտպանական,

ե) արտաքին-քաղաքական:

Միայն այս բոլոր նախադրյալների ու գործոնների համակցության մեջ էր հնարավոր ստեղծել ազգային պետություն և ապահովել ազգի հետագա երաշխավորված հարատևումը:

---

[1] Այդ վերաբնակեցումը սկսվեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց անմիջապես հետո՝ Պարսկաստանից մոտ 45 հազար մարդ, Արևմտյան Հայաստանից մոտ 80 հազար մարդ և այդպես շարունակ (տե՛ս Հայոց պատմություն/ Խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշներ, Եր., «Զանգակ-97», 2010, Հ. 3, Գիրք I, Նոր ժամանակաշրջան (XVII դարի կես - XIX դարի վերջ)/ Խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշներ, էջ 214-220, 254-261):

Պետականության հիմնադրման ազգային մշակութային-կրթական նախադրյալը: Ազգային պետության ինչպես հիմնադրումը, այնպես էլ գոյությունը սերտ կապի մեջ են մշակույթի ու կրթության հետ: Ազգային մշակութային-կրթական նախադրյալի հիմքերը դրվեցին հայոց գրերի, հայ գրականության ստեղծմամբ, շարունակվեցին միջնադարյան վանական համալսարաններում և բուռն զարգացում ապրեցին XIX դարում, առաջին հերթին՝ հայ ծխական հոգևոր դպրոցներում, իսկ այնուհետև՝ աշխարհիկ կրթական կազմակերպություններում: Այս նախադրյալի պատմությունը հայագիտության մեջ բավականին լավ ուսումնասիրված է, որի պատճառով մանրամասներ չենք թվարկում[1]: Ուզում ենք փաստել, որ թվարկված կառույցները խթանեցին հայ մշակույթի և արվեստի բոլոր ոլորտների բուռն զարգացումը, առանց որի չի կարող լինել կամ կայանալ որևէ ազգ: Անհերքելի փաստ է, որ այդ գործընթացում կարևոր դերակատարություն ուներ Հայ առաքելական սուրբ եկեղեցին:

Մշակույթը և ազգային կրթությունն այնքան կարևոր դեր ունեն պետության հիմնադրման հարցում, որ այն ժողովուրդները, որոնք չունեին դրանք XX դարի սկզբին, չկարողացան ունենալ իրենց պետությունը: Օրինակ կարող են ծառայել Ռուսական կայսրության բազմաթիվ ժողովուրդներ, հենց թեկուզ ներկայիս Ադրբեջանի տարածքի աղվանական կոչված բազմաթիվ ժողովուրդները, որոնք չկարողացան անել դա, իսկ այնուհետև ուծվեցին:

Պետականության հիմնադրման կրոնական-ազգային նախադրյալը: Կրոնն ընդհանրապես ժողովրդի և (կամ) ազգի կայացման, իսկ որոշակի դեպքերում նաև պետության ստեղծման գործում էական դերակատարություն ունի, օրինակ՝ Արաբական Խալիֆայության կազմավորման հիմնական գործոնը մահմեդականությունն էր: Բայց որոշակի իրավիճակներում կրոնը կարող է խոչընդոտել, արգելակել ինչ-որ ժողովրդի պետության կազմավորումը ու կայացումը: Որպես օրինակ բերենք քրդերին, որոնց մահմեդական ամբողջատիրական կրոնամշակութային գործոնը խեղդեց, չեզոքաց-

[1] Հայ դպրոցի ու կրթության պատմական զարգացման մասին սկսած 17-րդ դարից տե՛ս Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, պրոֆ. Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ, Եր., 2012, էջեր 188-189, 288-289, 474-481:

րեց: Արդյունքում քանակով լինելով հայերից շատ ավելի, ինչպես նաև Փոքր Ասիայի որոշ հատվածներում համահավաք ապրող՝ քրդերը չկարողացան հիմնել իրենց պետությունը և մինչև հիմա էլ չեն կարողանում:

Մեր դեպքում ազգային-քրիստոնեական հավատքը նպաստեց հայ մարդու ինքնագիտակցության ձևավորմանը, արդյունքում դրանով նպաստեց նաև պետականության կայացմանը, առաջին հերթին՝ գաղափարական առումով, իսկ այնուհետև՝ կազմակերպականորեն, այսինքն՝ պետականակերտությանը զանգվածների մասնակցությամբ կամ դրան նպաստելով:

Ազգային քաղաքական ինքնակազմակերպումը՝ որպես պետականության հիմնադրման նախադրյալ: Միայն մշակութային, ազգային գաղափարական հիմքերը բավարար չեն պետության ստեղծման համար: Դրա համար անհրաժեշտ են ժողովրդի կամ ազգի կազմակերպում և առաջնորդություն: Այս նախադրյալը կարելի է անվանել ազգային-քաղաքական ինքնակազմակերպում: Դրա կազմակերպական ձևն ազգային քաղաքական կուսակցություններն էին, որոնք ձևավորվեցին XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան, իսկ այնուհետև՝ Արևելյան Հայաստանում: Դրանցից ոմանք ինքնուրույն ազգային էին, մյուսները՝ համառուսական կուսակցությունների սեկցիաներ[1]: Հենց այդ քաղաքական ուժերն էին առաջնորդում հայ ժողովրդին, նրանք 1917 թ. հոկտեմբերին կազմակերպեցին Արևելյան Հայաստանի Հայոց ազգային համախորհրդակցության ընտրությունները, ձևավորեցին Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը, տեղական ազգային խորհուրդները[2]:

---

[1] Հայ ազգային խմբակների ու կազմակերպությունների, ազգային կուսակցությունների ձևավորման ու գործունեության պատմությունը տե՛ս Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, պրոֆ. Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ, Եր., 2012, էջ 354-394:

[2] Առաջին Հանրապետության հիմնադրման քաղաքական իրավական գործընթացի, կառավարման համակարգի ձևավորման կազմակերպական-իրավական նախադրյալների, Հայոց ազգային համախորհրդակցության, Ազգային ժողովի, Ազգային խորհուրդների մասին տե՛ս Վաղարշյան Ա. Գ. Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.) /Ա. Գ. Վաղարշյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 18-32:

Քաղաքական ուժերի դերակատարությունը պետության հիմնադրման գործընթացում շատ էական էր: Անիշխանության ու քաոսի պայմաններում նրանք կարողացան արտահայտել ազգի կամքն ու իղձերը, կազմակերպել ժողովրդին, իրականացնել պետականակերտությունը, ստանձնել նրա ղեկը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ազգային քաղաքական ուժերի ու խմբերի ձևավորման առաջին և հիմնական նախադրյալն ազգային կրթական համակարգն էր, որը «թողարկում» էր գրագետ, կրթված հայեր: Եթե չլինեին ազգային ոգով կրթված հայերը, չէին լինի նաև հայ ազատագրական խմբակներն ու քաղաքական կուսակցությունները: Հետևաբար, քաղաքական նախադրյալի հիմքում ևս ընկած էին հայկական մշակույթն ու կրթությունը:

Պետականության հիմնադրման ռազմական-պաշտպանական նախադրյալը: Այս նախադրյալը սերտորեն կապված է քաղաքական-կազմակերպական նախադրյալի հետ: Ռազմապաշտպանական համակարգի կազմակերպական հիմքերը հայ կամավորական գնդերն ու հայդուկական խմբերն էին[1]: Դրանց հավաքագրման հիմնական գործոնն ազգային հայրենասիրական նվիրյալությունը, ազատագրական ոգին ու նկրտումներն էին, իսկ սրանց հիմքում նորից ու նորից ընկած էր կամավորականների ազգային-մշակութային, նվիրական հոգեմտակերպը:

Եթե հայոց պետության կառույցը պետք է նոր ստեղծվեր, Քաջազնունու խոսքերով ասած՝ զրոյից, ապա հայկական բանակը, դեռևս պետությունը չհիմնադրած, արդեն առկա իրողություն և փաստ էր: Պատկերացրեք, թե ինչպիսին կլիներ Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագիրը, եթե ռազմաճակատում 1918 թ. չլինեին հայկական գնդերը: Տարբերությունն Առաջին և Երրորդ Հանրապետությունների միջև այն է, որ 1918 թ. պետության կառուցակարգի տարրերից գրեթե ոչինչ չունեինք՝ բացի բանակից, իսկ 1990 թ. առկա էին պետության կառուցակարգի գրեթե բոլոր տարրերը՝ բացի բանակից:

Պետականության հիմնադրման արտաքին-քաղաքական նախադրյալը: Այս նախադրյալը Հին աշխարհում որևէ նշանակություն

[1] Հայ հայդուկական խմբերի ու կամավորական գնդերի մասին տե՛ս Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, պրոֆ. Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ, Եր., 2012, էջ 421-434, 463-473:

չուներ պետության կազմավորման կամ առաջացման գործում: Սակայն նոր և նորագույն դարաշրջանում այն դարձավ պետության հիմնադրման էական գործոն: Բայց միևնույն է, այն որոշակի իրավիճակներում ընդամենը նպաստող գործոն է, քանզի եթե ազգը չունի պետականության հիմնադրման մնացած նախադրյալները, ապա ոչ մի արտաքին-քաղաքական իրավիճակ չի կարող կերտել ազգային պետություն: Միայն վերը թվարկված բոլոր նախադրյալների առկայության դեպքում, եթե կան արտաքին քաղաքական նպաստավոր պայմաններ, ապա օտարի տիրապետության տակ գտնվող ազգը կարող է իրեն հռչակել անկախ և համապատասխան իրավիճակում ճանաչվել միջազգային հանրության կողմից: Օրինակ՝ ԽՍՀՄ փլուզման պայմաններում արտաքին քաղաքական նախադրյալներ ստեղծվեցին Հայաստանի անկախության համար: Գործընթացի շարունակությունը բերեց ՀՀ միջազգային ճանաչմանը: Նույն գործոնները դեր խաղացին Արցախի Հանրապետության կայացման համար: Սակայն բոլոր նախադրյալներից այստեղ առաջնային դարձավ ռազմական-պաշտպանականը: Պետությունն ստեղծված է, սակայն դրա միջազգային ճանաչումը չկա: Չճանաչված Արցախի Հանրապետության գոյության արտաքին-քաղաքական երաշխիքը Հայաստանի Հանրապետությունն է: Բայց պետք է նկատի ունենալ, որ միևնույն ժամանակ Արցախի Հանրապետության ներքին կայացումը, պաշտպանունակությունը ևս երաշխիք են ապագայում միջազգային ճանաչման հասնելու համար: Եթե Առաջին Հանրապետությունը չճանաչվեր միջազգայնորեն, որը, ի միջի այլոց, անցել է մի քանի փուլեր, ապա նորաստեղծ պետությունը կզրկվեր գոյության արտաքին նպաստավոր պայմաններից: Ի վերջո, այն կործանվեց հիմնականում ոչ բարենպաստ արտաքին քաղաքական գործոնների հետևանքով:

Պետության հիմնադրման տնտեսական նախադրյալի մասին: Պետության հիմնադրման վերը թվարկված նախադրյալների մեջ չկա տնտեսականը, որովհետև տնտեսական գործոնը կամ պատճառը էական էր միայն պետության առաջացման վաղնջական, սկզբնական, բայց ոչ նոր և նորագույն շրջանում: Տնտեսականն էական գործոն է դառնում պետության գոյության ընթացքում, որովհետև դրա կենսագործունեության նյութական հիմքը բյուջեն է: Իսկ արդեն արդի աշխարհում տնտեսական գործոնն այդքան էլ էական չէ պետություն հռչակելու համար: Համենայն դեպս մեր դեպքում

այդպես է եղել: Որպես օրինակ՝ կարող ենք բերել հրեաներին, որոնք արդեն մի քանի հարյուրամյակ գտնվում էին աշխարհի ֆինանսատնտեսական բարձունքներում, սակայն ազգային պետությունը հիմնադրեցին միայն XX դարի երկրորդ կեսին, այն էլ համաշխարհային հանրության բարի կամքով ու էական օժանդակությամբ: Այսպիսով՝ տնտեսական նախադրյալը և փողն էական գործոն են դառնում ոչ թե պետության հիմնադրման կամ հռչակման պահին, այլ դրանից հետո՝ պետության կայացման գործընթացում:

Հայ ժողովրդի պատմության փորձից քաղվելիք դասը պետության հիմնադրման հարցում կարող ենք ձևակերպել հետևյալ կերպ. պետության հիմնադրման համար անհրաժեշտ են մի շարք փոխկապված, ամբողջական համալիր կազմող գործոններ ու նախադրյալներ: Հենց այդ նախադրյալների ու գործոնների ուժով էր, որ հայերն Անդրկովկասում դարձել էին էական տարր, որի հետ հաշվի էին նստում այլ ազգերը, արտաքին ուժերը, այդ թվում նաև մեր թշնամիները: Հայերը XX դարասկզբին իրականացրին իրենց «ազատասեր նախնիների սուրբ պատգամը» և պետությունը կերտեցին ոչ թե տնտեսությամբ ու փողով կամ դրանց շնորհիվ, այլ ազգային ինքնագիտակցության կարևոր տարրերով՝ ազգային մշակույթով ու կրոնով: Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման նախադրյալների մեծ մասի հիմքում ընկած են մշակութային գործոնները: Իսկ մշակույթի ստեղծման բազմադարյան գործընթացում էական դերակատարություն են ունեցել ազգային կառույցները, առաջին հերթին՝ Հայ առաքելական սուրբ եկեղեցին:

ПРЕДПОСЫЛКИ УЧРЕЖДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

Артур Вагаршян
Заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ, доктор юридических наук, профессор

В данной статье на основе уроков истории армянского народа делается заключение о том, что для учреждения национального государства необходимы взаимосвязанные, образующие целостный комплекс факторов и предпосылок. В силу именно культурных дости-

жений армянский народ стал влиятельным фактором в Закавказье, и в начале XX века воплотил в жизнь «святой завет своих свободолюбивых предков» – учреждение своей государственности. В статье рассматривается тот факт, что в основе почти всех предпосылок учреждения Первой Республики Армения лежат национально-культурные факторы, а в многовековом процессе формирования армянской христианской культуры существенную роль сыграла Армянская Апостольская Святая Церковь.

PREREQUISITES FOR ESTABLISHMENT OF NATIONAL STATEHOOD

Artur Vagharsyan
Head of Chair of Theory and History of State and Law
YSU, Doctor of Law, Professor

Based on the lessons of the history of the Armenian people, the author concludes that for the establishment of a National State, a comprehensive set of interrelated factors and prerequisites are needed. By virtue of cultural achievements, the Armenian people became an influential factor in the Transcaucasus, and at the beginning of the twentieth century brought to life the "holy covenant of the freedom-loving ancestors", i.e. the establishment of own statehood. Almost all the prerequisites for establishment of the First Republic of Armenia are based on national cultural factors, and the Armenian Apostolic Holy Church played an essential role in the centuries-old process of creating Armenian Christian culture.

Բանալի բառեր – *պետություն, հիմնադրում, նախադրյալ, սոցիալական հիմք, ինքնագիտակցություն, մշակույթ, կրթություն, եկեղեցի, ծառայություն, հոգեմտակերպ, տնտեսություն:*
Ключевые слова: *государство, учреждение, предпосылка, социальная основа, самосознание, культура, образование, церковь, служение, менталитет, экономика.*
Keywords: *State, establishment, prerequisite, social basis, self-consciousness, culture, education, church, nnation's servant, mentality, economy.*

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ալվարդ Ալեքսանյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր ռազմաքաղաքական գործիչ, զորավար ու փիլիսոփա, իրավաբան Գարեգին Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան) ծնվել է Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Կզնուտ գյուղում 1886 թ. (իր վկայությամբ) քահանայի ընտանիքում: Մահացել է 1955 թ. դեկտեմբերի 21-ին: Սովորել է գյուղի ծխական դպրոցում, այնուհետև Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, երկու տարի ուսանել Պետերբուրգի համալսարանի իրավաբանական բաժնում: Զինվորական կրթություն է ստացել Սոֆիայի (Բուլղարիա) պետական ռազմական ուսումնարանում: Պատանի տարիքից նվիրվել է ազգային–ազատագրական և կուսակցական պայքարին: 1907 թ. անդամագրվել է Դաշնակցական կուսակցությանը:

Հեղափոխական-ազատագրական պայքարի մկրտություն է ստացել Պարսկաստանում, որտեղ հայերը Եփրեմ Խանի գլխավորությամբ մասնակցել են շահական իշխանության դեմ Պարսկաստանի Ժողովրդական–սահմանադրական շարժմանը: Պարսկաստանից 1908 թ. գրված նամակում առաջին անգամ հանդիպում է Գարեգին Տեր-Հարությունյանի Նժդեհ (պանդուխտ, օտարական) մականունը: Ռազմական գործի մեջ հմտացել է 1912-1913 թթ., երբ ղեկավարել է իր և Անդրանիկի ջանքերով ստեղծված հայկական կամավորական վաշտը Թուրքիայի դեմ բալկանյան ժողովուրդների մղած պատերազմում:

Առաջին աշխարհամարտում եղել է հայկական երկրորդ կամավորական ջոկատի փոխհրամանատար: 1915 թ. մայիսին մասնակցել է Վանի ժամանակավոր ազատագրմանը:

Գարեգին Նժդեհի հրամանատարական ունակությունները հատկապես դրսևորվեցին 1918 թ. մայիսին տեղի ունեցած Ղարաքիլիսայի ճակատամարտում, երբ իր ոգեշունչ ելույթով դիմելով մար-

տիկներին՝ նրանց գրոհի տարավ ռազմաճակատի ձախ թևում՝ ջախջախիչ պարտության մատնելով թուրքերին:

1919 թ. աշնանը Գ. Նժդեհը նշանակվել է պետական պաշտոնում՝ որպես գավառապետ: Սակայն շուտով ստացել է նոր կուսակցական-պետական առաջադրանք: Նրան վստահվել է Կապարգողթի (Կապան, Արևիք, Գողթան) շրջանի պաշտպանությունը, ուր նա մեկնել է 1919 թ. կեսերին: Նժդեհը փաստորեն եղել է ամբողջ Զանգեզուրի (Սյունիքի) ինքնապաշտպանության կազմակերպիչ ու ղեկավար՝ ցուցաբերելով զորավարական տաղանդ և պետական գործչի բարձր կարողություններ: Գարեգին Նժդեհի կազմակերպած հերոսական պաշտպանության շնորհիվ ձախողվեցին Թուրքիայի և Մուսավաթական Ադրբեջանի քաղաքականությունն անփոփոխ ժառանգած Խորհրդային Ադրբեջանի՝ Զանգեզուրն Ադրբեջանին բռնակցելու ձգտումները: Այնուամենայնիվ, խուսափելով քաղաքացիական պատերազմի բորբոքումից և համոզված լինելով, որ Զանգեզուրը կմիացվի Հայաստանին, Գարեգին Նժդեհը 1921 թ. կեսերին դադարեցրեց պայքարը և հեռացավ արտասահման:

Նժդեհը թողել է հարուստ գրավոր ժառանգություն՝ գիտական աշխատություններ, հուշեր-հոդվածներ, հրամաններ, կոչեր, դիմումներ, նամակներ: Գիտական աշխատությունները հիմնականում պատմագիտական և փիլիսոփայական բնույթի են: Ըստ բովանդակության՝ դրանք կարելի է բնութագրել որպես մարտական գործողություններ, գիտական ուսումնասիրություններ, կուսակցական գործունեություն:

Գարեգին Նժդեհն իրեն համարել է ռազմական գործիչ և իր ամբողջ գործունեությունը նվիրել է հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարին, հայ պետականության վերականգնմանը և Հայաստանի անկախության հաստատմանը: Նա նաև ակտիվ մասնակցություն է ունեցել Առաջին Հանրապետության ստեղծման գործընթացին:

Այսպիսով՝ Գարեգին Նժդեհի գործունեությունը չի սահմանափակվում միայն իր ռազմաքաղաքական գործունեությամբ: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի առաջին հանրապետության պետականաշինության գործընթացին: Ինչպես պրակտիկ գործունեության ընթացքում, այնպես էլ գիտական աշխատություններում արտահայտվել են նրա առաջադիմական հայացքները պե-

տության և իրավունքի մասին: Այս տեսակետից ուշագրավ է նրա «Մետապոլիտիկա: Պատմության փիլիսոփայություն» անավարտ աշխատանքը (գրառումները), որը տպագրվել է 2002 թ. Երևանում և անգնահատելի արժեք է ներկայացնում:

Գարեգին Նժդեհի քաղաքական-իրավական գաղափարախոսության հիմնական նպատակը հայ ժողովրդի անկախ պետականության վերականգնումն է: Այդ նպատակն իրականացնելու համար նա իր ստեղծագործություններում դատողություններ է արել ազգի, ցեղի, հայրենիքի, հերոսության, անձնազոհության, անմահության և հայրենասիրության այլ արժեքների մասին՝ ցանկանալով հայ ժողովրդին ոգևորել պայքարելու իր ազատության և անկախության համար, պահպանելու իր ազգային ինքնությունը:

Գարեգին Նժդեհն ազգապահպանության և անկախ պետականության կայացման գործում մեծ դեր է հատկացրել երիտասարդությանը: Ժողովրդի ապագան կերտում են նրա երիտասարդները: «Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագա՝ նայի՛ր նրա երիտասարդութեան»[1]: Անհրաժեշտ է երիտասարդությանը դաստիարակել հայրենապաշտությամբ և հայրենաճանաչումով: «Հայրենապաշտական դաստիարակութիւն - ահա մեր փրկութեան խարիսխը»[2]: Հայրենասիրությունն է ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը: Հայրենասիրությունը «մարդկային առաքինութիւնների թագն ու պսակն է»[3]:

Պետության դերն իր ժողովրդի գոյության, պահպանման և զարգացման համար պայմաններ ստեղծելն է. «Ժողովուրդն ավելին է, քան պետութիւնը, իր իշխանութիւնը, անգամ իր կուլտուրան:

Իր ոգու յայտնութիւնը դժուարացնող բազմազան արգելքների պատճառով նրան յաջողում է իրականացնել իր կարողական ուժերի մի չնչին մասը միայն: Պետութեան – ճշմարիտ պետութեան, բանականութեան և մարդկայնութեան վրայ կառուցուած պետութեան դերը հէնց այդ արգելքները աստիճանաբար վերացնելու մէջ է կայանում»[4]:

---

[1] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Եր., 2006 թ., էջ 22:

[2] Նույն տեղում, էջ 50:

[3] Նույն տեղում, էջ 29:

[4] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Եր., 2006 թ., էջ 344:

Գարեգին Նժդեհի պետական հայացքներն արտահայտվել են հատկապես 1921 թ. Սյունիքում Լեռնահայաստանի հանրապետության ստեղծման գործընթացում: Կարելի է ասել, որ Գարեգին Նժդեհն իր երազանքները՝ ազատ, անկախ, ժողովրդավարական Հայաստանի մասին, իրականացրել է Սյունիքում, որտեղ 1921 թ. ապրիլի 26-ին հռչակվեց Լեռնահայաստանի հանրապետություն՝ սպարապետ Նժդեհի վարչապետությամբ:

Նժդեհն իր աշխատություններում չի նշել, թե պետական կառավարման որ ձևն է նախընտրում: Սակայն նկատի ունենալով, որ 1920 թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած Համազանգեզուրյան համագումարում Սյունիքը, ինչպես նաև 1921 թ. ապրիլին Սյունիքում նրա վարչապետությամբ հռչակված անկախ Լեռնահայաստանի հանրապետությունն իր կառավարման ձևով պառլամենտական հանրապետություն էր, կարելի է հաստատապես պնդել, որ նա պետական կառավարման նման ձևն է համարել լավագույնը:

1920 թ. դեկտեմբերի 25-ին Համազանգեզուրյան համագումարը, նկատի ունենալով, որ Զանգեզուրը մոտ երեք տարի անկախ է եղել՝ «ապրել է իր ներքին ուրույն կեանքով»[1], շարունակելու է նույնը մնալ, որոշել է Զանգեզուրը ժամանակավորապես, մինչև մայր երկրին՝ Հայաստանին միանալը, հայտարարել ինքնավար: Ինքնավար Սյունիքի սահմանները համընկնում էին նախկին Զանգեզուրի սահմաններին: Սյունիքում սահմանել են հանրապետական պետական կառավարման ձև, որտեղ բարձրագույն օրենսդիր մարմինը պառլամենտն է: Համագումարը որոշել է Նժդեհին վստահել սպարապետի պաշտոնը:

1921 թ. ապրիլի 26-ին ինքնավար Սյունիքի խորհրդարանի կողմից Տաթևի վանքում հրավիրված Լեռնահայաստանի հայ ազգաբնակչության արտակարգ համագումարում կառավարության կազմելու ձևի կապակցությամբ հանգել են այն եզրակացության, որ կառավարության ղեկավարումը պետք է հանձնել Գարեգին Նժդեհին՝ որպես իր ժողովրդին նվիրված անձնազոհ և տոկուն ղեկավարի, որին վստահված էր Սյունիքի բնակչության անվտանգության պաշտպանությունը:

[1] Նույն տեղում, էջ 297:

«Քանի որ Սիւնիք-Լեռնահայաստանի ամբողջ բախտը եւ հայ ազգաբնակութեան ֆիզիքական գոյութիւնը հաւատացած եւ վստահած են Սպարապետին, որն իր ամբողջ գործունէութեամբ միշտ էլ հանդէս է եկել որպէս մի անձնազոհ, տոկուն եւ նախանձախնդիր ղեկավար, ապագայ ընտրուելիք կառավարութեան կազմը եւս վերապահել նրան:

Ձայների մեծամասնութեամբ որոշւում է՝ 1. Ինքնավար Սիւնիքը այսուհետեւ անուանել Լեռնահայաստան: 2. Կառավարութեան անդամները՝ նախարարներ: 3. Համագումարը յայտարարել որպէս Լեռնահայաստանի խորհրդարան: 4. Կառավարութիւն կազմելու համար վարչապետ ընտրել պ. Սպարապետին[1]»:

Ինքնավար խորհրդարանական հանրապետությունում ստեղծվել է ժողովրդավարական իրավակարգ, որտեղ բոլորը հավասար են, միաբան են ժողովուրդն ու կառավարությունը, չկա դասակարգային բաժանում: 1921 թ. մայիսի 14-ին Մելիք-Ստեփանյանը Երևանից որոշ առաքելությամբ ուղարկվում է Լեռնահայաստան, որը, լինելով բնիկ Սյունիքից, ծանոթանալով երկրի և ժողովրդի դրությանը, ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին ներկայացնում է տեղեկագիր այսպիսի բովանդակությամբ. «Այստեղ ես տեսնում եմ ժողովուրդ, կառավարութիւն եւ զօրահրամանատարութիւն՝ միաբան: Ամէն ինչ նորմալ է այստեղ: Այստեղ չկան խաներ, բէգեր, կապիտալիստներ, բուրժուաներ, կուլակներ: Չկայ այն ամէնը, որ տկարացնում է ժողովրդի ռազմական թափն ու ոյժը: Ժողովրդի տրամադրութիւնը կատարելապէս յեղափոխական է…»[2]:

Երբ 1921 թ. հունիսին Հայաստանի բոլշևիկյան կառավարության կողմից հռչակագրով Սյունիքը միացվեց Հայաստանին, Նժդեհը հեռացավ Զանգեզուրից՝ ասելով. «Ինձ կը մնար ժողովրդին յայտնել, թէ կը վերադառնամ՝ եթէ Ադրբէջանը փորձեց իր թաթը երկարել դէպի Սիւնիք եւ բաժանուել հայրենի լեռներից»[3]:

Հեռանալուց առաջ նա ներկայացրել է մի շարք պայմաններ, որոնց թվում կարևորել է մարդկանց ազատության իրավունքը. «Մենք կուզէինք՝ «մամուլի, խօսքի եւ ժողովների ազատութիւն»: Եւ

[1] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Եր., 2006 թ., էջ 315:

[2] Նույն տեղում, էջ 320:

[3] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Եր., 2006 թ., էջ 329:

ժողովրդական կոմիսարների վեց ստորագրութեամբ օժտուած դեկրէտով մեզ կու տրուէր «իրաւունք՝ միանգամայն ազատօրէն գործել Հայաստանում. ունենալ առանձին կազմակերպութիւններ եւ թէ ազատ մամուլ»»[1]: Այսպիսին էին Նժդեհի գաղափարները ժողովրդավարական հանրապետության վերաբերյալ, որտեղ մարդիկ պետք է լինեին ազատ, հավասար, լիներ խոսքի, մամուլի, ժողովների ազատություն, ինչպիսին եղել է Լեռնահայաստանում՝ իր կարճատև գոյության ընթացքում, և ինչպիսին նա ցանկացել է տեսնել Խորհրդային Հայաստանը:

Գարեգին Նժդեհը քննադատում է իր ժամանակի՝ իրենց ժողովրդավարական համարող պետություններին, որոնք, տեսականորեն ենթարկվելով հանրության կամքին, գործնականում պառակտելով և աղավաղելով ազգի ոգին, նրան ծառայեցնում են իրենց անձնական շահերին: «Սնամէջ հասկացողութիւն է նաեւ դեմոկրատիան, որի մասին եւ որի անունից այնքան խօսում է պատերազմող կողմերից մեկը»[2]: Բարոյական դեմոկրատիան, նրա կարծիքով, երազանք է մնում մարդկային էակի անկատարելության հետևանքով:

Պետության վարչաձևը պայմանավորվում է ժողովուրդների վիճակով, հասարակական կյանքի տարբեր պայմաններով, որոնց համապատասխան փոփոխվում են նաև քաղաքական կառույցները: «Կեանքի պայմանների փոփոխմամբ – ինչպէս եւ՝ քաղաքական զարգացման աստիճանով – փոփոխութեան է ենթարկւում նաեւ պետական սիստեմը»[3]: Այս ճշմարտությունը, ինչպես նաև ազգամիջյան անցքերի իմաստն ըմբռնելու համար նա անհրաժեշտ է համարում ծանոթ լինել նաև ժողովուրդների հոգեբանական առանձնահատկություններին: Ըստ նրա՝ ցեղային նկարագրերի ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը ժողովուրդներին բաժանում է երեք կատեգորիայի՝ իմացական, կամային և ոչ տիպիկ, այսինքն՝ այնպիսիք, որոնց մոտ իմացականը և կամքը հավասարակշռում են: Գոյություն ունեն նաև հոգեպես դեռ անկերպար ժողովուրդներ: Ժողովուրդները ոչ միայն քաղաքական և տնտեսական մրցակիցներ են,

[1] Նույն տեղում, էջ 327:

[2] Նույն տեղում, էջ 606:

[3] Նույն տեղում, էջ 607:

այլև տարբեր հոգեբանություն ունեցողներ: Ահա թե ինչու տարբեր ժողովուրդների մոտ ժողովրդավարությունը տարբեր ձևով է ըմբռնվում, և տարբեր ժողովուրդների, հատկապես պատերազմող-ների կողմից, «իր վարչաձեւը – դեմոկրատական-ուրիշներին պար-տադրելու փորձը պիտի համարել հաւասարապէս հակագիտական և հակամարդկային: …ո՞ր դեմոկրատիկ պետութիւնը գէթ քրիստո-նէական կարեկցանքի մի շարժուձև կատարեց, երբ թուրքերը 1920-ին հրով եւ սրով մեր հայրենիքը մտան»[1]: Շարունակելով բացահայ-տել իր ժամանակաշրջանի ժողովրդավարական պետությունների թերությունները՝ այն կարծիքն է հայտնում, որ որոշ պետություննե-րի համար առաջնայինը ոչ թե ժողովրդավարական վարչաձևի հաս-տատումն է, այլ իրենց շահերի պաշտպանությունը, և այդ պատճա-ռով նրանք դաշնակից են փնտրում և ոչ թե ժողովրդավարություն. «Մարդկութեան մի մասի համար այլեւս դժողքի վերածուած, հին աշխարհի պաշտպանութեան ի խնդիր իրենց սուրը մերկացրած ազգերը ամենուրեք զինակից են փնտռում եւ ո՛չ թէ դեմոկրատիա»[2]:

«Հայու լաւագոյնը» հոդվածում ցանկանալով ճշտել համա-մարդկային այն գծերը, որոնք բնորոշ են հայ ազգին, նա վկայակո-չում է «Վահագնի ծնունդը» հեթանոսական վիպասանությունից հատված՝ ցանկանալով ընթերցողի ուշադրությունը հրավիրել այն պատմական իրողության վրա, որ նույնիսկ հեթանոս հայն անգե-րազանցելի մարդասիրական և ասպետական առաքինություններ է ունեցել, և ափսոսանքով նկատում է, որ իր դարաշրջանին բնորոշ չեն նման հոգևոր գծեր: «Աշխարհի, որ մեծ, որ աշխարհակալ ազգը պիտի չուզենար իր ֆոլկլորի մեջ ունենալ հետևյալ իմաստալից պատառիկը «Քե՛զ ասեմ, այր քաջ Արտաշէս,

Որ յաղթեցիր քաջ ազգին Ալանաց,
Ե՛կ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝
Տալ զպատանիդ
Ջի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն
Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել
Եւ թշնամութիւն յաւիտենական

[1] Նույն տեղում, էջ 608:

[2] Նույն տեղում, էջ 608:

Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել»»…[1]

Այս կերպ նա դեմ է արտահայտվում ազգերի միջև թշնամությանը, մեկ ազգի կողմից մյուս ազգին ոչնչացնելուն և ստրկացնելուն, ազգերը պետք է հարգանքով վերաբերվեն միմյանց. «Լսո՞ւմ ես, ընթերցո՛ղ, օրէնք չէ՛, ասում է հեթանոս հայը, դիւցազների համար թոյլատրելի չէ՝ առաջին՝ օտար դիւցազների գոյութիւնը վերացնել, երկրորդ՝ ստրկացնել, ծառայեցնել նրանց, երրորդ՝ երկու քաջ ազգերի միջեւ յաւիտենական թշնամութիւն ստեղծել:…Այո՛, «ոչ է օրէն»…

Հայը դեմ է քաջ զարմերի ոչնչացման, ստրկացման, եւ՝ լինելով քաջ՝ նա յարգանքով է վերաբերւում իր քաջ թշնամուն անգամ»[2]: Հատկապես ընդգծել է, որ չկան «մեծ» ու «փոքր» ազգեր, և թվական գերազանցությամբ չպետք է բնորոշել ազգին, բոլոր ազգերը հավասար են և օժտված են հավասար իրավունքներով: «Չկան մեծ ու փոքր ազգեր: Կան հաւասար իրաւունքներով անդամները մարդկութեան ընտանիքի»[3]: Բոլոր ազգերն օժտված են անկախությամբ և ինքնիշխանությամբ: «Կան ինքնանկախ ու ինքնիշխան ազգեր միայն»: Ազգերը պետք է փոխադարձաբար հարգեն միմյանց իրավունքները, քանի որ նրանք մարդկության միասնական ընտանիքի անդամներ են:

Պատերազմներն այն պատճառով են առաջանում, երբ իրենց բարեկեցությունն ու ապահովությունն ուրիշ ազգերի թշվառության վրա կառուցած ազգերը շարունակում են քաղաքականապես և տնտեսապես չարաշահել նրանց տկարությունը: «Պատերազմը պայթեց ո՛չ թէ վարչաձեւերի տարբերութեան – որ այնքան բնական է ու հասկանալի – այլ այն պարզ պատճառով, որ «դեմոկրատներից» մէկը իր մեծութիւնը, բարօրութիւնն ու ապահովութիւնը մարդկութեան մի մասի թշուառութեան վրայ կառուցած, դեռ շարունակում է քաղաքա – տնտեսապէս չարաշահել նրա տկարութիւնը»[4]:

Գարեգին Նժդեհը մեծ նշանակություն է տալիս օրենքներին՝ որպես հասարակական կյանքի և մարդկանց վարքագծի համապարտադիր կարգավորիչի: Օրենքը սահմանում է որպես բոլորի

[1] Նույն տեղում, էջ 377:

[2] Նույն տեղում, էջ 378:

[3] Նույն տեղում, էջ 116:

[4] Նույն տեղում, էջ 608:

համար պարտադիր կանոն: «Սպանիչ իրականութիւն, ուր գոյութիւն չունի մի հատիկ օրէնք, կանոն իսկ, պարտադիր բոլորի, բոլորի համար…»[1]: Տարբերում է գրված և չգրված օրենքներ: Գրված օրենքի աղբյուրը չգրված օրենքն է, որը, նրա կարծիքով, գրված է մարդկանց սրտում: «Օրենքները լինում են տևական, երբ զարգանում են հասարակության ոգուն զուգահեռ»[2]: Օրենքները մարդկանց կամքի և գիտակցության արդյունք են: Մարդը կատարյալ չի ծնվում, նա այդպիսին է դառնում ինքնամշակման միջոցով: Ժողովուրդը նույնպես իր հասունության ճանապարհին աստիճանական զարգացման փուլեր է անցնում. դրանք Գարեգին Նժդեհը համարում է հոգեկան հասունության փուլեր: Զարգացման այդ ընթացքում վարքագծի կանոնները ձևավորվում են մարդկանց գիտակցության և հոգու մեջ և հետո սահմանվում պետության կողմից նորմատիվ իրավական ակտերում: «Պրոգրեսի նորմալ ընթացքը (ժողովրդի կյանքի կառուցման, պետական սարք ու կարգի հաստատման) – նախ օրենքները հաստատվում են ոգիների մեջ, վերջը՝ ընդունում սահմանադրության ձեւ»[3]: Օրենքները հասարակական հոգու հայելին են, պետական վարչակարգը նույնպես արտացոլում է հասարակության խիղճը: Քանի որ օրենքները ստեղծում են մարդիկ, հետևաբար օրենքը փոխելու, այն կատարելագործելու համար առաջին հերթին պետք է փոխենք մարդկանց. «Օրենքը չէ ստեղծում մարդը, այլ մարդը՝ օրենքները: «Օրենքները փոխելուց առաջ, անհրաժեշտ է փոխել մարդկանց» (Aug. Conte, Philosophie positive)»[4]:

Առաջանալով մարդկանց հոգու, գիտակցության մեջ և ապա դառնալով նրանց վարքագծի կարգավորիչ՝ օրենքը դառնում է ժողովրդին պաշտպանող հզոր ուժ: Այն կատարյալ ներդաշնակություն է հաստատում մարդկանց և նրանց կողմից ստեղծված հաստատությունների միջև, իրավակարգի և ժողովրդի ոգու միջև: «Օրենքը – դա ընկերային մի մեծ ուժ է, ժողովրդական մի հզոր պաշտպանություն, երբ ծնունդ է առնում մարդկանց ներքին կյանքում եւ ապա նվաճում նրանց արտաքին կյանքը:

---

[1] Նույն տեղում, էջ 77:

[2] Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 1, Եր., 2006 թ., էջ 513:

[3] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Եր., 2006 թ., էջ 662:

[4] Նույն տեղում, էջ 662:

Կատարյալ ներդաշնակություն հաստատության եւ մարդկանց միջև, հանրային իրավակարգի եւ ժողովրդի ոգեկառույցի միջեւ»[1]:

Այդ ներդաշնակությունն անհրաժեշտ է հասարակական կյանքի և պետական վարչակարգի կայունության համար, հակառակ դեպքում հեղափոխություններն անխուսափելի են: «Երբ ժողովրդի հոգին ավելի կուլտուրական է, քան իրավակարգը, պետական ռեժիմը փոխվում է բռնությամբ, հեղափոխությամբ: Երբ հակառակն է՝ պետության ղեկավարությունը անցնում է բախտախնդիրների ձեռքը, բռնակալների, որոնք օգտվելով զանգվածների հոգեկան կուրությունից, երկիրը դարձնում են իրենց կրքերի և անձնական շահերի շահաստան»[2]:

Այսպիսով՝ ռազմական և քաղաքական գործիչ, գաղափարական և կազմակերպական առաջնորդ, հայոց մեծերից Գարեգին Նժդեհն իր ուրույն ավանդն ունի հայոց անկախ պետականաշինության մեջ և իր առաջադիմական քաղաքական և իրավական մտքերով նպաստել է ժողովրդավարական, անկախ Լեռնահայաստանի և Հայաստանի Հանրապետության կայացմանը:

ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ ВЗГЛЯДЫ ГАРЕГИНА НЖДЕ

Алвард Алексанян
Доцент кафедры теории и истории государства и права ЕГУ,
кандидат юридических наук

В статье изучаются политико-правовые взгляды видного деятеля Армянского национально-освободительного движения Гарегина Нжде (Гарегин Тер-Арутюнян, 1886-1955), который посвятил всю свою деятельность национально-освободительной борьбе армянского народа, восстановлению армянской государственности и независимости Армении.

Гарегин Нжде оставил богатое наследие, отражающее его прогрессивные взгляды на государство, право, закон, патриотизм, нацию

[1] Նույն տեղում, էջ 663:

[2] Նույն տեղում, էջ 663:

и другие ценности. Предпочтительной формой правления, по мнению Гарегина Нжде, является парламентская республика с демократическим правопорядком, где все равны. Он критиковал те государства, которые в свое время считались демократическими, теоретически подчиняются воле общественности, а фактически служат нации в своих интересах. Он был против враждебности между народами: все нации равны и наделены суверенитетом, поскольку они принадлежат к одной человеческой семье.

Не существует «больших» и «маленьких» наций. Народы должны уважать друг друга. Гарегин Нжде придавал большое значение законам, которые являются зеркалом души общества, и считал, что для того, чтобы изменить и улучшить законы, необходимо сначала изменить людей.

Запав в душу людям, в их сознания и затем став их регулятором, закон становится мощной силой, защищающей людей, и устанавливает совершенную гармонию между людьми и их институтами, между законом и духом людей.

GAREGIN NZHDEH'S POLITICAL LEGAL VIEWS

Alvard Alexanyan
Docent at the YSU Chair of Theory and History of State and Law,
Candidate of Legal Sciences

Garegin Nzhdeh (Garegin Ter-Harutunian, 1886-1955), a prominent figure of the Armenian National Liberation Movement, dedicated his entire activity to the national liberation struggle of the Armenian people, the restoration of the Armenian statehood and the restoration of Armenia's independence. He has left a rich legacy of heritage that reflects his progressive views about the values of state, rights, law, patriotism, nation, and other values.The preferred form of government of Garegin Nzhdeh is the parliamentary republic, which has a democratic legal order and where everyone is equal.He had criticized those states that in his times considered themselves democratic, which, in theory, obeyed to the will of the public,but actually they were serving the nation to their interests.He was against the hostility between nations. All nations are equal and endowed with sovereignty as they belong to a single human

family.There are no "big" and "small" nations. Nations must respect one another. Garegin Nzhdeh gave a great importance to the laws. The laws are the mirror of the society's soul.In order to change and improve the laws, we must first change people. Getting into the people's soul, consciousness and then becoming their regulator, the law becomes a powerful force protecting people and establishing perfect harmony between people and their institutions, between the law and the spirit of the people.

Բանալի բառեր - *Գարեգին Նժդեհ, պետություն, օրենք, իրավունք, խորհրդարանական հանրապետություն, ժողովրդավարություն, ազգ:*

Ключевые слова: *Гарегин Нжде, государство, закон, право, парламентская республика, демократия, нация.*

Key words: Garegin Nzhdeh, state,rights, law, Parliamental Republic, democracy, nation.

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կարեն Ամիրյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Պատասխանատու պետական իշխանությունը ժամանակակից սահմանադրական պետության առանցքային չափորոշիչներից է, իսկ իշխանությունների իրական և հավասարակշռված բաժանման հրամայականը պահանջում է պետական իշխանության իրավական պատասխանատվության կայուն, իրավաբանորեն որոշակի և արդյունավետ համակարգ:

Այս հետազոտության նպատակն է վեր հանել և ուսումնասիրել պետական իշխանության հանրային իրավական պատասխանատվության արդյունավետ համակարգ ձևավորելու գործընթացին խոչընդոտող իրավական և վարչագծային գործոնները՝ մշակելով և առաջադրելով պատասխանատվության արդյունավետության բարձրացման վրա ազդեցություն ունեցող գործիքակազմ:

I. Պատգամավորի իրավական պատասխանատվությունը

1. Սահմանադրությամբ նշվում է պատգամավորի լիազորությունների ավարտման երկու ձև՝ դադարում և դադարեցում: Անդրադառնանք պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հիմքերից մեկին: Սահմանվում է, որ պատգամավորի լիազորությունները դադարեցվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայելու դեպքում: Այսպիսի կարգավորումն անհարկի նեղացնում է պատգամավորին պատասխանատվության ենթարկելու շրջանակը: Ավելին՝ առաջանում է ակնհայտ անհամապատասխանություն պատգամավորի ունեցած դրական և բացասական պատասխանատվության միջև: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմա-

նադրական օրենքի[1] 4-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը պարտավոր է մասնակցել Ազգային ժողովի, ինչպես նաև իր անդամակցած հանձնաժողովի և աշխատանքային խմբի նիստերին, ինչպես նաև իր անդամակցած հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին: Ստացվում է, որ մի կողմից սահմանվում են պատգամավորի պարտականությունները, սակայն դրանց չկատարման համար սահմանված չէ որևէ բացասական իրավական հետևանք: Կարծում ենք, որ կարելի է ամրագրել հետևյալը. «Պատգամավորի լիազորությունները դադարեցվում են յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ընթացքում Ազգային ժողովի նիստերի առնվազն կեսից անհարգելի բացակայելու դեպքում»: Այս հարցի շուրջ միջազգային փորձը բազմաձև է: Այսպես՝ պառլամենտի անդամը զրկվում է իր լիազորություններից, եթե առանց հարգելի պատճառների բացակայում է պառլամենտի աշխատանքներից ավելի քան չորս ամիս[2], վաթսուն օր[3], հերթական նիստերի մեկ երրորդից[4]:

II. Կառավարության անդամի իրավական պատասխանատվությունը

1. Նախարարների անհատական պատասխանատվությունն իրենց վարքագծի և իրենց ենթակայության տակ գտնվող գերատեսչությունների գործունեության համար հաշվետու և ժողովրդավարական պառլամենտական կառավարման համակարգի կենսական տարրերից է[5]: Նախարարների անհատական պատասխանատվության սկզբունքը լայնորեն կիրառվում է բազմաթիվ պետություններում (Դանիայի Սահմանադրության 15-րդ հոդված, Էստոնիայի

---

[1] Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՕ-9-Ն ՀՀ սահմանադրական օրենք:

[2] Տե՛ս Конституция Грузии, 24/08/1995, հոդված 54 (https://matsne.gov.ge/ru/document/view/30346):

[3] Տե՛ս Конституция Индии, հոդված 101 (http://worldconstitutions.ru/?p=141&page=6):

[4] Տե՛ս КОНСТИТУЦИЯ БРАЗИЛИИ (5 октября 1988 г.), հոդված 55 (http://worldconstitutions.ru/?p=563):

[5] Տե՛ս Marshall, G (ed.) (1989), Ministerial responsibility and Woodhouse, D (1994), Ministers and Parliamen (սկզբնաղբյուր՝ file:///C:/Users/Karen%20Amiryan/Downloads/SN06467.pdf):

Սահմանադրության 97-րդ հոդված, Լեհաստանի Սահմանադրության 159-րդ հոդված): Դիպուկ է այն ձևակերպումը, որ Սահմանադրությունն ավարտուն չէ առանց պատասխանատու նախարարության, ինչը սահմանադրական պետության անկյունաքարն է[1]: Կոստա Ռիկայի Սահմանադրության 121-րդ հոդվածի համաձայն՝ իրենց օրենսդիր մարմինը նիստին ներկա օրենսդիրների 2/3 ձայների հարաբերակցությամբ կարող է պարսավանքի ենթարկել նախարարներին, եթե, օրենսդիր մարմնի կարծիքով, նրանք մեղավոր են հակասահմանադրական կամ հակաիրավական ակտերի կամ լուրջ սխալների համար, որոնք պետական շահերին էական վնաս են պատճառել կամ կարող էին պատճառել: Երկրներ կան, որտեղ կառավարության անդամների պատասխանատվության հարցն այնքան է կարևորվել, որ այդ հարցի լուծումն իրականացվում է հատուկ դատական համարժեք ատյանի միջոցով (օրինակ՝ Դանիա, Հունաստան, Ֆրանսիա (Սահմանադրության 68-1-ին, 68-2-րդ, 68-3-րդ հոդվածներ), Լեհաստան): Մեզ մոտ նախարարին պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը ներդրվել է մասնակիորեն և հատվածական: Այսպիսի եզրահանգման համար հիմք են ծառայում հետևյալ հանգամանքները:

ՀՀ Սահմանադրությունն Ազգային ժողովին հնարավորություն չի տալիս ուղղակի անվստահություն հայտնելու որևէ նախարարի, այլ նախարարին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը միջնորդավորված ձևով կապակցվել է հարցապնդման ինստիտուտի հետ, այն էլ ոչ ամբողջական կարգավորում է: Համանման կարգավորում է նախատեսված նաև Լիտվայում, ընդ որում՝ առանց կապակցելու այդ հարցը հարցապնդման ինստիտուտի հետ: Այսպես, Լիտվայի Սահմանադրության 101-րդ հոդվածի համաձայն, նախարարը պարտավոր է հրաժարական ներկայացնել նախագահին, եթե գաղտնի քվեարկությամբ՝ Սեյմի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, նրան անվստահություն է հայտնվել[2]: Նախարարի անհատական պատասխանատվության

[1] Տե՛ս H. v. Frisch, Die Verantwortlichkeit der Monarchen und höchsten Magistrate, Berlin, էջ 104:

[2] Տե՛ս Конституция Литовской Республики (http://www3.lrs.lt/home/Konstitucija/Konstitucija_RU.htm):

դրական կողմն այն է, որ այն հնարավորություն է տալիս Կառավարությանը շարունակելու իր գործունեությունը և չի հանգեցնում ողջ կառավարությանն անվստահություն հայտնելուն: Սակայն, հաշվի առնելով, որ այս ամենը կարող է հանգեցնել նաև չարաշահումների և օգտագործվել քաղաքական նկատառումներով, գտնում ենք, որ Ազգային ժողովի կողմից կառավարության անդամին անվստահություն հայտնելու հնարավորությունը պետք է լինի, սակայն այն պետք է սահմանափակված լինի կոնկրետ իրավական հիմքով (Սահմանադրության կամ օրենքի կոպիտ խախտումը, դատական ակտի անտեսումը նորմատիվ իրավական կամ անհատական ակտ կայացնելիս, դատական ակտը, մասնավորապես Սահմանադրական դատարանի որոշումը չկատարելը, Ազգային ժողովին կանխամտածված թերի կամ ոչ հավաստի տեղեկատվություն տրամադրելը)[1]: Ընդ որում՝ Սահմանադրության կամ օրենքի կոպիտ խախտման փաստը նույնպես պետք է քննարկման առարկա դառնա Սահմանադրական դատարանում, որի դրական եզրակացության հիման վրա Ազգային ժողովը քվեարկությամբ կորոշի տվյալ նախարարին պաշտոնանկ անելու հարցը: Կարող է նախատեսվել նաև այնպես, որ Սահմանադրական դատարանի եզրակացությունից որոշակի ժամանակահատվածում, օրինակ՝ 5-օրյա ժամկետում, վարչապետը կարող է պաշտոնանկ անել տվյալ նախարարին, իսկ այդ ժամկետում վարչապետի կողմից նախարարին պաշտոնանկ չանելու դեպքում նոր Ազգային ժողովը հնարավորություն ունենա քվեարկությամբ պաշտոնանկ անելու:

2. Մեկ այլ խնդիր. ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ կառավարության անդամի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Սակայն, ի տարբերություն պատգամավորների, անհամատեղելիության պահանջը խախտելու դեպքում կառավարության անդամի պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերն իրավական (նույնիսկ սահմանադրական) կարգավորման անհրաժեշտություն ունեն: Մասնավորապես, նախ պետք է սահմանվի, թե ո՞ր սուբյեկտները կարող են այդ հարցը բարձրացնել: Գտնում ենք, որ նման

[1] Այս հիմքով կառավարության անդամի հետագա պաշտոնավարման նպատակահարմարության հարց բարձրացնելու հնարավորություն պետք է ունենա նաև ՀՀ նախագահը:

սուբյեկտներ կարող են լինել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, վարչապետը, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը: Կառավարության անդամի կողմից անհամատեղելիության պահանջի խախտման հարցը քննարկող և լուծող մարմին կարող է լինել ՀՀ Սահմանադրական դատարանը:

III. Դատավորի իրավական պատասխանատվությունը

Դատավորին հանրային իրավական նեգատիվ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առկա միջազգային պրակտիկայի, տեսական հետազոտությունների և պոզիտիվ իրավունքի համադրված վերլուծությունը վկայում է, որ դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք սահմանադրական կամ օրենսդրական մակարդակում համարժեք լուծումներ են պահանջում՝ երաշխավորելու համար դատավորի անկախությունը:

Գտնում ենք, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, առավելապես՝ էական կարգապահական խախտման հիմքով դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշումները պետք է բողոքարկման առարկա դառնան: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու, այդ թվում՝ լիազորությունները դադարեցնելու մասին որոշումները բողոքարկելու պահանջը բխում է նաև այլ միջազգային իրավական փաստաթղթերից[1]: Այս հանգամանքը կարևոր է նաև այն առումով, որ հաճախ օրենսդրությամբ ամրագրվում են պատասխանատվության ենթարկելու չափազանց անորոշ և գնահատման մեծ հնարավորություն տվող հասկացություններ: Մասնավորապես, օրենսդրությամբ լիազորությունների դադարեցման հիմք է համարվում էական կարգապահական խախտումը, իսկ էական կարգապահական խախտում է համարվում դա-

[1] Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2010(12) հանձնարարականի 69-րդ կետ, Կիևյան հանձնարարականների 26-րդ կետ, Դատական իշխանության անկախության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2010 թվականի մարտի 16-ի զեկույցում 43-րդ կետը (European Commission for Democracy Through Law (VENICE COMMISSION), Report on the independence of the judicial system part i: the independence of judges, 16 March 2010, CDL-AD(2010)004, http://www.venice.coe.int/ webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)004-e):

տավորի կողմից այնպիսի արարք կատարելը, որն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

IV. Նախագահի իրավական պատասխանատվությունը

Տարբեր երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ նախագահի պաշտոնանկության հիմքերը հիմնականում հետևյալներն են՝ պետական դավաճանություն կամ այլ հանցանք կատարելը, Սահմանադրության կամ սահմանադրական կարգի կոպիտ խախտումը (Սահմանադրության և սահմանադրական կարգի նկատմամբ ոտնձգություն[1]), անպատվաբեր, բարոյապես ամոթալի արարքը, ոչ արժանապատիվ պահվածքը կամ երդումը խախտելը:

1. Լեհաստանի Սահմանադրությունը մի շարք պաշտոնատար անձանց համար սահմանադրական պատասխանատվության հիմք է դիտարկում նրանց լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրության կամ օրենքի կամ նրանց ծառայողական պարտականությունների ցանկացած խախտումը[2]: Մեղադրական ակտ կայացնելիս Տրիբունալը նշանակում է հետևյալ պատիժները՝ որպես հիմնական կամ լրացուցիչ պատիժներ. պաշտոնանկություն, 2-ից 10 տարով նախագահի, Սեյմի, Սենատի և Եվրոպական պառլամենտի, տեղական ինքնակառավարման մարմինների ակտիվ և պասիվ ընտրական իրավունքից զրկում, 2-ից 10 տարով ղեկավար պաշտոններ կամ պետական մարմիններում, հանրային կազմակերպություններում պատասխանատու ֆունկցիաների հետ կապված պաշտոններ զբաղեցնելու արգելք, բոլոր կամ որոշ շքանշաններից, կոչումներից զրկում: Ընդ որում՝ սահմանադրական պատասխանատվության ենթարկված անձինք չեն կարող հետագայում ներման խնդրանքով դիմել նախագահին: Պետական Տրիբունալն իր որոշումները կայացնում է որպես 1-ին ատյան, սակայն դրանք հնարավոր է բողոքարկել: Ընդ որում՝ բողոքարկվում է հենց իրեն՝ Տրիբունալին, որը հանդես է գալիս արդեն որպես 2-րդ ատյան, սակայն որոշակիորեն այլ կազմով: Տրիբունալի նոր որոշումն այլևս բողոքարկման ենթակա չէ, այդ թվում՝ Գերագույն դատարանում[3]: Նախագահը կարող է զրկվել ցմահ նշանակված հատուկ թո-

---

[1] Տե՛ս Окуньков Л., Конституции государств Европы, М., 2001, Т. 1:

[2] Տե՛ս Конституция Польской Республики от 2 апреля 1997 г., հոդված 198:

[3] Տե՛ս Яцек Залесны, Сущность конституционной ответственности в совре-

շակից և այն միջոցներից, որոնք նախատեսված են նրա գրասենյակի, բարձրակարգ անվտանգության և բժշկական սպասարկման համար[1]:

Մեզ մոտ նույնպես պետք է սահմանել, որ պատասխանատվության ենթարկված նախագահին այլևս չի կարող դառնալ երկրի նախագահ կամ զբաղեցնել պետական, քաղաքական պաշտոններ: Անհրաժեշտ է նաև նախագահին զրկել պաշտոնաթող նախագահի համար օրենքով սահմանված արտոնություններից, վճարներից և երաշխիքներից:

2. Գտնում ենք, որ տարբեր երկրների սահմանադրություններում որպես նախագահի պատասխանատվության հիմք նախատեսված **«**կոպիտ խախտում», «լուրջ խախտում**»** եզրույթները լայն և հայեցողական մեկնաբանման տեղիք կարող են տալ, սուբյեկտիվ ընկալվեն և մեկնաբանվեն, այդ թվում՝ դատարանների կողմից[2]: Գտնում ենք, որ «կոպիտ խախտում», «լուրջ խախտում» ասելով առնվազն կարելի է հասկանալ այն դեպքերը, երբ չարաշահվում է Սահմանադրությամբ տրված լիազորությունը, չի կատարվում Սահմանադրությամբ ամրագրված պարտականությունը: Այս անորոշությունը կարող է օգտագործվել երկու առումներով. մի կողմից՝ դա օբյեկտիվորեն բարդացնում է նախագահին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, մյուս կողմից միջոց է սուբյեկտիվ և քաղաքական նկատառումներից ելնելով որևէ արարք արհեստականորեն մեկնաբանել որպես կոպիտ խախտում և նախագահին պաշտոնանկ անել:

3. Հետաքրքիր է նաև որոշակի ծանրության աստիճանի հանցագործության կատարման հիմքով նախագահի պաշտոնանկության խնդիրը: ՀՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության

менной Польше, studia Politologiczne, («Политологические исследования»), Изменения в политических режимах Стран Восточной Европы, Институт политических наук Варшавского университета, Варшава, 2015, N 36, էջ 187-190:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 191:

[2] Տե՛ս Решение Конституционного Суда Литовской Республики от 31.03.2004:

համար: Սակայն այստեղ իրավաչափորեն հարց է առաջանում, թե արդյո՞ք նախագահին կարելի է պաշտոնանկ անել միայն այն գործողությունների համար, որոնք նա կատարել է նախագահ եղած ժամանակ, թե՞ նաև այն արարքների համար, որոնք նա կատարել է մինչև նախագահ դառնալը: Կարծում ենք, որ նախագահի պաշտոնանկության այդ հիմքը սահմանող դրույթը պետք է լայն մեկնաբանել և դրանում ներառել այնպիսի սահմանադրաիրավական բովանդակություն, որ նախագահին կարելի է պաշտոնանկ անել նաև պետական դավաճանության հանցակազմ պարունակող արարքի համար, որը նա կատարել է մինչև նախագահ դառնալը:

4. Մի շարք սահմանադրություններում օգտագործվում է ծանր հանցագործություն եզրույթն առանց հստակեցնելու դրա բովանդակությունը: Հաճախ այդ եզրույթն ամրագրված է լինում քրեական օրենսգրքերում: ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի վերլուծությունից առաջանում է այն հարցադրումը, թե արդյո՞ք նախագահը կարող է ենթարկվել պատասխանատվության առանձնապես ծանր հանցագործության համար: Խնդիրը նաև այն է, որ պետական դավաճանությունը ՀՀ քրեական օրենսգրքով պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով, ուստի համարվում է առանձնապես ծանր հանցագործություն: Սա այն պարագայում, երբ Սահմանադրության՝ «դավաճանություն, այլ ծանր հանցագործություն» ձևակերպումից նախ ստացվում է, որ պետական դավաճանությունը ծանր հանցագործության տեսակ է, այնինչ այն առանձնապես ծանր հանցագործություն է համարվում, բացի դրանից՝ առանձնապես ծանր հանցագործությունները դուրս են մնացել սահմանադրական ձևակերպումից: Սահմանադրական ձևակերպումից ստացվում է նաև, որ ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցանք կատարելու դեպքում նախագահը չի կարող պաշտոնանկ արվել: Արդյունքում կարող է լինել այնպիսի իրավիճակ, անմեղության կանխավարկածի հաշվառմամբ, որ հանցանք կատարած անձը կարող է պաշտոնավարել: Մեկ այլ նկատառում ևս: Գտնում ենք, որ նախագահին պետք է պատասխանատվության ենթարկել ոչ միայն Սահմանադրության կոպիտ խախտման, այլև օրենքի դիտավորյալ խախտման դեպքում: Գտնում ենք, որ սահմանադրական թերի կարգավորումները հնարավորություն չեն տալիս արարքի լիարժեք իրավական որակումը տալու, և արդյունքում կա-

րող են արգելափակվել նախագահին իրավական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունները:

Հետևաբար, առաջարկում ենք սահմանադրական հետագա բարեփոխումների ընթացքում սահմանադրական այդ ձևակերպումը շտկել՝ ամրագրելով, որ հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել հանցագործության, Սահմանադրության կոպիտ խախտման կամ օրենքի դիտավորյալ խախտման համար:

5. Մեկ այլ հիմնախնդիր ևս: Այն դեպքում, երբ Ազգային ժողովը դիմում է ՀՀ Սահմանադրական դատարան պաշտոնանկության հարցով, ապա նախագահի լիազորությունները պետք է ժամանակավորապես կասեցվեն, քանի որ, անմեղության կանխավարկածի հաշվառմամբ, իրական վտանգ է առկա նրա կողմից ենթադրյալ հանցանքի կամ սահմանադրական խախտման առնչությամբ: Անհրաժեշտ է սահմանել, որ նախագահի լիազորությունները դադարեցնելու նախաձեռնությունից հետո, երբ խոսքը վերաբերում է քրեաիրավական արարքների ենթադրյալ կատարմանը, ստեղծվում է Ազգային ժողովի ժամանակավոր քննական հանձնաժողով, որն օժտված կլինի անհրաժեշտ լիազորություններով: Միջազգային փորձը վկայում է, որ կան երկրներ, որտեղ ստեղծվում են այդպիսի ժամանակավոր հանձնաժողովներ (Իսրայել, Ուկրաինա), ընդհուպ սահմանադրական մակարդակում (օրինակ՝ Իսրայել, Ռուսաստան, Ուկրաինա[1]), երկրներ, որտեղ այդ հանձնաժողովներն ունեն մշտական հատուկ հանձնաժողովի կարգավիճակ (մասնավորապես Լեհաստան): Գտնում ենք, որ այդպիսի հիմքով նախագահին պաշտոնանկ անելու հարցի հետ կապված Ազգային ժողովում հատուկ ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումը Հայաստանում նույնպես անհրաժեշտություն է, քանի որ այն առավել օբյեկտիվություն և արժանահավատություն կհաղորդի տեղի ունեցող գործընթացին՝ հատկապես հաշվի առնելով այն, որ հանձնաժողովը կարող է կազմված լինել պատգամավորական խմբակցությունների ներկայացուցիչներից և իրավաբաններից: Հանձնաժողովի որոշումը կարող է ունենալ խորհրդատվական նշանակություն:

---

[1] Տե՛ս Конституция Украины (Ведомости Верховной Рады Украины (ВВР Украины), 1996, № 30, ст. 141), http://iportal.rada.gov.ua/uploads/documents/27396.pdf:

6. Ֆրանսիայում նախագահին պաշտոնանկ է անում կվազի դատական մարմինը՝ Արդարադատության բարձրագույն պալատը, որը կազմված է 12 պատգամավորներից և 12 սենատորներից: Այս մարմնի կայացրած որոշումը բողոքարկման ենթակա չէ: Նախագահի պաշտոնանկության հարցը լուծելուն պետք է ուրույն մասնակցություն ունենան և՛ Սահմանադրական դատարանը, և՛ Վճռաբեկ դատարանը: Սահմանադրական դատարանը պետք է լուծի իրավունքի, սահմանադրականության հարցը, այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա պետք է դառնան նախագահին պաշտոնանկ անելու ընթացակարգի սահմանադրականությունը, օրինականությունը, ինչպես նաև Սահմանադրության կոպիտ խախտման փաստի իրավական գնահատականը տա: Իսկ երբ նախագահին վերագրում են քրեաիրավական արարքներ, ապա հանցագործության հատկանիշների առկայության կամ բացակայության հարցին իրավական գնահատական պետք է տա Վճռաբեկ դատարանը: Այլ կերպ ասած՝ եթե Սահմանադրական դատարանը լուծում է իրավունքի հարցը, ապա Վճռաբեկ դատարանը՝ փաստի հարցը: Այսպիսի համակարգ գործում է, մասնավորապես, Վրաստանում, Ուկրաինայում:

7. Սահմանադրական կարգավորումներում առկա է մեկ այլ էական խնդիր: Այսպես՝ Սահմանադրության 141-րդ հոդվածի և 168-րդ հոդվածի 7-րդ կետի համադրված վերլուծությունը վկայում է, որ նախ Ազգային ժողովն է դիմում Սահմանադրական դատարան եզրակացություն ստանալու համար, այնուհետև եզրակացության հիման վրա որոշում է կայացնում պաշտոնանկ անել նախագահին: Ստացվում է, որ նախագահին պաշտոնանկ անելու որոշում կայացնող մարմինը ՀՀ Ազգային ժողովն է՝ հիմնված Սահմանադրական դատարանի որոշման վրա: Այս պարագայում իրավաչափորեն առաջանում է այն հարցադրումը, թե արդյո՞ք Ազգային ժողովը կարող է նախագահին պաշտոնանկ չանել, երբ Սահմանադրական դատարանը եզրակացությամբ փաստում է պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման փաստը: Իրավական առումով Ազգային ժողովը կարող է այդպիսի եզրակացությամբ հանդերձ նախագահին պաշտոնանկ անելու որոշում չկայացնել՝ նպաստելով նախագահի կողմից պատասխանատվության չենթարկվելուն: Այսպիսի իրավիճակից ելքն

այն է, որ Ազգային ժողովը պետք է դիմի Սահմանադրական դատարան, իսկ Սահմանադրական դատարանը ոչ թե եզրակացություն ներկայացնի, այլ կայացնի որոշում նախագահին պաշտոնանկ անելու կամ չանելու վերաբերյալ: Առաջանում է մեկ այլ հարցադրում ևս, թե արդյո՞ք Ազգային ժողովի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահին քրեական պատասխանատվության ենթարկելու իրավական ընթացակարգը հստակ նախատեսված չէ օրենսդրությամբ: Առաջարկում ենք, որ Ազգային ժողովի կողմից նախագահին պաշտոնանկ անելու դեպքում, երբ դրա հիմքը Սահմանադրությամբ նախատեսված հանցագործություններ կատարած լինելն է, Ազգային ժողովի որոշումն ուղարկվի պատշաճ դատարան՝ պատժատեսակն ու պատժաչափը որոշելու նպատակով:

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ փաստենք, որ պաշտոնատար անձանց պատասխանատվության համար չափազանց կարևոր է հստակ սահմանել նրանց պատասխանատվության իրավական հիմքերը, ընթացակարգը, հարցը բարձրացնող և հարցին իրավական գնահատական տվող սուբյեկտները, պատասխանատվության միջոցները, դրանից բխող իրավական բացասական հետևանքները, պատասխանատվության իրացման եղանակները: Այն համոզումն ունենք, որ միայն պատասխանատվության ամբողջական և իրավական առումով ամբողջական համակարգի դեպքում գործառույթ-ինստիտուտ-լիազորություն կապը կարող է ներդաշնակ գործել:

СПОСОБЫ ПОВЫШЕНИЕ ЭФФЕКТИВНОСТИ ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Карен Амирян

Асистент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Целью данной статьи является определение и изучение правовых факторов, препятствующих формированию эффективной систе-

мы публичной правовой ответственности государственной власти. Чрезвычайно важно четко определить правовые основы, процедуры ответственности должностных лиц, субъекты, ставшие причиной возникновения проблем, санкции, правовые последствия и порядок наложения ответственности. Разработанный и управляемый нами инструментарий направлен на повышение эффективности ответственности. Соответственно, статья касается юридической ответственности депутата, члена правительства, судьи и президента.

WAYS OF INCREASING THE EFFECTIVENESS OF LEGAL RESPONSIBILITY OF STATE AUTHORITY IN THE REPUBLIC OF ARMENIA

Karen Amiryan
Assistant at the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

The purpose of the article is to clarify and examine the legal factors hindering the formation of an effective system of public legal responsibility of state power. It is extremely important to clearly define the legal bases, procedures for the responsibility of officials, subjects raising the issue, sanctions, negative legal consequences and the ways of realization of liability. A toolkit designed and run by us has been aimed at raising the efficiency of responsibility. Accordingly, the article refers to the legal responsibility of a deputy, a member of the government, a judge, and the president.

Բանալի բառեր - *պաշտոնատար անձ, պատգամավոր, կառավարություն, նախարար, դատավոր, նախագահ, պատասխանատվություն, հանրային իրավական պատասխանատվություն:*
Ключевые слова: *чиновник, депутат, правительство, министр, судья, президент, ответственность, публично-правовая ответственность.*
Keywords: *official, deputy, government, minister, judge, President, responsibility, public legal responsibility.*

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայկ Մարտիրոսյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Անկախության տարիների պետական կառավարման փորձի վերլուծությունն ավելի քան ցայտուն է դարձնում կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը: Ակնհայտ է, որ այլ գործոնների շարքում պետական կառավարման համակարգի անկատարությամբ պետք է բացատրել այն իրողությունը, որ հանրային կյանքում համակարգային բնույթի մի շարք արատներ քայքայում են պետականության հիմքերը: Քառորդ դարվա անկախության պատմությունն իր վկայություններով ավելի քան բավարար է պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման անխուսափելի անհրաժեշտությունը գիտակցելու և նպատակադրված ու հաշվարկված քաղաքական, տնտեսական և իրավական մեխանիզմներ կիրառելու համար: Այս առումով պետք է արձանագրել, որ պետությունը հասարակության հանրային կյանքի բնականոն կենսագործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ իրավական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր համակարգ է, որի կենսագործունեությունը պայմանավորված է հանրային կյանքի մասնակից բոլոր ինստիտուտների և նրանց միջև գործող փոխհարաբերությունների ամբողջականությամբ: Վերոնշյալ գործոնների արդյունավետ համադրման տարբերակի ընտրությունը կնպաստի պետական կառավարման արդյունավետության ապահովմանը:

Յուրաքանչյուր անհատ կենսագործունեությունն ապահովելու նպատակով կարիք ունի որոշ անհրաժեշտությունների, որոնք ոչ այլ ինչ են, քան հանրային բնույթի ծառայություններ և ընդգրկում են հանրային կյանքի բոլոր ոլորտները՝ կրթությունից մինչև ազգային անվտանգություն: Այսինքն՝ դրանք այն ծառայություններն են, որոնց կարիքն ունի հասարակության յուրաքանչյուր անհատ, և

առանց դրանցից անարգել օգտվելու արժանապատիվ կյանքով ապրելու քաղաքացու իրավունքը կվերածվի ձևականության: Սեփական ջանքերով նման անհրաժեշտությունների ձևավորումը և՛ անհնար է, և՛ ոչ արդյունավետ: Այդ ծառայությունների կազմակերպման նպատակով պետության մեջ ձևավորվում են պետական մարմիններ, որոնց առաքելությունը քաղաքացուն հանրային բնույթի որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման կազմակերպումն է: Վերոնշյալ մարմինների գործունեության հաջողության գրավականը վերջիններիս կողմից իշխանության իրացման շրջանակում ընդունվող որոշումների պարտադիրությունն է բոլորի համար: Ընդ որում՝ խոսքը բացառապես քաղաքական որոշումների մասին է, այսինքն՝ հանրային կյանքի ոլորտներում հանրության սպասելիքները բավարարելու նպատակով ընդունված որոշումների: Սրանում արտացոլվում է «իշխանությունը ժողովրդի համար» կարգախոսի իրավաքաղաքական բովանդակությունը: Միևնույն ժամանակ իշխանության իրականացումը վերացական գործընթաց չէ, այլ կոնկրետ պաշտոնյայի կողմից իրականացվող անձնավորված որոշումների ընդունմամբ պայմանավորված գործընթաց: Տրամաբանական է, որ որոշումներ կայացնելիս պաշտոնյաներն առաջնորդվում են խնդիրների կարգավորման վերաբերյալ սեփական պատկերացումներով և մեկնաբանություններով, իսկ երբեմն նաև ենթադրյալ արդյունքի նկատմամբ սեփական ակնկալիքների գայթակղությամբ: Արդյունքում պետական իշխանության զուգորդումն անձնավորված բնույթով կամ վերջինիս դուալիզմը կարող է լուրջ խոչընդոտ դառնալ պետական իշխանության արդյունավետ իրականացման ճանապարհին:

Վերջին ժամանակներս մեծ տարածում է գտել այն մոտեցումը, համաձայն որի՝ պետական իշխանության արդյունավետ իրականացման գլխավոր գրավականը որպես հակակշիռ հանդես եկող քաղաքացիական հասարակությունն է: Այս տեսանկյունից դիտարկելիս նժարի մի կողմում իրական իշխանությունն է կամ ուժը, իսկ մյուս նժարին՝ հեղաշրջումներ գեներացնող հասարակությունը, որը զուրկ է այլ միջոցներից:

Արդյունքում պետական իշխանության արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից որպես հիմնական գրավական հանդես

է գալիս իշխանության մարմինների կազմակերպման զսպումների և հակակշիռների մեխանիզմը:

Միաժամանակ պետական իշխանության արդյունավետության կարևոր գրավականներից է ժամանակի պահանջներին համապատասխանող քաղաքական, տնտեսական և իրավական համակարգային խնդիրների լուծումը: Ժամանակակից աշխարհում դժվար է տարանջատել տնտեսությունը քաղաքականությունից՝ նույնիսկ աշխարհաքաղաքական գործընթացներում: Փաստ է, որ զարգացած երկրների հաջողության անկյունաքարը հիմնարար գիտություններին և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսությունն է: Առաջատար երկրներում գիտության և բարձրագույն կրթության զարգացումը տնտեսության առաջընթացի հիմնական երաշխիքն է, հետևաբար՝ գիտության և հատկապես հիմնարար գիտության զարգացումը գիտատար ապրանքի, բարձր տեխնոլոգիական տնտեսության ստեղծման գլխավոր գործոնն է: Երկրի գիտության ոլորտի զարգացումը կոչված է ապահովելու համախառն ներքին արդյունքի կայուն աճ: Պետության կողմից գիտության կառավարումը պետք է ներդաշնակվի կրթության և մշակույթի ոլորտներում իրականացվող քաղաքականության հետ: Քաղաքական և տնտեսական առաջընթացի համար գլխավոր նախապայմանը մարդկային կապիտալն է: Ցավոք այս առումով Հայաստանում վերջին տարիներին արձանագրվել են բացասական միտումներ՝ պայմանավորված արտագաղթով և ծնելիության նվազման միտումներով: Ինչպես կանխատեսել են Համաշխարհային բանկի փորձագետները, իրողություններին նման շարժի պայմաններում մինչև 2050 թվականը Հայաստանի բնակչությունը կնվազի մոտ 24%-ով, իսկ 5-14 տարեկան բնակչությունը տարեկան կնվազի 0.83%-ով, ինչի արդյունքում վերոնշյալ ժամանակահատվածում 47%-ով կպակասի հիմնական կրթության ձգտող անձանց թիվը: ՄԱԿ-ի մարդկային կապիտալի վերաբերյալ զեկույցներից հետևում է, որ դրա տեսակարար կշիռն այնպիսի զարգացած երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Ֆինլանդիան, Գերմանիան, Ճապոնիան, Շվեյցարիան, կազմում է ազգային հարստության մինչև 80%-ը:

Վերոնշյալ խնդիրների լուծումն իրապես հնարավոր կլինի պետական կառավարման համակարգի՝ ներկա մարտահրավերներին դիմագրավելու և առաջընթացին միտված տնտեսական ու քաղա-

քական հիմնադրույթների և կառուցակարգերի մշակման ու ներդրման դեպքում: Այս համատեքստում պետք է արձանագրենք ՀՀ-ում առկա վակուումային իրավիճակ, ինչի պայմաններում տնտեսական ցուցանիշների բարելավման հավանականությունը գրեթե հավասարեցված է զրոյի:

Խնդրի ողջ էությունն այն է, որ տարածաշրջանային «տնտեսական պատերազմի» պայմաններում, երբ հարևան երկրների կոմունիկատիվ հանգույցները շրջանցում են Հայաստանը, իսկ շրջափակման գործոնի ազդեցությունը տնտեսության վրա դժվար է գերագնահատել, ՀՀ-ում բացակայում են տնտեսության կառուցման հայեցակարգային մոտեցումը և այդ իմաստով նաև քաղաքական կողմնորոշիչ ազդակները: Ներկայումս աշխարհում առկա են տնտեսական համակարգերի մի շարք մոդելներ, որոնց ընտրությունը կախված է տվյալ պետության բնառեսուրսային հնարավորություններից, մարդկային ներուժի ազդեցության մակարդակից: Մոդելների տարբերությունը պայմանավորված է տնտեսության և տնտեսական գործընթացներում պետության ներգրավվածության աստիճանով և ձևով: Կամ պետությունը վերածվում է պասիվ դերակատարի՝ զբաղվելով միայն ֆիսկալ գործունեությամբ կամ, այլ կերպ ասած, հարկահավաքությամբ, կամ ներգրավվում է նաև բիզնես գործունեության ակտիվ և պասիվ գործընթացներում՝ պետական գանձարանը համալրելով նաև շահաբաժիններից ստացված եկամուտներով: Ներգավվածության ակտիվ տարբերակի պարագայում պետությունը կառավարում է տվյալ բիզնեսը, պասիվ տարբերակում՝ կառավարմամբ չի զբաղվում[1]:

Ինչպես վկայում է մի շարք երկրների փորձը, ինչպես, օրինակ, Չինաստանի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն, Իրանի Իսլամական Հանրապետություն և այլն, պետության ակտիվ ներգրավվածությունը տնտեսության մի շարք ոլորտներում կամ, այլ կերպ ասած, բաժնետիրոջ կար-

[1] Руденко И.В., Концепции государственного регулирования экономики. Государство и рынок: механизмы и методы регулирования в условиях преодоления кризиса и перехода к инновационному развитию: матер. Третьей Всероссийской конференции с международным участием - СПб: Изд-во СПб государственного университета экономики и финансов, 2010, с. 138-139.

գավիճակով հանդես գալը էապես նպաստում է պետական եկամուտների համալրման գործընթացին, ապահովում է արդյունավետ պետական վերահսկողություն շուկայում, նպաստում փոքր բիզնեսի բեռի թեթևացմանը: Խոսքը հատկապես մեծ եկամտաբերություն ապահովող և ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում պետության ակտիվ ներգրավման մասին է, ինչպես, օրինակ, ԻԻՀ-ում նավթագազային ոլորտը կամ հետխորհրդային տարածքում՝ Բելառուսի Հանրապետությունում, ռազմավարական նշանակության տնտեսական օբյեկտների սեփականաշնորհման՝ օրենսդրորեն նախատեսված արգելքը: Արդյունքում նմանատիպ համակարգերով առաջնորդվող պետություններում պետական բյուջեի զգալի մասը համալրվում է պետական բաժնետոմսերից ստացվող դիվիդենտներով: Հաշվի առնելով վերջին ժամանակաշրջանում տնտեսական և քաղաքական իրողությունները՝ վերոնշյալ մոդելի ամրագրման օգտին հանդես են գալիս նաև ռուս քաղաքագետները և տնտեսագետները, իսկ տնտեսության մեջ պետության ներգրավվածության աստիճանը Ռուսաստանի Դաշնությունում պարբերաբար աճում է: Ընդ որում՝ տնտեսական գործունեության բնագավառում պետական ակտիվ մասնակցությունը հնարավորություն է ընձեռում իրապես ազդեցություն ունենալու շուկայում գնային կարգավորումների վրա, իսկ որոշ դեպքերում, ըստ անհրաժեշտության (նաև անվտանգության նկատառումներով), մասնավոր տնտեսվարողներին օբյեկտիվորեն «պարտադրելու» գնային քաղաքականություն: Այս մոդելն իրապես կապված չէ սոցիալիստական գաղափարախոսության հետ, այլ ելնում է իրողություններից՝ պայմանավորված պետության ազդեցության ոլորտների ընդլայնման անհրաժեշտությամբ: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում ներկայումս պետական մասնակցությամբ ընկերությունների թիվը գնալով աճում է, ինչը նպաստել է հատկապես փոքր բիզնեսի բեռի թեթևացմանը՝ կապված վերջիններիս համար հարկային մեխանիզմների դյուրինացման և դրույքաչափերի նվազեցման հետ[1]: Ընդ որում՝ պետք է փաստել, որ բիզնեսում «պետությունը վատ կառավարիչ է»

[1] Соколов М.М., Об уровне налоговой нагрузки в экономике России и о возможностях по ее снижению без сокращения налоговых поступлений, *Экономика в промышленности*, 2018, Т. 11, N 1.

արտահայտությունը խիստ գնահատողական և սուբյեկտիվ է և հաստատված օրինաչափություն չէ[1]:

Վերոնշյալ խնդիրների կարգավորման վերաբերյալ հայեցակարգային հիմնադրույթների բացը հետևանք է նաև քաղաքական պատասխանատվության իրական ասպեկտի բացակայության: Քաղաքական պատասխանատվության գործոնի իրատեսությունը ներառում է քաղաքական տարբեր համակարգեր, ինչպես, օրինակ, ընտրական գործընթացներում քաղաքական ուժերի կողմից ապագա կառավարությունների կազմի ներկայացումը և կառավարման տարբեր ոլորտներում հայեցակարգերի ներկայացման պարտադիր լինելը: Ապագա կառավարության կազմի ներկայացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ծրագրեր իրականացնող սուբյեկտների կարողությունների գնահատման անհրաժեշտությամբ, քանզի քաղաքական համակարգի ներկայիս անկատարության պայմաններում շեշտադրումը պետք է կատարել սուբյեկտների վրա՝ գոնե նախընտրական շրջանում: Ընդ որում՝ հայեցակարգերը և դրանցից բխող ծրագրերը պետք է պարունակեն տվյալ ոլորտի կազմակերպությունների զարգացման ուղղությունները, տնտեսական արդյունքներն ու ցուցանիշները և հստակ ժամկետները: Այս առումով պետք է փաստել, որ ՀՀ-ում դեռևս կայացած չեն քաղաքական համակարգի դերակատար կուսակցությունները, ինչը գոնե այսօր բացառում է գաղափարական պայքարն այս ասպարեզում: Հարց է առաջանում՝ որն է խնդրի լուծման ուղին՝ հաշվի առնելով տարածաշրջանային անվտանգության և տնտեսական զարգացման ապահովման մարտահրավերները: Հայաստանի պարագայում խնդիրն առավել քան բարդ է՝ պայմանավորված տարածաշրջանային հաղորդակցական համակարգերից օգտվելու սահմանափակումներով և պատերազմական գործողությունների իրական վտանգով: Որպես իրավիճակի բարելավման ուղի առաջարկվում է տնտեսական ագրեսիվ քաղաքականության ամրագրում, ինչպես, օրինակ, երկրում առկա բնառեսուրսային հումքանյութերի երկրորդային վերամշակման կազմակերպում և այդ ոլորտում պետական մասնակցության ավելացում: Բացի դրանից՝ անհրաժեշտ է խորը և

[1] Экономическая теория: учебное пособие / коллектив авторов; под редакцией В.М. Соколинского, 7-е изд., стер., М., КНОРУС, 2014, 464 с.

համապարփակ վերլուծությունների արդյունքում պարզեցնել հարկային դաշտը՝ հատկապես փոքր բիզնեսի համար ձևավորելով անխոչընդոտ գործունեություն՝ օրենսդրությամբ նախատեսված ծավալների և ժամկետների միջակայքում:

Հանրային կառավարման համակարգային խնդիրներից է նաև պետական կառավարման ձևի ընտրության հարցը, քանի որ արդեն իսկ վերը նշված պատճառներով քաղաքական պատասխանատվության գործոնի արդյունավետությունը ներկայումս ուղիղ համեմատական է կոնկրետ սուբյեկտի քաղաքական որակներին: Դեռևս 2016 թ. սահմանադրական փոփոխությունների գործընթացի շրջանակում տարբեր մասնագետներ պնդում էին, որ Հայաստանի պարագայում, հատկապես հաշվի առնելով քաղաքական համակարգի անկատարությունը, ժողովրդի պատմականորեն ձևավորված մենտալիտետը, նախընտրելի կառավարման ձևը եթե ոչ նախագահական, ապա գոնե կառավարման կիսանախագահական մոդելն է, որի պարագայում քաղաքական ճգնաժամերի ժամանակ իրավիճակը հանգուցալուծողի դերակատարումը վերապահված է նախագահի ինստիտուտին: Նման տրամաբանությամբ ընթացան սահմանադրաիրավական գործընթացներն Արցախի Հանրապետությունում:

СИСТЕМНЫЕ ПРОБЛЕМЫ ОБЩЕСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Гайк Мартиросян

Доцент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Повышение эффективности системы общественного правления является важнейшей задачей, которая связана с точным урегулированием некоторых компонентов. Имеющие место глобализационные процессы приводят к необходимым срочным изменениям в этой сфере. Повышение эффективности государственного правления в большей степени связано с социально-экономическими возможностями государства, что предполагает также системные изменения.

THE SYSTEMATIC PROBLEMS OF PUBLIC MANAGEMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Hayk Martirosyan
Docent at the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

Raising in effectiveness of the system of public management is nowdays an important question, which is connected with the concrete regulation of some components. The current processes og globalization urges necessities of quick changes in that sphare. Raising in effectiveness of the system of public management is mainly connected with social-economic possibilities, wich take us also to systematic changes.

Բանալի բառեր - *իրավունք, տնտեսություն, գլոբալիզացիա, կառավարում, հանրային կառավարում, համակարգային փոփոխություններ, տնտեսական համակարգ, արդյունավետության բարձրացում, բնական ռեսուրսներ:*
Ключевые слова: *право, экономика, глобализация, правление, общественное правление, системные изменения, экономическая система, повышение эффективности, натуральные ресурсы.*
Key words: *law, economy, globalization, management, public management, systematic change, economic system, raising in effectiveness, natural resource.*

ՅԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ. ՓԱՓՈՒԿ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ (NUDGE THEORY) ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Վիկտորյա Օհանյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Իրավաբանական գիտություններն ավանդաբար անդրադարձել են իրավաչափ վարքագծի հիմնախնդրին իրավախախտ վարքագծի հետ հակադրության լույսի ներքո: Իրավաբանական հոգեբանության, կրիմինոլոգիայի և մարդու վարքագծի՝ իրավունքին համապատասխանության տեսանկյունից ուսումնասիրող այլ ճյուղային և միջճյուղային գիտությունների շրջանակում ավելի մեծ թիվ են կազմում իրավախախտ վարքագծի և դրա շարժառիթների մասին ուսումնասիրությունները: Ինչ վերաբերում է իրավաչափ վարքագծին, ապա այն իրավունքի տեսության մեջ հաճախ քննարկվում է իրավագիտակցության և իրավական մշակույթի համատեքստում: Ավելին՝ եթե ամփոփենք իրավաչափ վարքագծի տեսակների վերաբերյալ առավել տարածված մոտեցումները, ստացվում է, որ ըստ անձնական շարժառիթի՝ իրավաչափ վարքագիծը կարող է դրսևորվել հետևյալ տեսակներով.

ա) իրավունքի նորմերի՝ որպես առավել նպատակահարմար և հանրօգուտ կողմնորոշիչների գիտակցման կամ, այլ կերպ ասած, իրավունքի արժեքի գիտակցման վրա հիմնված իրավաչափ վարքագիծ,

բ) կոնֆորմիստական վարքագիծ, որի դեպքում վարքագիծը համապատասխանեցվում է իրավունքի նորմերին հենց այնպես, առանց դրա արժեքի մեջ անձի վստահության կամ իրավունքի բովանդակության հետ կապված որևէ կասկածների առկայության,

գ) իրավաչափ վարքագիծ՝ դրանից շեղվելու համար պատասխանատվությունից կամ պատժից վախի առկայության պատճառով:

Նշված բոլոր դեպքերում գործ ունենք այնպիսի վարքագծի հետ, որն իրավունքի նորմերին համապատասխանեցվում է *գիտակցաբար*: Որոշ դեպքերում դա տեղի է ունենում բարձր իրավական մշակույթ ունեցող սուբյեկտի կողմից արժևորման արդյուն-

քում, մյուս պարագայում՝ պարզապես ենթարկվելու և կարգուկանոնի ձգտման կամ վախի թելադրանքով՝ դրանց գիտակցման դեպքում: Նույնիսկ այն դեպքում, եթե գործ ունենք իրավական հոգեբանության մակարդակում առօրեական իրավագիտակցության հետ՝ հույզերի կամ ապրումների տեսքով, դրանց հիման վրա անձը կատարում է վարքագծի մոդելի *գիտակցական ընտրություն:*

Հետևաբար, միանգամայն տրամաբանական է այն եզրահանգումը, որ իրավաչափ վարքագծի առավել մեծ ծավալ և իրավունքի սոցիալական նշանակության կենսագործում հնարավոր է ապահովել այն հասարակությունում, որտեղ բարձր է իրավագիտակցության մակարդակը, և կա ձևավորված իրավական մշակույթ: Որքան ավելի զարգացած են հասարակությունում իրավական ավանդույթները, այնքան ավելի զարգացած է անձի հարգանքն իրավունքի և օրենսդրության հանդեպ[1]:

Այս ամենը որևէ կասկած չէր հարուցի, եթե ելնեինք այն կանխադրույթից, որ մարդը ռացիոնալ էակ է: Սակայն սոցիալական գիտությունների վերջին ձեռքբերումները վկայում են, որ մարդու վարքագիծը միշտ չէ, որ հիմքում ունի ռացիոնալ ընտրությունը:

Հարց է առաջանում. արդյո՞ք իրավաչափ վարքագծի շարժառիթների մեջ գիտակցության դերն իրոք անփոխարինելի է: Նշանակու՞մ է դա արդյոք, որ քանի որ մարդը ռացիոնալ չէ, իրավաչափ վարքագիծը՝ որպես ռացիոնալ ընտրություն, միշտ լինելու է, բացարձակ առումով, անհասանելի: Հնարավո՞ր է արդյոք նպաստել անձի կողմից վարքագծի այն կամ այն մոդելի ընտրությանը առանց նրա իրավագիտակցության և ռացիոնալ ընտրության դաշտ մտնելու: Վերջապես, արդյո՞ք այս բոլոր հարցերը պետք է հետաքրքրեն իրավագիտությանը, թե դրանց հետազոտմամբ զբաղվում են հոգեբանությունը, տնտեսագիտությունը, սոցիոլոգիան և մյուս սոցիալական գիտությունները, որոնք ուսումնասիրում են մարդու վարքագիծը:

Իրավաչափ վարքագծի շարժառիթներն ուսումնասիրելիս կարևոր է հասկանալ, թե ինչն է «ձգան» համարվում իրավաչափ

---

[1] Տե՛ս **Провалинский Д.И.**, Мотивация как элемент механизма реализации правовых стимулов. Теория и практика общественного развития, 2014, N 17, էջ 116:

վարքագծի համար: Ըստ էության, ինչպես և ցանկացած այլ վարքագծի դեպքում, դա շարժառիթն է: Սակայն այն հարցում, թե ինչպես է անձն ընտրում այս կամ այն շարժառիթը, որի հիման վրա էլ դրսևորում այս կամ այն վարքագիծը, գիտնականները միակարծիք չեն: Որպես շարժառիթի հիմք երբեմն դիտարկվում է անձի սոցիալական դիրքորոշումը՝ սուբյեկտի ամբողջական դինամիկ վիճակը, պատրաստականությունը որոշակի ակտիվության, որը պայմանավորված է երկու գործոններով՝ մի կողմից սուբյեկտի պահանջմունքներով, շահերով, նպատակով, մյուս կողմից՝ համապատասխան օբյեկտիվ իրավիճակով: Ահա այս սոցիալական դիրքորոշումների մեջ իրավական դիրքորոշումն առանձնանում է նրանով, որ ձևավորվում է որպես իրավունքի նորմերի գիտակցում, հասկացում, և հետևաբար, թեև իրավական զգացմունքների, հույզերի, ապրումների նշանակությունն իրավունքի ճանաչման գործընթացում չի կարող նսեմացվել, առաջնային դեր է խաղում դիրքորոշման կոգնիտիվ, ոչ թե սենզիտիվ տարրը[1]: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ իրավական շարժառիթի հիմքում հիրավի ընկած է իրավական դիրքորոշումը, սակայն ի տարբերություն շարժառիթի, որը մարդու կողմից տվյալ նպատակի՝ տվյալ պահանջմունքի բավարարմանը վերաբերելու գիտակցումն է, դիրքորոշումն անգիտակցականի ոլորտից է: Եթե անձի շարժառիթները հնարավոր է հասկանալ՝ վերլուծելով նրա պահանջմունքները, շահերը, նպատակը և օբյեկտիվ իրավիճակը, ապա դիրքորոշումը հաճախ հասկանալի չէ նույնիսկ այն կրող սուբյեկտի համար[2]: Խնդիրն այն է, որ անձի մոտ իրավական դիրքորոշումների ձևավորումը բարդ գործընթաց է, որը ներառում է փոխազդող ներքին և արտաքին գործոնների ամբողջություն՝ ուղղված արտաքին աշխարհից ստացվող իրավական տեղեկատվության փոխակերպմանը թե՛ իրավական գիտելիքի և թե՛ մարդու որոշակի վերաբերմունքի իրավունքի, իրավակարգի և այլ իրավական երևույթների նկատմամբ: Անձն ընտրանքային վերա-

[1] Տե՛ս **Мещерякова А.В., Мещерякова С.Н.**, О формировании пускового механизма правового поведения личности. Философия права, 2015, N 1 (68), էջ 84:
[2] Տե՛ս **Зарубаева Е. Ю.,** Мотивация и установка как психолого-правовые факторы правомерного поведения личности. Сибирский юридический вестник, 2004, N 4, էջ 23:

բերմունք ունի իրավական տեղեկատվության նկատմամբ: Այլ կերպ ասած՝ շարժառիթի ընտրության պահին տարբեր սոցիալական դիրքորոշումներ ազդում են մարդու ընտրության վրա միաժամանակ, և կախված պայմաններից՝ իրավական դիրքորոշումը (անձի իրավագիտակցության դրսևորումը) կարող է կանխորոշել, կարող է նաև չկանխորոշել անձի կողմից վարքագծի ընտրությունը: Հետաքրքիր է, որ նույն հետևությանն են հանգում առօրեական իրավագիտակցության և իրավական գնահատականի հիմնահարցերն ուսումնասիրող հեղինակները, ըստ որոնց՝ անձի մոտ իրավական գնահատականը ձևավորվում է իրավական երևույթներին ոչ միայն ռացիոնալ, այլև հուզական գնահատական տալու միջոցով[1]:

Վերը քննարկված հարցերը բերում են այն հետևության, որ անձի կողմից իր վարքագծի ընտրությունը բացառապես գիտակցական գործընթաց չէ, և հետևաբար, իրավագիտակցության բարձրացումը ոչ բոլոր դեպքերում կարող է խթանել իրավաչափ ցանկալի վարքագծի դրսևորումը: Միևնույն ժամանակ, դրանից բխում է մեկ այլ կարևոր հետևություն. եթե հնարավոր է կառավարել անձի կողմից կատարվող ընտրության վրա ազդող որոշ գործոններ, այլ կերպ ասած՝ *եթե հնարավոր է ուղղորդել նրա կողմից վարքագծի ընտրությունն* այնպես, որ արդյունքում դրսևորվի իրավաչափ ցանկալի վարքագիծ, դա կարող է դառնալ արդյունավետ ռազմավարություն հասարակության այն հատվածը թիրախավորելու համար, որի իրավագիտակցության բարձրացումը պետության համար անհրաժեշտ գործընթաց է:

Պետք է նշել, որ վարքագիծը որպես հոգեկանի երևույթ ուսումնասիրող հոգեբանական տեսությունը՝ բիհեյվորիզմը, նոր չէ: Բիհեյվորիզմին հաջորդեց նեոբիհեյվորիզմը, հոգեբանական այս տեսության արդյունքների հիման վրա 20-րդ դարի երկրորդ կեսին ձևավորվեց միջճյուղային այնպիսի ուղղություն, ինչպիսին է վարքագծային տնտեսագիտությունը (behavioual economics), որը հետազոտում է հոգեբանական, կոգնիտիվ, հուզական, մշակութային և սոցիալական գործոնների ազդեցությունն անհատների և հաստատությունների տնտեսական որոշումների վրա և այդ որոշումների տարբե-

[1] Տե՛ս, օրինակ, **Максимов Г.Б.,** Особенности обыденной правовой оценки (вопросы теории государства и права). Бизнес в законе, 2013, N 1, էջ 32:

րությունն այն որոշումներից, որոնք ենթադրաբար պետք է կայացվեին տնտեսագիտության դասական տեսության տեսանկյունից: 21-րդ դարի սկիզբը նշանավորվեց վարքագծային տնտեսագիտության ոլորտում կարևորագույն նվաճումների համար երկու Նոբելյան մրցանակներով: Վերջին մրցանակը տրվեց 2017 թ. Ռիչարդ Թալերին այն գիտական եզրահանգման համար, որ մարդիկ կանխատեսելիորեն իռացիոնալ են[1]: Թալերի և Սանսթեյնի կողմից առաջ է քաշվում այն դրույթը, որ ի տարբերություն տնտեսագիտության մեջ և այլ սոցիալական գիտություններում որպես նախադրյալ ընդունվող «homo economicus»-ի՝ ռացիոնալ և ճիշտ լուծումներ ընտրող մարդու՝ «homo sapience»-ը իր ընտրության մեջ կատարում է կանխատեսելի սխալներ, քանի որ առաջնորդվում է էվրիստիկական մոտեցումներով, թյուրընկալումներով և առասպելներով: Բացի դրանից՝ մարդը կրում է իր սոցիալական շփումների ազդեցությունը: Նորությունն այս ամենի մեջ այն է, որ մարդուն իռացիոնալ, ոչ տրամաբանական վարքագծի մղող գործոնների իմացությունը (իսկ այդ գործոնները[2] վաղուց ուսումնասիրվում են սոցիալական գիտությունների կողմից) թույլ է տալիս *կանխատեսել* անձի կողմից այդպիսի վարքագիծ ցուցաբերելու հավանականությունը: Իհարկե, գիտակցական գործոնների և կամքի ազդեցությունը կարող են յուրաքանչյուր կոնկրետ դեպքում փոխել անձի կողմից որոշման կա-

[1] 2008 թ. լույս տեսավ տնտեսագետ Ռիչարդ Թալերի և Հարվարդի համալսարանի իրավաբանական դպրոցի պրոֆեսոր, իրավագետ Քաս Սանսթեյնի համահեղինակությամբ «Nudge: Improving Decisions About Health, Wealth, and Happiness» գիրքը, որը հեղափոխություն էր վարքագծային գիտության ոլորտում և իրականում դուրս բերեց նշված մոտեցումների կիրառման հնարավորությունը տնտեսական հարաբերությունների շրջանակից՝ տարածելով դրանք նաև հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման, հանրային քաղաքականության և այլ ոլորտների վրա: Այսօր կիրառվում է **«վարքագծային գիտություն» (behavioral science)** եզրույթը, որը կոչված է ընդգծելու ճանաչողության այս ոլորտի միջճյուղային բնույթը:
Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Nudge_(book):

[2] Դրանց շարքում՝ «հոտային» բնազդը, «ստատուս քվո» վիճակին հակվածությունը, ներկայացուցչական էվրիստիկան և այլն:

յացման ընթացքը՝ ավելի զորեղ գտնվելով: Բայց մյուս դեպքերում գործ կունենանք կանխատեսելի իռացիոնալ վարքագծի հետ:

Եթե վարքագիծը կարելի է կանխատեսել, ուրեմն կարելի է նաև ազդել դրա վրա՝ «*փափուկ ուղղորդման» (nudge)* միջոցով: Սոցիալական գիտությունների տեսանկյունից «nudge»-ի գաղափարն առաջ բերեց ազատականության նոր ուղղություն՝ ազատական նահապետականություն (libertarian paternalism), որի հիմնական կանխադրույթը հետևյալն է. հանրային և մասնավոր կազմակերպությունների համար հնարավոր և լեգիտիմ է ազդել մարդկանց վարքագծի վրա՝ միաժամանակ չմիջամտելով ընտրության ազատության սկզբունքին: Փափուկ ուղղորդման գործընթացն իրենից ներկայացնում է «ընտրության ճարտարապետություն» (choice architecture), որի պայմաններում վարքագծային գիտությունը գործի է դրվում մարդկանց վարքագծի վրա ազդեցության «փափուկ» միջոցների մշակման և կիրառման համար: Փափուկ ուղղորդումն անհրաժեշտ է տարբերակել անձի վարքագծի վրա ազդեցության այլ եղանակներից՝ օրենսդրության իմպերատիվ կարգավորումներից, իրավական, սոցիալական և տնտեսական խթաններից, հիմնավորումներ և պատճառաբանություն պարունակող տեղեկատվության տրամադրումից: Հետևապես, փափուկ ուղղորդումն աղերսներ չունի արգելման կամ համոզման հետ: Այսպիսով՝ փափուկ ուղղորդումը գործողություն է՝ ներազդելու մարդու դատողության, ընտրության և վարքագծի վրա կանխատեսելի ձևով, որը մշակվում է՝ հաշվի առնելով մարդու անհատական և սոցիալական միջավայրերում իրենց շահերից բխող ողջամիտ որոշումներ կայացնելուն խոչընդոտող գործոնները՝ կոգնիտիվ սահմանները, կանխակալ վերաբերմունքը, սովորությունները, առօրյան[1], և ուղղված է այդ գործոնների ազդեցության նվազեցմանը[2]: Փափուկ ուղղորդման կենցաղային լավ օրինակ

[1] Տե՛ս **Pelle Guldborg Hansen, "**The Definition of Nudge and Libertarian Paternalism: Does the Hand Fit the Glove", European Journal of Risk Regulation, 2016, N 1, էջ 20 (http://www.lexxion.de/pdf/ejrr/Pelle_2016_01.pdf):

[2] «Nudge»-ի կիրառման նպատակը դրա բնորոշման մեջ ներառելու մասին գիտական վեճերը չեն դադարում: Տվյալ հոդվածի շրջանակում առաջարկվում է ներառել սոցիալապես նշանակալի նպատակը բնորոշման մեջ, քանի որ պետության և իրավունքի տեսության խնդիրներից ելնելով՝ փափուկ

է մանկական սննդի օբյեկտներում թարմ բանջարեղենի և մրգի ցուցադրությունը երեխայի աչքի մակարդակի վրա, ինչի հետևանքով աճում են օգտակար սննդամթերքի վաճառքները։

Ազատական նահապետականության պարադիգման, անշուշտ, ազատական է, որովհետև ճանաչում է անձի «չուղղորդվելու» ազատությունը։ Բայց մյուս կողմից այն նահապետական է (պատեռնալիստական), որովհետև ճանաչում է հանրային և մասնավոր կազմակերպությունների *(այս հոդվածի նպատակներից ելնելով՝ առաջին հերթին պետության)* իրավասությունը՝ ներազդելու մարդկանց վարքագծի վրա նույնիսկ այն դեպքերում, երբ դա չի շոշափում երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, «դրդելու» նրանց կայացնել որոշումներ իրենց իրավունքների և օրինական շահերի առավել լիարժեք իրականացման և հասարակության բարեկեցության համար[1]։

Փորձենք վերլուծել փափուկ ուղղորդումն իրավագիտության տեսանկյունից և հասկանանք, թե ինչ դեր կարող է այն խաղալ իրավաչափ վարքագծի խթանման առումով։ Ակնհայտ է, որ մեզ առաջին հերթին հետաքրքրելու են վարքագծի այն ասպեկտները, որոնց համապատասխանեցումն օրենքին հնարավոր չէ ապահովել զուտ իմպերատիվ նորմերի սահմանման և դրանց խախտման դեպքում պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կատարյալ իրացման միջոցով։ Ավելին՝ ազատական ժողովրդավարական հասարակությունում փափուկ ուղղորդումը կարող է կարևոր այլընտրանք դառնալ պատասխանատվության վախին՝ որպես իրավաչափ վարքագծի ապահովման գործոնի։ Այն կարող է մեծ դեր խաղալ իմպերատիվ նորմերի կենսագործման խնդիրների լուծման համար[2]։

ուղղորդման հասկացությունը առանց հանրօգուտ նպատակի սահմանելն առաջացնում է լուրջ խնդիրներ։

[1] Տե՛ս **Richard H. Thaler & Cass R. Sunstein**, "Libertarian Paternalism Is Not an Oxymoron" (University of Chicago Public Law & Legal Theory Working Paper No. 43, 2003), էջ 4 (http://www.law.uchicago.edu/academics/publiclaw/index.html):

[2] Վարքագծային գիտությունը հաջողությամբ կիրառվում է հարկային իրավահարաբերությունների կարգավորման մեջ։ Որպես օրինակ կարելի է վկայակոչել Մեծ Բրիտանիայում հարկատուներին ուղարկվող հիշեցման ձևակերպման մեջ կատարված փոփոխությունը, որի արդյունքում սահման-

Այդուհանդերձ, քանի որ սույն հոդվածի շրջանակում քննարկվում է ցանկալի վարքագծի իրավական խթանման հիմնահարցը, անդրադառնանք այնպիսի իրավաչափ վարքագծին, որը ձևավորվում է դիսպոզիտիվ նորմերի իրականացման արդյունքում, ենթադրում է քաղաքացիական հասարակության մեջ ազատ և գիտակից սուբյեկտների կողմից իրենց իրավունքների և օրինական շահերի լիարժեք իրականացում և նախաձեռնողականություն՝ իրավական ազատության պայմաններում: Կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ պետությունն «անտարբեր» չէ նման դեպքերում իրավունքի իրականացման ճակատագրին: Եթե, օրինակ, անդրադառնանք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 11-րդ հոդվածին, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը... պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը, ինչպես նաև 12-րդ, 86-րդ հոդվածներին, պարզ է դառնում, որ անհատի ակտիվության, նախաձեռնողականության և ցանկալի վարքագծի խթանումը պետության համար պոզիտիվ պարտականություն է: Քանի որ պետության միջամտությունն անձի վարքագծին հնարավոր է միայն իրավական ձևի շրջանակում, հետևաբար փափուկ ուղղորդումը՝ որպես սոցիալապես նշանակալի ցանկալի վարքագծի խթանման միջոց, պետությունը կարող է կիրառել միայն իրավական գործիքակազմի կիրառմամբ:

Իրավունքում փափուկ ուղղորդման իմաստը հասկանալու համար դիտարկենք մի հիպոթետիկ օրինակ: Դիցուք սոցիալական պաշտպանության պետական ծրագիրը և դրա հիման վրա ընդունված համապատասխան օրենսդրական ակտը նախատեսում են զինվորական ծառայությունից կենսաթոշակի անցած անձանց համար անվճար մասնագիտական վերապատրաստման իրավունք:

ված ժամկետում հարկերի վճարումն աճեց 6 տոկոսով: Նմանատիպ միջամտությունը Լեհաստանում հանգեցրեց 15 տոկոսով աճի, իսկ Կոստա Ռիկայում ժամկետում ներկայացվող հարկային հայտարարագրերի քանակը եռապատկվեց (https://www.bloombergquint.com/politics/uk-the-nudge-unit-uses-behavioural-science-to-influence-policy-outcomes-such-as-improved-tax-collections-and-pension-enrolment#gs.Se75e6OT):

Սոցիալապես նշանակալի նպատակը, որը դրված է նշված կարգավորման հիմքում, այն է, որ համեմատաբար վաղ տարիքում աշխատանքային հարաբերություններից դուրս մնացող անձինք աջակցություն ստանան և ստեղծեն իրենց համար աշխատանքային գործունեությունը շարունակելու հնարավորություն։ Կարելի է պնդել, որ թեև ամրագրված նորմը սահմանում է թույլատրելի վարքագծի չափ, բայց սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության տեսանկյունից դա ցանկալի վարքագիծ է, սոցիալապես նշանակալի արդյունք ձևավորող վարքագիծ, որը կնպաստի նախկին զինծառայողների առավել կայուն սոցիալական պաշտպանվածությանը և հասարակական կյանքին լիարժեք վերաինտեգրմանը։ Օրենսդրությամբ նշված հնարավորության նախատեսումը և դրան համապատասխան բյուջետային պլանավորումն անհրաժեշտ նախապայման են համապատասխան վարքագծի դրսևորման համար։ Իրավունքից օգտվելու համար անձը պետք է ներկայացնի դիմում սոցիալական պաշտպանության տարածքային մարմիններ և գրանցվի։ Իրականացվում են իրազեկման աշխատանքներ, սակայն ծրագրի գործողության առաջին տարվա ամփոփումը ցույց է տալիս, որ իրենց իրավունքից օգտվել են շատ փոքր թվով նախկին զինծառայողներ, և վերջիններիս շրջանում գործազրկության մակարդակը շարունակում է մնալ բարձր։ Ո՞րն է լուծումը։ Իրավաչափ վարքագծի խթանման ավանդական կառուցակարգերի շրջանակում կարելի է դիմել հետևյալ միջոցների. ա) հատուկ ծրագիր իրականացնել՝ անձանց իրավագիտակցությունը զարգացնելու ուղղությամբ, ինչը երկարատև գործընթաց է և պահանջում է համալիր մոտեցում՝ պետության և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կառույցների մասնակցությամբ, բ) դիմել իրավական խթանների, օրինակ՝ նախատեսել պարտադիր վճարների կատարման տարաժամկետում՝ վերապատրաստմանը մասնակցելու դեպքում, ինչը մեկ տարվա ընթացքում վերապատրաստվողների թիվը բարձրացնում է աննշան։

Ահա այստեղ օգնության է գալիս փափուկ ուղղորդումը։ Առաջարկվում է փոխել վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար գրանցման կարգը։ Անձինք զինվորական ծառայությունն ավարտելուն պես ծանուցվում են այն մասին, որ ներառված են անվճար վերապատրաստման ծրագրում և հրավիրվում են

դասընթացների: Միաժամանակ նշվում է, որ վերապատրաստումից հրաժարվելու ցանկության դեպքում անձը կարող է դիմում ներկայացնել սոցիալական ապահովության տարածքային բաժին: Այս կարգը ներդնելու արդյունքում վերապատրաստման իրավունքից օգտվողների քանակի զգալի աճ է գրանցվում:

Մեր բերած օրինակում՝ իրավունքի դիսպոզիտիվ նորմի գործողությունն ապահովելու համար պետությունը չի դիմում որևէ իմպերատիվ նորմի օգնության, չեն նախատեսվում սանկցիաներ, իսկ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորման աշխատանքը դեռ երկար չի տալու իր պտուղները: Սակայն վարքագծային գիտության արդյունքներն օգտագործելով՝ կարճ ժամկետում հնարավոր է դառնում հասնել վարքագծի փոփոխության՝ ստանալով այն ցանկալի վարքագիծը, որի մոդելն ամրագրվել էր իրավունքի նորմով: Մեծ հաշվով, այս փոփոխությունը ձեռք է բերվում նույնիսկ առանց վարքագծի շարժառիթների վրա ներազդելու: Պարզապես վերացվում է այն խոչընդոտը, որը խանգարում էր անձին գործել իր օգտին, տվյալ դեպքում՝ պրոկրաստինացիան[1]: Աշխատեց լռությամբ դրված կարգավորման՝ «default» -ի կանոնը[2]:

Վարքագծային գիտության նվաճումների օգտագործումը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման և քաղաքականության մշակման ոլորտներում սկիզբ է առել 20-րդ դարի վերջին, սակայն ակտիվորեն տարածվեց 2010 թ.-ից, երբ

---

[1] Քաս Սանսթեյնի կողմից առանձնացվել են վարքագծային գիտության եզրահանգումները մարդու կողմից ցանկալի վարքագծի դրսևորմանը խոչընդոտող այն գործոնների մասին, որոնք հատկապես մեծ կարևորություն ունեն իրավական կարգավորման տեսանկյունից: Դրանք են իներցիան և պրոկրաստինացիան, ձևակերպումների և ներկայացման սահմանափակումները, սոցիալական ազդեցությունը և «խմբի» դինամիկան, իրական հավանականությունը գնահատելու անունակությունը: Տե՛ս **Cass R. Sunstein**, Nudges.gov: Behavioral Economics and Regulation, Oxford Handbook of Behavioral Economics and the Law, 2013, էջեր 4-7, http://ssrn.com/abstract=2220022:

[2] Rule of default – ենթադրվում է, որ ցանկալի քայլը, ծրագիրը, կարգավորումը լռությամբ իրականացվելու են, եթե անձն իր ակտիվ գործողությամբ «դուրս չգա» համապատասխան ծրագրից կամ կարգավորման գործողությունից:

Միացյալ Թագավորության կառավարությունը հիմնադրեց Վարքագծային գիտության նվաճումների թիմը (Behavioural Insights Team - BIT), որը հայտնի դարձավ Մեծ Բրիտանիայի «Փափուկ ուղղորդման բաժին» (Nudge Unit) անունով: 2015 թ. ԱՄՆ նախագահ Բ. Օբաման հրամանագրով նախատեսեց գործադիր իշխանության բոլոր մարմինների կողմից իրենց քաղաքականություններում և ծրագրերում վարքագծային գիտության նվաճումների վրա հենվելու պահանջ: Դրան հետևեց Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) 2017 թ. իրականացրած մեծածավալ հետազոտությունը, որը ցույց տվեց, որ վարքագծային գիտության նվաճումների կիրառումը պետությունների կողմից աճում է[1]: 23 պետություն, ինչպես նաև միջազգային կազմակերպություններ կիրառում են վարքագծային գիտության վրա հիմնված 159 մոտեցում հանրային քաղաքականության մեջ: Ընդ որում՝ այդ մոտեցումների մի մասը կիրառվում է իրավական ակտերի նախագծերի մշակման փուլում և անմիջականորեն արտացոլվում է համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերում, իսկ մի մասը ներառվում է իրավասու պետական մարմնի ներքին կանոնակարգերում կամ պարզապես արտացոլվում է գործելակերպում: Բոլոր դեպքերում, կառավարությունները փնտրում են կարգավորման այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան նրանց հասնելու ավելի մեծ արդյունքների՝ առանց ապավինելու լրացուցիչ իմպերատիվ նորմերի կամ սանկցիաների: Մեկ այլ հետազոտության համաձայն՝ վարքագծային գիտության վրա հիմնված մոտեցումներ հանրային քաղաքականության ոլորտում այս կամ այն չափով կիրառում է շուրջ 150 պետություն[2]: Փափուկ ուղղորդումը կիրառվում է հասարակական հարաբերությունների ամենատարբեր ոլորտներում՝ սպառողների իրավունքների պաշտպանություն, կրթություն, էներգետիկա, շրջակա միջավայրի պահպանություն, բանկային և վարկային գործունեություն, ֆինանսների կարգավորում, հարկային

[1] Տե՛ս **Pete Lunn,** Regulatory Policy and Behavioural Economics, Paris, 2014, OECD Publishing:

[2] Տե՛ս **Cass R. Sunstein, Lucia A. Reisch, Julius Rauber**, «Behavioral insights all over the world? Public attitudes toward nudging in a multi-country study, էջ 3 (https://ssrn.com/abstract=2921217):

իրավահարաբերություններ, առողջապահություն, անվտանգություն, աշխատանքային իրավահարաբերություններ, հանրային ծառայությունների մատուցում, հեռահաղորդակցություն, ներդրումների խթանում և այլն[1]: Վարքագծային գիտության վրա հիմնված իրավական միջոցների մշակումը և զարգացումը դիտվում են որպես պետական իշխանության մարմինների գործունեության արդյունավետության, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի, ինչպես նաև արդի ժողովրդավարություններում պետական մարմինների կողմից որոշումների ընդունման հիմնախնդիրների լուծման ապագա:

Եվս մի քանի օրինակ. Մեծ Բրիտանիայում դատական ակտերի հիման վրա ոչ մեծ չափի տուգանքների չվճարման դեպքում վճարման ենթակա գումարի վրա տույժերի հաշվարկման արդյունքում կրկնապատկումը, ապա եռապատկումը միտված էր խթանելու պարտապաններին վճարել տուգանքն անմիջապես (նմանատիպ մեխանիզմ է գործում ՀՀ-ում ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար նշանակվող տուգանքների դեպքում): Սակայն վճարումների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ սահմանված նորմը չի տալիս սպասված արդյունքը: Արդյունք հնարավոր եղավ ստանալ վճարման եղանակների ցանկի ընդլայնման և հիշեցումներով մի քանի հեռախոսային հաղորդագրությունների ուղարկման կարգ ներդնելու շնորհիվ: Դատական ակտերի կատարումն ապահովող ծառայությունը փոխեց իր ներքին կանոնակարգը և գործելակերպը՝ հիմք ընդունելով Միացյալ Թագավորության կառավարության Վարքագծային գիտության նվաճումների թիմի կողմից կատարած վերլուծություններն ու առաջարկությունները:

Մեկ այլ հետաքրքիր օրինակ է Հարավային Աֆրիկայի Հանրապետության մարզերից մեկում երիտասարդներին արտադպրոցական կրթության մեջ ներգրավելուն և հաճախելիության ցուցանիշները բարձրացնելուն ուղղված միջամտությունը, որը մի քանի փուլով մշակվեց և իրականացվեց տեղական ինքնակառավարման ու

[1] Ավելի մանրամասն տե՛ս OECD (2017), Behavioural Insights and Public Policy: Lessons from Around the World, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/9789264270480-en :

տարածքային կառավարման մարմինների և Քեյփթաունի համալսարանի հետազոտական թիմի համագործակցությամբ:

Կարելի է բերել այլ օրինակներ, ինչպես նաև թվարկել Հայաստանի Հանրապետությունում ցանկալի վարքագծի դրսևորման դաշտում առկա բազում խնդիրներ, որոնց լուծման համար վարքագծային գիտության նվաճումները կարող են հաջողությամբ օգտագործվել: Կարևոր է հաշվի առնել հետևյալ հանգամանքը. եթե փափուկ ուղղորդումը կատարվում է պետության կողմից՝ իրավական նորմերի սահմանման միջոցով, այն պետք է իրականացվի մի շարք սկզբունքների պահպանմամբ.

- Հանրային իշխանությունը միջամտությունը մշակելիս և իրականացնելիս ելնում է մարդու՝ բարձրագույն արժեք լինելու կանխադրույթից ու սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով:
- Փափուկ ուղղորդումը կարող է իրականացվել միայն այնպիսի գործողությունների շրջանակում, որոնց համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
- Միջամտությունը պետք է լինի իրավական, ուղղված լինի հանրորեն նշանակալի բարիքի և խթանի հանրորեն կարևոր ցանկալի վարքագիծ:
- Միջամտությունը պետք է հիմնված լինի հավաստի տվյալների վրա:
- Միջամտությունը նախագծելիս և իրականացնելիս պետք է հաշվի առնվեն հանրային վստահության և էթիկայի հետ կապված հարցերը:

Միևնույն ժամանակ պետք է հիշել, որ վարքագծային գիտությունը փորձարարական գիտություն է, հետևաբար նախանշված միջամտությունները կարող են ժամանակի ընթացքում փոփոխություններ կարիք ունենալ՝ կապված թիրախային խմբի վարքագծի վրա ազդող գործոնների փոփոխության հետ:

Ամփոփելով վերոհիշյալը՝ պետք է նշել, որ վարքագծային գիտության նվաճումները և փափուկ ուղղորդման երևույթն օժտված են հասարակական հարաբերություններում մարդկանց վարքագծի վրա արագ ազդելու ներուժով և կարող են էապես նպաստել իրավունքի նորմերի կենսագործմանն ուղղված պետության ջանքերին:

Սակայն փափուկ ուղղորդման արդյունքում անհատի մոտ չի ձևավորվում գիտակցական արժեքային վերաբերմունք իր կողմից դրսևորած վարքագծի վերաբերյալ: Պատահական չէ, որ փափուկ ուղղորդման հիմնական քննադատությունը հնչում է հենց այն հարցի հետ կապված, որ վարքագծային գիտության նվաճումների կիրառմամբ մարդկանց վարքագծի երկարաժամկետ փոփոխություն հնարավոր չէ: Ինչպես նշել է Մեծ Բրիտանիայում կառավարության կողմից վարքագծային գիտության նվաճումների կիրառման պրակտիկայի վերաբերյալ խորհրդարանական զեկույցի կապակցությամբ Լորդերի պալատի գիտության և տեխնոլոգիայի հարցերով հանձնաժողովի աշխատանքային խմբի նախագահ Ջուլիա Նոյբերգերը, «միայն փափուկ ուղղորդումը բավարար չէ... այն պետք է զուգակցվի առաջին հերթին իրավական կարգավորման բարեփոխումներով... եթե մենք իրոք ցանկանում ենք փոխել մարդկանց վարքագիծը, դա տևական գործընթաց է, վարքագծի լիարժեք փոփոխությունը պահանջում է 20-25 տարվա ժամկետ»[1]: Հետևաբար, փափուկ ուղղորդումը կարող է արդյունավետ լինել, եթե զուգակցվում է իրավական կրթության, դաստիարակության, իրավական մշակույթի ձևավորմանն ուղղված նպատակային քաղաքականության իրականացմամբ և վարքագծի դրական մոդելների իրավական խթանման այլ միջոցների կիրառմամբ: Ցանկալի վարքագծի դրական մոդելների փորձարկումը փափուկ ուղղորդման միջոցով, խթանումը և ապա արմատավորումը իրավագիտակցության և իրավական մշակույթի միջոցով համալիր մոտեցում է, որը կարող է ապահովել կայուն երկարաժամկետ դրական արդյունքներ իրավաչափ վարքագծի դրսևորման առումով:

---

[1] https://www.theguardian.com/society/2011/jul/17/julia-neuberger-nudge-big-society

Համալիր միջոցառումների կարևորության մասին դիրքորոշումներ կարող ենք տեսնել նաև հետխորհրդային իրավաբանական գիտության ներկայացուցիչների մոտ: Տե՛ս, օրինակ, **Тихомиров Ю.А.**, Поведенческий механизм действия права. Вопросы государственного и муниципального управления, 2011, N 4, էջ 99:

ПРОБЛЕМА ПРАВОВОГО СТИМУЛИРОВАНИЯ ПРАВОМЕРНОГО ПОВЕДЕНИЯ

Виктория Оганян
Доцент кафедры теории и истории государства и права ЕГУ,
кандидат юридических наук

В свете последних достижений поведенческой науки становится ясно, что подходы и интервенции, основанные на результатах поведенческой науки, могут за короткое время обеспечить желаемое изменение поведения людей в общественных отношениях. В данной статье раскрывается сущность понятия «nudge» в регулятивной политике и праве, выделяются условия применения достижений поведенческой науки в случае их применения компетентными государственными органами и должностными лицами, а также выявляется роль поведенческой науки и ее взаимодействие со стимулами в праве и с целенаправленной политикой по повышению уровня правосознания и созданию правовой культуры – как долгосрочного решения проблемы правомерного поведения.

PROBLEMS OF LEGAL STIMULATION OF BEHAVIOURAL CHANGE: APPLICATION OF NUDGE THEORY

Victoria Ohanyan
Docent at the YSU Chair of Theory and History of State and Law,
Candidate of Legal Sciences

It has recently become obvious that behavioural science can successfully be used to quickly change human behavior in social relationship. This article explains the notion of a "nudge" in regulatory processes and in legal regulation, outlines the principles under which nudges can be applied by competent state bodies and officials. It also discusses the role of nudge and beavioural science in general in relation to legal stimulation and policies targeting increase in the level of legal consciousness and development of legal culture, as the only long-term solutions to achieving behavioural change.

Բանալի բառեր – *իրավաչափ վարքագիծ, վարքագծային գիտություն, իրավաչափ վարքագծի խթանում:*
Ключевые слова: *правомерное поведение, поведенческая наука, стимулирование правомерного поведения.*
Key words: *behavioural change, legal stimulation, nudge, behavioural science, legal regulation, legal culture.*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Վարդան Այվազյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Նորագույն պատմության վերջին տասնամյակները ներպետական մակարդակի հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում, ինչպես նաև միջազգային հարաբերությունների համակարգում աչքի են ընկնում աննախադեպ մակարդակի փոփոխությունների դինամիկայով: Միևնույն ժամանակ աննախադեպ տեմպերով տեղի են ունենում տեխնոլոգիական առաջընթացի գլոբալ բեկումներ, որոնք մարդու կյանքն ու հասարակության գործառնավորումը տեղափոխում են որակապես նոր տեղեկատվական ձևաչափ:

Այս ամենի գլոբալ հիմնախնդիրը շարունակում է մնալ այն հանգամանքը, որ մարդկությունը դեռևս անկարող է հասկանալ այդ նոր ձևաչափում միջազգային հարաբերությունների համակարգի և ներպետական հասարակական հարաբերությունների հակամարտաբանական բնույթը, ինչն էլ անհնար է դարձնում վերջինիս կողմից փաստացի ձևավորված հակամարտությունների կառավարումը, քանզի այսօրվա դրությամբ գոյություն չունեն համակարգային մակարդակում նախապես մշակված և գործի դրված իրավական կարգավորման կառուցակարգեր, որոնք հնարավորություն կստեղծեն համակարգային մակարդակում արձագանքելու այդ հակամարտություններին:

Արդյունքում գլոբալ հասարակական համալիր գործընթացի (ներառում է Երկիր մոլորակի կենսագործունեության բոլոր ոլորտները) կտրվածքով ամենուրեք ծագող անհավանական և բազմազան հակամարտությունների լուծման առումով սկզբունքորեն տեղի ունի իրավական համակարգի և իրավական կարգավորման իրավակիրառ համակարգի անունակություն:

Նշված բոլոր գործընթացների գլոբալացման պայմաններում կենտրոնական խնդիրն ***ընդհանուր իրավական տարածության***

ստեղծումն է: Քանզի բոլոր քաղաքական, սոցիալ-տնտեսական գործընթացները գործառնավորում են նոր իրողություններում, և իրավական կարգավորման մոդելի մշակումը տեղի է ունենում օպերատիվ արձագանքման ռեժիմում, իսկ օպերացիոն մակարդակում առաջանում է իրավակիրառման վակուում, որը լրացվում է հին կառուցակարգով, որը փաստացի չի կարող հաղթահարել ընթացիկ կոնֆլիկտային իրավիճակը: Այսպիսով կառավարչական բնույթի հակամարտությունը վերափոխվում է իրավական հակամարտության, և գործի դրվում մի արատավոր շրջափուլ, որտեղ իրավական հակամարտությունը գործի է դնում կառավարչական հակամարտություն:

Հակամարտությունը չթույլատրելը, կանխելը, լուծելը և դրանից դուրս գալը՝ որպես իրավական կարգավորման խնդիր, դառնում են անհնար, եթե գործընթացները գտնվում են արդեն բուն հակամարտության կաղապարի մեջ:

Հատկապես հիմնախնդիր են համակարգային մակարդակում հին համակարգի գոյությունն ու գործառնավորումը նոր կոորդինատային համակարգի պայմաններում, որտեղ հինն ընդհանրապես պետք է տեղ չունենա: Սա էլ հենց անցումային գործընթացի հակամարտաբանական բնույթն է, որը համակարգային հակամարտության մեջ պարփակում է հասարակական համալիր գործընթացը:

Օրինակ՝ ինչպե՞ս կարող է բժիշկը բուժել շիզոֆրենիան, եթե նա ինքն է շիզոֆրենիկ, կամ հիվանդը պարզապես զբաղվում է ինքնաբուժությամբ՝ պատկերացում չունենալով, թե ինչ հիվանդությամբ է տառապում և ինչպես բուժվել:

Հակամարտության կաղապարի մեջ իրավական կարգավորումը, որպես կանոն, իր առջև խնդիր է դնում կարգավորել հարաբերություններն արդեն գոյություն ունեցող ներհակամարտաբանական միջավայրում, սակայն խնդիր չի դնում դուրս գալ հակամարտությունից և չի քննարկում իր գործողությունները հակամարտությունից դուրս ձևաչափում, քանզի հակամարտությունը տեսանելի չէ և իրավակարգավորող սուբյեկտի իրավական գիտակցության մեջ ամրագրված չէ:

Արդյունքում նման իրավաստեղծագործությունը և դրանից բխող իրավական կարգավորումը չեն վերացնում հակամարտության գենեզի աղբյուրն ու սկզբնապատճառը: Ավելին՝ հակամար-

տության կաղապարի մեջ մշտապես լինելու արդյունքում ձևավորվում է այնպիսի իրավագիտակցություն, անգամ կայուն և համատարած ռեֆլեքսիա, որում արդեն ձևավորվում է ներհիակամարտական կենսագոյի ենթամշակույթ: Տվյալ հակամարտության «աշխարհում» գտնվելը անխուսափելիորեն հանգեցնում է անկառավարելիության և բարիքների վերարտադրության բացակայության ռեցիդիվների, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում անընդհատ փոփոխել բոլոր մասնակիցների վարքագծի կանոնների կոնֆիգուրացիան՝ առանց իրավական բովանդակությունը սահմանելու և մասնակիցների իրավասուբյեկտությունը փաստարկելու: Սակայն ամենաբնորոշ և աղետալի առանձնահատկությունն այն է, որ առկա իրավական միտքը կանխամտածված կերպով փորձում է ապացուցել, որ հակամարտություն ընդհանրապես չկա և չի էլ եղել:

Գլոբալացման պայմաններում ինչպես ներպետական լոկալ գործընթացներում, այնպես էլ միջազգային փոխգործակցության ոլորտում առաջնահերթ և կենտրոնական խնդիրը համարվում է միասնական իրավունքի շրջանակում համաշխարհային հանրության բոլոր մասնակիցների գործողությունների համաձայնեցվածությունը, որի համատեքստում միայն կարող է ձևավորվել նոր աշխարհակարգը:

Սա մարդկության առջև ծառացած հիմնական քաղաքակրթական մարտահրավերն է այն առումով, թե իրավական միտքն ու գիտությունը, ի դեմս իրավագիտության, արդյոք ունակ են հաղթահարել այս հիմնախնդիրը, որն առնչվում է անկանխատեսելի հակամարտությունների ծագմանը և համակարգային լուծմանը, հակամարտության իրավական բնույթի, ինչպես նաև իրավունքի հակամարտաբանական բնույթի բացահայտմանը, որի արդյունքում կառավարչական գիտությունը կարողանա իրավունքի գերակայության հիման վրա մշակված ու գործող իրավական տարածությունում ապահովել համաշխարհային հանրության սահմանադրական վարքագիծը:

Այս համատեքստում անպատճառ առաջնային կերպով դրվում են հետևյալ հարցերը՝ «Որտե՞ղ, ու՞մ կողմից և ինչպե՞ս». պետք է մշակվեն, ձևավորվեն և ստեղծվեն նոր աշխարհակարգը և համաշխարհային հանրության էկզիստենցիայի գործառնական մոդելը, ինչպես նաև իրավունքի համակարգը, որն ունակ լինի համարժեքո-

րեն ուղեկցել իրավական ամրագրումը, օրինաստեղծագործությունը և աշխարհակարգի իրավակարգավորումը։ Կարո՞ղ է արդյոք համաշխարհային հանրության իրավական համակարգը կայանալ ինքնակազմակերպման ռեժիմում՝ միջազգային իրավունքի բաց դոկտրինալ սկզբունքով, կամ այն արդյո՞ք պետք է հենվի միասնական սկզբունքների սահմանադրական ամրագրման վրա։

Նման հետևողականության բացակայությունը բացառում է կառավարելիությունը ոչ միայն տարրական օպերացիոն համագործակցության մակարդակում, այլև ողջ համաշխարհային հանրության էկզիստենցիալ հյուսվածքի համակարգային մակարդակում և հանդես է գալիս որպես հակամարտության գենեզի հիմնական աղբյուր։

Այս պոստուլատն ակնհայտ է և ունի անվիճարկելիության աքսիոմատիկ բնույթ այն առումով, որ տրամաբանական սիլլոգիզմը՝ «Առանց համաձայնեցվածության չի կարող լինել «համատեղ գործողությունների կարգավորվածություն», հետևաբար, չի լինի կառավարելիություն՝ որպես այդպիսին», ունի առաջնային ակնհայտության կարգավիճակ (ակնհայտ բանականություն)։

Համաձայնության իրավագենեզի՝ որպես իրավունքի օբյեկտի անորոշությունն ու միանշանակ ձևականացման բացակայությունը թույլ չեն տալիս իրավական ամրագրման շրջանակում այն դասակարգել որպես իրավագոյացման սահմանադրական օբյեկտ, որում փոխհարաբերությունների համակարգն աշխարհակարգի միասնական իրավական կանոնակարգում փոխհարաբերությունների մասնակիցների միասնական իրավագիտակցության և ընկալման մեջ հանդես է գալիս որպես իրավական ամրագրման առարկա։

Նման անթրոպիայի առկայությունը հանգեցնում է իրավական ամբիվալենտության, որի պայմաններում ճշմարտության մետրիկան դառնում է հեղհեղուկ, որի հիման վրա սահմանվում են «Իրավունքի» և «Ոչ իրավունքի» լեգիտիմությունն ու սահմանադրական սահմանազծումը, վերջինիս հիման վրա էլ իրավակիրառ մեկնաբանության մակարդակում սահմանադրվում է կողմերի գործողությունների իրավաչափությունը կամ ոչ իրավաչափությունը սահմանադրական իրավունքի գործողության ոլորտում։

Նման ամբիվալենտությունն իր հերթին, վերլուծական առումով «առանց կանոնի խաղերի» կամ իրավիճակի դրվածքով պայմա-

նավորված, փոփոխվող կանոնների ռեժիմում ձևավորում է անկառավարելի և անկայուն հակադրություն։ Այս պարագայում համաձայնությունը հանդես չի գալիս որպես սահմանադրական մետրիկայով ինստիտուցիոնալ պրեդիկատ, որը սահմանում է ցանկացած գործողության կամ իրադարձության միանշանակ լեգիտիմություն, օրինականություն և լեգալություն, այլ ընդհակառակը, իրավիճակային վերախաղարկման հետևանք է, որում առաջատարը համաձայնության առարկայի անորոշությունն է, դրա ճշմարտության, արդարության և իրավաչափության գնահատման ինքնակամությունը, կամայական մեկնաբանությունը։

Որպես կանոն, իրավակարգավորման սահմանադրական տրամաբանության փոփոխումն իրավիճակային-նախադեպային վերախաղարկումով հղի է իրավունքի ձևախեղման բացահայտ վտանգով, որը կարող է վերածվել ուժեղի կամքի իրականացման գործիքի, որի արդյունքում կարող է վերանալ «արդարություն» սահմանադրական օբյեկտը։ Առանց ազատության սահմանադրական ամրագրման իրավունքն անառարկա է։

Արդյունքում առաջանում է ծայրահեղ վտանգավոր միտում, երբ իրավունքի գերակայության սկզբունքը՝ որպես սահմանադրականության հիմնարար բազիս, կարող է փաստացի ապամոնտաժվել կամ ուղղակի ոտնահարվել, կամ էլ ընդհանրապես չկիրառվել։ Ընդ որում՝ սահմանադրականության հիմնական գործառնական առաքելությունը համարվում է պետականության իրավական ամրագրումը, որը գործում է բացառապես այնպիսի իրավական տարածությունում, որում կարող է առկա լինել «իրավունքի ուժի» սկզբունքը։

Արդյունքում կամ իրավունքն ընդհանրապես բացակայում է, կամ էլ փոխարինվում է պայմանական-կոնվենցիոնալ համաձայնություններով, որոնք հիմնվում են հակամարտության կողմերի հետաքրքրությունների ու շահերի իրավիճակային պահանջարկի վրա, որի հետևանքով «ուժի իրավունքը» ինքնաբերաբար մտնում է իր իրավունքների մեջ։

Համաշխարհային հանրության իրավակարգավորումը գլոբալ մասշտաբով գտնվում է մշտական համակարգային հակամարտության ռեժիմում, որի արդյունքում խարխլվում են աշխարհակարգի և միջազգային իրավունքի հիմքերը, փլվում են հիմնարար միջազգա-

յին համաձայնությունները, և խախտվում են բազային կոնվենցիաները։ Որպես օրինակ են ծառայում Իրանի միջուկային ծրագրի համատեղ համընդգրկուն գործողությունների պլանը, Միջին և փոքր հեռահարության հրթիռների վերացման պայմանագիրը, Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակում համաձայնությունները և այլն։ Այս միտումը շարունակվում է արագացված տեմպերով, որն աշխարհակարգը տանում է համակարգային հակամարտության մեջ գտնվելու մշտական ռեժիմի, իսկ համաշխարհային հանրությունն սկսում է այդ իրավիճակին «կայուն հարմարվել»։

Դրա արդյունքում ԱՄՆ-ն գտնվում է իր բնույթով և մասշտաբով աննախադեպ ներպետական կառավարման համակարգի հակամարտության մեջ, Եվրամիությունը բախվել է Բրեքսիթի համակարգային մարտահրավերին, բազմամշակութային հասարակության ձևավորման համակարգային հակամարտության հետևանքով միգրացիոն գործընթացներն անկառավարելի են դարձել, իրավունքի գերակայության սկզբունքի էրոզիայի արդյունքում ամբողջ Խաղաղօվկիանոսյան, Հյուսիսատլանտյան, Մերձավորարևելյան և Լատինաամերիկյան տարածաշրջանները գտնվում են մշտական հակամարտության մեջ։

Միաևշանակ արդեն բացահայտ ռեժիմով վերջին ժամանակներում երկարատև գործառնավորող միջազգային իրավունքը վերափոխվում է «կանոնների վրա հիմնված կարգի», որն իրավիճակային կարգով սահմանվում է առանձին խումբ պետությունների կողմից, որոնք հռչակում են բոլորի համար այդ կանոնների սահմանման իրենց բացառիկ իրավունքը։ Այս ամենը, ինչպես արդեն նշվեց, ծնում է ամբիվալենտություն այն տեսլականում, թե «Ինչ է իրավունքն ընդհանրապես և միջազգային իրավունքը՝ մասնավորապես»։ Ավելին՝ գործի են դրվում օպերացիոն առումով միմյանց փոխադարձաբար բացառող իրավական կարգավորման համակարգեր, որոնց հատումն անթույլատրելի է, բայց և հենց այդ հատման մեջ էլ տեղակայվում է ամբողջ աշխարհակարգը, համաշխարհային հանրությունը, մարդկությունը, գլոբալ փոխգործակցության համակարգը։

- Հարթություններից մեկը ենթադրում է իրավական կարգավորման սահմանադրականության տրամաբանություն և ճանաչում է իրավունքի գերակայության սկզբունքը, որի հիման վրա որպես

հետևանք սահմանվում են օբյեկտիվ նորմի իրացման կանոնները (Law Based Order Accomplished/Executed by means of Rules (Իրավունք՝ հիմնված օրենքի վրա, որն իրականացվում է կարգն ապահովող կանոնների ամբողջությամբ)), որոնք բացառում են հակամարտությունը: Այս պարագայում տրամաբանությունը պետք է մշակվի հիմնարար մակարդակում՝ գիտական հիմքով, չպետք է կախված լինի սուբյեկտիվ գաղափարներից այն մարդկանց քաղաքականությունից, որոնք կյանքին նայում են ներքին էլեկտորալ ցիկլերի, միայն ազգային մասշտաբի շահերի, ավելի վատթար՝ սեփական շահերի պրիզմայով: Ակնհայտ է, որ նման մոտեցմամբ ո՛չ իրավունքը, ո՛չ էլ գլոբալ կառավարման բազմակողմ ինստիտուտները չեն կարող պրիմիտիզացվել ուժային առանձին կենտրոնի կամ խմբի կողմից:

• Մյուս հարթությունը, շահարկելով արդեն գոյություն ունեցող հակամարտության լուծման ծայրահեղ անհրաժեշտությունը, ենթադրում է հակամարտության լուծման համար լիազորված և պատասխանատու երկրների խմբի հավաք, որոնք ուժային հարկադրանքի միջոցով սահմանում են կանոններ՝ ուղղված համաշխարհային հանրության բոլոր անդամների գործունեության իրավական կարգավորմանը: Այս պարագայում շրջանցելով սահմանադրական տրամաբանությունը և իրավունքի էության բացահայտման բարդ փուլը, որի հիման վրա միայն կարող է ձևականացվել նորմը, աշխարհակարգի իրավակարգավորումը կառուցվում է այսպես կոչված «Rule Based Order» (կարգ՝ հիմնված կանոնների վրա) սկզբունքի հիման վրա, որում գերիշխում է ուժի իրավունքի սկզբունքը: Իրավակարգավորման նման պարադիգմայի ընդունումը ոչ միայն հուղարկավորում է իրավունքի էությունը և ուժի նկատմամբ գերակայող իրավագենեզի տրամաբանության անհրաժեշտությունը, այլև ըստ էության կարիք է ունենում հակամարտության, որն էլ դառնում է «կանոնների վրա հենված օպերացիոն իրավունքի» և «հակամարտությունը լուծելու պարտականություն ունեցող կոալիցիայի» իրավասուբյեկտության հիմնական աղբյուրը: «Law Based Order Accomplished/Executed by means of Rules» հայեցակարգային հարթակի փոփոխությունը «Rule Based Order Law» օպերացիոն պարադիգմայով կարող է հանգեցնել աղետալի հետևանքների, իրավունքը դարձնել կառավարվող քաոսի պսևդոգիտական պարադիգմայի

մնացուկ, աշխարհակարգը բերել մշտական հակամարտության ռեժիմ։

Սրանով էլ հենց կանխորոշվում են լիարժեք մոլորակային իրավական կարգավորման համակարգի նախագծման հիմնախնդրի պատասխանատու հարաբերությունից հեռացումը և իրավունքի գերակայության սկզբունքի վրա հիմնված սահմանադրական մոտեցման նենգափոխումը «կոալիցիոն իրավունքի», որը ծնվում և մահանում է հընթացս ստեղծվող «կոալիցիայի», որի իրավասուբյեկտությունը սահմանվում է հենց կոալիցիայի կողմից՝ իրավունքի գերակայության հարթությունից դուրս ուժի իրավունքի տիրույթում, որում հակամարտությունն անհրաժեշտություն է որպես ինքնակամության և ինքնիրավչության «լեգիտիմության ու իրավաչափության հիմնավորում»։

Այս հունով նկատվում է գլոբալ կառավարման ինստիտուտների սահմանադրաիրավական կարգավորման ոլորտից կոալիցիոն իրավունքի հարթություն տեղափոխելու կայուն միտում, որտեղ ձևախեղվում և ձևափոխվում է միջազգային իրավունքի կոնվենցիոնալ կանոնադրային իրավակարգը։

Մեկ այլ ակնառու ռեցիդիվային գործոն են համարվում գլոբալ կառավարման ինստիտուտների ֆունկցիոնալների անձնավորումը և սուբյեկտիվացումը, որի արդյունքում միջազգային կյանքը սկսում է առավելապես կախված լինել կոնկրետ անհատների գաղափարներից ու քաղաքականությունից, որոնց իրավունք է տրվում ՄԱԿ-ի հովանու ներքո ինքնուրույն ընդունել ճակատագրական որոշումներ և իրականացնել միջազգային իրավունքի ագրեգացիա, որոնք դուրս են սահմանադրականության տրամաբանությունից։

Սահմանադրականության սկզբունքներից շեղվելու և օպերացիոն մակարդակում հակամարտությունն ագրեգացնելու կայուն միտումը փաստում է, որ Իրաքի, Լիբիայի, Սիրիայի ողբերգության դասերը չեն յուրացվել նրանց կողմից, ովքեր այդ տարածաշրջանում փորձում են իրականացնել այդքան անպատասխանատու քաղաքականություն։ Ըստ էության դա նեոգաղութացման ուղին է՝ իրեն ներհատուկ 21-րդ դարի իրավական համակարգով։

Միջազգային իրավունքի նենգափոխումը «Rule Based Order (կարգ՝ հիմնված կանոնների վրա)» սկզբունքով ցուցադրական ձևով դրսևորվում է Եվրոպայի խորհրդի օրինակով, որտեղ վերոհիշյալ

պարադիգմային հավատարիմ խորհրդարանականների փոքրաքանակ խումբն ուղղակիորեն ոտնահարում և քայքայում է այդ համաեվրոպական կազմակերպության կանոնադրությունը, որը հիմնված է բոլոր մարմիններում անդամ-պետությունների հավասարության վրա:

Ինչպես արդեն նշվեց, «Rule Based Order» (կարգ՝ հիմնված կանոնների վրա) սկզբունքը՝ որպես միջազգային իրավունքի վերաձևավորման հիմնական սկզբունք, պահանջում է աշխարհակարգի գլոբալ կառավարման սկզբունքների փոփոխության տեսական և իրավաբանական հիմնավորման առկայություն, և այդ համատեքստում համաշխարհային հանրության իրավագիտակցության մեջ մեթոդապես և համակարգային առումով ներդրվում են պոստուլատներ, որոնք ուղղված են ՄԱԿ-ի սահմանադրահիրավական կարգավորման ավանդական ձևավորված սկզբունքների ապամոնտաժմանը:

Ասվածի ամենացայտուն օրինակը համարվում է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ա. Ֆոգ Ռասմուսսենի 2014 թ. մարտի հայտարարությունն առ այն, որ «Ալյանսի անդամների միասնական կամքը համարվում է միջազգային քաղաքական լեգիտիմության ծայրահեղ հզոր աղբյուր»[1]:

Սահմանադրականության իրավական էության չհասկանալը (չգիտակցված կամ կանխամտածված գիտակցված) հանգեցնում է լեգիտիմության բովանդակային նույնականացման համակարգային հակամարտության, որի հիմքում ընկած է հետևյալ սկզբունքը. «կամքը չի կարող լեգիտիմ լինել առանց ընտրության հիմնավորված առարկայի առկայության»: Հատկապես վիճակը ծայրահեղ է, երբ այն վերաբերում է իրավունքի այնպիսի համակարգաստեղծ օբյեկտներին, ինչպիսիք են աշխարհակարգը, մարդկությունը՝ քաղաքակրթագոյացման համատեքստում, գլոբալ համաշխարհային հանրության մոդելը և մարդու իրավունքների պարադիգմայի հիման վրա համագոյակցությունը:

---

[1] Տե՛ս Слова "НАТО – источник политической легитимности" – просто смешны, Североатлантический Альянс становится некомпетентной организацией, հասանելի աղբյուրը՝ http://inforos.ru/ru/?action=view&id=39255%20&module=news:

Հետևաբար, բացարձակապես կոռեկտ չէ և անթույլատրելի է որպես լեգիտիմության աղբյուր դիտարկել կամքը, այլ ոչ թե նրա առարկան։ Արդյունքում հայեցակարգային կամքի անունակությունը վերաճում է ինքնակամության, ինքնաթողության։ Իրավագոյացման վերափոխումը կանոնագոյացման գործի է դնում նույնականացման և միաձուլման ամբիվալենտության ագրեգացիա, որում գործադիր իշխանությանը թույլ է տրվում միաժամանակ հանդես գալ որպես օրենսդիր իշխանություն։

Կամքի որպես իրավունքի օբյեկտի նկատմամբ լեգիտիմությունը տեղին է կիրառել միայն այն դեպքում, երբ լեգիտիմ է ընտրության առարկան՝ որպես աղբյուր, և միայն այդ դեպքում է թույլատրելի կամքի դրսևորումը։ Հակառակ պարագայում ձևավորվում է տրամաբանական ռեցիդիվ, որում կամքին իրավունք է տրվում հանուն բարիքի չարիք գործել (Իրաք, Լիբիա, Սիրիա)։ Լեգիտիմության աղբյուրը կամ լեգիտիմ է, կամ ոչ, և այս առումով «ծայրահեղ հզոր աղբյուր» արտահայտության կիրառումն իր տրամաբանական բովանդակությամբ ենթադրում է պայմանական լեգիտիմության որոշակի սանդղակ, որը հակասում է իրավագենեզի տրամաբանությանը։ Իրավունքը չի կարող լինել կիսաիրավունք կամ կիսալեգիտիմ, կիսալեգալ, քանզի լեգիտիմության աղբյուրը հենց Իրավունքն է, այլ ոչ թե կանոնն է հանդես գալիս որպես նորմ։

Սահմանադրական իրավունքի վերլուծական համալիրի վերացման դեպքում ՆԱՏՕ-ն իրավական նորմի կիրառողի փոխարեն հանդես է գալիս որպես նորմի սահմանող, արդյունքում լինելով գործադիր մարմին սինթեզում է միջազգային իրավունքի օրենսդրական և գործադիր գործառույթները մեկ մարմնում։ Դա առանց սահմանադրական տրամաբանության մետրիկայի իրավական մտքի հզոր դիսոնանս է։ Արդյունքում անհասկանալի է, թե՝

- ո՞ր դեպքերում է, որ ՆԱՏՕ-ի բոլոր անդամների միաձայն որոշումները կարող են լինել լեգիտիմ կամ ոչ լեգիտիմ,
- ո՞րն է ՆԱՏՕ-ի իրավասուբյեկտության և իրավակարգավորման կառուցակարգը,
- արդյո՞ք այդ կառուցակարգը հիմնվում է մեծամասնության տեխնիկական քվեարկության կամ սահմանադրական նորմերի հիման վրա, որոնք թույլ չեն տալիս ինչպես կազմակերպությանը, այն-

պես էլ կառավարման կառույցներին միջազգային իրավունքի շրջանակում կատարել հակահիրավական գործողություններ,

- կարո՞ղ է արդյոք ՆԱՏՕ-Ն ստանձնել միջազգային իրավունքի համակարգագոյացման գործառույթ, և ո՞վ կարող է նրան լիազորել,
- կարո՞ղ է ՆԱՏՕ-ն հանդես գալ որպես լեգիտիմության աղբյուր, կամ արդյո՞ք նա միջազգային իրավունքի սուբյեկտ է, որը կոչված է ապահովել այն լեգիտիմությունը, որն արդեն միանշանակ կերպով հիմնարար սահմանված է Իրավագիտության կողմից որպես կատեգորիա և իրավական կարգավորման ագրեգատ։

Այդ կապակցությամբ համակարգային հակամարտության ռեցիդիվը մատնանշվում է նաև ՌԴ արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի ելույթում, որում ասվում է.«Մենք մոտեցել ենք այն սահմանագծին, երբ անհրաժեշտ է ամուր «Ոչ» ասել միջազգային իրավունքի նենգափոխմանը, ռեվիզիայի և դրվագացման փորձերին։ 21-րդ դարի իրողությունները պահանջում են մեզանից ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա վերադառնալ կոլեգիալության իրական ակունքներին, վերահաստատել ՄԱԿ-ի դերը որպես միջազգային կառավարման միակ համապարփակ մարմնի, որում Անվտանգության խորհուրդը միակ մարմինն է, որը պատասխանատու է միջազգային անվտանգության ու խաղաղության համար։ Մենք պետք է վերջ տանք 21-րդ դարի իմպերիալիստական և գաղութատիրական փիլիսոփայությունից սկիզբ առած նախաձեռնություններին և ինտերցիային։ Քանզի հակառակ դեպքում միջերկրածովյան տարածաշրջանի ճգնաժամերի լուծումը կդառնա անհնար»[1]։

Իհարկե ճգնաժամի լուծումը հնարավոր չէ առանց դրա հակամարտաբանական հիմքերն իմաստավորելու, որը կկարողանա դուրս բերել հակամարտությունների ամբողջ շղթայի ծագումնաբանությունը։ Հատկապես եթե ճգնաժամը համաշխարհային մակարդակում ունի համակարգային բնույթ, առավել ևս առանց «հատուկ

[1] Տե՛ս Выступление и ответы на вопросы министра иностранных дел России С.В. Лаврова на конференции «Средиземноморье: римский диалог», Рим, 23 ноября 2018 года, հասանելի աղբյուրը՝ http://www.mid.ru/posledniye_dobavlnenniye/-/asset_publisher/MCZ7HQuMdqBY/content/id/3419721:

լինզայի» հնարավոր չէ տեսնել հակամարտության գենեզը և առանձնացնել համակարգագոյացման ողջ գործընթացը:

Որպես վերջնական եզրահանգում կարելի է նշել այն, որ առանց նոր մեթոդաբանական մոտեցման և համակարգային հակամարտության իրավական հատուկ գործիքակազմի, որը հնարավորություն կտա բացահայտելու իրավունքի համակարգի բոլոր ձևախեղումների հակամարտական բնույթը, շատ դժվար է, երբեմն նաև անհնար իրավական կարգավորման համակարգը դուրս բերել առողջացման գործընթաց և ներկայում ու ապագայում ապահովել աշխարհակարգի իրավական կարգավորման պրակտիկ գործունակություն:

СИСТЕМНЫЙ КОНФЛИКТ КОНСТИТУЦИОНАЛИЗМА В ПРОЦЕССЕ ФОРМИРОВАНИЯ НОВОГО МИРОПОРЯДКА

Вардан Айвазян
Заведующий кафедрой конституционного права ЕГУ,
кандидат юридических наук, доцент

Последний период новейшей истории можно охарактеризовать как вступление мира в глобальный критический конфликт на предмет обустройства Миропорядка. Отсутствие механизма предотвращения и разрешения конфликта не только создает хроническую напряженность и вероятность столкновений с переводом самого конфликта на более глубокий и соответственно критический уровень, но и изменяет правовую природу и ткань системы международных отношений.

Безусловно, операционным механизмом предотвращения и разрешения конфликта в рамках системы правового регулирования, международных отношений должно выступать международное право, функционирующее исключительно на принципе «верховенства права».

Несомненно, данная проблема очень масштабная, многоплановая и имеет широчайший охват всех сопряженных причинных факторов, освещение которых требует целенаправленного комплексного всестороннего исследования международного права на основе много-

дисциплинарного феноменологического синтеза. В этом ключе, данная статья представляет описание проблемы посредством методологического инструментария на основе синтеза правоведения и конфликтологии.

В основном акцент в статье ставится на методологическом формате представления правовой системы посредством парадигмы правовой конфликтологии, основные положения которой представлены в статье.

SYSTEMIC CONFLICT OF CONSTITUTIONALISM IN THE PROCESS OF FORMATION OF NEW WORLD ORDER

Vardan Ayvazyan
Head of the Chair of Constitutional Law of YSU
Candidate of Legal Sciences, Docent

The later period of the newest history can be as characterized as the world's entry into a global critical conflict concerning the construction of the world order. The absence of a mechanism of preventing and solving the conflict creates not only a chronic tension, but also a great probability of crushes transferring that conflict to a deeper and accordingly to a critical level, which completely changes the legal character and the texture of the system of international relations.

Undoubtedly the international law should act as an oprational mechanism of preventing and solving the conflict within the boundaries of the legal regulatory system of international relations and it should function only on the principle of "supremacy of law".

Of course, the large-scale and multi-level problem in question embraces all the conjugate cause factors. Thus its treatment requires a purposeful, comprehensive and all-round study of international law on the basis of multidisciplinary phenomenological synthesis. In this vein the present article describes the problem through the methodological instruments of the synthesis of Jurisprudence and Conflictology.

The main emphasis is on the methodological format of presenting the legal system through the paradigm of legal conflictology, the main points of which are presented in the article.

Բանալի բառեր – *սահմանադրականություն, միջազգային իրավունք, համակարգային հակամարտություններ, աշխարհակարգ, գլոբալ կառավարման համակարգ, միջազգային հարաբերություններ, խորը ճգնաժամ, պատճառահետևանքային շղթա, կոալիցիոն իրավունք:*

Ключевые слова: *конституционализм, международное право, системные конфликты, миропорядок, глобальная система управления, международные отношения, глубокий кризис, причинно-следственная цепочка, коалиционное право.*

Key words: *Constitutionalism, international law, systemic conflicts, world order, global governing system, international relations, deep crisis, cause-effect chain, coalitional law.*

.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Անահիտ Մանասյան
Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավ. գիտ. թեկնածու

Սահմանադրական կայունության հիմնախնդիրների ուսումնասիրության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի սահմանադրական զարգացումների հաճախականության վերլուծությունը: Կան հեղինակներ, որոնց կարծիքով, ժամանակն է սահմանադրական կայունության հատկանիշի առկայությունը պայմանավորող ելակետային չափանիշը: Նրանք գտնում են, որ սահմանադրական համակարգերի կայունությունը պայմանավորված է ժամանակի մեջ Սահմանադրության գործողության երկարատևությամբ, այսինքն՝ այն հանգամանքով, թե որքան երկար է այն մնում ուժի մեջ: Հիշյալ հեղինակների կարծիքով, երբ քաղաքական գործիչները նախատեսում են որոշակի սահմանադրական կարգավորում, նրանց շահերից չի բխում դրանից հրաժարվելը՝ նորից համաձայնության գալու համար անհրաժեշտ հավաքական գործողությունների ու դրա համար պահանջվող ներքին ծախսերի պատճառով: Քննարկվող տեսությունը ենթադրում է Հիմնական օրենքի կենսունակության դրական կախվածություն ժամանակից, ինչը նշանակում է, որ երբ Սահմանադրության հեղինակները համաձայնության են գալիս որոշակի կարգավորման առնչությամբ, դրա փոփոխման հավանականությունը ժամանակի մեջ փոքրանում է[1]: Հետևաբար, հիշյալ տեսակետի կողմնակիցները, այլ հանգամանքների թվում, սահմանադրական կայունությունը պայմանավորում են ժամանակային գործոնով կամ Սահմանադրության գործողության ժամանակահատվածով:

[1] Տե՛ս Negretto G. L., նշված աշխատությունը, էջ 6-7:

Անդրադառնալով ներկայացված մոտեցմանը՝ նշենք, որ, մեր կարծիքով, Սահմանադրության՝ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործողությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն այն հանգամանքով, որ վերջինս կենսագոյի հիմնարար կանոնների շուրջ հասարակական համաձայնություն է և ամրագրում է իրավական այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնք բնորոշ են սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին, այլ մի շարք քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ գործոններով: Օրինակ՝ Կոլումբիայի 1886 թ. Սահմանադրությունը փոփոխվեց միայն 1991 թ.՝ ուժի մեջ մնալով 105 տարի, սակայն դրա հիմնական պատճառը ոչ թե Սահմանադրության հեղինակությունն էր, այլ սահմանադիր ժողով հրավիրելու անհաջող փորձերը, որոնք միևնույն ժամանակ ուղեկցվում էին Սահմանադրության հիմնական գաղափարների առնչությամբ գոյություն ունեցող սուր քննադատությամբ: Իսպանիայի Սահմանադրությունը նույնպես իր գործողության 30 տարիների ընթացքում կրել է ընդամենը երկու տեքստային փոփոխություն: Դրա պատճառը, սակայն, քաղաքական համաձայնության բացակայությունն է և ոչ այն, որ Սահմանադրությունը չունի զարգացման անհրաժեշտություն[1]: Ռումինիայի 1991 թ. Սահմանադրությունն իր գործողության 27 տարիների ընթացքում կրել է ընդամենը մեկ փոփոխություն՝ 2003 թ.-ին: Սահմանադրական երկրորդ փոփոխությունների անհրաժեշտության հարցը բարձրացվեց 2012 թ. քաղաքական ճգնաժամից հետո, հանրային քննարկումներն սկսվեցին 2013 թ.[2]: 2015 թ. պետք է տեղի ունենար նշված հարցով սահմանադրական հանրաքվե, սակայն այն նախաձեռնած կառավարությունը հրաժարական տվեց, ինչի արդյունքում հանրաքվեն այդպես էլ տեղի չունեցավ: Բելառուսի Հանրապետության 1994 թ. Սահմանադրությունն իր գործողության 24 տարիների ընթացքում ընդամենը երկու անգամ է ենթարկվել փոփոխություննե-

[1] Քանզի այն զարգանում է տեքստային փոփոխություններից տարբերվող այլ եղանակներով, օրինակ՝ մեկնաբանության միջոցով (տե՛ս How Constitutions Change (A Comparative Study) / edited by Oliver D., Fusaro C., Oxford and Portland, Oregon, 2011, էջ 282-283):

[2] Տե՛ս Enache M., The Constitutional Reform in Romania // US-China Law Review, Vol. 12, N 8, 2015, էջ 633-646:

րի: Առաջին անգամ Բելառուսի Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարվել են Սահմանադրության ընդունումից ընդամենը երկու տարի հետո՝ 1996 թ.-ին: Ընդ որում՝ Սահմանադրությունում կատարված փոփոխություններն այնքան էական էին, որ հաճախ գրականության մեջ խոսվում է Բելառուսի երկու տարբեր՝ 1994 թ. և 1996 թ. Սահմանադրությունների առկայության մասին: Նշված փոփոխությունների արդյունքում փոփոխվեց իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգը, էականորեն ավելացան Հանրապետության նախագահի լիազորությունները, ստեղծվեց երկպալատ խորհրդարան, նախագահը ձեռք բերեց խորհրդարանն արձակելու, օրենքի ուժ ունեցող դեկրետներ ընդունելու լիազորություններ և այլն[1]: Նախագահ Լուկաշենկոյի և խորհրդարանի միջև այդ ժամանակահատվածում առկա քաղաքական կոնֆլիկտի պայմաններում սահմանադրական նշված փոփոխությունների քաղաքական պատճառներն ակնհայտ էին[2]: Ակնհայտ էր նաև սահմանադրական երկրորդ փոփոխության քաղաքական համատեքստը, երբ 2004 թ.-ին Սահմանադրության տեքստից հանվեց նույն անձի կողմից երկուսից ավելի անգամ Հանրապետության նախագահի պաշտոնը զբաղեցնելու արգելքը[3]: Կարծում ենք, որ Բելառուսի Հանրապետության պարագայում նույնպես Սահմանադրության անփոփոխ տեքստի երկարատև գործողության հիմնական պատճառը ոչ թե Սահմանադրության հեղինակությունն է, այլ այդ երկրում ստեղծված քաղաքական իրավիճակն ու դրանից բխող սոցիալական ու տնտեսական տարատեսակ գործոնները:

Հավելենք նաև, որ որոշ դեպքերում սահմանադրական փոփոխությունների հաճախականության տարբերությունները սոսկ առաջին հայացքից են՝ պայմանավորված որոշակի օբյեկտիվ հանգամանքներով: Օրինակ՝ այն երկրներում, որտեղ սահմանադրական փոփոխությունները կարող են կատարվել գլխավորապես հան-

---

[1] Տե՛ս **Левская Л.,** Конституционнное развитие Республики Беларусь, http://mogilev-region.gov.by/files/konstitucionnnoe_razvitie_respubliki_belarus.doc, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

[2] Տե՛ս https://www.hrw.org/reports/1999/belarus/Belrus99-04.htm, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

[3] Տե՛ս http://president.gov.by/ru/constitution_ru/, /Վերջին մուտք՝ 16.06.2018/:

րաքվեի միջոցով, սովորաբար նախապատրաստվում է անհրաժեշտ փոփոխությունների մեկ ամբողջական փաթեթ, և սահմանադրական բարեփոխումն իրականացվում է Սահմանադրության ամբողջ տեքստն ընդգրկող մեկ փաթեթի տեսքով: Օրինակ՝ 1995 թ. ՀՀ Սահմանադրությունը, որում փոփոխությունները հնարավոր էին միայն հանրաքվեի միջոցով, տեքստային փոփոխությունների է ենթարկվել երկու անգամ՝ 2005 թ. և 2015 թ.: Երկու դեպքում էլ փոփոխությունները ներկայացվել են Սահմանադրության ամբողջ տեքստն ընդգրկող մեկ միասնական փաթեթի տեսքով: Նույնը կարելի է ասել նաև մեկ անգամ՝ 2003 թ.-ին, փոփոխված Ռումինիայի 1991 թ. Սահմանադրության մասին:

Մինչդեռ այն երկրներում, որտեղ սահմանադրական փոփոխություններ կարող են կատարվել նաև խորհրդարանի կողմից, դրանք, որպես կանոն, կատարվում են՝ ըստ կոնկրետ ոլորտում առաջացած անհրաժեշտության, յուրաքանչյուր հարցի համար ինքնուրույն, չի ներկայացվում Սահմանադրության ամբողջ տեքստն ընդգրկող փոփոխությունների մեկ միասնական փաթեթ, և բնականաբար, առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ նշված երկրներում փոփոխությունները կատարվում են առավել մեծ հաճախականությամբ: Օրինակ՝ Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրությունը, ըստ վերջինիս 138-րդ հոդվածի, կարող է փոփոխվել խորհրդարանի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Խորվաթիայի Հանրապետության 1990 թ. Սահմանադրությունը փոփոխվել է 1997 թ.-ին, 2000 թ.-ին, 2001 թ.-ին, 2010 թ.-ին, և քաղաքացիական նախաձեռնության կարգով մեկ անգամ Սահմանադրության տեքստում փոփոխություն է կատարվել 2013 թ.-ին[1]: Լիտվայի Հանրապետության 1992 թ. Սահմանադրությունը փոփոխվել է 1996 թ.-ին՝ երկու անգամ, 2002 թ.-ին, 2003 թ.-ին՝ երկու անգամ, 2004 թ.-ին, 2006 թ.-ին: Ընդ որում՝ ըստ Սահմանադրության 148-րդ հոդվածի՝ Սահմանադրության փոփոխությունները, բացառությամբ Սահմանադրության 1-ին հոդվածի, 1-ին և 14-րդ գլուխների (որոնք կարող են փոփոխվել միայն հան-

[1] Տե՛ս Խորվաթիայի Հանրապետության 1990 թ. Սահմանադրություն, http://concourt.am/armenian/constitutions/index2015.htm /վերջին մուտք՝ 16.06.2018/:

րաքվեով), Սեյմում քննարկվում և քվեարկվում են երկու անգամ և ընդունվում են Սեյմի անդամների ձայների առնվազն երկու երրորդով[1]: Չեխիայի Հանրապետության 1993 թ. Սահմանադրությունը փոփոխությունների է ենթարկվել 1997 թ.-ին, 2000 թ.-ին, 2001 թ.-ին՝ երկու անգամ, 2002 թ.-ին, 2009 թ.-ին, 2012 թ.-ին, 2013 թ.-ին[2]:

Նշենք, որ ներկայացված բոլոր փոփոխությունները վերաբերել են առանձին կոնկրետ հարցադրումների և ոչ սահմանադրական ընդհանուր տրամաբանությանն ու Սահմանադրության ամբողջ տեքստին: Օրինակ՝ Չեխիայի 2009 թ.-ի սահմանադրական փոփոխությունները վերաբերել են Պատգամավորների պալատի ինքնալուծարման հնարավորության նախատեսմանը, Լիտվայի 2002 թ.-ի սահմանադրական փոփոխությունները՝ տեղական ինքնակառավարման իրավունքին և այլն:

Վերը շարադրվածի առումով հարկ է նկատել նաև, որ մի շարք երկրներում Սահմանադրությունը զարգանում է ոչ այնքան տեքստային փոփոխությունների միջոցով, որքան սահմանադրական զարգացումների տեսանկյունից ընդունելի այլ եղանակներով, օրինակ՝ մեկնաբանության: ԱՄՆ 1787 թ. Սահմանադրությունը, օրինակ, իր գործողության ավելի քան երկու հարյուրամյակի ընթացքում ենթարկվել է ընդամենը 27 տեքստային փոփոխությունների[3]: Ըստ ԱՄՆ Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ Սահմանադրության տեքստային փոփոխությունները պետք է ընդունվեն Կոնգրեսի երկու պալատներից յուրաքանչյուրի ձայների առնվազն երկու երրորդով, այնուհետև 50 նահանգային օրենսդիր մարմինների առնվազն երեք քառորդը պետք է հավանություն տա նշված փոփոխություններին: Այդ է պատճառը, որ ԱՄՆ Սահմանադրությունը համարվում է աշխարհի ամենակոշտ սահմանադրություններից մեկը, որում չա-

---

[1] Տե՛ս Լիտվայի Հանրապետության 1992 թ. Սահմանադրություն, http://www.lrkt.lt/en/about-the-court/legal-information/the-constitution/192 /վերջին մուտք՝ 16.06.2018/:

[2] Տե՛ս Չեխիայի Հանրապետության 1993 թ. Սահմանադրություն, http://www.psp.cz/en/docs/laws/constitution.html /վերջին մուտք՝ 16.06.2018/:

[3] Ընդ որում՝ վերջին փոփոխության առնչությամբ առկա են բազմաթիվ վեճեր, քանի որ շատերի կարծիքով, այդ փոփոխությունը սահմանված կարգով չի վավերացվել:

փազանց բարդ է տեքստային փոփոխություններ կատարելը: Միևնույն ժամանակ, չնայած տեքստային փոքրաթիվ փոփոխություններին, ԱՄՆ Սահմանադրությունը բազմաթիվ փոփոխություններ է կրել կիրառման ընթացքում՝ անընդհատ զարգանալով մեկնաբանության միջոցով[1]:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սոսկ երկարատև ժամանակահատվածի ընթացքում Սահմանադրության տեքստի անփոփոխելիությունն ինքնին չի վկայում սահմանադրական համակարգի կայունության մասին: Միևնույն ժամանակ, սահմանադրական կայունության համար այլ անհրաժեշտ հանգամանքների պայմաններում այն հանդես է գալիս որպես հիշյալ հատկանիշի առկայության արտահայտություն:

Այլ կերպ՝ տրամաբանությունը պետք է այն լինի, որ սահմանադրական համակարգը կայուն է ոչ թե այն պատճառով, որ Սահմանադրությունը չի փոփոխվում երկար ժամանակահատվածի ընթացքում, այլ հակառակը՝ վերջինս չի ենթարկվում հաճախակի փոփոխությունների, քանի որ ամրագրում է սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին բնորոշ իրավական հիմնարար արժեքներն ու սկզբունքները, այնպիսի կառուցակարգային լուծումներ, որոնք անհրաժեշտ են հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատասխան վերակազմակերպելու, ինչպես նաև սահմանադրական նորմերն ու սկզբունքները զարգացող հասարակական հարաբերություններին համապատասխանեցնելու համար: Նշվածն էլ, իր հերթին, այդ նորմերի պատշաճ իրացման պայմաններում հանգեցնում է Սահմանադրության կենսունակության: Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ ժամանակը կարող է մեծացնել Սահմանադրության կենսունակությունը միայն այն դեպքում, երբ վերջինս ընկալվում է որպես հասարակական բարեկե-

[1] Տե՛ս Balkin J. M., Constitutional Interpretation and Change in the United States: The Official and the Unofficial, http://juspoliticum.com/article/Constitutional-Interpretation-and-Change-in-the-United-States-The-Official-and-the-Unofficial-1088.html /վերջին մուտք՝ 16.06.2018/:

ցության վրա դրական ազդեցություն ունեցող պարտադիր փաստաթուղթ[1]:

Հետևաբար, կարծում ենք, որ ոչ թե գործողության երկարատև ժամանակահատվածն է վկայում սահմանադրական կայունության մասին, այլ հիշյալ հատկանիշի ու դրան բնորոշ առանձնահատկությունների առկայությունն է նպաստում Սահմանադրության երկարակեցությանն ու կենսունակությանը:

Քննարկվող համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, թե կա արդյոք որոշակի ժամանակահատված, որի ընթացքում Սահմանադրությունը պետք է մնա ուժի մեջ, որպեսզի համարվի կայուն: Գրականության մեջ այդ առնչությամբ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Ջեֆերսոնը, օրինակ, հակված էր օրենքների, այդ թվում՝ Սահմանադրության ուժը մեխանիկորեն կորցնելու գաղափարին՝ որպես ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ այսօրվա մեծամասնությունը կարող է սահմանափակել իրեն և այսօրվա փոքրամասնությանը, բայց այն չի կարող սահմանափակել ապագա մեծամասնությանը կամ փոքրամասնությանը: Նրա կարծիքով, սահմանադրությունների համար գործողության օպտիմալ ժամանակահատվածը տասնինը տարի է՝ հիմք ընդունելով այդ տարիներին Եվրոպայում կյանքի միջին տևողությունն ու մեծահասակների ակտիվ կյանքի միջին ժամկետը[2]:

Վերը շարադրվածի առումով հարկ է նկատել, որ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ընդհանուր առմամբ սահմանադրությունները երկար չեն գործում: Աշխարհում դրանց գործողության միջին տևողությունը, սկսած 1789 թվականից, 17 տարի է: Սահմանադրությունների կեսը սովորաբար գործում է 18 տարի, և միայն 19%-ն է գործում մինչև 50 տարի: Բավական շատ են գործողության կարճատև ժամանակահատված ունեցող սահմանադրութ-

[1] Տե՛ս Negretto G. L., նշված աշխատությունը, էջ 27:

[2] Տե՛ս Thomas Jefferson to James Madison, September 6, 1789; Letter to Samuel Kercheval, July 12, 1816, http://etext.virginia.edu/etcbin/toccer-new2?id=JefLett.sgm&images=images/modeng&data=/texts/english/modeng/parsed&tag=public&part=244&division=div1 (վերջին մուտք՝ 13.03.2014), Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը:

յունները. մոտավորապես 7%-ը նույնիսկ չի գործում մինչև երկրորդ տարին: Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի երկրներում հիմնական օրենքի գործողության միջին տևողությունը համապատասխանաբար 12.4 և 10.2 տարի է, և դա այն պայմաններում, երբ հիշյալ տարածաշրջանների սահմանադրությունների մոտավորապես 15%-ն ուժը կորցնում է գործողության առաջին տարվա ընթացքում: Արևմտյան Եվրոպայի և Ասիայի երկրներում սահմանադրությունները գործում են համապատասխանաբար 32 և 19 տարի: Հարկ է նկատել նաև, որ սահմանադրությունների գործողության միջին տևողությունը վերջին 200 տարվա ընթացքում չի մեծացել, ընդհակառակը՝ կրճատվել է: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմն այն 21 տարի էր, մինչդեռ այդ ժամանակահատվածից հետո դարձել է 12 տարի[1]:

Հետաքրքիր է նաև սահմանադրական փոփոխությունների հաճախականությունը 1991 թ.-ից հետո ընկած ժամանակահատվածում: 1991-2014 թթ. ընթացքում, օրինակ, Ալբանիայում ընդունվել է երկու Սահմանադրություն, երեք անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Բելառուսում ընդունվել է մեկ Սահմանադրություն, երկու անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Բոսնիա և Հերցեգովինայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, մեկ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Խորվաթիայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, չորս անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Չեխիայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, յոթ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Լիտվայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, հինգ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Մոլդովայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, ութ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Ռուսաստանում ընդունվել է մեկ Սահմանադրություն, հինգ անգամ կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ, Ռումինիայում ընդունվել է մեկ Սահմանադրություն, մեկ անգամ

[1] Տե՛ս Ginsburg T., Melton J., Elkins Z., նշված աշխատությունը:

կատարվել են սահմանադրական փոփոխություններ և լրացումներ և այլն[1]:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական փոփոխությունների հաճախականությունը տարբերվում է տարատեսակ սահմանադրական համակարգերում, և չնայած առկա միջինացված վիճակագրական տվյալներին՝ չկա այդ առնչությամբ մեկ ընդհանուր մոտեցում և մոդել՝ նկատի ունենալով քննարկվող փոփոխությունների հաճախականությունը պայմանավորող տարատեսակ գործոնները:

Ամփոփելով վերը շարադրվածը և հաշվի առնելով սահմանադրական կայունության ու ժամանակի միջև կապի առնչությամբ ներկայացված մեր մոտեցումը՝ կարծում ենք, որ նպատակահարմար չէ մատնանշել կոնկրետ ժամանակահատված, որի ընթացքում ուժի մեջ մնալու պարագայում Սահմանադրությունն ու սահմանադրական համակարգը կարող են համարվել կայուն: Բնականաբար, երկարատև ժամանակահատվածի ընթացքում Սահմանադրության գործողությունը, երբ այն միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ՝ համապատասխանելով դրանց զարգացման միտումներին, վկայում է Սահմանադրության կենսունակության, հետևաբար՝ նաև կայունության մասին: Սակայն այդ հանգամանքը տեսականորեն չի բացառում այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ գործելով նույնիսկ չափազանց կարճ ժամանակահատվածի ընթացքում՝ Հիմնական օրենքին բնորոշ լինի քննարկվող հատկանիշը: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, այն դեպքում, երբ վերը նշված առանձնահատկություններով օժտված Սահմանադրության փոփոխության հիմնական պատճառը լինի պետական իշխանության ներկայացուցիչների փոփոխությունը: Հնարավոր է նաև հակառակ իրավիճակը, երբ երկարատև ժամանակահատվածի ընթացքում սահմանադրական

[1] Տե՛ս Ginsburg T., Melton J., Elkins Z., Chronology of Constitutional Events, Version 1.2 // Comparative Constitutions Project, http://comparativeconstitutionsproject.org/download-data/, /վերջին մուտք՝ 16.06.2018/, Հարությունյան Գ., Սարգսյան Հ., Գևորգյան Ռ., Սահմանադրականություն. Ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, Երևան, «Զանգակ», 2017, էջ 16-19:

տեքստի անփոփոխելիության պատճառը լինեն տարատեսակ քաղաքական և այլ գործոնները, ինչին արդեն անդրադարձանք աշխատանքի շրջանակում: Վերը շարադրվածն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից նույնպես հասարակության սահմանադրական և քաղաքական մշակույթն ունի առանցքային նշանակություն:

Ուստի, կարծում ենք, որ քննարկվող համատեքստում ելակետային պետք է լինի այն, որ նպատակահարմար չէ խոսել որևէ չափանիշային ժամանակահատվածի մասին, որն ինքնին ենթադրում է սահմանադրական կայունության հատկանիշի առկայությունը: Սակայն, բնականաբար, առավել ընդունելի են այն իրավիճակները, երբ երկարատև ժամանակահատվածի ընթացքում գործող Սահմանադրությունը միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների ելակետային կարգավորիչ՝ համապատասխանելով դրանց զարգացման ընթացքին, իսկ նման պայմաններում Սահմանադրությունը դառնում է կենսունակ, հետևաբար նաև՝ կայուն:

Կարևոր է և այն, որ, մեր կարծիքով, Սահմանադրությունը չպետք է փոփոխության ենթակա լինի երկրի քաղաքական իրավիճակի յուրաքանչյուր փոփոխությանը կամ նոր քաղաքական մեծամասնության ձևավորմանը զուգընթաց: Սահմանադրությունը հասարակական հարաբերությունների կարգավորման տեսանկյունից ունի հիմնաքարային նշանակություն և չի կարող օգտագործվել որպես սոսկ ընթացիկ քաղաքական խնդիրները լուծելու միջոց: Ավելին՝ Սահմանադրությունը, բացի բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթ լինելուց, հանդես է գալիս նաև որպես կոնկրետ սահմանադրական համակարգի խորհրդանիշ և այդ տեսանկյունից ունի խորհրդանշական դերակատարություն: Հետևաբար, Հիմնական օրենքը պետք է հասարակության համար իրականում ընկալվի որպես հիմնարար փաստաթուղթ, սահմանադրական համակարգի խորհրդանիշ, փաստացի գոյություն ունեցող սահմանադրականության զգացողություն առաջացնի, ոչ թե յուրաքանչյուր քաղաքական իրադարձությանը զուգընթաց պատահականորեն ընդունվող կամ փոփոխվող քաղաքական հռչակագրի: Ուստի, սահմանադրական փոփոխությունների հաճախականությունը չի կարող պայմանավորված լինել սոսկ քաղաքական ուժերի հարաբերակ-

ցությամբ և դրա մաթեմատիկական հաշվարկով: Սահմանադրության ընդունման եղանակն ու նրա իրացման ընթացքը պետք է հասարակությունում համոզմունք ձևավորեն, որ այն կայուն փաստաթուղթ է, կոնկրետ սահմանադրական համակարգի խորհրդանիշ և չի կարող փոփոխվել՝ սոսկ օրվա մեծամասնության քաղաքական կամքով պայմանավորված: Հակառակ իրավիճակը կարող է անհնար դարձնել սահմանադրական նորմերի պատշաճ իրացումն ու հանգեցնել սահմանադրական կայունության հիմքում ընկած արժեքների ձևախեղման, ինչպես նաև իրավական պետության հիմքում ընկած այնպիսի արժեքների խաթարման, ինչպիսիք են կանխատեսելիությունը և իրավական որոշակիությունը՝ բացառելով նաև Սահմանադրության՝ որպես կոնկրետ սահմանադրական համակարգի խորհրդանիշի ընկալումը:

Քննարկվող հիմնախնդրի առումով Վենետիկի հանձնաժողովը բազմիցս արձանագրել է, որ Սահմանադրության չափազանց հաճախակի փոփոխությունները բացասական ազդեցություն են ունենում սահմանադրական ու քաղաքական կայունության տեսանկյունից[1]: Ավելին՝ Խորվաթիայի սահմանադրական փոփոխությունների առնչությամբ Հանձնաժողովը ցավով ընդգծել է, որ չափազանց կարճ ժամանակահատվածի ընթացքում[2] Սահմանադրությունը փոփոխվել է երկու անգամ՝ հնարավորություն չտալով լիարժեք արդյունավետությամբ օգտվելու առաջին փոփոխության ընձեռած հնարավորություններից[3]:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով կատարված եզրահանգումները, կարծում ենք, որ արդարացված չէ նաև հակառակ ծայրահեղությունը, երբ սահմանվում է կոնկրետ ժամանակահատված, որի ընթացքում Սահմանադրությունը չի կարող ենթարկվել փոփոխությունների: Օրինակ՝ Հունաստանի Սահմանադրության

[1] Տե՛ս CDL-AD(2010)001, նշված փաստաթուղթը:

[2] Խոսքը 2000 թ. և 2001 թ. սահմանադրական փոփոխությունների մասին է:

[3] Տե՛ս CDL-PI(2015)023, Compilation of Venice Commission Opinions concerning Constitutional Provisions for Amending the Constitution // European Commission for Democracy through Law (Venice Commission), Strasbourg, 22 December 2015, http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)023-e /վերջին մուտք՝ 16.06.2018/:

110-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրության փոփոխությունն արգելված է նախորդ փոփոխություններից հետո հինգ տարվա ընթացքում[1]:

Ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ անհնար է խոսել որևէ չափանիշային ժամանակահատվածի մասին, որն ինքնին ենթադրում է սահմանադրական կայունության հատկանիշի առկայությունը կամ մատնանշում է սահմանադրական փոփոխությունների հնարավոր հաճախականությունը: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ քննարկվող խնդրի լուծման հիմնական բանալին պետք է լինի սահմանադրական համակարգի կայունության էությունը կազմող արժեքների և սահմանադրական զարգացումների անհրաժեշտության ու դրա հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելը:

КОНСТИТУЦИОННАЯ СТАБИЛЬНОСТЬ И ПЕРИОДИЧНОСТЬ КОНСТИТУЦИОННЫХ ИЗМЕНЕНИЙ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ МЫСЛИ

Анаит Манасян

Проректор Академии юстиции по научной работе,
доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук

В статье рассматриваются вопросы периодичности конституционных изменений и влияния последней на стабильность конституционных систем. Изучив периодичность конституционных изменений в различных странах, мы пришли к заключению, что конституция не должна меняться с каждым изменением политической ситуации в стране или формированием нового конституционного большинства. Конституция является не только документом, имеющим

[1] Տե՛ս Հունաստանի Հանրապետության Սահմանադրություն, https://www.hellenicparliament.gr/UserFiles/f3c70a23-7696-49db-9148-f24dce6a27c8/001-156%20aggliko.pdf /վերջին մուտք՝ 16.06.2018/:

высшую юридическую силу, но и символом конкретной конституционной системы. В этом аспекте основной закон имеет символическую значимость. Следовательно, пути и периодичность изменения Конституции должны формировать убеждение в обществе, что Конституция является стабильным документом, символом конкретной конституционной системы и не может меняться лишь на основании политической воли политического большинства.

CONSTITUTIONAL STABILITY AND FREQUENCY OF CONSTITUTIONAL AMENDMENTS IN THE CONTEXT OF MODERN CONSTITUTIONAL-LEGAL THOUGHT

Anahit Manasyan
Vice-Rector of the Academy of Justice for Sceintific Affairs,
Associate Professor at the Chair of Constitutional Law of YSU,
Candidate of Legal Sciences

Article considers issues with regard to frequency of constitutional amendments and the impact of the latter on the stability of constitutional systems. Studying the frequency of constyitutional amendments in various states, author draws a conclusion that the Constitution should not be amended parallel with each change of the political situation in the state or formation of a new constitutional majority. Constitution is not just a document with a highest legal force, but also a symbol of a concrete constitutional system, and from this viewpoint the Basic Law has a symbolic significance. Hence, the ways and frequency of constitutional amendments should form a conviction in the society that the Constitution is a stable document, symbol of a concrete constitutional system and cannot be amended just on the basis of the political will of the political majority of the day.

Բանալի բառեր – *սահմանադրական կայունություն, սահմանադրական զարգացումներ, սահմանադրական փոփոխությունների հաճախականություն, Սահմանադրություն, խորհրդանշական դերակատարություն:*

Ключевые слова: *конституционная стабильность, конституционное развитие, периодичность конституционных изменений, Конституция, символическая значимость.*
Keywords: *constitutional stability, constitutional developments, frequency of constitutional amendments, Constitution, symbolic significance*

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Սամվել Մուրադյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

ՀՀ-ում մշտապես զարգանում և կատարելագործվում է հարկային օրենսդրությունը: Հետզհետե ավելի են ճշգրտվում և մանրամասնվում հարկային պատասխանատվության հիմքերը և կիրառման պայմանները, հստակեցվում է հարկային պատասխանատվություն սահմանող իրավական նորմերի իրացման վարութային իրավական կարգը: Այդ առումով շատ կարևոր քայլ էր 2016 թ. հոկտեմբերի 4-ի «ՀՀ Հարկային օրենսգրքի»[1] ընդունումը:

Հարկային իրավունքում այսպես կոչված դրական պատասխանատվությունը հիմնվում է ձեռնարկատիրական գործունեության կամավորության և սոցիալական արդարության սկզբունքների վրա: Հարկային իրավունքի նորմերի խախտումները պայմանավորում են բացասական հարկային պատասխանատվության առկայությունը, որը կարելի է դիտարկել որպես պետության անդրադարձը հարկային օրենսդրության խախտմանը՝ պետական հարկադրանքի կիրառմամբ: Այն դրսևորվում է պատժիչ՝ (տուգանային) և (իրավավերականգնիչ) գործառույթներով[2]:

Հարկային պատասխանատվությունը՝ սահմանված Օրենսգրքի 18-րդ բաժնով: Վերջինիս 397-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ «*Հարկային պատասխանատվությունն իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է: Այն հետապնդում է հետևյալ խնդիրները՝ 1) պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովում, 2) հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևան-*

[1] Այսուհետ՝ Օրենսգիրք:

[2] Տե՛ս Карасев Н.В., Финансовое право Российской Федерации, М., 2004, էջ 35:

քով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցում, 3) հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, 4) ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարման պարտադրում հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով»:

Հարկային պատասխանատվության ենթարկման կարևոր պայմաններից են **պատասխանատվության անխուսափելիությունը և պատասխանատվության համաչափությունը:**

Առաջինը ենթադրում է, որ *հարկ վճարողներն Օրենսգրքի կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտման համար անխուսափելիորեն ենթարկվելու են պատասխանատվության (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 9-րդ կետ):*

Իսկ երկրորդը, որ *Օրենսգրքի կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտման համար նախատեսվող պատասխանատվությունը պետք է համաչափ լինի իրավախախտման ծանրությանը (Օրենսգրքի 3-րդ հոդվածի 10-րդ կետ):*

Հարկային պատասխանատվության հիմքը հարկային իրավախախտումն է: Օրենսգրքի 76-րդ գլուխը սահմանում է հարկային իրավախախտումների համար ընդհանուր դրույթներ:

Օրենսգիրքն առաջին անգամ սահմանեց *հարկային իրավախախտումը՝ որպես հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողություն կամ անգործություն,* որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն: Հարկային իրավախախտման, ինչպես ցանկացած այլ տեսակի իրավախախտման համար առավել կարևոր հանգամանքներից են հակաիրավական բնույթը և մեղքը: Սակայն, ցավոք, Օրենսգրքում տրված է միայն հակաիրավականության բնորոշումը: Նման մոտեցումը հարկային իրավախախտումների դեպքում լայն տարածում ունի արևմտյան երկրների օրենսդրական պրակտիկայում[1]: Այս պարագայում համարվում է, որ հակաիրավական բնույթը

[1] Տե՛ս Пепеляев С.Г., Налоговое право, М., 2003, էջ 74:

լիովին բավարար է հարկային իրավախախտման բնորոշման համար: Այլ ուղով են գնացել ՌԴ-ի հարկային օրենսգրքի դեպքում: Այդ օրենսգիրքը սահմանել է, որ իրավախախտումը որակելիս անհրաժեշտ է մեղքի ապացուցումը, նշվել են այն պայմանները, որոնց առկայության պայմաններում մեղավոր անձը կարող է ազատվել պատասխանատվությունից (կամ կարող է այն մեղմացվել): Ըստ էության ամրագրվել է հարկ վճարողի անմեղության կանխավարկածը: ՌԴ Հարկային օրենսգրքի 106-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում մեղավորությամբ կատարված հակաիրավական արարքը (գործողություն կամ անգործություն), որի համար հարկային օրենսգրքով սահմանված է պատասխանատվություն[1]: Արևմտյան մոտեցումը բացատրվում է ոչ միայն այն հանգամանքով, որ հարկային իրավախախտումների նկատմամբ ավելի խիստ մոտեցում է դրսևորվում, այլև նրանով, որ արևմտյան երկրների մեծ մասում վարչական իրավախախտումները և հետևաբար վարչական պատասխանատվությունը չեն համարվում համապատասխանաբար իրավախախտման և իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ: Վարչական իրավախախտումները դիտարկվում են որպես քրեական զանցանք և որպես նվազ հասարակական վտանգավորություն ներկայացնող իրավախախտումներ, որոնց համար սահմանվում է ավելի մեղմ քրեական պատիժ: ՌԴ-յան օրենսդրական կարգավորման նման դրսևորումը պայմանավորված է նրանով, որ հարկային ոլորտում հարկային հանցագործությունը և հարկային իրավախախտումը հստակորեն սահմանազատված են, և դրանց նկատմամբ պատասխանատվությունը կիրառվում է լիովին տարբեր վարույթի, ապացուցման և պատասխանատվության ենթարկման կանոններով: Սակայն քանի որ ՀՀ-ում վարչական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, հետևաբար վարչական պատասխանատվության տեսանկյունից մեղքը վարչական զանցանքի բնութագրման, նրա զանցակազմի կարևոր տարրերից է: Հարկային իրավախախտման համար Օրենսգրքով մեղքի բացակա-

[1] Տե՛ս Ашомко Т.А., Проваленко О.М., Налоговый кодекс: правонарушение и ответственность, М., 2001, էջ 78, Пансков В.Г., Налоговое право, М., 2004, էջ 58:

յությամբ պատասխանատվության սահմանումն ավելի մոտ է քաղաքացիաիրավական պատասխանատվությանը: *Մեր կարծիքով, հարկային պատասխանատվության բնորոշման ժամանակ մեղքի բացակայությունը ճիշտ և հիմնավորված չէ, այլ միայն նպատակ է հետապնդում հեշտացնել հարկային մարմինների գործունեությունը:* Այս տեսակետը կարելի է հիմնավորել նաև նրանով, որ այն հակասում է պատասխանատվության համաչափության սկզբունքին, որի իրացման համար, մեր կարծիքով, շատ կարևոր է մեղքի առկայությունը:

Հարկային պատասխանատվություն կիրառելու ընդհանուր պայմանները սահմանված են Օրենսգրքի 399-րդ հոդվածով: Վերջինս սահմանում է, որ հարկային իրավախախտման համար հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային պատասխանատվության են ենթարկվում բացառապես Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

Հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային պատասխանատվության ենթակա չեն, եթե հարկային իրավախախտման օբյեկտ հանդիսացող տվյալ հարկային իրավահարաբերությունում առաջնորդվել են հարկային մարմնի պաշտոնական պարզաբանումներով:

Հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից երկու և ավելի հարկային իրավախախտում կատարելու դեպքում հարկային պատասխանատվությունը կիրառվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին:

Հարկ վճարողին կամ հարկային գործակալին հարկային իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելը չի ազատում նրանց կամ նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վարչական, քրեական կամ այլ պատասխանատվության կիրառումից:

Հարկային պատասխանատվության կիրառումը հարկ վճարողին չի ազատում Օրենսգրքով սահմանված հարկային պարտավորությունների կատարումից, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Օրենսգրքով սահմանված են հարկային իրավախախտման համար կիրառվելիք հարկային պատասխանատվության հետևյալ տեսակները.

1) նախազգուշացում,

2) տույժ,

3) տուգանք,

4) հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավում,

5) հարկ վճարողի գործունեության կասեցում:

1. **Նախազգուշացում:** Օրենսգրքի 410-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքների համար սահմանված է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում Օրենսգրքով սահմանված կարգով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող հարկ վճարողների կողմից ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման համար Օրենսգրքով սահմանված պահանջների խախտման՝ Օրենսգրքով սահմանված պահանջները չբավարարող ուղեկցող փաստաթղթով կամ առանց ուղեկցող փաստաթղթի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության հայտնաբերման դեպքում կիրառվում է նախազգուշացում, իսկ նախազգուշացումը կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասով սահմանված երկրորդ փաստ արձանագրվելու դեպքում վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից հարկ վճարողը դադարում է համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ: Նախազգուշացման դեպքում լրացուցիչ հարկային պարտավորություններ չեն առաջանում:

2. **Տույժ**: *Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ժամկետներում չվճարելու կամ այդ ժամկետներից ուշ վճարելու համար Օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոց է:* Տույժը շատ նման է քաղաքացիաիրավական պատասխանատվության դեպքում կիրառվող տույժին, որը նշանակվում է կողմերից որևէ մեկի կողմից պարտավորության՝ ժամանակին չկատարելու համար: Սակայն դրանց միջև տարբերությունն այն է, որ քաղաքացիական պատասխանատվության դեպքում այն պայմանագրային բնույթ է կրում, իսկ հար-

կային պատասխանատվության դեպքում սահմանվում է Հարկային օրենսգրքով:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկման օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար («Հարկերի մասին» 1997 թ. ապրիլի 14-ի օրենքով սահմանված է 365 օրվա համար):

Վերը հիշատակված հոդվածով սահմանված կարգով տույժեր են հաշվարկվում նաև այն դեպքերում, երբ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովը փոփոխում կամ կասեցնում է արտոնյալ որակված սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի որոշումները՝ դրանց շրջանակում պակաս վճարված կամ չվճարված ԱԱՀ-ի գումարների նկատմամբ:

2) Օրենսգրքով սահմանված[1]՝ լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների նկատմամբ՝ սկսված ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի գումարների վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետին հաջորդող օրվանից, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում չեն վերաարտահանվում Հայաստանի Հանրապետության տարածքից:

Տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարե-

[1] Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 37-րդ կետ:

լու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Նույն հոդվածը սահմանում է, որ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով: Հարկ է նշել, որ եթե Օրենսգիրքը կրկնակի է դարձրել տույժի կիրառման ժամկետը, ապա միևնույն ժամանակ էլ կրկնակի չափով նվազեցրել է տոկոսով տույժի չափը («Հարկերի մասին» ՀՀ օրենքով այն 0.15 տոկոս էր):

3. **Տուգանք:** Օրենսգրքի 3-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ *տուգանքը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված պահանջները չկատարելու կամ խախտումներով կատարելու համար սահմանված պատասխանատվության միջոց է:* **Հարկային պատասխանատվության համար նախատեսվող տուգանքը տարբերվում է վարչական պատասխանատվության համար կիրառվողից նրանով, որ հարկային տուգանքը չի կարող վարչական տուգանքի պես փոխարինվել այլ տուժամիջոցով[1]:**

Տուգանքի նշանակման դեպքում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված պահանջները չկատարելու կամ խախտումներով կատարելու համար Օրենսգրքի 77-րդ գլխով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ տոկոսային կամ հաստատուն դրույքաչափով՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:

Օրենսգրքի 402-428-րդ հոդվածներով սահմանված են այն իրավախախտումները, որոնց կատարման համար նախատեսված է տուգանք: Ըստ էության, բացի 401-րդ հոդվածից, Օրենսգրքի 17-րդ գլխի 402-428-րդ հոդվածներով նախատեսված է տուգանք:

Համառոտ քննարկենք գործնականում առավել շատ կատարվող հարկային իրավախախտման (հարկի գումարը պակաս ցույց տալը) համար նախատեսված տուգանքը:

---

[1] Տե՛ս Кучеров И.И., Судаков О.Ю., Орешкин И.А., Налоговый контроль и ответственность за нарушение законодательства о налогах и сборах / Под ред. И.И. Кучерова, М., 2001, էջ 35:

Օրենսգրքի 402-րդ հոդվածով սահմանվում է, որ «Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի յուրաքանչյուր հարկային հաշվարկում (բացառությամբ արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարության) հարկի գումարը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով հաշվարկվող չափից պակաս ցույց տալու դեպքերում գանձվում է պակաս ցույց տրված հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով: Այդ նշված խախտումը համալիր հարկային ստուգման արդյունքում կազմվող ակտով արձանագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում գանձվում է պակաս ցույց տրված հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100 տոկոսի չափով»:

Այդ նույն հոդվածի 3-րդ կետով սահմանվում է ավելի խիստ տուգանք շրջանառության հարկի գումարը պակաս ցույց տալու դեպքում: Շրջանառության հարկ վճարողների կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի հարկային հաշվարկում հարկի գումարը Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող չափից պակաս ցույց տալու դեպքերում գանձվում է պակաս ցույց տրված հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100 տոկոսի չափով:

4. **Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավում:**

Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը սահմանված կարգով ենթակա է բռնագրավման:

Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավման դեպքում հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը հարկային մարմնի ընդունած՝ բռնագրավման վերաբերյալ որոշման հիման վրա հարկադիր կարգով անհատույց վերցվում է որպես պետական սեփականություն: Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավում նախատեսող հարկային իրավախախտում բացահայտելու դեպքում հարկային մարմինն անհապաղ ձեռնարկում է Օրենսգրքով սահմանված՝ հարկային պարտավորությունների կատարումն ապահովող՝ գույքի արգելանքի ապահովման միջոցը: Գույքը հարկադիր կարգով որպես պետական սեփականություն վերցնելու, պահպանելու և տնօ-

րինելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գույքը ենթակա է բռնագրավման հետևյալ դեպքերում.

Օրենսգրքի՝ ակցիզային հարկի հետ կապված 389-րդ և 390-րդ հոդվածներով սահմանված՝ դրոշմապիտակներով կամ դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա՝ չդրոշմավորված, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված դրոշմապիտակներով կամ դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացման դեպքում:

Օրենսգրքի 424-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային դրոշմանիշներով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնի խախտման այն դեպքում, երբ օտարվող ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ Օրենսգրքով սահմանված կարգով որոշված) գներով գերազանցում է 50 հազար դրամը:

Բացի վերը նշված դեպքերից՝ գույքը ենթակա է բռնագրավման ապօրինի գործունեության ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ապրանքների իրացման դեպքում (Օրենսգրքի 407-րդ հոդված):

5. **Հարկ վճարողի գործունեության կասեցում:** Հարկ վճարողի գործունեության կասեցման դեպքում լրացուցիչ հարկային պարտավորություն չի առաջանում: Օրենսգրքով սահմանված դեպքերում կասեցումը կարող է փոխարինվել տուգանքով:

Միևնույն հարկային իրավախախտման համար չեն կարող կիրառվել հարկային պատասխանատվության տարբեր տեսակներ՝ բացառությամբ 18-րդ բաժնով սահմանված դեպքերի:

Սույն հոդվածով սահմանված հարկային պատասխանատվության տեսակների նկատմամբ հարկային պատասխանատվության այլ տեսակներ չեն կիրառվում: Օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ՝

1) տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 300 հազար դրամից, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, և կազմակերպության կամ անհատ ձեռ-

նարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով,

2) արտոնագրային հարկով հարկման օբյեկտ չհամարվող հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ տվյալ գործունեության իրականացման վայրում տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից, և նրա գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով:

Օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված դեպքերում հարկ վճարողի գործունեության կասեցումը կարող է փոխարինվել տուգանքի վճարմամբ՝ հարկ վճարողի գրավոր դիմումը ներկայացնելու և սույն մասով սահմանված չափով հաշվարկվող տուգանքը վճարելու դեպքում: Տուգանքը վճարվում է կասեցումը չկիրառելու յուրաքանչյուր օրվա համար՝ գործունեության իրականացման տվյալ վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված միջին օրական շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 60 հազար դրամից: Տուգանքի գումարի հաշվառման օր է համարվում դիմումը ներկայացնելու ամսաթվի հաջորդ օրը: Մինչև գործունեության կասեցումը դիմում ներկայացնելու դեպքում սույն մասով սահմանված տուգանքը վճարվում է դիմումում նշված՝ գործունեության կասեցման հաջորդական օրերի համար: Կասեցման ընթացքում դիմում ներկայացնելու դեպքում սույն մասով սահմանված տուգանքը վճարվում է դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից մինչև կասեցման ավարտը յուրաքանչյուր օրվա համար: Գործունեության կասեցման ժամկետի ընթացքում դիմում ներկայացնելու դեպքում կասեցումը դադարեցվում է դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից: Մինչև գործունեության կասեցումը կամ կասեցման ընթացքում ճշտված դիմում չի ներկայացվում, իսկ ներկայացվելու դեպքում հարկային մարմնի կողմից չի ընդունվում: Սույն մասով սահմանված դիմումի ձևը սահմանում է հարկային մարմինը:

Վերը թվարկված մասերով սահմանված դեպքերում տուգանքի մեծությունը հաշվարկելիս հիմք է ընդունվում նախորդ եռամսյակի

ընթացքում գործունեության իրականացման այն վայրերում (առևտրի օբյեկտներում կամ ծառայության մատուցման վայրերում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառությունը, որոնց մասով արձանագրվել են խախտումներ:

Հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գործունեությունը սահմանված հիմքերի առկայության դեպքում կասեցվում է: Գործունեության կասեցման համար հիմք են համարվում՝

1) կանխիկ դրամով դրամական հաշվարկներ իրականացնելու պահին և վայրում՝ հարկային մարմնում այդ վայրի հասցեով գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով հսկիչ դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նշված խախտումը կրկնելը: Նշված գործունեության իրականացման վայրում գործունեությունը կասեցվում է մինչև սահմանված կարգով այդ վայրի հասցեով հարկային մարմնում գրանցված հսկիչ դրամարկղային մեքենայի ապահովումը,

2) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնների խախտման համար կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նշված խախտումը կրկնելը:

Օրենսգիրքը սահմանում է նաև կասեցման ոչ ենթակա դեպքերը՝

1) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման գործունեությունը,

2) նոտարական և (կամ) փաստաբանական գործունեությունը:

Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության կասեցման մասին որոշումն ընդունում է հարկային մարմնի ղեկավարը՝ կասեցման հիմք հանդիսացող խախտումն արձանագրելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում[1]: Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը

[1] Օրենսգրքի 384-րդ հոդված:

պետք է փակցվի գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում:

Հարկային պատասխանատվության նորմերն իրացվում են կատարված հարկային իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման վարույթի միջոցով[1]:

Հարկային իրավախախտման համար հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային պատասխանատվության են ենթարկվում բացառապես Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Հարկային վարչարարության իրականացման ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հարկային իրավախախտումները բացահայտվում և արձանագրվում են հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների, ուսումնասիրությունների կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում հարկային պարտավորությունների հաշվառման արդյունքում:

Հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային մարմնի կամ օրենքով լիազորված այլ պետական մարմինների կողմից հարկային պատասխանատվության են ենթարկվում հետևյալ կարգով՝ ա) Օրենսգրքով սահմանված կարգով ընդունված ստուգման ակտով, բ) կամ ուսումնասիրության արձանագրությամբ, եթե Օրենսգրքով նախատեսված է ուսումնասիրության արդյունքում հարկային պարտավորությունների առաջադրում, 3) կամ օպերատիվ հետախուզական միջոցառման արդյունքում կազմված վարչական ակտով, 4) կամ այլ վարչական ակտով:

---

[1] Հարկային վարչարարության իրականացման վարույթները կարող են անմիջապես առնչվել հարկային ոլորտի հետ (հարկային վարույթ) կամ էլ նպաստել հարկային վարչարարության արդյունավետության և օրինականության ապահովմանը (հարկային հսկողության վարույթ, կատարված հարկային իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման վարույթ):

Արձանագրության ձևը և լրացման կարգը հաստատում է հարկային մարմինը:

Կազմված արձանագրությանը կարող են կցվել հարկային իրավախախտման փաստը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր, լուսանկարներ, էլեկտրոնային տեղեկություններ պարունակող կրիչներ, նյութեր և անհրաժեշտ տեղեկություններ պարունակող այլ իրեր:

Արձանագրությունը կազմելուց հետո այն ներկայացվում է հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարին՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով: Եթե կազմված արձանագրության հիման վրա հարուցվում է վարչական կամ քրեական վարույթ, ապա արձանագրությունը պահպանվում է վարչական կամ քրեական գործում, իսկ եթե վարույթ չի հարուցվում, այն պահպանվում է հարկ վճարողի հարկային գործում՝ հետագա հարկային հսկողության ընթացքում օգտագործելու նպատակով:

Հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված կարգով չվճարված հարկային պարտավորությունների առաջացման դեպքում հարկային մարմնի նախաձեռնությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցվում է վարչական վարույթ, եթե չվճարված հարկային պարտավորության չափը գերազանցում է 200 հազար դրամը, կամ հարկային պարտավորության առաջացման օրվանից հետո անցել է երկու ամսից ավելի ժամանակ:

Հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային պատասխանատվության ենթակա չեն, եթե հարկային իրավախախտման օբյեկտ հանդիսացող տվյալ հարկային իրավահարաբերությունում առաջնորդվել են հարկային մարմնի պաշտոնական պարզաբանումներով:

Հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային մարմնի կամ օրենքով լիազորված այլ պետական մարմինների կողմից հարկային պատասխանատվության են ենթարկվում Օրենսգրքով սահմանված կարգով ընդունված ստուգման ակտով կամ ուսումնասիրության արձանագրությամբ, եթե Օրենսգրքով նախատեսված է ուսումնասիրության արդյունքում հարկային պարտավո-

րությունների առաջադրում, կամ օպերատիվ հետախուզական միջոցառման արդյունքում կազմված վարչական ակտով կամ այլ վարչական ակտով:

Հարկ վճարողի կամ հարկային գործակալի կողմից երկու և ավելի հարկային իրավախախտում կատարելու դեպքում հարկային պատասխանատվությունը կիրառվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին:

Հարկ վճարողին կամ հարկային գործակալին հարկային իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելը չի ազատում նրանց կամ նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վարչական, քրեական կամ այլ պատասխանատվության կիրառումից:

Հարկային պատասխանատվության կիրառումը հարկ վճարողին չի ազատում Օրենսգրքով սահմանված հարկային պարտավորությունների կատարումից, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվելու և արձանագրվելու դեպքում հարկային պարտավորությունները հաշվարկվում և գանձման են առաջադրվում հարկային մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակում և նույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:

Սահմանված տուգանքը և փոխհատուցման գումարը հաշվարկվում և գանձման են առաջադրվում հարկային մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակում և նույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:

Օրենսգրքով սահմանված են կիրառվող պատասխանատվության միջոցների կիրառման ժամկետները: Մասնավորապես տուգանքները և վնասի հատուցման գումարները համապատասխան բյուջե են վճարվում համապատասխան ստուգման ակտի կամ

ուսումնասիրության արձանագրության կամ այլ վարչական ակտի ամսաթվին հաջորդող տասը օրվա ընթացքում[1], իսկ ակցիզային դրոշմանիշների և (կամ) դրոշմապիտակների տպագրության ծախսերի փոխհատուցման գումարը վճարվում է համապատասխան վարչական ակտի ամսաթվին հաջորդող տասն օրվա ընթացքում:

Ապօրինի գործունեությամբ զբաղվելու, լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու, արգելված գործունեությամբ զբաղվելու, ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պարտադիր պահանջները խախտելու դեպքերում[2] «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվելու և արձանագրվելու դեպքում հարկային պարտավորությունները հաշվարկվում և գանձման են առաջադրվում հարկային մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակում և նույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:

Այսպիսով՝ ամփոփելով կարելի է հանգել հետևյալ եզրահանգումներին՝

1. **Հարկային պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է:**

2. Մեր կարծիքով, հարկային պատասխանատվության բնորոշման ժամանակ մեղքի բացակայությունը ճիշտ և հիմնավորված

[1] Բացառությամբ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված տուգանքի, որը վճարվում է գործունեության կասեցումը տուգանքով փոխարինելու դեպքում: Վերջին դեպքում տուգանքի գումարի հաշվառման օր է համարվում դիմումը ներկայացնելու ամսաթվի հաջորդ օրը:

[2] Օրենսգրքի 407-410-րդ հոդվածներ:

չէ, այլ միայն նպատակ է հետապնդում հեշտացնել հարկային մարմինների գործունեությունը: Այս տեսակետը կարելի է հիմնավորել նաև նրանով, որ այն հակասում է պատասխանատվության համաչափության սկզբունքին, որի իրացման համար շատ կարևոր է մեղքի առկայությունը:

3. Տույժը շատ նման է քաղաքացիաիրավական պատասխանատվության դեպքում կիրառվող տույժին, որը նշանակվում է կողմերից որևէ մեկի կողմից պարտավորության՝ ժամանակին չկատարելու համար: Սակայն դրանց միջև տարբերությունն այն է, որ քաղաքացիական պատասխանատվության դեպքում այն պայմանագրային բնույթ է կրում, իսկ հարկային պատասխանատվության դեպքում սահմանվում է հարկային օրենսգրքով:

4. Հարկային պատասխանատվության համար նախատեսվող տուգանքը տարբերվում է վարչական պատասխանատվության համար կիրառվողից նրանով, որ հարկային տուգանքը չի կարող վարչական տուգանքի պես փոխարինվել այլ տուժամիջոցով:

5. Հարկային պատասխանատվության դեպքում կարող է կիրառվել ինչպես հիմնական տուժամիջոց, այնպես էլ լրացուցիչ՝ բացի հարկ վճարողի գործունեության կասեցումից:

6. Հարկային վարչարարության իրականացման ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հարկային իրավախախտումները բացահայտվում և արձանագրվում են հարկային մարմնի կողմից Օրենսգրքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների, ուսումնասիրությունների կամ օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում հարկային պարտավորությունների հաշվառման արդյունքում:

МЕРЫ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА НАЛОГОВЫЕ ПРАВОНАРУШЕНИЯ И ПРОИЗВОДСТВО ПО ДАННЫМ ПРАВОНАРУШЕНИЯМ

Самвел Мурадян

Доцент кафедры конституционного права юридического факультета ЕГУ, кандидат юридических наук

В статье изучается налоговая ответственность как самостоятельный вид юридической ответственности. Налоговый кодекс определил понятие «налоговые правонарушения» и установил ответственность за их совершения. Основами применения налоговой ответственности являются неотвратимость и соразмерность ответственности.

Отсутствие вины при формулировании понятия ответственности неправильно и необоснованно и противоречит принципам неотвратимости и соразмерности.

Кодексом установлены следующие виды ответственности: предупреждение, пеня, штраф, конфискация имущества, являющегося предметом налогового правонарушения, приостановление деятельности налогоплательщика. Пеня по налоговым правонарушениям отличается от пени по гражданской ответственности тем, что если последняя устанавливается по договору, то налоговая пеня устанавливается по закону. Штраф по налоговым правонарушениям отличается от штрафа по административным правонарушениям тем, что последняя может быть заменена другим видом ответственности. Налоговая ответственность применяется как основной, так и как дополнительный вид, за исключением приостановления деятельности налогоплательщика.

THE PRECAUTIONS OF RESPONSIBILITY FOR TAX DELICTS AND PROCEDURE OF APPLING TOOLS OF RESPONSIBILITY ON TAX DELICTS

Samvel Muradyan
Associate Professor at the Chair of Constitutional Law of YSU, Candidate of Legal Sciences

The tax responsibility is an independent sort of law responsibility. The Tax Codex fixed the concept of tax delicts and the responsibility for perpetrating of this delicts. The basics of appling tax responsibility are unavoidablity and proportionality of tax responsibility.

The absence of concept formulating the guilt as the element of tax delict, is uncorrect and baseless and is contrary to the principles of unavoidablity and proportionality of tax responsibility.

The Tax Codex fixed the following sorts of tax responsibility: notice, fine, penalty, expropriation of subject of tax delicts, stopping of actions of tax-payer. The fine for tax delicts is different to fine for civil law delicts. The first are fixing by law and the second by contract. The penalty for tax delicts is different to penalty for administrative delicts because the last can transform the penalty to another sort of sanction.

The tax responsibility is appling as the basic and as facultative sanction, except the stopping of actions of tax-payer.

Բանալի բառեր - *ՀՀ հարկային օրենսգիրք, հարկային իրավախախտում, հարկային պատասխանատվություն, հարկային պատասխանատվության տեսակներ, հարկային իրավախախտումների համար հարկային պատասխանատվության միջոցների կիրառում:*

Ключевые слова: *Налоговый кодекс РА, налоговые правонарушения, налоговая ответственность, виды ответственности, применение мер налоговой ответственности за совершение налоговых правонарушений.*

Keywords: *Tax Codex of RA, the concept of tax delict, responsibility for perpetrating of tax delicts, absence of concept formulating the guilt, the sorts of tax delicts. the procedure of appling tools of responsibility on tax delicts.*

ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Գևորգ Դանիելյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամ

Անձնական տվյալների պաշտպանության արդիականությունը, որպես կանոն, փոխկապակցվում է մարդու պատվի և արժանապատվության երաշխավորման, ինչպես նաև անձի կյանքի ու սեփականության նկատմամբ ոտնձգություններից պաշտպանվելու անհրաժեշտության հետ, սակայն, կարծում ենք, որ հիշյալ հիմնարար իրավունքն անմիջականորեն առնչվում է գրեթե բոլոր հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորման խնդրի հետ: Բոլոր դեպքերում արդի դարաշրջանում անձնական տվյալների պաշտպանությունը դադարել է սոսկ անձնական կյանքի անձեռնմխելիության գործոն համարվել: Վերլուծելով այս իրավունքի առնչությամբ տեսական դիրքորոշումների և օրենսդրության զարգացման միտումները՝ կարելի է փաստել, որ այդ իրավունքի պաշտպանության համատեքստում առանցքային նշանակություն է տրվում «անձնական տվյալ» եզրույթի հնարավորինս լայն իմաստով մեկնաբանությանը, մասնավորապես, այդ տվյալների ցանկի ընդլայնումը դիտարկվում է իբրև նշված իրավունքի պաշտպանության հիմնարար երաշխիք: Մեր համոզմամբ, այդպիսով, անտեսվում է այն, որ վերջին հաշվով խնդիրը բնավ «անձնական տվյալ» եզրույթի բովանդակության շարունակական ընդլայնումը չէ, արդի դարաշրջանում տեղի ունեցող գիտատեխնիկական նվաճումների իրական արդյունքները, երբ առաջին հայացքից որևէ էական տեղեկատվական բեռ չկրող տվյալը բավարար է լինում ողջ տեղեկատվությունն անարգել բացահայտելու համար, անտեսվում է նաև այն, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը երեխաների պարագայում ունի էական առանձնահատկություններ. այս և նմանաբնույթ այլ հարցադրումների առավել հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

Տեղեկատվության մշակման ու տարածման ժամանակակից տեխնոլոգիական նվաճումները, իրենց անվիճելի դրական դրսևորումներով հանդերձ, պարտադրել են ոչ միայն հանրային իշխանություններին վերանայելու փաստաթղթաշրջանառության և ընդհանրապես տեղեկատվության հետ առնչություն ունեցող գործառնությունների ողջ համակարգը[1], այլև լրջագույն խնդիրներ են առաջացրել մասնավոր անձանց համար, մարդու անձնական կյանքը անխուսափելիորեն արդեն զերծ է պաշտպանության ավանդական երաշխիքներից: Ինչպես և արձանագրվում է սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում, տեխնոլոգիական առաջընթացը, բնականաբար, ուղեկցվում է մարդկանց կենցաղն առավել բարվոք դարձնելու, կենսապայմանները բարելավելու միտումով ու արդյունքներով, սակայն այդ ամենը բնավ չի բացառում նոր, նախկինում երբևէ իրեն զգացնել չտվող, նաև խիստ խոցելի տարաբնույթ ու անկանխատեսելի նոր հիմնախնդիրների առաջացումը:

Գիտության նվաճումները մարդու համար, այսպիսով, ունեն երկակի նշանակություն, ընդ որում՝ բացասական հետևանքները երբեմն այնքան նշանակալից են, որ տարակուսանք է ծագում դրանց կիրառման նպատակահարմարության առնչությամբ: Հաճախ այդ առթիվ ոչ թե պարզապես մտահոգություն է հայտնվում, այլ խորը տագնապ, մարդկությունն արդեն բացահայտ կոչեր է հնչեցնում, որպեսզի սոցիալական, տնտեսական խնդիրները լուծելիս անհարկի նախապատվությունը չտրվի գիտատեխնիկական այնպիսի նորարարությանը, որի արդյունքները դեռևս չափազանց խնդրահարույց են, չեն անցել նվազագույն փորձարարություն և այլն:

Անհրաժեշտ ենք համարում նկատել, որ անձնական տվյալների պաշտպանության խնդրով, հատկապես երբ խնդիրն առնչվում է տեղեկատվական տեխնոլոգիաների շահագործմանը, անթաքույց շահագրգռված է գործարար աշխարհը, որին առավելապես մտահո-

[1] Տե՛ս **М.А. Сергеевна,** Теоретико-правовой анализ зарубежного законодательства о защите персональных данных в сфере трудовых отношений // Вопросы безопасности, 2016, № 3, էջ 90, DOI: 10.7256/2409-7543.2016.3.18915. URL: http://e-notabene.ru/nb/contents_2016_3.html:

գում են իր աշխատակիցների անձնական տվյալների միջոցով առևտրային գաղտնիք համարվող տվյալների բացահայտման վտանգը կանխելու խնդիրները: Վերջին հաշվով, անձնական տվյալների պաշտպանության միջազգային իրավական փաստաթղթերի ձևավորման գործընթացում միջազգային խոշոր առևտրային կազմակերպությունները դրսևորում են բացահայտ շահագրգռվածություն՝ ընդհուպ ձգտելով սահմանել անձնական տվյալների բացահայտման առանձին դեպքերի համար նյութական պատասխանատվության աննախադեպ բարձր չափեր: Բնորոշ է այն, որ ԵԽ 2016 թ. ապրիլի 27-ի «Անձնական տվյալների մշակման, այդ տվյալների ազատ շրջանառության առնչությամբ ֆիզիկական անձանց պաշտպանության, ինչպես նաև թիվ 95/46/ԵԽ կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2016/679 Կանոնակարգի[1] մշակման աշխատանքները, ինչն արձանագրված է հենց այդ փաստաթղթի վերաբերյալ առանձին պարզաբանումներում[2], իրականացվել են մի շարք խոշոր գործարարների անմիջական աջակցությամբ, այդ թվում՝ ֆինանսական: Հավելենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների շահագործմամբ զբաղվող գործարարներին խիստ մտահոգում է նաև իրենց հեղինակության, իրենց նկատմամբ վստահության հարցը, քանի որ ցանկացած եղանակով տեղեկատվության կորուստը նվազեցնում է հիշյալ ցուցանիշները:

Մարդու հիմնական իրավունքների տեսանկյունից միաժամանակ արժեքավոր են համարվում ինչպես տեղեկություններ ստանալու իրավունքը (Սահմանադրության 51-րդ հոդված), այնպես էլ անձնական տվյալների պաշտպանությունը (Սահմանադրության 34-րդ հոդված): Մյուս կողմից, չպետք է անտեսել, որ այս իրավունքները կամա թե ակամա գործնականում հայտնվում են ակնհայտ մրցակցության մեջ, որպիսի պարագայում արդիական է դառնում այդպիսի մրցակցության պարագայում կոլիզիոն նորմերի մեկնաբանության ու կիրառման կանխատեսելի ու խելամիտ կանոնների համալիր մշակման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ պարզապես հնարավոր չէ ի սկզբանե պնդել, որ նախապատվությունը հարկ է

[1] Տե՛ս https://internetinstitute.ru/wp-content/uploads/2017/07/Telecom-Data-Retention-Leg-appendix2.pdf:

[2] Տե՛ս https://habr.com/company/digitalrightscenter/blog/344064/:

տալ այս կամ այն իրավունքին, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի բազում բաղադրիչներ և հնարավոր դրսևորումներ, որոնք անհրաժեշտ է համարժեք վերլուծել և գնահատել կոլիզիոն մեկնաբանության կանոններ մշակելիս:

Հավելենք, որ քննարկման համար առաջադրված խնդիրը բնավ չի սահմանափակվում զուտ տեսական ազդակներով. այդ իրավունքներից յուրաքանչյուրի սահմանափակման, երաշխավորման, իրացման հարթությամբ ծագող իրավահարաբերություններում հանրային իշխանության մարմնի կամ պաշտոնատար անձի ոչ համարժեք վարքագիծը միանշանակ դիտարկվում է որպես պատասխանատվություն առաջացնող հիմք: Նկատենք, որ Սահմանադրությամբ, որպես կանոն, հատուկ չի շեշտվում այս կամ այն իրավունքի պաշտպանության կամ իրացման համար իրավասու պաշտոնատար անձանց պատասխանատվության անհրաժեշտությունը. դա բխում է Սահմանադրությամբ ամրագրված անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ու իրացման ոլորտում հանրային իշխանության սահմանադրական կարգավիճակի բուն էությունից: Մինչդեռ, օրինակ, տեղեկատվություն ստանալու իրավունքն ամրագրող սահմանադրական նորմում ընդգծված է հիշյալ պատասխանատվությունը. «Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկություններ թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանված են օրենքով»: Ըստ էության, զուտ իրավաբանական տեխնիկայի կանոնների տեսանկյունից, այսպիսի իրավակարգավորումն արդարացված չէ, քանի որ, ինչպես արդեն նշվեց, անկախ այդ նորմից, պատասխանատվություն սահմանելը բխում է սահմանադրական իրավունքների և ազատությունների երաշխավորման ընդհանուր գաղափարից: Պարզապես նշված դեպքում դրա առկայությունը, թերևս, ընդգծում է որոշ իրավունքների խոցելիության բարձր աստիճանը և դրանք առավել պաշտպանված դարձնելու հավակնությունը, թեպետ սա ևս վիճահարույց է, քանի որ Սահմանադրությամբ ամրագրված են առավել առանցքային նշանակություն ունեցող հիմնարար իրավունքներ և ազատություններ (օրինակ՝ կյանքի իրավունքը, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ար-

գելքը և այլն), որոնց պարագայում այդպիսի վերապահում ամրագրված չէ:

Մենք այս հոդվածում կանդրադառնանք վերը նշված զարգացումների համատեքստում մարդկությանն առավել մտահոգություն պատճառող՝ երեխաների անձնական տվյալների պաշտպանության հիմնախնդիրների իրավական ասպեկտներին: Մեր խորին համոզմամբ, տեղեկություններ ստանալու և անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքների իրացման համատեքստում անտեսվում են երեխաների՝ որպես անվերապահորեն առավել խոցելի խավի օրինական շահերը, իսկ «երեխաների լավագույն շահեր» եզրույթն առավել հաճախ մեկնաբանվում է սոսկ իրավիճակային օրենսդրական նախաձեռնությունները յուրովի հիմնավորելու նկատառումով:

Ընդհանրապես, երեխայի շահերն առաջնահերթ ուշադրության արժանացնելու սահմանադրական հիմնադրույթը (Սահմանադրության 37-րդ հոդված), մեր կարծիքով, դեռևս չի ընկալվել որպես երեխաների կարգավիճակի կանխորոշման, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության հիմնարար չափանիշ: Արդյունքում մենք ունենք իրավակարգավորման և իրավակիրառ մի համակարգ, որի համատեքստում այդպես էլ համարժեք չի արտացոլվել երեխայի շահերի առաջնահերթության գաղափարը: Մասնավորապես, գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը բերում է այն համոզման, որ բացակայում է միանշանակ պատասխանն այն հարցին, թե իրավական ինչ արժեքների հարաբերակցության համատեքստում է ընդգծվել հիշյալ առաջնահերթությունը, մասնավորապես երեխայի լավագույն շահերը գերակայո՞ւմ են նրա մյուս իրավունքներին, թե դրանք նշված որակը ձեռք են բերում այլոց իրավունքների հետ մրցակցության պարագայում: Նախապես նկատենք, որ մենք հակված են այն դիրքորոշմանը, որ շահերի առաջնահերթությունը, այո, ենթադրում է գերակայություն այլոց իրավունքների հետ մրցակցության համատեքստում:

Այս հարաբերակցությունը, ցավոք, անտեսված է նաև միջազգային կառույցների մի շարք բանաձևերում և հանձնարարականներում, որոնք հատկապես վերաբերում են գենդերային քաղաքականությանը և դրանով պայմանավորված, օրինակ, համասեռամոլներին ընտանիք կազմելու և երեխաներ որդեգրելու իրավունք վերա-

պահելուն: Խնդիրն այն է, որ, գրեթե առանց բացառության, երեխաների իրավունքները, նրանց լավագույն շահերը կամ չեն քննարկվում հիշյալ հարցադրումների առնչությամբ, կամ, մեր կարծիքով, քննարկվում են ոչ համարժեք: Այսպես՝ երեխաներ որդեգրելու իրավունք ունեցող ընտանիք կազմելու իրավունքն անմիջականորեն վերաբերում է այն երեխային, որին որդեգրում են և միջնորդավորված՝ նաև այն երեխաներին, որոնք դրա արդյունքում հայտնվում են իրենց համար ոչ այնքան ստանդարտ իրավիճակներում: Ողջ խնդիրն այն է, որ նույն միջազգային փորձագետների կողմից կատարված բազում հետազոտություններն աներկբա վկայում են այն մասին, որ այդպիսի ընտանիքներում մեծացած երեխաների մոտ հոգեկան շեղումներն անհամեմատ մեծ տոկոս են կազմում[1]: Ուստի այս փաստերի պարագայում երեխաների իրավունքների մեկուսի քննարկումն առնվազն իրավաչափ չէ:

Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական հիմքերը բնավ նորույթ չեն, պարզապես ընդլայնվել է այդ իրավունքի բովանդակությունը: Որպեսզի անհարկի չանդրադառնանք զուտ խմբագրական մեծածավալ նրբություններին, նպատակահարմար ենք համարում նկատել միայն, որ դեռևս 1995 թ. Սահմանադրությամբ հիշյալ իրավունքը դիտարկվել է իբրև «անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջամտություններից» պաշտպանելու իրավունք (20-րդ հոդված), այդ մոտեցումը պահպանվեց նաև 2005 թ. Սահմանադրության փոփոխություններով (23-րդ հոդված):

Նկատենք, որ կոնկրետ երեխայի իրավունքների մասին միջազգային իրավունքի աղբյուրներում ևս ավանդաբար անձնական տվյալների պաշտպանությունը սահմանափակվում է հիմնականում անձնական և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկություններով. «Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության կամայական կամ ապօրինի միջամտության, կամ իր պատվի և հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգության» («Երեխայի իրավունքների մասին» 1989 թ. նոյեմբերի 20-ի Եվրոպական կոնվենցիայի 16-րդ հոդված): Թերևս, տվյալ դեպքում ներառված է նամակագրության անձեռնմխելիությունը, սակայն դա էութ-

[1] Տե՛ս, օրինակ, http://topnews.mediamall.am/?id=79447:

յամբ այլ իրավունք է և, բոլոր դեպքերում, երաշխավորված որպես սահմանադրական ինքնուրույն հիմնական իրավունք (մասնավորապես, այն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 33-րդ հոդվածով ամրագրված է որպես հաղորդակցության ազատություն և գաղտնիություն): Միաժամանակ, միջազգային այդ և մյուս փաստաթղթերում բացահայտված է անձնական տվյալների պաշտպանության գերխնդիրը՝ պատվի և հեղինակության նկատմամբ ոտնձգության բացառումը: Վերջին հաշվով, անձնական տվյալների պաշտպանությունն անմիջականորեն առնչվում է անձի պատվի և արժանապատվության անձեռնմխելիության հետ, պարզապես երեխաների պարագայում չենք կարող անտեսել, որ նրանք առավել խոցելի են, առավել դյուրին են ենթարկվում հոգեկան ազդեցության:

Ինչ խոսք, անձնական տվյալների համատեքստում առանցքային նշանակություն ունեն հատկապես անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկությունները, սակայն դրանցով բնավ չի սահմանափակվում «անձնական տվյալ» եզրույթի բովանդակությունը, իսկ մյուս բաղադրիչների պաշտպանության հիմքերն ու ընթացակարգերը չեն կարող նույնական լինել անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկությունների համար նախատեսված իրավական ռեժիմի հետ: Բացի այդ, չեն կարող նույնական լինել նաև կոնկրետ երեխաների անձնական տվյալների պաշտպանության իրավական հիմքերը, ինչին կանդրադառնանք ստորև:

Այս նկատառումով, թերևս, ողջունելի էր Արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից մշակված և 2017 թ. շրջանառության մեջ դրված «Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին» ուղեցույցը[1]: Պարզապես այդ ուղեցույցն առավելապես կիրառական նշանակություն ունի, որի հիմքում սոսկ գործող օրենսդրությունն է, դրանում հստակեցված են բացառապես գործող օրենսդրության նորմերի բովանդակությունը, դրանց կիրառման փուլում քննարկման ենթակա հնարավոր հարցադրումները և այլն: Մյուս կողմից, այդ փաստաթղթում ընդհանրապես քննարկման նյութ է դարձել անձնական տվյալների պաշտպանության ողջ իրա-

[1] Տե՛ս, օրինակ, http://moj.am/search/do/q/%D5%A1%D5%B6%D5AB:

վական համակարգը, մինչդեռ, ինչպես արդեն նկատեցինք, համընդհանուր նորմերը մեծ մասամբ կիրառելի չեն անչափահասների պարագայում: Միաժամանակ, մեր կարծիքով, այն ունի նաև որոշակի գիտագործնական ուղղվածություն, քանի որ դրանում առկա են իրավական կարգավորման վերաբերյալ որոշակի դատողություններ, միջազգային փորձի վերլուծություն, ինչպես նաև գործնական բնույթի ուսանելի խորհուրդներ:

Մեր համոզմամբ, երեխաների անձնական տվյալների պաշտպանության ողջ իրավական համակարգը ներկայումս ունի համալիր կազմակերպական ասպեկտներով բարելավման խիստ կարիք: Ընդ որում՝ այս անհրաժեշտությունն ընդգծված է քննարկման առարկա հիմնախնդրի վերաբերյալ իրավական հիմքերի էական վերանայումներով:

Այսպես, իրավական մտքի զարգացմանը զուգընթաց, հիշյալ իրավունքի բովանդակությունը միանգամայն իրավաչափորեն դարձավ առավել ընդգրկուն՝ ներառելով անձին վերաբերող նաև այնպիսի տվյալներ, որոնք անմիջականորեն չեն առնչվում մարդու անձնական կամ ընտանեկան կյանքին: Այս նկատառումով, նախ, Սահմանադրությամբ նախապատվությունը տրվեց «անձնական տվյալներ» համընդհանուր եզրույթի կիրառմանը, իսկ դրա բաղադրիչների սահմանումը վերապահվեց օրենսդրությանը: Ըստ այդմ էլ՝ անգամ մինչև Սահմանադրության 2015 թ. փոփոխությունների ընդունումը, դեռևս 2015 թ. մայիսի 18-ին ընդունված «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով տրվեց այդ եզրույթի օրենսդրական բնորոշումը. «... ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը»: Ըստ էության, այսպիսի ժամանակագրական անհամապատասխանությունն այնքան էլ վիճահարույց չէ, եթե նկատի ունենանք, որ թեպետ 2005 թ. Սահմանադրության փոփոխությունների 23-րդ հոդվածով դարձյալ օգտագործվել էր նույնը եզրույթը՝ «անձնական և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկություններ», սակայն դրան, թերևս, վերապահվել էր լայն բովանդակություն. «... այլ տեղեկություններ, քան նախատեսված են օրենքով»:

Անդրադառնալով անձնական տվյալների պաշտպանության հիմնական՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) հետազոտության առարկա հիմնադրույթների վերլուծությանը՝ նկատենք, որ դրանում առանձնակի իրավական կարգավորման նյութ չեն դարձել երեխաների անձնական տվյալների պաշտպանության առանձնահատուկ նրբությունները: Բնորոշ է այն, որ Օրենքի միայն մեկ նորմ է նվիրված այդ խնդրի իրավական ասպեկտին. «Տվյալների սուբյեկտի անգործունակության կամ սահմանափակ գործունակության կամ մինչև 16 տարեկան անչափահաս լինելու դեպքում նրա անձնական տվյալները մշակելու համար համաձայնություն է տալիս տվյալների սուբյեկտի օրինական ներկայացուցիչը» (9-րդ հոդվածի 9-րդ մաս):

Արտաքուստ կարող է վերը նշված իրավական կարգավորումը բավարար համարվել, քանզի վճռորոշ նշանակություն է տրվում օրինական ներկայացուցչի համաձայնությանը, սակայն ընդհանուր առմամբ թերի օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև խոցելի իրավական մշակույթի համատեքստում այսպիսի դրույթները խիստ հազվադեպ են ընկալվում և դիտարկվում իբրև հուսալի իրավական երաշխիքներ:

Նախ անհրաժեշտ ենք համարում նկատել, որ Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասով ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ կարող են այլ օրենքներով սահմանվել անձնական տվյալներ մշակելու, հսկողություն իրականացնելու առանձնահատկություններ, գրեթե չի գործում, իսկ բացառությունները վերաբերում են սոսկ որոշ իրավիճակային լուծումների: Բնորոշ է այն, որ Օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասով[1] հետագայում ամրագրվեց, որ Օրենքով սահմանված անձնական տվյալների հրապարակում չի համարվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված հիմնադրամի կողմից անձնական տեղեկություններ հրապարակելը:

[1] Այս մասը լրացվել է ««Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (15.12.16 ՀՕ-255-Ն):

Շարունակելով մեր դատողությունների տրամաբանությունը՝ նկատենք, որ օրինական ներկայացուցչի համաձայնությունը վճռորոշ փաստարկ համարելն աղերսներ ունի նաև երեխայի իրավունքների սահմանադրական հիմքերի հետ: Ընդհանրապես, օրինական ներկայացուցիչների վարքագծով երեխաների իրավունքները սահմանափակելը կամ կանխորոշելը բնորոշ է հայրենի օրենսդրությանը, այն դեռևս դիտարկվում է հուսալի իրավական երաշխիք, մինչդեռ անտեսվում է, որ երեխաների սահմանադրական կարգավիճակը բնավ այլ ուղղվածություն ունի և ամբողջությամբ կախվածության մեջ չի դրվում օրինական ներկայացուցիչների համաձայնության առկայությունից: Համաձայնության մասին իրավաչափ է խոսել սոսկ այն դեպքում, երբ դա հիմնավորապես անհրաժեշտ է երեխայի շահերի առաջնահերթ պաշտպանության, պատշաճ դաստիարակության և նույնաբնույթ այլ արժեքների հոգածության տեսանկյունից, սակայն նույն այդ համաձայնության շրջանակի անհարկի ընդլայնումը կարող է հանգեցնել իրավունքի չարաշահմանը:

Ընդ որում՝ իրավունքի չարաշահման երևույթը, կարծում ենք, հաճախ թելադրված է ոչ միայն օրենսդրության բացերով, այլև ընտանիքների սոցիալական խոցելի վիճակով: Այսպես՝ վերջին շրջանում պարբերաբար հեռուստաալիքներով հեռարձակվում են կարիքավոր ընտանիքներին առևտրային կազմակերպությունների կողմից ցուցաբերվող բարեգործության դրվագներ: Ինքնին բարեգործության երևույթը սոսկ դրվատանքի է արժանի, սակայն մտահոգողն այդպիսի դեպքերում ցուցադրվող տեսարաններն են, որոնց պարագայում երեխայի անձնական տվյալների պաշտպանության մասին խոսելը պարզապես հիմնազուրկ է: Ընդ որում՝ բարեգործություն իրականացնող ընկերությունները ոչ միայն չեն խորշում բացահայտ յուրովի գովազդել իրենց ձեռնարկատիրությունն ու արտադրվող ապրանքը, այլև հարցազրույցի են հրավիրում անգամ դեռահաս երեխաներին: Այս տեսարանները կարող են որոշ դեպքերում որևէ սոցիալական բացասական հետևանք չառաջացնել, սակայն որևէ մեկը չի կարող ժխտել, որ դրանք հղի են ծայրահեղ նյութական ծանր իրավիճակում հայտնված երեխաների՝ առանց այդ էլ խոցելի հոգեբանական ներաշխարհին անկանխատեսելի վտանգավոր դրսևորումների անմիջական թիրախ դարձնելու վտանգով: Իսկ մամուլում բազմիցս են բերվում օրինակներ, որ այդպիսի նկարա-

հանված բարեգործություններից հետո երեխաներն իրենց միջավայրում, ցավոք, դառնում են ծաղրի առարկա, խոցվում է նրանց արժանապատվությունը, իսկ նրանց ելույթների համար համաձայնություն տված ծնողները, բնականաբար, չէին էլ կարող պատկերացնել ու կանխատեսել այդպիսի տհաճ միջադեպերի հնարավորությունը[1]:

Թերևս, հենց այս նկատառումով մենք վերևում անդրադարձանք նաև իրավական մշակույթի խնդրին, քանզի անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական գիտելիքներ ու փորձ չունեցող ծնողի համար համաձայնություն տալն այնքան էլ անմեղ վարքագիծ չէ, այն կարող է լրջագույնս վտանգել իր առանց այդ էլ խոցելի ընտանեկան կյանքի անդորրը:

Ինչևէ, Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Այս իրավունքի երաշխավորման հարցում, ինչպես արդեն նկատեցինք, հարկ է դրսևորել ծայրահեղ պատասխանատվություն, մասնավորապես, մի կողմից անհրաժեշտ է անվերապահորեն ելակետ չդիտարկել սոսկ օրինական ներկայացուցչի համաձայնության առկայությունը, մյուս կողմից՝ կարևորվում է մարդկանց իրավագիտակցության բարձրացման խնդրի լուծումը:

Ժամանակակից աշխարհում երեխաների անձնական տվյալների պաշտպանությունը խիստ արդիականություն է ձեռք բերել նաև համակարգչային ծրագրերի միջոցով նրանց կյանքի նկատմամբ ոտնձգություն նախաձեռնելու խիստ անհանգստացնող երևույթը կանխարգելելու տեսանկյունից: Արդեն իսկ մի շարք երկրներում արձանագրվել են դեպքեր, երբ երեխաները, գտնվելով այդպիսի ծրագրերի անմիջական ազդեցության տակ և գործելով դրանցում տրվող ցուցումներով, դիմել են ինքնասպանության[2]: Ընդ որում՝ այդ ծրագրերի ուղղակի նպատակը հենց երեխաներին ինքնասպանության հասցնելն է: Այս տագնապալից երևույթը, որը, թերևս, լայն տարածում է ստացել Ռուսաստանի Դաշնությունում,

[1] Տե՛ս, օրինակ, https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330:

[2] Տե՛ս, օրինակ, http://ren.tv/novosti/2017-02-22/smertelnyy-igry-pochemu-umirayut-deti-geymery:

վկայում է այն մասին, որ սոցցանցերում հարկ է իրականացնել գործուն վերահսկողություն: Նկատենք, որ խոսքը բնավ խոսքի ազատության սահմանափակման մասին չէ, քանի որ տվյալ դեպքում կարգավորման առարկան ոչ թե խոսքի կամ արտահայտվելու ազատությունն է, այլ հստակ հանցավոր նպատակներ հետապնդող և երեխաներին ինքնասպանության դրդող ծրագրեր կիրարկելը:

Երեխաների անձնական տվյալների պաշտպանության առանձնահատկությունների հաշվառմամբ ստորև ներկայացնում ենք մեր որոշ ամփոփիչ նկատառումները վերը նշված հարցադրումներին լուծումներ առաջադրելու կտրվածքով:

- Երեխաների իրավունքների առանցքը կազմում են նրանց լավագույն շահերը, դրանք ոչ միայն կանխորոշում են երեխաների իրավունքների շրջանակը, դրանց երաշխիքների ողջ համակարգը, այլև որոշակիորեն կանխատեսում են նրանց հետ փոխհարաբերվող այլ անձանց, այդ թվում՝ ծնողների և այլ օրինական ներկայացուցիչների իրավունքների սահմանափակման հիմքերը: Նույն կերպ երեխաների լավագույն շահերը կանխորոշում են հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց գործառույթների բնույթը և լիազորությունների շրջանակը՝ երեխաների կարգավիճակի հետ կապված հարաբերություններում: Ընդ որում՝ ասվածը վերաբերում է ոչ միայն գործադիր, այլև օրենսդիր իշխանության մարմիններին: Մասնավորապես, երեխաների իրավունքների, այդ թվում՝ նրանց անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող հարաբերությունները կարգավորելիս հարկ է ելակետ ընդունել ոչ միայն Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի աղբյուրներով ամրագրված սահմանափակումները, այլև երեխաների լավագույն շահերով ղեկավարվելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, հարկ է նկատել, որ երեխաների լավագույն շահերը՝ որպես զուտ իրավական չափանիշ, նախատեսում են առավել խիստ սահմանափակումներ, քան ամրագրված են վերը նշված իրավական ակտերով:

Ընդհանրապես, առաջադրելով «երեխայի լավագույն շահեր» եզրույթի տակ առանցքային նշանակություն ունեցող հիմնարար իրավունքներն ու ազատությունները ներառելու, ինչպես նաև այդ շահերն առաջնահերթ ուշադրության առարկա ճանաչելու դիրքորոշումը, գտնում ենք, որ երեխայի լավագույն շահերի առաջնահեր-

թության սահմանադրական գաղափարը նախ կոչված է որպես սկզբունք հանդիսանալու այն տեսանկյունից, որ ցանկացած իրավահարաբերությունում երեխայի իրավունքները պետք է գերակայեն այլոց իրավունքների նկատմամբ:

- Երեխաների անձնական տվյալների պաշտպանության և լավագույն շահերը հարգելու միջև հակասության դեպքում առավելապես նախապատվությունը պետք է տրվի լավագույն շահերին, իսկ այդ տվյալների շրջանառության առնչությամբ տրված համաձայնության գնահատումը հարկ է վերանայել: Անձնական տվյալների բացահայտման համար երեխայի օրինական ներկայացուցչի համաձայնությունը ստանալը հաճախ փոխկապակցվում է ժամանակային կորստի հետ, որի ընթացքում կարող է երեխայի առողջությանը պատճառվել անդառնալի վնաս: Բոլոր դեպքերում, անձնական տվյալները պետք է փոխանցվեն բացառապես այն անձանց, որոնք, ի պաշտոնե, պարտավոր են որոշակի անհետաձգելի աջակցություն ցուցաբերել երեխաներին: Օրինակ՝ հրատապ բուժօգնություն ցուցաբերող անձին հարկ է փոխանցել երեխայի առողջական վիճակի վերաբերյալ որևէ կառույցում սահմանված կարգով պահպանվող տվյալները: Նշված անձինք պարտավոր են այդ անձնական տվյալները զերծ պահել պատահական բացահայտումներից: Բացի դրանից՝ անհրաժեշտ է սահմանել այնպիսի ընթացակարգ, որի պարագայում հետագայում կբացառվի այդ տվյալների հասանելիությունը նաև նախկինում դրանց իրավաչափ կերպով տնօրինողների համար:

- Երեխաների անձնական տվյալներ մշակելու իրավասություն ունեցող պետական իրավասու մարմինները չպետք է բավարարվեն սոսկ մինչև 16 տարեկան երեխաների օրինական ներկայացուցիչների կողմից համաձայնության առկայության փաստով, նրանք պարտավոր են գնահատել նաև օրինական ներկայացուցիչների կողմից համաձայնություն տալու իրավաչափությունը և հարկ եղած դեպքում, անգամ օրինական ներկայացուցիչների կողմից տրված համաձայնության պարագայում, կանխել այնպիսի անձնական տվյալների բացահայտումը, որոնք կարող են իրենց գնահատմամբ վնաս պատճառել երեխայի շահերին: Խոսքը բնավ միայն այն դեպքերի մասին չէ, երբ օրինական ներկայացուցիչը միտումնավոր ցանկանում է տարածել երեխայի այնպիսի անձնական տվյալներ, որոնց

տարածումն առավելապես բխում է իր շահերից, այլ այնպիսի դեպքերի մասին է, երբ օրինական ներկայացուցիչը համաձայնություն տալիս չի կարողանում համարժեք գնահատել տվյալ իրավիճակը, հնարավոր բացասական հետևանքները և այլն:

Այսպիսով՝ օրինական ներկայացուցիչների համաձայնության իրավական արժեքի հիմքում սոսկ երեխաների և նրանց օրինական ներկայացուցիչների շահերի հակասությունը նկատի ունենալը բավարար չէ, քանի որ օրինական ներկայացուցիչների համաձայնությունը կարող է թելադրված լինել նաև այլ սուբյեկտիվ գործոններով, երբ ընդհանրապես բացակայում է շահերի հակասություն: Հավելենք, որ երեխայի անձնական տվյալները հրապարակելու պարագայում օրինական ներկայացուցչի համաձայնությունը չի կարող վճռորոշ համարվել իրավասու հանրային իշխանության մարմինների և դրանց պաշտոնյաների համար:

Կարծում ենք՝ համաձայնության առնչությամբ խնդիրը խելամտորեն է լուծված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում, որի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով շեշտադրումն արված է օբյեկտիվ գործոնի վրա, մասնավորապես, ըստ այդ իրավանորմի, արգելվում է նախաքննության տվյալների հրապարակումը, եթե դա կարող է «վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը»:

- Հարկ է առանց երեխայի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության դեպքում երեխայի լավագույն շահերի հաշվառմամբ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումներ իրականացնել միայն իրավասու մարմինների նախաձեռնությամբ: Մասնավորապես, իրավաչափ չեն այն դատողությունները, ըստ որոնց, օրինակ, կորած երեխայի որոնման գործընթացին աջակցելու նկատառումով կարելի է հրապարակել վերջինիս լուսանկարը և անձնական մյուս տվյալները: Կորած երեխայի տվյալների հրապարակումը չի կարող իրականացվել սիրողական մակարդակով, այն կարող է ակնկալվող արդյունավետություն ունենալ միայն իրավասու մարմինների պատասխանատու նախաձեռնության պարագայում: Չհամակարգված մասնավոր նախաձեռնությունները կարող են որոշ դեպքերում վնաս պատճառել և լրջագույնս խոչընդոտել օպերատիվ-հետախուզական գործունեությանը:

- Չենք կարող չանտեսել նաև այն, որ երեխաների անձնական տվյալների ապօրինի շրջանառությունը հաճախ տեղի է ունենում քրեական կամ վարչական պատասխանատվության համար նվազագույն տարիքի չհասած անչափահասների կողմից, նման երևույթը մեկ անգամ ևս հուշում է, որ անձնական տվյալների պաշտպանության հիմնական ուղղությունը ոչ այնքան այդպիսի տվյալների շրջանակի ընդլայնումն է, որքան դրանց պաշտպանության հուսալի, կանխարգելիչ գործիքների ներդրումը: Այս համատեքստում առաջարկվում է վերանայել անձնական տվյալների պաշտպանության սահմանները այն անձի պարագայում, որը նախաձեռնում է հաղորդակցություն այլոց հետ: Մասնավորապես, այնքան էլ միանշանակ չէ, որ, օրինակ, բջջային հեռախոսով զանգահարելու դեպքում չեն նշվում զանգահարողի սպառիչ տվյալները՝ անունը, ազգանունը (էլ չենք խոսում այլ տիպի հեռախոսակապի մասին): Տեխնիկապես սա արդեն միանշանակ հնարավոր է, իսկ իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ անհրաժեշտ: Բացի այդ, այս նորամուծության միջոցով հնարավոր կլինի մեղմել գաղտնի ձայնագրման հակումները:

- Հանրային շահերը ոչ մի պարագայում չեն կարող բավարար հիմք համարվել երեխաների իրավունքների սահմանափակման համար: Այս տեսանկյունից առաջարկվում է, օրինակ, վերանայել իրենց եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնող հանրային ծառայողների պարագայում նաև ընտանիքի անչափահաս անդամների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ներկայացնելը: Ի վերջո, խոսքը ոչ թե անչափահասներին սեփականության իրավունքով պատկանող եկամուտները կամ գույքը հայտարարագրերում չարտացոլելու, այլ անչափահասների անձի նույնականությունը բացահայտելուն առնչվող տվյալները չհրապարակելու մասին է:

- Հարկ է վերանայել երեխաների անձնական այնպիսի տվյալների մշակման պրակտիկան, որոնց բացահայտումը բացառապես վերապահված է անձի հայեցողությանը: Այսպես՝ անհրաժեշտ է բոլոր տեսակի հարցաթերթիկներից հանել երեխաների կրոնական համոզմունքների վերաբերյալ կետը (ի դեպ, սա վերաբերում է նաև չափահաս անձանց, որոնց պարագայում բացառություններ կարող են սահմանվել հանրային ծառայողների համար): Այս նկատառու-

մով անհիմն են այն մոտեցումները, որոնց համաձայն՝ երեխայի կրոնական պատկանելության վերաբերյալ տեղեկությունների մշակումը կարող է հիմնավորվել միայն դպրոցի բնույթով (կրոնական դպրոց) և վարչարարության նպատակով (օրինակ՝ կրոնական դասերին մասնակցությունը) և միայն այն չափով, որը խիստ անհրաժեշտ է հետապնդվող նպատակի համար[1]:

- Ուսումնական հաստատություններում առաջարկվում է հստակ սահմանել, որ դասարաններում, լսարաններում և նմանաբնույթ այլ տարածքներում կարող է կիրառվել միայն տեսահսկումը, իսկ ձայնահսկումը կարող է իրավաչափ համարվել բացառապես բաց դասերի և հրապարակային քննությունների ընթացքում:

- Հաշվի առնելով քննարկվող իրավունքի բազմաբնույթ հատկությունը, ազգային անվտանգության շահերը և ըստ այդմ էլ՝ իրավական կարգավորման բարդությունները, որոնք բացառում են ողջամիտ միասնական իրավական կարգավորումը, հարկ է օտարերկրացիների պարագայում անձնական տվյալների պաշտպանության իրավական հիմքերը կառուցել փոխադարձության սկզբունքով, ըստ որի՝ յուրաքանչյուր օտարերկրացու համար սահմանվում են նշված իրավունքի այնպիսի տարրեր, ինչպիսիք սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար այն պետության օրենսդրությամբ, որին պատկանում է տվյալ օտարերկրացին:

- Հարկ է այս ոլորտում վերահսկողություն իրականացնող իրավասու մարմիններին համարժեք իրավական կարգավիճակ վերապահել, ինչպես նաև զինել նշված ոլորտում խախտումների փաստերը լիարժեք բացահայտելուն պիտանի արդիական տեղեկատվական տեխնոլոգիաներով:

- Նպատակահարմար է մինչդատական վարույթ, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պաշտոնյաների համար մշակել անձնական տվյալների, ինչպես նաև երեխաների անձնական տվյալների պաշտպանության առանձնահատկությունների հաշվառմամբ գործելու մեթոդական ձեռնարկներ:

---

[1] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության «Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին» ուղեցույց, Երևան, 2017 թ., էջ 11:

Վերը նշված և նմանաբնույթ այլ առաջարկությունները կյանքի կոչելու նկատառումով նպատակահարմար է վերանայել նաև անձնական տվյալների պաշտպանության մասին միջազգային իրավական փաստաթղթերը՝ հաշվի առնելով արդի գիտատեխնիկական նվաճումների արդյունքում տեղի ունեցած զարգացումները և ձևավորված պահանջները:

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ЗАЩИТЫ ПЕРСОНАЛЬНЫХ ДАННЫХ РЕБЕНКА

Геворг Даниелян
Профессор кафедры конституционного права ЕГУ,
доктор юридических наук,
член Высшего Судебного Совета

Автор статьи рассматривает особенности защиты персональных данных детей, а также вопросы, касающиеся совершенствования их правовой и организационной базы. В статье аргументируется, что институт защиты персональных данных детей не может отождествляться и основываться на одинаковых правовых критериях с институтом персональных данных совершеннолетних. Параллельно выявлена вся система нарушений базовых прав детей, являющаяся следствием подобного неуместного отождествления, а также наиболее существенные причины таких нарушений.

В результате комплексного исследования автором сделан ряд значимых выводов, направленных как на развитие доктрины по научно-практическим вопросам права в данной области, так и на совершенствование правовой культуры и законодательства.

ACTUAL ISSUES OF PROTECTION OF CHILD'S PERSONAL DATA

Gevorg Danielyan
Professor at YSU Chair of Constitutional Law
Doctor of Legal Sciences,
Member of Supreme Judicial Council

In the article examines specific aspects of the protection of the child`s personal data, improving of the respective legal and organizational framework.

The article comes to the conclusion that the institute for the protection of children's personal data does not match with the institution of the protection of adult`s personal data, and those two institutes cannot be based on the same legal criteria. As a consequence of such erroneous approach the entire system of violations of the child`s basic rights is revealed and the most serious causes of the violations are identified.

As a result of a comprehensive study the author brings forward a number of significant conclusions, aimed at both the development of the legal doctrine on scientific and practical issues of the law in this sphere, and the improvement of the legal culture and legislation.

Բանալի բառեր – *երեխայի անձնական տվյալներ, անձնական տվյալների պաշտպանություն, պատիվ և արժանապատվություն, անձնական տվյալների մշակում, անձնական տվյալների հրապարակում, անձնական տվյալների պաշտպանության գործակալություն:*

Ключевые слова: *персональные данные ребенка, защита персональных данных, честь и достоинство, обработка персональных данных, разглашение персональных данных, агентство по защите персональных данных.*

Key words: *child's personal data, protection of personal data, honor and dignity, personal data processing, disclosure of personal data, personal data protection agency.*

ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԺԵՔԸ

Կարեն Հակոբյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ,
իրավ. գիտ. թեկնածու

Սույն հետազոտության առարկան 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ճանաչված մարդու հիմնարար իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի իրավաբանական արժեքի ճիշտ ընկալման համար անհրաժեշտ տեսական հիմք ձևավորելու արդիական խնդիրն է: Նշված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է պատշաճ վարչարարության իրավունքը դիտարկել իրավական երևույթների արժեքի վերաբերյալ փիլիսոփայական ուսմունքի՝ իրավաբանական արժեքաբանության կամ աքսիոլոգիայի (հին հունարեն՝ ἀξία «արժեք» և λόγος «խոսք, ուսմունք» բառերից) պարադիգմայով, որը, ինչպես հայտնի է, նվիրված է իրավունքի՝ որպես արժեքի (նպատակի, առաքելության, իմպերատիվ պահանջի և այլն) ընկալման և մեկնաբանման հիմնախնդիրների հետազոտմանը, ինչպես նաև պոզիտիվ իրավունքի, հանրային իշխանության և իրավունքի սուբյեկտների վարքագծի իրավական նշանակության վերաբերյալ համապատասխան արժեքային դատողությունների ու գնահատականների մշակմանը[1]:

Այսպես՝ իրավաբանական արժեքաբանության (աքսիոլոգիայի) տեսանկյունից պատշաճ վարչարարության իրավունքի իրավաբանական արժեքի վերաբերյալ համարժեք դատողություններ կատարելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզել այս հիմնարար իրավունքի դերը և նշանակությունը ֆիզիկական ու իրավաբանական անձանց ու հանրային իշխանության մարմինների միջև ծագող կառավարչական բնույթի հասարակական հարաբերություններում, որոնք հիմնված են իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքների վրա:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների

[1] Տե՛ս Философия права: учебник / В. С. Нерсесянц, 2-е изд., перераб. и доп., М., Норма: ИНФРА-М, 2011, էջեր 78-79:

կարևորագույն խնդիրներից մեկն իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը և մարդու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող սահմանադրական կառուցակարգերի կատարելագործումն էր: Նշված խնդրի լուծմանն ուղղված քայլերից մեկն այն է, որ 06.12.2015 թվականին կայացած հանրաքվեով փոփոխված Սահմանադրությամբ պատշաճ վարչարարության իրավունքը ճանաչվեց որպես մարդու ինքնուրույն սահմանադրական իրավունք, ինչը նորարարական ձեռքբերում է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի համար: Ամրագրված լինելով 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով՝ պատշաճ վարչարարության իրավունքը զսպում և սահմանափակում է հանրային իշխանությանը, որն ունի առավելագույն հնարավորություններ ապահովելու, միաժամանակ նաև խախտելու մարդու իրավունքները[1]:

Ինչպես գիտենք, իրավական պետության վերջնական նպատակը հանրային իշխանության և անհատների միջև փոխհարաբերությունների (փոխադարձ իրավունքների և պարտականությունների) իրավական ձևի պահանջների իրական, կայուն ու համընդհանուր կերպով պահպանումը, մարդու հիմնարար իրավունքների պատշաճ երաշխավորման և գործնական իրականացման ապահովումը և հանրային իշխանության կամայականության կանխումն է: Ակնհայտ է, որ իրավական պետության վերոգրյալ նպատակներին հասնելու համար, ի թիվս այլնի, անհրաժեշտ է նաև հանրային իշխանության արտաքին ներգործություն ունեցող գործադիր գործունեությունը կազմակերպել և իրականացնել իրավական պետության հիմնաքարային սկզբունքի՝ իրավունքի գերակայության պահանջներին համապատասխանող արդարացի և անաչառ վարչարարության միջոցով, որի առաջնային խնդիրը վարչական մարմինների արտաքին գործունեության կանոնակարգված մեթոդի և ընդհանուր կողմնորոշիչների սահմանումն է, ինչպես նաև հանրային իշխանության կառավարչական գործունեության ոլորտում իրավական հիմնարար արժեքների կյանքի կոչման համար անհրաժեշտ գործի-

[1] Տե՛ս Վ. Այվազյան, Մարդու իրավունքներ և ազատություններ, Ուս. ձեռնարկ, Եր., «Տիգրան Մեծ», 2007, էջ 314:

քակազմի ստեղծումը[1]: Այս տեսանկյունից իրավունքի գերակայության սկզբունքի կենսագործման նպատակը հանգում է մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության ապահովմանը՝ հանրային իշխանության մարմինների կողմից արդար և անաչառ որոշումներ կայացնելու, օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում գործելու և մարդու իրավունքները հարգելու սկզբունքների երաշխավորման միջոցով[2]:

Իրավունքի գերակայության սկզբունքի վրա հիմնված ժամանակակից իրավական համակարգերում վարչարարությունը՝ որպես ձևական-իրավաբանական ընթացակարգ, ընդհանուր առմամբ կառուցված է երկու հիմնարար սկզբունքների վրա. դրանք են արդյունավետությունը և անձանց իրավական պաշտպանությունը[3]:

Արդյունավետության սկզբունքի տեսանկյունից վարչական ընթացակարգերը դիտարկվում են որպես վարչական մարմինների գործունեության արդյունավետության, օրինականության ապահովման նախադրյալ: Նշված սկզբունքի համաձայն՝ ընթացակարգային հստակ կանոնների առկայությունը հնարավորություն է ընձեռում վարչական մարմիններին ճիշտ կիրառելու նյութական իրավունքի նորմերը և հասնելու նյութական իրավունքով սահմանված նպատակներին: Այս առումով վարչարարությունը հանդես է գալիս զուտ օժանդակ գործիքի կամ միջոցի դերում՝ վարչական մարմինների կողմից նյութական նորմերի ճիշտ կենսագործման և դրանցով սահմանված խնդիրներն արդյունավետ կերպով լուծելու համար:

Արդյունավետության սկզբունքից բացի՝ վարչական ընթացակարգերի գոյության հիմքում դրված է նաև մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքը, որը վարչարարությանը հաղորդում է մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի իրացման

---

[1] Տե՛ս Галлиган Д., Полянский В. В., Старилов Ю. Н., Административное право: история развития и основные современные концепции, М., Юристъ, 2002, էջեր 275-277:

[2] Տե՛ս Richard B. Stewart, "Administrative Law in the Twenty-First Century", Foundations of Administrative Law (ed: Peter H. Schuck), Second edition, Carolina Academic Press, 2012, էջեր 438-446:

[3] Տե՛ս D. J. Galligan, Due Process and Fair Procedures: A Study of Administrative Procedures, Oxford, Clarendon Press, 1996, էջ 128:

ու պաշտպանության ապահովման գործառույթ: Նշված սկզբունքի համաձայն՝ մարդու արժանապատվությունը, ազատությունը և հիմնարար իրավունքները որպես բարձրագույն արժեք ճանաչելը ենթադրում է, որ այդ արժեքների պաշտպանությունը հանրային իշխանության մարմինների կողմից կատարվող ոչ իրավաչափ ոտնձգություններից պետք է ապահովվի նաև վարչական ընթացակարգերի շնորհիվ: Վարչական մարմինների կողմից իրականացվող՝ որոշումների ընդունման գործընթացի շրջանակում նշված խնդիրը լուծվում է այդ գործընթացի համար վարչական իրավունքի նորմերով ընթացակարգային հատուկ ձև սահմանելու[1] և վարույթի մասնակիցներին ընթացակարգային իրավունքներ տրամադրելու ու դրանք պահպանելու միջոցով[2]: Այսինքն՝ անձանց իրավական պաշտպանության սկզբունքի տեսանկյունից վարչական ընթացակարգերի միջոցով հանրային իշխանությունն իրացնում է մարդու հիմնարար իրավունքները հարգելու և պաշտպանելու իր գործառույթը:

Հանրային վարչակազմի զանազան լիազորությունների իրականացման անհրաժեշտությունից բխող պահանջների և մասնավոր անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության միջև ողջամիտ հավասարակշռության հաստատումը ներկայումս սահմանադրական իրավունքի գիտության նրբերանգային հարցերից մեկն է: Զարգացած իրավական մշակույթ ունեցող պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում վարչական ընթացակարգերի վերաբերյալ իրավական կարգավորումների համար որպես ելակետ է ընդունվում առավելապես արդյունավետության

[1] Այս համատեքստում տեղին է հիշատակել գերմանացի իրավաբան Ռուդոլֆ ֆոն Հիերինգի այն հայտնի ասույթը, որի համաձայն՝ «ձևականությունը կամայականության երդվյալ թշնամին է և ազատության զույգ քույրը»: Տե՛ս Jürgen Schwarze, European Administrative Law, Sweet and Maxwell, London, 1992, էջ 1178:

[2] Տե՛ս Georg Nolte, "General Principles of German and European Administrative Law – A Comparison in Historical Perspective", The Modern Law Review, Volume 57, Issue 2, 1994, էջեր 191-212, ըստ http://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/j.1468-2230.1994.tb01932.x/epdf/ կայքէջի:

սկզբունքը, իսկ անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում շեշտը դրվում է հատկապես իրավական պաշտպանության սկզբունքի վրա: Օրինակ՝ Գերմանիայի իրավական դոկտրինայում գերակայում է այն դիրքորոշումը, որ վարչական ընթացակարգերի վերաբերյալ նորմերը կրում են օժանդակ բնույթ՝ ծառայելով նյութական իրավունքի նորմերի ճիշտ կիրառությանը: Իսկ Ֆրանսիայում գերիշխում է այն մոտեցումը, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ ընթացակարգային ձևն ընդամենը միջոց է՝ նյութական իրավունքի կենսագործման նպատակին հասնելու համար[1]: Մյուս կողմից՝ անգլոսաքսոնական իրավական համակարգը չի ճանաչում «պատշաճ վարչարարություն» հասկացությունը, սակայն այդպիսի իրավական համակարգ ունեցող երկրներում հանրային իշխանության մարմինների և մասնավոր անձանց միջև վարչական իրավունքի ոլորտում ծագող ընթացակարգային հարաբերությունների հիմքում դրված է պատշաճ վարչարարության հետ բազմաթիվ ընդհանուր գծեր ունեցող, այսպես կոչված, «պատշաճ ընթացակարգի» (“due process”) հայեցակարգը, որը կոչված է պաշտպանելու ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները և օրինական շահերը վարչական մարմինների հետ հարաբերություններում[2]:

Փաստորեն, վարչական ընթացակարգերի գոյության հիմքում դրված՝ արդյունավետության և իրավական պաշտպանության սկզբունքները, որոնք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ, գործնականում օժտված են մեկը մյուսին հակադրվելու բավականին մեծ ներուժով: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է պետության իրավական համակարգում հաստատել վերոգրյալ սկզբունքների այնպիսի ողջամիտ հավասարակշռություն, որը թույլ կտա մի կողմից երաշխավորել մարդու իրավունքների պաշտպանությունը, իսկ մյուս կողմից՝ ապահովել հանրային վարչակազմի պատշաճ կենսագործունեությունը: Վարչական ըն-

[1] Տե՛ս Hanns Peter Nehl, Principles of Administrative Procedure in EC Law, Oxford, Hart Publishing, 1999, էջ 24:

[2] Տե՛ս Juli Ponce Solé, “EU Law, Global Law and the Right to Good Administration”, Global Administrative Law and European Administrative Law. Relationships, Legal Issues and Comparison (eds. Edoardo Chiti and Bernardo Giorgio Mattarella), Springer, 2011, էջեր 133-145:

թացակարգերի՝ հանրային վարչակազմի գործունեության արդյունավետության և մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության ապահովման վերոգրյալ երկու գործառութային սկզբունքների միաժամանակյա գործողությունն ու դրանց փոխադարձ հավասարակշռությունը կազմում են վարչական ընթացակարգերին իրավունքի գերակայության սկզբունքի լույսի ներքո ներկայացվող իրավաբանական չափանիշների կամ, այլ կերպ, «պատշաճ վարչարարության» բուն էությունը (սուբստանցը):

Այսպիսով՝ ժամանակակից իրավական պետության պայմաններում վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը՝ վարչարարությունը, պետք է օժտված լինի այնպիսի որակական հատկանիշներով, որոնք կապահովեն մի կողմից այդ գործունեության արդյունավետությունը, իսկ մյուս կողմից՝ մասնավոր անձանց և հանրային իշխանության միջև ծագող հարաբերություններում ֆիզիկական և իրավաբանական անձանց հիմնական իրավունքների երաշխավորված իրացումը և պաշտպանությունը: Այդպիսի որակական հատկանիշներին համապատասխանող հանրային իշխանության արտաքին ներգործություն ունեցող կառավարչական գործունեությունն էլ հենց ընդունված է անվանել պատշաճ վարչարարություն: Պատշաճ վարչարարությունն ամենաընդհանուր բնորոշմամբ վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության, ինչպես նաև մի շարք այլ հիմնարար սկզբունքների ապահովումն է, որոնք բխում են իրավունքի գերակայության հայեցակարգից[1]:

Վերոգրյալ դատողությունները վկայում են այն մասին, որ պատշաճ վարչարարությունն իրավական համակարգում իրականացնում է երկակի գործառույթ՝ վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց հարաբերություններում վերջիններիս ընթացակարգային իրավունքների պաշտպանության երաշխավորում և վարչական մարմինների գործունեության արդյունավետության ապահովում: Նշված գործառույթների միջոցով պատշաճ վարչարարության իրավունքը հակակշռում է հանրային իշխա-

[1] Տե՛ս Jill Wakefield, The Right to Good Administration (European Monographs), Alphen aan den Rijn, Kluwer Law International, 2007, էջ 21:

նությանը, հատկապես՝ վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորությունների իրականացման դեպքում: Պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչները որոշակի իմաստով «կամուրջ» են վարչական մարմիններին վերապահված հանրային-իշխանական լիազորությունների արդյունավետ իրականացման և վարչական ընթացակարգերի շրջանակում մարդու իրավունքների պաշտպանության միջև: Պատշաճ վարչարարությունը ոչ միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց օժտում է մի շարք ընթացակարգային իրավունքներով, այլև հանրային իշխանության տարբեր մարմիններից պահանջում է իրենց գործունեության ընթացքում հաշվի առնել այդ իրավունքները: Այս իմաստով պատշաճ վարչարարության վերոգրյալ երկու գործառույթները գտնվում են փոխադարձ հավասարակշռության մեջ:

Փաստորեն, կարելի է եզրահանգել, որ պատշաճ վարչարարությունն ունի երկակի նպատակ, որը հանգում է վարչական մարմինների կողմից որոշումների կայացման արդյունավետ գործընթացի հաստատմանը և այդ գործընթացում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների նկատմամբ կատարվող ոտնձգությունների դեմ վերջիններիս պաշտպանության հնարավորության ընձեռմանը: Այսպիսով՝ պատշաճ վարչարարությունն օժտված է *«օբյեկտիվ»* և *«սուբյեկտիվ»* բնույթներով. *«օբյեկտիվ առումով»* պատշաճ վարչարարությունն ընդհանուր համակարգային սկզբունք է, որը միտված է վարչարարության արդյունավետության երաշխավորմանը, իսկ *«սուբյեկտիվ առումով»* այն մարդու հիմնարար իրավունք է, որն ուղղված է վարչարարության ընթացքում մասնավոր անձանց իրավական պաշտպանությանը՝ վերջիններիս տրամադրելով ընթացակարգային կարևորագույն երաշխիքներ[1]:

Պատշաճ վարչարարության սկզբունքի գործառութային այդպիսի երկատվածության պատճառով այս սկզբունքի վերաբերյալ

[1] Տե՛ս Herwig C. H., Hofmann and Bucura C. Mihaescu, "The Relation between the Charter's Fundamental Rights and the Unwritten General Principles of EU Law - Good Administration as the Test-Case", European Constitutional Law Review (9/1), 2013, էջեր 73-101, ըստ http://orbilu.uni.lu/bitstream/10993/20571/1/04.%20Hofmann-Mihaescu.pdf կայքէջի:

առաջացել են երկու գաղափարապես տարբերվող տեսություններ[1]: Դրանցից առաջինը կենտրոնանում է պատշաճ վարչարարության օբյեկտիվ առումի ուսումնասիրության վրա՝ այն դիտարկելով զուտ որպես վարչարարության որակն ու արդյունավետությունն ապահովող իրավական սկզբունք[2]: Իսկ պատշաճ վարչարարության վերաբերյալ մյուս տեսությունը պատշաճ վարչարարության ուսումնասիրության համար ելակետ է ընդունում այդ հասկացության սուբյեկտիվ առումը՝ դիտարկելով այն որպես մարդու հիմնարար իրավունք[3]:

Մինչդեռ խնդրո առարկա հիմնահարցի առավել խորը ուսումնասիրությունը թույլ է տալիս առաջ քաշել այն տեսակետը, որ պատշաճ վարչարարության օբյեկտիվ և սուբյեկտիվ առումները միևնույն հասկացության՝ միմյանց փոխադարձաբար լրացնող հատկանիշներ են. դրանք պայմանավորված են մեկը մյուսով և կախված են մեկը մյուսից: Այլ կերպ ասած՝ պատշաճ վարչարարության օբյեկտիվ և սուբյեկտիվ առումները փոխլրացնում են միմյանց և կազմում մեկ միասնական ամբողջություն, ինչը պատշաճ վարչարարությանը հաղորդում է ներքին հավասարակշռվածություն: Մի կողմից՝ վարչական մարմինների՝ պատշաճ վարչարարություն դրսևորելու պարտականությունը (պատշաճ վարչարարության օբյեկտիվ կողմը) բխում է պատշաճ վարչարարության սուբյեկտիվ կողմից, քանի որ այդ սուբյեկտիվ իրավունքին համապատասխանում է հանրային իշխանության մարմինների պարտականությունը՝ ապահովելու դրա իրացումը կամ ձեռնպահ մնալու այն խախտելուց: Մյուս կողմից՝ մարդու պատշաճ վարչարարութ-

---

[1] Տե՛ս Hanns Peter Nehl, "Good Administration as Procedural Right and/or General Principle?", Legal Challenges in EU Administrative Law (editors: H. C. H. Hofmann, A. H. Türk), Cheltenham, Edward Elgar Publishing, 2009, էջեր 322-351:

[2] Տե՛ս Juli Ponce Solé, "Good Administration and European Public Law: The Fight for Quality in the Field of Administrative Decisions", Revue Européenne de Droit Public (14), 2002, էջեր 1503-1544:

[3] Տե՛ս Anthony W. Bradley, "Administrative Justice: A Developing Human Right?", European Public Law (3), 1995, էջեր 347–369, ինչպես նաև Herwig C. H. Hofmann, "Good Administration in EU Law – A Fundamental Right?", Bulletin des Droits de l'Homme (13), 2007, էջեր 44-52:

յան սուբյեկտիվ իրավունքը կարող է բխել պատշաճ վարչարարության օբյեկտիվ կողմից, քանի որ այդ սուբյեկտիվ իրավունքը կարող է դիտարկվել նաև որպես վարչական մարմինների՝ արդյունավետ և որակյալ վարչարարություն իրականացնելու պարտականության արդյունք կամ հետևանք:

Այդպիսի հավասարակշռվածությունը ենթադրում է, որ մասնավոր անձանց ընթացակարգային իրավունքների երաշխավորված իրացումն ու պաշտպանությունը հանգեցնում են վարչարարության որակական հատկանիշների բարձրացմանը և հակառակը: Այս տեսանկյունից *«մարդու իրավունքների պաշտպանություն»* և *«հանրային վարչակազմի գործունեության արդյունավետության երաշխավորում»* արտահայտությունները ձեռք են բերում նույն իմաստը՝ դառնալով հոմանիշ հասկացություններ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ պատշաճ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող այնպիսի գործունեությունն է, որը համապատասխանում է իրավունքի գերակայության սկզբունքից բխող որակական հատկանիշներին և հնարավորություն է տալիս ապահովելու թե՛ վարչական մարմինների գործունեության արդյունավետությունը, թե՛ վարչական մարմինների հետ հանրային իրավահարաբերությունների մեջ մտած ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորված իրացումն ու պաշտպանությունը: Իսկ պատշաճ վարչարարության իրավունքը սահմանում է վարչարարությանը ներկայացվող որոշակի չափանիշներ, որակական հատկանիշներ ու ընթացակարգային երաշխիքներ՝ դրանք բարձրացնելով մարդու հիմնարար իրավունքի մակարդակի: Այդ երաշխիքներն ու կառուցակարգերը, մասնավորապես, հանգում են վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության, այդ գործերի քննության ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց լսելու, վերջիններիս վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու հնարավորություն ընձեռելու, ինչպես նաև միջամտող ազդեցություն ունեցող վարչական ակտերը հիմնավորելու պահանջներին: Փաստորեն, ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ վարչարարությանն առնչվող իրավունքների և ազատությունների իրաց-

ման և պաշտպանության համար անհրաժեշտ երաշխիքների և վարչարարության որակական հատկանիշներին ներկայացվող պահանջների ամբողջությունն էլ հենց կազմում է պատշաճ վարչարարության իրավունքը՝ որպես հավաքական իրավաբանական հասկացություն:

Ընդհանրացնելով պատշաճ վարչարարության իրավունքի էության վերաբերյալ սույն հետազոտությամբ կատարված վերլուծությունները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ պատշաճ վարչարարության իրավունքի արժեքն առաջին հերթին արտահայտվում է այն գործառութային նշանակությամբ, որով պատշաճ վարչարարությունն օժտված է ֆիզիկական ու իրավաբանական անձանց և հանրային իշխանության մարմինների միջև իրավական պետությունում ծագող կառավարչական բնույթի հասարակական հարաբերություններում: Այդ գործառութային նշանակությունը (կամ պատշաճ վարչարարության իրավունքի արժեքը) վարչարարության ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման ու պաշտպանության և վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեության արդյունավետության ապահովման գործառույթների միաժամանակյա ապահովումն ու դրանց միջև փոխադարձ հավասարակշռվածության հաստատումն է: Պատշաճ վարչարարության իրավունքը՝ որպես իրավական պետությունում վարչարարության կազմակերպման և իրականացման չափանիշ, կազմում է այն անհրաժեշտ ու բավարար պայմանների ամբողջությունը, որոնք ապահովում են գործադիր գործառույթներով օժտված հանրային իշխանության մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց հարաբերություններում վերջիններիս իրավունքների իրացման, պահպանության ու պաշտպանության արդյունավետ համակարգի գոյությունը:

Փաստորեն, իրավաբանական արժեքաբանության կամ աքսիոլոգիայի տեսանկյունից պատշաճ վարչարարության իրավունքի արժեքն այն է, որ այս համընդգրկուն իրավական ինստիտուտը բովանդակում է մի շարք սուբյեկտիվ իրավունքներ, իրավական երաշխիքներ ու սկզբունքներ և վարչարարությանը ներկայացվող որակական չափանիշներ, որոնք ուղղված են մի կողմից ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ վարչարարության հետ առնչվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավոր-

ված իրացմանն ու պաշտպանությանը, իսկ մյուս կողմից՝ վարչարարության արդյունավետության ապահովմանը: Իր այս յուրահատուկ էության շնորհիվ պատշաճ վարչարարության իրավունքը որակապես նոր մակարդակի է բարձրացնում վարչական մարմինների առջև իրավական պաշտպանության կառուցակարգը: Ընդ որում՝ պատշաճ վարչարարության իրավունքի արժեքն ընդգծվում է այն հանգամանքով, որ այս հիմնարար իրավունքի ճանաչման շնորհիվ վարչարարության ընթացակարգային կանոնները դուրս են գալիս նյութաիրավական կարգավորումներին «սպասարկողի», «օժանդակողի» դերից և վարչարարության արդյունքների իրավաչափության գնահատման հարցում ձեռք են բերում նույնքան էական ու կարևոր նշանակություն, որքան նյութական իրավունքի նորմերը:

ЦЕННОСТЬ ПРАВА НА ХОРОШУЮ АДМИНИСТРАЦИЮ

Карен Акопян
Ассистент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук

В статье рассматривается проблема ценности права на хорошую администрацию как конституционного права человека, с точки зрения юридической аксиологии. Автор подчеркивает, что ценность права на хорошую администрацию обусловлена функциональным значением этого фундаментального права в правовой системе государства. В частности, автор приходит к выводу, что функциональное значение права на хорошую администрацию, с одной стороны, заключается в одновременном обеспечении гарантированного осуществления и защиты прав и свобод человека в сфере администрирования и, с другой стороны, в эффективной деятельности внешнего воздействия административных органов, а также установления взаимного баланса между ними. В итоге автор приходит к выводу, что ценность права на хорошую администрацию выражается в том, что благодаря признанию этого основного права процессуальные нормы администрирования вышли из обслуживающей и вспомогательной роли и приобрели такое же существенное и важное значение для оценки правомерности результатов администрирования, какое имеют нормы материального права.

THE VALUE OF THE RIGHT TO GOOD ADMINISTRATION

Karen Hakobyan
Assistant at the YSU Chair of Constitutional Law,
Candidate of Legal Sciences

In this article the problem of the value of the right to good administration, as a constitutional human right, is analyzed from the point of view of legal axiology. The author emphasizes that the value of the right to good administration is determined by the functional significance of this fundamental right in the state's legal system. In particular, the author comes to the conclusion that the functional significance of the right to good administration is to simultaneously ensure, on the one hand, the guaranteed exercise and protection of human rights and freedoms in the field of administration and, on the other hand, the effective activity of external influence of administrative bodies, and to balance these two imperatives. Finally, the author comes to the conclusion that the value of the right to good administration is expressed in the fact that, due to the recognition of this fundamental right, the procedural administrative rules left the serving and auxiliary role and acquired the same essential and important significance for assessing the legality of the results of administrative procedures, as the norms of substantive law have.

Բանալի բառեր – *իրավաբանական արժեքաբանություն, իրավունքի արժեք, մարդու հիմնարար իրավունք, վարչարարություն, վարչական վարույթ, պատշաճ վարչարարություն, պատշաճ վարչարարության իրավունք, հանրային իշխանություն:*
Ключевые слова: *юридическая аксиология, ценность права, фундаментальное право человека, администрирование, административное производство, надлежащее администрирование, право на хорошую администрацию, публичная власть.*
Key words: *legal axiology, value of law, fundamental human right, administration, administrative proceedings, administrative procedures, good administration, the right to good administration, public authority.*

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԻՄՔ

Համլիկ Ենգոյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

«Գնումների մասին» 2016 թ. ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ գնումներին մասնակցելու իրավունք չունեն նաև այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նույն կետի 2-րդ պարբերությունը հստակ **սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**, դրանք են՝

ա. մասնակիցը ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը***, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. մասնակիցը որպես ընտրված մասնակից, հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո մասնակիցը հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքը քննող անձի վարույթում: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է **երկու տարի ժամկետով:**

Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն:

ՀՀ կառավարության 04.05.2017 թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Այսպիսով՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Եթե ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվում է եզրակացություն առ այն, որ մրցույթի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Սակայն ներկայումս պրակտիկայում ստեղծվել է մի իրավիճակ, երբ մասնակցի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա ժամկետանց պարտավորությունները դիտարկվում են ոչ միայն որպես հայտը մերժելու հիմք, այլ միաժամանակ նաև որպես մասնակցին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու հիմք:

Մասնավորապես, մասնակցին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց վարույթում նախաձեռնված վարույթներով ընդունված որոշումներով[1] մասնակիցներին վերագրվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանզի մասնակցի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա են ժամկետանց պարտավորություններ:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ մասնակցի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա ժամկետանց պարտավորությունները չեն կարող դիտարկվել որպես Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Մեր կարծիքով, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վե-

[1] Նշված որոշումներին կարելի է ծանոթանալ www.gnumner.am կայքէջի՝ «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումներ» բաժնում:

րահսկվող եկամուտների գծով առկա ժամկետանց պարտավորությունները **հիմք են հայտը մերժելու, այլ ոչ թե մասնակցին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար:**

Պետք է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է՝ ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, ***մասնակցի իրավունքն է***: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը՝ մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում: Մասնավորապես, գնման գործընթացի շրջանակում մասնակիցը, ստորագրելով համապատասխան հայտարարություն, ստանձնում է ընդամենը մեկ պարտավորություն, այն է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելուց հետո ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Հետևաբար, մեր կարծիքով, մասնակիցը կարող է ներառվել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում», եթե առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելուց հետո չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Նույնիսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգը գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի

պահանջներով, հարցում է կատարում ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ, և ի պատասխան վերոնշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ստացվում է համապատասխան եզրակացություն, համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, որի հետևանքով մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ապա վերոհիշյալը, մեր կարծիքով, մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք չէ, ուստի գտնում ենք, որ նման հիմքով մասնակիցներին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու վերաբերյալ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց որոշումները իրավաչափ չեն:

Հատկանշական է, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց վերոհիշյալ որոշումների հիմքում դրվում է ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017 թ. թիվ Պ-2 «Գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» պաշտոնական պարզաբանումների 2-րդ հարցի մասին տրված պարզաբանումն առ այն, որ ժամկետանց հարկային պարտավորությունը պետք է դիտարկել որպես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում:

Գտնում ենք, որ նման դիրքորոշումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված «գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման» պատասխանատվության հիմքի տարաձական մեկնաբանություն է, որի արդյունքում ոչ օրենսդրական ճանապարհով ծնվել է պատասխանատվության նոր, և համապատասխանաբար նաև «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նոր հիմք, ինչը իրավաչափ չէ և խախտում է մասնակիցների իրավունքները գնման գործընթացի շրջանակում:

Եվ երկրորդ, մեր կարծիքով, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պաշտոնական պարզաբանումը չի կարող պարտա-

դիր բնույթ կրել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց համար, քանզի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն **անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է**, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից:

Նույն հոդվածի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և ***պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:***

Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու իրավական հիմքում դրվում է ՀՀ ֆինանսների նախարարության «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017 թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայությունը «Գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում» որակելու և որպես հետևանք՝ մասնակցին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» երկու տարի ժամկետով ներառելու արդյունքում էական վնաս է հասցվում ընկերություններին, և թույլ տրվում ոչ իրավաչափորեն միջամտել վերջիններիս ազատ տնտեսական գործունեությանը, ինչը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածով:

Նշվածը իր հերթին հանգեցնում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ կետով ամրագրված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի խախտմանը, քանզի ժամկետանց

հարկային պարտավորության առկայության հետևանքով պետական գնման գործընթացներին մասնակցելու իավունքից զրկվում են բազմաթիվ ընկերություններ, և որպես հետևանք նվազում է նաև մրցակցությունը պետական գնումների ոլորտում:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ անթույլատրելի է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված «Գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման» պատասխանատվության հիմքի տարածական մեկնաբանությունը, որի արդյունքում ոչ օրենսդրական ճանապարհով ծնվում է պատասխանատվության նոր, և համապատասխանաբար նաև «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նոր հիմք, ինչի արդյունքում նվազում է պետական գնումների մասնակիցների թիվը, և որպես հետևանք նվազում է նաև մրցակցությունը

ПРОСРОЧЕННАЯ НАЛОГОВАЯ ЗАДОЛЖЕННОСТЬ КАК ОСНОВАНИЕ ДЛЯ ЛИШЕНИЯ КОМПАНИИ ПРАВА НА УЧАСТИЕ В ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПКАХ

Асмик Енгоян
Доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук

Данная статья посвящена изучению просроченной налоговой задолженности как основания для лишения компании права на участие в государственных закупках.

В статье делается вывод о том, что неправомерно рассматривать наличие просроченной налоговой задолженности в качестве нарушения обязательств, принятых в процессе государственных закупок, поскольку такое основание не закреплено Законом «О закупках». Следовательно, наличие просроченной налоговой задолженности не должно служить основанием для лишения компании права на участие в государственных закупках сроком на два года, поскольку дан-

ный подход может нанести значительный ущерб компаниям и позволить незаконно вмешиваться в свободную экономическую деятельность последних, закрепленной статьей 11 Конституции РА.

Данная практика, в свою очередь, приводит к нарушению принципа расширения круга участников в государственных закупках и поощрения конкуренции между ними, предусмотренного в пункте 1 статьи 3 Закона «О закупках», поскольку многие компании лишаются права участвовать в государственных закупках в результате просроченного налогового обязательства и, как следствие, уменьшается конкуренция в сфере государственных закупок.

OVERDUE TAX LIABILITIES AS A BASIS FOR DEPRIVING A COMPANY OF THE RIGHT TO PARTICIPATE IN PUBLIC PROCUREMENT

Hasmik Yengoyan

President of the Procurement Support Center,
Docent of the YSU Cairs 0f Civil Law,
Condidate of Legal Scences

This article is devoted to the study of overdue tax liabilities as a basis for depriving a company of the right to participate in public procurement.

The article concludes that it is illegal to consider the existence of overdue tax liabilities as a violation of the obligations undertaken in the procurement process, since such a basis is not fixed by the law “On Public Procurement”. And as a result, the presence of overdue liabilities should not be grounds for depriving a company of the right to participate in public procurement for a period of two years, since this approach can cause significant damage to companies and allow them to illegally interfere with the latter’s free economic activities, enshrined in Article 11 of the RA Constitution.

This practice, in turn, leads to a violation of the principle of expanding the range of participants in public procurement and encouraging competition between them, provided for in paragraph 1 of Article 3 of the Law “On Public Procurement”, since many companies

lose their right to participate in public procurement as a result of overdue tax liability and, as a result, reduced competition in public procurement.

Բանալի բառեր - *պետական գնումներ, պետական գնումների գործընթացին մասնակցելու իրավունք, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ:*
Ключевые слова: *государственные закупки, право на участие в государственных закупках, список участников, не имеющих право на участие в процессе государственных закупок.*
Keywords: *public procurement, eligibility for participation in public procurement, list of bidders ineligible to participate in the procurement process.*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Սայադ Բաղալյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ առաջին անգամ ամրագրվեց քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը: Այն ամրագրվեց որպես ընտրական իրավունք ունեցող որոշակի թվով քաղաքացիների իրավունք՝ նախաձեռնելու օրենսդրական և սահմանադրական փոփոխություններ: Մասնավորապես, Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք, իսկ Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների որոշակի թվին ընձեռում են Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու նախաձեռնության իրավունք: Սույն հոդվածում առավելապես կքննարկվեն քաղաքացիական օրենսդրական (և ոչ թե սահմանադրական) նախաձեռնության ինստիտուտի իրավական ամրագրման կատարելագործման հիմնախնդիրները:

Պետք է նշել, որ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտն աստիճանաբար լայն տարածում է ստանում աշխարհի շատ երկրներում: Ներկայումս այս ինստիտուտը գործում է այնպիսի երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Լիտվան, Լատվիան, Սլովենիան, Լեհաստանը, Ռումինիան, Պորտուգալիան, Իտալիան և այլն[1]: Լիսաբոնի պայմանագրով քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը որոշակի առանձնահատկություններով ներդրվեց

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 741:

նաև Եվրոպական միությունում: Այստեղ, սակայն, քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված նախագծի ճակատագիրը կախված է Եվրոպական հանձնաժողովից, որը կարող է հավանության արժանացնել այն կամ մերժել[1]:

Քիչ չեն նաև այն պետությունները, որտեղ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը թեև ամրագրված չէ համապետական մակարդակով, սակայն գործում է տեղական մակարդակով (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում)[2]:

Օրինաստեղծագործությանը քաղաքացիների մասնակցության խթանմանն ուղղված մյուս ինստիտուտները, ինչպիսիք են օրինագծերի հանրային քննարկումները, պատգամավորների հանդիպումներն ընտրողների հետ, չնայած քաղաքացիական նախաձեռնության հետ ունեցած նմանություններին, չեն կարող փոխարինել վերջինիս: Ճիշտ է, այս ինստիտուտները կարող են մեծապես նպաստել օրինագծերի սոցիալական արդյունավետության և հասարակական ընդունելության բարձրացմանը, սակայն, ի տարբերություն այս ինստիտուտների, քաղաքացիական նախաձեռնության դեպքում հասարակությունն ինքն է որոշում օրինագծի բովանդակությունը, ինչն ավելի լայն հնարավորություններ է ստեղծում դրանում հասարակական շահերի և դիրքորոշման արտացոլման համար: Այս համատեքստում, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի ներդրումն արդարացված էր և կարող է լրացուցիչ երաշխիք դառնալ ժողովրդաիշխանության հիմքերի ամրապնդման համար: «Եթե ներկայացուցչական համակարգի կայացման սկզբնական շրջանում խորհրդարանական ինստիտուտները ծառայում էին որպես ժողովրդավարության պարզեցման գործիք, ապա ներկայումս անմիջական ժո-

[1] Մանրամասն տե՛ս Հովսեփյան Հ., Օրենսդրական նախաձեռնության փուլը Եվրոպական միության օրենսդրական գործընթացում: Հանրային կառավարում, N 2/2009, Երևան, 2009, էջեր 123-124:

[2] Տե՛ս Сухорукова О.О., Особенности реализации законодательной инициативы в законодательном процессе РФ // Проблемы юридической науки в условиях современного социально-экономического развития России: Материалы межрегиональной научно-практической конференции студентов, молодых ученых, аспирантов, преподавателей, Ростов-на-Дону, РИНХ, 2010, էջ 111:

ղովրդաիշխանության ինստիտուտները կատարում են հակառակ դերը. անհրաժեշտ դեպքերում նրանք խոչընդոտ են հասարակությունից ներկայացուցչական ինստիտուտների անջատման համար»[1]:

Ներկայիս ընտրական համակարգերի մեծամասնության, այդ թվում՝ ՀՀ ընտրական համակարգի պայմաններում խորհրդարանում ներկայացված են լինում միայն ընտրական նվազագույն շեմը հաղթահարած քաղաքական ուժերը, իսկ ընտրողների այն մասը, որոնց կողմից քվեարկված քաղաքական ուժերը չեն հաղթահարում ընտրական նվազագույն շեմը, մինչև հաջորդ ընտրությունները զրկվում են ներկայացուցչական մարմնում իրենց պահանջմունքներով և հայացքներով հավուր պատշաճի ներկայացված լինելու հնարավորությունից: Օրինակ՝ ՀՀ-ում 2018 թվականի դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքներից պարզ է դառնում, որ ընտրական նվազագույն շեմի պատճառով «փոշիացել են» շուրջ 200,000 ընտրողների ձայներ: Նման պայմաններում քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը թույլ կտա հասարակության այդ շերտին, ինչպես նաև խորհրդարանում չներկայացված քաղաքական ուժերին հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով, որոնք կարտահայտեն հասարակությունում գոյություն ունեցող քաղաքական և գաղափարական հայացքների առավել ամբողջական պատկերը[2]:

Քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտն օրենսդիր մարմնում իրենց հուզող և օրենսդրական կարգավորում պահանջող հարցերը պարտադիր քննարկման առարկա դարձնելու հնարավորություն կստեղծի նաև այն քաղաքացիների համար, որոնք թեև քվեարկել են խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի օգտին, սակայն իրենց հետաքրքրող հարցերն ընտրված ներկայա-

[1] Տե՛ս Кривошеева Т.А., Народная инициатива как форма правотворчества: правовые проблемы законодательного закрепления // Российское законодательство в современных условиях. Материалы VI ежегодной Всероссийской научно-практической конференции, Брянск, Группа компаний "Десяточка", 2008, էջ 213:

[2] Տե՛ս Волкодаева Н.А., Народная законодательная инициатива Российской Федерации и необходимость ее правового регулирования // Проблемы права, Челябинск, 2010, № 3, էջ 42:

ցուցիչների մոտ այս կամ այն պատճառով մնում են անարձագանք: Ընդ որում, Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն, պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով: Նման պարագայում չի բացառվում տարբերությունը հասարակական պահանջմունքի և դրա՝ պատգամավորի կողմից ընկալման միջև: Քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը թույլ կտա մեղմել նաև այս հնարավոր տարբերությունը:

Քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի ներդրման դեպքում առաջանում են դրա հետ կապված մի շարք հիմնահարցեր, որոնցից առաջինը դրա իրականացման կարգն է: Քաղաքացիական նախաձեռնության իրականացման կարգի հետ կապված բարդությունն այս ինստիտուտի լայնորեն կիրառման հիմնական խոչընդոտներից է: Քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես գալու համար անհրաժեշտ ստորագրությունների ավանդական եղանակով հավաքումը, վավերականության ստուգումը և հաստատումը բավական աշխատատար և ծախսատար գործընթաց են: Մինչդեռ, մեր կարծիքով, այս ինստիտուտի կիրառումը կարելի է շատ ավելի պարզեցված և արդյունավետ կազմակերպել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկայիս պայմաններում՝ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի գործնական կիրառման հեռանկարներն առհասարակ քննարկելով էլեկտրոնային ժողովրդավարության զարգացման համատեքստում:

Վերջին տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը գրականության մեջ ակտիվացրել է քննարկումներն էլեկտրոնային ժողովրդավարության վերաբերյալ: Համաձայն էլեկտրոնային ժողովրդավարության վերաբերյալ ամենածայրահեղ մոտեցման՝ այն իրենից ներկայացնում է քաղաքացիների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ անմիջականորեն պետական որոշումների կայացում (օրենքների ընդունում, էլեկտրոնային հանրաքվեներ)[1]: Ըստ այս տեսության՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կօգնեն ներկայացուցչական ժողովրդահիշ-

[1] Տե՛ս Caldow J. E-Democracy, Putting down global roots. January, 2004, էջեր 1-2, URL: http://www-01.ibm.com/industries/government/ieg/pdf/e-democracy%20putting%20down%20roots.pdf:

խանությունից աստիճաբար անցում կատարելու ուղղակի ժողովրդաիշխանության, որի դեպքում քաղաքացիները կընտրեն ոչ թե քաղաքական գործիչների, այլ անմիջականորեն կմասնակցեն քաղաքականության իրականացմանը՝ որոշելով կոնկրետ հարցեր (օրինակ՝ հաստատել պետական բյուջեն, թե ոչ, նշանակել որևէ պաշտոնյայի, թե ոչ)։ Եվ դա կարելի է անել ուղղակիորեն համացանցի միջոցով և ոչ թե ընտրել անձանց, որոնք հայտնի չէ, թե ինչ որոշում կկայացնեն ապագայում։ Եթե ուսումնասիրում ենք ժողովրդավարության ակունքները և այն պատճառները, թե ինչու ծագեց ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը, ապա կարելի է ասել, որ այս տեսակետն ունի որոշակի հիմքեր։ Օրինակ՝ հին հունական Աթենքում ժողովրդաիշխանությունն ուղղակի էր. ազատ տղամարդիկ հավաքվում էին Ագորայում և անմիջականորեն ընդունում քաղաքական որոշումներ, ձևավորում այլ պետական մարմիններ։ Հին հունական քաղաք-պետություններում, որոնց բնակչությունը հաճախ չէր գերազանցում տասը հազարը, դա ֆիզիկապես հնարավոր էր։ Պետք է նշել, որ ի սկզբանե ժողովրդավարություն ասելով հասկացվում էր հենց անմիջական ժողովրդաիշխանությունը։ Պատահական չէ, որ ինքնին ժողովրդավարություն ասելով Ջ. Լոկը հասկանում էր այնպիսի կառավարման ձևը, երբ քաղաքացիներն ընդունում են օրենքներ և նշանակում է գործադիր իշխանության ղեկավարին, իսկ այն դեպքում, երբ ժողովուրդն իր օրենսդիր իշխանությունը փոխանցում էր իր ներկայացուցիչներին, այդպիսի կառավարումը Ջ. Լոկը համարում էր ոչ թե ժողովրդավարություն, այլ օլիգարխիա[1]։

Սակայն տարածքով և բնակչությամբ մեծ պետություններում անհնար էր այլևս առաջնորդվել միայն ուղղակի ժողովրդաիշխանության ինստիտուտներով։ Պատճառներից մեկը, թերևս, դա էր, որ ծագեցին ներկայացուցչական ժողովրդաիշխանության ինստիտուտները, երբ ողջ բնակչության կամահայտնությունն անհրաժեշտ է միայն որոշակի պարբերականությամբ, իսկ այդ ընթացքում որոշումներ կայացնում են քաղաքացիների կողմից ընտրված ներկայա-

[1] Տե՛ս Дж. Локк, Сочинения: Пер. Ю. В. Семенова, В 3 т. М., 1988, т. 3, Глава 10, О формах государства,
URL: http://www.inliberty.ru/library/classic/two_treatises#ref12:

ցուցիչները: Դրա հետ կապված՝ Ժ. Ժ. Ռուսսոն պնդում էր, որ ժողովրդավարությունն անհամատեղելի է ներկայացուցչական ինստիտուտների հետ, քանի որ ժողովրդի բարձրագույն իշխանությունն անօտարելի է և անփոխանցելի: Այդ պատճառով նա կարծում էր, որ ժողովրդավարությունը հնարավոր էր միայն փոքր մասշտաբների դեպքում[1]:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանում է այս հարցը, քանի որ միաժամանակ քվեարկությանը կարող են մասնակցել միլիոնավոր մարդիկ, առանց տարածքային սահմանափակումների: Խնդիրը միայն այն է, որ ընտրությունները ոչ միայն քվեարկության համար ներկայացուցիչներ ընտրելու գործընթաց են, այլև հանդես են գալիս որպես ձեռնհասության զտիչ: Մարդկանց ընտրողների և ընտրվածների բաժանելն անուղղակիորեն ծնում է արհեստավարժների խումբ, որոնք ունակ են ընդունելու ձեռնհաս քաղաքական որոշումներ:

Մեր կարծիքով, ներկայիս պայմաններում էլեկտրոնային ժողովրդավարությունը պետք է համարել ոչ թե քաղաքացիների կողմից ուղղակիորեն վերջնական որոշումների ընդունման, այլ որոշումների ընդունմանը քաղաքացիների մասնակցության բարձրացման միջոց՝ տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների օգտագործմամբ: Այլ կերպ ասած՝ քաղաքացին ընդունում է ոչ թե վերջնական որոշում, որի դեպքում ներկայացուցչական ինստիտուտների անհրաժեշտությունը վերանում է, այլ էլեկտրոնային գործիքներով օժանդակում է այդ ինստիտուտների կողմից որոշումների ընդունմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը թույլ է տալիս խնայել և՛ ժամանակը, և՛ նյութական միջոցները քաղաքացի-պետություն հարաբերություններում[2] և զգալիորեն խորացնել քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարական ինստիտուտների գործունեությանը, որի դրսևորումներից մեկն էլ կարող է քաղաքացիական նախաձեռնության համար անհրաժեշտ ձայների հավաքումն էլեկտրոնային եղանակով:

---

[1] Տե՛ս Ж.Ж. Руссо, Об Общественном договоре, или Принципы политического Права, Книга 2, Глава 1, URL: http://lib.ru/FILOSOF/RUSSO/prawo.txt:

[2] Մանրամասն տե՛ս Վահանյան Գ., Հարթենյան Մ., Իրավական տեղեկատվության ապահովումը Հայաստանում ինտերնետի միջոցով: «Օրենք և իրականություն», N 21-22, Երևան, 2003, էջ 21:

ՀՀ Սահմանադրությունն ընդամենը մի քանի համառոտ դրույթ է պարունակում քաղաքացիական նախաձեռնության իրականացման ընթացակարգերի մասին: Այդ դրույթներից մեկն էլ Սահմանադրության 204-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված այն նորմն է, ըստ որի՝ քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Այս ձևակերպումից կարելի է եզրահանգել, որ Սահմանադրությունը քաղաքացիական նախաձեռնության շրջանակում ստորագրությունների հավաքման հիմնական եղանակ է համարում ավանդական՝ թղթային եղանակը, սակայն Սահմանադրության այս նորմը չի բացառում նաև էլեկտրոնային եղանակով ստորագրությունների հավաքման հնարավորությունը: Ստորագրությունների հավաքման մանրամասն ընթացակարգը սահմանող «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի համաձայն՝ ստորագրությունների հավաքումն իրականացվում է ստորագրությունների հավաքման ձևաթերթիկների միջոցով՝ տեղում ստորագրելու կամ էլեկտրոնային եղանակով: Ընդ որում՝ տեղում ստորագրելու դեպքում ձևաթերթիկում լրացվում են ստորագրողի անձնագրային տվյալները, ձևաթերթիկը ստորագրվում և հանձնվում է ստորագրությունների հավաքումն իրականացնող անձին, իսկ էլեկտրոնային եղանակի դեպքում ձևաթերթիկը ստորագրվում է էլեկտրոնային նույնականացման եղանակով: Ըստ Օրենքի՝ տեղում ստորագրությունների հավաքում կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝

1) համայնքապետարաններում,

2) բազմաբնակավայր համայնքներում՝ նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների նստավայրերում,

3) Երևան քաղաքում՝ վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում,

4) մարզպետարաններում:

Տեղում ստորագրությունների հավաքումն իրականացնում է նախաձեռնող խմբի ներկայացուցիչը՝ համապատասխան հանրա-

յին ծառայողի պարտադիր մասնակցությամբ, ինչպես նաև իրականացնում են նոտարները՝ նոտարական գրասենյակներում:

Վերոշարադրյալի հետ կապված՝ հարկ ենք համարում անդրադառնալ երկու խնդրի:

Առաջին՝ կարծում ենք, որ Օրենքն անհարկի սահմանափակում է նախատեսել, թե որ տարածքներում կարող է իրականացվել ստորագրությունների հավաքումը, ինչպես նաև պարտադիր է համարել ստորագրությունների հավաքմանը համապատասխան հանրային ծառայողի ներկայությունը: Մեր կարծիքով, նման սահմանափակումները որևէ կերպ արդարացված չեն և մեծապես խոչընդոտելու են ՀՀ-ում այս ինստիտուտի հետագա կայացմանը: Ընդ որում՝ Օրենքի նախագծի սկզբնական տարբերակում ստորագրությունների հավաքման գործընթացը կարգավորող շատ ավելի ազատական և ճկուն դրույթներ էին նախատեսված, որոնց առկայության դեպքում շատ ավելի հավանական էր այս ինստիտուտի գործնական կիրառման դեպքեր ունենալը, քան Օրենքի ներկայիս խմբագրության դեպքում: Այսպես, Օրենքի նախագծի սկզբնական տարբերակի[1] համաձայն, ստորագրությունների հավաքագրումն իրականացվում էր ստորագրությունների հավաքագրման ձևաթերթիկների միջոցով՝ տեղում ստորագրելու կամ էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով: Այսինքն՝ այս դեպքում չէին սահմանվում քաղաքացիների կողմից նախաձեռնությանը միանալու կոնկրետ վայրեր, նոտարական կարգ կամ էլ որևէ հանրային ծառայողի ներկայություն, ինչն անխուսափելիորեն ազդելու է քաղաքացիների կամարտահայտման ազատ դրսևորման վրա:

Երկրորդ՝ Օրենքի ներկայիս խմբագրությունն էլեկտրոնային տարբերակով նախաձեռնությանը միանալու եղանակ է համարում բացառապես էլեկտրոնային ստորագրությունների միջոցով նույնականացումը: Ներկայումս ՀՀ բնակչության շատ փոքր մասն ունի նույնականացման քարտեր և էլեկտրոնային ստորագրություններ, հետևաբար շատ քիչ թվով քաղաքացիներ ունեն էլեկտրոնային եղանակով նախաձեռնությանը միանալու գործնական հնարավորություն: Այս դեպքում ևս շատ ավելի ճկուն էր Օրենքի նախագծի սկզբնական տարբերակի կարգավորումը, համաձայն որի՝ էլեկտրո-

[1] https://www.e-draft.am/projects/5/about

նային եղանակով նախաձեռնությանը միանալու համար քաղաքացին պարզապես ԿՀՀ-ի պաշտոնական կայքից ներբեռնում էր անհատական ձևաթերթիկ, անձամբ լրացնում այն (ձեռագիր), ստորագրում, լուսապատճենում և էլեկտրոնային եղանակով ուղարկում նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստին:

Քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի հետ կապված հաջորդ կարևոր հիմնախնդիրն է նման նախաձեռնությամբ հանդես գալու համար քաղաքացիների անհրաժեշտ նվազագույն թվի սահմանման հարցը: Համաշխարհային պրակտիկայում չկա միասնական մոտեցում այս հարցի վերաբերյալ: Ընդհանուր է միայն այն, որ պահանջվում են բացառապես ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ստորագրությունները, իսկ կոնկրետ թվի որոշման հարցում առկա է երկու մոտեցում՝ բացարձակ թվի նշում (Բելառուս՝ 50000 ընտրող[1], Մոնտենեգրո՝ 6000 ընտրող[2]) կամ ընտրողների ընդհանուր թվի որոշակի տոկոսի (5%՝ Կոստա Ռիկա[3], 2%՝ Դոմինիկյան Հանրապետություն[4]) կամ կոտորակի (1/6՝ Ավստրիա[5], 1/10՝ Լատվիա[6]) սահմանում:

Մեր կարծիքով, առավել համարժեք պատկեր ստանալու համար հիմնավորված է կոտորակային կամ տոկոսային մեթոդը, քան բացարձակ թվի նշումը: ՀՀ Սահմանադրությունը, սակայն, ամրագրել է բացարձակ թիվ՝ ընտրական իրավունք ունեցող 50,000 քաղաքացի, իսկ հարցը հանրաքվեի դնելու համար՝ ևս 300,000 քաղաքացի: Կարծում ենք, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այս թվերը համաչափ չեն ՀՀ բնակչության թվի հետ, և նման բարձր շեմի

---

[1] Բելառուսի Սահմանադրություն, հոդված 99: URL:
https://www.constituteproject.org/#/

[2] Մոնտենեգրոյի Սահմանադրություն, հոդված 93: URL:
https://www.constituteproject.org/#/

[3] Կոստա Ռիկայի Սահմանադրություն, հոդված 123: URL:
https://www.constituteproject.org/#/

[4] Դոմինիկյան Հանրապետության Սահմանադրություն, հոդված 97: URL:
https://www.constituteproject.org/#/

[5] Ավստրիայի Սահմանադրություն, հոդված 41: URL:
https://www.constituteproject.org/#/

[6] Լատվիայի Սահմանադրություն, հոդված 65: URL:
https://www.constituteproject.org/#/

սահմանումը գործնականում անիրագործելի է դարձնելու ՀՀ-ում քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի կայացումը: Նման շեմ՝ 50,000 քաղաքացի, սահմանված է, օրինակ, Իտալիայում, որի մշտական բնակչության թիվը շուրջ 60 միլիոն է՝ ի հակադրություն ՀՀ մշտական բնակչության թվին՝ շուրջ 3 միլիոն:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի ներդրումը Սահմանադրությամբ ամրագրված անմիջական ժողովրդաիշխանության մյուս ինստիտուտների հետ մեկտեղ լրացուցիչ միջոց կարող է դառնալ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդաիշխանության հիմքերի ամրապնդման համար: Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք ունեցող քաղաքացիների թվի չափազանց բարձր շեմը, ինչպես նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված ստորագրությունների հավաքման բարդացված ընթացակարգերն առայժմ բացառում են այս ինստիտուտի լայնորեն կիրառման և գործնական խնդիրների լուծման միջոց դառնալու հնարավորությունները՝ քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտին հաղորդելով զուտ ձևական բնույթ:

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ И КОНСТИТУЦИОННОГО ЗАКРЕПЛЕНИЯ ИНСТИТУТА ГРАЖДАНСКОЙ ИНИЦИАТИВЫ

Саяд Бадалян
Ассистент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук

В статье обсуждаются основополагающие вопросы института гражданской инициативы в рамках конституционных изменений, принятых референдумом 6-го декабря 2015 года.

В статье рассматриваются перспективы практического применения института гражданской инициативы, с целью более упрощенного и продуктивного применения данного института, обсуждаются в контексте развития электронной демократии.

Отмечается, что посредством внесения института гражданской инициативы, участие граждан в законотворческой деятельности может содействовать многостороннему отображению реальных потребностей общества и по возможности систематизировано сопоставить разнообразные интересы отдельных граждан.

Одновременно, отмечается, что установленный Конституцией РА чрезмерно высокий ценз относительно количества граждан, имеющих право выступать с гражданской инициативой, в том числе усложненный процесс сбора подписей, установленный конституционным законом РА «О референдуме», на данный момент исключают широкое применение и возможности превращения данного института в средство разрешения практических задач, придавая институту гражданской инициативы формальный характер.

THE LEGAL AND CONSTITUTIONAL ESTABLISHMENT OF THE INSTITUTE OF POPULAR INITIATIVE AND WAYS FOR ITS IMPROVEMENT

Sayad Badalyan
Assistent of the YSU Cairs 0f Civil Law,
Condidate of Legal Scences

The article discusses the key issues related to the legal and constitutional establishment of the institute of popular initiative of submitting draft laws in the light of the constitutional changes that were adapted through the referendum of December 6, 2015.

In order to enable and manage a more simplified application of this institute, the prospects of practical application of the institute of popular initiative are discussed in the general context of the development of electronic democracy.

The article underlines that engaging citizens in the making of laws through the implementation of the institute of popular initiative can greatly promote the process of reflecting the real needs of the society more comprehensively and the process of coordinating the diverse interests of individual citizens as systematically as possible.

Meanwhile, the article notes that the extremely high threshold of the number of citizens who are entitled to submit draft laws upon

popular initiative established under the RA Constitution, as well as the complex procedures of collecting signatures established under the RA Constitutional Law "On Referendum," are still excluding the chances of this institute to be applied more widely and to become a means of solution of practical issues, thus giving the institute of popular initiative more of a formal nature.

Բանալի բառեր – *օրենսդրական նախաձեռնություն, քաղաքացիական նախաձեռնություն, ժողովրդական նախաձեռնություն, անմիջական ժողովրդաիշխանություն, էլեկտրոնային ժողովրդավարություն, օրինաստեղծագործություն, հանրաքվե:*
Ключевые слова: *законодательная инициатива, гражданская инициатива, народная инициатива, прямая демократия, электронная демократия, законотворчество, референдум.*
Key words: *Legislative initiative, citizens' initiative, popular initiative, direct democracy, e-democracy, law-making process, referendum.*

ՀԱԿԱՄԱՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արսեն Հովհաննիսյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Գործարարական հարաբերություններում գործարքները, պայմանագրերը և այլ գործարար համաձայնություններն ունեն կարևոր նշանակություն, քանի որ ապահովում են այդ հարաբերությունների բնականոն ընթացքը, նպաստում են նոր գործարար կապերի հաստատմանը, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) փոխանցմանը:

Սակայն լինում են դեպքեր, երբ այդ համաձայնությունները, նպաստելով այն կնքող կողմերի տնտեսական շահերին, վնասում են այլ տնտեսվարող սուբյեկտներին կամ սպառողների շահերին: Նման համաձայնություններն իրենց բնույթով հակաիրավական են և ենթարկվում են խիստ կարգավորումների, ընդհուպ արգելում:

Տեսական գրականության մեջ և տարբեր երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ համաձայնություններն անվանվում են «հակամրցակցային համաձայնություններ»:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի[1] 5-րդ հոդվածի 1-ին մասը հակամրցակցային համաձայնություն է համարում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Փաստորեն, հակամրցակցային համաձայնությունները կարող են դրսևորվել ինչպես գրավոր գործարքների կամ այլ համաձայ-

[1] Այսուհետ՝ Օրենք, տե՛ս ՀՀՊՏ 2000.12.15/30(128):

նությունների, այնպես էլ համաձայնեցված գործողությունների միջոցով:

Նշվածը ենթադրում է, որ «համաձայնություն» եզրույթն Օրենքի իմաստով ունի ավելի լայն բովանդակություն ու ներառում, սակայն չի սահմանափակվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով[1] նախատեսված «գործարք» եզրույթով, քանի որ բոլոր գործարքները համաձայնություն են, սակայն ոչ բոլոր համաձայնություններն են գործարքներ:

Բայց հակամրցակցային համաձայնության ամենակարևոր հատկանիշը, որով էլ «համաձայնությունը» կարող է որակվել «հակամրցակցային», մրցակցությունը սահմանափակելը, կանխելը կամ արգելելն է կամ նման հնարավորություն ստեղծելը: Առանց այդ հատկանիշի տնտեսվարող սուբյեկտների համաձայնությունները հակամրցակցային համարվել չեն կարող:

Օրենքը հակամրցակցային համաձայնությունները բաժանում է երկու տեսակի՝ հորիզոնական և ուղղահայաց:

Ընդ որում՝ հակամրցակցային համաձայնությունների դասակարգումն իրականացվում է ըստ ապրանքային շուկաների սուբյեկտային կազմի (այդ համաձայնությունները կնքվում են կամ նույն ապրանքային շուկայում կամ տարբեր ապրանքային շուկաներում գործող սուբյեկտների միջև)[2]:

Հորիզոնական հակամրցակցային համաձայնությունները կնքվում են միևնույն ապրանքային շուկայում գործող և մրցակից հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների միջև[3]:

Ուղղահայաց համաձայնությունները կնքվում են մրցակից չհանդիսացող և տարբեր, սակայն միմյանց հետ փոխկապակցված շուկաներում գործող սուբյեկտների միջև (օրինակ՝ արտադրության և իրացման մակարդակներում)[4]:

Տնտեսագիտական գրականության մեջ հաճախ է շրջանառվում այն տեսակետը, որ հորիզոնական համաձայնություններն ավելի

---

[1] Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

[2] Տե՛ս **Ершова И.В.,** Предпринимательское право, М., 2006, էջ 238:

[3] Տե՛ս Конкурентное право РФ, под редакцией **Н.И. Клейн, Н.Е. Фонаревой,** М., էջեր 57-58:

[4] Տե՛ս **Баринова Н.А., Козлова М.Ю.,** Антимонопольное законодательство РФ, Волгоград, 2001, էջ 110:

վտանգավոր են, քան ուղղահայացները. դրանք հանգեցնում են սպառողների ընտրության հնարավորության սահմանափակման, գների բարձրացման և այլ անբարենպաստ հետևանքների[1]: Միաժամանակ շեշտվում է, որ ուղղահայաց համաձայնություններն այդպիսի վնաս մրցակցությանը չեն հասցնում: Սակայն դա միանշանակ չէ. պետք է հաշվի առնել այդ համաձայնությունների սուբյեկտային կազմը (եթե համաձայնության մասնակիցներն ունեն շուկայական իշխանություն, ապա նրանք կարող են էական ազդեցություն ունենալ տնտեսական հարաբերությունների վրա)[2]:

Ուղղահայաց համաձայնությունների նկատմամբ ավանդաբար դրսևորվում է «բանական մոտեցման կանոնը»[3], ինչը վկայում է այդ համաձայնությունների պակաս վտանգավորության մասին հորիզոնականների համեմատ[4]:

Հենց այս մոտեցումն էլ դրվել է շատ երկրների օրենսդրությամբ ուղղահայաց համաձայնությունները, որոշակի չափանիշներին համապատասխանելու դեպքում, թույլատրելու ընդհանուր տրամաբանության մեջ:

Այսպես, «Մրցակցության պաշտպանության մասին» Ռուսաստանի Դաշնության դաշնային օրենքի համաձայն թույլատրվում են այն տնտեսվարող սուբյեկտների ուղղահայաց համաձայնությունները, բացառությամբ ֆինանսական կազմակերպությունների միջև կնքված համաձայնությունների, որոնց բաժինն ուղղահայաց համաձայնության օբյեկտ համարվող ապրանքային շուկայում չի գերազանցում 20 տոկոսը[5]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 102:

[2] Տե՛ս **Тотьев К.Ю.,** Конкурентное право, Учебное пособие, Москва, Инфра-М, 2000, էջ 8:

[3] Տե՛ս **Баринов Н.А., Козлова М.Ю.,** նշված աշխատությունը, էջ 110:

[4] Հակամրցակցային համաձայնությունների դասակարգման մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Հովհաննիսյան, «Հակամրցակցային համաձայնությունների իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ», Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Հատոր 3, Եր., ԵՊՀ, 2013, էջեր 51-62:

[5] Տե՛ս Федеральный закон “О защите конкуренции” 26.07.2006, N135-ФЗ, հոդված 12:

Այս մոտեցումն ըստ էության համընկնում է Եվրոպական տնտեսական ընկերակցության հիմնադրման մասին 1957 թվականի մարտի 25-ին Հռոմում կնքված պայմանագրով նախատեսված «de minimis» սկզբունքին[1]:

Այս սկզբունքի էությունն այն է, որ այն համաձայնությունները, որոնց մասնակիցների՝ շուկայում ունեցած մասնաբաժինը փոքր է, չեն կարող էական վնաս պատճառել մրցակցությանը, թույլատրվում են[2]:

Գերմանական օրենսդրությունը թույլատրում է նույնիսկ հորիզոնական համաձայնությունները, եթե դրանք նպաստում են մրցակցության զարգացմանը, շուկայում բնական տնտեսական վիճակի ապահովմանը: Ռումինիայում եթե տնտեսվարող սուբյեկտներն ապացուցում են իրենց համաձայնությունների օգտակարությունը սպառողների և պետության տնտեսության համար, ապա ազատվում են պատասխանատվությունից[3]:

Այս վերջին մոդելը, ըստ էության, ԱՄՆ-ից փոխառնված այսպես կոչված բանականության կանոնն է՝ «the rule of reason»: Սրա հիմնական իմաստն այն է, որ եթե համաձայնության արդյունքում ստացված բարիքներն ավելի շատ են, քան առաջացած վնասները, ապա նման համաձայնությունները կարող են թույլատրվել համապատասխան լիազոր մարմնի որոշմամբ[4]:

Հայաստանի Հանրապետությունում ևս գործում են հակամրցակցային համաձայնության թույլատրման որոշակի չափանիշներ և ընթացակարգեր:

Ընդ որում՝ Օրենքը սահմանում է ինչպես «բացարձակ» թույլատրման մեխանիզմներ, այնպես էլ «հարաբերական»[5]:

---

[1] Տե՛ս https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=LEGISSUM:xy0023&from=EN:

[2] Տե՛ս **Н.И. Клейн, Н.Е. Фонарева,** նշված աշխատությունը, էջ 409:

[3] Տե՛ս **Баринов Н.А., Козлова М.Ю.,** նշված աշխատությունը,էջ 35:

[4] Տե՛ս Dominick T. Armentano, Antitrust: the Case of Repeal, Washington, D. C., 1999, էջ 82:

[5] Հակամրցակցային համաձայնությունների թույլատրման չափանիշների մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Թավադյան**, «Հակամրցակցային համաձայնությունների թույլատրելիության վերաբերյալ ԵՄ և ԱՄՆ իրավական համակարգերում ձևավորված որոշ չափանիշների կիրառելիության

Այսպես, Օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, հակամրցակցային չեն համարվում տնտեսվարող սուբյեկտների ուղղահայաց համաձայնությունները, եթե այդ համաձայնության մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը համապատասխան ապրանքային շուկայում չի գերազանցում 20 տոկոսը, ինչպես նաև անձանց խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված համաձայնությունները՝ որոշակի չափանիշների համապատասխանելու դեպքում:

Հարկ է նշել, որ այս կարգավորումները նախատեսվեցին 2018 թվականի մարտի 23-ին Օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում[1]:

Այսպիսով՝ Օրենքը սահմանել է, որ երկու դեպքում սուբյեկտների միջև կնքված համաձայնությունները չեն կարող համարվել հակամրցակցային, ընդ որում՝ դրանք հակամրցակցային չեն համարվում հենց օրենքի ուժով առանց լրացուցիչ իրավական ակտի ընդունման:

Բացի դրանից՝ Օրենքը նախատեսում է նաև «հարաբերական» թույլատրման կանոնը, որի դեպքում որպես հակամրցակցային որակման ենթակա ուղղահայաց համաձայնությունները Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից կարող են թույլատրվել, եթե բավարարում են հետևյալ պահանջները՝

- դրանցով տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ չեն սահմանվում այնպիսի սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ չեն այդ համաձայնությունների նպատակներն իրականացնելու համար և չեն ստեղծում համապատասխան ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակման, կանխման և (կամ) արգելման հնարավորություն,

---

նպատակահարմարությունը ՀՀ-ում», «Պետություն և իրավունք», թիվ 1(63), 2014 թ., էջեր 124-132:

[1] Մինչև փոփոխությունների իրականացումն Օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասն ուներ ավելի ընդգրկուն բովանդակություն, և, ըստ էության, հակամրցակցային համաձայնություն կարող էին չհամարվել անգամ հորիզոնական համաձայնություններ:

- եթե տնտեսվարող սուբյեկտներն ապացուցում են, որ նման համաձայնությունները նպաստում են կամ կարող են նպաստել՝

1) ապրանքների արտադրության (իրացման) կատարելագործմանը կամ տեխնիկական (տնտեսական) առաջընթացը խթանելուն կամ համաշխարհային ապրանքային շուկայում անդամ պետություններում արտադրված ապրանքների մրցունակության բարձրացմանը,

2) համապատասխան անձանց կողմից նման գործողությունների իրականացման արդյունքով ձեռք բերվող առավելությունների (օգուտների) համապատասխան մասի ստացմանը սպառողների կողմից[1]:

Փաստորեն Օրենքը նախատեսել է հակամրցակցային համարվող համաձայնությունը թույլատրելու հնարավորություն: Ընդ որում՝ պետք է նշել, որ այս կարգավորումները նախատեսվել են 2018 թվականի մարտի 23-ի փոփոխությունների արդյունքում և նպատակ են հետապնդել իրացնելու Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով[2] նախատեսված համապատասխան իրավակարգավորումները:

Մասնավորապես հիշյալ պայմանագրի 76-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում են տնտեսվարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) միջև «ուղղահայաց» համաձայնությունների կնքումը՝ բացառությամբ նույն պայմանագրի 19-րդ հավելվածով սահմանված թույլատրելիության չափանիշներին համապատասխան թույլատրելի համարվող «ուղղահայաց» համաձայնությունների:

Պայմանագրի 19-րդ հավելվածով նախատեսված բացառությունները հանգում են հետևյալին «ուղղահայաց» համաձայնությունները թույլատրվում են, եթե՝

1) նման համաձայնություններն առևտրային կոնցեսիայի պայմանագրեր [համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագրեր] են,

---

[1] Այս դրույթները Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 19-րդ հավելվածի 5-րդ կետի ուղղակի փոխառություն են:

[2] Այսուհետ նաև՝ Պայմանագիր: Տե՛ս ՀՀՊՏ 2015.01.21/3(1092):

2) նման համաձայնության մասնակից յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) բաժնեմասն «ուղղահայաց» համաձայնության առարկա հանդիսացող ապրանքային շուկայում չի գերազանցում 20 տոկոսը[1]:

Պետք է նշել, որ Օրենքի 5.1-ին հոդվածը, որը նախատեսում է հակամրցակցային համաձայնությունները թույլատրելու ընթացակարգը և հիմքերը, հակասում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասին և հակամրցակցային համաձայնությունների բուն էությանը:

Մասնավորապես, հիշյալ հոդվածում ուղղահայաց համաձայնությունները թույլատրելու պայմաններից մեկը համապատասխան ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակման, կանխման և (կամ) արգելման հնարավորություն չստեղծելն է:

Ինչպես արդեն նշվել է, համաձայնությունը հակամրցակցային որակելու ամենակարևոր հատկանիշը մրցակցության վրա բացասաբար ազդելու հնարավորությունն է, և եթե այդ հատկանիշը բացակայում է, ուրեմն համաձայնությունն էլ հակամրցակցային համարվել չի կարող:

Այսինքն՝ եթե ուղղահայաց համաձայնությունը մրցակցության սահմանափակման հնարավորություն չի ստեղծում, այն ոչ թե թույլատրվող հակամրցակցային համաձայնություն է, այլ հակամրցակցային չհամարվող համաձայնություն:

Բացի դրանից՝ պետք է նշել, որ Օրենքը շեղվել է Պայմանագրի բուն բովանդակությունից, քանի որ պՊայմանագրի 19-րդ հավելվածի համաձայն՝ թույլատրելի համաձայնություններ են համարվում այն համաձայնությունները, որոնք չեն հանգեցնում մրցակցության վերացման, այլ ոչ թե մրցակցության սահմանափակման: Այսինքն՝ թույլատրելիության չափանիշը մրցակցությունն ընդհանրապես չբացառելու հնարավորությունն է, այլ ոչ թե այն սահմանափակելը[2]: Այլ խոսքով՝ համաձայնությունը, եթե անգամ այն կսահմանափակի

[1] Ստացվում է, որ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով նախատեսված հակամրցակցային համարվող, սակայն թույլատրելի համաձայնությունն Օրենքով նախատեսվել է հակամրցակցային չհամարվող համաձայնությունների շարքում:

[2] Պայմանագրում հստակ տարանջատված են «մրցակցության սահմանափակում» և «մրցակցության վերացում» տերմիններն ու նույն իմաստով չեն օգտագործվում:

մրցակցությունը, թույլատրելի է, իսկ եթե կվերացնի ցանկացած մրցակցություն, ապա արգելվում է[1]:

Երկրորդ և առավել կարևոր խնդիրը, որը կապված է հակամրցակցային համաձայնությունները թույլատրելու հետ, դրա իրական իրավական հնարավորության առկայությունն է:

Օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ հակամրցակցային համաձայնությունների կնքումն արգելվում է, իսկ 5.1-ին հոդվածով նախատեսում է որպես հակամրցակցային համաձայնություն որակման ենթակա ուղղահայաց հակամրցակցային համաձայնությունները Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշմամբ թույլատրելու հնարավորություն:

Մինչև 2018 թվականի մարտի 23-ի փոփոխություններով խմբագրությամբ Օրենքը չէր նախատեսում հակամրցակցային համաձայնությունների թույլատրման մեխանիզմներ, այլ Օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասը, ինչպես հիմա, սակայն այլ խմբագրությամբ, սահմանում էր համաձայնությունը հակամրցակցային չհամարելու չափանիշները, ինչը չէր հակասում հակամրցակցային համաձայնություններ կնքելու արգելքին, իսկ հակամրցակցային համարվող համաձայնությունները թույլատրելու հիմքեր նախատեսված չէին:

Այնուամենայնիվ, եթե անգամ Օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի և 5.1-ին հոդվածի միջև առկա հակասությունը հնարավոր է հաղթահարել Օրենքի մեկնաբանման և «ընդհանուր կանոնից բացառություն սահմանելու» մեթոդը կիրառելով, ապա նույնը չի կարելի անել այն դեպքում, եթե հակամրցակցային համաձայնություն կնքելու արգելքը սահմանված է անմիջականորեն Սահմանադրությամբ:

2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության[2] 33.1-ին հոդվածը սահմանում էր, որ շուկայում մենաշնորհը կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են: Սահմանադրությունը չէր նախատեսում հակա-

[1] Մրցակցությունը կարող է վերացվել, օրինակ, այն դեպքում, երբ հակամրցակցային համաձայնության արդյունքում համաձայնությանը չմասնակցած շուկայում գործող մյուս բոլոր տնտեսվարող սուբյեկտները դուրս կմղվեն տվյալ շուկայից:

[2] Տե՛ս ՀՀՊՏ 2005.12.05/ հատուկ թողարկում, հոդ. 1426:

մրցակցային համաձայնությունների արգելման վերաբերյալ դրույթ՝ դա թողնելով Օրենքի կարգավորմանը:

Իրավիճակը, սակայն, փոխվեց 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության[1] ընդունմամբ:

Մասնավորապես, Սահմանադրության 59-րդ հոդվածը սահմանում է, որ շուկայում մենաշնորհը կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Այսինքն՝ հակամրցակցային համաձայնություններ կնքելու արգելքն այլևս ամրագրված է Սահմանադրությամբ, ընդ որում՝ առանց Օրենքով բացառություններ սահմանելու հնարավորության:

Նշվածը վկայում է այն մասին, որ հակամրցակցային որակված կամ որակման ենթակա համաձայնությունները Սահմանադրության 5-րդ և 59-րդ հոդվածների ուժով արգելվում են և որևէ չափանիշի առկայության դեպքում չեն կարող թույլատրվել:

Եթե զուգահեռներ անցկացնեն ԵԱՏՄ անդամ այլ երկրների հետ, ապա, օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը հակամրցակցային համաձայնությունների կնքման վերաբերյալ ուղղակի արգելք չի նախատեսում[2], ինչի արդյունքում «Մրցակցության պաշտպանության մասին» ՌԴ օրենքով համաձայնությունների թույլատրման Պայմանագրով նախատեսված դրույթների տեղայնացումը խնդիրներ չի հարուցում:

Բելառուսի Սահմանադրության մեջ ընդհանրապես մրցակցության մասին դրույթներ չկան[3], նմանապես Ղազախստանի Սահմանադրության 26-րդ հոդվածն արգելում է միայն անբարեխիղճ մրցակցությունը[4]:

---

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/ հատուկ թողարկում, հոդ. 1118:

[2] ՌԴ Սահմանադրության 34-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ արգելվում է տնտեսական գործունեությունը, որն ուղղված է մոնոպոլիզացմանը և անբարեխիղճ մրցակցությանը: Տե՛ս http://www.constitution.ru/10003000/10003000-4.htm

[3] Տե՛ս http://pravo.by/pravovaya-informatsiya/normativnye-dokumenty/konstitutsiya-respubliki-belarus/:

[4] Տե՛ս http://www.constitution.kz/razdel2/:

Ստացվում է, որ Պայմանագրով նախատեսված համաձայնությունների թույլատրման կանոնների նման ձևով տեղայնացումը պարունակում է Սահմանադրությամբ ամրագրված իմպերատիվ արգելքին հակասելու հատկանիշներ, ինչի արդյունքում կարող են առաջանալ գործնական բազմաթիվ խնդիրներ, այդ թվում՝ ի վնաս տնտեսվարող սուբյեկտների:

Պայմանագրի համապատասխան դրույթների մանրամասն ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ուղղահայաց և այլ համաձայնությունները թույլատրելու կոնկրետ եղանակը թողնվել է ներպետական իրավունքի կարգավորմանը:

Այսպես՝ Պայմանագրի 76-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ տնտեսվարող սուբյեկտների միջև արգելվում են այլ համաձայնությունները՝ բացառությամբ Պայմանագրի 19-րդ հավելվածով սահմանված թույլատրելիության չափանիշներին համապատասխան թույլատրելի համարվող «ուղղահայաց» համաձայնությունների, եթե սահմանված է, որ այդպիսի համաձայնությունները հանգեցնում կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը:

«Համաձայնություն» և «ուղղահայաց համաձայնություն» տերմինները բացահայտված են Պայմանագրի 19-րդ հավելվածում:

Մասնավորապես, «համաձայնություն»-ը գրավոր պայմանավորվածությունն է՝ ամրագրված փաստաթղթով կամ մի քանի փաստաթղթերով, ինչպես նաև բանավոր պայմանավորվածություն, իսկ «ուղղահայաց համաձայնություն»-ը համաձայնություն է տնտեսվարող սուբյեկտների միջև, որոնցից մեկը ձեռք է բերում ապրանքը կամ դրա հավանական ձեռքբերողն է, իսկ մյուսը մատակարարում է ապրանքը կամ դրա հավանական վաճառողն է:

Փաստորեն, ստացվում է, որ Պայմանագրի իմաստով «ուղղահայաց համաձայնություն» և «համաձայնություն» տերմինները չեն օգտագործում դրանց հակամրցակցային բովանդակությամբ, ընդհակառակը՝ դրանք ձեռք են բերում նշված բովանդակությունը միայն սահմանված պայմանների առկայության դեպքում:

Պայմանագրի 19-րդ հավելվածի 5-րդ կետը սահմանում է, որ մրցակցության սահմանափակման հանգեցնող ուղղահայաց և այլ համաձայնությունները կարող են թույլատրելի ճանաչվել, եթե դրանցով տնտեսվարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի)

նկատմամբ չեն սահմանվում այնպիսի սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ չեն այդ համաձայնությունների նպատակներն իրականացնելու համար և չեն ստեղծում համապատասխան ապրանքային շուկայում մրցակցության վերացման հնարավորություն, և եթե տնտեսվարող սուբյեկտները (շուկայում գործող սուբյեկտները) ապացուցում են, որ նման համաձայնությունները նպաստում են կամ կարող են նպաստել՝

1) ապրանքների արտադրության (իրացման) կատարելագործմանը կամ տեխնիկական (տնտեսական) առաջընթացը խթանելուն կամ համաշխարհային ապրանքային շուկայում անդամ պետություններում արտադրված ապրանքների մրցունակության բարձրացմանը,

2) համապատասխան անձանց կողմից նման գործողությունների իրականացման արդյունքում ձեռք բերվող առավելությունների (օգուտների) համապատասխան մասի ստացման սպառողների կողմից։

Նշված դրույթի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ համաձայնությունները թույլատրելի համարելու կարգը և եղանակները թողնվել են ներպետական իրավունքի կարգավորմանը։

Գտնում ենք, որ Պայմանագրով նախատեսված «թույլատրվում է» եզրույթը պետք է լայն մեկնաբանել՝ դրա մեջ ներառելով թույլատրման այնպիսի եղանակ, ինչպիսին այդ համաձայնություններն ընդհանրապես հակամրցակցային չհամարելն է։

Նման մոտեցումը որդեգրվել է նաև օրենսդրի կողմից, քանի որ նույն 19-րդ հավելվածի 6-րդ կետով սահմանված թույլատրելի համարվող ուղղահայաց համաձայնություններն Օրենքով նախատեսվել են հակամրցակցային չհամարվող համաձայնությունների շարքում։

Բացի դրանից՝ այդ մասին է վկայում ինքնին այն հանգամանքը, որ համաձայնությունները թույլատրելու Պայմանագրով նախատեսված չափանիշներից է մրցակցության վերացման հնարավորության բացակայությունը։

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները՝

- «համաձայնությունները» հակամրցակցային որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի այդ համաձայնությունները սահմա-

նափակեն, կանխեն կամ արգելեն մրցակցությունը կամ ստեղծեն նման հնարավորություն,

- հակամրցակցային համաձայնություններ կնքելու սահմանադրական բացարձակ արգելքի պայմաններում Օրենքով չի կարող նախատեսվել հակամրցակցային որակվող համաձայնությունները Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից թույլատրելու հնարավորություն,
- Եվրասիական տնտեսական միության պայմանագրով նախատեսված «համաձայնություն» և «ուղղահայաց համաձայնություն» եզրույթներն ի սկզբանե չունեն հակամրցակցային բովանդակություն,
- նշված համաձայնությունների՝ Եվրասիական տնտեսական միության պայմանագրով սահմանված թույլատրելիությունը ներառում է նաև ներպետական իրավունքով այդ համաձայնությունները հակամրցակցային չհամարելու հնարավորությունը[1]:

Նշված եզրահանգումների արդյունքում, հաշվի առնելով հակամրցակցային համաձայնություններ կնքելու սահմանադրական արգելքը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության պայմանագրով սահմանված կարգավորումների վերաբերյալ կատարված մեկնաբանությունները, առաջարկում ենք Օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված հակամրցակցային որակվող համաձայնությունները նախատեսել հակամրցակցային չհամարվող համաձայնությունների շարքում[2]:

---

[1] Օրենքի՝ մինչև 2018 թվականի փոփոխություններով 5-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հակամրցակցային չհամարվող համաձայնություններն իրենց բովանդակությամբ համընկնում են Պայմանագրով և Օրենքով սահմանված թույլատրելի համարվող հակամրցակցային համաձայնություններին, սակայն ունեին ավելի լայն բովանդակություն: Այսպես՝ հիշյալ խմբագրությամբ համամրցակցային չէին համարվում տնտեսվարող սուբյեկտների այն համաձայնությունները, որոնք ուղղված են նրանց մրցունակության ապահովմանը կամ բարձրացմանը, տեխնիկական կամ տնտեսական առաջընթացին, արտադրության խթանմանը, ապրանքների կատարելագործմանը, ապրանքների արտահանման խթանմանը, նպաստում են սպառողների շահերին:

[2] Սույն աշխատանքի շրջանակում չենք անդրադառնում համաձայնությունները թույլատրելի համարելու հիմքերի իրավաչափությանը, քանի որ սույն

ПРОБЛЕМА ЗАПРЕТА АНТИКОНКУРЕНТНЫХ СОГЛАШЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Арсен Оганнисян
Ассистент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук

Данная статья посвящена проблемам запрета антиконкурентных соглашений по Законодательству РА. В работе были проанализированы как вопросы запрета антиконкурентных соглашений, так и механизмы разрешения, порядка и оснований рассмотрения подобных соглашений в качестве не антиконкурентных, а также разумность регулирования рассмотрения соглашений классифицированных в качестве антиконкурентных и их соответствие положениям Конституции РА и Договора о Евразийском экономическом союзе.

По результатам проведенного исследования нами предложены способы разрешения соглашений, квалифицированных в качестве антиконкурентных и приведенных в соответствие с определенными критериями, отнесения к группе соглашений, не являющихся антиконкурентными, поскольку Конституция РА запрещает заключение антиконкурентных соглашений, без возможности определения исключений законом.

PROBLEM OF PROHIBITION OF ANTI-COMPE\TITIVE AGREEMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

Arsen Hovhannisyan
Assistant of Chair of Civil Law of YSU
Candidate of Legal Sciences

This article is devoted to the problems of prohibiting anti-competitive agreements on RA legislation. The article discusses the issues

---

աշխատանքի հիմնական նպատակը հակամրցակցային համաձայնությունների արգելման իրավական խնդիրների քննարկումն է, բացի դրանից՝ դրանք առանձին ուսումնասիրության առարկա են:

of prohibition of anticompetitive agreements, as well as the mechanisms for permission of such agreements. Also, it discusses the order and grounds for considering such agreements as not anticompetitive, as well as the rationality of rules, which allow the agreements classified as anticompetitive and their compliance with the provisions of the RA Constitution and the Treaty on the Eurasian Economic Union.

Based on the results of the study, the article suggested that the authorized agreements qualified as anti-competitive, should be referred to a group of agreements that are not anti-competitive, since the RA Constitution prohibits the conclusion of anticompetitive agreements, without the possibility of determining exceptions by law.

Բանալի բառեր - *համաձայնություն, հակամրցակցային համաձայնություն, ուղղահայաց համաձայնություն, արգելք, Սահմանադրություն:*

Ключевые слова: *соглашение, антиконкурентное соглашение, вертикальное соглашение, запрет, Конституция.*

Key words: *agreements, anti-competitive agreements, vertical agreements, prohibition, Constitution.*

ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արմենուհի Չիֆլիկյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի[1] 1087.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Դեռևս հռոմեական իրավունքում XII աղյուսակները նախատեսում էին «iniuria» անվանումը կրող իրավախախտման համար պատասխանատվություն: «Iniuria» էր համարվում ցանկացած տեսակի անձնական վիրավորանքը[2]:

Մինչև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2010 թվականի մայիսի 18-ի փոփոխությունների և լրացումների կատարումը վիրավորանքը համարվում էր քրեորեն պատժելի արարք: Այն նախատեսված էր ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածով՝ որպես ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը:

Ինչպես կարելի է նկատել, նախկին քրեաիրավական և ներկայիս քաղաքացիաիրավական վիրավորանքի միջև առկա է էական տարբերություն, այն է՝ անպարկեշտ ձևը, որը բավական հայեցողական էր, և որի տակ իրավաբանական գրականության մեջ հասկանում էին հասարակությունում ընդունված վարքագծի կանոններին կտրուկ հակասող[3], համամարդկային բարոյականության պահանջներին դեմ գնացող ձևը[4]: Ակներև է, որ «արատավորելու նպատակով

---

[1] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (ՀՀՊՏ 1998.08.10/17(50)) ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին:

[2] Տե՛ս Угурчиева Х.О., «К вопросу о нравственности в римском праве» // «Актуальные проблемы экономики и права», N2, Татарский центр образования Таглимат, Казань, 2011, էջ 161:

[3] Տե՛ս Марогулова И.Л., «Защита чести и достоинства личности», Правовое просвещение, М., 1998, էջ 71:

[4] Տե՛ս Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., Խաչիկյան Հ. և ուրիշներ, «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք», Հատուկ մաս, 3-րդ հրատարա-

կատարված հրապարակային արտահայտությունը» և «անպարկեշտ ձևով ստորացնելը» համարժեք արարքներ չեն[1]:

Կարծում ենք, որ դրական պետք է գնահատել այն հանգամանքը, որ քաղաքացիաիրավական իմաստով վիրավորանքի համար «անպարկեշտ ձև»-ը որպես դրա պարտադիր հատկանիշ չի սահմանվել, քանի որ այդ դեպքում անհարկի կնեղացվեր «վիրավորանք» հասկացությունը:

Ի տարբերություն զրպարտության՝ այն չի համարվում փաստացի տվյալների տարածում: Այսպես՝ զրպարտությունը, որպես կանոն, մատնանշում է գործողություն, իսկ վիրավորանքը՝ հատկանիշ, պիտակ: Օրինակ՝ եթե որևէ մեկը հայտարարում է, որ մեկ այլ անձ գողացել է որևէ իր, ապա դա զրպարտող բնույթի հայտարարություն է, իսկ եթե հայտարարում է, որ տվյալ անձը գող է, ապա այդպիսի հայտարարությունն իր բնույթով վիրավորող է[2]:

Ինչպես բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 2-րդ մասի ձևակերպումից, վիրավորանքը կարող է կատարվել տարատեսակ ձևերով, քանի որ նշված հոդվածում վիրավորանքի կատարման միջոցների ցանկն օրինակելի է: Ուստի վիրավորանքը կարող է կատարվել նաև որոշակի գործողությունների միջոցով, օրինակ՝ անձի երեսին թքելով, հագուստը ցեխոտելով[3], իսկ ինչպես նշում է Ս. Նիկուլինը, վիրավորանք է նաև հագուստի պատռումը մարմնի ինտիմ մասերից[4]: Մենք համամիտ ենք Ի. Մարոգու-

---

կություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2007, էջ 230:

[1] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., «Անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի քաղաքացիաիրավական պաշտպանությունը», //«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 138.3, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2012, էջ 5:

[2] Տե՛ս Ղազարյան Ա., Զեյնալյան Ա., «Զրպարտություն և վիրավորանք», ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, Երևան, 2015, էջ 45:

[3] Տե՛ս Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., Խաչիկյան Հ. և ուրիշներ, նշված աշխատությունը, էջ 230:

[4] Տե՛ս Радченко В.И., «Комментарий к Уголовному кодексу Российской Федерации», Спарк, М., 2000, էջ 204:

լովայի այն տեսակետին, որ հագուստը պատռելը վիրավորանք կարող է համարվել մարմնի ցանկացած մասից պատռելու դեպքում[1]:

Արտահայտությունը վիրավորանք գնահատելու համար յուրաքանչյուր գործով դատարանը պետք է ղեկավարվի օբյեկտիվ չափանիշներով, մասնավորապես հասարակության մեջ գոյություն ունեցող բարոյական պատկերացումներով, այլ ոչ թե ելնի արտահայտության՝ վիրավորական լինելու մասին բացառապես տուժողի սուբյեկտիվ գնահատականից: Բայց միևնույն ժամանակ տուժողի կարծիքը հաշվի առնելը և դրան պատշաճ գնահատական տալը պարտադիր են[2]:

Հարկ է նշել, որ արտահայտության՝ վիրավորանք գնահատելու հատկանիշների վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԼԴ/0749/02/10 քաղաքացիական գործով 2012 թվականի ապրիլի 27-ին կայացված իր որոշմամբ: Հիշյալ որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը, մասնավորապես արձանագրել է, որ վիրավորանք համարվելու համար՝

1. արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը,

2. արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա,

3. արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով:

Այժմ քննարկենք վիրավորանքի նշված հատկանիշներն առանձին-առանձին:

Անդրադառնալով վիրավորանքի համար անհրաժեշտ տարր համարվող՝ արատավորման նպատակին՝ կարծում ենք՝ նախ ճիշտ կլինի բացահայտել «արատավորել» հասկացության բովանդակությունը՝ որպես ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից վիրավորանքը բնորոշող առաջին անհրաժեշտ հատկանիշ: «Արատավորել» նշանա-

[1] Տե՛ս Марогулова И.Л., նշված աշխատությունը, էջ 72:

[2] Տե՛ս Марогулова И.Л., նշված աշխատությունը, էջ 73:

կում է անվանարկել[1], պարսավելի տեղեկություններ տարածել, «անունը սևացնել»[2], խայտառակել[3], պախարակել[4]:

Այսինքն՝ վիրավորանքի օրենսդրական բնորոշման մեջ շեշտադրում է արված հենց արատավորման հատկանիշին, ինչը նշանակում է, որ ըստ օրենսդրի՝ վիրավորանքը պետք է կատարվի այլ անձին որպես բացասական կերպար ներկայացնելու, նրա բարի անունը «պղտորելու» համար: Սակայն մեր կարծիքով, վիրավորանքի համար առանցքային նշանակություն ունի ոչ թե այլ անձի արատավորումը, այլ նրա նսեմացումը, ստորացումը, որը կարող է նաև որևէ բացասական բնույթի տեղեկությունների ներկայացում չենթադրել: Մինչդեռ զրպարտության պարագայում իրավամբ տեղի է ունենում անձի արատավորում, քանի որ նրա դրական կերպարը ներկայացվում է որպես բացասական:

Այսինքն՝ ի տարբերություն զրպարտության, որը ոտնձգություն է գլխավորապես անձի հեղինակության դեմ, վիրավորանքն ուղղված է առաջին հերթին անձի արժանապատվության դեմ:

Ուստի կարելի է հետևություն անել, որ զրպարտության պարագայում անձի արատավորման արդյունքում տեղի է ունենում նաև նրա նսեմացում, իսկ վիրավորանքի դեպքում անձի նսեմացման հետևանքով կարող է տեղի ունենալ կամ չունենալ անձի արատավորում: Այսպես՝ եթե վիրավորական արտահայտությունը պարունակում է նաև անձի մասին բացասական ինֆորմացիա, որը

---

[1] Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Հատոր առաջին, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1969, էջ 209:

[2] Տե՛ս «Словарь русского языка в четырех томах», Том 3, Академия наук СССР-Институт русского языка, государственное издательство иностранных и национальных словарей, М., 1959, էջ 416:

[3] Տե՛ս Ожегов С.И., под ред. Н.Ю. Шведовой, «Словарь русского языка», Русский язык, М., 1990, էջ 563:

[4] Տե՛ս Проценко Д.Е., «Понятие и юридическая природа института диффамации в СМИ»//«Вестник Санкт-Петербургского университета МВД России», N2, Фед.-ое гос.-ое казенное образ.-ое учреждение высшего профессионального образования «Санкт-Петербургский университет Министерства внутренних дел Российской Федерации», С.-П., 2008, էջ 150:

հիմնված չէ ստույգ փաստերի վրա և արվում է հրապարակայնորեն, ապա նման վիրավորական արտահայտությամբ իրավախախտը ոչ միայն նվաստացնում, այլև արատավորում է անձի բարի անունը: Սակայն բազմաթիվ են նաև այն դեպքերը, երբ վիրավորանքը միայն նսեմացնում է անձին: Այդպիսի վիրավորանքը կատարվում է ընդհանուր գնահատողական բնույթ ունեցող արտահայտությունների կիրառմամբ, որոնք տուժողին բարոյական կամ իրավական նորմերի որևէ խախտում չեն վերագրում[1]:

Հետաքրքրական է այն տեսակետը, ըստ որի՝ վիրավորանքն ուղղված է տուժողի առողջության դեմ, քանի որ այն բացասաբար է ազդում տուժողի հոգեկան և ֆիզիկական առողջության վրա[2]: Այս մոտեցման հետ կապված՝ մենք գտնում ենք, որ վիրավորանքով տուժողի առողջությանը վնասի պատճառումը իրավախախտի կողմից անձի նսեմացման և անձի կողմից իրեն նսեմացված զգալու հետևանք է: Այլ կերպ ասած՝ անձի հեղինակությանը, առողջությանը պատճառված, ինչպես նաև այլ վնասը, որն առաջանում է վիրավորանք կատարվելու դեպքում, ածանցյալ է անձի արժանապատվությանը նկատմամբ ոտնձգություն կատարելուն և նրան նսեմացնելուն:

Վիրավորանքի հաջորդ հատկանիշը մեղքի ձևն է, որը, համաձայն ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման և ըստ «վիրավորանք» հասկացության՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածով բնորոշման՝ «արատավորելու նպատակով» արտահայտության, կարող է արտահայտվել միայն դիտավորությամբ: Դիտավորության՝ որպես վիրավորանքի հատկանիշի պարագայում մեղքի դիտավորությունը նշանակում է, որ իրավախախտը գիտակցել է իր կողմից կատարվող գործողությունների հակաօրինականությունը և անձի պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելով՝ ցանկացել վնաս պատճառել նրան:

---

[1] Տե՛ս Стернин И.А., «Разграничение «речевого» и «юридического» оскорбления» // «Цена слова: Новые грани диффамации», «Центр защиты прав СМИ», под ред. Г.Ю. Арапова, «Элист», Воронеж, 2013, էջ 71:

[2] Տե՛ս Борзенков Г.Н., Комиссаров В.С. «Курс уголовного права», Особенная часть, Том 3, http://www.ronl.ru/stati/gosudarstvo-pravo/271395/ (30.04.2018):

Անհրաժեշտ է նշել, որ վիրավորանքի դեպքում մեղքի ձևը վիճելի հարցերից է իրավաբանական գրականության մեջ: Որոշ հեղինակներ գտնում են, որ վիրավորանքը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ[1], մյուսների կարծիքով, այն հնարավոր է կատարել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ[2]: Որոշ հեղինակներ էլ համարում են, որ եթե օրենքում չլինի դիտավորության մասին մատնանշում, ապա հնարավոր է վիրավորանքի նաև անզգուշությամբ կատարումը[3]:

Մենք գտնում ենք, որ քանի որ ներկայում վիրավորանքը ստացել է քաղաքացիաիրավական կարգավորում, կարիք չկա վիրավորանք համարել միայն մեղքի դիտավորյալ ձևով կատարված իրավախախտումը: Ուստի պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը նսեմացնել հնարավոր է նաև անզգուշությամբ, ավելին՝ նաև առանց մեղքի:

Կարծում ենք, որ մեծ կարևորություն ունի այն հանգամանքը, թե մեղքի ինչ ձևով է կատարվել վիրավորանքը՝ իրավախախտի նկատմամբ պաշտպանության համաչափ միջոցներ կիրառելու համար, ինչը կնպաստի խոսքի ազատության և անձի արժանապատվության և հեղինակության իրավունքների հավասարակշռման ապահովմանը:

Մասնավորապես վիրավորանքի դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածով նախատեսվում են հետևյալ պաշտպանության միջոցները՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել,

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը,

---

[1] Տե՛ս Иногамова-Хегай Л.В., Рарог А.И., Чучаев А.И. «Уголовное право Российской Федерации. Особенная часть», Издательский Дом «ИНФРА-М», М., 2008, էջ 108:

[2] Տե՛ս Марогулова И.Л., նշված աշխատությունը, էջ 76:

[3] Տե՛ս Агильдин В. В., «Уголовно-правовая характеристика оскорбления», http://www.blog.servitutis.ru/?p=1253 (30.04.2018):

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Մենք գտնում ենք, որ պաշտպանության վերջին միջոցը կարող է կիրառվել միայն իրավախախտի կողմից մեղքի դիտավորյալ ձևով վիրավորանք կատարելու դեպքում: Կարծում ենք, որ այն դեպքում, երբ վիրավորանքը կատարվել է առանց մեղքի, ապա գումարային ձևով փոխհատուցում պահանջելը համաչափ չի լինի, ուստի այդ դեպքում նպատակահարմար կլինի նախատեսել հրապարակայնորեն ներողություն խնդրելը, ինչպես նաև լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ ներկայացվելու դեպքում նույն լրատվության միջոցով դատարանի վճիռը լրիվ կամ մասնակի հրապարակելը, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պաշտպանության միջոցները:

Վիրավորանքի հաջորդ պարտադիր հատկանիշը դրա հրապարակայնությունն է: Ինչպես նշել է վերը նշված որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը, հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ այլ՝ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով կամ որևէ այլ կերպ՝ թեկուզ մեկ այլ՝ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով: Այդպիսի արտահայտությունների ներկայացումը հասցեատիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց:

Իսկ համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի որոշման՝ վիրավորանքի շրջանակից դուրս է մասնավոր-իրավական բնույթի հարաբերությունների կարգավորումը:

Այսինքն՝ եթե վիրավորական արտահայտությունը չի կատարվել հրապարակայնորեն, համապատասխան վեճը քննող դատարա-

նը չի կարող բավարարել վիրավորանքից տուժած անձի հայցը, նույնիսկ եթե այն կատարված լինի ակնհայտ անպարկեշտ ձևով:

Այսպես՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԱՔԴ/2492/02/12 քաղաքացիական գործով 2013 թվականի ապրիլի 29-ին կայացրած վճռում նշել է, որ անձնական հեռախոսային խոսակցության ընթացքում պատասխանողի կողմից հայցվորին հասցված վիրավորական արտահայտությունները չեն կարող համարվել վիրավորանք, քանի որ բացակայում է հրապարակայնության տարրը[1]: Եվ քանի որ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ դատարանի որոշմամբ, ուստի հեռախոսային խոսակցության ձայնագրային կրիչը չի կարող համարվել թույլատրելի ապացույց, նույնիսկ եթե պատասխանողը գիտակցել է, որ հեռախոսով իր հնչեցրած արտահայտությունները հետագայում կարող են հրապարակվել:

Մեկ այլ՝ թիվ ԵԱՆԴ 0251/02/11 քաղաքացիական գործով համանման վճիռ է կայացրել նաև Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝ ընդգծելով, որ հեռախոսային խոսակցության միջոցով կատարված արտահայտությունները չեն կարող համարվել հրապարակային:

Պետք է նշել, որ վիրավորական արտահայտությունները կարող են լինել հասցեավորված և առանց հասցեավորման: Հասցեավորված վիրավորանքը, որը կատարվում է հրապարակայնորեն, բնութագրվում է նրանով, որ դրանով իրավախախտը վարկաբեկում է տուժողի անձը ոչ միայն շրջապատողների, այլև տուժողի աչքերում[2], ստորացնում է տուժողին այլ անձանց ներկայությամբ՝ դրանով իսկ իրեն իրավունք վերապահելով խախտելու հասարակության բարոյական նորմերը, իրեն ավելի բարձր կարգավիճակ է վերագրում՝ ձգտելով տալ տուժողին սոցիալապես դատապարտելի

[1] Տե՛ս «Կարծիքների ժողովածու-2», Տեղեկատվական վեճերի խորհուրդ, ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, Երևան, 2013, էջ 60:

[2] Տե՛ս Марогулова И.Л., նշված աշխատությունը, էջ 75:

անձի կարգավիճակ, շրջապատողների մոտ ստեղծում է տուժողի մեղավորության մասին տպավորություն, հրապարակայնորեն ցուցադրում է նրա նկատմամբ իր անձնական հակակրանքը, ստիպում վերջինիս արդարանալ կամ տալ պատասխան՝ դարձնելով նրան հասարակական քննարկումների առարկա: Միևնույն ժամանակ անհասցե վիրավորանքը, որը կարող է արտահայտվել առանց հրապարակայնության՝ որպես կուտակված բացասական ապրումների բառային արտահայտում, չի կարող առաջ բերել իրավական հետևանքներ[1]:

Համաձայն ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման՝ վիրավորանքի սահմանումը չի կարող ենթադրել, որ անձի համբավին վնաս պատճառող ցանկացած բացասական կարծիք կամ որոշակի փաստական հիմք ունեցող գնահատող դատողություն պաշտպանված չէ օրենքով: Ուստի այն դեպքում, երբ արտահայտվում են անձի մասին գնահատողական դատողություններ, բայց անձին նսեմացնելու ձևով, կարող է խոսք լինել վիրավորանքի մասին:

Ինչպես նշվեց վերը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 7-րդ մասը վերաբերում է զրպարտությունից և վիրավորանքից անձի իրավունքների պաշտպանությանը: Իսկ ինչպես հայտնի է, քաղաքացիական իրավունքում անձինք լինում են ֆիզիկական և իրավաբանական: Ուստի 1087.1-ին հոդվածի 7-րդ մասով նախատեսված պաշտպանության միջոցները պետք է հավասարապես կիրառելի լինեն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց նկատմամբ: Եվ այստեղ առաջանում է հարց, թե արդյո՞ք իրավաբանական անձը կարող է դիմել այն պաշտպանության միջոցները կիրառելու պահանջով, որոնք նախատեսված են վիրավորանքի դեպքում, այլ կերպ ասած՝ հնարավո՞ր է արդյոք վիրավորել իրավաբանական անձին: Իսկ տվյալ հարցերի պատասխանները պարզելու համար նախևառաջ անհրաժեշտ է բացահայտել, թե արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածը վիրավորանքի մասով կիրառելի է իրավաբանական անձանց նկատմամբ:

Մեր տեսակետը վերը բարձրացված հարցի վերաբերյալ հանգում է հետևյալին: Ինչպես արդեն նշեցինք վերը, նախկինում վիրավորանքը հանցագործություն էր՝ նախատեսված ՀՀ քրեական

[1] Տե՛ս Стернин И.А., նշված աշխատությունը, էջ 69:

օրենսգրքով: Իսկ դա նշանակում է, որ այն կարող էր ուղղված լինել միայն ֆիզիկական անձանց դեմ: Ներկայումս այն ոչ միայն նախատեսված է քաղաքացիաիրավական հարթությունում, այլև օրենսդրական մակարդակով ավելացել է վիրավորանքի նոր պարտադիր հատկանիշ՝ դրա կատարման հրապարակայնությունը: Ուստի կարող ենք եզրահանգում անել, որ «վիրավորանք»-ը քրեաիրավական և «վիրավորանք»-ը քաղաքացիաիրավական դաշտերում ունի տարբեր բովանդակություն: Սակայն մեկ հանգամանք կասկած չի հարուցում, այն է՝ վիրավորանքի՝ առաջին հերթին անձի արժանապատվության դեմ ուղղված լինելը: Իսկ ինչպես հիմնավորել ենք սույն աշխատության առաջին գլխում, արժանապատվությամբ կարող են օժտված լինել միայն ֆիզիկական անձինք. իրավաբանական անձը ոչ միայն արժանապատվություն, այլև պատիվ ունենալ չի կարող:

Ուստի երբ խոսում ենք իրավաբանական անձին վիրավորելու հնարավորության մասին, պետք է կատարել վերապահում, ըստ որի՝ նման վիրավորանքը հետապնդում է իրավաբանական անձի գործարար համբավին վնաս հասցնելու նպատակ: *Այսինքն՝ իրավաբանական անձին ուղղված վիրավորանքը պետք է դիտարկել նրա մասին բացասական ինֆորմացիա հաղորդելու համատեքստում՝ որպես նրա մասին որոշակի տվյալների տարածում, որը, սակայն, չի կատարվում զրպարտության ձևով, ուստի հերքվել չի կարող:*

Կարծում ենք, որ նման մոտեցումն արդարացված է վիրավորանքի և զրպարտության միջև տարանջատումը պահպանելու համար. հակառակ դեպքում կստացվի, որ ցանկացած արտահայտություն կարող է դիտվել և՛ որպես վիրավորանք, և՛ որպես զրպարտություն: Բացի դրանից՝ նշված մոտեցումը հիմնավոր է նաև վիրավորանքի դեպքում իրավաբանական անձի գործարար համբավի լիարժեք պաշտպանության համար՝ նրան թողնելով օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներն իր հայեցողությամբ իրականացնելու ընտրությունը:

Վիրավորանքի ապաքրեականացումից հետո անձը կարող է ենթարկվել միայն քաղաքացիաիրավական պատասխանատվության վիրավորանքի համար: Սակայն միևնույն ժամանակ, եթե վիրավորանքը՝ հասցեավորված կամ անհասցե, կատարվում է հրապարակայնորեն, կարող է խոսք լինել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված խուլիգանության մասին: Ըստ

նշված հոդվածի՝ խուլիգանությունը դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելն է՝ արտահայտված հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Ուստի եթե անձին վիրավորելը զուգորդվում է վարքագծի համընդհանուր ճանաչում ստացած նորմերի՝ իրավախախտի և հասարակության անդամների համար ակնհայտ խախտմամբ, հասարակության, դրանում ընդունված բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցույց տալով[1], ապա իրավախախտը կարող է ենթարկվել նաև քրեական պատասխանատվության:

Բացի դրանից՝ անհրաժեշտ է նկատել, որ շարունակում է քրեական պատասխանատվություն նախատեսված լինել զինծառայողին, մարդու իրավունքների պաշտպանին, դատավարությանը մասնակցող անձանց և դատավորին վիրավորելու համար համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ, 332[2]-րդ և 343-րդ հոդվածներով, ինչպես նաև վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 172.3-րդ հոդվածով՝ ոստիկանին կամ զինծառայողին վիրավորելու համար՝ կապված նրանց կողմից հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման պարտականությունները կատարելու հետ:

Ինչպես երևում է վիրավորանքի օրենսդրական սահմանումից, վիրավորանքի կատարման միջոցները բազմազան են, ուստի այս առումով իրենից հետաքրքրություն է ներկայացնում երգիծանքի՝ որպես վիրավորական գնահատելու հարցը: Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի փետրվարի 12-ին ընդունած «Զանգվածային լրատվության միջոցներում ազատ քաղաքական բանավեճի մասին» հռչակագրի՝ հումորն ու երգիծանքը պահպանվում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10-րդ հոդվածով, և թույլ է տրվում չափազանցության բարձր աստիճան, նույնիսկ պրովոկացիա, բայց պայմանով, որ հասարակությունը չմոլորեցվի՝ գործի փաստական կողմի հետ կապված:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը

[1] Տե՛ս Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., Խաչիկյան Հ. և ուրիշներ, նշված աշխատությունը, էջ 624:

«Վիներ Սեսեշնն ընդդեմ Ավստրիայի» վերաբերյալ գործով նշել է[1], որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքը ներառում է նաև այն տեղեկատվությունը և գաղափարները, որոնք ոչ միայն բարեհաճորեն են ընդունվում կամ չեզոք բնույթ ունեն, այլև այնպիսիք, որոնք դատապարտող են, ցնցող կամ անհանգստացնող: Այսպես, տվյալ գործով հաստատված փաստերի համաձայն, «Վիներ Սեսեշն» միությունը ցուցադրել էր ավստրիական նկարչի կողմից պատրաստված նկար, որում հանրային որոշ անձինք պատկերված էին սեքսուալ բնույթի դիրքերով, և նկարում պատկերված հանրային անձանցից մեկը դիմել էր դատարան նշված միության դեմ՝ գտնելով, որ այդ նկարը վարկաբեկում է իրեն: Երգիծանքը գեղարվեստական խոսքի տեսակ է, ինչպես նաև սոցիալական արտահայտչամիջոց, որն իրեն բնորոշ բոլոր չափազանցություններով, իրականության աղավաղումով ունի հրահրելու հատկանիշ, ուստի խոսքի ազատության՝ նման ձևով արտահայտման ցանկացած միջամտություն պետք է մանրակրկիտ հետազոտության առարկա դառնա: Եվրոպական դատարանը գտավ, որ նկարով փորձ էր արված ոչ թե ներխուժել մարդու անձնական կյանք, այլ հանրության ուշադրությունը գրավել նրա՝ որպես քաղաքական գործչի հանրային գործունեության վրա:

Հայկական դատական պրակտիկայում ևս հայտնի է դեպք, երբ դատարանը մերժել է հայցը՝ լրագրողի կողմից վերջինիս քննադատող արտահայտությունները համարելով որպես երգիծանքի ոճի կիրառմամբ արտահայտված կարծիք[2]: Խոսքը մասնավորապես Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0783/02/11 քաղա-

[1] Տե՛ս «Վիներ Սեսեշնն ընդդեմ Ավստրիայի» վերաբերյալ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 25-ի վճիռը, http://hudoc.echr.coe.int/eng#{"fulltext":["\"wienersecession\""],"documentcollectionid2":["GRANDCHAMBER","CHAMBER"],"itemid":["001-79213"]} (30.04.2018):

[2] Տե՛ս «Կարծիքների ժողովածու», Տեղեկատվական վեճերի խորհուրդ, ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, Երևան, 2012, էջ 48:

քացիական գործով կայացված վճռի մասին է, որով դատարանը գնահատել է լրագրողի կողմից կատարված վիճարկելի արտահայտությունները՝ որպես չափազանցություններ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ՝

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված «վիրավորանք» հասկացության մեջ անհրաժեշտ է լրացնել «նսեմեցանել» բառը՝ հաշվի առնելով վիրավորանքի՝ առաջին հերթին անձի արժանապատվության դեմ ուղղված բնույթը:

2) Վիրավորանք հնարավոր է կատարել նաև մեղքի անզգույշ ձևով, ինչը ևս պետք է արժանանա պատշաճ իրավական գնահատականի:

3) Անձին վիրավորել հնարավոր է նաև առանց մեղքի: Խոսքն այն դեպքի մասին է, երբ առանց մեղքի վիրավորողը հրաժարվում է ներողություն խնդրել հասցված վիրավորանքի համար՝ դրանով իսկ փաստորեն դրսևորելով մեղք վիրավորանքի արդյունքում առաջացած հետևանքների վերացումից հրաժարման առումով: Սակայն այդ դեպքում կիրառվող պաշտպանության միջոցները պետք է համաչափ լինեն կատարված արարքին, ուստի որպես այդպիսի պաշտպանության միջոց կարող է լինել ներողություն խնդրելը:

ГРАЖДАНСКО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ОСКОРБЛЕНИЯ

Арменуи Чифликян
Ассистент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук

Статья посвящена оскорблению как гражданскому правонарушению, выявлению различий как между гражданско-правовым и уголовно-правовым оскорблением, так и между гражданско-правовым оскорблением и гражданско-правовой клеветой. В рамках данной статьи особое внимание уделено проблеме вины при оскорблении, особенностям оскорбления, направленного юридическому лицу, способам нанесения оскорбления. Также мы проанализировали признаки оскорбления, делая соответствующие ссылки на решения Консти-

туционного суда, а также Кассационного суда, и привели примеры из судебной практики Республики Армения.

В результате были сделаны предложения, направленные на совершенствование правовых норм Гражданского кодекса Республики Армения, которые регулируют отношения, связанные с оскорблением.

CIVIL-LAW CHARACTERISTIC OF INSULT

Armenuhi Chiflikyan
Assistant of the YSU Chair of Civil Law
Candidate of Legal Sciences

The article is devoted to an insult as a civil-law offense, to the determination of differences between civil-law and criminal-law insult, and between civil insult-law and civil-law slander. Within the framework of this article, special attention is paid to the problem of guilt in the process of making an insult, the specificities of the insult directed towards a legal entity, the modalities of inflicting an insult. The author also analyzed the hallmarks of an insult by making appropriate references to the decisions of the Constitutional court, as well as the Cassation court, and presented examples relevant to an insult from the judicial practice of the Republic of Armenia.

As a result, proposals were made to improve the legal norms of the civil code of the Republic of Armenia, which regulate relations related to insult.

Բանալի բառեր - *վիրավորանք, հրապարակային արտահայտություն, պատիվ, արժանապատվություն, գործարար համբավ, մեղք:*
Ключевые слова: *оскорбление, публичное высказывание, честь, достоинство, деловая репутация, вина.*
Key words : *insult, public statement, honor, dignity, business reputation, guilt.*

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՆ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏ

Սոնա Թևանյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում ավելի ու ավելի հաճախ ենք առնչվում գիտատեխնիկական առաջընթացով և քաղաքացիական շրջանառության ծավալների ընդարձակմամբ պայմանավորված նոր օբյեկտների, որոնք մեզ հայտնի իրավական դասակարգումների շրջանակում տեղավորելը դյուրին չէ: Այդպիսիք են, օրինակ, դրամին այլընտրանք հանդիսացող վճարամիջոցները, ինտելեկտուալ գործունեության մի շարք արդյունքներ, նաև էներգիան՝ իր ամենատարբեր դրսևորումներով: Որևէ օբյեկտի դասակարգման հիմնական չափանիշը տնտեսական և սոցիալական նպատակահարմարությունն է, ինչպես նաև շրջանառության նոր օբյեկտի՝ որպես օրենսդրությամբ ամրագրված իրավունքի օբյեկտի որևէ տեսակ դիտարկելու անհրաժեշտությունը: Գոյություն ունեցող դասակարգման մեջ որևէ օբյեկտի տեղը որոշելու անհնարինության դեպքում անհրաժեշտ է հիմնավորել այն ինքնուրույն իրավական ռեժիմով ապահովելու անհրաժեշտությունը: Ինչպես նշում է Ս. Ս. Ալեկսեևը, իրավական դասակարգման մեջ ամենակարևորը գտնելն է ուսումնասիրվող հարաբերություններին համապատասխանող նախ ճշգրիտ իրավական կառուցվածքը, ապա նաև իրավական կոնկրետ նորմը[1]: Իրավական դասակարգման նշանակությունն այն է, որ առանց նոր օբյեկտի շրջանառության իրավական ռեժիմի սահմանման այն դառնում է անորոշ և, ըստ էության, դուրս է մնում իրավական դաշտից: Իրավական ռեժիմի նշանակությունը, իր հերթին, դրսևորվում է հետևյալ ասպեկտներով.

1. այն որոշում է օբյեկտի և սուբյեկտի միջև իրավական կապի բնույթը,
2. սահմանում է օբյեկտի շրջանառության առանձնահատկությունները,

[1] Տե՛ս Алексеев С.С., Общая теория права, В 2 т., Т. 2, М., 1982, էջ 342-343:

3. դրանից է կախված իրավունքների պաշտպանության եղանակի ընտրության հարցը,

4. որոշում է այն նորմերի շրջանակը, որոնք կիրառվում են տվյալ օբյեկտի շրջանառության նկատմամբ:

Որպես քաղաքացիական շրջանառության օբյեկտ՝ էներգիան, մասնավորապես էլէկտրական էներգիան իրավաբանական գիտության հետաքրքրությունների շրջանակում է բավականին վաղ ժամանակներից, գիտնականները փորձում են վեր հանել առավել հիմնավորված իրավական կառուցակարգեր, որոնք կապահովեն դրա մասնակցությունը քաղաքացիական շրջանառության մեջ:

Էլեկտրաէներգիան հանդես է գալիս որպես բարիք, քանի որ հնարավոր է դիտարկել մարդու պահանջմունքների բավարարումն ապահովելու վերջնարդյունքի հետ պատճառական կապի մեջ:

Ներկայումս առանձնացնում են չորս մոտեցումներ, որոնք բնութագրում են էլեկտրաէներգիան.

- գույքային,
- պարտավորական,
- խառը,
- ինքնավար:

Առաջինի կողմնակիցները, մասնավորապես Յու. Ս. Համբարձումը[1] և Ս. Մ. Կոռնեևը[2] էներգիան դիտարկում են որպես գույք/իր:

Սակայն այս տեսակետի հակառակորդները[3] գտնում են, որ մատերիայի շարժման ձևը չի կարելի նույնացնել բուն մատերիայի հետ, ուստի որպես իր/գույք կարող են դիտարկվել էներգակիրները՝ էլեկտրական հոսանքը, հեղուկ, գազային կամ պինդ վիճակում գտնվող ջերմակիրները, այսինքն՝ այն ամենը ինչը, կարելի է միավորել էներգետիկ ռեսուրս հասկացության ներքո, որոնք ֆիզիկական իմաստով իրեր են իրենց տարբեր ագրեգատային վիճակներում:

---

[1] Տե՛ս Гамбаров Ю.С., Гражданское право, Общая часть, М., 2003, էջ 587:

[2] Տե՛ս Корнеев С.М., Договор о снабжении электроэнергией между социалистическими организациями, М., 1956, էջ 46:

[3] Տե՛ս Городов О.А., О нетрадиционных объектах гражданских прав // Актуальные вопросы частного права, Правовведение, 2013, 2013, № 6 (311), էջ 104-105:

Պարտավորական տեսության կողմնակիցները, մասնավորապես Մ. Մ. Ագարկովը[1] գտնում է, որ էներգիան գույք կամ գույքային իրավունք չէ, այն իրենից ներկայացնում է կոնկրետ գործողություն կամ գործունեություն, որն ի վերջո իր քաղաքացիաիրավական էությամբ հանգեցնում է ծառայությունների մատուցման:

Ռ. Սավատյեն[2] նույնպես հերքում է էներգիայի պատկանելիությունը գույքային իրավունքի օբյեկտների թվին և այն դիտարկում է պարտավորական իրավունքի տեսակետից: Ֆրանսիացի գիտնականի այդ մոտեցումն իր արտացոլումն է գտել նաև ռուս հեղինակների աշխատանքներում, մասնավորապես Ն. Մ. Զայչենկոն[3] գտնում է, որ էլեկտրաէներգիայի՝ որպես իրավունքի օբյեկտի նկատմամբ կարող են հաստատվել միայն պարտավորական և ոչ մի դեպքում գույքային իրավունքներ, որի էությունը սպառողին էլեկտրական էներգիայի անխափան ապահովման պահանջ ներկայացնելու իրավունքի ընձեռման մեջ է:

Այս մոտեցման թերությունն այն է, որ այն բացառում է էներգիայի օգտագործումը պարտավորական հարաբերություններից դուրս, ինչն իրականում այդպես չէ:

Խառը տեսության շրջանակում, մասնավորապես Դ. Վ. Մուրզինի կողմից[4], էլեկտրական էներգիան դիտարկվում է որպես անմարմին գույք, որը ներառում է իրային և պարտավորական իրավունքների տարրեր:

Ինչ վերաբերում է ինքնավար տեսությանը, ապա դրա կողմնակիցները, ի դեմս Վ. Ա. Լապաչի[5], պնդում են, որ էներգիան ոչ գույքային նյութական օբյեկտ է:

Այս տեսակետներից որևէ մեկն առայժմ միանշանակ չի ըն-

---

[1] Տե՛ս Агарков М.М., Подряд (текст и комментарии к ст. 220-235 Гражданского кодекса), М., 1924, էջ 13-14:

[2] Տե՛ս Саватье Р., Теория обязательств: юридический и экономический очерк, М., 1972, էջ 86:

[3] Տե՛ս Зайченко Н.М., Предмет договора энергоснабжения: Автореф. дис. ... канд. юрид. наук, М., 2007, էջ 8:

[4] Տե՛ս Мурзин Д.В., Ценные бумаги – бестелесные вещи, Правовые проблемы современной теории ценных бумаг, М., 1998, էջ 67-68:

[5] Տե՛ս Лапач В.А., Система объектов гражданских прав: теория и судебная практика. СПб., 2002, էջ 311–312:

դունվել գիտական շրջանակներում, սակայն առավել շատ են էլեկտրաէներգիան որպես գույք դիտարկելու կողմնակիցները:

Այն մոտեցումը, որ իրերի անօտարելի հատկանիշը դրանց նյութեղեն լինելն է, առ այսօր շարունակում է միակը լինել Գերմանիայի դատարանների համար[1]:

Մանֆրեդ Վենկշտերնը[2], օրինակ, գտնում է, որ ջերմությունը, ձայնը, լույսը, էլեկտրաէներգիան և էներգիայի այլ տեսակները, անկախ իրենց ֆիզիկական հատկություններից, չեն դիտարկվում ավանդական ֆիզիկապես գոյություն ունեցող առարկաների կողքին և այդ իսկ պատճառով չեն կարգավորվում գույքային իրավունքի նորմերով: Նմանատիպ մոտեցում է կիրառվում նաև համընդհանուր օգտագործման ենթակա այնպիսի բարիքների նկատմամբ, ինչպիսիք են օդը և ջուրը. քանի դեռ նրանք տարածական իմաստով առանձնացված չեն, դրանք գույքային իրավունքի տեսանկյունից

---

[1] Այս առումով ուշագրավ է Բադեն-Վյուտենբերգ հողի դատարանի դիրքորոշումը մի գործարարի հայցի կապակցությամբ, որը դիմել էր իրեն պատկանող համակարգչում առևտրային տեղեկատվության կորստով իրեն պատճառված վնասների հատուցման հայցով: Ինֆորմացիայի կորուստը տեղի է ունեցել այն պատճառով, որ հարևան տարածքում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում էքսկավատորը վնասել էր այն հոսանքի լարերը, որոնք էլ. էներգիա էին մատակարարում հայցվորի համակարգչին: Շինարարական կապալի աշխատանքներ իրականացնող և էներգամատակարարող կազմակերպությունների դեմ ներկայացված հայցի մերժման հիմքում դատարանը դրել է այն փաստարկը, որ գույք կարող են համարվել միայն մարմնավոր կամ, այլ կերպ ասած, նյութական առարկաները՝ իրենց ագրեգատային վիճակներից որևէ մեկով՝ պինդ, հեղուկ կամ գազային: Էլեկտրոնային տեղեկատվությունը, անկախ իր ամրագրման տեղից, իրենից ներկայացնում է հաջորդական էլեկտրական լարումների ամբողջություն և այդ իսկ պատճառով չի ընդգրկվում գույք հասկացության ներքո: Տեղեկատվության նկատմամբ չի կարող ծագել սեփականության իրավունք՝ ի տարբերություն այդ տեղեկատվության նյութական կրիչների, որոնց կարիքն ունի տեղեկատվությունը՝ իր ոչ նյութական բնույթից ելնելով: Դատարանը գտել է, որ գույք հասկացությունն օրենքով հստակ սահմանված է և լայն մեկնաբանության ենթակա չէ:

[2] Տե՛ս *Венкштерн М.,* Основы вещного права //Проблемы гражданского и предпринимательского права Германии. / Пер. с нем, М., Издательство БЕК, 2001, էջ 164:

գույք համարվել չեն կարող:

Ի. Ա. Լուկյանցևայի կարծիքով[1], էներգիան ընդհանրապես կարելի է համարել որպես այլ գույք, որն իրերի ֆունկցիոնալ անալոգն է:

Գույք հասկացությունն ինքնին իրավաբանական գրականության մեջ ամենավիճելիներից մեկն է[2], և դա այն պատճառով, ինչպես իրավացիորեն նշում է Գ. Ֆ. Շերշենևիչը[3], որ գույքի իրավաբանական և տնտեսագիտական ընկալումները չեն համընկնում:

Մի քանի տասնամյակ է, ինչ նկատելի է գույքի, ներառյալ գույքային իրավունքների իրավական հայեցակարգի ընդլայնման միտում: Թե՛ գերմանական, թե՛ ռուսական դոկտրինալ աղբյուրներում լայնորեն բանավեճեր են ծավալվում անմարմին գույքի կապակցությամբ: Անմարմին գույքի հայեցակարգը հնարավորություն է տալիս ավելի լայն մեկնաբանելու գույք եզրույթը և մի շարք օբյեկտների ու առաջին հերթին էներգիայի անմարմին գոյությունն ընդունելի համարելով՝ այն ևս դասակարգել որպես գույք:

Պետք է ընդգծել, որ էներգիան որպես գույք դիտարկելիս անհրաժեշտ է քննարկել դրա նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հետ կապված հարցերը, և այս մոտեցման շնորհիվ փորձ է արվում սեփականության իրավունքի ռեժիմը տարածել այնպիսի օբյեկտների նկատմամբ, որոնք իրենց էությամբ գույք չեն համարվում:

Սակայն կան հեղինակներ[4], որոնք գտնում են, որ էներգիայի՝ որպես գույքի՝ անգամ անմարմին, մասին խոսելն անհեռանկար է, քանի որ փաստացի անբաժանելի է այն գույքից, որի միջոցով արտադրվում և փոխանցվում է, և ավելին, որից դուրս այն պարզապես

---

[1] Տե՛ս Лукьянцева И.А., Правовая природа электроэнергии как объекта гражданских прав // Журнал российского права, 2008, N 3:

[2] Տե՛ս Жанэ А.Д., Электроэнергия как особого рода вещь // Журнал российского права, 2004, N 5, էջ 18, Федотов Д.В,. Бестелесное имущество в гражданском праве: Автореф. дис. ... канд. юрид. наук, Екатеринбург, 2012:

[3] Տե՛ս Шершеневич Г.Ф., Учебник русского гражданского права (по изданию 1907 г.), М., 1995. էջ 95:

[4] Տե՛ս Шведкова О.В., Энергия как объект договорных отношений: к вопросу о понятии и правовой природе http://justicemaker.ru/view-article.php?id=4&art=5620:

գոյություն չունի: Այստեղ հարց է բարձրանում էներգիայի արտադրության և փոխանցման միասնական գործընթացով փոխկապված էլեկտրաէներգետիկայի բնագավառի օբյեկտների և բուն էներգիայի նկատմամբ սեփականության իրավունքի գործնական տարանջատման մասին:

Իրականում ունեցվածք կամ գույք հասկացությունն անփոփոխ չէ և ժամանակի ընթացքում տրանսֆորմացվում է, արտադրության և տնտեսության զարգացումը հանգեցնում է գույքի հայեցակարգի նորացմանը, դրա ընդարձակմանը և նոր տեսակի օբյեկտների իրավաբանական ճանաչմանը: Արդյունքում գույքի թվին են սկսում դասվել էլեկտրական էներգիան, գազը, էներգիայի և հումքի այլ տեսակներ, որոնք դուրս են գույքի ավանդական ընկալման սահմաններից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում սպառիչ թվարկվում են քաղաքացիական իրավունքի օբյեկտները, և էներգիան որևէ ուղղակի կամ անուղղակի սահմանումով այդ օբյեկտների թվում չկա: Բնականաբար նման իրավակարգավորման պայմաններում խնդիր ունենք այն հստակ դասակարգելու թվարկված օբյեկտներից որևէ մեկի շարքին կամ առաջ քաշելու օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, քանի որ անթույլատրելի է իրավական անմիջական կարգավորումից դուրս թողնել էներգիան, մասնավորապես էլեկտրական էներգիան, որը կարևորագույն ռեսուրս է, իսկ էներգետիկ բնագավառը տնտեսության կարևորագույն ու դինամիկ զարգացող ճյուղերից է, և այդ ոլորտում ծագող հարաբերությունների կանոնակարգման համար ապավինել օրենքի կամ իրավունքի անալոգիայի կիրառմանը:

Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածը քաղաքացիական իրավունքի օբյեկտները սահմանելիս օգտագործում է հետևյալ ձևակերպումը. քաղաքացիական իրավունքի օբյեկտ են գույքը, ներառյալ կանխիկ դրամը և փաստաթղթային արժեթղթերը, այլ գույքը, այդ թվում՝ անկանխիկ դրամական միջոցները, ոչ փաստաթղթային արժեթղթերը, գույքային իրավունքները, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման արդյունքները, մտավոր գործունեության պաշտպանվող արդյունքները և դրանց հավասարեցված անհատականացման միջոցները (մտավոր սեփականություն), ոչ նյութա-

կան բարիքները[1]:

Ակնհայտ է, որ «այլ գույք» հասկացությունը ռուսական օրենսդրության մեջ օրենսդրի կողմից ամրագրվել է որպես պահեստային տարբերակ այն իրավիճակների համար, երբ քաղաքացիական շրջանառության մեջ են մտնում այնպիսի բարիքներ, որոնց պետք է օժտել ապրանքային հատկանիշներով:

«Այլ գույք» կատեգորիան նոր իրավական ռեժիմների ձևավորման համար միաժամանակ նոր ի հայտ եկած օբյեկտն արդեն իսկ գոյություն ունեցող համակարգի մեջ տեղավորելու հնարավորություն է ստեղծում և ենթադրում է վերջինիս համար ընդհանուր շրջանառունակություն: Նման ձևակերպման գոյության պայմաններում, որքան էլ որ գիտական շրջանակներում էներգիայի դասակարգման շուրջ բանավեճեր ծավալվեն, այնուամենայնիվ օրենսդրական կարգավորման տեսակետից նոր ի հայտ եկած օբյեկտը, տվյալ պարագայում էներգիան, իր տարբեր դրսևորումներով, չի կարող դիտարկվել որպես իրավական կարգավորումից դուրս մնացած կատեգորիա և զուտ իրավակիրառ կայունությունն ապահովելու նպատակով կընդգրկվի այլ գույք հասկացության ներքո առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ գիտականորեն չի հիմնավորվել այն առանձին կարգավորելու կամ, օրինակ, անմարմին գույքի հասկացությունն օրենսդրական մակարդակում ձևակերպելու անհրաժեշտությունը:

ՀՀ քաղաքացիական և ոլորտային գործող օրենքների կարգավորումներն այդ հնարավորությունը, ցավոք, չեն տալիս: Ինչպես արդեն նշվեց, քաղաքացիական իրավունքի օբյեկտների շրջանակը սպառիչ կերպով թվարկված է, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ դրույթներ կամ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը որևէ կերպ չեն ամրագրում էլեկտրաէներգիայի սահմանումը: Մեր կարծիքով, նման իրավիճակը հարկ է շտկել, սակայն այն բանից հետո միայն, երբ գիտականորեն հիմնավորված կլինի, թե արդյոք էներգիան, էներգետիկ ռեսուրսը, թե էներգակիրն է քաղաքացիական շրջանառության օբյեկտ և ենթակա է իրավական կարգավորման, թե ոչ:

Օրենսգիրքն էլէկտրական էներգիայի հետ կապված հարաբերությունները կարգավորում է այնքանով, որքանով ամրագրում է էներգամատակարարման պայմանագրի վերաբերյալ դրույթները: Ըստ այդմ՝ էներգամատակարարման պայմանագրով էներգամա-

[1] Տե՛ս Гражданский кодекс РФ, от 21-ого октября 1994 г.:

տակարարող կազմակերպությունը պարտավորվում է աբոնենտին (սպառողին) միացման ցանցի միջոցով մատուցել էներգիա, իսկ աբոնենտը պարտավորվում է վճարել ստացած էներգիայի համար, ինչպես նաև պահպանել պայմանագրով նախատեսված սպառման ռեժիմը, ապահովել իր տնօրինության տակ գտնվող էներգետիկ ցանցերի շահագործման անվտանգությունը և իր կողմից օգտագործվող էներգիայի սպառման հետ կապված սարքերի ու սարքավորումների սարքինությունը:

Այսպիսով՝ թեև Օրենսգիրքը քաղաքացիական իրավունքի օբյեկտների թվում ուղղակիորեն չի նախատեսում էներգիան, միաժամանակ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիրն օրենսդիրը դիտարկել է որպես առուծախի պայմանագրի տարատեսակ: Եթե ելակետ ընդունենք օրենսդրական կարգավորումներն ու դրանց տառացի մեկնաբանությունը, ապա էներգամատակարարման պայմանագիրն առուծախի պայմանագրի տարատեսակ դիտարկելով՝ օրենսդիրը ցույց է տվել վերջինիս իրավական էության մասին իր մոտեցումը, և էներգիան կարելի է դիտարկել որպես շարժական, պարզ, բաժանելի, սպառելի իր, որը բնութագրվում է տեսականիշով, իսկ էներգիայի կապակցությամբ ծագող հարաբերությունների նկատմամբ կիրառելի է համարում իրերի համար նախատեսված իրավական ռեժիմը: Մինչդեռ գերմանացի գիտնականները[1] գտնում են, որ այն չի կարող համարվել առուծախի պայմանագրի տարատեսակ, քանի որ հնարավոր չէ գնել կամ վաճառել վիճակը, ուժը. գնել կամ վաճառել հնարավոր է միայն առարկաները:

ՌԴ քաղաքացիական օրենսգրքում ևս էներգամատակարարման պայմանագիրը տեղ է գտել առուվաճառքի հետ կապված հարաբերությունները կարգավորող դրույթների ներքո, ինչը քննադատության առարկա է ռուս գիտնականների համար: Որոշ հեղինակներ[2] ընդհանրապես սխալական են համարում էներգամատակարարման պայմանագրի մասին ՌԴ քաղաքացիական օրենսգրքի

[1] Տե՛ս Бернгефт Ф., Колер И., Гражданское право Германии. СПб., 1910, цит. по: Законы гражданские с разъяснениями Правительствующего Сената и комментариями русских юристов / Сост. И.М. Тютрюмов, Кн. 4, М., 2004, էջ 312:

[2] Տե՛ս Шведкова О.В., Энергия как обьект договорных отношений: к вопросу о понятия и правовой природе, http://justicemaker.ru/view-article.php?id=4&art=5620:

դրույթները գործող ձևակերպմամբ այն հիմնավորմամբ, որ նրանում օգտագործվում է սպառողին էներգիա «մատուցել» և սպառողի կողմից էներգիա «օգտագործել» հասկացությունները, քանի որ սպառողին մատուցվում է էներգակիրը, ոչ թե բուն էներգինան, իսկ վերջինս էլ իր հերթին ոչ թե ուղղակիորեն օգտագործվում է, այլ վերափոխվում է էներգիայի նոր տեսակի, օրինակ՝ ջերմային:

Անկախ այս հարցի վերաբերյալ առկա գիտական տարաձայնություններից՝ անվիճելի է, որ էլեկտրաէներգիայի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավական ռեժիմի ընտրության պարագայում այլ ճանապարհ, քան այն առուվաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառելի նորմերի կարգավորման տիրույթում դիտարկելն է, ներկայումս չկա: Ավելին՝ այդ մոտեցումից ուղղակիորեն բխում է էներգիան թեկուզ ոչ շոշափելի, բայց այնուամենայնիվ որպես գույք դիտարկելու անհրաժեշտությունը:

Այս համատեքստում ուշադրության է արժանի նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 47-րդ գլուխը, որը վերաբերում է խողովակաշարային տրանսպորտով և էլեկտրահաղորդման գծերով ապրանքների տեղափոխմանը: Այս ձևակերպումից ակնհայտ է, որ էներգիան, ինչպես նաև գազը, սույն օրենսգքրի շրջանակում ընկալվում են որպես ապրանք: Նշված օրենսգրքի 336-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների (սույն գլխում այսուհետ՝ էլեկտրական էներգիա)՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծումը և այդ տարածքից արտահանումը թույլատրվում են մինչև մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացնելը:

Հետագա շարադրանքում կարող ենք հանդիպել բացառապես էլեկտրական էներգիա հասկացությանը, ինչը ևս վկայում է այն մասին, որ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանք հասկացության ներքո նկատի է առնվում բացառապես էլեկտրական էներգիան:

Սա թերևս իրավունքի միակ աղբյուրն է, որն ինչ-որ կերպ հստակեցնում է, թե ներկայումս օրենսդիրն ու իրավակիրառողն ինչ իրավական ռեժիմի ներքո են դիտարկում էլեկտրաէներգիան: Այս իմաստով այն դիտարկվում է որպես ապրանք, իսկ այն, թե գույքի դասական ընկալման, թե ոչ նյութական կամ անմարմին գույքի հայեցակարգում այն կարելի կլինի դիտարկել, համարվում է հարցի

բացառապես գիտական ասպեկտը:

Մեր կարծիքով, սակայն, այդ հարցի լուծումը, գիտատեսականից բացի, ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ դրանով է պայմանավորված սեփականության իրավունքի բովանդակության և ծավալի, ինչպես նաև իրավունքների պաշտպանության հետ կապված մի շարք հարցերի պարզաբանումը, որոնք սակայն դուրս են սույն հոդվածի շրջանակից և առանձին ուսումնասիրության առարկա են:

Կարծում ենք՝ կարելի է պարզապես դիտարկել էներգիա եզրույթի փոխարեն էներգետիկ ռեսուրս հասկացության կիրառման նպատակահարմարությունն այն տրամաբանությամբ, որ էներգետիկ ռեսուրս հասկացության տակ ընդգրկվում է էներգիայի կրողը, որն օգտագործվում կամ կարող է օգտագործվել տնտեսական կամ այլ գործունեության իրականացման ընթացքում, ինչպես նաև էներգիայի տեսակը՝ ատոմային, ջերմային, էլեկտրական և այլն: Էներգետիկ ռեսուրս հասկացությունը կարող է օգտագործվել քաղաքացիական օրենսգրքում «res incorporales» իմաստով, այսինքն՝ որպես գույք, որի տակ հասկանում ենք քաղաքացիական իրավունքի այնպիսի օբյեկտներ, որոնք քաղաքացիական շրջանառությանը մասնակցում են իրերի պես, սակայն իրականում այդպիսին չեն: Ընդ որում՝ նման հատուկ ռեժիմ կպահանջվի միայն էներգետիկ ռեսուրսների մի մասի համար, ինչպիսին է էլեկտրական և ջերմային էներգիան, իսկ գազը, նավթը, ջուրը՝ որպես գույքի ագրեգատային վիճակներ և միաժամանակ էներգակիրներ, իրենց քաղաքացիական շրջանառության տեսանկյունից հատուկ ռեժիմ կարող են չպահանջել:

Ամփոփելով՝ ցանկանում ենք ընդգծել, որ մեր կարծիքով, հատուկ ցանցի միջոցով էներգամատակարարման հարաբերություններն այնքան ինքնատիպ են, որ ենթակա են ինքնուրույն իրավական կարգավորման:

Նման կարգավորում իրականացնելու հիմքում պետք է դնել էներգիայի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝

1. էներգիան մեզ համար տեսանելի կամ շոշափելի չէ, ինչպես նյութական աշխարհի այլ օբյեկտներ. դրա գոյության մասին հնարավոր է համոզվել միայն որոշակի սարքավորումների օգտագործման պարագայում,

2. էներգիայի արտադրության, փոխադրման և սպառման գործընթացի անընդհատությունը,

3. էներգիան իր ֆիզիկական հատկանիշների շնորհիվ որոշակի քանակություններով կուտակել և պահպանել, ինչպես այլ ապրանքներ, հնարավոր չէ,

4. էներգիայի փոխանցումը սպառման համար հնարավոր չէ ապահովել առանց հատուկ տեխնիկական միջոցների օգտագործման,

5. էներգիան հետ վերադարձնել հնարավոր չէ, քանի որ սպառողին փոխանցվելու պահին իսկ սպառվում կամ օգտագործվում է,

6. էներգիան սպառելի ապրանք է, իսկ դրա օգտակար հատկություններն իրացվում են միայն սպառման պրոցեսում. ինքը՝ էներգիան, որևէ նյութական օբյեկտի վերափոխվելու ունակություն չունի,

7. որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտի՝ էներգիայի նկատմամբ տիրապետման և տնօրինման իրավազորությունները սահմանափակ են, այն հնարավոր չէ կտակել, ժառանգել, գրավ դնել և այլն:

Այս հատկանիշներից յուրաքանչյուրն ինքնին և բոլորը միասին ապացուցում են այս ոլորտում իրավական բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, սակայն չպետք է մոռանալ նաև, որ իրավական կարգավորումն ընդհանրապես չպետք է տնտեսական զարգացումից առաջ ընկնի: Այն պետք է հիմնվի արդեն իսկ փորձված և հասկանալի իրավական կատեգորիաների վրա՝ դրանով իսկ օպտիմալացնելով նոր ինստիտուտների տնտեսական զարգացումը:

ЭЛЕКТРОЭНЕРГИЯ КАК ОБЪЕКТ ГРАЖДАНСКОГО ПРАВА

Сона Теванян
Ассистент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук

В работе рассматриваются вопросы о квалификации энергии, в частности электрической энергии, как объекта гражданского права.

Мы рассмотрели разные теоретические подходы, и пришли к выводу, что в доктринальных источниках по этому вопросу пока не сформировано единого мнения.

Однако, принимая во внимание законодательное регулирование данной проблемы в РА, мы смогли прийти к заключению, что, несмотря на необходимость изменений в действующих законах, толкование норм дает возможность квалифицировать договор об энергоснабжении как разновидность договора купли-продажи. На основе этого мы предполагаем, что на данный момент электрическую энергию нужно рассматривать в контексте имущественного права. По нашему мнению, динамичное развитие экономики делает необходимым отдельное законодательное регулирование отношений в области электроэнергетики. Мы предлагаем квалифицировать электрическую энергию как особое состояние вещи, в частности, как бестелесную вещь и обеспечить развитие законодательства в этом направлении.

ELECTRICAL POWER AS AN OBJECT OF CIVIL LAW

Sona Tevanyan
Assistant of the YSU Chair of Civil Law
Candidate of Legal Sciences

In the paper the issues about qualification of energy, in particular electrical energy as an object of civil law. We have examined various theoretical approaches and concluded that there is no common agreement. However, taking into consideration the problem of legal regulation of this issue in RA, we could make a conclusion that regardless the necessary changes to the existing laws, interpretation of norms enables to qualify the contract on energy supply as one of the contracts of purchase and sale. Based on this, we take the view that at the electrical energy should be considered in the context of rights in rem. We believe that dynamic economic development underlines the importance of separate legal regulation in the sphere of electrical energy. It is proposed to qualify electrical energy as a specific state of property, in particular as a

unenviable property to support further legal developments in this direction.

Բանալի բառեր – *էներգիա, էլեկտրաէներգիա, ոչ շոշափելի իրեր, էլեկտրամատակարարում, գույքային իրավունք:*
Ключевые слова: *энергия, электрическая энергия, бестелесные вещи, энергоснабжение, имущественное право.*
Key word: *energy, electrical energy, unenviable property, energy supply, property right.*

ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ

Վահե Հովհաննիսյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, լինելով արդար դատաքննության իրավունքի տարր, առաջին հերթին ուղղված է հայրենական իրավական համակարգով կանխորոշված ժամանակահատվածում վիճելի նյութական կամ այլ իրավահարաբերությունը կարգավորող դատական ակտի կայացումը երաշխավորելուն՝ դրանով իսկ բացառելով անձի քաղաքացիաիրավական վիճակի անորոշությունը, ինչպես նաև գործնականում իրացնելով «իրավական որոշակիության» սկզբունքի հրամայականներն ու պահանջները[1]: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի[2] (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության[3] 63-րդ հոդվածի 1-ին մասը, արդար դատաքննության իրավունքի բովանդակության մեջ առանձնացնելով ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը, պետության համար իրավական համակարգում այն ապահովելու ուղղակի պարտականություն են սահմանում: Հետևաբար, հայրենական իրավական համակարգում պետք է անհրաժեշտ և բավարար կառուցակարգեր գործեն, որոնք ուղղված կլինեն այս իրավունքի ապահովմանը, այդ թվում՝ արդար

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրության հոդված 63, ինչպես նաև՝ Нешатаева Т.Н., Уроки судебной практики о правах человека: европейский и российский опыт, М., изд. <Городец>, 2007, էջեր 83-101: Nuala Mole and Catharina Harby. The right to a fair trial. A guide to the implementation of the article 6 of Europian Convention on Human Rights. Human rights handbooks, No. 3. «Directorate General of Human Rights Coucil of Europe», 2006, էջեր 25-27:

[2] Ընդունվել է 4-ը նոյեմբերի, 1950 թ., Հռոմ, ՀՀՊՏ 2002.06.05/17(192), հոդ. 367:

[3] Ընդունվել է 06.12.2015 թ. հանրաքվեի միջոցով, ՀՀՊՏ 2015.12.21/հատուկ թողարկում, հոդ. 1118:

դատաքննության իրավունքի նշված ֆունկցիոնալ տարրի խախտումը կանխարգելելու կամ էլ խախտման բացասական հետևանքները վերացնելու, իրավունքը վերականգնելու արդյունավետ միջոցներ կպարունակեն: Ընդ որում՝ իրավունքի պաշտպանության յուրաքանչյուր կառուցակարգ առաջին հերթին պետք է արժևորել իրավական նպատակահարմարության և արդյունավետության դիտանկյունից՝ հիմք ընդունելով այն ելակետը, թե այն որքանով է վերացնում իրավունքի խախտման բացասական հետևանքները: ՀՀ քաղաքացիադատավարական նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ հայրենական իրավական համակարգում ներկայումս բացակայում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման հիմքով դատական ակտի թե՛ անմիջական, թե՛ հետաձգված բողոքարկման հնարավորությունը, իսկ մեր կողմից բազմիցս նշվել է, որ դատական ակտի բողոքարկումը ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի դատական պաշտպանության համար կոնվենցիոն իմաստով չի կարող արդյունավետ միջոց համարվել, քանի որ դրա արդյունքում ոչ միայն չենք վերացնում այդպիսի խախտման բացասական հետևանքները, այլև խորացնում ենք այս իրավունքի խախտումը[1]: Վերոգրյալը հավասարապես վերաբերում է նաև դատավարական նորմերի խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանությանը, քանի որ կարգապահական վարույթը, ունենալով խնդրային բոլորովին այլ ուղղվածություն, առանձնանում է իրավունքի նորմերի հնարավոր խախտումները կանխարգելող նշանակությամբ՝ միաժամանակ չվերացնելով սուբյեկտիվ իրավունքների խախտման բացասական հետևանքները, այդ թվում՝ չպարունակելով խախտված սուբյեկտիվ իրավունքը վերականգնող որևէ կառուցակարգ[2]:

---

[1] Առավել մանրամասն տե՛ս Վ. Հովհաննիսյան, Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում ՀՀ սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, թիվ 3(24), 2017, 67-76 էջեր:

[2] Առավել մանրամասն տե՛ս Վ. Հովհաննիսյան, Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները քաղաքա-

Հարկ է նշել, որ ՀՀ դատական օրենսգրքի նախագծից հանվել է շահագրգիռ անձի կողմից արդար դատաքննության իրավունքի փաստը հաստատելու և պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջով դատարան դիմելու հնարավորություն սահմանող իրավակարգավորումը, իսկ այդպիսի պայմաններում նման պահանջի ներկայացումն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ոչ նյութական վնասի հատուցման տրամաբանությամբ: Ընդ որում՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջի ներկայացումը կոնվենցիոն իմաստով չի կարող դատարան դիմողի համար արդարացի հատուցում ապահովել: Մասնավորապես, Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ ձևավորած նախադեպային պրակտիկայում «Վասսերմանն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության»[1] գործով նշել է, որ արդարացի հատուցումը ներառում է դիմողին պատճառված նյութական և ոչ նյութական վնասի, ինչպես նաև իրավունքի դատական պաշտպանության հետ կապված ծախսերի հատուցումը, այդ թվում՝ իրավունքի խախտման հետևանքով գույքի արժեքի ամբողջական կամ մասնակի կորուստը, իրական հնարավորության կորուստը, հարկադիր կարգով իրացված կամ օտարված գույքի շուկայական արժեքի և տրամադրված հատուցման բացասական տարբերությունը, անհրաժեշտության դեպքում՝ հաշվարկվող տոկոսագումարները, գործի տևական քննության արդյունքում դիմողի հուզմունքների և ապրումների, կրած տառապանքների, երկարատև անորոշ վիճակի, գործարար համբավին հասցված վնասի հետևանքները, փաստաբաններին վճարված, դատական թղթակցության և գործի վարման հետ կապված ողջամիտ ծախսերը: Բացի դրանից՝ Եվրոպական դատարանի կողմից իրավունքի խախտման փաստի արձանագրումը պատասխանող պետության համար խախտումը դադարեցնելու և խախտման բացասական հետևանքները փոխհատուցելու պարտավորություն է առաջացնում այնպիսի պայմաններով, որ հնարավորինս վերականգնվի մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը

ցիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(1)2018, 430-445 էջեր:

[1] https://roseurosud.org/r/st-6/st-6a-7/vasserman-protiv-rossii-2

(restitutio in integrum), հատուցվեն իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (damnum emergens), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (lucrum cessans)[1]: Հատուցման նպատակը դիմողի համար այնպիսի պայմանների ապահովումն է, որոնք առկա կլինեին, եթե իրավունքի խախտման փաստը տեղի չունենար[2]: Դատարանի կողմից արդարացի հատուցում տրամադրելու չափը որոշելու համար հիմք են հանդիսանում իրավունքի խախտման այն հետևանքները, որոնք պատասխանող պետությունն այլ եղանակներով վերացնել չի կարող[3]:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում տեղ գտած դիրքորոշումների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ իրավական համակարգում ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի դատական պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգ կարելի է դիտարկել վնասի հատուցման պահանջով դատարան դիմելու հնարավորության իրացումը, որն ուղղված է իրավունքի խախտման բացասական հետևանքների վերացմանը և այս առումով կարող է նաև կանխարգելող նշանակություն ունենալ: Սակայն անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ ***այս կառուցակարգն ուղղված չէ խախտված իրավունքի վերականգնմանը, այլ կրում է կոմպենսացիոն բնույթ և ապահովում է իրավունքի խախտման հետևանքով կրած վնասների հատուցումը՝ բացասական հետևանքների վերացումը***:

Հետևաբար առանձնակի ուշադրության է արժանի այն հարցը, թե ՀՀ օրենսդրությունն ինչ անհրաժեշտ և բավարար կառուցակարգեր է պարունակում ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման բացասական հետևանքները վերացնելու,

---

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի «Հունաստանի նախկին թագավորը և ուրիշներն ընդդեմ Հունաստանի» գործով թիվ 25701/94 վճիռ, կետ 72:

[2] Տե՛ս Եվրոպական դատարանի «Պրոդանն ընդդեմ Մոլդովայի» գործով թիվ 49806/99 վճիռ, կետ 70:

[3] Տե՛ս Եվրոպական դատարանի «Սկոզզարին և Գիունտան ընդդեմ Իտալիայի» գործով թիվ 39221/98 և թիվ 41963/98 վճիռներ:

խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունն այս ձևով կենսագործելու համար։

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանության կամ խախտման բացասական հետևանքների վերացմանն ուղղված կառուցակարգերի իրավաբովանդակային տարողունակության լիարժեք բացահայտման տեսանկյունից պետք է արժևորել հետևյալ հանգամանքները.

- յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք (ՀՀ Սահմանադրության հոդված 61),
- յուրաքանչյուր ոք ունի պետական հանրային-իրավական գործառույթ իրականացնող մարմինների ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունք (պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք (ՀՀ Սահմանադրության հոդված 62)),
- ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, լինելով արդար դատաքննության իրավունքի տարր, ևս ենթակա է դատական պաշտպանության (ՀՀ Սահմանադրության հոդված 63)։

Նշված իրավադրույթների համադրման արդյունքում կարող ենք փաստել, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական կառուցակարգ է Կոնվենցիոն իրավունքների պաշտպանության նպատակով միջազգային դատարան՝ տվյալ դեպքում Եվրոպական դատարան դիմելու հնարավորությունը, որի դեպքում ապահովվում է արդար դատաքննության իրավունքի խախտման փաստի արձանագրման արդյունքում արդարացի փոխհատուցման տրամադրումը, իսկ որպես քննարկվող իրավունքի խախտման բացասական հետևանքների վերացմանն ուղղված ներպետական կոմպենսացիոն կառուցակարգ պետք է դիտարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 162.1-ին,

1087.2-րդ հոդվածներով նախատեսված կանոններին համապատասխան վնասի հատուցման սուբյեկտիվ իրավունքի իրացումը և դրա կենսագործմանն ուղղված դատական գործունեության համակցությունը:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ անձը, որի իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքները, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքը:

Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից: Ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչա-

փության սկզբունքներին համապատասխան: Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

Արդար դատաքննության իրավունքի խախտման համար տրամադրվող հատուցման չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը: Ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

Ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես արդար դատաքննության իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝ չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, որը հատուցել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով պատճառած վնասը, հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վճարած հատուցման չափով: Հետադարձ պահանջ ներկայացնելու հիմք է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի մեղքի առկայությունը:

Վերոգրյալը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանությանը վերաբերող կոնվենցիոն, սահմանադրական և ճյուղային օրենսդրության

դրույթներում առկա են անհամապատասխանություններ, իսկ որոշ դեպքերում էլ՝ հակասություններ:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասը արդար դատաքննության իրավունքի խախտման հետևանքով ոչ նյութական վնասի հատուցման պահանջով դատարան դիմելու իրավունքի իրականացման երկու ռեժիմ է սահմանում, որի արդյունքում անձը հնարավորություն է ստանում միաժամանակ դատարան և արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը հատատելու և ոչ նյութական վնասը հատուցելու պահանջ ներկայացնելու, ինչպես նաև նման հնարավորության փաստացի իրացումն ուղղակիորեն պայմանավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով այդպիսի խախտումը հաստատված լինելու հանգամանքով: Հետևում է, որ երկրորդ դեպքում առնվազն անհրաժեշտ է վերադաս որևէ դատական ատյանի որոշում, որն արձանագրում է ստորադաս դատական ատյանում ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման փաստը: Ընդ որում՝ ՀՀ օրենսդրությամբ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումը հաստատելու և ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորությունը կոնվենցիոն *իմաստով ոչ միայն չի կարող դատարան դիմողի համար արդարացի հատուցում ապահովել, այլև խնդրահարույց է իրավականության և դատական ատյանների գործառութային համակարգայնության, ներքին անկախության ապահովման տեսանկյունից*[1]: Ուստի, շա-

[1] Առավել մանրամասն տե՛ս Վ. Հովհաննիսյան, Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(1)2018, 430-445 էջեր: Շահագրգիռ անձի կողմից արդար դատաքննության իրավունքի խախտման փաստը ճանաչելու և պատճառված ոչ նյութական վնասը հատուցելու պահանջ ներկայացնելու օրենսդրական հնարավորության ամրագրումը ենթադրում է, որ այդպիսի պահանջները ներկայացվելու են առաջին ատյանի դատարան, այդ պարագայում դատարանը պետք է գնահատի հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով քաղաքացիական գործով վճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից կատարված գործողությունները և դրանց արդյունավետությունը, գործի քննության ընդհանուր տևողությունը՝ վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում դատական ակտի վերանայման ժամա-

հագրգիռ անձը գործնականում հնարավորություն է ունենալու առավելապես առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում արդար դատաքննության իրավունքի խախտման հետևանքով ոչ նյութական վնասի հատուցման պահանջ ներկայացնելու՝ փաստացի սահմանափակված լինելով ՀՀ վճռաբեկ ատյանում իր իրավունքի խախտումը դատական կարգով վերականգնելու հնարավորությունից: Բացի դրանից՝ ՀՀ դատական օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի է առնվում գործի քննության ընդհանուր տևողությունը, իսկ ողջամիտ ժամկետի պահպանման չափանիշների շարքում Եվրոպական դատարանն առանձնացնում է առաջին հերթին գործի քննության ընդհանուր տևողությունը, որը ներառում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը լրացնող այնպիսի փուլեր, ինչպիսիք են դատական ակտի հարկադիր կատարման վարույթի և պետական տուրքի վճարահաշվարկային հարաբերությունների տևողությունը[1]: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում գերակայությունը տրվում է սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության այնպիսի բովանդակային տարրերի վերլուծությանը, որը ներառում է նաև պաշտպանության ենթակա իրավունքի փաստացի իրացման

նակահատվածը ներառյալ: Եռաստիճան դատական համակարգի գործառնության պարագայում ստացվում է, որ առաջին ատյանի դատարանն արձանագրելու է առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացած դատարաններում, վերաքննիչ դատարաններում և վճռաբեկ դատարանում արդար դատաքննության իրավունքի խախտումները՝ որոշելով գործի քննության տևողության ողջամտությունը, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները՝ ներառյալ իրավական և փաստական բարդությունը, դատավարության մասնակիցների վարքագիծը և դատավարության մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կատարված գործողությունները և դրանց արդյունավետությունը, գործի քննության ընդհանուր տևողությունը և Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

[1] Տե՛ս Piter van Dijk, Fried van Hoof, Arjen van Rijn, Leo Zwakk, Theory and practice of the european convention on human rights, Intersentia, Antwerpen, Oxford, 2006, էջեր 604-606:

համար անհրաժեշտ կառուցակարգերի ապահովումը[1]: *Հետևաբար, կարող ենք արձանագրել, որ ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավունքի օրենսդրական ամրագրումը դեռևս չի ենթադրում ներպետական բոլոր դատական ատյաններում թույլ տրված արդար դատաքննության իրավունքի խախտումները կոմպենսացնելու հնարավորության լիարժեք իրացում:* Վճռաբեկ դատական ատյանում ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման փաստն արձանագրելու և իրավունքի խախտման հետևանքով վնասի հատուցման իրավական արդյունավետ կառուցակարգ առավելապես կարելի է դիտարկել Եվրոպական դատարանի կողմից արդարացի հատուցման տրամադրումը:

Բացի դրանից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին և 1087.2-րդ հոդվածների տրամաբանությամբ արդար դատաքննության իրավունքի խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման մինչև երկու միլիոն դրամի չափով, եթե պատճառված վնասի արդյունքում չեն առաջացել ծանր հետևանքներ: Հետևում է, որ հայրենական օրենսդրությամբ բացառապես արդար դատաքննության իրավունքի խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հնարավորություն է նախատեսված: Մինչդեռ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ հստակորեն նշել է, որ արդարացի հատուցումը ներառում է դիմողին պատճառված նյութական և ոչ նյութական վնասի, ինչպես նաև իրավունքի դատական պաշտպանության հետ կապված ծախսերի հատուցումը, այդ թվում՝ իրավունքի խախտման հետևանքով գույքի արժեքի ամբողջական կամ մասնակի կորուստը, իրական հնարավորության կորուստը, հարկադիր կարգով իրացված կամ օտարված գույքի շուկայական արժեքի և տրամադրված հատուցման բացասական տարբերությունը, անհրաժեշտության դեպքում՝ հաշվարկվող տոկոսագումարները, գործի տևական քննության արդյունքում դիմողի հուզմունքների և ապրումների, կրած տառապանքների, երկարատև անորոշ վիճակի, գործարար համբավին հասցված վնասի հետևանքները, փաստաբաններին վճարված, դատական թղթակ-

[1] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ «Տումիլովիչն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 22.06.1999 թ. վճիռ, «Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով 06.04.2002 թ. վճիռ:

ցության և գործի վարման հետ կապված ողջամիտ ծախսերը։ Ընդ որում՝ Եվրոպական դատարանի կողմից հատուցման վերաբերյալ որոշման կայացումն ուղղված է իրավունքի խախտման հետևանքների վերացմանը կամ կոմպենսացմանը, եթե իրավունքի խախտման հետևանքները չեն կարող պատասխանող պետության կողմից վերացվել այլ եղանակներով։ Այսինքն՝ Կոնվենցիայի իմաստով և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված դիրքորոշմամբ արդար դատաքննության, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումների համար դիմող կողմն ունի **արդարացի,** այլ ոչ թե ոչ նյութական վնասի հատուցման իրավունք, ինչն իրավաբովանդակային տարողունակությամբ շատ ավելի լայն է, քան ՀՀ օրենսդրական ներկայիս կարգավորումը։

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 1087.2-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով և 8-րդ մասով նախատեսված իրավակարգավորումները չեն կարող ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի և Եվրոպական կոնվենցիայի իմաստով իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցներ ենթադրել այնքանով, որքանով ոչ նյութական վնասի հատուցումը չի կարող դատարան դիմողի համար արդարացի հատուցում ապահովել։ Անհրաժեշտ է հայրենական իրավական համակարգ ներդնել արդար դատաքննության, այդ թվում՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման պարագայում ինչպես ոչ նյութական, այնպես էլ նյութական վնասի հատուցման հստակ կառուցակարգեր, որոնց դեպքում իրավունքի գերակայության կոնվենցիոն չափորոշիչներին համապատասխան կապահովվի յուրաքանչյուր անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը։

ВОЗМЕЩЕНИЕ УЩЕРБА КАК МЕХАНИЗМ ЗАЩИТЫ ПРАВ И УСТРАНЕНИЯ НЕГАТИВНЫХ ПОСЛЕДСТВИЙ В СВЯЗИ С НАРУШЕНИЕМ ПРАВА НА РАССМОТРЕНИЕ ДЕЛА В РАЗУМНЫЕ СРОКИ

Ваге Оганесян

Заведующий кафедрой гражданского процесса ЕГУ,

доктор юридических наук, профессор

Право на рассмотрение дела в разумные сроки как элемента права на справедливое судопроизводство в первую очередь направлено на гарантирование исполнения судебного акта, регулирующего спорные материальные и другие правоотношения в течение срока, предназначенного в национальном законодательстве, этим же исключая неопределенность гражданско-правовой ситуации лица, а также практически реализовывая императивы и требования принципа «правовой определенности». Автор в деталях изучил последствия нарушения права на рассмотрение дела в разумные сроки, правовые механизмы их устранения, а также возможные варианты защиты прав. В результате исследования мы пришли к заключению, что праворегулирование статьей 162.1 части 2-ой пункта 4, 1087.2 части 7-ой пунктов 2 и 8 Гражданского кодекса РА не является эффективной мерой защиты прав в контексте статьи 61 Конституции РА и Европейской Конвенции в той мере, что возмещение только материального вреда не может гарантировать эффективную защиту прав истца. Необходимо в национальную правовую систему внедрить четкие механизмы возмещения как материального, так и нематериального вреда в связи с нарушением права на справедливое судопроизводство, в том числе права на рассмотрение дела в разумные сроки, в каких условиях будет гарантировано право любого лица на справедливое судопроизводство, в соответствии с международным критериям верховенства права.

REMEDIATION OF DAMAGES IN REASONABLE TIME FRAMES AS A MECHANISM OF PROTECTION OF RIGHTS AND NEUTRALIZATION OF NEGATIVE CONSEQUENCES OF THE INFRINGEMENT OF THE RIGHT OF JUDICIAL EXAMINATION OF THE CASE

Vahe Hovhannisyan
Head of the YSU Chair of Civil Procedure,
Doctor of Legal Sciences, Professor

The right to examination of the case in reasonable time frames as an element of the right to fair trial, first of all is aimed at guaranteeing the implementation of the judicial act settling disputable material or other legal relations in a time-frame defined by national legislation, thus, excluding the uncertainty of the person's civil-legal situation and practically implementing the imperatives and requirements of "legal certainty" principle. The author has examined in details the consequences of infringement of the right to judicial examination in reasonable time-frame, the legal mechanisms of neutralization thereof, as well as available options of protection of rights. In the result of study, a conclusion has been made that the regulations under Article 162.1 part 2 point 4, Article 1087.2 part 7 point2 and 8 of the Civil Code do not introduce effective means of rights protection in the context of Article 61 of the RA Constitution and European Convention to the extent that remediation of only material damage cannot ensure fair remediation for the claimant. It is necessary that national legal system be developed as to implicate clear mechanisms of fair trial, including remediation for not only material, but also non-material damages that will ensure effective judicial protection right for each person, according to international criteria of rule of law.

Բանալի բառեր *- գործի քննություն, ողջամիտ ժամկետ, վնասի հատուցում, արդարացի հատուցում, նյութական և ոչ նյութական վնաս, արդյունավետ պաշտպանություն:*

Ключевые слова: *рассмотрение дела, разумный срок, возмещение вреда, справедливое возмещение, материальный и нематериальный вред, эффективная защита.*

Key words: *examination of the case, reasonable time-frame, remediation of damage, fair remediation, material and non-material damage, effective protection.*

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ (ԳՈՐԾՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Սերգեյ Մեղրյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Աշխարհի շատ երկրներ, բախվելով քաղաքացիական գործերի ծավալների կայուն դինամիկ աճի և, որպես հետևանք, նաև դատարանների գերծանրաբեռնվածության խնդիրներին, մշակել և ներդրել են դատավարական տարաբնույթ ինստիտուտներ և քաղաքացիական գործերի քննության տարբերակված ձևեր, որոնք թույլ են տալիս կրճատել գործերի քննության տևողությունը, խնայել դատական համակարգի ռեսուրսները և նվազեցնել դատարանների բեռնվածությունը:

Վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ գործերի վարույթը նշված ինստիտուտներից մեկն է: Այն ներմուծվեց Հայաստանի իրավակարգ ԱԺ-ի կողմից 2004 թ. օգոստոսի 5-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով[1]: Նշված օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության 1998 թ. քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) լրացվեց նոր՝ «Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 36[1] գլխով (հոդվածներ 204[1]-204[8]), որը դարձավ այլընտրանքային վարույթ սովորական ընթացակարգով քննվող հայցային վարույթի համեմատ: Բացի դրանից՝ Նախկին օրենսգրքի 13-րդ հոդվածում որպես քաղաքացիական գործերով կայացվող դատական ակտերի ինքնուրույն տեսակ, վճիռների և որոշումների հետ մեկտեղ, նախատեսվեցին նաև վճարման կարգադրությունները:

Իր ներկա տեսքով վճարման կարգադրության վարույթը հայե-

[1] Տե՛ս ՀՀՊՏ, 2005/51(423), 12.08.05:

ցակարգային առումով գրեթե նույնական է ՌԴ ՔԴՕ-ի՝ «Դատական հրաման» վերտառությամբ 11-րդ գլխով և Գերմանիայի ՔԴՕ-ի՝ «Պարտքի մարումը դատական հրամանի կարգով» վերտառությամբ 7-րդ գրքով կարգավորվող դատական հրամանի ինստիտուտի հետ:

Որոշակի առանձնահատկություններով այն նախատեսված է նաև Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի և մի շարք այլ երկրների իրավական համակարգերում, որտեղ կուտակվել է պարզեցված վարույթի քննարկվող տեսակի կիրառման բավականին հարուստ փորձ:

Ընդհանուր առմամբ կարգադրության վարույթը կարող է բնորոշվել որպես ***քաղաքացիական գործերի լուծման պարզեցված ընթացակարգի տեսակ, որի շրջանակում դատարանը պարտատիրոջ ներկայացրած դիմումի հիման վրա, առանց դատական նիստ հրավիրելու և գործն ըստ էության քննելու, կայացնում է դատական ակտ (հրաման, կարգադրություն), որը չվիճարկվելու դեպքում ստանում է եզրափակիչ դատական ակտի՝ վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման:*** Այս վարույթի կարգով դատական ակտ կայացնելու համար գործի փաստական հանգամանքները չեն պարզվում և չեն հաստատվում, որովհետև դատարանը պարտապանի դիրքորոշումը և պատճառաբանությունները չի քննարկում, գործի իրավաբանական որակումը չի տալիս: Դատական ակտ կայացնելիս դատարանը հենվում է միայն պահանջն առերևույթ (prima facie) հիմնավորված և ապացույցներով հաստատված լինելու փաստի վրա: Մյուս կողմից, այս ինստիտուտը թույլ է տալիս հաշվի առնել նաև պարտապանի շահերը, այսինքն՝ այն ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերը, որոնց դեմ հարուցվել է կարգադրության վարույթը, քանի որ եթե վճռարման կարգադրությունը սահմանված կարգով վիճարկվում է, ապա այն կորցնում է ուժը (վերացվում է):

Վարույթի քննարկվող տեսակի կարևորությունը, արդյունավետությունը և կենսունակությունն ընդգծվում են մի շարք դատավարագետների կողմից[1]: Իր հերթին, Նախկին օրենսգրքի՝ «Վճռարման

[1] Տե՛ս, օրինակ, **Жуйков В.М.,** Проблемы гражданского судопроизводства, М., 2001, էջ 62-63, Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян**, М., Изд. «Кодекс», էջ 242:

կարգադրություն արձակելու գործերի վարույթը» վերտառությամբ 36[1] գլխի կիրառման շուրջ տասնհինգամյա պրակտիկայի վերաբերյալ հրապարակված դատական վիճակագրության տվյալները ցույց են տալիս, որ վարույթի քննարկվող տեսակի գոյությունն արդարացված է, իսկ քաղաքացիական գործերի լուծման տվյալ պարզեցված ընթացակարգը՝ խիստ արդյունավետ: Այսպես՝ 2006 թվականին Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն արձակել են 24.974 վճարման կարգադրություններ, որոնցից չվիճարկվելու հիմքով օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 17.447-ը, 2007 թվականին՝ 49.540-ը, որից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 28.549-ը, 2014 թվականին՝ 58375-ը, որից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 29.542-ը, 2015 թվականին՝ 61.899-ը, որից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 28.204-ը, 2016 թվականին՝ 50.215-ը, որից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 21.995-ը, 2017 թվականին՝ 77.525-ը, որից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 33.301-ը, 2018 թվականին՝ 66.530-ը, որից օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ է ստացել 28.080-ը[1]:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքով[2], ի թիվս այլ պարզեցված ընթացակարգերի, նախատեսվել է նաև վճարման կարգադրության ինստիտուտը: Մասնավորապես «Վարույթն առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ երկրորդ բաժնի «Պարզեցված ընթացակարգեր» վերտառությամբ չորրորդ ենթաբաժնում առանձին գլուխ է նվիրվել վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթին (գլուխ 43, հոդվածներ 307-314):

Հարկ է նկատել, որ կարգադրության վարույթը կատարելագործելու և դրա կիրառումը խթանելու միտումը նկատվում է ոչ միայն ազգային մակարդակներում: Միջազգային կազմակերպությունները

[1] Տե՛ս առաջին ատյանի դատարանների կողմից վճարման կարգադրություն արձակելու վարույթների ընթացքի մասին տարեկան հաշվետվությունները // Դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայք՝ www.court.am:

[2] Ընդունվել է 09.02.2018 թ., ուժի մեջ է մտել 09.04.2018 թ., տե՛ս ՀՀՊՏ, 2018.03.05/16(1374): Այսուհետ՝ Օրենսգիրք:

և անդրազգային կազմավորումները ևս կարևորում են քննարկվող ինստիտուտը: Այսպես՝ Եվրոպական խորհրդարանը և Խորհուրդը 2006 թ. դեկտեմբերի 12-ին ընդունել են «Վճարման եվրոպական կարգադրության մասին» թիվ 1896/2006 կանոնակարգը, որի հիմնական նպատակն է պարզեցնել և արագացնել անվիճարկելի դրամական պահանջներին վերաբերող գործերի լուծումը՝ անդամ պետություններում վարույթը միասնականացնելու, վարույթի նվազագույն ստանդարտներ մշակելու և կայացված դատական ակտերի անխոչընդոտ կատարումն ապահովելու միջոցով (հոդվ. 1)[1]: Նշված կանոնակարգում, ըստ էության, ամփոփվել է անվիճելի (չվիճարկվող) դրամական պահանջների քննության և լուծման եվրոպական լավագույն փորձը, որը, անկասկած, պետք է ծառայեր որպես ուղեցույց ՀՀ դատավարական օրենսդրության՝ կարգադրության վարույթին նվիրված նորմերի հետագա կատարելագործման ընթացքում: Կանոնակարգի առանձին դրույթներ հաշվի են առնվել Օրենսգրքի մշակման ընթացքում, որի արդյունքում կարգադրության վարույթը կանոնակարգող նորմերում կատարվել են մի շարք փոփոխություններ:

Կարգադրության վարույթի թույլատրելիության պայմանները:

Օրենսգրքի 307-րդ հոդվածով նախևառաջ սահմանվել են վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի թույլատրելիության երեք պայմաններ:

1) ***Կարգադրության վարույթը թույլատրելի է միայն դրամական պահանջներով:*** Նշվածից երևում է, որ, ի տարբերություն, օրինակ, ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, վճարման կարգադրությունը թույլատրելի չէ պարտապանից շարժական գույք վերցնելու պահանջներով. այն թույլատրելի է բացառապես դրամական պահանջներով: Դրանով էլ թերևս պայմանավորված է այն հանգամանքը, որ քննարկվող վարույթի արդյունքում կայացվող դատական ակտն ի սկզբանե ստացել է ոչ թե «դատական հրաման» անվանումը, այլ անվանվել է «վճարման կարգադրություն»: Դրանով իսկ ընդգծվել է նշված դատական ակտի հիման վրա կատարվող պարտավորության դրամական բնույթը՝ բացառելով պարտապանից գույք պահանջելու, ոչ դրամական բնույթի գործողություն կամ

[1] Տե՛ս http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:32006R1896:

որոշակի գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ պահանջներով քննարկվող վարույթը կիրառելու հնարավորությունը:

2) ***Վճարման կարգադրություն կարող է արձակվել բացառապես այն պահանջով, որը որոշակի է:*** Ընդ որում՝ ըստ Օրենսգրքի 307-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պահանջը համարվում է որոշակի, եթե այն սահմանված է կողմերի համաձայնությամբ կամ կարող է ճշգրիտ որոշվել օրենքի կամ պայմանագրի հիման վրա: Հետևում է, որ վճարման կարգադրություն չի կարող արձակվել այնպիսի դրամական պահանջներով, որոնց չափը որոշելու համար ֆորմալ դատավարության կանոնների պահպանմամբ պետք է իրականացվեն դատավարական օրենսդրությամբ կարգավորվող որոշակի դատավարական գործողություններ՝ նշանակվի փորձաքննություն, հարցաքննվեն փորձագետներ, մասնագետներ, վկաներ, կատարվի իրեղեն ապացույցների զննություն և այլն:

3) ***Վճարման կարգադրություն չի կարող արձակվել, եթե ներկայացված պահանջը կապված է դեռևս չկատարված հանդիպական պարտավորությունների հետ:***

Հանդիպական է այն պարտավորությունը, որի շրջանակում կողմերից մեկի պարտականության կատարումը, պայմանագրին համապատասխան, պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ (Քաղ. օր. 367-րդ հոդվ., մաս 1): Եվ քանի որ այն կողմը, որի վրա դրված է հանդիպական կատարումը, պարտավոր կողմի՝ պայմանագրով պայմանավորված պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու մասին ակնհայտորեն վկայող հանգամանքների առկայության դեպքում իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց (Քաղ. օր. 367-րդ հոդվ., մաս 1), նրա դեմ վճարման կարգադրություն արձակելը չի թույլատրվում, քանի դեռ դատարան դիմած պարտատերը դիմումին կից չի ներկայացրել իր հանդիպական պարտավորությունը կատարելու փաստը հավաստող առերևույթ արժանահավատ ապացույցներ: Հակառակ պարագայում պահանջի առերևույթ հիմնավորված լինելը, որը դիմումը բավարարելու հիմքերից մեկն է, վճարման կարգադրությունն արձակելու պահին կլիներ խիստ կասկածելի:

Նախկին օրենսգրքի 204.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահ-

մանում էր կարգադրության վարույթի անթույլատրելիություն այն դեպքերում, երբ *«ներկայացված պահանջի հիմքում ընկած է վարկային պայմանագիրը, և նախատեսված տոկոսադրույքը պայմանագրի կնքման պահին եղել է ավելին, քան օրենքով սահմանված տոկոսադրույքը»:* Տվյալ սահմանափակումը Օրենսգրքի 307-րդ հոդվածով չի նախատեսվել՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ պահանջի հիմքում ընկած գործարքի առերևույթ հակասելն օրենքի իմպերատիվ պահանջներին Օրենսգիրքը բոլոր դեպքերում դիտարկել է որպես վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու հիմք (310-րդ հոդվ., մաս 1, կետ 4):

Կարծում ենք, որ հարկ է բացառել նաև վճարման կարգադրություն արձակելու հնարավորությունն այն դեպքերում, երբ ներկայացված պահանջը կապված է համապարտ պարտավորության հետ, քանի որ ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարանը չի կարող դատական ակտ կայացնել մի անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, որը չի ներգրավվել գործի քննությանը:

Համապարտ պարտապանի դեմ վճարման կարգադրություն արձակելու անթույլատրելիությունը պայմանավորված է վիճելի իրավահարաբերության մասնակից համարվող մյուս համապարտ պարտապանների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Չէ՞ որ վճարման կարգադրության վարույթի շրջանակում դատարանը գործի ըստ էության քննություն չի իրականացնում, չի քննարկում գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը՝ արդյունքում կայացնելով դատական ակտ՝ վճարման կարգադրություն, որն ուղարկվում է բացառապես դիմումում նշված պարտապանին՝ միայն վերջինիս ընձեռելով սահմանված ժամկետում այն վիճարկելու հնարավորություն:

Նշվածի հետ մեկտեղ հարկ ենք համարում նշել, որ ճիշտ կլիներ թույլատրել բոլոր համապարտ պարտապանների դեմ վճարման կարգադրության արձակումն այն դեպքերում, երբ պարտատիրոջ կողմից ներկայացված դիմումում նրանք բոլորը նշված են: Նման դեպքերում վճարման կարգադրությունը կուղարկվեր բոլոր համապարտ պարտապաններին, նրանց կընձեռվեր դրա դեմ առարկելու հնարավորություն, իսկ չառարկելու դեպքում վճարման կարգադրությունը ենթակա կլիներ հարկադիր կատարման այն

նույն կանոններով, որոնցով կատարվում է համապարտ պարտականություն կրող մի քանի պատասխանողների դեմ ներկայացված հայցը բավարարող վճիռը:

Կարգադրության վարույթի առանձնահատկությունները: Վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը բաղկացած է հետևյալ ***երեք փուլերից***՝

1) վարույթի հարուցման փուլ,

2) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի քննության փուլ,

3) արձակված վճարման կարգադրությունն ուժի մեջ մտնելու փուլ:

Օրենսգրքի 308-րդ հոդվածի համաձայն՝ վճարման կարգադրություն արձակելու գործն ***ընդդատյա*** է պարտապանի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարանին:

Վճարման կարգադրություն արձակելու գործի վարույթը հարուցվում է դրամական պարտավորության շրջանակում պարտատեր համարվող անձի կողմից դատարան ***դիմումով*** ներկայացնելու միջոցով:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ դիմումը ձևակերպվում է գրավոր և ստորագրվում է դիմումը ներկայացնողի կամ նրա անունից այն ստորագրելու պատշաճորեն ձևակերպված լիազորություն ունեցող անձի կողմից:

Օրենսգրքի 309-րդ հոդվածը սահմանում է վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը ներկայացվում է գրավոր, ընդ որում՝ դրանում պետք է նշվեն՝

1) առաջին ատյանի դատարանի անվանումը, որին ներկայացվում է դիմումը,

2) դիմողի անունը, հաշվառման վայրի հասցեն, անձնագրային տվյալները, իսկ իրավաբանական անձ դիմողի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, ինչպես նաև դիմողի ֆաքսի, հեռախոսի համարը կամ էլեկտրոնային հասցեն,

3) պարտապանի անունը (անվանումը) և հաշվառման[1] (գտնվելու) վայրի հասցեն,

4) հիմնական և լրացուցիչ պահանջների հիմքն ու չափը՝ առանձին-առանձին,

5) պահանջը հաստատող ապացույցները,

6) պահանջ՝ վճարման կարգադրություն արձակելու մասին,

7) հայտարարություն առ այն, որ պահանջը կապված չէ դեռևս չկատարված հանդիպակաց պարտավորությունների հետ, կամ հանդիպակաց պարտավորություններն արդեն կատարված են,

8) կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը[2]:

---

[1] Օրենսգրքի 309-րդ հոդվածում օգտագործվում է «բնակության վայրի հասցե» կապակցությունը, մինչդեռ պետք է նշվեր «հաշվառման վայրի հասցե», քանի որ դիմումի ընդդատության հարցը կարգավորելիս օրենսդիրը հիմք է ընդունել պարտապանի հաշվառման վայրը: Ընդհանուր կանոնի ուժով, հաշվառման վայրի փոխարեն բնակության վայրը պետք է նշել այն դեպքերում, երբ կողմը չունի հաշվառման վայր (Օրենսգրքի 121-րդ հոդվ., մաս 2, կետ 3):

[2] Հարկ է նշել, որ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի կողմից 2006 թ. դեկտեմբերի 12-ին ընդունված «Վճարման եվրոպական կարգադրության մասին» թիվ 1896/2006 կանոնակարգով նախատեսվում է, որ վճարման կարգադրության դիմումները, ինչպես նաև արձակված կարգադրության դեմ ներկայացվող առարկությունները ներկայացվում են կանոնակարգին կից սահմանված ձևաթղթերը լրացնելու միջոցով: Հետևելով կանոնակարգի պահանջներին՝ Եվրոպական միության մի շարք երկրներ ազգային մակարդակում ևս դատական իշխանության պաշտոնական կայքերում հրապարակել են վճարման կարգադրություն արձակելու դիմումների, դրանց դեմ ներկայացվող առարկությունների ձևաթղթեր, իսկ դատավարական օրենսդրություններով էլ սահմանել են այդ ձևաթղթերը լրացնելու միջոցով (հաճախ միայն էլեկտրոնային եղանակով) դրանք ներկայացնելու պահանջ: Նման մոտեցումը, անկասկած, բավականին հեշտացնում է ոչ միայն անիրազեկ քաղաքացիների կողմից իրենց իրավունքների դատական պաշտպանության իրավունքի իրականացումը, այլ նաև թեթևացնում է դատարանների գործը՝ նրանց զերծ պահելով ավելորդ փաստաթղթաշրջանառությունից, անհարկի ծավալուն կամ անկանոն շարադրված փաստաթղթերն ընթերցելու անհրաժեշտությունից, միևնույն ժամանակ թույլ է տալիս վճարման կարգադրության վարույթներով փաստաթղթաշրջանառութ-

Դիմումին կցվում են պահանջը հաստատող ապացույցները: Եթե պարտավորությունն ապահովված է գրավով, և դիմումատուն ցանկանում է հանդես գալ որպես գրավով ապահովված պարտատեր, ապա դիմումին պետք է կցվի նաև գրավի պայմանագիրը: Ներկայացուցչի կողմից ստորագրվելու դեպքում դիմումին պետք է կցվի նրա լիազորությունը հաստատող համապատասխան փաստաթուղթ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետով քննարկվող վարույթի կարգով դատարան դիմելիս ***դիմողն ազատված է պետական տուրքը վճարելու պարտականությունից:*** Հետևում է, որ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումին, ըստ գործող իրավակարգավորման, պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր կամ պետական տուրքի գծով արտոնություններ տրամադրելու վերաբերյալ միջնորդություններ չեն կցվում[1]:

յունն ամբողջովին տեղափոխել էլեկտրոնային հարթակ՝ վարույթը դարձնելով շատ ավելի արագ, արդյունավետ և նվազ ծախսատար:

[1] Կարծում ենք, որ «Պետական տուրքի մասին» օրենքով նպատակահարմար կլինի առնվազն մի շարք սուբյեկտների համար սահմանել վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելու համար պետական տուրք: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանների վարույթում գտնվող վճարման կարգադրություններ արձակելու դիմումների ճնշող մեծամասնությունը (շուրջ 80%-ը) ներկայացվում է բանկերի, վարկային և հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող կազմակերպությունների, էներգա-, գազա- և ջրամատակարարում իրականացնող մասնավոր կազմակերպությունների կողմից: Միայն 2018 թ. ընթացքում դիմումների թիվը գերազանցել է 50.000-ը: Իրավաչափ հարց է առաջանում, թե ինչու՞ պետությունը՝ ի դեմս դատական համակարգի, պետք է անվճար ծառայություններ մատուցի նշված կազմակերպություններին: Եթե խնդիրը զուտ վճարման կարգադրության գործիքակազմի կիրառումը խրախուսելու մեջ է, կարծում ենք, որ նման խրախուսում կլինի նաև փոքր դրույքաչափը (օրինակ՝ բազային տուրքի չափով): Սակայն ընդհանրապես պետական տուրքից ազատելը, մեր կարծիքով, ոչնչով հիմնավորված չէ, պետական բյուջեի վրա առաջացնում է անհարկի ծանրաբեռնվածություն, գուցե նաև նպաստում է դատարանների գերծանրաբեռնվածության առաջացմանը, քանի որ չի «աշխատում» պետական տուրքի կանխարգելիչ գործառույթը:

Քանի որ վճարման կարգադրություն արձակելու դեպքում դիմումը և կից փաստաթղթերը դրա հետ մեկտեղ պետք է ուղարկվեն պարտապանին, Օրենսգրքի 309-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ նշված փաստաթղթերը դատարան են ներկայացվում երկու օրինակից[1]:

Օրենսգիրքը սահմանել է վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ ***դիմումների քննության երկշաբաթյա ժամկետ***: Ընդ որում՝ առաջին ատյանի դատարանը դիմումը քննում է ***առանց դատական նիստ հրավիրելու*** (Օրենսգրքի 311-րդ հոդվ., մաս 1):

Դիմումի քննության արդյունքներով դատարանը պետք է ձեռնարկի հետևյալ գործողություններից մեկը՝

ա) արձակի վճարման կարգադրություն,

բ) ամբողջովին մերժի վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը,

գ) մասամբ մերժի վճարման կարգադրություն արձակելու դիմումը՝ մյուս մասով արձակելով վճարման կարգադրություն:

Հարկ է նկատի ունենալ, որ դիմումն ամբողջովին կամ մասամբ մերժելու դեպքում դատարանը պետք է կայացնի վճարման կարգադրություն արձակելու դիմումը համապատասխանաբար ամբողջովին կամ մասամբ մերժելու մասին որոշում:

Օրենսգրքում էապես ընդլայնվել և հստակեցվել են վճարման կարգադրություն արձակելու մասին ***դիմումը մերժելու հիմքերը***: Մասնավորապես, 310-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ դիմումը մերժվում է այն մասով, որով՝

1) այն չի համապատասխանում Օրենսգրքի 307-րդ, 308-րդ կամ 309-րդ հոդվածների դրույթներին (այն է՝ ներկայացվել է ընդդատության, վարույթի թույլատրելիության կամ դիմումի ձևին, բո-

[1] Սահմանված պահանջը խնդրահարույց է այն իմաստով, որ կիրառելի չէ էլեկտրոնային եղանակով վճարման կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելու դեպքերի նկատմամբ: Մեր կարծիքով, այն համահունչ չէ Օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ մասին, ըստ որի՝ դատավարության մասնակիցները և այլ անձինք սույն օրենսգրքով նախատեսված գրավոր փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, հայցադիմումի պատասխան, միջնորդություն և այլն) կարող են դատարան ներկայացնել առձեռն, էլեկտրոնային եղանակով կամ փոստով:

վանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջների խախտմամբ),

2) առկա է Օրենսգրքի 126-րդ կամ 127-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկը (այն է՝ առկա է հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու այնպիսի հիմք, որը, հաշվի առնելով կարգադրության վարույթի էությունը, կիրառելի է դրա նկատմամբ),

3) պահանջն առերևույթ հիմնավորված չէ,

4) պահանջի հիմքում ընկած գործարքն առերևույթ հակասում է օրենքին,

5) առկա է նույն անձանց վերաբերյալ, միևնույն փաստական հիմքերով և միևնույն պահանջի վերաբերյալ վճարման կարգադրություն արձակելը մերժելու մասին որոշում:

Հարկ է նկատել, որ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ որոշումը խոչընդոտ չէ մերժված մասով պահանջը հայցային վարույթի կարգով ներկայացնելու համար (310-րդ հոդվ., մաս 2):

Վճարման կարգադրություն արձակելու դիմումն ամբողջովին մերժելու մասին որոշում չկայացնելու դեպքում դատարանն արձակում է վճարման կարգադրություն, որը դիմումի և կից փաստաթղթերի կրկնօրինակների հետ մեկտեղ ոչ ուշ, քան արձակվելու հաջորդ օրն ուղարկվում է պարտապանին (312-րդ հոդվ., մաս 2):

Նախկին օրենսգրքի 204.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելուց առաջ դատարանը դիմողին պետք է հնարավորություն տար արտահայտելու իր դիրքորոշումը, այդ թվում՝ հեռակա կարգով (ֆաքս, էլեկտրոնային փոստի միջոցներ և այլն): Հաշվի էր առնվում այն, որ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունը գործնականում հաճախ օգտագործվում է պահանջը հիմնավորող լրացուցիչ փաստեր և ապացույցներ ներկայացնելու, պարտապանի՝ դիմումում նշված հասցեն ճշգրտելու, դիմումում առկա այլ թերություններ վերացնելու համար:

Քանի որ գործող Օրենսգիրքը պատշաճ դիմում ներկայացնելու բեռն ամբողջովին դրել է պարտատիրոջ վրա, իսկ դիմումի թվարկված արատները դիտարկել է որպես այն մերժելու հիմք, նոր կարգավորումներով դատարանն ազատվել է դիմումը մերժելուց

առաջ դիմողի դիրքորոշումը ստանալու անհրաժեշտությունից:

Նույն տրամաբանությամբ դատարանն ազատվել է նաև պատասխանողի հասցեի սխալ լինելու պատճառաբանությամբ վճարման կարգադրությունը դատարանի գրասենյակ վերադարձվելու դեպքում այդ մասին դիմողին տեղեկացնելու, պարտատիրոջը պարտապանի հասցեն ճշգրտելու հնարավորություն տալու և ճշգրտված հասցեով արձակված վճարման կարգադրությունը կրկին ուղարկելու պարտականությունից (վերջինս նախատեսվել էր «ՀՀ դատարանների կողմից վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի և դրա փաստաթղթավորման օրինակելի կարգը հաստատելու մասին» ԴՆԽ 21.02.2006 թ. թիվ 91 որոշման 8.1-8.3 կետերով[1]):

Վճարման կարգադրությունը: Օրենսգիրքը վճարման կարգադրության հասկացությունը չի սահմանում՝ ի տարբերություն ՌԴ ՔԴՕ-ի, որի 121-րդ հոդվածում դատական հրամանը սահմանվում է որպես դատական որոշում, որը կայացվում է դատավորի կողմից միանձնյա, օրենսգրքով նախատեսված պահանջներով պարտապանից դրամական գումարներ բռնագանձելու կամ շարժական գույք վերցնելու վերաբերյալ դիմումների հիման վրա:

Հաշվի առնելով կարգադրության վարույթի առանձնահատկությունները՝ ***վճարման կարգադրությունը կարելի է բնորոշել որպես պարտապանից որոշակի դրամական գումարներ բռնագանձելու պահանջով դիմումի հիման վրա դատարանի կողմից միանձնյա, առանց դատական նիստ հրավիրելու և առանց պահանջի հիմնավորվածությունն ըստ էության ստուգելու կայացվող դատական ակտ[2]:***

Օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում են վճարման կարգադրության ***բովանդակությանը ներկայացվող պահանջները:*** Մասնավորապես, վճարման կարգադրությունը պետք է պարունակի՝

1) նշում առ այն, որ առաջին ատյանի դատարանն ըստ էության

[1] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=33796:

[2] Վճարման կարգադրության իրավական բնույթի մասին ավելի մանրամասն տե՛ս **Մեղրյան Ս. Գ.,** Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 54-70:

չի ստուգել պահանջի հիմնավորվածությունը,

2) կարգադրություն՝ երկու շաբաթվա ընթացքում կատարելու հետևյալ գործողություններից որևէ մեկը՝

ա. կատարել վճարման պահանջը, եթե պարտապանը պահանջը հիմնավորված է համարում,

բ. առաջին ատյանի դատարան ներկայացնել գրավոր առարկություն, եթե պարտապանը ներկայացված պահանջը մի մասով համարում է չհիմնավորված՝ մյուս մասով կատարելով վճարման պահանջը,

գ. առաջին ատյանի դատարան ներկայացնել գրավոր առարկություն, եթե պարտապանը ներկայացված պահանջը համարում է չհիմնավորված,

3) նշում այն մասին, որ առարկություն ներկայացնելու դեպքում պահանջի վիճարկված մասը կարող է քննվել ըստ էության հայցային վարույթի կարգով, որի դեպքում պարտվող կողմը կրելու է դատական ծախսերը,

4) նշում այն մասին, որ վճարման կարգադրությունն ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում առարկություն չներկայացնելու դեպքում վճարման կարգադրությունը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման:

Վճարման կարգադրությունը վերացնելու հիմքերը և կարգը: Դատավարագիտության մեջ տեսակետ է արտահայտվում, որ դատական հրամանը, վճռի հետ շատ ընդհանրություններ ունենալով հանդերձ, նրա տարատեսակ չի համարվում և ունի ավելի նվազ իրավաբանական ուժ, քան դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը, որովհետև դատավարական օրենսդրությունը նախատեսում է դրա վերացման պարզեցված կարգ[1]: Եվ իրոք, եթե ***պարտապանը վճարման կարգադրությունը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում ներկայացնում է առարկություն***, կարգադրությունն արձակած դատարանը որոշում է կայացնում այն վերացնելու մասին (313-րդ հոդվ., մաս 1, կետ 1):

Ի տարբերություն Նախկին օրենսգրքի 204.7-րդ հոդվածի՝ Օրենսգրքի 313-րդ հոդվածով սահմանվել են արձակված վճարման

[1] Տե՛ս Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации. Под ред. **М.С. Шакарян**, М., Изд. «Кодекс», 2003, էջ 243:

կարգադրությունը վերացնելու ևս երկու հիմքեր:

1) Դատարանը վերացնում է վճարման կարգադրությունը, եթե ***պարտապանը կատարել է վճարման պահանջը***: Հարկ է նկատի ունենալ, որ արձակված վճարման կարգադրությունը տվյալ հիմքով կարող է վերացվել այն դեպքերում, երբ պահանջը կատարվել է վճարման կարգադրությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Եթե նույն ժամկետում պարտապանը վճարման կարգադրության դեմ ներկայացնում է առարկություն՝ հիմքում դնելով մինչև վճարման կարգադրություն արձակելը պահանջը կատարած լինելու փաստը, վճարման կարգադրությունը պետք է վերացվի ոչ թե քննարկվող, այլ 313-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով: Ինչ վերաբերում է այն իրավիճակներին, երբ կարգադրության առարկա պահանջը կատարվում է կամ այն կատարելու փաստը հավաստող փաստաթղթերը դատարան են ներկայացվում օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետն անցնելուց հետո, ապա այդ դեպքերում վճարման կարգադրություն արձակած դատարանը չի կարող վերացնել այն, քանի որ պարտապանի կողմից վճարման կարգադրությունը ստանալու օրվանից երկու շաբաթվա ընթացքում դատարանում առարկություն չստացվելու դեպքում վճարման կարգադրությունը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ (314-րդ հոդվ.), այդ թվում՝ դառնում է անփոփոխելի[1]: Ասվածը նշանակում է, որ դատարանը պարտատիրոջ պահանջով պետք է տա կատարողական թերթ: Այլ է խնդիրը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով կատարողական վարույթը ենթակա է կարճման, քանի որ կատարողական թերթը փաստացի կատարվել է:

2) Դատարանը վերացնում է վճարման կարգադրությունը, եթե ***անհնարին է դիմումում նշված հասցեով վճարման կարգադրությունը պարտապանին առաքելը:*** Օրենսգրքի 276-րդ հոդվածի համաձայն՝ արձակված վճարման կարգադրությունը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ, եթե պարտապանի կողմից վճարման

[1] Վճռի օրինական ուժի մեջ մտնելու իրավական հետևանքների մասին մանրամասն տե՛ս **Մեղրյան Ս. Գ.,** Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 152-164:

կարգադրությունն ստանալու օրվանից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դատարանը չի ստանում առարկություն: Ակնհայտ է, որ վճարման կարգադրության դեմ առարկելու իրավունքն իրացնելու կարևորագույն նախապայմանը պարտապանի կողմից արձակված կարգադրությունը ստանալն է, դրա մասին պատշաճորեն իրազեկված լինելը: Եթե ինչ-ինչ պատճառներով դիմումում նշված հասցեով վճարման կարգադրությունը պարտապանին առաքել չի հաջողվում, և որպես հետևանք՝ պարտապանը չի տեղեկացվում իր վերաբերյալ վճարման կարգադրություն արձակելու մասին, զրկված է լինում դրա դեմ առարկելու իրավունքն իրացնելու հնարավորությունից, արձակված վճարման կարգադրությունն օրինական ուժի մեջ մտնել չի կարող:

Վճարման կարգադրությունը պարտապանին առաքելու անհնարինության փաստը դատարանին հայտնի դառնալու պահից վերջինս իր նախաձեռնությամբ պետք է որոշում կայացնի այն վերացնելու մասին: Բնականաբար, որպես քննարկվող հանգամանքը հաստատող ապացույց կարող է դիտարկվել փոստի մարմիններից ստացված հետադարձ ծանուցումն այն մասին, որ նշված հասցեում նման անձ չի բնակվում, նման հասցե գոյություն չունի, այն թերի է և այլն:

Վճարման կարգադրության օրինական ուժի իրավական հետևանքները: Ինչպես նշվել է, այն դեպքում, երբ պարտապանի կողմից վճարման կարգադրության ստացման մասին հետադարձ ծանուցումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում դատարանն առարկություն չի ստանում կամ ստանում է առարկություն, որը պատասխանողն ուղարկել է երկշաբաթյա ժամկետի խախտմամբ, ապա վճարման կարգադրությունը ստանում է օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և ենթակա է հարկադիր կատարման: Այդուհանդերձ, օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալը չի նշանակում, որ վճարման կարգադրության և օրինական ուժի մեջ մտած վճռի իրավական հետևանքները նույնական են: Վճարման կարգադրության օրինական ուժի հետևանքները փոքր-ինչ այլ են և՛ կազմով, և՛ բովանդակությամբ, ինչը պայմանավորված է նրա իրավական բնույթով:

Օրինական ուժի մեջ մտնելուց հետո վճարման կարգադրությունը ձեռք է բերում ***անհերքելիություն:*** Ի տարբերություն վճռի՝

վճարման կարգադրության անհերքելիությունը ծագում է ոչ թե դատական ակտը բողոքարկելու իրավական բոլոր միջոցները սպառվելու, այլ սահմանված ժամկետում դրա վերաբերյալ առարկություններ չստանալու դեպքում:

Օրինական ուժի մեջ մտած վճարման կարգադրությանը հատուկ է նաև ***բացառիկության*** հատկանիշը: Նախագծով օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունները դիտարկվել են որպես եզրափակիչ դատական ակտեր (հոդվ. 5, մաս 2): Միևնույն ժամանակ, ըստ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի առկայությունը սահմանվել է որպես համապատասխանաբար հայցադիմումի ընդունումը մերժելու և գործի վարույթը կարճելու հիմք:

Վճարման կարգադրությունը, ինչպես բոլոր այլ դատական ակտերը, օժտված է ***պարտադիրության*** և ***կատարելիության*** հատկանիշներով: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ Օրենսգրքի 5-րդ հոդվածում որևէ բացառություն վճարման կարգադրության պարտադիրության և կատարելիության կապակցությամբ չի սահմանվում: Դեռ ավելին, սահմանվում է, որ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունը ենթակա է հարկադիր կատարման: Դրանով էլ պայմանավորված է այն, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 2-րդ հոդվածում վճարման կարգադրությունը ևս դիտարկվում է որպես հարկադիր կատարման ենթակա դատական ակտ (կատարման հիմք), որի հիման վրա դատարանը տալիս է կատարողական թերթ:

Ի տարբերություն վճռի՝ վճարման կարգադրությանը հատուկ չէ ***նախադատելիությունը***, քանի որ կարգադրության վարույթում դատարանը պահանջի հիմնավորվածությունն ըստ էության չի ստուգում, գործի դատաքննություն չի իրականացնում և, հետևաբար, որոշակի փաստական հանգամանքներ վճարման կարգադրությամբ չի հաստատում և դրա հիմքում չի դնում՝ ելնելով այն ենթադրությունից, որ դիմողի կողմից ներկայացված հանգամանքները և ապացույցներն արժանահավատ են: Այդպիսի ենթադրությունը, հետևաբար նաև՝ դատական ակտի իրավաչափությունը կարող են

հերքվել առարկությունների ներկայացման փաստի ուժով: Նույն տրամաբանությամբ էլ այդ ենթադրությունը կարող է հաստատվել սահմանված ժամկետում առարկություններ չներկայացնելու փաստի ուժով: Վերջին հանգամանքը մի շարք հեղինակների հիմք է տվել կարծիք հայտնելու, որ չհերքված փաստերը պետք է դիտարկել հաստատված և նախադատելի նշանակություն ունեցող[1]: Սակայն, մեր կարծիքով, նման դիրքորոշումն այնքան էլ համոզիչ չի թվում, քանի որ փաստը չհերքելը կամ չվիճարկելը փաստն անվիճելի չի դարձնում: Ինչ վերաբերում է փաստն ընդունելուն, որի արդյունքում ընդհանուր կանոնի ուժով այն դառնում է անվիճելի (Օրենսգրքի 61-րդ հոդվ., մաս 5), ապա պետք է նկատի ունենալ, որ դա դեռ չի նշանակում, որ դատարանը սահմանված դատավարական ձևի պահանջների պահպանմամբ այն հետազոտել և հաստատված է համարել: Ընդհանուր կանոնի համաձայն՝ ընդունված փաստը դատարանը կարող է հաստատված համարել, եթե չկան ողջամիտ կասկածներ, որ կողմն այն չի ընդունել խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ճշմարտությունը թաքցնելու կամ ոչ իրավաչափ գործողություններ քողարկելու նպատակով (61-րդ հոդվ., մաս 5): Ակնհայտ է, որ կարգադրության վարույթում դատարանը չունի նման կասկածները ստուգելու, չվիճարկվող փաստերը գործի այլ հանգամանքների հետ համադրելու հնարավորություն: Հետևաբար, վճարման կարգադրություն արձակելու հիմք հանդիսացած առերևույթ արժանահավատ հանգամանքներին նախադատելի նշանակություն վերապահելը, մեր կարծիքով, արդարացված չէ:

Վճարման կարգադրությունը բողոքարկելու հիմքերը և կարգը: Ի տարբերություն Նախկին օրենսգրքի, որը չէր նախատեսում օրինական ուժի մեջ մտած վճարման կարգադրությունը բողոքարկելու հնարավորություն, գործող Օրենսգիրքը նման հնարավորություն սահմանել է, սակայն որոշակի առանձնահատկություններով:

Վճարման կարգադրությունը բողոքարկելու հնարավորություն

---

[1] Տե՛ս **Загайнова С.К.,** Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Дисс… д.ю.н., Екатеринбург, 2008, էջ 404:

Նախկին օրենսգրքով չնախատեսելը հիմնականում պայմանավորված էր այն իրողությամբ, որ, ինչպես և ներկայումս, նախատեսված էր օրինական ուժի մեջ մտած վճարման կարգադրությունը վիճարկելու և վերացնելու պարզեցված կարգ, որն իր հերթին հիմնավորվում է կարգադրության վարույթի պարզեցված բնույթով: Սահմանված ժամկետում պարտապանի կողմից վճարման կարգադրությունը չվիճարկելու դեպքում արձակված վճարման կարգադրությունը ձեռք է բերում վերջնական դատական ակտի ուժ, ինչի արդյունքում այն չի կարող վերանայվել նույնիսկ վերադաս դատական ատյանի կողմից:

Վճարման կարգադրության անբողոքարկելիությունը գործնականում մի շարք խնդիրներ էր առաջացնում հատկապես այն դեպքերում, երբ դատարանի բացթողումների, փոստի մարմինների ոչ պատշաճ աշխատանքի կամ այլ պատճառներով պարտապանն իր դեմ արձակված կարգադրության մասին սահմանված ժամկետում չէր ծանուցվում կամ ծանուցվում էր ուշացումով: Նման դեպքերում կա՛մ վճարման կարգադրության դեմ առարկություն չէր ներկայացվում, կա՛մ այն ստացվում էր սահմանված ժամկետն անցնելուց հետո, և առարկություն ներկայացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու փաստի ուժով վճարման կարգադրությունը մտնում էր ուժի մեջ:

Հաշվի առնելով այն, որ վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի ընթացակարգում միայն պարտապանի առարկությունն է արգելակում վճարման կարգադրության օրինական ուժ ստանալը և հարկադիր կատարումը, Վճռաբեկ դատարանն իր նախադեպային ակտերով արձանագրել է, որ վճարման կարգադրություն արձակելու մասին պատասխանողին ոչ պատշաճ ծանուցելը խոչընդոտում է պատասխանողի (պարտապանի)՝ այն վիճարկելու իրավունքի իրականացմանը, կոպտորեն խախտում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը և բավարար հիմք է գործն ըստ էության լուծող դատական ակտի ուժ ստացած վճարման կար-

գաղրությունը բեկանելու համար[1]:

Ներկայացված իրավիճակները գործնականում բացառելու նկատառումներից ելնելով՝ Օրենսգրքում ոչ միայն նախատեսվել է արձակված կարգադրությունը վերացնելու դատարանի պարտականությունն այն դեպքերում, երբ անհնարին է դիմումում նշված հասցեով վճարման կարգադրությունը պարտապանին առաքելը, այլ նաև սահմանվել է վճարման կարգադրության դեմ ***վերաքննիչ բողոք բերելու պարտապանի իրավունքը*** (360-րդ հոդվ., մաս 3): Ընդ որում՝ պարտապանը վճարման կարգադրության դեմ վերաքննիչ բողոք կարող է բերել մեկ ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ իմացել է կամ կարող էր իմանալ արձակված վճարման կարգադրության մասին (362-րդ հոդվ., մաս 3):

Հաշվի առնելով կարգադրության վարույթի պարզեցված բնույթը՝ Օրենսգրքով սահմանվել են վճարման կարգադրության դեմ ներկայացված վերաքննիչ **բողոքի քննության կրճատ ժամկետ և պարզեցված կարգ**: Մասնավորապես, ըստ 377-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վերաքննիչ դատարանը վճարման կարգադրության դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ ***երկշաբաթյա ժամկետում:*** Ընդ որում՝ վարույթ ընդունված բողոքը քննվում և դրա վերաբերյալ որոշումը կայացվում է ***գրավոր ընթացակարգով***՝ առանց դատական նիստ հրավիրելու[2]:

---

[1] **Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ3/0627/03/09 գործով 02.04.2010 թ. որոշումը, ՀՀՊՏ 2010.06.01/22(756).1, թիվ ՎԴ1/0522/05/09 գործով 01.10.2010 թ. որոշումը, ՀՀՊՏ 2010.12.01/60(794):**

[2] Թեև Օրենսգրքի 374-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ վճարման կարգադրության դեմ ներկայացված բողոքը կարող է քննվել նաև դատական նիստում, կարծում ենք, որ վճարման կարգադրության դեմ բերված բողոքները երկշաբաթյա ժամկետում քննելու և լուծելու վերաբերյալ պահանջի առկայության պայմաններում նշված ժամկետում դատական նիստ հրավիրելը և այդ մասին գործին մասնակցող անձանց ծանուցելը գործնականում անիրատեսական են: Մեր կարծիքով, հաշվի առնելով քննարկվող վարույթի շրջանակում դատական նիստ հրավիրելու աննպատակահարմարությունը (դատարանը պետք է ստուգի միայն ծանուցման փաստը), ճիշտ կլիներ 374-րդ հոդվածում ուղղակիորեն սահմանել, որ

Օրենսգրքով նախատեսվել են վճարման կարգադրության դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության հետ կապված վերաքննիչ դատարանի հատուկ ***լիազորություններ:*** Ըստ Օրենսգրքի 380-րդ հոդվածի 4-րդ մասի՝ վճարման կարգադրության դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ վճարման կարգադրությունը թողնելով օրինական ուժի մեջ, կամ բավարարելով վերաքննիչ բողոքը՝ վերացնում է վճարման կարգադրությունը:

Հարկ է նկատի ունենալ նաև այն, որ Օրենսգրքով սահմանված է վճարման կարգադրության դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված որոշումն ***օրինական ուժի մեջ մտնելու*** և, համապատասխանաբար, ***այն բողոքարկելու կրճատ ժամկետ:*** Ըստ Օրենսգրքի 387-րդ հոդվածի 1-ին մասի, բացի վճռից, այլ եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից 15 օր հետո:

Վճարման կարգադրության դեմ բերված բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած որոշումները հրապարակելու, գործին մասնակցող անձանց ուղարկելու, վճռաբեկության կարգով բողոքարկելու հատուկ կանոններ Օրենսգրքով չեն նախատեսվել:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ Կարգադրության վարույթին նվիրված նորմերում կատարված փոփոխություններն ընդհանուր առմամբ կարող են դրական գնահատվել: Իր ներկայիս տեսքով քննարկվող ինստիտուտը հանդես է գալիս որպես խախտված սուբյեկտիվ իրավունքների արագ և ռեալ դատական պաշտպանության մասին սահմանադրական դրույթների իրացման կարևորագույն երաշխիքներից մեկը, որը միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս բեռնաթափելու դատարանները, նրանց ազատելու մասնավոր-իրավական հարաբերություններից բխող գործերը քննելու բարդ ու ծախսատար դատավարական ձևից և գործերի քննության ընդլայնված ընթացակարգից:

վճարման կարգադրության դեմ բերված բողոքները քննվում են գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու:

ПРИКАЗНОЕ ПРОИЗВОДСТВО В НОВОМ ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССУАЛЬНОМ КОДЕКСЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ОБЩИЙ ОБЗОР И ОСНОВНЫЕ ИЗМЕНЕНИЯ

Сергей Мегрян
доцент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук

В статье рассматривается институт приказного производства, предусмотренный новым гражданско-процессуальным кодексом Республики Армения, проанализированы сущность и основные особенности данного вида производства, его основные преимущества и роль с точки зрения снижения судебной нагрузки, оптимизации рассмотрения и разрешения гражданских дел и повышения эффективности правосудия.

В рамках статьи мы детально рассмотрели весь спектр вопросов относительно процедуры выдачи приказа об оплате. Кроме того, обсуждаются новеллы процессуального законодательства в регулировании приказного производства, а также сформулированы некоторые замечания и предложения по усовершенствованию рассматриваемой процедуры.

ORDER FOR PAYMENT PROCEDURE IN THE NEW CIVIL PROCEDURAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA: GENERAL REVIEW AND MAJOR CHANGES

Sergey Meghryan
Associate Professor at the YSU Chair of Civil Procedure,
Candidate of Legal Sciences

In present article the institution of payment order envisaged in new Civil Procedural Code of the Republic of Armenia is considered. The essence and the main peculiarities of the procedure are analyzed, including its advantages and the role in the context of reducing court load, optimization of examination and resolution of civil cases and increasing of the effectiveness of the judicial system.

The author has made a detailed examination of all aspects related to issuing of payment order. Besides, the novelties of procedural legislation related to regulation of the procedure payment order issuance, as well as several remarks and suggestions are formulated aimed to fine - tuning of the mentioned proceedings.

Բանալի բառեր - *վարույթի տեսակներ, պարզեցված ընթացակարգեր, կարգադրության վարույթ, վճարման կարգադրություն, դատական հրաման:*
Ключевые слова: *виды производства, упрощенные процедуры, приказное производство, приказ о платеже, судебный приказ.*
Key words: *types of proceedings, simplified proceedings, order for payment procedure, order for payment, court order.*

ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ИСПОЛЬЗОВАНИЯ И ОХРАНЫ РАСТИТЕЛЬНОГО МИРА СЕНОКОСОВ И ПАСТБИЩ

Аида Искоян
Руководитель Научно-образовательного Центра экологического права ЕГУ, профессор

Становится все более очевидным, что исполнение природоохранного и природоресурсное законодательства является ключевой проблемой экологического права (права окружающей среды). В то время, как ряд правовых документов на международном, европейском уровнях продолжает увеличиваться, фактическое исполнение соответствующего закона остается недостаточным, что снижает эффективность права в этой сфере.

Природа подвергается давлению с разных сторон, в особенности в сфере сельского и лесного хозяйства, урбанизации, индустриального развития транспорта, туризма, использования химикалий и минералов[1].

Сенокосы и пастбища являются видами сельскохозяйственных угодий, они входят в категорию сельскохозяйственных земель, являясь ценными кормовыми угодьями. В Армении, как и в других странах, кормовые угодья – сенокосы и пастбища – представляют собой важный ресурс для развития животноводства и важный объект биоразнообразия. Состояние естественных пастбищ и сенокосов значительно ухудшилось в результате роста поголовья скота. Значительный рост использования природных экосистем отрицательно повлиял на биоразнообразие, на производство кормов и сельскохозяйственную продукцию, соответственно воздействуя на социально-экономическое состояние населения. Многие пастбища в стране деградированы в результате неэффективного планирования и использования сенокосов и пастбищ или его отсутствия. Указанное обстоятельство подтолкнуло Правительство РА к принятию Постановления

[1] Специальный доклад 14/2000 «Об экологизации общей экономической политике – Проблемы природы и ее охрана в Европе», АБ/NC221, с. 130.

относительно устойчивого управления пастбищами – Постановления Правительства от 28.10.2010 № 1477 и 14042011 «Об установлении Порядка использования пашнями и сенокосами».

Цель этих постановлений – обеспечить действенную политику относительно устойчивого управления пастбищами. Исходя из общих задач охраны и использования растительного мира, необходимо обеспечить сохранение видового многообразия растительного мира и устойчивость (жизнеспособность) полезных фитоценозов, поддерживать высокую биопродуктивность растительных сообществ, тем самым способствовать охране этого ценного, незаменимого объекта природы. Согласно этому Постановлению, «Договоры» относительно пользования пашнями и сенокосами, находящимися на землях, являющихся государственной собственностью, заключаются в простой письменной форме сроком на 3 года. Указанный порядок включает:

1. предмет договора,
2. права и обязанности Сторон,
3. платы за осуществляемые в рамках договора действия,
4. ответственность Сторон,
5. сроки действия Договора и его прекращение,
6. влияния непреодолимой силы.

Типовая форма использования сенокосов отличается лишь предметом Договора. Размер платы за использование пашней устанавливается наравне с земельным налогом, на находящийся под этой пашней участок земли. Такой же подход установлен для сенокосов. Постановление Правительства от 28. 2010 № 1477 утвердило типовую форму по использованию пашни и сенокоса.

Растительный мир сенокосов и пастбищ представляет собой довольно ценный природный ресурс, самостоятельный природный объект. Анализ национального законодательства показывает, что этот природный объект защищается в правовом порядке слабо. По традиции, они считаются сельскохозяйственными угодьями худшего качества. При изъятии сельскохозяйственных земель для несельскохозяйственных нужд именно эти угодья приносятся в жертву в первую очередь. Они рассматриваются как своего рода резерв для пополнения пашни, то есть угодьями низшего качества. Согласно этому Постановлению, руководителям общин рекомендуется обеспечить

рациональное использование сенокосов и пастбищ, являющихся собственностью общин, осуществлять в соответствии с указанным Постановлением, его целями и задачами. В частности, такими целями и задачами в этой сфере являются:

содействие процессам охраны и устойчивого использования сенокосов и пастбищ;

создание реальных условий по повышению урожайности, восстановлению сенокосов и пастбищ;

предотвращение ухудшения качественной характеристики и содействие благоприятному экологическому состоянию пашней и сенокосов;

до использования пашен и сенокосов составлять план пользования пашен с учетом количества животных (скота) на выпасе и урожайности.

С целью устойчивого и эффективного пользования пашней применяется система чередования пастбищных угодий. До начала выпаса общая пашня разделяется на разные пастбищных угодья с определенной очередностью выпаса. Очередность выпаса на этих угодьях меняется каждый год, а последнее угодье остается без выпаса – для «отдыха». Начало и окончание пастбищного сезона определяется каждый год, исходя из особенностей климатических условий. Для выпаса выделяется площадь, величина которой определяется исходя из «нормы пастбищной нагрузки». Эта норма определяется количеством крупного и мелкого рогатого скота, качеством рельефа.

Исходя из вышеуказанного, мы в свое время (1986-1987 гг.) предлагали следующее определение растительного мира. «Растительный мир – это совокупность диких растений, постоянно произрастающих в состоянии естественной свободы на территории государства»[1], а также в пределах его континентального шельфа.

Прежде всего, надо отметить, что растительный покров – важнейшая часть биосферы, определяющая ее состояние и протекающие в ней процессы. В современной практике наиболее распространен-

[1] См. Искоян А.Б., Правовое регулирование охраны и использование растительного мира, Ереван, 1987, с. 18.

ным является естественнонаучное понятие растительного мира, которое основано на выделении растений как особой категории организмов – элементов живой природы[1].

Анализируемая сфера правового регулирования вызвала в последние годы развитие национального законодательства, но, к сожалению, надо отметить его противоречивость, смешение понятий «лес» и «растительный мир». В понятие растительного мира включают и «лес».

К правовому регулированию охраны и использования диких растений можно, по нашему мнению, подходить с позиций двух противоположно направленных юридических принципов:

1) дозволено собирать все дикие растения, за исключением запрещенных;

2) дозволено собирать только те растения, в отношении которых имеется прямое разрешение компетентных органов государства.

Определенное время господствовал первый из названных принципов. Но, вероятно, дело идет к тому, что, по нашему мнению, от него следует отказаться и перейти к регулированию на основе второго принципа, т.е. ввести разрешительную (лицензионную) систему сбора лекарственных и технических растений в природной среде в основном на территории сенокосов и пастбищ. Эту систему можно было бы построить так, как она сложилась в охотничьем хозяйстве в отношении добычи пушнины охотниками-промысловиками и любителями, уделив при этом, достаточное внимание как самому праву граждан на сбор диких растений, так и взаимоотношениям сборщиков растительного мира с заготовительными организациями.

Охрана диких растений на территориях, используемых для производственных нужд сенокосов и пастбищ представляет собой охрану и использование растительного мира в сельскохозяйственном производстве, главным образом, в связи с эксплуатацией сенокосов и пастбищ, проведением мер по борьбе с сорняками, осуществлением мелиорации сельскохозяйственных земель, проведением работ по размещению и строительству водохранилищ, каналов и других водо-

---

[1] См. Тахтаджан А.Л., Четыре царства органического мира,. – Природа, 1973, № 2, с. 30-37.

хозяйственных объектов, трубопроводов, линий электропередач, железных и автомобильных дорог, других хозяйственно-технических объектов, требующих изъятия продуктивных земель для несельскохозяйственных нужд. Как раз в этих случаях, к сожалению, и имеет место изъятие сенокосов и пастбищ, как угодье низшего качества, разрушение экосистемы, деградация сенокосов и пастбищ.

Природные сенокосы предоставляют в пользование с целью заготовки сена, сроком от 7 до 10 дней. Статей 60 Земельного кодекса РА установлены запреты передачи гражданам и юридическим лицам на праве собственности земельных участков. К их числу пункт 10 статьи 60 ЗК относит участки, занятые пастбищами общего пользования за пределами административных границ общин, местами прохода скота, дорогами, природными колодцами, источниками и, по решению местных органов управления, иными объектами.

Задачи правовой охраны и регулирования использования диких растений в данной области практики заключаются в том, чтобы, исходя из общих задач охраны и использования растительного мира, обеспечить сохранение видового многообразия растительности и устойчивость (жизнеспособность) полезных фитоценозов, поддерживать высокую биопродуктивность растительных сообществ, добиваться получения наибольшего количества высококачественной фитомассы и ее эффективного использования для производственных нужд на хозяйственно эксплуатируемых участках.

С этой точки зрения, в первую очередь, необходимо обратиться к обсуждению вопросов правовой охраны и рационального использования сенокосов и пастбищ, составляющих значительную часть растительных ресурсов страны.

Как уже отмечалось выше, сенокосы и пастбища являются видами сельскохозяйственных угодий, входят в категорию земель сельскохозяйственного назначения. Сенокосы и пастбища, в особенности те, где доминирующим типом растительности являются луговые и степные сообщества растений, содержат большое количество медоносов, видов растений, которые могут существовать только в этих сообществах как основы биоразнообразия. Они, наконец, являются весьма существенным незаменимым элементом ландшафтов, поддерживают благоприятный рельеф поверхности, выполняют водоохранные

функции, служат средой обитания многих ценных видов диких животных, что способствует получению очень ценного продукта.

Из всего изложенного можно заключить, что растительный мир сенокосов и пастбищ представляет собой довольно ценный природный ресурс, элемент природной среды, который необходимо тщательно охранять и рационально использовать. Между тем анализ действующего законодательства и практики его применения показывает, что, в действительности, эти угодья слабо защищаются в правовом порядке, они не ограждены от пренебрежительного отношения к ним в процессе хозяйственного регулирования и производственной деятельности.

Как составные части земель сельскохозяйственного назначения сенокосы и пастбища должны были бы эффективно охраняться в соответствии с принципом приоритета охраны сельскохозяйственных земель, закрепленным в земельном законодательстве. Но практика правоприменения свидетельствует об обратном. Растительные ресурсы сенокосов и пастбищ нуждаются в усилении их охраны и улучшении рационального использования. В этом немалую роль должны сыграть правовые средства. В настоящее время правовое регулирование использования и охраны сенокосов и пастбищ пока остается на низком уровне.

По нашему мнению, в этих целях было бы целесообразно принять специальный законодательный акт – Закон «О сенокосах и пастбищах», в котором были бы определены наиболее общие принципиальные положения охраны и использовании растительных ресурсов на этих угодьях, а также распространить на него режим **особо охраняемых территорий, объектов.** Прежде всего, необходимо оградить сенокосы и пастбища от бесконтрольного и неоправданного сокращения их площади. Надо закрепить принцип, согласно которому площадь сенокосов и пастбищ в той или иной местности не должна сокращаться ниже научно обоснованного предела.

Понятие «лес», традиционно употребляемое в законодательстве (иногда в сочетании с понятиями, обозначающими виды земельных угодий, такими как пастбища, сенокосы), продолжительное время было достаточным для удовлетворения потребностей правового регулирования хозяйственной деятельности и житейской практики, свя-

занной с пользованием диких растений, поскольку этому понятию придавался широкий смысл. В понятие «леса» включались не только совокупность взаимосвязанных произрастающих древесных растений (что, собственно, лежит в основе юридического понятия «леса»), но и недревесные растения на определенных площадях, а также поверхность земли, водные объекты, животный мир и атмосферный воздух, образующие в комплексе лесной биогеоценоз. И до сего времени попытки расширенного толкования понятия «леса» продолжаются, что косвенно находит отражение и в Законодательстве РА, определяющем содержание лесопользования. Например, законодательство советского периода, согласно ст. 21 Основ лесного законодательства Союза ССР и союзных республик, к понятию лесных пользований в лесах, а также на землях государственного лесного фонда, не покрытых лесом, относились не только заготовка древесины, живицы и второстепенных лесных материалов (пней, коры, дуба и т.п.), но и побочные лесные пользования – сенокошение, пастьба скота, размещение ульев и пасек, заготовка древесных соков, заготовка и сбор дикорастующих плодов, орехов, грибов, ягод, лекарственных растений и технического сырья. Как видно, к побочным лесным пользованиям закон относил некоторые виды пользования недревесными растениями. Такой подход был обязателен для закрепления республиканским законодательством (Лесной кодекс Армении). Согласно ст. 35 указанных Основ лесного законодательства граждане имели право свободно пребывать в лесах, собирать дикорастущие плоды, орехи, грибы, ягоды и т. п. Это право граждан могло быть ограничено в порядке, определяемом законодательством Союза ССР и союзных республик, в интересах пожарной безопасности, ведения орехопромыслового, лесоплодового и лесосеменного хозяйства, а в лесах – заповедниках и других лесах-заказниках, национальных парках – в связи с установленным в них специальным порядком пользования.

Таким образом, «лес» и «растительный мир» не могут рассматриваться как эквивалентные понятия. Наоборот, они находятся в известном соподчинении. Лес, какой бы широкий смысл ни придавался этому понятию, не может заменить собой понятия «растительный мир». Лес может рассматриваться лишь как часть растительного мира, хотя и самая существенная его часть. В этом плане, растительный

мир сенокосов и пастбищ особо ценны. При сенокошении и пастьбе скота не происходит пользование лесом, как объектом природы, таким объектом выступает земля.

И надо согласиться с выводом О.И. Крассова[1], о том, что при сенокошении и пастьбе скота имеет место не лесохозяйственное землепользование (поскольку оно не связано с лесоразведением и лесовосстановлением), а сельскохозяйственное право землепользование. Эти отношения регулируются Земельным кодексом, однако, как нам представляется, таким объектом выступает не земля, как объект природы, а недревесные дикие растения.

Жизненная необходимость заботы об охране и рациональном использовании всех диких растений, а не только лесной растительности, привела к появлению законодательных решений, в содержании которых уже опоминается о растительном мире как о природном объекте, отличающемся от лесов.

Первые такого рода решения содержались в республиканских законах «Об охране природы» (14 мая 1958 года, Армения), в других республиках такие законы были приняты в период 1957-1963 годов.

Подавляющее большинство этих законов предусматривает охрану редких и ценных видов растений.

К сожалению, соответствующая сфера правового регулирования в законодательствах союзных республик этого периода развивалась слабо. Вопросы охраны диких растений фактически оказались только в компетенции местной власти. Однако в дальнейшем эта сфера правового регулирования начинает развиваться более интенсивно, уже на основе Конституции страны. В Конституции СССР 1977 г. впервые в практике конституционного законодательства употребляется понятие «растительный мир» – (1978г. Конституция Армянской ССР).

Известно, что в ст. 18 Конституции СССР говорилось, «в интересах настоящего и будущих поколений в СССР принимаются необходимые меры для охраны и научно обоснованного, рационального использования земель и ее недр, водных ресурсов, растительного и жи-

---

[1] См.: Крассов О.И., Право лесопользования в СССР. Автореф. дисс. док. юридических наук, М., 1991, с. 8.

вотного мира – для сохранения в чистоте воздуха и водных объектов , обеспечения воспроизводства природных богатств и улучшения окружающей человека природной среды».

В этом контексте необходимо рассмотреть правовую сущность дикой растительности, особенно вне лесов, так как основная часть сенокосов и пастбищ, находится вне лесов. В литературе (и не только правовой) и в законодательстве РА часто смешивают понятие «леса» и «дикой растительности». В этой связи необходимо рассмотреть соотношение этих двух понятий и институтов – лес и дикий растительный мир.

Лес – это совокупность всех растительных организмов, древесных, кустарниковых, травянистых и других растений, имеющих важное экологическое, экономическое и социальное значение[1]. Согласно Лесному Кодексу РА, лес – это совокупность взаимосвязанных и взаимодействующих компонентов биоразнообразия и природной среды, иных отведенных для облесения земель, с преобладанием древесно-кустарниковой растительности, минимальная площадь которых составляет 0,1 га, минимальная ширина – 10 метров и крона деревьев которых покрывает, «смыкается» не менее 30% данной территории, а также безлесные территории ранее лесистых лесных земель.

Принятое Правительством указанное выше Постановление – Порядок устанавливает условия эффективности управления и использования пастбищ и сенокосов, находящихся на землях государственной собственности. Целями и задачами этого акта являются:

- содействовать процессам охраны и устойчивого использования пастбищ и сенокосов в РА;

- создание условий по содействию повышения урожайности сенокосов и пастбищ;

- предотвращение ухудшения качественной характеристики и экологического состояния пашни и сенокосов;

- до использования пашни и сенокосов составляется «План пользования пашней» с учетом количества животных на выпасе и урожайности пашни с целью устойчивого и эффективного использования пастбищных угодий.

[1] Краткий юридический словарь, отв. ред. А.В. Малько, М., 2010.

Как уже было указано выше, до начала сезона выпаса общая пашня разделяется на разные пастбищные угодья с определенной очередностью выпаса. Очередность выпаса этих угодий меняется каждый год. Начало и окончание выпаса меняется каждый год, а последнее угодье остается без выпаса - для отдыха (залежь). Начало и окончание пастбищного сезона, определяется каждый год, исходя из климатических условий. Выделяется площадь для выпаса, величина которой исходя из нормы «пастбищной нагрузки». Эта норма определяется количеством крупного и мелкого рогатого скота, качества рельефа, его экологического состояния.

Природные сенокосы предоставляются в пользование с целью заготовки сена, сроком от 7 до 10 дней. В ст. 60 ЗК – «Земли, не передаваемые гражданам и юридическим лицам на праве собственности» в числе иных оснований закрепляет: «Земли, занятые пастбищами общего пользования, местами прохода скота, дорогами, природными водными колодцами, источниками и иными объектами - по решению органов местного самоуправления».

Резюмируя вышеуказанное, целесообразно, на наш взгляд, сформулировать ряд правил, охватывающих следующие принципы – такие как:

поддержание общего экологического баланса растительного сообщества, так и регулирование использования растительного мира с учетом охранительных требований. На наш взгляд, обобщая указанное выше, необходимо оградить сенокосы и пастбища от бесконтрольного и неоправданного сокращения их площади, закрепив следующие подходы:

- площадь сенокосов и пастбищ в той или иной местности не должна сокращаться ниже научного предела, то есть повысить приоритетность сенокосов и пастбищных угодий в структуре земель сельскохозяйственного назначения (ст. 9 ЗК РА);
- комплекное использование растительных ресурсов сенокосов и пастбищ, предусмотрев возможность для ведения пчеловодства, сбора лекарственного и технического сырья;
- устанавливать запреты и ограничения в целях охраны растительного мира (покрова) сенокосов и пастбищ от разрушения, загрязнения и засорения;

- оградить сенокосы и пастбища от бесконтрольного и неоправданного сокращения их площади;
- площадь сенокосов и пастбищ в той или иной местности не должна сокращаться ниже научного предела (как эта применяется в отношении других ресурсов, например, экологические стоки, среднегодичный прирост леса в данной местности, нормы пастбищной нагрузки и т.д.), т.е. повысить приоритетность сенокосов и пастбищных угодий в структуре земель сельскохозяйственного назначения (ст. 9 ЗК);
- комплексное использования растительных ресурсов сенокосов и пастбищ, предусмотрев возможность для ведения пчеловодства, сбора лекарственного и технического сырья и т.д.;
- установить запреты и ограничения в целях охраны растительного покрова сенокосов и пастбищ от разрушения, загрязнения и засорения;
- ограничить применение на сенокосах и пастбищах тяжелых сельскохозяйственных машин, которые разрушают травянистость покрова и почву;
- установить запрет проезда автомобилей и других тяжелых транспортных средств через сенокосы и пастбища вне дорог;
- запретить постоянное и временное складирование стройматериалов, удобрений, кладбище ядохимикатов, выполнения других работ, которые могут привести к порче сенокосов и пастбищ, их экологической характер.

ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ԵՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աիդա Իսկոյան
ԵՊՀ էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի դեկավար, պրոֆեսոր

Սույն հոդվածը նվիրված է խոտհարքների և արոտավայրերի բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտի օրենսդրության և իրավակիրառման պրակտիկայի վերլուծությանը՝ որպես գյուղատնտեսական հողատեսքերի կատեգորիա, որպես ար-

ժեքավոր կերային հանդակ, կարևոր ռեսուրս անասնապահության զարգացման համար և կարևոր կենսաբազմազանության օբյեկտ: Հաշվի առնելով բուսական աշխարհի դերը և նշանակությունը սոցիալ-տնտեսական վիճակի և կենսաբազմազանության պահպանության համար՝ առաջարկվում է ընդունել «Խոտհարքների և արոտավայրերի մասին» հատուկ օրենք:

PROBLEMS OF LEGAL REGULATION OF THE USE AND PROTECTION OF FLORA IN HAYS AND PASTURES

Aida Iskoyan
Head of Environmental Law Resource Center, Professor, YSU

The present article is devoted to the analysis of the legislation and practice in the sphere of the use and protection of flora in hays and pastures as a category of agricultural lands and valuable feeding plots, important resource for development of cattle breeding and an important biodiversity object. Considering the role and the importance of flora for the social-economic state and protection of biodiversity, a suggestion is drawn up to adopt a special law “On Hays and Pastures”.

Բանալի բառեր - *վայրի բուսական աշխարհ, արոտավայրեր, խոտհարքներ, կայուն կառավարում, կենսաբազմազանություն:*
Ключевые слова: *дикий растительный мир, сенокосы, пастбища, устойчивое управление, биоразнообразие.*
Key words: *wild plants, pastures, grazing, sustainable management, biodiversity.*

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Տիգրան Մարկոսյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ,
իրավ. գիտ. թեկնածու,
ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն

Հայցային վաղեմությունը խախտված քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանություն հայցելու համար պետության կողմից երաշխավորված ժամանակահատվածն է: Այն կոչված է նպաստելու քաղաքացիական շրջանառությունում անկայունության և անորոշության վերացմանը, քանի որ դատական պաշտպանություն հայցելու համար որոշակի ժամկետի բացակայությունը թույլ կտար իրավատիրոջը իրավախախտին մշտապես պահել պետական հարկադրանքի կիրառման սպառնալիքի տակ[1]: Բացի դրանից՝ իրավունքի խախտման մասին իմանալուց հետո դատարան դիմելու տևական հապաղումը կարող է առաջացնել պատասխանողի կողմից իր առարկությունների հիմնավորմանն ուղղված ապացույցներ ներկայացնելու դժվարություններ[2]:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալը չի զրկում իրավատիրոջը հայց հարուցելու իրավունքից, սակայն վիճող կողմի կողմից այդ փաստի վկայակոչումն ինքնուրույն հիմք է հայցը մերժելու համար: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[3] 335-րդ հոդվածի համաձայն, իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ, իսկ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին

---

[1] Տե՛ս Гражданское право, В 4 т., Т. 1, Общая часть, учеб. для студентов вузов / [***Ем В.С. и др.***]; отв. ред. – ***Е.А. Суханов,*** 3-е изд., перераб и доп., М., Волтерс Клувер, 2010, էջ 631:

[2] Տե՛ս ***П.А. Ильичев,*** Исковая давность. Проблемы теории и правоприменительной практики, Дис.... канд. юрид. наук, М., 2014, էջ 32:

[3] Ընդունվել է 05.05.1998 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):

օրենքով սահմանված կարգով դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի[1] (այսուհետ՝ ՔԴՕ) ընդունումը քաղաքացիադատավարական օրենսդրությունը հայցային վաղեմության կիրառման կարգի վերաբերյալ լռում էր, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասը միայն սահմանում էր, որ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Արդյունքում առկա էին գործի դատաքննության փուլում հայցային վաղեմության կիրառման մասին միջնորդություն ներկայացվելու դեպքում ապացուցման առարկան փոփոխելու և այդ փուլում ապացույց ներկայացնելու իրավունքի իրականացման հետ կապված չլուծված հարցեր[2]:

Ավելին՝ դատարանը ստիպված էր իրականացնել գործի ըստ էության քննություն և հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությանը կարող էր անդրադառնալ միայն գործն ըստ էության լուծող դատական ակտում: Այսպես՝ ՀՀ նախկին քաղաքացիական դատավարության օրենսգրքի[3] գործողության ժամանակ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության լուծման հարցը, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հայցային վաղեմության ժամկետի լրանալը սահմանել է որպես հայցը մերժելու հիմք, ինչը նշանակում է, որ անգամ այն դեպքում, երբ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմում է ներկայացրել քաղաքացիական դատավարության սկզբնական փուլերում (գործը դատաքննության նախապատրաստելու), դատարանը, այնուամենայնիվ, պետք է գործը քննի ըստ էության և վերջնական դատական ակտում գնահատական տա հայցային վաղեմության կիրառման վե-

[1] Ընդունվել է 09.02.2018 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), հոդ. 208:

[2] Առավել մանրամասն տե՛ս ***Տ. Ա. Մարկոսյան***, Հայցային վաղեմության կիրառման դատավարական հիմնախնդիրները/ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, գլխ. խմբ.՝ ***Գ. Ս. Ղազինյան,*** Եր., ԵՊՀ, 2017, էջեր 286-288:

[3] Ընդունվել է 17.06.1998 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998,09,09/20(53):

րաբերյալ միջնորդությանը»[1]: Որպես հետևանք՝ հաճախ դատական ակտերում տեղ էր գտնում ձևակերպում առ այն, որ հայցը ենթակա է մերժման՝ ի թիվս այլ հիմքերի, նաև հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու հիմքով[2], ինչն ակնհայտորեն չէր բխում հայցային վաղեմության ինստիտուտի ինքնուրույն դատավարական նշանակությունից:

Շարադրվածն անհրաժեշտ է դիտարկել դատավարական խնայողության սկզբունքի լույսի ներքո, որը կարելի է բնորոշել որպես դատարանի և դատավարության մասնակիցների նվազագույն ժամանակային և ֆինանսական ծախսերով արդարադատության իրականացումը երաշխավորող հիմնադրույթ[3]: Այն մի կողմից ենթադրում է անհրաժեշտ գործիքակազմի առկայություն դատավարական օրենսդրությունում և հետևաբար հասցեագրված է օրենսդրին, իսկ մյուս կողմից հանդես է գալիս որպես ուղենիշ դատարանների կողմից հայեցողական լիազորությունների իրականացման ժամանակ:

Օրինաստեղծման փուլում դատավարական խնայողության սկզբունքի երաշխավորման պահանջը բխում է Սահմանադրության[4] 75-րդ հոդվածից, որի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթա-

---

[1] Տե՛ս, օրինակ, Վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով 2014 թվականի հուլիսի 18-ի որոշումը:

[2] Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՆԴ/2112/02/17 քաղաքացիական գործով 2017 թվականի նոյեմբերի 13-ի և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/2585/02/15 քաղաքացիական գործով 2017 թվականի նոյեմբերի 27-ի վճիռները:

[3] Առավել մանրամասն տե՛ս ***А.А. Алешкин***, Принцип процессуальной экономии: за и против// Вестник Омского университета, Серия «Право», 2014, №3(40) էջեր 179-186, ***К.Ю. Хатмуллин***, Принцип процессуальной экономии и право-временные средства его обеспечения // Вестник Омского университета, Серия «Право», 2014, №3 (40), էջեր 196-201:

[4] Ընդունվել է 05.07.1995 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ:

ցակարգեր: Ինչ վերաբերում է իրավակիրառ գործունեության ընթացքում դատավարական խնայողության հրամայականին, ապա այն իր արտացոլումն է գտել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի[1] 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում ամրագրված դատավորի վարքագծի կանոնում, ըստ որի՝ ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է առանց արդարադատության շահերին վնասելու ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը:

Նման պայմաններում հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության գնահատումը բացառապես գործի ըստ էության քննությունն ավարտելուց հետո իրականացնելն անհամատեղելի էր դատավարական խնայողության սկզբունքի հետ, քանի որ հայցային վաղեմության կիրառման մասին միջնորդության հիմնավոր լինելու փաստն ինքնին հիմք է հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար, իսկ հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու դեպքում գործի ըստ էության քննությանն ու լուծմանն ուղղված դատարանի և դատավարության մասնակիցների գործողությունները դառնում են ինքնանպատակ՝ հանգեցնելով գործի քննության անհարկի ձգձգման և դատական ծախսերի ավելացման: Հետևաբար, հայցային վաղեմության կիրառման մասին միջնորդությունը հիմնավոր համարելու դեպքում դատարանը պետք է օժտված լինի անմիջապես այդ հիմքով վարույթն ավարտելու հնարավորությամբ:

Ուշագրավ է, որ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները ևս խոսում են վերոնշյալ մոտեցման մասին: Այսպես՝ Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի[2] 449-րդ հոդվածը սահմանում է դատարանի կողմից միջանկյալ որոշումներ կայացնելու դեպքերը և կարգը և, ըստ այդմ, նշում է, որ դատարանը կարող է միջանկյալ որոշում կայացնել նաև հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը քննելու արդյունքում: Եթե միջնորդության քննության արդյունքում դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ժամկետը չի լրացել, կայացնում է միջանկյալ որոշում և շարունակում դատաքննությունը, հակառակ դեպքում

[1] Ընդունվել է 07.02.2018 թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2018.02.12/10(1368), հոդ. 143:

[2] https://bit.ly/2HiV3j5

կայացնում է եզրափակիչ (վերջնական) ակտ և ավարտում դատաքննությունը:

Ֆրանսիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի[1] 3-րդ բաժինը նախատեսում է հայցի անընդունելիության վերաբերյալ (pleas of non-inadmissibility) պահանջների քննության կարգը: Օրենսգրքի 122-րդ հոդվածը սահմանում է, որ որպես անընդունելիության վերաբերյալ պահանջի հիմք կարող է լինել ցանկացած հանգամանք, որի նպատակն է հայցի անընդունելիության ճանաչումը. այդպիսիք կարող են լինել, ի թիվս այլնի, հայցային վաղեմության ժամկետները: Օրենսգրքի 480-րդ հոդվածն էլ սահմանում է, որ դատական ակտը, որը կարող է կայացվել, մասնավորապես նաև անընդունելիության վարույթով, եզրափակում է դատարանի իրավազորությունը կոնկրետ գործով: Այսինքն՝ հայցային վաղեմության հիմքով անընդունելիության պահանջը քննելու և դրա բավարարման վերաբերյալ դատական ակտ կայացնելու դեպքում գործի վարույթն ըստ էության ավարտվում է:

Իսլանդիայի «Հայցերի վաղեմության ժամկետների մասին» ակտի[2] 24-րդ հոդվածը սահմանում է, որ հայցային վաղեմության ժամկետների սահմանափակման (barring) դեպքում հայցապահանջը դադարեցվում է (claim is cancelled), և պարտատերը զրկվում է պահանջի կատարման իրավունքից:

Հարկ է նշել, որ ՔԴՕ-ն հայցային վաղեմության կիրառման մասին միջնորդության քննության հարցի կարգավորմանը նվիրել է 168-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝ «Գործին մասնակցող անձը կարող է վկայակոչել հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունն իրենից անկախ պատճառներով: Այդ դեպքում հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը կարող է վկայակոչվել ոչ ուշ, քան մինչև առաջին ատյանի դատարանում դատա-

[1] https://www.legifrance.gouv.fr/content/download/1962/13735/%E2%80%A6/Code_39.pdf

[2] https://www.government.is/publications/legislation/lex/?newsid=3d0ddaad-118f-11e8-9424-005056bc4d74

քննության ավարտը»: Այդ կերպ, փաստորեն, օրենսդիրը սահմանել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածում ամրագրված հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը մինչև դատաքննության ավարտը ներկայացնելու ժամկետից տարբերվող այլ ժամկետ[1]՝ որպես այդպիսին հիմնականում դիտարկելով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Հայցային վաղեմության կիրառման մասին միջնորդության քննարկման դատավարական կարգի վերաբերյալ կարգավորումների համակցությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացության, որ այն քաղաքացիական դատավարության փուլերի տրամաբանությանը համահունչ ունի միջնորդության քննարկման նախապատրաստության և միջնորդության քննարկման փուլեր: Մասնավորապես, նման միջնորդության, իսկ դրա դեմ առարկություն բերվելու դեպքում՝ նաև առարկության հիման վրա դատարանը նախնական դատական նիստում[2],

1) որոշում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը,

2) գործին մասնակցող անձանց միջև բաշխում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը,

3) գործին մասնակցող անձանց հետ քննարկում է նրանց կողմից ապացույցներ ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու

---

[1] Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ առանձին վարույթների համար միջնորդությունների ներկայացման ընդհանրական ավելի սեղմ ժամկետ նախատեսված լինելու դեպքում հայցային վաղեմության կիրառման մասին միջնորդությունը ևս պետք է ներկայացվի այդ ժամկետում: Այսպես, օրինակ, ՔԴՕ-ի 299-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միջնորդությունները պետք է ներկայացվեն գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում, եթե գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանն այդ ժամկետը չի երկարաձգել:

[2] Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը նախնական դատական նիստից դուրս ներկայացվելու դեպքում օրենսդիրը չի կարգավորել հենց այն քննելու համար նիստի հրավիրման հարցը՝ հարցի լուծումը թողնելով գործով հրավիրված նախնական դատական նիստին:

հարցը և անհրաժեշտության դեպքում սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետը,

4) որոշում է հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը տվյալ կամ հաջորդ դատական նիստում քննելու հարցը՝ հաշվի առնելով գործին մասնակցող անձանց կարծիքը,

5) իրականացնում է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:

Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակի առնչությամբ մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տարատեսակ մոտեցումներ: Այսպես, ըստ Օ. Վ. Բաուլինի, այն գործով ապացուցման առարկայի լրացուցիչ մաս է, իսկ Դ. Ա. Գրիբկովը գտնում է, որ տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե լրացուցիչ, այլ «այլընտրանքային» ապացուցման առարկայի հետ[1]: Այնինչ երկու դիրքորոշումների հետ էլ դժվար է համաձայնել, քանի որ այդ փաստերի շրջանակը կամ ապացուցման առարկան հանդես են գալիս ոչ թե ի լրումն, այլ հարաբերականորեն ինքնուրույն, չնայած որոշ փաստեր կարող են երկու դեպքում էլ ներառվել այդ շրջանակի մեջ: Ընդ որում՝ մինչև հայցային վաղեմության կիրառման մասին միջնորդության քննարկումն այլ ապացուցման առարկայի մասին խոսել հնարավոր չէ: Հետևաբար, տվյալ դեպքում խոսք կարող է գնալ բացառապես ինքնուրույն ապացուցման առարկայի մասին, որի ճիշտ որոշումն ունի սկզբունքային նշանակություն միջնորդության լուծման համար[2]: Այս առումով ուղենիշային կարող են լինել գործով

---

[1] Տե՛ս ***Д.А. Грибков,*** Исковая давность и сроки обращения в суд в гражданском судопроизводстве, Автореферат дис.... канд. юрид. наук, М., 2009, էջ 14:

[2] Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի 13.12.2018 թ. թիվ ԴԴ-9.1 Ե-239151 գրության համաձայն՝ որոշ գործերով այդ փաստերի շրջանակի մեջ է մտցվում հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումի առկայությունը: Այնինչ այդ փաստն այս առումով չի կարող ունենալ որևէ նշանակություն, քանի որ առանց այդ դիմումի չի կարող առաջանալ դրա քննարկման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը որոշելու անհրաժեշտություն:

ապացուցման առարկայի որոշման կանոնները, որոնց համաձայն՝ ապացուցման առարկան կազմավորվում է երկու աղբյուրներից՝

1) հայցի հիմքի և դրա դեմ արվող առարկությունների հիմքի փաստերից,

2) կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի (նորմերի) հիպոթեզով և դիսպոզիցիայով նախատեսված փաստերից[1]:

Միջնորդության քննության նախապատրաստությանն ուղղված դատավարական գործողությունները կատարելուց հետո տվյալ կամ հաջորդ նիստում դատարանը քննարկում է այն և հրապարակում դատական ակտի հրապարակման ժամանակը:

Ուշագրավ է, որ միջնորդությունը մերժելու դեպքում դատարանը որոշում է կայացնում գործի քննությունը վերսկսելու մասին՝ նշանակելով նախնական դատական նիստ, իսկ միջնորդությունը հիմնավոր համարելու դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու միջնորդության քննարկման համար նշանակություն չունեցող փաստերի հետազոտմանն ու գնահատմանը, թեկուզև դրանք գործի ըստ էության լուծման տեսանկյունից կարող էին նշանակություն ունենալ: Այս դրույթն իր արտացոլումն է գտել նաև ՔԴՕ-ի 9-րդ հոդվածի 2-րդ մասում, ըստ որի՝ եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով, ապա դատարանը պարտավոր է դատական ակտում անդրադառնալ գործին մասնակցող անձանց կողմից դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառման է ենթակա հայցային վաղեմության ժամկետ, և այդ փաստարկներին, իրավական հիմքերին կամ ապացույցներին անդրադառնալն անհրաժեշտ չէ տվյալ դատական ակտի կայացման համար:

Պետք է նկատել, որ հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու հիմքով հայցի մերժումը խնդրահարույց է թվում: Խնդիրն այն է, որ այս հիմքով հայցի մերժումը, ի տարբերություն ընդհանուր

---

[1] Տե՛ս ***Ս. Գ. Մեղրյան***, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Դասախոսություններ, Երևանի պետ. համալսարան, Եր., 2011, էջեր 24-25:

հիմունքներով հայցի մերժման, վկայում է ոչ թե հայցապահանջի ոչ իրավաչափ լինելու, այլ դրա՝ այլևս դատական պաշտպանության ոչ ենթակա լինելու մասին: Ընդ որում՝ ենթադրաբար խախտված սուբյեկտիվ իրավունքը շարունակում է պահպանել իր գոյությունը նաև հայցային վաղեմության կիրառումից հետո[1]: Այլ կերպ ասած՝ այս դեպքում կայացված վճռով վեճի լուծում տեղի չի ունենում, իսկ վիճելի իրավահարաբերությունը չի դառնում անվիճելի: Մյուս կողմից, հայցային վաղեմության կիրառումը վկայում է հայցի իրավունքի դատավարական կողմի, այսինքն՝ վեճը դատական կարգով քննելու և լուծելու իրավունքի դադարման մասին, որն առավել համահունչ է գործի վարույթի կարճման ինստիտուտի էությանը:

Գործնականում չեն բացառվում իրավիճակները, երբ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվել է ոչ թե բոլոր, այլ պահանջների մի մասի վերաբերյալ: Մասնավորապես, այդ դեպքերի համար ՔԴՕ-ի 168-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանել է առանձին կարգավորում, ըստ որի՝ «Ներկայացված առանձին հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանն այդ մասով առանձնացնում է գործի վարույթը և առանձնացված մասով կայացնում հայցը մերժելու մասին վճիռ: Գործից մաս առանձնացնելու մասին որոշումը հրապարակվում է վճռի հետ միասին: Գործից մաս առանձնացնելու մասին որոշմամբ նշանակվում են նախնական դատական նիստի ժամանակը և վայրը: Գործից մաս առանձնացնելու մասին որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է գործին մասնակցող անձանց»:

Առաջին հայացքից պարզ թվացող այս լուծումը, այնուամենայնիվ, իրավակիրառման ընթացքում կարող է հանդիպել որոշակի դժվարությունների այն դեպքերում, երբ մի քանի պահանջներ հայցադիմումում ձևակերպված են ընդհանրական ձևով: Այսպես, օրինակ, դիմելով դատարան՝ հայցվորը պահանջում է տասը տարվա չվճարված վարձավճարի գումարը՝ պահանջը ձևակերպելով բոլոր

[1] Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. В 2 т. Т. 1. Части первая, вторая ГК РФ / под ред. *Т.Е. Абовой, А.Ю. Кабалкина*; Инт государства и права РАН, 2-е изд., перераб. и доп., М., Изд-во «Юрайт», 2009, էջ 225:

վարձավճարների չափով, իսկ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումը վերաբերում է պարտավորության ծագումից հետո ընկած ժամանակահատվածի մի մասին՝ չներառելով վերջին երեք տարիները: Որպես իրավիճակի հանգուցալուծում կարող է դիտարկվել դատարանի կողմից հայցային վաղեմության կիրառումը պահանջի վերաբերելի մասի նկատմամբ, իսկ դատական պաշտպանության ենթակա մասը կրկին պետք է քննվի առանձին վարույթով[1]: Այլ կերպ ասած՝ այստեղ պետք է առաջնորդվել պահանջների գնահատման ոչ թե ձևական, այլ բովանդակային մոտեցմամբ՝ ապահովելով իրավակիրառման գործընթացում դատավարական խնայողությունը:

Այսպիսով՝ հայցային վաղեմության կիրառման մասին միջնորդության քննարկման դատավարական կարգի վերաբերյալ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Հայցային վաղեմության կիրառման դատավարական կարգը կոչված է երաշխավորելու դատավարական խնայողության սկզբունքի իրացումը քաղաքացիական դատավարությունում:

2. Հայցային վաղեմության կիրառման դատավարական կարգը քաղաքացիական դատավարության փուլերի տրամաբանությունը համահունչ ունի միջնորդության քննարկման նախապատրաստության և բուն քննարկման փուլեր:

3. Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը գործով հանդես է գալիս որպես ինքնուրույն ապացուցման առարկա և ենթակա է պարզման առաջնահերթության կարգով:

4. Հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու հիմքով հայցի մերժումը չի դիտարկվում վճռի ըստ էության լուծում, և դրա իրականացումը վճռով արդարացված չէ:

5. Հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու փաստի հաստատումը վկայում է հայցի իրավունքի դատավարական կողմի, այսինքն՝ վեճը դատական կարգով քննելու և լուծելու իրավունքի

[1] Հարկ է նկատել, որ նմանատիպ լուծում արդեն իսկ տեղ է գտել իրավակիրառ պրակտիկայում թիվ ԵԿԴ/0244/02/17 քաղաքացիական գործի և դրանից առանձնացված թիվ ԵԴ/29359/02/18 քաղաքացիական գործի շրջանակում:

դադարման մասին և պետք է դիտարկվի գործի վարույթի կարճման հիմքերի շարքում:

ИНСТИТУТ ИСКОВОЙ ДАВНОСТИ В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА ПРОЦЕССУАЛЬНОЙ ЭКОНОМИИ

Тигран Маркосян
Ассистент кафедры гражданского процесса ЕГУ
кандидат юридических наук,
Директор фонда «Центр развития законодательства и правовых исследований» Министерства юстиции Республики Армения

Статья посвящена анализу института срока давности в свете принципа процессуальной экономии. Автором обосновывается, что в отличие от предыдущего Гражданско-процессуального законодательства, новый Гражданский процессуальный кодекс РА обосновано установил отдельную и упрощенную процедуру применения срока исковой давности, обеспечив тем самым экономию средств в гражданском судопроизводстве. По этому поводу в статье делается вывод о том, что представление ходатайства исковой давности по делу формирует самостоятельный, а не дополнительный или альтернативный предмет доказывания. В то же время автор пришел к выводу о том, что применение исковой давности должно осуществляться не по решению суда, а по постановлению, поскольку в этом случае существующий спор не разрешается.

LIMITATION OF ACTIONS IN THE CONTEXT OF PRINCIPLE OF PROCEDURAL ECONOMY

Tigran Markosyan
Assistant Professor of the YSU Chair of Civic Procedure,
Candidate of Legal Sciences,
Director of "Center of legislation development and legal Research" fund of Ministry of Justice

The article is devoted to the analyze of the institute of limitation of actions in the light of the principle of procedural economy. The author argues, that in comparison with previous civil procedure legislation, the new code of Civil Procedure of RA defines separate and simplified procedure in regard to the application of limitation of actions, thus guaranteeing procedural economy in civil procedure.

In this regard, a conclusion is made in the article, that submitting a motion on applying limitation of actions forms not additional or alternative but independent subject of proof. At the same time, the author made a conclusion, that the application of limitation of actions must be carried out not by the verdict but by a decision, since in that case a dispute is not being solved.

Բանալի բառեր - *հայցային վաղեմություն, դատավարական խնայողության սկզբունք, հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննության նախապատրաստություն, հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակ, ինքնուրույն ապացուցման առարկա:*

Ключевые слова: *исковая давность, принцип процессуальной экономии, подготовка рассмотрения ходатайства о применении исковой давности, перечень фактов, имеющих значение для разрешения ходатайства о применении исковой давности, самостоятельный предмет доказывания.*

Keywords: limitation of actions, principle of procedural economy, preparation of examining the request to apply the limitation of actions, the circle of facts essential for solving the motion to apply the limitation of actions, independent subject of proof:

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆ ՈՒ ԱՌԿԱ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Օլիմպիա Գեղամյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Թեև հարյուրավոր տարիներ առաջ երկրագնդի վրա բնակվող մարդիկ իրենց կարիքները բավարարելու համար ջուր օգտագործելու արդյունքում արդեն իսկ փաստացի եղել են ջրօգտագործողներ, սակայն անհերքելի է, որ ներկայիս ջրօգտագործողներն իրենց կարգավիճակով ծայրաստիճան տարբերվում են նախկիններից: Դա պայմանավորված է մարդու գործունեության հետևանքով բնական պաշարների վրա ազդեցության, այդ թվում՝ ջրերի քանակական ու որակական փոփոխություններով, գիտատեխնիկական առաջընթացով, տեղական և միջազգային օրենսդրական իրավակարգավորումներով և մի շարք այլ գործոններով:

Ներկայումս ջրօգտագործման հարաբերություններն առանձնանում են որպես բարդ ու բազմաշերտ բնույթով օժտված, պետական կառավարման համակարգում լուրջ ուշադրություն պահանջող առանձին, բայց միաժամանակ մյուս բոլոր բնական ռեսուրսների հետ անխզելիորեն կապված ոլորտի հարաբերություններ: Պետք է նշել, որ ոռոգման ոլորտն առնչվում է հասարակության տարբեր խավերի շահերի հետ: Ոռոգման համակարգի հետ կապը մի դեպքում կարող է հանդես գալ ուղղակիորեն հողամասը ոռոգելու, մեկ այլ դեպքում՝ այդ ոռոգման արդյունքում ստացված համապատասխան մթերքն իրացնելու, երրորդ դեպքում՝ այդ գյուղմթերքը սպառելու ճանապարհով: Ահա թե ինչու յուրաքանչյուր երկրում, այդ թվում՝ նաև ՀՀ-ում խիստ առաջնային պլան պետք է մղվեն ոռոգման համակարգի մասնակցային կառավարման, ոռոգման ջրի որակի և մի շարք այլ հարցեր, ինչն էլ իր հերթին պահանջում է խիստ հստակեցնել շահառուների իրավունքներն ու պարտականությունները, ոլորտի պատասխանատուների լիազորությունները:

Ցանկանալով անդրադառնալ ոլորտի հիմնական իրավական խնդիրներին՝ նախ և առաջ ներկայացնենք ՀՀ ջրային օրենսգրքի[1] կարգավորումները, որի «Ոռոգման մասնակցային կառավարում» վերտառությունը կրող 9-րդ գլուխը նվիրված է հենց քննարկվող հարաբերություններին: Այսպիսով, ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն, «Ոռոգման ջրամատակարարման մասնակցային կառավարումն իրականացվում է Ջրօգտագործողների ընկերությունների (այսուհետ՝ ՋՕԸ) և (կամ) Ջրօգտագործողների ընկերությունների միությունների միջոցով: Ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ են, որոնք, առաջնորդվելով հանրային շահերով, իրականացնում են ոռոգման համակարգի շահագործումն ու պահպանումը: Ջրօգտագործողների ընկերությունը ջրօգտագործողների կողմից ստեղծվող կազմակերպությունն է: Ջրօգտագործողների ընկերությունները ջրօգտագործողներին ջուր են մատակարարում իրենց սպասարկման տարածքում: Ջրօգտագործողների միությունը կամավորության հիման վրա ջրօգտագործողների ընկերությունների կողմից ստեղծվող կազմակերպություն է:

Ոռոգման համակարգի մասնակցային կառավարման բնագավառի հարաբերությունների կարգավորման օրենքների շարքում իր տեղն ունի «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին»[2] ՀՀ օրենքը, որտեղ օգտագործվող հիմնական հասկացությունների շարքում ջրային ռեսուրսների թափանցիկ ու մասնակցային կառավարումը ներկայացված է որպես ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի այնպիսի կառավարում, որոնց վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացը բաց է և տեսանելի հասարակության բոլոր խավերի համար, և ապահովված է նրանց մասնակցությունն այդ գործընթացին:

Նույն օրենքի 7-րդ հոդվածը մասնակցային կառավարումը դիտարկում է որպես ջրային ռեսուրսների կառավարման սկզբունքնե-

[1] ՀՀ ՊՏ 2002.07.10/24(199), ընդունվել է 04.06.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002:
[2] ՀՀ ՊՏ 2005.06.15/37(409), ընդունվել է 03.05.2005, ուժի մեջ է մտել 15.09.2005:

րից մեկը, իսկ նման գաղափարախոսությունը խիստ կարևոր է յուրաքանչյուր երկրում տնտեսական քաղաքականության մշակման, այդ թվում՝ ջրային ռեսուրսների կառավարման բարձր արդյունավետության ապահովման համար:

Քննարկվող ոլորտի հարաբերությունների իրավական կարգավորման համար 2002 թ. ՀՀ-ում ընդունվել է նաև «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքը[1], որը, սահմանելով ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության հիմունքները, դրանց ստեղծման ու դադարեցման հիմքերը, ինչպես նաև պետական և այլ մարմինների հետ դրանց փոխհարաբերությունների խնդիրները, փորձում է լուծում տալ դաշտում ստեղծված համապատասխան խնդիրներին՝ նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի Հանրապետության ոռոգման համակարգի կառավարման արդյունավետությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան հարաբերությունների իրավակարգավորման համար կյանքի կոչված օրենսդրության ընդունումից հետո անցել է շուրջ 15 տարի, և ջրօգտագործողների ընկերությունների միություն ՀՀ-ում չի ստեղծվել, առաջիկայում էլ դրանց ստեղծումը չի նախատեսվում, հիմնավորված ենք գտնում սույն հոդվածում չանդրադառնալ ջրօգտագործողների ընկերությունների միությունների ինստիտուտին:

Կարևորելով ՋՕՀ-ի անդամ սուբյեկտների կարգավիճակը՝ նշենք, որ Ընկերության անդամներ կարող են լինել այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք Ընկերության սպասարկման տարածքում ունեն հողատարածք՝ սեփականության կամ հինգ տարուց ավելի ժամկետով օգտագործման իրավունքով: Հողի վարձակալության պայմանագիր ունեցող անձինք կարող են Ընկերության անդամ դառնալ վարձատուի գրավոր համաձայնության կամ պայմանագրում համապատասխան դրույթի առկայության դեպքում: Ընկերության նոր անդամը պարտավոր է վճարել մուտքի վճար: Ընկերության անդամ դառնալ ցանկացող անձանց դիմումը կարող է մերժվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

[1]ՀՀ ՊՏ 2002.07.10/24(199), ընդունվել է 04.06.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002:

Թե՛ զարգացած տնտեսությամբ երկրների փորձը, թե՛ ջրային ռեսուրսների օգտագործման համակարգի արդյունավետության բարձրացման պահանջը, մեր խորին համոզմամբ, նախևառաջ ենթադրում են պայմանագրերի կնքում՝ որպես այդ ոլորտում սկսվող ու ավարտվող ցանկացած հարաբերության իրավական հիմք: Հակառակ դեպքում անհնար է խուսափել խնդրահարույց իրավիճակներից, իսկ առանձին դեպքերում նաև պատասխանատվությունից: Մասնավորապես, «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի համաձայն՝ Ընկերության սպասարկման տարածքում ոռոգելի հող ունեցող Ընկերության անդամ և ոչ անդամ ջրօգտագործողները ոռոգման ջուր ստանալու համար Ընկերության հետ կնքում են ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր՝ ոչ պակաս, քան երեք տարի ժամկետով: Ջրօգտագործողի՝ ոռոգման ջուր այլ աղբյուրից ձեռք բերելու ապացույցներ ներկայացնելու դեպքում Ընկերության վարչական խորհուրդը կարող է ջրօգտագործողի հետ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր չկնքել: Ու թեև ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր կնքելը վերոհիշյալ օրենքով նախատեսված է որպես ջրօգտագործողի և ՋՕԸ-ի երկկողմ պարտավորություն, սակայն ինչ վերաբերում է գործող պրակտիկային, ապա, ցավոք, այս հարցը բազմաթիվ դեպքերում շարունակում է մնալ որպես լուրջ խնդիր, քանի որ բազմաթիվ ջրօգտագործողներ փաստացի դեռևս խուսափում են համապատասխան պայմանագրեր կնքելուց կամ պայմանագիր կնքելուց հետո, մեծ նշանակություն չտալով կնքված պայմանագրի դրույթներին, իրենց համար նախատեսված օրինակը նույնիսկ չեն վերցնում: Խնդիրը, մեր խորին համոզմամբ, կապված է նախևառաջ ոռոգման ջրի համար սահմանված վճարումները կատարելու դժվարության հետ: Մասնավորապես, թեև ՀՀ-ում ոռոգման ջրի մեկ խորանարդ մետր ծավալի համար սահմանված է 11 դրամ, ինչը թվում է, թե այնքան էլ բարձր սակագին չէ, սակայն պրակտիկայում ստացվում է, որ, օրինակ, մեկ հեկտար ցորենի դաշտը մի քանի անգամ ոռոգելու համար պահանջվող գումարի չափը գերազանցում է 100.000 դրամը: Կարծում ենք՝ սա է այն հիմնական պատճառը, որ ջրօգտագործողներից շատերը գերադասում են առանձին դեպքերում չմշակել իրենց դաշտերը կամ մշակել դրանց մի մասը, ինչի արդյունքում ստացվում են

նվազ բերք, քիչ շահույթ և, բնականաբար, ցածր վճարունակություն: Որոշ ջրօգտագործողներ էլ, ընդհանրապես հրաժարվելով պայմանագրեր կնքելուց, գերադասում են որոշակի աշխատանք ու ծախս կատարելու արդյունքում խորքային հորերի միջոցով սեփական միջոցներով ոռոգման ջուր ապահովել: Պայմանագրի սեփական օրինակն իրենց մոտ չունենալն էլ վկայում է, որ ջրօգտագործողները չեն պատկերացնում դրանում նախատեսված պայմանների կարևորությունն ու հատկապես իրենց իրավունքների շրջանակը, ինչից էլ բխում է հետագայում խնդրահարույց հարցերով համապատասխան մարմիններին չդիմելու, տեղեկացվածության ցածր մակարդակի, իրենց խախտված իրավունքները չպաշտպանելու փաստը:

Ինչ վերաբերում է ՋՕԸ-ի անդամ և ոչ անդամ ջրօգտագործողների կարգավիճակի տարբերություններին, ապա Ընկերության ոչ անդամներին ոռոգման ջուրը մատակարարվում է պայմանագրային հիմունքով, որով մատակարարվող ջրի գինը չի կարող գերազանցել Ընկերության անդամների համար ջրի ինքնարժեքի 150 տոկոսը: Օրենսդրի կողմից այս պայմանը նախատեսելը ենթադրում է որոշակի շահագրգռվածություն ստեղծել Ընկերության անդամ դառնալու համար, քանի որ այն ֆինանսական նախապատվություն է տալիս Ընկերության անդամ դարձած ջրօգտագործողներին վճարելու ավելի քիչ գումար օգտագործված ոռոգման ջրի քանակի դիմաց:

Պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր կնքած բոլոր ջրօգտագործողները հանդես են գալիս որպես ՋՕԸ-ի անդամ, ինչը նշանակում է, որ վերոհիշյալ դրույթն իր դրական կիրառումն է գտել ջրօգտագործողների շրջանակում:

Յուրաքանչյուր առանձին երկրում ունենալով ջրային ռեսուրսների խիստ ինքնատիպ որակական, քանակական պատկեր, ջրերի անհավասարաչափ տեղաբաշխում՝ ոռոգման համակարգի կառավարումն իրենից ներկայացնում է բավականին բարդ ինստիտուտ, որտեղ խիստ կարևորվում է այն իրավունքների ու պարտականությունների շրջանակը, որը սահմանված է համապատասխան սուբյեկտների համար: «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 5.1-ի համաձայն՝ ջրօգտագործողն իրավունք ունի.

- օրենքով և պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով ստանալու ոռոգման ջուր,
- օրենքով սահմանված կարգով հիմնադրելու Ընկերություն,
- անդամակցելու Ընկերությանը,
- ծանոթանալու Ընկերության կանոնադրությանը, ներքին կանոնակարգին, վեճեր լուծող հանձնաժողովի կանոնակարգին, վերստուգող հանձնաժողովի լիազորությունների և գործունեության կանոնակարգին,
- մասնակցելու Ընկերության վեճեր լուծող հանձնաժողովի նիստերին:

Պետք է հաշվի առնել, որ Ջրօգտագործողների ընկերության կողմից ջրօգտագործողին ոռոգման ջուր մատակարարելու մասին տիպային պայմանագրում ջրօգտագործողի իրավունքները հանգում են հետևյալին.

- ստանալ հայտով նախատեսված ոռոգման ջրի ամբողջ ծավալը,
- պահանջել ջրաչափություն իր հողակտորի գլխամասում ջրաչափական սարքավորումների միջոցով, որի մասին անհրաժեշտ է նախօրոք, ջրումից առնվազն 2 օր առաջ, գրավոր դիմել Ընկերությանը,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել Ընկերության կողմից ոչ բնականոն ջրամատակարարման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում:

Ոռոգման համակարգում խիստ կարևորելով համապատասխան տվյալների նշանակությունը՝ գտնում ենք, որ ջրաչափական սարքավորումների միջոցով ջրաչափություն պահանջելը չպետք է դիտել որպես ջրօգտագործողի իրավունք, որի իրականացումն էլ իր հերթին պահանջում է գրավոր դիմում:

Գտնում ենք, որ առավել արդյունավետ կլինի այս գործընթացը նախատեսել որպես ՋՕԸ-ի պարտավորություն, որի կատարման համար սահմանել հստակ ժամկետներ, օրինակ՝ ոռոգման շրջանի յուրաքանչյուր ամսվա սկզբին կամ կեսերին, ինչը հնարավորություն կտա առավել հստակեցնելու փաստացի ստացված ջրի ծավալը: Չէ՞ որ յուրաքանչյուր դեպքում պետք է վճարել **փաստացի** ստացած ջրի դիմաց:

Ինչ վերաբերում է ջրօգտագործողի՝ ՋՕԸ-ի կողմից ոչ բնականոն ջրամատակարարման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման իրավունքին, ապա չպետք է բացառել այն դեպքերը, երբ ոռոգման ջրի մատակարարումը սկսվում է նախատեսվածից ավելի ուշ: Ընդ որում՝ դա կարող է կապված լինել, օրինակ, նախապատրաստական աշխատանքների ուշ ավարտի հետ: Դրանով բազմաթիվ ջրօգտագործողների պատճառվում է լուրջ վնաս: Ցավոք, պրակտիկայում ոչ բնականոն ջրամատակարարման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման պահանջի դեպքեր գրեթե չեն հանդիպում, իսկ դատական պրակտիկայի վերլուծությունն իր հերթին ապացուցում է, որ ջրօգտագործողներն այս հիմքերով դատական ատյաններին դիմում են եզակի դեպքերում: Մեր խորին համոզմամբ, հիմնախնդրի առաջնային պատճառներից մեկը տեղեկացվածության ցածր մակարդակն է: Զարգացած երկրների (Ֆրանսիա, Գերմանիա, Նիդերլանդներ և այլն) պրակտիկայում ոռոգման ջրի մատակարարման ժամկետը մատակարարման բոլոր մյուս պայմանների հետ միասին անվեհապահորեն գտնվում է լիազոր մարմնի ուշադրության կենտրոնում: Քննարկվող հարցի համար հույժ կարևոր է նաև այն հանգամանքը, որ տարբեր մշակաբույսեր, ելնելով իրենց առանձնահատկություններից, ջրի տարբեր, բայց որոշակիորեն հստակ պահանջարկ ունեն, որն անմիջականորեն կապված է նաև եղանակային պայմանների հետ: Եվ եթե անհնարին է հստակ սահմանել եղանակային պայմանների գրաֆիկը, ապա գոնե ոռոգման ջրի մատակարարման պայմանները հստակ սահմանելը և, որ առավել կարևոր է, դրան հետևելը պետք է պարտադիր լինեն:

Ջրօգտագործողին օժտելով համապատասխան իրավունքներով՝ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքը նաև որոշակի պարտավորություններ է սահմանում, որոնք սահմանված են՝ ոլորտի հարաբերություններում առավել հստակ մատնանշելու ջրօգտագործողի վարքագիծն ու դրանից առաջացող հետևանքները:

Մասնավորապես.

- ջրօգտագործողը պարտավոր է ոռոգման ջուր ստանալու համար ընկերության հետ կնքել ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր,

- յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարում կատարել մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

Ջրօգտագործողների ընկերության կողմից ջրօգտագործողին ոռոգման ջուր մատակարարելու մասին տիպային պայմանագրում ջրօգտագործողի համար ամրագրված են հետևյալ պարտավորությունները.

- սպասարկել անմիջականորեն իր հողակտորին մոտեցող ջրատարի հատվածը,
- ընկերության հետ համաձայնեցված ժամկետում իր հողակտորի գլխամասում ստանալ ոռոգման ջուր,
- մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարել վճարման ժամանակացույցի համաձայն,
- մատակարարված ջրի դիմաց վճարումները կատարել բանկի կամ փոստային ծառայության միջոցով,
- իր սեփականությունը հանդիսացող հողատարածքը վաճառելու (կամ այլ ձևով օտարելու, որը հանգեցնում է հողատարածքի սեփականատիրոջ փոփոխության) դեպքում դիմել Ընկերությանը վերջնահաշվարկ կատարելու, պայմանագիրը լուծելու և հողատարածքի ջրամատակարարումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ Ընկերությունը տեղեկանք է տալիս ջրօգտագործողին:

Ակնհայտ է, որ թե՛ քննարկվող օրենքում նախատեսված՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը ժամկետը, թե՛ ՋՕԸ-ի հետ կնքվող պայմանագրին կից հավելվածում նախատեսված ժամանակացույցի ժամկետները շատ հստակ սահմանում են ջրօգտագործողի պարտավորությունը ոռոգման ջուր ստանալուց կարճ ժամանակ անց վճարում կատարելու մասին: Մեր խորին համոզմամբ, առանձին մշակաբույսերի՝ ժամկետային առումով բերքն ավելի ուշ հավաքելու պատճառով և դրա հետ անմիջականորեն կապված վճարունակ լինելու հանգամանքը չպետք է դուրս մնա իրավական կարգավորման շրջանակից: Մինչդեռ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում այնպիսի դրույթներ, որոնք իրավական հիմք հանդիսանան առանձին մշակաբույսերի մշակման հողամասերի ոռոգման համար վճարումը տարաժամկետելու համար, ինչը, կարծում ենք, լուրջ աջակցություն կարող է լինել ջրօգտագործողների՝ գյուղատնտեսական

գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու տեսանկյունից:

Չնայած հարցի բարդությանը, մեր խորին համոզմամբ, ջրօգտագործողին պետք է հնարավորություն տալ ոռոգման ջրի առանձին հատվածի համար վճարումը՝ օրենքով սահմանված կարգով իրականացնելու ավելի ուշ:

Ինչպես ցանկացած իրավահարաբերության, այնպես էլ ոռոգման համար օգտագործվող ջրի հետ կապված հարաբերություններում խիստ կարևոր դեր ու նշանակություն ունի պատասխանատվության ինստիտուտը, որը «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքում ունի հետևյալ արտահայտությունը. «Ստացած ոռոգման ջրի համար ջրօգտագործողի չվճարելու դեպքում ընկերության հետ ջրի մատակարարման պայմանագրով կարող է նախատեսվել հողամասն Ընկերության օգտագործման իրավունքով փոխանցելու պարտավորություն՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով»[1]:

Ջրօգտագործողների ընկերության կողմից ջրօգտագործողին ոռոգման ջուր մատակարարելու մասին պայմանագրի նմուշ-օրինակում ևս այս դրույթը նախատեսված է:

ՀՀ համապատասխան ոլորտի օրենսդրության խորքային ուսումնասիրությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ տվյալ դրույթը չի բխում ՀՀ-ում այդ հարցի իրավական ընդհանուր կարգավորումից: Յուրաքանչյուր սեփականատիրոջ համար լինելով սեփական տարածք հողամասը արտադրության միջոց է, որն անփոխարինելի դեր ու նշանակություն ունի յուրաքանչյուրի և յուրաքանչյուր ընտանիքի համար: Բարձր գնահատելով ՀՀ-ում սեփականության իրավունքի ինստիտուտը՝ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը:

… Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրա-

[1] ՀՀ ՊՏ 2002.07.10/24(199), ընդունվել է 04.06.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002:

վունքների և ազատությունների պաշտպանության նպատակով….»[1]:

ՋՕԸ-ների մասին օրենքում և համապատասխան պայմանագրում առկա վերոհիշյալ դրույթը խնդրահարույց է նաև հետևյալ պատճառներով. հողամասի օգտագործման իրավունքը, ըստ էության, անշարժ գույքի նկատմամբ իրավունք է, որի հետ կապված ցանկացած գործարք ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից բխող իրավունքները պետք է գրանցվեն ՀՀ ԱԳԿՊԿ-ում: Հակառակ պարագայում գործարքն առոչինչ է: Մինչդեռ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիրը, ինչպես բոլորիս հայտնի է, չի վավերացվում նոտարի կողմից, իսկ դրանից բխող իրավունքները չեն գրանցվում ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

Նույնիսկ եթե առանց պատշաճ իրավաբանական ձևակերպման ՋՕԸ-ն «վերցնի» հողամասի օգտագործման իրավունքը, ապա դժվար չէ պատկերացնել, որ դա չի կարող արդյունավետ երաշխիք լինել Ջրօգտագործողի պարտավորությունների կատարման համար, քանի որ վերջինս կզրկվի եկամտի աղբյուրից: Ավելին՝ ՋՕԸ-ի նման գործողությունը հիմք է ջրօգտագործողի կողմից վինդիկացիոն հայց (գույքն ուրիշի ապօրինի տիրապետությունից ետ պահանջելու հայց) ներկայացնելու համար:

Մեր խորին համոզմամբ, անհրաժեշտ է թե՛ համապատասխան օրենքից, թե՛ կնքվող պայմանագրերի տեքստից դուրս բերել «Ստացած ոռոգման ջրի համար ջրօգտագործողի չվճարելու դեպքում Ընկերության հետ ջրի մատակարարման պայմանագրով կարող է նախատեսվել հողամասն Ընկերությանն օգտագործման իրավունքով փոխանցելու պարտավորություն, ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով» դրույթը:

Ցավոք, ոռոգման համակարգի ամենաճանր խնդիրներից մեկն էլ եղել և մնում է ոռոգման ջրի որակի խնդիրը: Հարցն այն է, որ համապատասխան օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոռոգման ջրի որակի մասին որոշակի հիշատակումներ կան միայն ՀՀ ջրային օրենսգրքի՝ հասկացությունները սահմանող 1-ին

[1] ՀՀ ՊՏ 2015.12/21, հատուկ թողարկում, հոդված 1118, ընդունվել է 06.12.2015, ուժի մեջ է մտել 22.12.2015:

հոդվածում, մասնավորապես. «ոռոգման ջուր է համարվում ոռոգման նպատակով օգտագործվող և ոռոգման ջրի ստանդարտներին համապատասխան ջրային ռեսուրսը, որը կարող է լինել ինչպես մակերևութային, այնպես էլ ստորերկրյա»: Ցավոք, թեև գործող Ջրային օրենսգիրքն ընդունվել է 2002 թ.-ին, որից անցել է ավելի քան 16 տարի, սակայն, մինչ օրս ոռոգման ջրի որակի ստանդարտներ ՀՀ-ում մշակված և հաստատված չեն: Պրակտիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առանձին համայնքներում ոռոգումը կատարվում է խմելու ջրի և կոյուղաջրերի խառնուրդի միջոցով, ինչը կարող է դրսևորվել 30 և 70 տոկոս, երբեմն՝ 50 և 50 տոկոս, իսկ առանձին դեպքում՝ ընդհուպ 100 տոկոս կոյուղաջրերի դրսևորմամբ: Որպես ոռոգման ջրի մատակարարման պայմանագրի առարկա հանդես է գալիս ոռոգման ջուրը, սակայն, ցավոք, թե՛ այդ պայմանագիրը, թե՛ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքը, թե՛ ՀՀ ջրային օրենսգիրքը և թե՛ ցանկացած այլ ակտ չեն նախատեսում՝ ինչպիսի որակի ջրի շուրջ են պայմանավորվում կողմերը: Սա ևս, մեր խորին համոզմամբ, դեմ է բնակչության սանիտար-հիգիենիկ անվտանգության, երկրում գյուղատնտեսության զարգացման կանոններին, և հնարավորինս շուտ պետք է քայլեր ձեռնարկվեն ոռոգման ջրի որակի ստանդարտների հաստատման համար:

Թեև ՋՕԸ-ները պետք է հանդես գան որպես ջրօգտագործողների շահերի պաշտպանության մարմիններ, ներկայիս պրակտիկան ցույց է տալիս, որ համայնքի ներկայացուցչությունը ՋՕԸ-ներում զրոյական է, ինչը ևս նպաստում է համապատասխան ոլորտի գործունեության արդյունավետության անկմանը: Գտնում ենք, որ այս հարցի լավագույն լուծումներից մեկը կարող է լինել այն, որ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն ընդգրկվեն ՋՕԸ-ների խորհրդի կազմում: Սրանով հնարավոր կլինի իրագործել կառավարման մասնակցային և թափանցիկության սկզբունքների պահանջները, ինչպես նաև վերացնել ներկայումս ՋՕԸ-ներում տիրող «միանձնյա» որոշումներ կայացնելու իրավիճակները:

Անհրաժեշտ ենք համարում մատնանշել, որ ներկայումս ՀՀ-ում ոռոգման ջրամատակարարումն իրականացվում է 14 ընկերությունների միջոցով նախկին՝ 3 տասնյակից ավելիի փոխարեն: Ու թեև առաջին հայացքից կարող է թվալ, որ այս եղանակով հնա-

րավորություն է ստեղծվել առավել պարզ իրագործելու ոռոգման համակարգի մասնակցային կառավարման գաղափարը, սակայն, իրականում բազմաթիվ դժվարություններ են առաջացել ջրօգտագործողների համար: Դա հիմնականում կապված է իրենց բնակավայրից Ջրօգտագործողների ընկերությունների աշխարհագրական հեռացման հետ, որն էլ իր հերթին առաջացնում է դժվար հասանելիություն, խնդիրների և առաջացող հարցերի լուծման հետաձգում: Կարծում ենք՝ առավել նպատակահարմար էր նախկին մոդելի գոյությունը, ինչը որոշակիորեն երաշխավորում էր ոլորտի խնդիրների առավել վաղ արձագանք ու լուծում:

Հաշվի առնելով նաև ոռոգման ջրի բարձր վճարների պատճառով շատ ջրօգտագործողների բողոքները, ջրօգտագործողների ընկերությունների կողմից իրենց պարտավորությունների կատարման թերացումները հատկապես կիսախողովակների մաքրության, նախապատրաստական աշխատանքներն ուշ ավարտելու առումով, ինչպես նաև կապված ոռոգման համակարգի բարդ ու բազմաշերտ հարաբերությունների հետ՝ ևս մեկ անգամ հիմնավոր ենք համարում պնդել, որ համապատասխան իրավական ու կազմակերպական դաշտն ունի լուրջ վերանայման կարիք, ինչը հնարավորություն պետք է տա ոռոգման համակարգի մասնակցային կառավարումը բերելու հստակ գնահատելի չափանիշների: Օրենքով նախատեսված իրավակարգավորումները խիստ կարևոր պետք է լինեն ոռոգման համակարգի կառավարումն ու ոռոգման իրագործումը երկրում արդյունավետ իրականացնելու համար, քանզի նաև դրանով են պայմանավորված բնակչության առողջապահական ռիսկերը, արտեզյան ավազանի մակարդակի պահպանումը, հողերն աղակալումից և էռոզիայից կանխումը, գյուղատնտեսության զարգացումը և նույնիսկ բնակչության սոցիալ-տնտեսական ապահովվածությունը:

ИНСТИТУТ СОВМЕСТНОГО УПРАВЛЕНИЯ ИРРИГАЦИОННЫМИ СИСТЕМАМИ И НЕКОТОРЫЕ СУЩЕСТВУЮЩИЕ В АРМЕНИИ ПРОБЛЕМЫ

Олимпия Гегамян
Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук

Данная статья посвящена управлению ирригационными системами, которые имеют первостепенное значение для каждой страны, а также для Республики Армения. В статье изложены законодательные положения по регулированию сферы, рассмотрены их недостатки и пробелы.

Анализ существующей практики делает наиболее значимыми преимущества и недостатки института совместного управления ирригационными системами. Проведя анализ, мы в статье представили многочисленные рекомендации, которые, по нашему мнению, будут способствовать совершенствованию отраслевого законодательства и эффективному и действенному управлению ирригационной системой.

IRRIGATION SYSTEM PARTICIPATORY MANAGEMENT INSTITUTE AND SOME EXISTING PROBLEMS IN ARMENIA

Olympia Geghamyan
Lecturer of the YSU Chair of Civil Procedure
Candidate of Legal Sciences

The present article is devoted to the management of irrigation systems that are of primary importance to any country as well as to the Republic of Armenia. The article outlines the legislative regulations covering irrigation management, the gaps and shortcomings are being discussed.

The analysis of the existing practices reveals advantages and disadvantages of the Irrigation System Participatory Management Institute. As a result of that analysis, several proposals are introduced

which, in our opinion, will contribute to the improvement of sectoral legislation and the effective management of the irrigation system.

Բանալի բառեր - *ջրօգտագործող, ջրօգտագործողների ընկերություն, ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր:*
Ключевые слова: *водопользователь, ассоциация водопользователей, договор оросительного водоснабжения.*
Key words: *wateruser, waterusers' association, irrigation water suply contract*

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀՀ-ՈՒՄ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հեղինե Գրիգորյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը ժամանակակից հասարակության առջև ծառացած հիմնական մարտահրավերներից է, որը տարբեր ձևակերպումներով իր արտացոլումն է գտել ինչպես մի շարք առանցքային միջազգային-իրավական ակտերում, այնպես էլ բազմաթիվ պետությունների սահմանադրություններում: Այս համատեքստում ջրային ռեսուրսների պահպանությունն առավել քան արդիական է՝ հաշվի առնելով, որ խմելու և կենցաղային նպատակների համար պիտանի ջուրը մարդու կյանքի ու առողջության կարևորագույն նախապայմաններից է: «Սայնս դեյլի» հեղինակավոր պարբերականի հրապարակմամբ ջրի սակավությունը զգալի է բոլոր մայրցամաքներում ապրող 2,8 մլրդ բնակչության համար, իսկ 1,2 մլրդ մարդ չունի խմելու ջուր[1]:

2015 թվականի սեպտեմբերի 15-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Կայուն զարգացման 2030 օրակարգ» բանաձևում[2] բնական ռեսուրսների, այդ թվում՝ ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հրամայականն արտացոլված է փաստաթղթի այնպիսի դրույթներում, ինչպիսիք են «Նպատակ 6. Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ», «Նպատակ 7. Մատչելի և մաքուր էներգիա», «Նպատակ 9. Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածք», «Նպատակ 12. Պատասխանատու սպառում և արտադրություն» ու «Նպատակ 13. Գործողություն՝ ի նպաստ կլիմայի»: Նշված բանաձևը, թեև պարտադիր իրավաբանական ուժ չունի, սակայն ՄԱԿ-ի անդամ գրեթե բոլոր պետությունները հռչակված նպատակների իրագործմանն ուղղված գործողութ-

[1] https://www.sciencedaily.com/terms/water_scarcity.htm

[2] www.sustainabledevelopment.un.org

յունները համապատասխան ժամանակացույցով ներառում են զարգացման ազգային ծրագրերում:

Ռացիոնալ բնօգտագործման փիլիսոփայությունն արտահայտվում է նաև պարտադիր իրավաբանական ուժ ունեցող միջազգային բնապահպանական կոնվենցիաներում: Ռացիոնալ բնօգտագործման փիլիսոփայությունն արտահայտված է նաև ՀՀ Սահմանադրության փոփոխություններում[1], որի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև»: Իսկ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է ջրային ռեսուրսների նկատմամբ պետության բացառիկ սեփականություն. այսինքն՝ դրանք կարող են տրամադրվել միայն օգտագործման իրավունքով:

Ներպետական մակարդակում ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ապահովող հիմնական իրավական գործիքը ջրօգտագործման թույլտվություններն (այսուհետ՝ ՋԹ) են, որոնք տրամադրվում են ջրօգտագործողներին լիազոր մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից: Եվ ըստ էության, հենց այդ իրավասահմանող փաստաթուղթն է օրենսդրությամբ սահմանված ընդհանուր պահանջները հասցեագրում կոնկրետ ջրօգտագործողին՝ վերջինիս համար ստեղծելով որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այլ կերպ ասած՝ ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման միջոցով իրականացվում է պետության քաղաքականությունը ջրային ռեսուրսների օգտագործման ոլորտում: ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության տվյալներով՝ Արարատի մարզում վերջին 15 տարիների ընթացքում Արարատյան հարթավայրում հորատանցքերով ջրառը կազմել է շուրջ 55 խմ/վրկ, որը թույլատրելի միջին ջրաքանակը գերազանցել է մոտ 21 խմ/վրկ-ով, կամ 650 մլն խմ/տարի[2]: Առավել քան մտահոգիչ է նաև Սևանա լճից ամեն տարի կատար-

[1] Ընդունվել է 06.12.2015, ուժի մեջ է մտել 22.12.2015, ՀՀՊՏ 2015.12.21, Հատուկ թողարկում:

[2] https://www.ecolur.org/hy/news/water/---/10303/

վող ջրառը, որի արդյունքում ոչ միայն չի լուծվում ոռոգման ջրի խնդիրը, այլև վնաս է պատճառվում լճի էկոհամակարգին: 2018 թ. ընթացքում սեպտեմբերի 10-ի դրությամբ Սևանա լճից արդեն բաց է թողնվել 193.033 միլիոն խմ ջուր[1]:

Վերոգրյալ տվյալների համապատկերում առավել քան արդիական է ջրօգտագործման թույլտվությունների ինստիտուտի իրավակարգավորման խորը և համակողմանի գիտական ուսումնասիրությունը, որն առ այսօր չի հայտնվել իրավաբանների տեսադաշտում: Սույն հոդվածի շրջանակում կատարվում է գիտագործնական վերլուծություն ջրօգտագործման թույլտվության՝ որպես վարչական ակտի բնութագրերի, տրամադրման ընթացակարգի և պայմանների վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան իրավական լուծումների որոշ մոտեցումներ:

Ջրօգտագործման ռեժիմները: ՀՀ ջրային օրենսգրքի[2] 1-ին հոդվածը ջրօգտագործումը բնորոշում է որպես՝

1. ջրային ռեսուրսից ջուր վերցնել, այդ թվում՝ ստորերկրյա քաղցրահամ ջուր արդյունահանելը, կամ այլ եղանակով նվազեցնել,
2. ջրի կուտակում,
3. ջրային հոսքի խոչընդոտում կամ շեղում,
4. ջրային ռեսուրսի աղտոտում,
5. ջրային ռեսուրսի մեջ կեղտաջրերի արտանետում,
6. վնասակար նյութերի կուտակում այնպիսի եղանակով, որը կարող է վնասակար ազդեցություն ունենալ ջրային ռեսուրսի վրա,
7. ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխում:

Էկոլոգիական իրավունքի տեսությունում ընդունված է առանձնացնել բնօգտագործման, այդ թվում՝ ջրօգտագործման երկու ռեժիմ՝ ընդհանուր և հատուկ: Նույն տրամաբանությունը դրսևորված է ՀՀ ջրային օրենսգրքում այն տարբերությամբ, որ «ընդհանուր ջրօգտագործման» փոխարեն գործածված է «ազատ ջրօգտագործում» եզրույթը, որը, ՀՀ ջրային օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն, այն ջրօգտագործումն է, որի համար չի պահանջվում ջրօգտագործման

[1] https://www.ecolur.org/hy/news/water/-193033--/10395/

[2] Ընդունվել է 04.06.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002, ՀՀՊՏ 2002.07.10/24(199), Հոդ.581:

առանց թույլտվություն։ Այդուհանդերձ, ազատ ջրօգտագործումն անվերապահ և բացարձակ իրավունք չէ։ Նույն հոդվածի համաձայն՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը պարտավոր է սահմանել ջրօգտագործման թույլտվության պահանջ այն դեպքերում, երբ ազատ ջրօգտագործումը խախտում կամ սպառնում է խախտել ջրերի ստանդարտները[1]։ Այսպիսի օրինակներ հայաստանյան պրակտիկայում եղել են միայն 2003 թվականին։

Հարկ է արձանագրել, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում այն գործիքները և պայմանները (ծավալ և (կամ) այլ պայմաններ), որոնք հնարավորություն կտան վեր հանելու ազատ ջրօգտագործման այն դեպքերը, որոնք խախտում կամ սպառնում են խախտել ջրերի ստանդարտները։ Հաշվի առնելով, որ ազատ ռեժիմով ջրօգտագործման ամենատարածված և ռիսկային եղանակը խորքային հորերի շահագործումն է, գտնում ենք, որ արդյունավետ գործիք կարող է լինել ազատ ջրօգտագործման ռեժիմով շահագործվող խորքային հորերի հաշվառումը՝ ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունների գնահատման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով։

Ազատ ջրօգտագործման խնդրահարույց կարգավորում առկա է նաև ՀՀ ջրային օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում, որը թույլ է տալիս ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին որոշակի ջրօգտագործողների ազատել ջրօգտագործման թույլտվություն ստանալու պահանջից, եթե այդպիսի ջրօգտագործումն էական չէ։ Դրանով հանդերձ՝ որևէ իրավական ակտով սահմանված չեն այն չափանիշները կամ սահմանային շեմերը, որոնք գերազանցելու դեպքում ջրօգտագործումը կհամարվի էական։ Այդ չափանիշները պետք է հստակեցվեն «Ազատ ջրօգտագործման կար-

[1] Ներկայումս ջրերի ստանդարտներ տարբեր նպատակներով օգտագործվող ջրերի համար սահմանված չեն։ Միակ օրինակը ««Խմելու ջուր։ Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ։ Որակի հսկողություն» N2-III-Ա2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանն է։

գը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման[1] մեջ լրացումներ անելու ճանապարհով:

Ջրօգտագործման թույլտվության պայմանները: Ինչպես արդեն նշեցինք, ՋԹ-ն, ըստ էության, ոչ միայն ջրօգտագործման իրավունք վերապահող, այլև ջրօգտագործման հիմնական պայմանները սահմանող վարչական ակտ է: ՋԹ պայմանները և դրա տրամադրման ընթացակարգը կարգավորվում են «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ[2]: Նշված որոշման Հավելված 1-ը սահմանում է ՋԹ ձևը, որն ընդհանուր է՝ անկախ ջրօգտագործման նպատակից: Ի թիվս Հավելված 1-ի համաձայն սահմանվող պայմանների՝ ՀՀ ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում է ջրօգտագործման լրացուցիչ պայմաններ նախատեսելու հնարավորություն, մասնավորապես՝ «Առաջարկված ջրօգտագործումը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու և սոցիալական ու էկոլոգիական կայունությունը չխախտելու առաջնահերթություններն ապահովելու համար **ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը ջրօգտագործման թույլտվությանը կարող է կցել սույն օրենսգրքին չհակասող պայմաններ:** Այդ պայմանները համարվում են ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մասը և սույն օրենսգրքով սահմանված կարգով ենթակա են գրանցման»:

Սկզբունքորեն ընդունելով ՋԹ-ին կից լրացուցիչ պայմաններ նախատեսելու հնարավորությունը ջրային ռեսուրսների պահպանության համատեքստում՝ կարծում ենք, որ **«սույն օրենսգրքին չհակասող պայմաններ»** ձևակերպումը բավականին ընդհանրական է. այն պետք է հնարավորինս հստակեցնել, որպեսզի հնարավոր լինի

[1] Ընդունվել է 05.06.2003, ուժի մեջ է մտել 09.08.2003, ՀՀՊՏ 2003.07.30/39(274), Հոդ. 698:

[2] Ընդունվել է 07.03.2003, ուժի մեջ է մտել 12.04.2003, ՀՀՊՏ 2003.04.02/17(252), Հոդ. 288:

և՛ իրավակարգավորման ռեժիմը կանխատեսելի դարձնել տնտեսվարողների համար, և՛ խուսափել հնարավոր չարաշահումներից: Նպատակահարմար ենք գտնում ՀՀ կառավարության N218-Ն որոշումը լրացնել նոր հավելվածով, որտեղ կսահմանվի «լրացուցիչ պայմանների» շրջանակային ցանկ (պայմաններն իրենց բովանդակությամբ կարող են լինել տարողունակ): Միաժամանակ, անհրաժեշտ կլինի ՀՀ ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում կատարել համապատասխան լրացում՝ խնդրո առարկա արտահայտությունը փոխարինելով համապատասխան հղումով:

Ինչ վերաբերում է բուն ՋԹ-ով սահմանվող պայմաններին, ապա դրանցից առավել խնդրահարույցներին առարկայորեն անդրադառնալու համար ուսումնասիրվել է 2014 թվականին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին խմելու-կենցաղային և արդյունաբերական նպատակներով տրամադրված N000095 ջրօգտագործման թույլտվությունը:

Այսպես՝ ՋԹ ձևաթղթի 7-րդ կետը վերաբերում է ջրօգտագործման թույլտվության պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության մեխանիզմներին: Գտնում ենք, որ որպես վերահսկողության մեխանիզմներ սահմանված պահանջներն առավելապես կրկնություններ են և գործնականում ոչինչ չեն ավելացնում արդեն իսկ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Մասնավորապես, 1-4-րդ կետերում սահմանված պայմանները փոքր-ինչ այլ խմբագրությամբ նախատեսված են «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի[1] 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետում (ջրօգտագործման ոլորտում վերահսկողության ուղղությունները), իսկ 6-րդ կետն ընդհանրապես չի առնչվում վերահսկողությանը: ՋԹ ձևաթղթում «վերահսկողություն» եզրույթի գործածությունը տարընթերցումների տեղիք է տալիս մասնագետների շրջանում՝ կապված այն փաստի հետ, որ ՋՌԿԳ-ն ունի հսկողության, իսկ ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը՝ վերահսկողության գործառույթ: Վերահսկողության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բնապահպանական վերահսկողության մասին»

[1] Ընդունվել է 11.04.2005, ուժի մեջ է մտել 28.05.2005, ՀՀՊՏ 2005.05.18/28(400) Հոդ.548:

ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, իսկ եթե ՋԹ նպատակը հսկողության մեխանիզմներ նախատեսելն է, ապա դրանք չպետք է նույնանան վերահսկողության ուղղությունների հետ: Առաջարկում ենք ՀՀ կառավարության N218-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն՝ ՋԹ ձևաթղթից հանելով «ջրօգտագործման թույլտվության պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության մեխանիզմներ» պայմանը, որը, մեր համոզմամբ, անհարկի ծանրաբեռնում է փաստաթուղթը:

Միևնույն տրամաբանության շրջանակում գտնում ենք, որ ՋԹ ձևաթղթից պետք է հանել նաև 11-րդ կետը՝ «ջրերի ստանդարտները և (կամ) դրանց վերաբերյալ հրապարակումների տեղեկությունները». ստանդարտներին հետևելը պարտադիր է ցանկացած ջրօգտագործողի համար՝ ստանդարտի գոյության ուժով: N000095 ՋԹ-ով սահմանված 2-րդ պայմանը՝ «անհրաժեշտության կամ պահանջի դեպքում տեղական նշանակության լրատվական միջոցներով հրապարակել այդ ստանդարտների տվյալները և նրա պահպանման համար իրականացվող միջոցառումները» պայմանը բխում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքից[1]:

ՋԹ ձևաթղթի 12-րդ կետը պետք է բովանդակի պայմաններ հատուկ միջոցառումների մասին, որոնք կիրառվելու են արդյունավետ ջրօգտագործումը խթանելու և ջրի որակը բարելավելու, գերխոնավ և առափնյա կարևոր բնական միջավայրերը և առնչվող կենսաբազմազանությունը պահպանելու համար: N000095 ՋԹ-ով նախատեսվում է մշակել և իրականացնել ջրակորուստների կրճատման և նորմատիվային ջրաքանակի արդյունավետ օգտագործման միջոցառումների ծրագիր: Հարկ է նկատել, որ սահմանված պայմանը գործնականում որոշակիացված չէ, և տվյալ պարագայում տնտեսվարողի ստանձնած պարտավորությունը չունի կոնկրետ ժամկետ կամ այլ պայմաններ, որոնք հնարավորություն կտային արդյունավետ վերահսկողություն իրականացնելու դրա կատարման նկատմամբ: Հետևաբար, առաջարկում ենք ՋԹ 12-րդ կետի ձևակերպումը վերախմբագրել՝ ներառելով նաև սահմանված հատուկ միջոցա-

[1] Ընդունվել է 02.12.1998, ուժի մեջ է մտել 10.01.1999, ՀՀՊՏ 1998.12.31/33(66):

ռումների իրականացման ժամանակացույց կամ, ըստ անհրաժեշտության, այլ պայմաններ՝ չափելի և գնահատելի դարձնելով տնտեսվարողի պարտավորությունը:

ՋԹ ձևաթղթի 14-րդ կետը վերաբերում է ջրային ռեսուրսներին վնաս պատճառելու դեպքում համապատասխան երաշխիքներին: N000095 ՋԹ-ում նշված է հետևյալը. «ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների խախտման դեպքում փոխհատուցել հասցված վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»: Սա ևս չափազանց ընդհանրական ձևակերպում է, որը գործում է անկախ ՋԹ-ում նշված լինելու փաստից: Ավելին, ՀՀ կառավարության N218-Ն որոշման Հավելված 2-ի «Ձևաթղթի լրացմանը ներկայացվող պահանջները» վերտառությամբ II բաժնի 14-րդ կետի համաձայն, այդ կետի ներքո պետք է նկարագրվեն «ֆինանսական և (կամ) այլ երաշխիքներ, դրանց կիրառման դեպքերը և պայմանները»: ՋԹ 14-րդ կետը պետք է առաջին հերթին նախատեսի տնտեսվարողի մոտ առկա ֆինանսական երաշխիքները, օրինակ՝ դեպոնացված դրամական միջոցներ, պատասխանատվության ապահովագրության պոլիս և այլն: Այլ կերպ ասած՝ ՋԹ 14-րդ կետը պետք է հստակ ցույց տա տնտեսվարողի հանձնառությունը՝ հատուցելու իր գործունեությամբ պայմանավորված՝ ջրային ռեսուրսներին պատճառված վնասը:

Ջրօգտագործման թույլտվությունը՝ որպես վարչական ակտ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի[1] 56-րդ և 57-րդ հոդվածներն ամրագրում են վարչական ակտին ներկայացվող երկու կարևորագույն սկզբունք՝ **որոշակիությունը և հիմնավորվածությունը:** Վարչական ակտի *հիմնավորվածությունն* արտահայտվում է նրանով, որ այն պետք է բովանդակի համապատասխան ակտի ընդունման համար բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Օրինակ՝ ջրօգտագործման թույլտվության պարագայում իրավական հիմքը ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվություն ստանալու պահանջն է, իսկ փաստական հիմքը՝ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պայմանների համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

[1] Ընդունվել է 18.02.2004, ուժի մեջ է մտել 31.12.2004, ՀՀՊՏ 2004.03.31/18(317), Հոդ. 413:

Այս համատեքստում հարկ է հիշատակել հատկապես ձկնաբուծարանների, որոնք համարվում են խոշոր ջրօգտագործողներ, կառուցման իրավական հիմքերը, մասնավորապես՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումը և շինարարական թույլտվությունը, որոնք հիմք են ջրօգտագործման թույլտվության տրամադրման համար: ՀՀ-ում գործող ձկնաբուծարաններից շատերը չունեն այս փաստաթղթերը և գործունեություն են իրականացնում արոտավայրերի, խոտհարքների կամ տնկարկների հողերի վրա:

Ջրօգտագործման թույլտվությունը՝ որպես հանրային իրավունքի կարևորագույն ոլորտի առնչվող վարչական ակտ, **ենթակա է հրապարակման՝** համաձայն *«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի:* Բացի նշված օրենքով սահմանված վարչական ակտերի հրապարակման ընդհանուր պահանջից՝ ՀՀ ջրային օրենսգրքի 20-րդ հոդվածը, ի թիվս ջրային ոլորտին առնչվող այլ փաստաթղթերի, նախատեսում է նաև ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի հրապարակայնություն, այդուհանդերձ, ձևավորված չէ արդյունավետ իրավակարգավորման շրջանակ, որը կապահովի տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների հրապարակայնությունը:

Վերոգրյալի արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության (այսուհետ՝ ՋՌԿԳ) կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվությունները հասանելի չեն ո՛չ էլեկտրոնային եղանակով, ո՛չ էլ գերատեսչական տեղեկագրերում: ՋՌԿԳ ինտերնետային կայքում հասանելի են միայն ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման տարեկան հաշվետվությունները, բայց ոչ փաստաթղթերի բովանդակությունը[1]:

Վարչական ակտի մյուս կարևոր հատկանիշը դրա **բողոքարկման հնարավորությունն է:** Մասնավորապես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանում է վարչական ակտը վարչական կամ դատական կարգով բողոքարկելու հնարավորություն:

[1] http://wrma.am/4_1.php

ՀԿ-ների կողմից վարչական ակտերի բողոքարկման իրավունքը (հատկապես դատական կարգով) խնդրահարույց է եղել ՀՀ օրենսդրության համատեքստում մինչև 2016 թվականի «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի[1] ընդունումը և Վարչական դատավարության մասին ՀՀ օրենսգրքում[2] փոփոխությունների և լրացումների կատարումը: Մասնավորապես՝ մինչ այդ ձևավորված դատական պրակտիկայում չափազանց նեղ մեկնաբանում էր ստացել **«իր իրավունքների պաշտպանություն»** ձևակերպումը, որը ՀՀ վարչական դատարանը մեկնաբանել էր բացառապես *սուբյեկտիվ իրավունքների* պաշտպանության համատեքստում՝ անտեսելով այն հանգամանքը, որ հասարակական կազմակերպությունների հիմնական խնդիրն այս կամ այն ոլորտում հանրային շահերի պաշտպանությունն է[3]: Դրանից բացի՝ իր իրավական դիրքորոշումը ձևավորելիս դատարանը հաշվի չէր առել «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայով[4] (1998 թ., Օրհուս) ամրագրված **բավարար շահագրգռվածություն ունեցող անձանց համար** արդարադատության մատչելիության վերաբերյալ պահանջը, որի շրջանակում որպես դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտ դիտարկվում են նաև բնապահպանական հասարակական կազմակերպությունները: ՀՀ վարչական դատարանի նշված որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում բողոքը մասնակիորեն բավարարվել է, այսինքն՝ ճանաչվել է «Էկոդար» հասարակական կազմակերպության դատարան դիմելու իրավունքը՝ հիմք ընդունելով այն, որ

---

[1] Ընդունվել է 16.12.2016, ուժի մեջ է մտել 04.02.2017, ՀՀՊՏ 2017.01.25/5(1280), Հոդ.58:

[2] Ընդունվել է 05.12.2013, ուժի մեջ է մտել 07.01.2014, ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1, Հոդ.1186.1:

[3] ««Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության ներկայացրած հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» ՀՀ վարչական դատարանի 28.07.2009 թ. որոշումը:

[4] Ընդունվել է 25.06.1998, ուժի մեջ է մտել 30.10.2001, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12):

կազմակերպության կանոնադրային նպատակներն ու խնդիրները վերաբերում են շրջակա միջավայրի պահպանությանը[1]: Ներկայացված խնդրի վերաբերյալ հաղորդագրություն է քննել նաև Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն՝ արդյունքում արձանագրելով ՀՀ գործող օրենսդրության անհամապատասխանություն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին (արդարադատության մատչելիություն)[2]:

Հանրային շահերի պաշտպանության նպատակով ՀԿ-ների՝ դատարան դիմելու իրավունքն օրենսդրական մակարդակով ճանաչվել և հստակ չափանիշներ են սահմանվել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և Վարչական դատավարության մասին ՀՀ օրենսգրքով: Այդ փոփոխությունների արդյունքում խնդիրն առերևույթ կարելի է համարել կարգավորված: Այդուհանդերձ, լուծման արդյունավետությունը հնարավոր կլինի գնահատել համապատասխան պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում, որը դեռևս առկա չէ:

Ջրօգտագործման թույլտվության վարչական (վերադասության) և դատական կարգով բողոքարկման իրավունքի արդյունավետության պայմաններից է **բողոքարկման ժամկետների** սահմանումը: ՀՀ ջրային օրենսգրքում ջրօգտագործման թույլտվությունների բողոքարկման **հատուկ ժամկետ նախատեսված չէ,** հետևաբար գործում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով և ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ընդհանուր ժամկետները:

Վերոգրյալ 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) ենթակետերը ջրօգտագործման թույլտվության պարագայում կիրառելի են: Սակայն բ) ենթակետում սահմանված ժամկետն ավելի բարենպաստ է,

---

[1] ՎԴ/3275/05/08 «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 28.07.2009 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ:

[2] Findings and recommendations with regard to communication ACCC/C/2011/62 concerning compliance by Armenia - http://www.unece.org/env/pp/compliance/compliancecommittee/62tablearm.html

հետևաբար, պետք է կիրառվի առավել բարենպաստ պայմանը: Այդուհանդերձ, խնդրահարույց է այն, որ ջրօգտագործման թույլտվությունը բողոքարկելու **ժամկետի սկիզբն օրենքը չի կապել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության ի հայտ գալու կամ այլ անձանց իրավունքների խախտման պահի հետ:** Ջրօգտագործման թույլտվության, ինչպես նաև բնօգտագործման այլ թույլտվությունների պարագայում իրավունքների խախտումներ կարող են ի հայտ գալ թույլտվության գործողության ընթացքում, երբ կարող է լրացած լինել օրենքով սահմանված մեկ տարին: Այս պարագայում գործնականում վերանում է վարչական ակտի բողոքարկման հնարավորությունը: Ու թեև հնարավոր է ի հայտ եկած խախտումների վերաբերյալ իրազեկել վերահսկողություն իրականացնող կամ իրավապահ մարմիններին, այդուհանդերձ, իրավունքների **անմիջական պաշտպանության** հնարավորությունը զգալիորեն նվազում է:

Ջրօգտագործման թույլտվությունը դատական կարգով բողոքարկելու ժամկետը ևս պայմանավորված չէ **շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության ի հայտ գալու կամ այլ անձանց իրավունքների խախտման պահով:**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքում համապատասխանաբար վարչական բողոք և վարչական դատարան հայց ներկայացնելու վերաբերյալ հոդվածները լրացնել **նոր պայմանով,** որը կսահմանի վարչական բողոք կամ հայց ներկայացնելու ժամկետի հաշվարկի պայման՝ **սկսած իրավունքների խախտումն ի հայտ գալու կամ իրավունքը խախտած անձի՝ այդ մասին տեղեկանալու պահից:**

ՏԻՄ դերակատարությունը ՋԹ տրամադրման գործընթացում: ՀՀ կառավարության N218-Ն որոշման Հավելված 2-ը սահմանում է ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը, որոնք, ըստ նշանակության, կարելի է պայմանականորեն բաժանել 3 խմբի՝

1. ջրօգտագործման ազդեցության գնահատման և ջրօգտագործման արդյունավետության վերաբերյալ,

2. ջրօգտագործման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ այլ գույքային իրավունքների վերաբերյալ,

3. հարակից փաստաթղթեր։

Ինչպես ակնհայտ է փաստաթղթերի ցանկից, առանձնակի պահանջներ են ներկայացվում հատկապես հորատման միջոցով ստորերկրյա ջրերի օգտագործմանը, ինչը պայմանավորված է ստորերկրյա ջրերի՝ որպես քաղցրահամ ջրի պաշարի պահպանության կարևորությամբ։

2017 թվականին կատարված մի շարք հարցումներ, հարցազրույցներ և ուսումնասիրություններ ցույց են տվել, որ Արարատյան դաշտում ստորերկրյա ջրերի ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքով առանձին համայնքներ կանգնել են խմելու և ոռոգման ջրի սակավության խնդրի առջև[1]։ **Նշված խնդրի, ինչպես նաև շահագրգիռ սուբյեկտների կարծիքների ուսումնասիրությունը փաստում է, որ առաջացած խնդիրների լուծման, համայնքների շահերի պաշտպանության հարցում առանցքային դերակատարություն ունեն համայնքի ղեկավարները, որոնք որոշ դեպքերում կարողացել են էականորեն շահեկան պայմաններ ապահովել համայնքի ջրօգտագործողների համար։**

Վերոգրյալի համատեքստում առաջարկում ենք դիտարկել մի քանի մոտեցումների կյանքի կոչման հնարավորությունը։ Դրանք առնչվում են ՀՀ կառավարության N218-Ն որոշման Հավելված 2-ի ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկի 17-րդ կետին. «Ստորերկրյա խորքային հորերից ջրօգտագործման թույլտվությունների գործողության ժամկետների երկարաձգման մասին հայտերի գնահատման ժամանակ ջրօգտագործման վայրի տեղական ինքնակառավարման և ջրային համակարգերի պետական կառավարման մարմինների առաջարկությունները ջրօգտագործման թույլտվությամբ օգտագործված ջրերի երկրորդային օգտագործման վերաբերյալ»։

1. Անհրաժեշտ է որոշակի կարգավիճակ շնորհել տեղական ինքնակառավարման մարմնի առաջարկությանը, օրինակ՝ նախատեսելով ՋՌԿԳ կողմից այն գնահատելու և դրական գնահատականի դեպքում որպես ՋԹ պայման ամրագրելու պահանջ։

[1] Տե՛ս Baseline Study on Water Utilization in the Ararat Valley. USAID, 2017, էջեր 23-29։

2. ՏԻՄ առաջարկությունը կարող է հիմք դառնալ առանձին ներդրումային ծրագրերի իրականացման համար, որին, հնարավոր է, մասնակցելու պատրաստակամություն հայտնեն ինչպես ՏԻՄ-երը, այնպես էլ ջրօգտագործողները և այլ սուբյեկտներ՝ որպես հանրային-մասնավոր համագործակցության դրսևորում: Այս տեսանկյունից օգտակար կարող է լինել ջրօգտագործման հայտի ծանուցման հետ միաժամանակ հրապարակել նաև այս տեղեկատվությունը:

3. Եվ վերջապես, նպատակահարմար է, ՏԻՄ-երից բացի, հայտի ներկայացման փուլում համապատասխան առաջարկություններ տալու կամընտրական պայման ամրագրել ջրօգտագործման վայրի և հարակից տնտեսվարողների համար, որոնք կարող են դիտարկվել որպես հանրային-մասնավոր համագործակցության պոտենցիալ մասնակիցներ: Այսպիսի եզակի օրինակներ կարելի է գտնել Արարատի մարզում, որտեղ հնարավոր է եղել ձկնաբուծարաններում օգտագործված ջուրն անվճար տրամադրել համայնքներին ոռոգման նպատակով[1]:

Եզրակացություն: Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ-ում ջրօգտագործման թույլտվությունների ոլորտի իրավակարգավորումը համակարգային վերանայման կարիք ունի, որտեղ պետք է կարևորվեն հետևյալ ուղղությունները.

1. ՋԹ տրամադրման շրջանակում վարչարարության պարզեցում,

---

[1] 2016 և 2017 թվականներին ԱՄՆ ՄՋԳ-ի և «Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիայի» համատեղ ջանքերով վերականգնվեց Արարատի մարզի Հայանիստ գյուղի ոռոգման համակարգը, որն արտեզյան ջրերի խնայողական օգտագործմամբ համայնքի բնակիչների համար ոռոգումը դարձրեց առավել մատչելի: Ընդհանուր առմամբ, ծրագրի շահառու դարձավ 370 մարդ, և հնարավոր դարձավ մշակել շուրջ մեկ տասնամյակ չմշակվող ավելի քան 40 հեկտար հողատարածք: Այս համագործակցությամբ ապահովվեց արտեզյան ջրերի մեկ միլիոն խորանարդ մետր տարեկան խնայողություն: Իսկ ձկնաբուծական տնտեսությունների վերամշակված ջրի օգտագործմամբ այն աջակցեց շուրջ 21 տոննա մրգերի, բանջարեղենի և ձավարեղենի արտադրությանը: https://am.coca-colahellenic.com/hy/media/news/

2. ՋԹ պայմանների պահպանման համար արդյունավետ կառուցակարգերի ու երաշխիքների ամրագրում,

3. ՋԹ տրամադրման գործընթացին ՏԻՄ-երի և հարակից ջրօգտագործողների ներգրավում՝ հատուկ կարգավիճակով:

ИНСТИТУТ РАЗРЕШЕНИЯ НА ВОДОПОЛЬЗОВАНИЕ В РА: ПРОБЛЕМЫ И ПУТИ РАЗВИТИЯ

Эгине Григорян
Ассистент кафедры гражданского производства ЕГУ,
кандидат юридических наук

Настоящая статья посвящена некоторым вопросам правового регулирования института разрешения на водопользование в Республике Армения с акцентом на ряд пробелов и правовых проблем в контексте рационального пользования водных ресурсов. Нами разработаны подходы, направленные на улучшение содержания разрешения на водопользование путем минимизации администрирования и повышения эффективности условий разрешения, адресованные водопользователю.

Второй аспект статьи касается сроков судебного обжалования разрешений на водопользование в случае нарушения прав третьих лиц или нанесения вреда окружающей среде. Автор обосновывает предложение о том, что подсчет срока судебного обжалования разрешения на водопользование должен начатся с момента нарушения прав третьих лиц или с момента нанесения вреда окружающей среде.

THE INSTITUTION OF WATER USE PERMITS IN RA: PROBLEMS AND PROSPECTS OF DEVELOPMENT

Heghine Grigoryan
Assistant at YSU Chair of Civil Procedure,
Candidate of Legal Sciences

The present article scrutinizes the legal regulatory framework of water use permits in the Republic of Armenia with a specific focus on gaps and legal uncertainties in the framework of effective use of water resources. The author elaborates approaches in terms of enhancing the

content of water use permits, thus, eliminating the unnecessary administration and adding in efficiency of the terms addressed to the water user.

Another aspect of the article touches upon the time frames of challenging water use permits if they infringe third parties' rights or cause negative effects to the environment. The author substantiates the approach that in case of water use permits the time period to avail to judicial review thereof shall start to flow from the moment of the fact of infringement of rights, or, alternatively, from the moment of causing negative effects to the environment.

Բանալի բառեր - *ջրօգտագործման թույլտվություն, ազատ ջրօգտագործում, ջրօգտագործման թույլտվության բողոքարկում, ֆինանսական երաշխիքներ:*

Ключевые слова: *разрешение на водопользование, свободное водопользование, обжалование разрешения на водопользование, финансовые гарантии.*

Key words: *water use permit, free water use, review of water use permit, financial guarantees.*

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ Ի ՊԱՇՏՈՆԵ ՊԱՐԶՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Տիգրան Խաչիկյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Վարչական դատավարության ոլորտում անձանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսակետից ելակետային նշանակություն ունի այն իրողությունը, թե որքանո՞վ է ընտրված հայցն իր բնույթով համարժեք իրավունքների վարչադատավարական պաշտպանության արդյունավետության կանխադրույթին: Նշված գաղափարի խաթարման պարագայում, ըստ էության, ընտրված հայցատեսակի և սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևի միջև առկա օբյեկտիվ կապն ուղղակիորեն խզվում է՝ հանգեցնելով իրավունքների դատական պաշտպանության իմաստազրկմանը:

Վերը նշված հանգամանքի համատեքստում սույն հոդվածում որոշ հիմնախնդիրների մասով քննարկվել են վիճարկման և ճանաչման հայցի շրջանակում ոչ իրավաչափ վարչական ակտերի դատական գնահատման հիմնախնդիրները փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի իրացման համատեքստում:

Ակներև է, որ հիշյալ հարցադրման հրատապությունն ունի օբյեկտիվ բնույթ և սկզբունքորեն կարող է հետազոտման առարկա դառնալ առավել ընդգրկուն բնույթ կրող աշխատությունների շրջանակում: Այսուհանդերձ, սույն աշխատանքում բարձրացվել են մի քանի գործնական հիմնախնդիրներ, որոնք կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև դոկտրինալ տեսանկյունից խնդրո առարկա ինստիտուտի առավել համալիր հետազոտությունների իրականացման համար:

Այսպես, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, *վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ*

կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (նեռապայմ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները)[1]*:*

Միաժամանակ, Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ *ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առոչինչ լինելը:*

Վերը նշված երկու հայցատեսակների պարագայում ձևական առումով նույնական են բացառապես հայցի նյութական օբյեկտները: Երկուսի պարագայում էլ դատարանի դատին է հանձնվում որևէ վարչական ակտի իրավաչափության գնահատման խնդիրը: Պարզապես, ի տարբերություն վիճարկման հայցի շրջանակում վիճարկվող վարչական ակտի, ճանաչման հայցի պարագայում քննարկման առարկա է դառնում ի սկզբանե՝ ընդունման պահից նշված վարչական ակտի իրավական հետևանքներ առաջացնելու անհնարինությունը:

Միաժամանակ, պետք է նկատի ունենալ նաև, որ վկայակոչված իրավադրույթները համակարգային առումով փոխկապակցվածության մեջ են գտնվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ և 63-րդ հոդվածներում առկա իրավակարգավորումների հետ, որոնք համապատասխանաբար սահմանում են վարչական ակտի առոչնչության և անվավերության հիմքերը[2]:

Այլ կերպ ասած՝ քննարկվող հայցատեսակներում տարբեր են վարչական ակտի իրավաչափության գնահատման օբյեկտիվ ուղենիշները: Վիճարկման հայցի պարագայում վարչական դատարանը կաշկանդված է բացառապես վարչական ակտի անվավերության հիմքերի առկայության գնահատմամբ, մինչդեռ առոչնչության պարագայում քննարկման առարկա է դառնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված առոչնչության հիմքերի առկայությունը:

Ընդ որում՝ վարչական ակտի անվավերության պահանջ ներկայացված լինելու դեպքում վարչական դատարանն օբյեկտիվորեն

---

[1] Ընդունվել է 05.12.2013 թ., ուժի մեջ է մտել 07.01.2014 թ.: ՀՀՊՏ 2013.12.28/73 (1013)1 (այսուհետ՝ Օրենսգիրք):

[2] Ընդունվել է 18.02.2004 թ., ուժի մեջ է մտել 31.12.2004 թ.: ՀՀՊՏ 2004.03.31/18 (317):

կաշկանդված է ներկայացված հայցադիմումով և չի կարող գնահատական տալ վարչական ակտի առոչնչության հիմքերին: Գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքը թեպետ ենթադրում է վարչական դատարանի ակտիվ դերակատարում անհրաժեշտության դեպքում ներկայացված հայցապահանջի ճշգրտման և հստակեցման հարցում, այսուհանդերձ, չի ներառում վարչական դատարանի հայեցողությունը վարչական ակտի անվավեր ճանաչելու պահանջ ներկայացված լինելու պարագայում գնահատել դրա ենթադրյալ առոչնչությունը: Գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման և տնօրինչականության սկզբունքների միջև այս համատեքստում առկա է օբյեկտիվ սահմանազատում: Դատարանը մատնանշում է հայցադիմումում առկա սխալները, առաջարկում կողմին ուղղել դրանք, անհրաժեշտության դեպքում ընտրել սեփական իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանն ուղղված հայցատեսակը, բայց բոլոր դեպքերում ներկայացված հայցապահանջի շրջանակից շեղվել դատարանն իրավասու չէ:

Նման պայմաններում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցադրումը, թե ***իրավասո՞ւ է արդյոք վարչական դատարանն արձանագրելու վարչական ակտի ոչ իրավաչափ (անվավեր կամ առոչինչ) լինելն այնպիսի իրավական հիմքով, որը հայցվորի կողմից չի վկայակոչվել համապատասխանաբար վիճարկման կամ ճանաչման հայցում:***

Վերը նշված հարցադրումն ուղղակիորեն կապված է գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի կիրառման սահմանների բացահայտման հետ: Ակներև է, որ վարչական դատարանը կաշկանդված է ներկայացված հայցի խնդրամասում առկա պահանջով և սկզբունքորեն չի կարող շեղվել դրա սահմաններից: Բայցևայնպես, սույն պնդումը նույնքան միարժեքությամբ չի կարելի ընդունել այն պարագայում, երբ, օրինակ, հայցվորը խնդրում է ճանաչել վարչական ակտի առոչինչ լինելն այն հիմքով, որ այն ընդունվել է ոչ իրավասու մարմնի կողմից, մինչդեռ դրա իրավաչափությունը գնահատելիս վարչական դատարանը պարզում է վարչական ակտի առոչնչության մեկ այլ հիմքի առկայությունը, որը հայցվորը չի վկայակոչել: Հիշյալ դատողությունը խարսխվում է այն կանխադրույթի վրա, որ վարչական ակտի առոչնչության օրենսդրական հիմքերը վարչական ակտի ոչ իրավա-

չափության մասին վկայող ակնհայտ հանգամանքներն են, որոնց ստուգման և գնահատման պարտավորությունը վարչական դատարանը փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի շրջանակում ողջամտորեն կրում է: Հետևապես, մեր համոզմամբ, անկախ հայցադիմումում կոնկրետ իրավական հիմքի ուղղակի վկայակոչումից, վարչական դատարանը պարտավոր է ստուգել նաև այլ հանգամանքների առկայությունը, որոնք հանգեցնում են վարչական ակտի առոչնչությանը:

Ուշագրավ է, որ նման մոտեցման օգտին է անուղղակիորեն վկայում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի բ) ենթակետով սահմանված իրավակարգավորումը, որի համաձայն՝ *ապացուցման բեռը կրում է՝ (…) ճանաչման հայցով՝ (…) վարչական մարմինը՝ վարչական ակտի առոչինչ լինելը հերքող փաստերի մասով:*

Վկայակոչված օրինադրույթի բովանդակային վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ ապացուցման բեռը բաշխելիս վարչական դատարանն ի սկզբանե սահմանում է վարչական մարմնի պարտականությունը հերքել վարչական ակտի ենթադրյալ առոչնչությանը հանգեցնող բոլոր հնարավոր հիմքերի առկայությունը: Հետևապես, դրա արդյունքում ինքնաբերաբար վարչական մարմինը ստուգում է նաև վարչական ակտի առոչնչությունը կազմող բոլոր փաստական վավերապայմանները:

Այս առումով տեղին է համաձայնել մասնագիտական գրականության մեջ տեղ գտած այն կարծիքին, որ հանրային իրավահարաբերություններից բխող հայցային վարույթների կարևորագույն սկզբունքները կողմերի իրավահավասարությունը և տնօրինչականությունն են: Հետևաբար, վարչական դատավարությունում կողմերի ձևական հավասարության սկզբունքը պետք է լրացվի հավելյալ փոխհատուցող դատավարական գործիքներով մեղմելու վիճելի իրավահարաբերության պետաիշխանական լիազորություններով չօժտված մասնակցի դրությունը[1]:

[1] Տե՛ս Александровна Т.Н., Административный иск как средство защиты нарушенного публичного права, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 8:

Ավելին՝ ուշագրավ է, որ նշված դատողությունն ամբողջապես համահունչ է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4502/05/15 վարչական գործով 2018 թվականի նոյեմբերի 30-ին կայացված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին: Մասնավորապես, նշված վարչական գործով դատարանն արձանագրել է, որ *«Չնայած ներկայումս գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը կարող է հայցադիմումում վկայակոչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի այն կոնկրետ կետը, որը, իր կարծիքով, հիմք է վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու համար:*

Միևնույն ժամանակ ասվածը չի նշանակում, որ վարչական դատարանը վարչական ակտի առոչնչության հարցը պարզելիս կաշկանդված է միայն հայցվորի մատնանշած կոնկրետ իրավական հիմքով: Ընդհակառակը՝ վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակում վարչական դատարանը պարտավոր է քննարկել այն հարցը, թե առկա է արդյոք այն ակնառու կոպիտ սխալներից որևէ մեկը, որոնք նախատեսված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում: Փաստորեն, վարչական ակտի առոչինչ լինելը ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի շրջանակում վարչական դատարանը պարտավոր է քննարկման առարկա դարձնել վարչական ակտի առոչնչության՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում սահմանված բոլոր հիմքերի առկայության կամ բացակայության հարցը՝ անկախ հայցվորի կողմից այդ հիմքերից մեկը, մի քանիսը կամ բոլորը վկայակոչված լինելուց կամ չլինելուց»[1]*:*

Նկատի ունենալով խնդրո առարկա հարցի նշանակությունն ու արդիականությունը, դատական խնայողության և տնտեսավարության սկզբունքները, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ

[1] Տե՛ս թիվ ՎԴ/4502/05/15 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.11.2018 թ. որոշումը:

սահմանված ուղենիշները համարժեքորեն կենսագործելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն մասով սահմանված հայցը ներառում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերում սահմանված բոլոր հիմքերով վարչական ակտն առոչինչ ճանաչելու պահանջ՝ անկախ հայցադիմումում դրանցից յուրաքանչյուրի վկայակոչումից»:

Առաջարկվող իրավակարգավորումը հնարավորություն կտա առավել տեսանելի և առարկայական դարձնելու ճանաչման հայցի քննարկվող ենթատեսակի միջոցով իրավունքների պաշտպանության կենսագործման հեռանկարները՝ ապահովելով նաև մեկ գործի շրջանակում վարչական ակտի առոչնչությանը հանգեցնող ու *«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ», «դ» կետերին համապատասխան* բոլոր հնարավոր ապացույցների կենտրոնացումը:

Վերը նշված վերլուծությունների լույսի ներքո ծագում է բարձրացված սկզբնական հարցադրման հետ կապված մեկ այլ հարցադրում, ***թե իր հիմքում դրված գաղափարով և տրամաբանությամբ կարո՞ղ է արդյոք Վճռաբեկ դատարանի վկայակոչված որոշումը կիրառելի համարվել նաև վարչական ակտերի անվավերության առնչությամբ:***

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն,

Անվավեր է առոչինչ չհամարվող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով,

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

գ) շահերի բախման իրավիճակում:

Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *ապացուցման բեռը կրում է՝*

1) վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

Բերված իրավակարգավորումից բխում է, որ վիճարկման հայցի շրջանակում ապացուցման բեռը բաշխելիս վարչական դատարանը, ի տարբերություն ճանաչման հայցի, վարչական մարմնի վրա դնում է պարտականություն ապացուցելու ոչ թե անվավերությունը հերքող բոլոր փաստերը, այլ բացառապես միջամտող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացող հանգամանքները: Նման պայմաններում, մեր համոզմամբ, նպատակահարմար չէ վարչական դատարանը ծանրաբեռնել հայցվորի կողմից չվկայակոչված, բայցևայնպես վարչական ակտի անվավերությանը հանգեցնող բոլոր հիմքերի գնահատման պարտականությամբ: Հակառակ դեպքում կստացվի մի իրավիճակ, երբ ցանկացած գործով ներկայացված վիճարկման հայցով, երբ, օրինակ, հայցվորը վիճարկում է բացառապես կեղծ փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա վարչական ակտի ընդունված լինելը, վարչական դատարանը պետք է պարզի նաև այն, թե արդյոք վարչական ակտը չի ընդունվել, ասենք, շահերի բախման իրավիճակում: Նման պայմաններում, մեր համոզմամբ, գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքն այս պարագայում կարող է կենսագործվել այն ուղղությամբ, որ երբ, օրինակ, հայցվորը ներկայացնի առհասարակ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջ, վարչական դատարանը պարտավոր է գնահատման առարկա դարձնել անվավերությանը հանգեցնող բոլոր հիմքերի առկայությանը հարցը, մինչդեռ վարչական ակտի անվավերությանը հանգեցնող սոսկ մեկ հիմքի վկայակոչման պարագայում վարչական դատարանը չպետք է ծանրաբեռնվի վարչական ակտի անվավերության բոլոր հիմքերը ստուգելու և դրանց գնահատական տալու պարտականությամբ: Հակառակ դեպքում վարչական դատարանի կողմից իրականացվող վճռահատությունն օբյեկտիվորեն սահմանափակում է հայցվորի՝ վարչական ակտի անվավերության մեկ այլ հիմքի վկայակոչմամբ դրա հետագա դատական վիճարկման հնարավորությունը՝ նկատի

ունենալով, որ մինչ այդ ներկայացված վիճարկման հայցի շրջանակում վարչական դատարանն արդեն իսկ մերժել է հայցը: Ստացվում է այնպես, որ նման իրավիճակի հետևանքով ողջամտորեն կարող են առաջանալ իրավական որոշակիության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակներ: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, հարաբերականորեն առոչինչ *(համարժեք է անվավեր եզրույթին)* վարչական ակտերն ունեն օրենքի խախտման և իրավական հետևանքների առավել ցածր մակարդակ այնքանով, որքանով չեն ընդունվում իրավասության բացակայության կամ օրենքի կոպիտ խախտման արդյունքում[1]:

Հետևապես, մեր համոզմամբ, նշված պարտականությամբ դատարանը ծանրաբեռնելն ամենևին չի բխում գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի առարկայական շրջանակից: Բխում է, որ վիճարկման հայց ներկայացնելու պարագայում դրանում վարչական անվավերության որևէ հիմք վկայակոչելիս վարչական դատարանը պետք է կաշկանդված լինի բացառապես վիճարկվող վարչական ակտի անվավերության՝ հայցվորի կողմից վկայակոչված հիմքով՝ սեփական նախաձեռնությամբ անդրադարձ չկատարելով վարչական ակտի անվավերության այլ հիմքերին:

Հետևապես, ամփոփելով վերոգրյալը, պետք է արձանագրել, որ գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի իրացման համատեքստում վարչական ակտերի իրավաչափության դատական գնահատման ուղենիշների զատորոշումն ունի ելակետային նշանակություն վարչական դատավարությունում անձանց իրավունքների համարժեք պաշտպանության համար: Այս իմաստով, կարծում ենք, հընթացս ձևավորվող դատական պրակտիկան չունի այլ ճանապարհ, քան արդյունավետորեն ներդաշնակեցնել տեսություն-պրակտիկա անխզելի կապի օբյեկտիվ պահանջները:

---

[1] Տե՛ս Entela Abduli, Universiteti Europian I Tiranes Invalidity of administrative acts, Europe, an Journal of Research and Reflection in Management Science, Vol.3, No. 3, 2015,
https://www.idpublications.org/wp-content/uploads/2015/04/Invalidity-of-administrative-acts.pdf:

СУДЕБНАЯ ОЦЕНКА АДМИНИСТРАТИВНЫХ АКТОВ В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА ОПРЕДЕЛЕНИЯ ФАКТИЧЕСКИХ ОБСТОЯТЕЛЬСТВ EX-OFFICIO

Тигран Хачикян

Ассистент кафедры гражданского процессуального права ЕГУ, кандидат юридических наук

В статье анализируются базовые проблемы судебной оценки недействительных административных актов. В частности, изучаются вопросы судебной оценки незаконных административных актов, которые были установлены административным судом в рамках принципа выяснения обстоятельств ex-officio, при которых возникает вопрос, уполномочен ли административный суд регистрировать незаконный (недействительный) административный акт на правовой основе, на который истец не ссылался в соответствии с разновидностями исков. Анализ был проведен на основе административного судопроизводства с учетом требований законодательства, касающихся распределения бремени доказательств, что позволило обеспечить наивысшую степень комплексность предмета, подлежащего обсуждению.

JUDICIAL ASSESSMENT OF ADMINISTRATIVE ACTS IN JUDICIAL EVALUATION IN THE CONTEXT OF THE PRINCIPLE OF CLARIFYING THE FACTUAL CIRCUMSTANCES OF THE CASE OFFICIALLY

Tigran Khachikyan

Assistant at YSU Chair of Civil Procedure, Candidate of Legal Sciences

The article refers to the basic problems of judicial evaluation of the legitimacy of invalid and void administrative acts. Especially, the article examined the issues of judicial evaluation of illegal administrative acts by the Administrative Court within the framework of the principle of

clarifying the factual circumstances of the case officially, in which, the question of whether the administrative court has the right to record the illegal administrative act on a legal ground that the claimant has not adverted for a dispute or recognition claim respectively. The analyzes in the article have been conducted by taking into account the legal requirements relating to the distribution of the burden of dispute and claim recognition in the administrative proceedings, which has given an opportunity to provide the highest level of complexity of the substance to be discussed.

Բանալի բառեր - *վարչական ակտ, առոչինչ, գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունք, ճանաչման հայց, վիճարկման հայց:*
Ключевые слова: *административный акт, недействительный, принцип определения фактических обстоятельств ex-officio.*
Key words: *administrative act, void, invalid, the principle of clarifying the factual circumstances of the case officially, claim of dispute, claim of recognition.*

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աշխեն Ղարսլյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը հստակեցրեց Վճռաբեկ դատարանի դերը և գործառույթները ՀՀ դատական համակարգում՝ ամրագրելով, որ *Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է: Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝ 1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը. 2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:* Սահմանադրական փոփոխություններին համահունչ 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված և 2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը[1] նորովի կարգավորեց վճռաբեկության վարույթը՝ Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթների լիարժեք իրականացման համար նախատեսելով համապատասխան դատավարական ընթացակարգեր: Նոր կարգավորումների իրացումը, սակայն, դատական պրակտիկայում ի հայտ բերեց որոշակի խնդիրներ, որոնց լուծումն օրենսդրի կողմից օբյեկտիվ անհրաժեշտություն է դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, որի տարրերից է նաև բողոքարկման իրավունքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 388-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա **նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով** քննում է վերաքննիչ դատարանի եզրափակիչ և միջանկյալ

[1] ՀՕ-110-Ն, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374):

դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները: Վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերն են առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու, վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումները: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից հետևում է, որ միջանկյալ դատական ակտեր են համարվում որպես եզրափակիչ չնշված որոշումները, որոնք կայացվում են առանձին ակտի ձևով կամ արձանագրային որոշմամբ: Հետևաբար վերաքննիչ դատարանի կողմից կայացվող միջանկյալ դատական ակտեր կարող են համարվել վերաքննիչ բողոքը վերադարձնելու, գործի վարույթը կասեցնելու, դատական տուգանք նշանակելու, վերաքննիչ դատարանի որոշման մեջ տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ դրանց վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումները, ինչպես նաև առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումները: Օրենսդիրը վերաքննիչ դատարանի թե՛ եզրափակիչ, և թե՛ միջանկյալ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավական հնարավորությունը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված **դեպքերով**: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155-րդ, 371-րդ, 380-րդ և 384-րդ հոդվածների կարգավորումներից ուղղակիորեն հետևում է, որ վերաքննիչ դատարանի այնպիսի միջանկյալ դատական ակտերը, ինչպիսիք են դատական տուգանք կիրառելու, վերաքննիչ բողոքը վերադարձնելու, գործի վարույթը կասեցնելու և վերաքննիչ դատարանի որոշման մեջ տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ դրանց վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումները, ենթակա են բողոքարկման: Ինչ վերաբերում է առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումների բողոքարկման հնարավորությանը, ապա այս հարցում առկա է օրենսդրական անորոշություն, որն իր հերթին հանգեցրել է հակասական դատական պրակտիկայի ձևավորման: Նախ պետք է նշել, որ վերաքննութ-

յան կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանի այնպիսի միջանկյալ դատական ակտեր, որոնք անմիջականորեն կապված են արդար դատաքննության իրավունքի տարր համարվող դատարանի մատչելիության իրավունքի իրացման հետ: Այդպիսիք են, մասնավորապես, հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները, ինչպես նաև գործի վարույթը կասեցնելու, գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումները: Օրենսդրական անորոշության պայմաններում ստացվում է, որ նշված որոշումների վերանայման արդյունքում վերաքննիչ դատարանի որոշումները վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չեն, ինչը հավաստվում է նաև դատական պրակտիկայում արձանագրված դեպքերով: Մասնավորապես, թիվ ԵԴ/15861/02/18 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 24.08.2018 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2018 թվականի որոշմամբ բողոք բերած անձի [հայցվորի] վերաքննիչ բողոքը մերժվել է, և դատարանի 24.08.2018 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2018 թվականի որոշման դեմ [հայցվորի] կողմից բերվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.12.2018 թվականի որոշմամբ թողնվել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ *«տվյալ դեպքում սույն վճռաբեկ բողոքը ներկայացվել է Վերաքննիչ դատարանի 10.10.2018 թվականի որոշման դեմ, այսինքն՝ այն դատական ակտի դեմ, որի **բողոքարկման դեպք և կարգ** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ»*[1]: Փաստորեն դատական պրակտիկան ընթանում է այն ուղղությամբ, որ առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումները վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չեն: Ընդ որում՝ հստակ չէ՝ արդյոք օրենսդրի կամքն ուղղված

[1] Նույնաբովանդակ որոշումներ են կայացվել նաև թիվ ԵԴ/6326/02/18 և թիվ ՍԴ1/0225/02/18 գործերով:

է եղել այդ որոշումների՝ վճռաբեկության կարգով բողոքարկման ոչ ենթակա լինելուն, թե պարզապես առկա է բացթողում: Ինչպես արդեն նշվել է, դրանց որոշները, մասնավորապես՝ հայցադիմումը վերադարձնելու և հայցադիմումի ընդունումը մերժելու վերաբերյալ որոշումներն ուղղակիորեն առնչվում են անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի հետ և ենթակա են բողոքարկման միայն անմիջական կարգով: Այդ որոշումների կայացման գործընթացում ևս կարող են թույլ տրվել մարդու իրավունքների հիմնարար խախտումներ, կամ օբյեկտիվորեն կարող է առկա լինել օրենքի միատեսակ կիրառության անհրաժեշտություն: Այդ մասին կարող է փաստել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի պրակտիկայի ուսումնասիրությունը: Օրինակ՝ թիվ ԵԱՆԴ/3828/02/15 քաղաքացիական գործով 22.07.2016 թվականի որոշման շրջանակում ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը, իրացնելով իր՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթը, անդրադարձել և դիրքորոշում է արտահայտել այն խնդրի վերաբերյալ, թե արդյոք քաղաքացիական գործի հարուցման փուլում հայցադիմում ներկայացնելիս հայցվոր կողմի վրա կարող է դրվել պատասխանողի բնակության կամ գտնվելու վայրի վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականություն: Կամ թիվ ԵԱՔԴ/0229/02/16 քաղաքացիական գործով 07.06.2017 թվականի որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն անդրադարձել է այն հարցին, թե ենթակա է արդյոք դատական պաշտպանության Հաագայի կոնվենցիայով նախատեսված՝ երեխային իրեն վերադարձնելու ծնողի իրավունքը: Վեճի՝ դատարանում քննության ենթակա լինելու հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն անդրադարձել է նաև թիվ ԵԿԴ/5797/02/15 քաղաքացիական գործով 01.08.2016 թվականի որոշմամբ՝ հայտնելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի արտահայտած դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում:

Վերոգրյալից հետևում է, որ հայցադիմումի ընդունելության փուլի առանձին հարցերի վերաբերյալ ևս կարող է առկա լինել օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտություն, ուստի դատավարության այդ փուլում կայացվող որոշումների՝ վճռաբեկության կարգով բողոքարկման իրավական հնարավո-

րության սահմանափակումն արդարացված համարվել չի կարող: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը, համաձայն որի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունից[1]: ***Հետևում է, որ առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումները ևս պետք է վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա լինեն՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը շահագրգիռ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման հարցում, ուստի անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան լրացում՝ վճռաբեկության կարգով բողոքարկման հնարավորությունը սահմանելով նաև դատական այս ակտերի համար:***

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա նաև առաջին ատյանի դատարանի այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում: Այդպիսին, մասնավորապես, կարող են լինել «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կայացվող որոշումները: Ընդ որում՝ նման դիրքորոշում հայտնել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը թիվ ԿԴ/0023/04/17 և թիվ ԵԿԴ/0612/04/16 գործերով կայացված որոշումների շրջանակում: Մասնավորապես թիվ ԵԿԴ/0612/04/16 գործով 14.11.2018 թվականի որոշման շրջանակում ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *«… ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը բողոքարկ-*

[1] Տե՛ս «Delcourt v. Belgium» գործով ՄԻԵԴ-ի 17.01.1970 թ. վճիռը, «Sialkowska v. Poland» գործով ՄԻԵԴ-ի 22.03.2007 թ. վճիռը:

ման ենթակա որոշումների ցանկը սպառիչ չի սահմանել. օրենսդիրը նախատեսել է վերաքննության կարգով որոշումների բողոքարկման հնարավորություն նաև այն դեպքում, երբ այդ իրավունքը սահմանված է այլ օրենքներով: Հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 15-րդ կետով նշված «այլ որոշումներ» եզրույթի տակ պետք է ընդգրկվի նաև ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշումը՝ հաշվի առնելով վերջինիս էությունը՝ մասնավորապես այն հանգամանքը, որ նշված որոշման արդյունքում լրացուցիչ հնարավորություն է ստեղծվում պարտապանի ֆինանսական առողջացման համար, ինչը սնանկության վարույթի նպատակներից մեկն է: Վերը նշված դիրքորոշումն արտահայտելիս Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ սնանկության վարույթն ունի առանձնահատկություններ, այն չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելով և սնանկության վարույթն ավարտելով, այլ ներառում է պարտապանին սնանկ ճանաչելուց հետո ծագած մի շարք առանձին փուլեր, որոնցից յուրաքանչյուրն առաջացնում է կարևոր իրավական հետևանքներ: Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ սնանկության վարույթում որոշակի ակտեր իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են առանցքային համարվել սնանկության վարույթի հետագա ընթացքի համար, որով էլ պայմանավորվում է այդ ակտերի համար բողոքարկման հնարավորություն նախատեսելը: Անդրադառնալով սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշման՝ վճռաբեկության կարգով բողոքարկման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեև Վերաքննիչ դատարանը 18.09.2018 թվականի որոշմամբ սահմանել է, որ այն բողոքարկման ենթակա չէ, այդուհանդերձ, այն ենթակա է բողոքարկման՝ հիմք ընդունելով սնանկության վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ վերոգրյալ վերլուծությունները»: Փաստորեն սնանկության վարույթում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշումների վերանայման արդյունքում վերաքննիչ դատարանի որոշումների վճռաբեկության կարգով բողոքարկման իրավական հնարավորությունը Վճռաբեկ դատարանը պայմանավորել է զուտ սնանկու-

թյան վարույթի առանձնահատկություններով՝ առանց վկայակոչելու այն իրավական հիմքը, որից բխեցվում է այդպիսի հնարավորությունը: Վճռաբեկ դատարանի նման պրակտիկան արդարացված է այն առումով, որ հակառակ պարագայում սնանկության վարույթի համար էական նշանակություն ունեցող որոշումների գերակշիռ մասի վերանայումը պետք է ավարտվեր միայն վերաքննության փուլով, այն դեպքում, երբ դրանցում բարձրացված հարցերի կապակցությամբ ևս կարող է առկա լինել օրենքի միատեսակ կիրառության ապահովման կամ մարդու իրավունքների հիմնարար խախտումը վերացնելու անհրաժեշտություն: Հետևաբար այդ որոշումների՝ վճռաբեկության կարգով բողոքարկման սահմանափակումը որևէ կերպ հիմնավոր համարվել չի կարող: Այլ հարց է, որ դատական պրակտիկան իր կողմից առաջարկվող լուծումներով ևս թելադրում է համապատասխան օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը:

Վճռաբեկության վարույթի հաջորդ հիմնախնդիրը վերաբերում է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց: Օրենսդիրը նման իրավունք վերապահել է գործին մասնակցող անձանց, ինչպես նաև գլխավոր դատախազին և նրա տեղակալներին՝ օրենքով նախատեսված դեպքերում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 3-րդ մասը միաժամանակ սահմանում է, որ գործին մասնակից չդարձած անձինք վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված որոշման, իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա հարուցված վերաքննիչ վարույթը կարճելու կամ գործի վարույթը կասեցնելու մասին որոշումների, ինչպես նաև նույն օրենսգրքի 383-րդ և 384-րդ հոդվածներով նախատեսված հարցերով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումների դեմ: Փաստորեն գործին մասնակից չդարձված անձինք Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումների դեմ բողոք բերելու իրավունք չունեն: Օրենսդրի այս կարգավորման հիմքում հավանաբար ընկած է այն տրամաբանությունը, որ գործին մասնակցող անձանց ճիշտ շրջանակը՝ որպես գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիր, կարող է լուծվել և որոշվել միայն առաջին ատյանի դատարանում գործի

քննության ժամանակ[1]: Մասնավորապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է դատավարության մասնակիցների կազմը, լուծում է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը, իսկ նույն օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե առաջին ատյանի դատարանը գտնում է, որ դատական ակտը կարող է անխուսափելիորեն ազդել որոշակի անձանց իրավունքների և պարտականությունների վրա, ապա ծանուցում է տվյալ անձանց՝ որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ներգրավվելու նրանց իրավունքի և դրա իրականացման կարգի վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ առաջին ատյանի դատարանի լիազորությունն է ճիշտ որոշել գործին մասնակցող անձանց շրջանակը, և այդ լիազորության ոչ պատշաճ իրականացման պարագայում բողոք բերելու հիմք համարվող դատական սխալը թույլ է տրվում հենց առաջին ատյանի դատարանի կողմից: Մինչդեռ վերադաս դատական ատյանները նման լիազորություն չունեն, ինչով էլ պայմանավորված՝ օրենսդիրը սահմանել է, որ գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ, ունեն վերաքննիչ բողոքարկման իրավունք, իսկ վճռաբեկ բողոքարկման իրավունքից կարող են օգտվել միայն սահմանափակ դեպքերում, այն է՝ երբ արդեն իսկ իրացրել են իրենց վերաքննիչ բողոքարկման իրավունքը, սակայն համաձայն չեն վերաքննիչ դատարանի դատական ակտի հետ, կամ երբ վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացումն է սահմանափակվել:

Վերոգրյալով հանդերձ՝ դատական պրակտիկայում որոշակի հակասությունների տեղիք է տալիս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը, որն ամրագրում է, որ գործին մասնակից չդարձած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու երեք ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ

[1] Տե՛ս ***Беков Я.Х.,*** Подготовка дела к судебному разбирательству в гражданском судопроизводстве, М., Волтерс Клувер, 2010, էջ 39-41:

իմացել են կամ կարող էին իմանալ այդ դատական ակտի կայացման մասին: Հակասությունների տեղիք է տալիս նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի կարգավորումը, որը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու հիմքերը: Մասնավորապես նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե առկա է նույն օրենսգրքի 365-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը, իսկ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված հիմք է այն դեպքը, երբ դատական ակտն ազդում է գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վրա, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը քննվող գործի մասին ծանուցել է տվյալ անձին, սակայն նա չի ցանկացել ներգրավվել գործին: Այսինքն՝ վերոգրյալ հոդվածներով, սահմանելով վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման ժամկետը և հիմքը, օրենսդիրն անուղղակիորեն գործին մասնակից չդարձված անձանց իրավունք է վերապահել բողոքարկել նաև Վճռաբեկ դատարանի դատական ակտերը:

Նման հակասություն առկա էր նաև 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[1] համապատասխան կարգավորումների պարագայում: Ընդ որում՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 14.09.2010 թվականի թիվ ՍԴՈ-914 որոշմամբ անդրադարձել է Նախկին օրենսգրքի նույնաբովանդակ կարգավորումներին՝ արձանագրելով, որ *«...չնայած նրան, որ Նախկին օրենսգրքի 223-րդ հոդվածում գործին մասնակից չդարձած անձինք մատնանշված չեն որպես վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք, այնուամենայնիվ, նշված անձանց վճռաբեկ բողոք բերելու իրավունքն ամրագրված է Նախկին օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները» վերտառությամբ 229-րդ հոդվածի 3-րդ կետում, որի համաձայն՝ գործին մասնակից չդարձած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք*

[1] ՀՕ-247, ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

ունեն վճռաբեկ բողոք բերելու սկսած այն օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին»:

Նշենք, որ նոր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի քննարկվող հոդվածների կապակցությամբ արդեն իսկ ձևավորվել է որոշակի դատական պրակտիկա: Մասնավորապես, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը, թիվ ԵԱՔԴ/0054/02/11 քաղաքացիական գործով 10.10.2018 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելով, նշել է, որ *«...գործող իրավակարգավորումների պայմաններում ինչպես գործին մասնակցող անձանց, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ գլխավոր դատախազին և նրա տեղակալներին, այնպես էլ գործին մասնակից չդարձված անձանց նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման հիմքով անմիջապես Վճռաբեկ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունք վերապահված չէ: Տվյալ դեպքում Վալենտինա Կիրակոսովայի ներկայացուցիչը վճռաբեկ բողոք է բերել որպես գործին մասնակից չդարձված անձ՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքում դնելով վճռաբեկ դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերը խախտված ու սխալ կիրառված լինելու հանգամանքները: Այսինքն՝ Վալենտինա Կիրակոսովայի ներկայացուցիչը, անտեսելով, որ Վճռաբեկ դատարանի որոշումը նյութական և դատավարական իրավունքի նորմերը խախտված ու սխալ կիրառված լինելու հիմքով գործին մասնակից չդարձված անձի կողմից ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով, ներկայացրել է վճռաբեկ բողոք»*: Նշված գործով ուշագրավ է այն հանգամանքը, որ թե՛ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը և թե՛ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հայցը մերժել են, և գործին մասնակից չդարձած անձի իրավունքներին ու պարտականություններին ենթադրաբար առնչվող դատական ակտը կայացվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից: Օբյեկտիվորեն հարց կարող է առաջանալ՝ եթե անձը չունի վճռաբեկ բողոքարկման իրավունք, ապա ինչպես պետք է իրացնի իր վերաքննիչ բողոքարկման իրավունքը, եթե առաջին ատյանի դատարանն իր իրավունքներին առնչվող դատական ակտ չի կայացրել: Որքան էլ գործի առաջին

ատյանի դատարանի կողմից գործին մասնակցող անձանց շրջանակը ճիշտ չորոշելու արդյունքում դատական սխալ թույլ տալու կանխավարկածը, միևնույն է, բողոքարկման իրավունքի իրացման համար անհրաժեշտ է, որպեսզի բողոքարկվող դատական ակտն անդրադառնա գործին մասնակից չդարձած անձանց իրավունքներին և պարտականություններին: Բացի դրանից՝ օրենսդիրը չի կարգավորել նաև այն հարցը, թե կարող է արդյոք իրավական հետևանքներ առաջացնել որևէ գործով կայացրած Վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը, եթե տվյալ գործի շրջանակում առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտի դեմ գործին մասնակից չդարձած անձի կողմից բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է, դատական ակտը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի[1] 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը: Իսկ նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ եզրափակիչ դատական ակտը դատարանը կայացնում է Հայաստանի Հանրապետության անունից: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: Հետևաբար քննարկվող դեպքում կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ Վճռաբեկ դատարանի որոշումը շարունակում է պարտադիր մնալ հասեցատերերի համար, իսկ դրանում արված որևէ իրավանորմի մեկնաբանություններն ուղղորդում են իրավակիրառ պրակտիկան:

Վեր հանված խնդիրները վկայում են, որ օրենսդիրը պետք է վերացնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի քննարկված անհստակությունները: Մասնավորապես, առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 391-րդ

[1] ՀՕ-95-Ն, ընդունվել է 07.02.2018 թվականին, ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին, ՀՀՊՏ 2018.02.12/10 (1368):

հոդվածի 3-րդ մասը հանել, իսկ նույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը կիրառելի չդիտարկել վճռաբեկության վարույթի համար: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով սահմանված հիմքը հարկ է մեկնաբանել այնպես, որ այն կիրառելի լինի ոչ միայն անմիջականորեն բողոքարկվող դատական ակտի դեպքում, այլև տվյալ գործով վերադաս ատյանների կողմից կայացված և գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին և պարտականություններին վերաբերող վերջնական դատական ակտերի դեպքում, որոնք թեև անմիջականորեն ենթակա չեն բողոքարկման, սակայն շահագրգիռ անձի կողմից բողոք բերելու առիթ են հանդիսացել՝ հարուցելով անմիջականորեն բողոքարկվող դատական ակտի օրինականության և հիմնավորվածության կասկած: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել դրույթ առ այն, որ գործին մասնակից չդարձված անձի բողոքը վերադաս ատյանների կողմից բավարարվելու, համապատասխան դատական ակտը բեկանվելու և գործը նոր քննության ուղարկվելու դեպքում դրան նախորդող դատական ակտերը որևէ իրավական հետևանք չեն կարող առաջացնել:

Դատական պրակտիկայում որոշակի խնդիրներ են առաջացնում նաև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում նշել է, որ «դատարանի իրավունքը», որի մասնավոր դրսևորումն է «մատչելիության իրավունքը», բացարձակ չէ և բողոքների ընդունման պայմանների հարցում կարող է ենթարկվել ողջամիտ սահմանափակումների, քանի որ պետություններն այս հարցի կարգավորման առումով հայեցողության որոշակի ինքնուրույնությամբ են օժտված՝ պայմանով, սակայն, որ մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես կամ այն աստիճան, որ խաթարվի դրա էությունը[1]: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածը, Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթին համահունչ, սահմանում է վճռաբեկ բողոքը

[1] Տե՛ս «Brualla de la Torre v. Spain» գործով ՄԻԵԴ-ի 19.12.1997 թ. վճիռը, «Edificaciones March Gallego S.A. v. Spain» գործով ՄԻԵԴ-ի 19.02.1998 թ. վճիռը:

վարույթ ընդունելու հիմքերը՝ միաժամանակ հիմքերից յուրաքանչյուր կապակցությամբ նախատեսելով որոշակի պայմաններ: Մասնավորապես նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Մեր կարծիքով, սակայն, օրենսդրական այս ձևակերպումը թերի է այն առումով, որ օրենսդիրն անտեսել է նախկինում քննված և քննվող գործերով փաստերի նույնանման լինելու հանգամանքը: Վճռաբեկ դատարանն օրենքների և նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման իր գործառույթն իրականացնում է կոնկրետ վճռաբեկ բողոքի քննության կապակցությամբ՝ այդ կոնկրետ գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով համապատասխան իրավանորմի մեկնաբանությունը: Ընդ որում՝ շատ դեպքերում փաստական հանգամանքների առանձնահատկությունն էլ պայմանավորում է այս կամ այն իրավանորմի մեկնաբանության բովանդակությունը: Հայրենական իրավական համակարգում Վճռաբեկ դատարանն արդարադատության գործառույթից դուրս իրավական նորմերի կապակցությամբ մեկնաբանություն տալու լիազորություն չունի, հետևաբար բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը տվյալ նորմի կապակցությամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած մեկնաբանության հետ հակասության առումով վերլուծելիս և գնահատելիս հարկ է հաշվի առնել, թե արդյոք նույնանման են տվյալ գործերի փաստական հանգամանքները, որոնց լուծման կապակցությամբ տրվել է իրավանորմի մեկնաբանությունը: Նշված եզրահանգումը բխում է նաև «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումից, ըստ որի՝ **նույնանման փաստերով** այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

Իրացվելիության առումով դատական պրակտիկայում խնդիրներ է առաջացնում նաև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված պայմանը, համաձայն որի՝ նույն հոդվածի իմաստով բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր: Նախ հարկ է նշել, որ հայրենական դատավարագիտության մեջ տեսակետ է արտահայտվել, որ իրավունքի զարգացմանը նպաստելը դուրս է Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական խնդիրների շրջանակից: Մասնավորապես, իրավաբանական գիտությունների դոկտոր Վ. Վ. Հովհաննիսյանի կարծիքով, իրավակարգավորման ներկայիս պայմաններում Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի զարգացմանը նպաստելն իրականացվում է օրենքի և նորմատիվ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական խնդրի շրջանակում, սակայն տարակուսանքի տեղիք կարող է տալ այն հարցը, թե որքանով է այն իրացվելի, ինչ իրավական գործիքակազմի է տիրապետում Վճռաբեկ դատարանն այս խնդրի իրացման համար, և օրենսդրական ինչ երաշխիքներ են ամրագրված հայրենական իրավական համակարգում[1]: Հիմնավոր համարելով նշված տեսակետը՝ միաժամանակ հարկ ենք համարում հավելել, որ գործնականում բողոք բերած անձի համար պարզ չէ, թե ինչպիսի հիմնավորումներ պետք է ներկայացնի քննարկվող պայմանի առկայությունը հիմնավորելու համար, կամ Վճռաբեկ դատարանն ինչ չափանիշներով պետք է ստուգի բողոքը վարույթ ընդունելու այս պայմանի առկայությունը: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ այս պայմանի հիմքով վճռաբեկ բողոքներ

[1] Տե՛ս Վ. Վ. Հովհաննիսյան, **ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի նորմերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական խնդրի իրացումը քաղաքացիական դատավարությունում,** «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016, № 1 (19), էջ 64-75:

որպես կանոն բերվում են այն դեպքում, երբ առկա է որևէ *իրավական նորմի համակարգային մեկնաբանության անհրաժեշտություն կամ օրենսդրական բաց*: Գործնականում քիչ չեն այն դեպքերը, երբ Վճռաբեկ դատարանը, նման անհրաժեշտությամբ պայմանավորված, իրավական մեկնաբանություններ է տվել, որոնք հետագայում արժանացել են օրենսդրի ուշադրությանը՝ հիմք ծառայելով համապատասխան օրենսդրական փոփոխությունների համար: Այսպես, օրինակ, դատական պրակտիկայում երկար ժամանակ վիճելի էր այն հարցը, թե դատարանն իր նախաձեռնությամբ կարող է տուժանքի չափը պակասեցնել, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածի տառացի մեկնաբանությունը երկիմաստ մեկնաբանությունների տեղիք էր տալիս: Հակասական պրակտիկային վերջ տրվեց ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ԵԿԴ/2680/02/15 քաղաքացիական գործով 07.04.2017 թվականին կայացված որոշմամբ, որով ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ դատարանը կարող է տուժանքի չափ նվազեցնել միայն այն դեպքում, երբ պարտապանն է նման միջնորդությամբ դիմել իրեն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում 14.12.2017 թվականի *ՀՕ-319-Ն օրենքով* կատարված փոփոխությամբ օրենսդիրը սահմանել է տարեկան տուժանքի առավելագույն չափը և այն պակասեցնելու կարգը՝ արդեն իսկ նախատեսելով, որ դատարանն իր այդ լիազորությունից կարող է օգտվել միայն պարտապանի պահանջով:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը, Վճռաբեկ դատարանին վերապահելով իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթ, միաժամանակ պետք է վերջինիս վերապահի նաև իր պրակտիկայի արդյունքների հիման վրա իրավասու պետական մարմիններին նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու լիազորություն:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը և նոր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը որոշակիորեն սահմանափակել են նաև պետական մարմինների՝ վճռաբեկ բողոք բերելու իրավական հնարավորությունը: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ

առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում: Նշվածից հետևում է, որ պետական մարմինները դատական սխալի հիմքով վճռաբեկ բողոք բերելու իրավասություն չունեն: ***Այդուհանդերձ, կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերի պարագայում հարկ է նախատեսել բացառություն և դատական ակտը պարտադիր բեկանման հանգեցնող հիմքերով բողոք բերելու իրավասություն վերապահել նաև պետական մարմիններին, քանի որ այդ հոդվածով սահմանված՝ դատական ակտը բեկանելու հիմքերը դատավարական բնույթի այն խախտումներն են, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը և կարող են թույլ տրվել նաև Վերաքննիչ դատարանի կողմից:*** Հակառակ պարագայում ստացվում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից նման խախտումներ թույլ տալու դեպքում պետական մարմինն ընդհանրապես բողոքարկման իրավունքից չի օգտվում:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ նոր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը վճռաբեկության վարույթի մասով դեռևս բարեփոխման կարիք ունի և վերոշարադրյալում բարձրացված խնդիրները և դրանց լուծման կապակցությամբ արված առաջարկությունները կարող են այդ հարցում որոշակի նշանակություն ունենալ:

ПРАКТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ КАССАЦИОННОГО ОБЖАЛОВАНИЯ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

Ашхен Карслян
Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук

Данная статья посвящена анализу практических вопросов кассационного обжалования, возникшего в судебной практике в результате принятия и применения нового Гражданско-процессуального кодекса РА.

В статье автор обсудил вопрос правовой возможности кассационного обжалования судебных актов Апелляционного суда РА, которые были вынесены в результате рассмотрения апелляций на под-

готовительные определения суда первой инстанции. В связи с этим, придя к выводу, что новый Гражданский процессуальный кодекс РА не предоставляет такой возможности, мы предложили внести соответствующие поправки в новый Гражданско-процессуальный кодекс РА.

На примере собственной практики, мы предлагаем предоставить Кассационному суду правомочие на подачу предложений относительно совершенствования нормативных правовых актов компетентным государственным органам, что в свою очередь позволит суду данной инстанции полностью реализовать свою функцию по содействию развития права.

PRACTICAL ISSUES OF CASSATION APPEAL IN CIVIL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA

Ashkhen Gharslyan
Assistant at YSU Chair of Civic Procedure,
Candidate of Legal Sciences

This article is dedicated to practical issues of cassation appeal, which emerged in judicial practice as a result of the adoption and application of the new Civil Procedure Code of the Republic of Armenia.

In the article, the Author discussed the issue of the legal possibility of cassation appeal of the decisions of the Court of Appeal against the interim judicial acts of the Court of First Instance and concluded that the new Civil Procedure Code does not provide such possibility. Therefore, the Author proposed to make the corresponding amendment in the Civil Procedure Code of the Republic of Armenia.

Within the framework of the article, the Author has suggested to authorize the Court of Cassation to submit to the competent state bodies proposals on improvement of normative legal acts based on the results of its practice, which will enable the court to fully accomplish its function of promoting development of law.

Բանալի բառեր – *վճռաբեկ բողոքարկման իրավունք, միջանկյալ դատական ակտ, իրավունքի զարգացման գործառույթ, մարդու*

իրավունքների հիմնարար խախտում, միատեսակ կիրառություն, նույնանման փաստեր, նոր քննություն, իրավական հետևանքներ:

Ключевые слова: *кассационное обжалование, подготовительное определение, функция развития права, фундаментальное нарушение прав человека или нарушение основных прав человека, единообразное применение, идентичные факты, новое рассмотрение, правовые последствия.*

Key words: *Cassation appeal, interim judicial act, the function of law development, fundamental violation of human rights, uniform application, identical facts, new consideration, legal consequences.*

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱՄ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Աննա Մարգարյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավ. գիտ. դոկտոր

Անչափահասի անձի ձևավորումն ու զարգացումն իրականացվում են տարաբնույթ գործոնների ազդեցությամբ, որոնց մեջ իրենց կարևորությամբ առանձնանում են ընտանիքը, կրթական հաստատություններն ու ընկերական միջավայրը, սակայն տարիքի աճին զուգընթաց՝ ընտանիքի ազդեցությունը երեխայի վրա փոքրանում է՝ իր տեղը զիջելով երեխայի համար ռեֆերենտային խումբ համարվող, նրա համար շփում ու հուզական հարմարավետություն, նոր տեղեկատվություն ու կենսափորձ ապահովող հասակակիցների միջավայրին:

Կրիմինալոգիական բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում ընկերական միջավայրը, նրանց հետ ազատ ժամանցի անցկացումն ունեն առանցքային նշանակություն[1], ինչի վկայությունն է նաև անչափահասների կողմից հանցավոր վարքագիծը խմբի՝ հիմնականում հասակակիցներից բաղկացած միավորման կազմում կատարելուն նախապատվություն տալը: Տ. Ա. Շիլովան նշում է, որ երեխաների հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման վրա էապես ազդում են երեխայի մտավոր ցածր մակարդակը, անձի ձևավորման գործընթացի անավարտ լինելը, միջավայրի բացասական ազդեցությունը և հատկապես երեխայի կախվածությունն իր համար ռեֆերենտային համարվող ընկերական շփման խմբից և դրանում ընդունելի արժեքային կողմնորոշումնե-

[1] Տե՛ս ***Мельникова-Шаркова Е.А.,*** Неформальное окружение как фактор криминализации несовершеннолетнего преступника. Вопросы криминологии, криминалистики и судебной экспертизы, 2015, № 1 (37), էջ 47; ***Гурьев М.Е.,*** Детерминирующее влияние социально-психологических факторов на формирование личности несовершеннолетнего преступника. Психология и педагогика: методика и проблемы практического применения, 2014, № 35-1, էջ 84:

րից, մոտիվացիայից[1]:

ՀՀ-ում 12-17 տարեկան անչափահասների շրջանում 2006 թ. մեր կողմից իրականացված «ISRD-2» և 2014 թ. անցկացված «ISRD-3» ուսումնասիրությունները ևս վկայում են երեխայի շեղվող վարքագծի ձևավորման, դրսևորման գործընթացում ընկերական միջավայրի ունեցած ազդեցության մասին:

«ISRD-3» ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում անչափահասները առավելապես նախընտրում են իրենց ժամանակն անցկացնել ընկերների (50.7%), ծնողների հետ (41.8%), և միայն մի փոքր զանգվածն է նախընտրում մենակ մնալ (7.5%): Ընդ որում՝ նույն օրինաչափությունը գրանցվել է նաև «ISRD-3» ուսումնասիրության մեջ ընդգրկված մյուս երկրներում՝ բացառությամբ Կոսովոյի, որտեղ երեխաներն ազատ ժամանցի անցկացման առումով առավել մեծ նախապատվությունը տվել են ընտանիքին:

Միաժամանակ, կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ այն, թե ում հետ է երեխան նախընտրում անցկացնել իր ազատ ժամանակը, հավաստիորեն ուժեղ կոռելյացված է շեղվող վարքագծի դրսևորման հետ:

Գծապատկեր 1. Ժամանցի համար նախապատվելի տարբերակը և շեղվող վարքագիծը՝ «ISRD-3»



[1] Տե՛ս ***Шилова Т.А.,*** Психологические особенности отклоняющегося поведения подростков. Системная психология и социология. 2012. № 5, էջ 86:

Գծապատկեր 1-ից ակնհայտ է, որ ընկերների հետ ազատ ժամանցն անցկացնող ՀՀ երեխաները 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել՝ գրաֆիտի, վանդալիզմ, մանր գողություն կատարել, գրեթե 3 անգամ հաճախ՝ բռնություն գործադրել, քան ընտանիքի հետ ժամանցն անցկացնել նախընտրողները: Այս օրինաչափությունը գրանցվել է հետազոտության մեջ ընդգրկված նաև մյուս երկրներում:

Թեև կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում, ինչպես և այլ երկրներում, 12-17 տարիքային խմբի ներկայացուցիչները ձգտում են հասակակիցների հետ շփման, այնուհանդերձ, հարց է ծագում, թե արդյո՞ք անչափահասներն իրականում ունեն ընկերների կայուն խումբ, որի հետ ժամանակ են անցկացնում, և եթե այո, ապա ի՞նչ ուղղվածություն ունի այդ խումբը, ինչո՞վ է զբաղվում:

ՀՀ-ում, Կոսովոյում, Մակեդոնիայում հարցմանը մասնակցած երեխաների 2/3-րդը, Բոսնիա-Հերցեգովինայում, Շվեյցարիայում հարցմանը մասնակցածների՝ 3/4-րդը, Սերբիայում և Ուկրաինայում հարցմանը մասնակցածների՝ 7/8-րդը նշել է, որ ունի ընկերների կայուն խումբ, որի հետ էլ անցկացնում է իր ազատ ժամանակը: Ընդ որում՝ կրկին հավաստի ուժեղ կոռելյացիա է գրանցվել ընկերների կայուն խումբ ունենալու և շեղվող վարքագծի դրսևորման միջև. ընկերների կայուն խումբ ունեցող անչափահասները, ի համեմատ կայուն ընկերական խումբ չունեցողների, ՀՀ-ում 2 անգամ ավելի հաճախ են հաղորդել շեղվող վարքագիծ դրսևորելու, 1.9 անգամ հաճախ՝ բռնություն գործադրելու մասին:

Առավել կարևոր է այն, թե երեխայի կարծիքով, իր ընկերների խումբն ի՞նչ հասարակական ուղղվածություն ունի, արդյոք կարելի է այն դիտարկել որպես ասոցիալ ուղղվածության, «բանդա» համարվող խումբ: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ այն երեխաները, ովքեր հակված են մտածելու, որ իրենք «բանդա» համարվող խմբի անդամ են, ավելի հաճախ են ներգրավվում ինչպես շեղվող, բռնի վարքագծի դրսևորմանը, այնպես էլ սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների կատարմանը: Ընդ որում՝ ասվածը, առանց բացառության, հաստատվել է «ISRD-3» ուսումնասիրության մեջ ներգրավված բոլոր երկրներում:

Մասնավորապես 2014 թ. ՀՀ-ում հարցմանը մասնակցած երեխաների 3.2 (2006 թ. այս ցուցանիշը 1.5% էր), Բոսնիա-Հերցեգովինայում՝ 6.2, Կոսովոյում՝ 11.5, Մակեդոնիայում՝ 13.3, Սերբիայում՝ 7.6, Ուկրաինայում՝ 14.8, Շվեյցարիայում՝ 9.5%-ն է իր ընկերների խումբը դիտարկել որպես «բանդա»: Գրեթե բոլոր երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, նշված երեխաների շրջանում 2 անգամ ավելի բարձր է եղել շեղվող վարքագիծ դրսևորելու ռիսկը:

ՀՀ-ում իրենց «բանդա»-ի անդամ դիտարկող երեխաները 4.6 անգամ ավելի հաճախ են հաղորդել բռնություն գործադրելու, 3.5 անգամ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություն կատարելու մասին: Ուշագրավ է, որ երեխայի կողմից նման ընկալումը Շվեյցարիայում, Սերբիայում գրեթե 11 անգամ ավելացրել է բռնի վարքագիծ դրսևորելու, իսկ Ուկրաինայում՝ 7 անգամ սեփականության դեմ ոտնձգություն կատարելու հավանականությունը:

Շեղվող վարքագծի դրսևորմանն առավել հաճախ են ներգրավվում այն երեխաները, որոնց պնդմամբ, իրենց ընկերական խմբում արդարացված, ընդունելի է համարվում ապօրինի արարքների կատարումը կամ դրանք փաստացի կատարվում են: Ընդ որում՝ «ISRD-2» ուսումնասիրության արդյունքներով վեր հանվեց դրա կոռելյացիան ինչպես երեխաների շեղվող վարքագծի, այնպես էլ վիկտիմիզացիայի հետ: Մասնավորապես նման խմբերին անդամակցող երեխաների շրջանում զգալիորեն՝ 2-3 անգամ, բարձր է եղել մարմնական վնասվածք ստանալու, ալկոհոլ, թմրանյութ գործածելու, խմբային կռիվներին ներգրավվելու ռիսկը, 5-8 անգամ՝ ուրիշի առողջությանը վնաս պատճառելու, 3-4 անգամ՝ զենք կրելու, հակերություն իրականացնելու, 15-20 անգամ՝ ավազակություն, 4-6 անգամ՝ վանդալիզմ, նույնիսկ հակերություն կատարելու հավանականությունը:

Հոգեբանության մեջ նման վարքագիծը բացատրվում է նրանով, որ ասոցիալ խմբին պատկանելությունը ենթադրում է հուզական ներգրավվածություն, երեխաների կողմից խմբին պատկանելության, դրա մի մասնիկ լինելու ուժեղ արտահայտված զգացում, «մենք» հասկացության հակադրում «նրանց» հասկացությանը, ինչն

էլ հանգեցնում է խմբում ընդունված արժեքներին համապատասխան գործելու վճռականության[1]:

Շեղվող վարքագծի դրսևորման և ընկերական խմբի կողմից ապօրինի արարքների կատարումն արդարացնելու միջև առկա կապը վեր է հանվել նաև այլ հեղինակների ուսումնասիրություններում[2], սակայն «ISRD-2» հետազոտության շրջանակում այն իր հաստատումը գտավ նաև ՀՀ-ում:

Աղյուսակ 1. Ընկերական խմբի կողմից ապօրինի արարքների կատարումն ընդունելի համարելը և շեղվող վարքագիծը՝ «ISRD-2»

	ապօրինի արարքները ընդունելի են			ապօրինի արարքներ են կատարվում		
	այո	ոչ		այո	ոչ	
իր առողջությանը պատճառված վնաս	7.1	3.8	Ns	9.0	3.8	**
գինի/գարեջուր գործածել	44.4	26.5	***	48.4	26.8	***
թունդ ալկոհոլ գործածել	17.2	6.5	***	21.3	6.5	***
հաշիշ գործածել	1.8	0.6	Ns	3.3	0.5	*
խմբային կռիվներ	43.2	18.7	***	51.6	18.8	***
զենք կրել	20.7	5.6	***	24.6	5.8	***
ուրիշի առողջությանը վնաս պատճառել	6.5	1.2	***	9.0	1.1	***
ավազակություն	3.0	0.2	***	4.1	0.2	***
վանդալիզմ	12.4	3.3	***	17.2	3.1	***
հակերություն	7.7	3.3	**	10.7	3.1	***

[1] Տե՛ս ***Фокина А.В.***, Роль личностного эгоцентризма в структуре подростковой девиантности. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук, Москва, 2008, էջ 10-11:

[2] Տե՛ս ***Gatti U., Haymoz S., Schadee H.,*** Deviant Youth Groups in 30 Countries. *Results From the Second International Self-Report Delinquency Study*. International Criminal Justice Review, 2011, Vol 21, Issue 3, էջ 208-224; ***Лунеев В.В.,*** Мотивация преступного поведения, М., 1991, էջ 167:

«ISRD-3» հետազոտության շրջանակում ուշադրություն դարձվեց ոչ միայն անչափահասների խմբերի ասոցիալ ուղղվածությանը, այլև նրան, թե ընկերների հետ ժամանակ անցկացնելիս երեխան ինչով է առավելապես զբաղվում:

Ստացված արդյունքները վկայում են, որ հայ երեխաներն իրենց ազատ ժամանակն անց են կացնում կամ առավելապես սրճարաններ, բարեր գնալով (64,7%) կամ էլ փողոցներում աննպատակ թափառելով (52,7%): Վերջին տվյալը մտահոգիչ է, քանի որ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2009-2014 թթ.՝ երեխաների կողմից կատարված յուրաքանչյուր 5-րդ հանցավոր արարք տեղի է ունեցել այգիներում կամ փողոցներում:

ՀՀ-ում հարցմանը մասնակցած երեխաներն ազատ ժամանակն անցկացնելիս, ի համեմատ հետազոտության մեջ ընդգրկված այլ երկրների, առավել հաճախ են ներգրավվել խմբային կռիվների (22%) մեջ, ընդ որում՝ ազատ ժամանակն անցկացնելիս խմբային կռիվների մասնակցությունը մեր երեխաների շրջանում 1.7 անգամ ավելի հաճախ է նշվել՝ ի համեմատ Ուկրաինայի, Շվեյցարիայի, գրեթե 2 անգամ հաճախ՝ ի համեմատ Կոսովոյի իրենց հասակակիցների:

Ներկայացված՝ 2014 թ. տվյալների համեմատությունը 2006 թ. անցկացված «ISRD-2» ուսումնասիրության արդյունքների հետ թույլ տվեց գրանցել տանից դուրս ազատ ժամանցն անցկացնող, հասարակության կողմից անընդունելի վարքագիծ դրսևորող երեխաների թվաքանակի տեսակարար աճ. 2006 թ. հարցվածների 57,1%-ը, իսկ 2014 թ.՝ արդեն 64,7%-ն էր նշել սրճարաններում, բարերում ժամանցն անցկացնելու մասին, ազատ ժամանցի ընթացքում ալկոհոլի, թմրանյութի գործածման մասին՝ համապատասխանաբար՝ 3,9 և 8,5%-ը, հաճույքի համար մարդկանց հետապնդելու, վախեցնելու մասին՝ 10,9 և 12,6%-ը:

Պետք է փաստել, որ ընդհանրապես ՀՀ-ում երեխաների ազատ ժամանցի ոլորտի կազմակերպումը հիմնականում թողնված է ինքնահոսի. հարցմանը մասնակցած երեխաների 82,5%-ը նշել է, որ ազատ ժամանակի մի մասը՝ օրական միջինը 1-2 ժամ, տրամադրում է համակարգչային խաղերին, 87,1%-ը՝ 2-3 ժամ, անցկացնում է սոցիալական ցանցերում: Մինչդեռ շատ քիչ թվով երեխաներ են

նշել, որ իրենց ազատ ժամանցն անց են կացնում գրադարան, կինո կամ թանգարան այցելելով, ինչի պատճառներից մեկը ՀՀ-ում մշակութային օջախների սակավությունն է կամ երեխաների համար ոչ մատչելիությունը:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վեբկայքում տեղադրված տվյալների վերլուծությունը վկայում է, որ ի համեմատ 2000 թ.՝ 2016 թ. գրադարանների թիվը ՀՀ-ում կրճատվել է 1.5 անգամ՝ 1137-ից հասնելով 798-ի: Թանգարանների և թատրոնների թիվը թեև չի պակասել[1], սակայն երեխաների համար մուտքի ոչ մատչելի վճարներ են սահմանվել:

Երեխաների համար գործում են պարի, նկարչության, քանդակի սպորտաձևերի և այլ խմբակներ, սակայն դրանք բոլորն էլ իրենց ծառայություններն առաջարկում են վճարովի հիմունքներով, ուստի դրանք ևս երեխաների համար միշտ չէ, որ հասանելի են:

Մինչդեռ երեխաների ազատ ժամանցի կազմակերպման որակից է կախված, թե որքանով նա հաղորդակից կդարձվի հոգևոր արժեքներին, զերծ կմնա շեղվող վարքագծի դրսևորումից:

2014 թ. մեր կողմից անցկացված «ISRD-3» ուսումնասիրության շրջանակներում վերլուծության ենթարկվեց երեխաների ժամանցի վատ կազմակերպման և շեղվող վարքագծի միջև կոռելյացիան: Երեխաներին առաջարկվեց նշել, թե ազատ ժամանցի անցկացման՝ հետազոտողների կողմից առաջարկված 6 տարբերակից (1. սրճարան, բար, փոփ համերգ գնալ, 2. կռիվների մասնակցություն, 3. փողոցներով աննպատակ թափառել, 4. հաճույքի համար ապօրինի բաներ անել, 5. ալկոհոլ գործածել, 6. հաճույքի համար մարդկանց վախեցնել, հետապնդել) ո՞րն է տեղ գտել իրենց ազատ ժամանցի ոլորտում: Հետազոտական նպատակներով ժամանցի վատ կազմակերպում է դիտարկվել, եթե երեխան դրական է պատասխանել 6 տարբերակներից գոնե 3-ին:

Արդյունքում՝ ՀՀ-ում հարցմանը մասնակցածների 20.7, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 17.3, Կոսովոյում՝ 11.1, Մակեդոնիայում՝ 27.4, Սերբիայում՝ 36, Ուկրաինայում՝ 29.5, Շվեյցարիայում՝ 32.1% -ը հայտնվեց ժամանցի վատ կազմակերպման մասին հաղորդողների խմբում:

[1] Տե՛ս ՀՀ վիճակագրական տարեգիրք. կրթություն և մշակույթ, 2017, http://armstat.am/file/doc/99504493.pdf:

Ժամանցի ոլորտի վատ կազմակերպման և շեղվող վարքագծի միջև կոռելյացիան վեր հանելու նպատակով ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուժեղ հավաստի կոռելյացիա է գրանցվել ժամանցի ոլորտի վատ կազմակերպման և շեղվող վարքագծի բոլոր դրսևորումների միջև:

Մասնավորապես, ՀՀ-ում ժամանցի ոլորտի վատ կազմակերպման խմբի մեջ ներառված երեխաները, ի համեմատ իրենց մյուս հասակակիցների, 2.4 անգամ ավելի հաճախ են գրաֆիտի, վանդալիզմ, խանութից գողություն կատարել, խմբային կռիվներում ներգրավվել, գրեթե 7 անգամ հաճախ՝ բռնի վարքագիծ դրսևորել, անձի առողջությանը վնաս պատճառել, 4 անգամ հաճախ՝ ոտնձգություն կատարել ուրիշների սեփականության իրավունքի դեմ, գողություն կատարել:

Իրականացված ուսումնասիրությունը վեր հանեց ևս մեկ փոփոխություն. ի համեմատ 2006 թ.՝ 2014 թ. երեխաները գրեթե 1,4 անգամ ավելի հաճախ են նշել երեկոյան ժամերին տանից դուրս գալու, ընկերների հետ ժամանակ անցկացնելու մասին, ինչը, թերևս, պայմանավորված է հասարակությունում տեղ գտնող, այդ թվում՝ անչափահասների վրա ազդեցություն գործող ազատականացման գործընթացներով. ՀՀ-ում հարցմանը մասնակցածների 26.7 (2006 թ.՝ 19.8%), Բոսնիա-Հերցեգովինայում՝ 38, Կոսովոյում՝ 15.8, Մակեդոնիայում՝ 41.2, Սերբիայում՝ 45.7, Ուկրաինայում՝ 18.4, Շվեյցարիայում՝ 16.7%-ը նշել է, որ գրեթե ամեն օր կամ շաբաթը 3-6 անգամ երեկոյան ժամերին դուրս է գալիս:

Սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու առումով ՀՀ-ում այս ցուցանիշն էական դերակատարություն չի ունեցել, սակայն ուժեղ հավաստի կապ է գրանցվել երեկոյան ժամերին դուրս գալու, շեղվող, բռնի վարքագիծ դրսևորելու, թմրանյութ գործածելու միջև: Երեկոյան ժամերին դուրս եկող, ընկերների հետ ժամանակ անցկացնող անչափահասները ՀՀ-ում, ի համեմատ իրենց մյուս հասակակիցների, 2.4 անգամ ավելի հաճախ են հաղորդել շեղվող վարքագիծ դրսևորելու, 3.2 անգամ հաճախ՝ բռնությամբ զուգորդված արարք կատարելու մասին:

Երեխաների շեղվող վարքագծի ձևավորման, դրսևորման վրա էական ազդեցություն ունի իր ընկերական միջավայրում այնպիսի անձանց առկայությունը, որոնք թմրանյութ են գործածել, անձի

առողջությանը վնաս պատճառել, գողություն կամ ավազակություն կատարել. կրիմինալոգիական ուսումնասիրությունները[1] վկայում են, որ նման պարագայում երեխայի հոգեբանական առանձնահատկություններով՝ իմիտացիայի հակումով, տարեկիցներից «հետ չմնալու» ձգտումով պայմանավորված՝ բարձրանում է երեխայի կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

«ISRD-3» ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ՀՀ-ում հարցմանը մասնակցածների 2.6, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 8.2, Կոսովոյում՝ 5.4, Մակեդոնիայում՝ 7, Սերբիայում՝ 26.9, Ուկրաինայում՝ 7.6, Շվեյցարիայում՝ 41.6%-ն է նշել, որ ունի ընկեր, որը թմրանյութ է գործածել կամ գործածում: Հավաստի ուժեղ կոռելյացիա է գրանցվել այս գործոնի և երեխայի կողմից շեղվող, բռնությամբ զուգորդված կամ նրա դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու միջև: Մասնավորապես, ընկերների շրջանում թմրանյութ գործածած ընկեր ունեցող երեխաները ՀՀ-ում գրեթե 4 անգամ հաճախ են հաղորդել շեղվող վարքագիծ դրսևորելու, 10 անգամ՝ բռնի վարքագիծ դրսևորելու, 12 անգամ՝ սեփականության դեմ ոտնձգություններ կատարելու մասին:

«ISRD-2» և «ISRD-3» հետազոտությունների արդյունքների համադրումը վկայում է, որ ընկերների շրջանում թմրանյութ գործածած լինելու և շեղվող վարքագիծ դրսևորելու պարագայում այս գործոնի ազդեցությունը լիովին նույն օրինաչափությունն է դրսևորել. ինչպես և 2014 թ., 2006 թ. հարցվածների միջավայրում քննարկվող գործոնի առկայությունը 12 անգամ մեծացրել է երեխայի կողմից գողություն կատարելու, 8-10 անգամ՝ բռնություն գործադրելու հավանականությունը:

Ավելի հետաքրքիր է այն հանգամանքը, որ ընկերների շրջանում թմրանյութ գործածած ընկեր ունեցող երեխաները 20 անգամ ավելի հաճախ են հաղորդել թմրանյութ գործածելու մասին, ինչից

[1] Տե՛ս ***Ситник И.Е.,*** Роль референтной группы в социализации подростков. Проблемы современной науки и образования, 2017, № 22 (104), էջ 107-109; ***Челышева Ю.В.,*** Социально-психологические причины асоциального поведения несовершеннолетних. В сборнике: Социально-психологические аспекты практики социальной работы, под редакцией Овчаренко Л.Ю., Тютченко А.М., М., 2016, էջ 37-43:

կարելի է ենթադրել, որ տեղի է ունենում յուրօրինակ «մասնագիտացում». շեղվող վարքագծի առանձին տեսակներ դրսևորող երեխաներն իրենց հասակակիցներին «ներգրավում» են իրենց կողմից կատարված շեղվող վարքագծին բնույթով նույնական արարքների մեջ:

Այս ենթադրությունն իր հաստատումն է գտել նաև ընկերական միջավայրում գողություն, ավազակություն կատարած կամ անձի առողջությանը վնաս պատճառած ընկեր ունենալու և երեխայի կողմից համապատասխանաբար սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու կամ բռնությամբ զուգորդված վարքագիծ դրսևորելու միջև առկա կապը վեր հանելիս. գողություն կատարած ընկերներ ունեցող երեխաները գրեթե 11 անգամ ավելի հաճախ են հաղորդել գողություն կատարելու, ավազակություն կատարած ընկերներ ունեցող երեխաները՝ 25.4 անգամ հաճախ՝ ավազակություն կատարելու մասին, իսկ անձի առողջությանը վնաս պատճառած ընկերներ ունեցողները՝ 20 անգամ հաճախ՝ բռնի վարքագիծ դրսևորելու մասին:

Մասնավորապես, ՀՀ-ում հարցմանը մասնակցածների 2.9%-ը հաղորդել է, որ ընկերական միջավայրում ունի գողություն կատարած ընկերներ, նրանցից յուրաքանչյուր 3-րդը հաղորդել է իր կողմից շեղվող վարքագիծ, յուրաքանչյուր 5-րդը՝ բռնի վարքագիծ դրսևորելու, յուրաքանչյուր 8-րդը՝ գողություն կատարելու մասին: Ընդ որում՝ առկա է ուժեղ հավաստի կապ ընկերների շրջանում գողություն կատարած ընկեր ունենալու և շեղվող վարքագիծ դրսևորելու, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու միջև:

Գծապատկեր 2. Գողություն կատարած ընկեր ունենալը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ «ISRD-3»



Իրենց ընկերների շրջանում ավազակություն կատարած անձի առկայության մասին հաղորդել է ՀՀ-ում հարցմանը մասնակցած երեխաների 0.5, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 2.3, Կոսովոյում՝ 4.8, Մակեդոնիայում՝ 2.8, Սերբիայում՝ 5.9 Ուկրաինայում՝ 2, Շվեյցարիայում՝ 5.4%-ը: Կրկին ուժեղ արտահայտված հավաստի կապ է գրանցվել ավազակություն գործած ընկեր ունենալու և շեղվող, բռնի վարքագծի, սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու միջև:

Գծապատկեր 3. Ավազակություն կատարած ընկեր ունենալը և շեղվող վարքագիծը՝ «ISRD-3»



Ուշագրավ է այն, որ ընկերական միջավայրում ավազակություն կատարած անձի առկայությունը բարձրացրել է երեխայի կողմից ոչ միայն շահադիտական ուղղվածություն ունեցող արարքների, այլև բռնի վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Մասնավորապես, այս գործոնի առկայության պարագայում 25.6 անգամ բարձրանում է սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու, 23 անգամ՝ բռնի վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

Թվում է, թե սա որոշակի կասկածի տակ է դնում մեր արտահայտած այն դիրքորոշումը, որ երեխայի միջավայրում կոնկրետ տեսակի շեղվող վարքագիծ դրսևորած ընկերոջ առկայությունը բարձրացնում է դրան բնույթով նույնական արարքի կատարման հավանականությունը, սակայն պետք է նկատի ունենալ, որ ավազակություններն ունեն մոտիվացիոն առանձնահատկություն, պատկանում են շահադիտական-բռնի մոտիվացիայով արարքների թվին, հետևաբար լիովին տրամաբանական է, որ դրա օրինակի առկայությունը կարող է հանգեցնել ոչ միայն շահադիտական, այլև բռնի վարքագծի դրսևորման:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրության համաձայն հավաստի ուժեղ կոռելյացիա է գրանցվել անձի առողջությանը վնաս պատճառած ընկեր ունենալու և շեղվող, բռնի վարքագիծ դրսևորելու, սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ իրականացնելու միջև: Նման ընկերների առկայությունը մատնանշվել է ՀՀ-ում հարցմանը մասնակցած 4.6, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 3.5, Կոսովոյում՝ 8, Մակեդոնիայում՝ 5.9, Սերբիայում՝ 13.7 Ուկրաինայում՝ 3.9, Շվեյցարիայում՝ 9.7%-ի կողմից:

Անձի առողջությանը վնաս պատճառած անձի՝ երեխայի ընկերական միջավայրում առկայությունը ՀՀ-ում գրեթե 4 անգամ բարձրացրել է նրա կողմից շեղվող, 20 անգամ՝ բռնի վարքագիծ դրսևորելու, 9.5 անգամ՝ սեփականության դեմ ոտնձգություն կատարելու հավանականությունը:

Բռնի վարքագծի դետերմինացման առումով բռնություն գործադրած անձի՝ ընկերական միջավայրում առկայությունը, հավանաբար, բացատրվում է նրանով, որ երեխաներն իրենց միկրոմիջավայրում՝ լինի դա ընտանիք, դպրոց թե ընկերական միջավայր, «սովորում» են վարքագծի դրսևորման ձևերը հաճախ կարծրատիպա-

յին մակարդակով[1]: Նման վարքագծի ձևերի թվին է դասվում նաև բռնությունը:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

1. ՀՀ-ում երեխաների կողմից շեղվող և բռնի վարքագիծ առավելապես դրսևորվում է այն երեխաների շրջանում, որոնք ձգտում են շփման. նախընտրում են ազատ ժամանցն անցկացնել ընկերական միջավայրում, հետևաբար՝ հավակնում են այդ խմբի անդամների կողմից հավանության արժանանալու, մինչդեռ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ առավել հաճախ կատարվում են ազատ ժամանակը մենակ տնօրինել ձգտող երեխաների կողմից:

2. ՀՀ-ում անչափահասների շեղվող վարքագծի ձևավորման և դրսևորման առումով կարևոր նշանակություն ունի երեխայի կողմից իր ընկերների խմբի՝ հանրային ուղղվածության կամ հակասոցիալական ուղղվածության հետ ասոցացումը. իր ռեֆերենտային խումբն «ասոցիալ» համարող երեխան ավելի բարձր հավանականություն ունի շեղվող վարքագիծ դրսևորելու:

3. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ երեխաները հասարակության ազատականացման և ընտանեկան, սոցիալական հսկողության թուլացման պայմաններում գրեթե 2 անգամ ավելի հաճախ են ազատ ժամանցն անցկացնում տանից, ընտանեկան հսկողությունից դուրս, այդ թվում՝ երեկոյան ժամերին, ալկոհոլ և թմրանյութ գործածում:

4. ՀՀ-ում երեխայի շեղվող վարքագծի ձևավորման վրա առանցքային ազդեցություն է գործում նրա միջավայրում թմրանյութ գործածած, բռնություն գործադրած, գողություն կամ ավազակություն կատարած ընկերոջ առկայությունը, ինչը մի քանի անգամ բարձրացնում է երեխայի կողմից շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Ընդ որում՝ երեխայի ընկերական միջավայրում նշված վարքագծի տեսակները դրսևորած ըն-

[1] Տե՛ս ***Гурьев М.Е.,*** Анализ теорий агрессивного поведения в отечественной и зарубежной психологической литературе. В сборнике: Проблемы теории и практики современной науки, Материалы III Международной научно-практической конференции, Научно-образовательное учреждение «Вектор науки», 2015, էջ 107-114:

կերների առկայությունը հանգեցնում է երեխայի կողմից նույնական կամ միաբնույթ արարքների կատարման:

ВЛИЯНИЕ ДРУЖЕСКОЙ СРЕДЫ НА ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ДЕВИАНТНОГО, ИЛИ ПРЕСТУПНОГО ПОВЕДЕНИЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНЕГО

Анна Маргарян
Доцент кафедры уголовного права ЕГУ,
доктор юридических наук

В статье рассматриваются криминологические исследования, свидетельствующие о том, что в большинстве случаев подростки совершают преступления непосредственно под воздействием социальной среды, в большинстве случаев часто в качестве такой среды выступает круг друзей, с кем ребенок проводит основную часть своего времени. Наше исследование также свидетельствуют о том, что референтная группа друзей подростка имеет колоссальное значение для развития его правомерного либо противоправного поведения. Дети, которые общаются со своими сверстниками с девиантным поведением, более склонны к совершению аналогичного противоправного поведения. Огромную важность приобретает организация совместного досуга детей. В статье рассматриваются эти и другие факторы, способствующие эскалации девиантного поведения подростков.

THE IMPACT OF THE PEERS ON THE FORMATION OF JUVENILES` DEVIANCY OR CRIMINAL BEHAVIOUR

Anna Margaryan
Associate Professor, Department of Criminal Law, YSU,
Doctor of Law

Criminological studies show that juveniles mainly commit crimes under the influence of their immediate social environment and as a rule, group of peers with whome they spend the majority of their time plays such a role. Our study also confirms that the reference group of peers is of

particlular importance for the development of juvenile`s law-abiding or deviant behavior. Children who have friends with criminal career or experience of deviant behaviour are more likely to commit similar deviant behavior. The organization of the children`s leisure, which, unfortunately, at present, has been neglected by the state, is of tremendous importance. These and other factors contribute to the escalation of juvenile deviancy.

Բանալի բառեր - *անչափահաս, ընկերներ, ռեֆերենտային խումբ, ժամանց, շեղվող վարքագիծ, բռնի վարքագիծ, սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ:*
Ключевые слова: *несовершеннолетний, друзья, референтная группа, досуг, девиантное поведение, насильственное поведение, посягательства на собственность.*
Keywords: *juvenile, friends, reference group, leisure, deviancy, violent behavior, enroachments upon property.*

ԲԼԱՆԿԵՏԱՅԻՆ ՆՈՐՄԵՐՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աննա Վարդապետյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավ. գիտ. թեկնածու

«Հանցագործության որակում» և վերջինիս հետ փոխկապակցված՝ «հանցակազմ» հասկացությունները քրեական իրավունքի տեսության մեջ տարբեր կերպ են բնորոշվում[1]: Չանդրադառնալով աղբյուրներից յուրաքանչյուրի մեջ «հանցագործության որակում» հասկացության տարբերություններին, քանի որ այն դուրս է սույն ուսումնասիրության շրջանակից, մենք կսահմանափակվենք Վ. Ն. Կուդրյավցևի կողմից տրված բնորոշման մեջբերմամբ, քանի որ այն, մեր կարծիքով, տեսության մեջ առկա բնորոշումներից առավել ամբողջականն է: Այսպես, Վ. Ն. Կուդրյավցևի բնորոշմամբ, հանցագործության որակումը կատարված արարքի և քրեաիրավական նորմով

[1] «Հանցագործությունների որակում» հասկացության բնորոշումների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս *Герцензон А.А.*, Квалификация преступлений, М., 1947, *Коржанский М.И.*, Квалификация преступлений, Киев, 1998, էջեր 10–11, *Тарарухин С.А.*, Понятие и значение квалификации преступлений: Учебное пособие, Киев, 1990, էջ 6, *Таганцев Н.С.*, Русское уголовное право, Часть Общая, Т. I, СПб., 1902, էջ 336, *Таганцев Н.С.*, Русское уголовное право: Лекции, Часть Общая, В 2 т., М., 1994, էջ 36, *Игнатов А.Н., Костарева Т.А.*, Уголовная ответственность и состав преступления: Лекция, М., 1996. էջ 27, *Гонтарь И.Я.*, Преступление и состав преступления как явление и понятие в уголовном праве, Владивосток, 1997, էջ 10, *Пионтковский А.А.*, Учение о преступлении, М., 1961, էջ 120, *Навроцкий В.О.*, Теоретические проблемы правовой квалификации, Киев, 1999, էջ 136, *Маритчак Т.М.*, Ошибки в квалификации преступлений, Киев, 2004, *Таганцев Н.С.*, Курс русского уголовного права. Часть Общая, СПб., 1874, էջ 5, *Кистяковский А.О.*, Элементарный учебник общего уголовного права, СПб., 1875. էջ 59, *Корнеева А.В.*, Теоретические основы квалификации преступлений: Учебное пособие, М., 2006, էջ 32, *Брайнин Я.М.*, Уголовная ответственность и ее основание в советском уголовном праве, М., 1963:

նախատեսված հանցակազմի հատկանիշների միջև հստակ համապատասխանության հաստատումն ու իրավաբանական ամրագրումն է[1]:

Հանցագործության որակումը մի շարք փուլեր է անցնում, որոնք ուղղված են կատարված արարքի փաստական կազմի և կոնկրետ քրեաիրավական նորմով նախատեսված հանցակազմի միջև համապատասխանության հստակ սահմանմանը:

Որակման փուլերը տարբեր գիտնականների կողմից տարբեր կերպ են սահմանվում: Այն հեղինակները, որոնք հիմք են ընդունում քրեական դատավարության փուլերը, հանցագործությունների որակման հինգ-վեց փուլ են տարանջատում: Այսպես՝ Վ. Ն. Կուդրյավցևը տարանջատում է հանցագործությունների որակման հետևյալ հինգ փուլերը՝

1) քրեական գործի հարուցումը,
2) մեղադրանքի առաջադրումը,
3) մեղադրական եզրակացության կազմումը և հաստատումը,
4) գործը դատարան ուղարկելը,
5) դատական քննությունը, վերանայումը:

Վ. Ն. Կուդրյավցևին հակառակ՝ Ա. Ի. Ռառոգը պնդում է, որ ճիշտ չէ «որակման փուլեր» հասկացությունը «քրեական դատավարության փուլեր» հասկացությամբ փոխարինումը[2]: «Որակման փուլերը» և «քրեական դատավարության փուլերը» հարաբերակցվում են որպես հանցագործությունների որակման ձև և բովանդակություն:

Հանցագործությունների որակման գործընթացում քրեաիրավական և քրեադատավարական փուլերի համադրումը, քրեադատավարական փաստաթղթերում հանցագործության որակման ամրագրումը պրակտիկ հիմքեր ունեն, քանի որ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը գործում են քրեադատավարական օրենսդրության շրջանակում: Հանցագործությունների որա-

[1] Տե՛ս Кудрявцев В.Н., Общая теория квалификации преступлений, М., «Юридическая литература», 1972, էջ 8, Кудрявцев В.Н., Общая теория квалификации преступлений, 2-е изд., перераб. и дополн, М., «Юристъ», 2001, էջ 5:
[2] Տե՛ս *Papor A.И.*, Квалификация преступлений по субъективным признакам преступления, СПб., 2003, էջ 24:

կումը, սակայն, նյութական քրեական իրավունքի ինստիտուտ է, ուստի անհրաժեշտ է ելնել հանցագործությունների որակման հետևյալ երկու փուլերից՝

1) քրեաիրավական նորմի ընտրություն,

2) կատարված արարքի և քրեական օրենսգրքում ամրագրված հանցակազմ(եր)ի միջև համապատասխանության հաստատում: Այս փուլն ավարտվում է կոնկրետ քրեաիրավական նորմի վրա հղում անելով:

Քրեաիրավական նորմի ընտրությունը ենթադրում է՝

1) քրեական օրենսդրության համակարգի հատկանիշների պարզաբանում,

2) քրեական օրենսգրքի նորմերի մեկնաբանություն,

3) ընտրված նորմի՝ ժամանակի և տարածության մեջ գործողության պարզաբանում,

4) բլանկետային նորմերով հանցագործությունների որակման կանոնների պարզաբանում,

5) մրցակցող և կոլիզիոն նորմերով որակման առանձնահատկությունների պարզաբանում:

Ինչպես տեսնում ենք, քրեաիրավական նորմի ընտրությունը, ի թիվս ուրիշների, ենթադրում է բլանկետային նորմերով հանցագործությունների որակման կանոնների պարզաբանում: Նախքան նշված որակման կանոններին անդրադառնալը հստակեցնենք, որ սույն հետազոտության շրջանակում «բլանկետային» են դիտարկվում իրավունքի նորմերը, իրավունքի նորմերի դիսպոզիցիաները կամ հատկանիշները, որոնց կոնկրետ բովանդակությունը բացահայտվում է այլ օրենքում և (կամ) նորմատիվ-իրավական ակտում:

Իրավունքի տեսության մեջ «բլանկետային նորմ» հասկացությունը կիրառելիս[1] նշվում է, որ բլանկետային, այսինքն՝ վարքագծի *կոնկրետ կանոն ուղղակիորեն չպարունակող կարող են լինել միայն դիսպոզիցիաները*: Նման նորմերն ըստ էության չեն սահմանում կանոնի բովանդակությունը, դրա փոխարեն հղում են պարունակում այլ նորմատիվ-իրավական ակտերում առկա նորմերի վրա:

[1] Տե՛ս Общая теория государства и права. Академический курс в 2-х т. / Под ред. М.Н. Марченко, Том 2, Теория права, М., Издательство «Зерцало», 1998, էջ 229:

Իհարկե, բլանկետային նորմերի պրակտիկան միշտ առանձնանում է իրավական կարգավորման ոլորտում հնարավոր անորոշությամբ և կամայականությամբ[1]: Ինչ վերաբերում է *հատկանիշների* բլանկետայնությանը, ապա դրանց կոնկրետ բովանդակությունը կախված է իրավունքի այլ ճյուղի՝ առավելապես ենթաօրենսդրական նորմից[2]:

Վերոշարադրյալից կարելի է հետևություն անել, որ քրեաիրավական նորմի և դրա դիսպոզիցիայի բլանկետայնությունը դրանցում կոնկրետ բովանդակության բացակայությունն է, որը «լրացվում է» օրենսդրության այլ ճյուղերի նորմերին և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերին հղմամբ:

Բլանկետայնության առումով քրեական օրենսգրքերի նորմերի կառուցվածքները տարբեր են: Առավել տարածված է հատուկ մասերի նորմերի դիսպոզիցիաներում այս կամ այն կանոնի խախտման մասին (օրինակ՝ ճանապարհային երթևեկության անվտանգության, միջուկային անվտանգության և այլ կանոնների խախտումը) նշումը: Հետևաբար, եթե այս կամ այն կանոնը համապատասխան ճյուղային օրենսդրության մեջ վերացվել է, ապա քրեորեն պատժելի արարքը համապատասխան բլանկետային նորմով որակելիս այդ կանոնները հաշվի չեն առնվում:

Բլանկետայնության ձևակերպման հաջորդ տարբերակը քրեաիրավական նորմի դիսպոզիցիայում կոնկրետ արարքի անօրինականության, դրա ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ հղումն է, որը ենթադրում է համապատասխան նորմատիվ կարգավորումը գտնելու և որակման ժամանակ դրան հղում տալու անհրաժեշտություն:

Բլանկետայնության ձևակերպման երրորդ տարբերակը ճյուղային օրենսդրության վրա ուղիղ հղումներն են: Որպես կանոն,

---

[1] Տե՛ս Общая теория государства и права. Академический курс в 2-х томах / Под ред. М.Н. Марченко, Том. 2, Теория права, М., Издательство «Зерцало», 1998, էջ 230:

[2] Տե՛ս Кудрявцев В.Н., Общая теория квалификации преступлений, М., «Юридическая литература», 1972, էջ 131, Кудрявцев В.Н., Общая теория квалификации преступлений, 2-е изд., переработанное и дополненное, М., «Юристъ», 2001, էջ 111:

նման կերպ ձևակերպված են միջազգային իրավունքի նորմերին հղումները:

Վերջապես, կոնկրետ նորմի բլանկետայնության մասին է վկայում քրեաիրավական նորմի դիսպոզիցիայում ակնհայտ ոչ քրեաիրավական եզրութաբանության կիրառումը, օրինակ՝ «գործարք», «ձեռնարկատիրական գործունեություն», «բանկային գործունեություն», «լիցենզիա», «բժշկական օգնություն և սպասարկում», «փոխպատվաստման վիրահատություն», «լավասերում (սելեկցիա)», «կրոնական ծես» և այլ ձևակերպումները:

Լ. Դ. Գաուխմանը բլանկետային նորմերը դասակարգում է հետևյալ երեք հիմքերով՝ 1) տեղը քրեական օրենսգրքի համակարգում, 2) բովանդակությունը և 3) դրսևորման ձևը[1]:

Առաջին հիմքով բլանկետային նորմերը դասակարգվում են երկու խմբի՝ ա) քրեական օրենսգրքի ընդհանուր մասում ամրագրված, բ) քրեական օրենսգրքի հատուկ մասում նախատեսված: Բլանկետային նորմեր են, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում ամրագրված 15-րդ հոդվածի 1-ին մասը, 97-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում ամրագրված 122-րդ, 125-րդ, 125.1-ին, 133-րդ, 157-րդ, 171.1-ին, 211-րդ, 227-րդ, 228-րդ, 229-րդ, 230-րդ, 231-րդ, 232-րդ, 240-րդ, 241-րդ և մի շարք այլ հոդվածները:

Երկրորդ հիմքով ևս բլանկետային նորմերը դասակարգվում են երկու խմբի՝ ա) նորմեր, որոնք վերաբերում են հանցակազմի հատկանիշների վերհանմանը, բ) նորմեր, որոնք չեն վերաբերում նշված հատկանիշների վերհանմանը:

Առաջին խումբն են կազմում՝

1) ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված կարգավորումը, քանի որ նշված նորմով բնութագրվում են հանցագործության սուբյեկտի հատկանիշները: Մասնավորապես, բացառման կարգով հանցագործության հնարավոր սուբյեկտների կազմում չեն ընդգրկվում դիվանագիտական անձեռնմխելիություն ունեցող անձինք.

---

[1] Տե՛ս Гаухман Л.Д., Квалификация преступлений: закон, теория, практика, М., АО “Центр ЮрИнфоР”, 2001, էջ 238:

2) ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում ամրագրված բոլոր բլանկետային նորմերը:

Երկրորդ խումբն են կազմում, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ, 16-րդ հոդվածի 2-րդ և 97-րդ հոդվածի 3-րդ մասերում ամրագրված նորմերը:

Երրորդ հիմքով ևս բլանկետային նորմերը դասակարգվում են երկու խմբի՝ ա) պոզիտիվ և բ) նեգատիվ:

Պոզիտիվ բլանկետային նորմերում նշվում է, որ դրանց կոնկրետ բովանդակությունը բացահայտվում է այլ (ոչ քրեական) օրենքներում և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերում: Հարկ է նշել, որ եզրութաբանությունը, որն օգտագործում է օրենսդիրը բլանկետային քրեաիրավական նորմի կիրառողին այլ (ոչ քրեական) օրենքին և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտին ուղղորդելիս, բավական բազմազան է: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքում առավել հաճախ հանդիպում են հետևյալ ձևակերպումները՝

- *հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա* (ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մաս),

- *եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ* (ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր),

- *հանցագործություններ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով* (ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մաս),

- *բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի* (ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մաս),

- *Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրին համապատասխան* (ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մաս)[1],

[1] Միջազգային պայմանագրերում հղումներ առկա են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասում, 191-րդ հոդվածի 1-ին մասում, 217-րդ հոդվածի 1-ին մասում, 386-րդ և 387-րդ հոդվածներում, 390-րդ հոդվածի 6-րդ մասում, ինչպես նաև 397-րդ հոդվածում:

- *միջազգային իրավունքի նորմերին համապատասխան* (ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի 5-րդ մաս),

- *օտարերկրյա պետության օրենքով* (ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մաս),

- *կարգը սահմանվում է օրենքով* (ՀՀ քրեական օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մաս),

- *կանոնները խախտելը* (ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ, 157-րդ, 171.1-ին, 211-րդ, 227-րդ, 228-րդ, 229-րդ, 230-րդ, 231-րդ, 232-րդ, 240-րդ, 241-րդ, 242-րդ, 247-րդ, 248-րդ, 250-րդ, 257-րդ, 267-րդ, 276-րդ, 277-րդ, 281-րդ, 284-րդ, 285-րդ, 286-րդ, 288-րդ, 289-րդ, 290-րդ, 291-րդ, 293-րդ, 307-րդ, 315^1-րդ, 321-րդ, 359-րդ, 365-րդ, 366-րդ, 367-րդ, 368-րդ, 368.1-ին, 372-րդ, 373-րդ, 377-րդ, 378-րդ հոդվածներ),

- *անօրինական (ապօրինի)* (ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ, 125.1-ին, 133-րդ, 134-րդ, 144-րդ, 147-րդ, 148-րդ, 158-րդ, 159-րդ, 167-րդ, 175-րդ, 176-րդ, 177-րդ, 187-րդ, 188-րդ, 190.1-ին, 192-րդ, 195-րդ, 197-րդ, 199-րդ, 199.1-ին, 209-րդ, 215.1-ին, 233-րդ, 235-րդ, 236-րդ, 240-րդ, 254-րդ, 255-րդ, 266-րդ, 268-րդ, 269.1-ին, 270-րդ, 275-րդ, 279-րդ, 292-րդ, 294-րդ, 296-րդ, 310-րդ, 310.1-ին, 311-րդ, 311^1-րդ, 311^2-րդ, 312^1-րդ, 312.2-րդ, 315^1-րդ, 320-րդ, 326-րդ, 327^3-րդ, 327.6-րդ, 329-րդ, 329.1-ին, 330-րդ, 337-րդ, 341-րդ, 341.2-րդ, 342.1-րդ, 345-րդ, 348-րդ, 351-րդ, 363-րդ, 364.2-րդ, 390-րդ, 397-րդ հոդվածներ),

- *մասնագիտական պարտականություն* (ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդված),

- *դաստիարակության կամ խնամքի պարտականություն (դաստիարակության պարտականություն)* (ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ, 139-րդ, 141-րդ, 142-րդ, 165-րդ, 166-րդ, 166.1-ին, 167-րդ, 170-րդ, 171-րդ հոդվածներ),

- *այլ սահմանափակում* (ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ, 294-րդ, 341.1-ին, 341.2-րդ հոդվածներ),

- *թույլտվություն (լիցենզիա)* (ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ, 257-րդ, 329.1-ին հոդվածներ),

- *ձեռնարկատիրական գործունեություն* (ՀՀ քրեական օրենսգրքի 187-րդ, 188-րդ, 189-րդ, 310-րդ հոդվածներ):

Նեգատիվ բլանկետային նորմերում չի նշվում, որ դրանց կոնկրետ բովանդակությունը բացահայտվում է այլ (ոչ քրեական) օրենքներում և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերում. այդ հանգա-

մանքը ենթադրվում է: Օրինակ՝ «Օրենքի առջև հավասարության սկզբունքը» վերտառությունը կրող ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հոդվածն ամրագրում է, որ. «Հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են քրեական պատասխանատվության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից»:

Մեջբերված նորմից երևում է, որ դրանում նշված չէ, որ այն կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել, օրինակ, ՀՀ Սահմանադրության 96-րդ, 140-րդ և 193-րդ հոդվածներում ամրագրված համապատասխանաբար պատգամավորի, հանրապետության նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի համար նախատեսված բացառիկ անձեռնմխելիությունը: Նշված անհրաժեշտությունը, սակայն, բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասից, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա»:

ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հոդվածը պոզիտիվ բլանկետային նորմ կլիներ, եթե դրանում «այլ հանգամանքներից» բառակապակցությունից հետո ստորակետ դրվեր և նշվեր «բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի»:

Նման կերպով նեգատիվ բլանկետային են ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածները, քանի որ դրանցում նշված չէ, որ ՀՀ քրեական օրենսդրությունը բաղկացած է նաև այլ (ոչ քրեական) օրենքներից և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերից, դեպի որոնց իրավակիրառողին ուղղորդում են համապատասխան բլանկետային նորմերը, և որ քրեական պատասխանատվության հիմքն այնպիսի արարք կատարելն է, որը պարունակում է ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքով, այլև վերոնշյալ ոչ քրեական օրենքներով և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված բոլոր բլանկետային նորմերից իրավակիրառ պրակտիկայում գերակշիռ դերակատա-

րություն ունեն ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում ամրագրված՝ բլանկետային դիսպոզիցիաներով այն նորմերը, որոնք վերաբերում են հանցակազմի հատկանիշների վերհանմանը: Այդպիսիք են ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի այն նորմերը, որոնց դիսպոզիցիաներում վերհանված չեն հանցակազմի բոլոր հատկանիշները կամ դրանց մի մասը, և դրանք վերհանելու համար անհրաժեշտ է դիմել այլ (ոչ քրեական) օրենքների և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերի: Նման նորմերը ՀՀ քրեական օրենսգրքում առկա բլանկետային նորմերի մեջ մեծամասնություն են կազմում:

Քրեական օրենսգրքի բլանկետային նորմերում վկայակոչված՝ իրավունքի այլ ճյուղերի կանոնների պարտադիրության հարցը տեսության մեջ տարբեր կերպ է մեկնաբանվում[1]: Չանդրադառնալով այդ մեկնաբանություններից յուրաքանչյուրին առանձին-առանձին՝ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել, մեր կարծիքով, առավել կարևոր այն հանգամանքի վրա, որ ՀՀ քրեական օրենսգրքում բլանկետային նորմերի պարտադիրության առումով որոշակի հակասություն կա: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը բաղկացած է սույն օրենսգրքից»: Քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա», ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է **սույն օրենսգրքով**

[1] Տե՛ս *Иногамова-Хегай Л.В.*, Квалификация преступлений при конкуренции уголовно-правовых и иных норм права // Уголовное право: стратегия развития в XXI веке, М., 2004, էջ 128: *Пикуров Н.Н.*, Квалификация преступлений со смешанной противоправностью, Волгоград, 1987. *Наумов А.В.*, Российское уголовное право: Курс лекций. Общая часть, М., 2004, Հ. 1, էջ 249:

(ընդգծումը մերն է՝ Ա. Վ.)[1], սակայն ՀՀ քրեական օրենսգրքի ինչպես հատուկ (տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ, 125-րդ, 125.1-ին, 133-րդ, 157-րդ, 171.1-ին, 211-րդ, 227-րդ, 228-րդ, 229-րդ, 230-րդ, 231-րդ, 232-րդ, 240-րդ, 241-րդ և մի շարք այլ հոդվածները), այնպես էլ ընդհանուր մասերում (տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասը, 97-րդ հոդվածի 3-րդ մասը և այլն) առկա են բազմաթիվ բլանկետային նորմեր: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքում բլանկետային նորմերի թիվը միտում ունի ավելանալու՝ օրենսդրության համակարգի զարգացմանը և կարգավորվող հասարակական հարաբերությունների բարդացմանը զուգընթաց: Չենք կարող միանշանակ պնդել, թե այս միտումը բացասական է, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքում բլանկետային նորմերի առկայությունն օրենսդրին ազատում է հանցակազմի այն հատկանիշների նկարագրման անհրաժեշտությունից, որոնք արդեն առկա են այլ (ոչ քրեական) օրենքներում և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերում, և արդյունքում ավելորդ չի ծանրաբեռնվում քրեական օրենսգրքի տեքստը: Իհարկե հանդիպում են իրավիճակներ, երբ բլանկետային նորմում վկայակոչված կարգը սահմանված չէ որևէ օրենքում և (կամ)

[1] Հետաքրքիր է, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը շատ ավելի լայն ձևակերպում է առաջարկում: Այսպես, Նախագծի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը» վերտառությամբ 2-րդ հոդվածի համաձայն, «1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը բաղկացած է սույն օրենսգրքից և Հայաստանի Հանրապետության իրավական այն ակտերից, որոնք քրեաիրավական նորմեր են պարունակում կամ նշանակություն ունեն քրեական օրենքը կիրառելու համար:

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա:

3. Իրավական ակտերում տեղ գտած հանցակազմ կամ պատիժ նախատեսող նորմերը կարող են կիրառվել միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ընդգրկվելուց հետո»: Նման լայն ձևակերպման հետ մեկտեղ, սակայն, Նախագծի 17-րդ հոդվածը «հանցանք» հասկացությունը սահմանելիս ամրագրում է հետևյալը «Հանցանք է համարվում **սույն օրենսգրքով** (ընդգծումը մերն է՝ Ա. Վ.) նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը»:

այլ նորմատիվ-իրավական ակտում[1]:

Վերոգրյալից բացի՝ քրեական օրենսգրքում բլանկետային նորմերի առկայությունն «ընդլայնում է» քրեական օրենսդրությունն այլ (ոչ քրեական) օրենքներով և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերով, առանց որոնց անհնար է քրեական օրենսգրքի կիրառումը: Արդյունքում քրեաիրավական որակման տեսանկյունից էականորեն դժվարանում է իրավակիրառողների աշխատանքը, ինչպես նաև հնարավորություն է տրվում, օրենսդրից բացի, այլ մարմինների ևս, առավելապես՝ գործադիր մարմնին (ենթաօրենսդրական ակտերի դեպքում) ազդեցություն ունենալու քրեական պատասխանատվության ոլորտի վրա:

Քրեական պատասխանատվության ոլորտի վրա գործադիր մարմնի ազդեցությունը խնդրահարույց է առաջին հերթին իշխանությունների տարանջատման հայեցակարգից շեղման և գործադիրի կողմից օրենսդիր մարմնի գործառութային տիրույթ «ներխուժելու» պատճառով: Երկրորդ՝ գործադիր մարմնի կողմից հաճախ փոփոխվող ենթաօրենսդրական ակտերում օբյեկտիվ (ծանրաբեռնվածություն, ժամանակի սղություն և այլն) և չի բացառվում, որ նաև սուբյեկտիվ (անձնական շահագրգռվածություն, հովանավորչության դրսևորումներ և այլն) պատճառներով կարող են փոփոխվել կարգավորումներ, որոնք քրեական օրենսգրքի այս կամ այն հոդվածի բլանկետ են, ինչի արդյունքում արարքը փաստորեն սխալմամբ կապաքրեականացվի՝ դրանից բխող հետադարձության կանոնների կիրառման հետևանքներով:

Ամփոփելով բլանկետային նորմերի հետ կապված՝ իրավաստեղծ, իրավակիրառ, կազմակերպական և այլ ոլորտներում առավել հաճախ հանդիպող խնդիրները, որոնք անմիջական կամ միջնորդավորված կերպով բացասական ազդեցություն են ունենում բլանկետային նորմերի կիրառման արդյունավետության վրա, ստորև ներկայացնում ենք սույն ուսումնասիրության շրջանակում

[1] Տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածի (մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը) վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 27-02-2015 թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշումը (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905401615):

վերհանված խնդիրները և օրենսդրական մակարդակում դրանց լուծմանն ուղղված մեր առաջարկությունները: Այսպես՝

Առաջին՝ ՀՀ քրեական օրենսգրքում չկա որևէ նորմ, որը կկարգավորեր բլանկետային նորմերի թույլատրելիությունը և համապատասխանաբար նաև քրեական պատասխանատվության՝ այլ (ոչ քրեական) օրենքներով և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերով պայմանավորվածությունը:

Երկրորդ՝ բլանկետային դիսպոզիցիաներով մի շարք նորմեր իրավակիրառողին ուղղորդում են ոչ թե դեպի կոնկրետ օրենքները և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերը, այլ դեպի իրավական ինստիտուտներ, որոնք հստակ սահմանագծված չեն, կարգավորում են հասարակական հարաբերությունների կոնկրետ ոլորտներ, որոնցից յուրաքանչյուրը կազմված է տարբեր օրենքներում և (կամ) նորմատիվ-իրավական ակտերում ամրագրված նորմերի ամբողջությունից: Իրավիճակն ավելի է բարդանում, եթե գումարում ենք նաև ոչ միասնական եզրութաբանության առկայությունը և կոլիզիաների հնարավորությունը: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ, 125.1-ին, 133-րդ, 134-րդ, 144-րդ, 147-րդ, 148-րդ, 158-րդ, 159-րդ, 167-րդ, 175-րդ, 176-րդ, 177-րդ, 187-րդ, 188-րդ, 190.1-ին, 195-րդ, 197-րդ, 199-րդ, 199.1-ին, 209-րդ, 233-րդ, 235-րդ, 236-րդ, 240-րդ, 254-րդ, 255-րդ, 266-րդ, 268-րդ, 269.1-ին, 270-րդ, 275-րդ, 279-րդ, 292-րդ, 294-րդ, 296-րդ, 310-րդ, 310.1-ին, 311-րդ, 311^1-րդ, 311^2-րդ, 312^1-րդ, 312.2-րդ, 320-րդ, 326-րդ, 327^3-րդ, 327.6-րդ, 329-րդ, 330-րդ, 337-րդ, 341-րդ, 341.2-րդ, 342.1-ին, 345-րդ, 348-րդ, 351-րդ, 363-րդ, 364.2-րդ, 390-րդ, 397-րդ հոդվածներում կիրառվում է «ապօրինի» եզրույթը, իսկ 192-րդ, 215.1-ին, 315^1-րդ և 329.1-ին հոդվածներում նույն երևույթը նկարագրելու համար կիրառվում է «անօրինական» եզրույթը:

Վերոնշյալ կարգավորումներն իրավակիրառողին պարտավորեցնում են առաջին հերթին իմանալ տվյալ հասարակական հարաբերությունների ոլորտը կարգավորող բոլոր նորմերը, որոնք իրենց ամբողջության մեջ կազմում են բլանկետ հանդիսացող իրավական ինստիտուտը: Բացի դրանից՝ իրավակիրառողը պետք է կարողանա վերլուծության ենթարկել այդ նորմերն ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ամբողջության մեջ: Վերլուծության հիման վրա իրավակիրառողը պետք է կարողանա գտնել այն նորմերը, որոնց խախ-

տումը հանցագործության հատկանիշներ է պարունակում: Հայտնաբերելուց հետո իրավակիրառողը պետք է պարզի, թե արդյոք խախտումն օժտված է հանրային վտանգավորության աստիճանով և բնույթով և արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք չէ: Մեր կարծիքով, բլանկետային նորմերով որակումների ժամանակ պատշաճ որակումը ենթադրում է բլանկետային հատկանիշները ոչ թե առանձին, այլ հանցագործության հատկանիշների և հատկապես հանրության համար վտանգավորության հատկանիշի հետ համակարգային կապի մեջ գնահատում: Հանցագործության հանրային վտանգավորությունը որոշվում է օբյեկտով, պատճառված վնասի բովանդակությամբ, մեղքի ձևով և արարքի կատարման եղանակով: Հետևաբար, եթե այս կամ այն բլանկետային հատկանիշը չի տեղավորվում արարքի հանրային վտանգավորության բնույթի մեջ, ապա այն չպետք է հաշվի առնվի հանցագործության որակման ժամանակ:

Ինչ վերաբերում է կոլիզիաներին, ապա այն դեպքում, երբ առկա է կոլիզիա իրավունքի ճյուղերի նորմերի միջև, որոնց հղում է բլանկետային նորմը, նախապատվությունը պետք է տրվի օրենսգրքերում ամրագրված նորմերին՝ անկախ օրենսգրքերի ուժի մեջ մտնելու ժամանակից:

Ճյուղային և քրեական օրենսդրության մեջ առկա կոլիզիայի դեպքում նախապատվությունը տրվում է քրեական օրենսգրքին:

Երրորդ՝ օրենքները և այլ նորմատիվ-իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի բլանկետային դիսպոզիցիաներով հոդվածներում, բավականին անկայուն են, քանի որ օրենսդիր և գործադիր մարմինները դրանցում հաճախ փոփոխություններ ու լրացումներ են կատարում՝ պայմանավորված տնտեսության և հասարակական կյանքի այլ ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններով:

Վերոնշյալ օրենքների և ակտերի անկայունությունը իրավակիրառողի վրա ևս երկու պարտականություն է դնում: Նախ՝ տեղյակ լինել բոլոր փոփոխություններից և լրացումներից, ապա՝ ղեկավարվելով ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության և քրեական օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ՝ քրեական օրենսգրքում առկա կարգավորումներով՝ պարզել, թե որ ոչ քրեական օրենքը կամ այլ նորմատիվ-իրավական ակտը որ խմբագրությամբ է գործել արարքի

կատարման պահին և տարածվում է արդյոք այդ նորմի վրա՝ հաշվի առնելով դրանում կատարված հետագա փոփոխություններն ու լրացումները, քրեական օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ դրույթները:

Ինչ վերաբերում է բլանկետային նորմերում քրեաիրավական արգելքի փոփոխություններին, ապա փոփոխվում է դրա այն մասը, որը հղում է կատարում օրենսդրության այլ նորմերին, օրինակ՝ առարկային (զենք, թմրամիջոցներ) կամ անվտանգության կանոններին: Առանձին դեպքերում նման փոփոխությունները կարող են հանգեցնել ապաքրեականացման: Արարքի լրիվ ապաքրեականացում հնարավոր է այն դեպքում, երբ կիրառման ենթակա համապատասխան նորմատիվ իրավական ակտի համապատասխան հոդվածը, մասը կամ կետն ուժը կորցրել է:

Չորրորդ՝ հիշատակվող ոչ քրեական օրենքները և այլ նորմատիվ-իրավական ակտերը տարբեր աղբյուրներում են գտնվում: Այս հանգամանքը լրացուցիչ կազմակերպական դժվարություն է ստեղծում, որի լուծման ամենաարդյունավետ տարբերակն էլեկտրոնային ռեսուրսների առկայությունն է: Գրականության մեջ կարծիք է արտահայտվում այն մասին, որ հարցի լուծում կարող է լինել նաև քրեական օրենսգրքի հավելվածի մշակումը, որտեղ համակարգված կերպով թվարկված կլինեն բլանկետ հանդիսացող այլ (ոչ քրեական) օրենքները և (կամ) այլ նորմատիվ-իրավական ակտերը, ինչպես նաև դրանց՝ բլանկետ հանդիսացող քաղվածքները[1]:

Հինգերորդ՝ ՀՀ քրեական օրենսգրքի բլանկետային նորմերում առկա են հղումներ ոչ միայն օրենքներին, այլև այլ նորմատիվ-իրավական ակտերի, որոնց առանձին դրույթներ կարգավորվում, մանրամասնեցվում, երբեմն նաև հստակեցվում են այլ նորմատիվ-իրավական ակտերով: Արդյունքում ստացվում է, որ գործադիր իշխանությունն անմիջականորեն կարողանում է ազդել քրեական պատասխանատվության ոլորտի ընդլայնման կամ ընդհակառակը՝ նեղացման վրա, մինչդեռ նման ազդեցությունը բացառապես օրենսդիր մարմնի մենաշնորհին է: Իրավական պետության էությունից է բխում քրեական պատասխանատվության ոլորտը բացառապես օրենսդրի կողմից սահմանվելու, կարգավորվելու և փոփոխվելու անհրաժեշ-

[1] Տե՛ս Гаухман Л.Д., Квалификация преступлений: закон, теория, практика, М., АО «Центр ЮрИнфоР», 2001, էջ 245:

տությունը, իսկ այս ոլորտում գործադիր իշխանության միջամտությունը երկրում «ոստիկանական պետության» տարրեր է ներմուծում:

Վեցերորդ՝ ՀՀ քրեական օրենսգրքում բլանկետային նորմերը քիչ չեն: Այս հանգամանքը պահանջում է իրավակիրառողի վերլուծական ունակությունների, իրավաբանական գիտելիքների և տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես՝ էլեկտրոնային շտեմարանների հետ աշխատելու հմտությունների շարունակական կատարելագործում:

Յոթերորդ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասում առկա կարգավորումը, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա», ըստ էության անորոշ և հռչակագրային բլանկետային նորմ է, քանի որ ՀՀ քրեական օրենսգիրքը հիմնված է ոչ թե բոլոր, այլ ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերում ամրագրված սկզբունքների ու նորմերի վրա:

Ութերորդ՝ քրեական օրենսգրքի բլանկետային նորմերի հասցեատեր համարվող ոչ քրեական օրենքներում երբեմն առկա են հղումներ այլ նորմատիվ-իրավական ակտերի, թեև իրավական տեխնիկայի առումով ոչինչ չէր խանգարում հղման մեջ առկա կարգավորումը ներառել կոնկրետ ոչ քրեական օրենքում:

Մեր կարծիքով, բլանկետային նորմերի օրինական կարգավիճակի ապահովման նպատակով անհրաժեշտ է, որ դրանց հասցեատեր նորմատիվ-իրավական ակտերը բացառապես օրենքներ լինեն: Այս կապակցությամբ անհրաժեշտ է.

ա. ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրել, որ այն հիմնվում է ոչ միայն Սահմանադրության, այլև այլ օրենքների վրա,

բ. ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրել, որ բլանկետային նորմերում թույլատրելի են հղումներ բացառապես օրենքների և ոչ մի այլ իրավական ակտի վրա,

գ. ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրել, որ այն հիմնված է միջազգային իրավունքի այն սկզբունքների ու նորմերի վրա, որոնք ամրագրված են ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերում:

Վերոշարադրյալ առաջարկությունների հիման վրա առաջար-

կում ենք՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. *«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը բաղկացած է սույն օրենսգրքից և Հայաստանի Հանրապետության այն օրենքներից, որոնք քրեաիրավական նորմեր են պարունակում կամ նշանակություն ունեն քրեական օրենքը կիրառելու համար»:*

2. ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. *«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի վրա»:*

ПРОБЛЕМЫ КВАЛИФИКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЙ ПРИ БЛАНКЕТНЫХ НОРМАХ

Анна Вардапетян
Доцент кафедры уголовного права ЕГУ,
кандидат юридических наук

Данная статья посвящена анализу вопросов и проблем квалификации преступлений при бланкетных нормах, специфике формулировки бланкетности в Уголовном кодексе РА, обязательности норм других отраслей права, упомянутых в бланкетных нормах Уголовного кодекса РА, полной или частичной декриминализации деяния и обратной силе уголовного закона при внесении изменений в нормы других отраслей права, если они являются бланкетными для уголовно-правовой нормы.

В рамках данной статьи автор суммирует основные проблемы бланкетных норм в сферах правотворчества, правоприменительной практики, организации деятельности правоприменителя и т.д, которые негативно влияют на эффективность бланкетных уголовно-правовых норм и формулирует предложения, направленные на решение вышеуказанных проблем на законодательном уровне.

ISSUES OF QUALIFICATION OF CRIMES WITH BLANKET NORMS OF LAW

Anna Vardapetyan
Docent at the YSU Chair of Criminal Law,
Candidate of Legal Sciences

The article refers to the issues of qualification of crimes with blanket norms of law, formulation of blanketness of norms in Criminal Code of the RA, obligation to apply the norms of other branches of law, if they are referred to in the blanket norms of Criminal Code of the RA. The author analyses also the issues of in full measure or partly decriminalization and retroactive effect of the norms of other branches of law, if they are referred to in the blanket norms of Criminal Code of the RA.

Within the scopes of the article, the author sum ups the main issues of blanket norms of law in the spheres of legal drafting, application of law and organizing the activities of officials responsible for application of law and etc., which negatively affect the effectiveness of the blanket norms, and comes up with suggestions aimed at solving mentioned issues on legislative level.

Բանալի բառեր – *բլանկետային նորմ, պոզիտիվ և նեգատիվ բլանկետային նորմեր, հանցագործության որակում, հանցագործության որակման փուլեր, քրեական օրենսդրության համակարգ, ապաքրեականացում, քրեաիրավական նորմի հետադարձ ուժ:*
Ключевые слова: *бланкетная норма, позитивные и негативные бланкетные нормы, квалификация преступления, этапы квалификации преступления, система уголовного законодательства, декриминализация, обратная сила уголовно-правовой нормы.*
Keywords: *blanket norm of law, positive and negative blanket norms of law, qualification of crime, stages of crime qualification, criminal legislation system, decriminalization, retroactive effect of norm of criminal law.*

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԵՎ ԴԱՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ժենյա Ստեփանյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Դատվածության և ռեցիդիվի ինստիտուտները սերտորեն կապված են միմյանց հետ. դատվածությունն անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվի գնահատման և բազմակիության մյուս տեսակներից տարբերակման հիմնական նախապայմանն է: Ընդ որում՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում խիստ պատիժ նշանակելու հիմքը նախկինում կատարված դիտավորյալ հանցանքի համար դատվածության առկայության փաստն է: Այսպես՝ հանցագործության համար անձի դատապարտմամբ, նրա նկատմամբ պատժի նշանակմամբ և դրա կրմամբ հանցավորի ու պետության միջև հանցագործության փաստով ձևավորված հատուկ քրեաիրավական հարաբերությունները դեռևս չեն ավարտվում: Հանցագործության բնույթով պայմանավորված՝ պատիժը կրելուց որոշակի ժամանակ անցնելուց հետո միայն նշված հարաբերությունները դադարում են, եթե, իհարկե, այդ ընթացքում անձը նոր հանցանք չի գործում:

Կարելի է ասել, որ դատվածությունն անձի համար յուրահատուկ փորձաշրջան է, ինչն անցնելուց հետո վերջինս «ապացուցում է» իր ուղղված լինելը, հետևաբար դադարում է վտանգավորություն ներկայացնելուց և համարվում է հանցանք չգործած: Մինչդեռ այդ ժամանակահատվածում նոր հանցավոր արարք կատարելու դեպքում նրա համար առաջ են գալիս անբարենպաստ իրավական հետևանքներ: Վերոնշյալը կազմում է դատվածության ինստիտուտի հիմնական բովանդակությունը, որն արտահայտվում է անձի համար նրա կենսագործունեության տարբեր ոլորտներում լրացուցիչ իրավասահմանափակումներով: Քրեաիրավական առումով նախկինում կատարված հանցանքի համար դատված լինելու հանգամանքն անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվ գնահատելու հիմնական նախապայմանն է (նախքան քրեական օրենս-

գրքում կատարված փոփոխությունները հատուկ մասի որոշ հանցակազմերում դատվածությունը նախատեսված էր նաև որպես ծանրացնող հանգամանք):

Պետք է նշել, սակայն, որ քրեագետների շրջանում դատվածության և ռեցիդիվի ինստիտուտների գոյությունը միանշանակ չի ընդունվում: Որոշ հեղինակներ դրանք դիտում են որպես ամբողջատիրական ռեժիմի արդյունք, որը նպատակ է հետապնդում ահաբեկելու հասարակությանը ու նման անարդարացի, հակաիրավական և չհիմնավորված մեթոդներով հետ պահելու հանցագործություններից: Նրանց կարծիքով, նախկինում կատարված հանցանքի համար դատվածության առկայությունը հաշվի առնելով, նոր կատարված արարքի համար ակնհայտ խիստ պատիժ նշանակելը խախտում է քրեական իրավունքի այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են օրինականության, արդարության, կրկնակի դատապարտման անթույլատրելիության, օրենքի առաջ բոլորի հավասարության և մարդասիրության սկզբունքները: Ըստ պրոֆեսոր Վոլժենկինի՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում նշանակվող պատժին «գումարվում» է նախկինում կատարված այն արարքի համար պատիժը, որն անձն արդեն լիովին կրել է և դրանով իսկ ամբողջությամբ «քավել» մեղքը, հետևաբար նման դեպքերում անձը կրկնակի է պատասխանատվության ենթարկվում միևնույն հանցագործության համար[1]:

Վ. Յու. Զուբակինի կարծիքով, քրեական պատասխանատվության ոլորտում ռեցիդիվի ինստիտուտի գոյությունն անհավասարության դրսևորում է: Հեղինակը համոզմունք է արտահայտել, որ նույնաբնույթ հանցանք կատարած անձանց նկատմամբ տարբեր պատիժներ նշանակելը՝ այն հիմքով, որ նրանցից մեկը դատվածություն ունի, օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում է: Մասնավորապես՝ նշված սկզբունքից բխում է, որ միևնույն հանրային վտանգավորության բնույթ և աստիճան ունեցող հանցանքներ կատարած անձինք ենթակա են հավասար պատասխանատվության, մինչդեռ ռեցիդիվի վերաբերյալ նորմերի կիրառումը հանգեցնում է անարդարացի խիստ պա-

[1] Տե՛ս ***Волженкин Б.В.,*** Принцип справедливости и проблемы множественности преступлений по УК РФ // Законность, 1998, № 12, էջ 2-7:

տիժների նշանակման[1]:

Դատվածության և ռեցիդիվի ինստիտուտներին դեմ են արտահայտվել նաև ՌԴ սահմանադրական դատարանի անդամներ Ն. Վ. Վիտրուկն ու Ա. Լ. Կանոնովը ՌԴ սահմանադրական դատարանի՝ *«Անձի դատվածության, կրկնակիության և ռեցիդիվի իրավական հետևանքները կանոնակարգող ՌԴ քրեական օրենսգրքի դրույթների սահմանադրականությունը որոշելու գործով»* 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշման կապակցությամբ ներկայացված հատուկ կարծիքների շրջանակներում: Նշված որոշմամբ ՌԴ սահմանադրական դատարանը վերանայվող նորմերը ճանաչել էր ՌԴ սահմանադրությանը համապատասխանող[2]:

Ն. Վ. Վիտրուկն իր հատուկ կարծիքում նշել է, որ դատվածությունն անձի համար յուրահատուկ քրեաիրավական փորձաշրջան է, շարունակական, կանխարգելիչ պատիժ, ինչն էլ վերջինիս համար վերածվում է լրացուցիչ պատժի նոր հանցանք կատարելու դեպքում: Անձը, որն արդեն կրել է պատիժը և դրանով իսկ քավել մեղքը, շարունակվում է կասկածվել նոր հանցանք կատարելու հնարավորության մեջ, ինչը պետության կողմից նրան տրված հանրային «խարան» է: Վերջինիս կարծիքով դատվածությունը՝ որպես հատուկ քրեաիրավական երևույթ և քրեական իրավունքի ինքնուրույն ինստիտուտ, հակասում է «non bis in idem» սահմանադրական սկզբունքին[3]:

Առավել մանրամասն ներկայացնենք ՌԴ սահմանադրական դատարանի անդամ *Ա. Լ. Կանոնովի* հատուկ կարծիքը, քանի որ այն խտացված կերպով պարունակում է դատվածության և ռեցիդիվի ինստիտուտների հակառակորդների հիմնական փաստարկները: Այսպես՝ վերջինս, հանգամանալից վերլուծելով դատվածության

---

[1] Տե՛ս ***Зубакин В.Ю.,*** Институт рецидива преступлений как нарушение принципа равенства перед законом в системе уголовной ответственности // Российский следователь, 2006, N 8, էջ 15-16:

[2] Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշումը, http://base.garant.ru/1352925/#friends:

[3] Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշման վերաբերյալ սահմանադրական դատարանի անդամ *Ն. Վ. Վիտրուկի* հատուկ կարծիքը, http://base.garant.ru/1352925/#friends:

և ռեցիդիվի ինստիտուտների բնույթն ու իրավական էությունը, եկել է այն եզրահանգման, որ դրանք հակասում են սահմանադրաիրավական ընդհանուր սկզբունքներին, ուստի պետք է օրենսդրությունից բացառվեն: Ընդ որում՝ վերջինս նշել է, որ դատվածության ինստիտուտը հակասահմանադրական է ոչ միայն կրկնակի քրեական պատասխանատվության արգելքի իմաստով՝ որպես հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք, այլև որպես խիստ պատիժ նշանակելու հիմք՝ ռեցիդիվի դեպքում: Կանոնովի դիրքորոշումը մասնավորապես հանգում է հետևյալին՝

- Դատվածությունը և ռեցիդիվը հակասում են «non bis in idem» սկզբունքին: Վերոնշյալ սկզբունքի տառացի մեկնաբանությունից կարող է տպավորություն ստեղծվել, որ այն իր գործողությունը տարածում է միայն քրեական պատասխանատվության ոլորտի վրա և չի շոշափում պատիժ նշանակելու գործընթացը, սակայն նման եզրահանգումը սխալ է: Նախ՝ չնայած «քրեական պատասխանատվություն» ու «պատիժ» հասկացությունները միշտ չէ, որ համընկնում են, այնուամենայնիվ պատիժը հենց քրեական պատասխանատվության էությունն է և նպատակը: Երկրորդ՝ միջազգային-իրավական ակտերով կրկնության արգելքը վերաբերում է ոչ միայն դատապարտմանը, այլև պատժին: «Non bis in idem» սկզբունքը բացարձակ արգելք է դնում կրկին վերադառնալու այն գործին, որին արդեն դատարանի դատավճռով իրավական գնահատական է տրվել, ուստի դրա հիման վրա նույն փաստով և նույն անձի նկատմամբ փոխել պատիժը, այն էլ խստացման առումով, անթույլատրելի է: «Անցյալի» համար անձն արդեն լիովին վճարել է հասարակության առջև և քավել է իր մեղքը, իսկ պետության քրեաիրավական հետապնդումը չի կարող ձգվել տևական ժամանակահատված, այն պետք է ավարտվի պատիժը կրելով կամ պատժից ազատվելով:

- Քրեական իրավունքի թե՛ դասական, թե՛ սոցիոլոգիական դպրոցներն ի վիճակի չեն համընդգրկուն կերպով հիմնավորելու դատվածության և ռեցիդիվի ինստիտուտների գոյության և դրանցով պայմանավորված՝ անձի նկատմամբ պատասխանատվության խստացման իրավական հիմքերը:

Քրեական իրավունքի դասական դպրոցի գաղափարները հիմնվում են օրինականության սկզբունքի վրա («nullum crimen sine leges»), որն արդարացի քրեաիրավական ներգործությունը նախևա-

ռաջ պայմանավորում է վնասվող բարիքի արժեքավորությամբ, հանցագործության եղանակով և պատճառված վնասի չափով: Մեղքի ձևերը, շարժառիթը և սուբյեկտի այլ բնութագրիչները նույնպես ուշադրության են արժանանում, սակայն այնքանով, որքանով դրանք արտացոլվում են կատարված արարքում: Նշված գաղափարախոսության համաձայն՝ ռեցիդիվային հանցավորության առաջացումը պայմանավորված է հանցավորի չար կամքով, հետևաբար ռեցիդիվիստները պետք է ավելի խիստ պատժվեն, քան սկզբնական հանցագործները, քանի որ այդ հանցավոր կամքը փոխում է արարքի օբյեկտիվ բնույթը և վնասի չափը, առավել մեծ վտանգ է ներկայացնում հասարակության համար: Սակայն դասական դպրոցի ներկայացուցիչներին այդպես էլ չի հաջողվել մատնանշել ռեցիդիվային հանցավորության այնպիսի հատկանիշ, որի ուժով այն կտարբերվեր սկզբնական արարքի հանրային վտանգավորության բնույթից և աստիճանից:

Ինչ վերաբերում է քրեական իրավունքի սոցիոլոգիական դպրոցին, ապա դրա մարդաբանական տեսությունը որոշիչ կերպով շեշտը օրինականության սկզբունքից տեղափոխեց դեպի նպատակահարմարություն, արարքից՝ դեպի հանցավորի անձ, իսկ պատժից՝ դեպի անվտանգության կանխարգելիչ միջոցներ: Նշված տեսության հիմքում դրված էր անձի վտանգավոր վիճակի գաղափարը, որը որոշվում էր հանցավորի վարքագծի, սոցիալական ու բարոյական որակների, մտքերի, հանցավոր կապերի և այլնի ընդհանուր գնահատականով: Ռեցիդիվիստները բնութագրվում էին որպես հանցավորի չարամիտ, սովորութային, չուղղվող, քրոնիկ կամ մասնագիտացված (պրոֆեսիոնալ) տիպ:

Վտանգավոր վիճակի տեսությունը հատկապես պահանջված էր հետհեղափոխական Ռուսաստանում և 20-ական թթ. ուներ մեծ թվով կողմնակիցներ, ուստի դրվեց օրենսդրության և քրեական քաղաքականության հիմքում, քանի որ այդ գաղափարները բավականին նպատակահարմար էին անօրինական ռեպրեսիաները և խիստ պատժողական քաղաքականությունն արդարացնելու համար: Անձի վտանգավոր վիճակի տեսությունը քրեական օրենսդրության մեջ արտացոլվեց առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի ինստիտուտի ներմուծմամբ: Նոր քրեական օրենսդրությունը թեև հրաժարվեց առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի հասկացությունից, սա-

կայն դրա փոխարեն օրենսդիրը ներմուծեց հասարակ, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվը, ինչով, սակայն, դրա էությունը չփոխվեց, և վտանգավոր վիճակի տեսության մնացորդները շարունակեցին գոյություն ունենալ:

Դատվածության ինստիտուտը, դրա մարման ժամկետները, ինչպես նաև դատվածությունը հանելու հիմքերը պարունակում են անձի վտանգավոր վիճակի տեսության տարրեր: Օրենսդիրը, դատվածությունը և դրա մարման ժամկետները սահմանելով, նախապես որոշել է, որ անձը, չնայած իր կողմից պատիժը կրելու հանգամանքին, լիովին չի ուղղվել, ավելին՝ չի ապացուցել իր ուղղված լինելու հանգամանքը, հետևաբար համարվում է հանրային վտանգավորություն ներկայացնող, իսկ այդ վտանգավորությունը կանխորոշվում է կատարված արարքի ծանրությամբ, որով էլ պայմանավորվում են դատվածության մարման ժամկետները:

- Դատվածության ինստիտուտը կասկածներ է հարուցում իր իրավական բնույթի և էության առումով, քանի որ միանգամայն հստակ է, որ դատվածությունը չի կարող լինել ո՛չ պատիժ կամ ունենալ պատժին համարժեք տարրեր և նպատակներ, ո՛չ էլ քրեաիրավական իմաստով փորձաշրջան: Այսպես՝ դատվածությունը ո՛չ պատժի ընդհանուր համակարգում, ո՛չ էլ հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայում նախատեսված չէ որպես հիմնական կամ լրացուցիչ պատիժ:

Միայն դատարանի կողմից օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատիժը կարող է իրավաչափ հիմք լինել անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման համար, ընդ որում՝ այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսվում են այդ պատժով և այն ժամանակահատվածում, որը նշանակվել է դատարանի կողմից, հետևաբար դատվածությունը չի կարող հավակնել լինելու անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման իրավաչափ հիմք: Դատվածությունը չի կարող նաև փորձաշրջան համարվել, քանի որ փորձաշրջանի խնդիրներն ու իրավական հետևանքները պարզորոշ ձևակերպված են քրեական իրավունքում:

- Ծանրացնող հանգամանքներից ռեցիդիվը միակն է, որը չի վերաբերում հանցագործության որևէ տարրի: Այսպես՝ այն չի կարելի դասել հանցագործության օբյեկտի կամ օբյեկտիվ կողմի, սուբ-

յեկտի կամ սուբյեկտիվ կողմի որևէ հատկանիշների շարքին: Օրենքը չի նկարագրում ռեցիդիվային հանցագործության կատարման որևէ հատուկ եղանակ, պատճառված առանձնահատուկ նյութական կամ բարոյական վնաս, մեղքի ավելի մեծ բաժին, հետևաբար ռեցիդիվի առկայությունը չի արտացոլվում հանցագործության որևէ տարրում: Ռեցիդիվը չի կարելի նույնացնել նաև հանցագործության սուբյեկտի բնութագրիչների հետ, քանի որ դրա հատկանիշները հստակ թվարկված են օրենքով, ինչպես նաև բացահայտվում են հատուկ մասի կոնկրետ հանցակազմում: Մինչդեռ հատուկ մասում առկա չէ որևէ հիմնական հանցակազմ, որը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ կնախատեսեր ռեցիդիվային հանցանքի կատարումը[1]:

Վերոնշյալ դիրքորոշումների հետ դժվար է համաձայնել: Գործող իրավակարգավորումների համաձայն՝ դատվածությունը և ռեցիդիվը հաշվի են առնվում միայն պատիժ նշանակելիս, իսկ արարքի որակման վրա որևէ ազդեցություն չունեն, ուստի անձը չի ենթարկվում կրկնակի քրեական պատասխանատվության կամ դատապարտման միևնույն հանցագործության համար: Այլ էր հարցը նախկինում գործող դատվածության հետ կապված կրկնակիության պարագայում, որն անմիջականորեն ազդում էր արարքի որակման վրա: Այսպես՝ քրեական օրենսգրքի հատուկ մասի բազմաթիվ հոդվածներում դատվածությունը նախատեսված էր որպես ծանրացնող հանգամանք և ազդում էր արարքին տրվող քրեաիրավական գնահատականի վրա: Մասնավորապես, նախկինում կատարված հանցանքի համար առկա դատվածությունը հետագայում նույն կամ միաբնույթ նոր հանցանք կատարելու դեպքում հիմք էր արարքի որակումը փոխելու, այն է՝ հանցանքը ծանրացնող հանգամանքով որակելու համար, ինչը, ըստ հանցագործությունների դասակարգման, որպես կանոն, պատկանում էր ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների շարքին: Վերոնշյալն իրավամբ լուրջ խնդիր էր առաջ բերում կրկնակի դատապարտման անթույլատրելիության կարևորագույն սահմանադրաիրավական և միջազգային

[1] Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2003 թվականի մարտի 19-ի N 3-Պ որոշման վերաբերյալ սահմանադրական դատարանի անդամ *Ա. Լ. Կանտովի* հատուկ կարծիքը:

սկզբունքի տեսանկյունից:

Թեև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կրկնակիության ինստիտուտը որպես հակասահմանադրական չգնահատվեց, այնուամենայնիվ Սահմանադրական դատարանն ընդգծեց, որ հետագա օրենսդրական զարգացումները նպատակահարմար կլիներ տանել այն ուղղությամբ, որ դատվածությունն ազդեր պատժի և ոչ թե որակման տարրի վրա: 2011 թ. մայիսի 23-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում կրկնակիությունը՝ որպես բազմակիության տեսակ, վերացվեց, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչվեցին անձի՝ նախկին դատվածության առկայությամբ պայմանավորված բոլոր որակյալ հանցակազմերը[1]:

Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ անձի նախկին դատվածությունը հաշվի առնելով խիստ պատիժ նշանակելը (ռեցիդիվի դեպքում) նույնպես «non bis in idem» սկզբունքի խախտում է, քանի որ այդ սկզբունքը ենթադրում է ոչ միայն կրկնակի դատապարտման, այլև կրկնակի պատիժ նշանակելու արգելք միևնույն արարքի համար, ապա վերոնշյալի հետ ևս դժվար է համաձայնել: Առկա դատվածության քրեաիրավական հետևանքների տարածումը նոր հանցանքի համար պատիժ նշանակելիս դուրս չի գալիս այն թույլատրելի քրեաիրավական միջոցների շրջանակից, որն օրենսդիրն իրավունք ունի օգտագործելու արդարացված նպատակների նվաճման համար՝ ապահովելով պատժի տարբերակումն ու անհատականացումը, դրա ազդեցության ուժեղացումը դատապարտյալի նկատմամբ, նոր հանցագործությունների կանխումը և հանցավոր ոտնձգություններից անձի, հասարակության ու պետության պաշտպանությունը: Հարկ է նկատել, որ տվյալ դեպքում ոչ թե կրկնակի պատիժ է նշանակվում, այլ նոր կատարված արարքի համար նշանակվող պատիժն օրենքով սահմանված կոնկրետ չափերով խստացվում է՝ պայմանավորված հանցավորի անձին տրվող օբյեկտիվ գնահատականով: Այն ոչ թե հակասում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, այլ, ընդհակառակը, բխում է այդ սկզբունքներից, ապահովում է պատժի անհատականացում, հետևաբար նաև՝ արդարացի պատժի նշանակում:

[1] Վերոնշյալ հարցը մանրամասն քննարկվել է սույն աշխատանքի առաջին գլխի երկրորդ պարագրաֆի շրջանակում:

Անթույլատրելի է տեսության մեջ տարածված այն մոտեցումը, որ հանցավորի անձը բնութագրող տվյալները չեն կարող ի վնաս անձի հաշվի առնվել, իսկ հանցավորին պատասխանատվության և պատժի ենթարկելիս պետք է առաջնորդվել միայն կատարված արարքը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներով, մասնավորապես՝ հանցագործությամբ պատճառված վնասով, եղանակով, մեղքի ձևերով, շարժառիթներով ու նպատակներով և այլն, այսինքն՝ այնպիսիններով, որոնք արտացոլվում են միայն կատարված հանցավոր արարքում: Մեր համոզմամբ, հանցագործությունը և հանցանք կատարած անձը սերտորեն կապված են, և դրանք միմյանցից արհեստականորեն տարանջատելու փորձերն ի սկզբանե ենթակա են ձախողման: Հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների ամբողջությունը բնութագրում և թույլ է տալիս պատկերացում կազմել նաև հանցավորի վերաբերյալ, իսկ հանցավորի անձը բնութագրող տվյալներն իրենց հերթին ազդում են հանցագործության վտանգավորության աստիճանի վրա (օրինակ՝ կրկնահանցագործների դեպքում վերջիններս մասնագիտանում են հանցավոր արարքների կատարման մեջ, յուրացնում են հանցավոր տեխնիկան, ինչը մեծացնում է յուրաքանչյուր հաջորդ հանցագործությունը բարեհաջող ավարտին հասցնելու հավանականությունը՝ դրանով իսկ ազդելով հանցավոր արարքի վտանգավորության աստիճանի վրա): Հետևաբար միայն հանցագործությունը և հանցավորին բնութագրող տվյալների ամբողջական վերլուծությունը թույլ կտան պատկերացում կազմել հանցագործության իրական վտանգավորության վերաբերյալ և նշանակել արդարացի ու անհատական պատիժ:

Կարծում ենք՝ հանցանքը կատարելու ռեցիդիվը ծանրացնող հանգամանք է, որը նախևառաջ վերաբերում է հանցանքը կատարած անձին, քանի որ այն որպես ծանրացնող հանգամանք նախատեսելը և պատիժը խստացնելը պայմանավորված են նրա կողմից նախկինում կատարված հանցանքի համար դատապարտված լինելու հանգամանքով, ինչը բացասական առումով է բնութագրում հանցավորի անձը և վկայում նրա բարձր վտանգավորության մասին: Հետևաբար, տեղին չէ այն պնդումը, որ ռեցիդիվը՝ որպես ծանրացնող հանգամանք, հանցագործության որևէ տարրին չի պատկանում. ռեցիդիվը սերտորեն կապված է և վերաբերում է հանցագոր-

ծության սուբյեկտին, վկայում է վերջինիս մեջ հանցավոր կողմնորոշումների արմատավորման, նրա վարքագծի հակասոցիալական ուղղվածության մասին:

Ինչ վերաբերում է այն պատճառաբանությանը, որ դատվածության և ռեցիդիվի ինստիտուտներն ամբողջատիրական ռեժիմի արդյունք են և հակասում են եվրոպական արժեքներին, ապա եվրոպական փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ինստիտուտները նախատեսված են պետությունների մեծ մասի քրեական օրենսգրքերում, ընդ որում՝ որոշ դեպքերում սահմանվում են բավականին խիստ ներգործության միջոցներ:

Այսպիսով՝ ընդհանրացնելով կարող ենք արձանագրել, որ դատվածությունն անձի արարքում ռեցիդիվի գնահատման հիմնական նախապայմանն է: Դատվածությունը քրեական պատասխանատվության իրագործման տարրերից մեկն է՝ անձի յուրահատուկ իրավական վիճակ, որն առաջանում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով՝ անձին պատժի դատապարտելու փաստով: Այլ կերպ ասած՝ դատվածության առկայությունը ենթադրում է, որ անձը նախկինում կատարված արարքի համար ***դատապարտվել է պատժի,*** ուստի կարելի է պնդել, որ դատվածությունն անձի նկատմամբ պատիժ նշանակելու հետևանք է, ինչը բխում է նաև գործող քրեական օրենսգրքի տրամաբանությունից:

Մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 3-րդ մասի համաձայն՝ դատվածություն չունեցող են համարվում այն անձինք, որոնք դատարանի դատավճռով *դատապարտվել են առանց պատիժ նշանակելու* կամ դատարանի դատավճռով *ազատվել են պատիժը կրելուց* (կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված են օրենքով): Նման դեպքերում դատվածություն չառաջանալը, կարծում ենք, պայմանավորված է պետության կողմից անձի նկատմամբ փաստացի հարկադրական ներգործություն չիրականացնելու հանգամանքով, մինչդեռ դատվածությունը վկայում է, որ հանցանք կատարած անձը, արդեն իսկ ենթարկված լինելով պետական հարկադրանքի միջոցի նախկինում կատարված հանցանքի համար, անհրաժեշտ դասեր չի քաղել և չի կանգնել ուղղման ճանապարհին, ինչն էլ հետագայում նոր հանցավոր արարք կատարելու պարագայում վերջինիս համար առաջացնում է որոշակի բացասական

հետևանքներ:

Դատվածություն չառաջացնող վերոնշյալ իրավիճակների պարզաբանումը կարևոր է հատկապես հանցագործությունների ռեցիդիվի գնահատման տեսանկյունից: Այսպես՝ առանց պատիժ նշանակելու դատապարտվելու դեպքերը քրեական օրենսգրքում հստակեցված չեն: Կարելի է եզրակացնել, որ եթե դատավճիռ կայացնելիս առկա է պատիժ նշանակելու անհնարինություն, ապա դատարանը կարող է անձին դատապարտել առանց պատիժ նշանակելու: Քրեական օրենսգրքում նշված իրավիճակների հստակ կանոնակարգման բացակայությունը պրակտիկայում կարող է հանգեցնել կամայականությունների և տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տալ, ուստի առանց պատիժ նշանակելու դատապարտվելու դեպքերը պետք է օրենքում մանրամասն կարգավորում ստանան:

Ինչ վերաբերում է դատարանի դատավճռով անձին պատիժը կրելուց ազատելուն, ապա առաջին հայացքից թվում է, թե պատժից ազատելու բոլոր դեպքերում դատվածություն չի առաջանում, սակայն հոդված 84-ի 4-րդ և 5-րդ մասերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ պատժից ոչ լրիվ և պայմանական ազատվելու պարագայում, մասնավորապես՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դեպքերում անձը համարվում է դատվածություն ունեցող: Այսպես ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 4-րդ մասի համաձայն, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերում դատվածությունը մարվում է փորձաշրջանն անցնելուց հետո, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու դեպքում դատվածությունը մարելու ժամկետը հաշվարկվում է հիմնական և լրացուցիչ պատիժը կրելուց ազատվելու պահից:

Հետևաբար կարող ենք արձանագրել, որ դատվածություն չեն առաջացնում պատժից ոչ պայմանական և լրիվ ազատվելու դեպքերը, ինչպիսին է, օրինակ, մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելը: Միևնույն ժամանակ դատվածության առկայության կամ բացակայության հարցը բաց է մնում անձին ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 78-ով,

79-ով և 80-ով նախատեսված կարգով պատժից ազատելու դեպքերում, այն է՝ հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելու կամ պատժից ազատելու, **ծանր հիվանդության և արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու դեպքերում:**

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 78-ի (հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը) 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատժից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու համապատասխան ժամանակահատվածի ընթացքում (այն ժամկետը, որի ընթացքում կինն ազատվում է աշխատանքից հղիության, ծննդաբերության, ինչպես նաև երեխայի մինչև երեք տարեկան դառնալու կապակցությամբ) դատարանը կարող է՝

1. դատապարտյալին ուղարկել դատավճռով նշանակված պատիժը կրելու, եթե դատապարտված անձը հրաժարվում է երեխայից կամ նրան հանձնում է մանկատուն կամ խուսափում է նրան խնամելուց և դաստիարակելուց, որի համար գրավոր նախազգուշացվում է իր նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից,

2. դատապարտյալի նկատմամբ պատիժ նշանակել սույն օրենսգրքի հոդված 67-ով նախատեսված կանոններով, եթե վերջինս պատիժը կրելուց ազատվելու ժամանակահատվածում կատարում է նոր հանցանք,

3. երեխայի երեք տարեկան դառնալուց հետո կամ նրա մահվան դեպքում՝

- դատապարտյալին ազատել պատիժը կրելուց կամ
- պատիժը փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով կամ
- դատապարտյալին ուղարկել պատժի չկրած մասը կրելու:

Վերոշարադրյալի հիման վրա կարող ենք արձանագրել, որ բոլոր այն դեպքերում, երբ դատապարտյալը համապատասխան ժամկետի ընթացքում հետ է ուղարկվում պատիժը կրելու կամ կատարում է նոր հանցանք, կամ պատիժը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, ապա վերջինս համարվում է դատվածություն ունեցող, ինչը մարվում կամ հանվում է օրենքով սահմանված կարգով: Հետևաբար նախքան դատվածությունը մարվելը կամ հանվելը նոր հանցանք կատարելու դեպքում առկա կլինի նաև հանցագոր-

ծությունների ռեցիդիվ: Մինչդեռ եթե համապատասխան ժամկետը լրանալուց հետո դատարանը որոշում է անձին ազատել պատիժը կրելուց, ապա այդ պահից սկսած՝ անձը պետք է համարվի դատվածություն չունեցող:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 79-ով նախատեսված ծանր հիվանդության հետևանքով անձին պատժից ազատելուն, ապա նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առողջանալու դեպքում անձը կարող է քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվել, եթե վաղեմության ժամկետները չեն անցել: *«Կարող է»* արտահայտությունը վկայում է, որ առողջանալու դեպքում հանցավորին քրեական պատասխանատվության և պատժի ենթարկելու հարցը թողնված է դատարանի հայեցողությանը, հետևաբար եթե դատարանն անձին ազատի պատիժը կրելուց, ապա վերջինս կհամարվի դատվածություն չունեցող: Ուստի դրանից հետո նոր հանցանք կատարելու դեպքում անձի արարքում չի կարող հանցագործությունների ռեցիդիվ գնահատվել:

Անդրադառնալով արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու ինստիտուտին՝ եկել ենք այն համոզման, որ այն պատժից լրիվ և ոչ պայմանական ազատելու հիմք է հետևյալ պատճառաբանությամբ: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 80-ի համաձայն՝ *«Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար դատապարտված անձը կարող է ազատվել պատժից, եթե հրդեհի, տեխնոլոգիական կամ տարերային աղետի, ընտանիքի միակ աշխատունակ անդամի ծանր հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով պատժի հետագա կրումը դատապարտվածի կամ նրա ընտանիքի համար կարող է հանգեցնել ծանր հետևանքների»:* Վերոնշյալ նորմի բովանդակությունից բխում է, որ արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատժից ազատելը պայմանական բնույթ չի կրում, քանի որ սույն նորմում, ի տարբերություն վերևում վերլուծված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 78-ով և 79-ով հոդվածներ նախատեսված պատժից ազատելու հիմքերի, բացակայում է որևէ նշում առ այն, որ անձը հետագայում կարող է որևէ հիմքով ուղարկվել պատժի չկրած մասը կրելու (օրինակ՝ անձի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, նոր հանցավոր արարք կատարելու կամ այլ դեպքերում):

Միևնույն ժամանակ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդված 117-ը, սահմանելով պատժի կրումը հետաձգելու և պատժից ազատելու կարգը, այդ թվում նաև՝ արտակարգ հանգամանքների հիմքով, երկրորդ մասում ամրագրում է հետևյալը. *«Ուղղիչ հիմնարկի վարչակազմը դատապարտյալի ազատման օրը պրոբացիայի ծառայության տարածքային մարմին է ուղարկում պատժի կրումը հետաձգելու մասին դատարանի որոշման պատճենը՝ նշելով ազատման օրը: Ուղղիչ հիմնարկի վարչակազմը դատապարտյալից* ***ստորագրություն է վերցնում պատժից ազատվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, պրոբացիայի ծառայության տարածքային մարմնում հաշվառվելու պարտավորության մասին»:***

«Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 27-ի 8-րդ մասի համաձայն՝ *«Եթե պրոբացիայի շահառուն խուսափում է դատական ակտով իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք, կամ փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելն անձը կատարել է մեկ այլ հանցանք, որի համար պատասխանատվության չի ենթարկվել կամ քրեական պատասխանատվությունից չի ազատվել, ապա պրոբացիայի ծառայողը դեպքի ի հայտ գալու պահից անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում այդ մասին կազմում է արձանագրություն և հղի կանանց, մինչև երեք տարեկան երեխա ունեցող, հիվանդության կամ* ***արտակարգ հանգամանքների հետևանքով պատժի կրումից ազատելու*** *կամ պատժի կրումը հետաձգելու մասին դատական ակտը* ***վերացնելու միջնորդություն է ներկայացնում դատարան»:***

Ստացվում է, որ քրեական օրենսգրքում արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատժից ազատելու դեպքում որևէ պայման չի սահմանվում, մինչդեռ քրեակատարողական և պրոբացիայի մասին օրենքների մեջբերված նորմերի վերլուծությունից բխում է, որ պատժի չկրած մասը դիտարկվում է որպես փորձաշրջան, որի ընթացքում անձը պետք է հաշվառման վերցվի և դրսևորի համապատասխան վարքագիծ, հակառակ պարագայում կուղարկվի պատժի չկրած մասը կրելու: Կարծում ենք՝ նման լուծումն անթույլատրելի է. արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատժից ազատելը քրեական օրենսգրքով նախատեսված պատժից ազատելու տեսակներից մեկն է, հետևաբար սույն ինստի-

տուտի կիրառման հիմքերը, պատժից ազատվելու վերջնական լինելու կամ չլինելու, պատժի չկրած մասը որպես փորձաշրջան դիտարկելու և համապատասխան վարքագիծ դրսևորելու հարցերը պետք է նախևառաջ ամրագրվեն քրեական օրենսգրքում, որպեսզի անձի համար կանխատեսելի լինի հետագայում իր համար հնարավոր անբարենպաստ հետևանքներ վրա հասնելու հանգամանքը, իսկ քրեակատարողական և պրոբացիոն օրենսդրությամբ կարող են նախատեսվել միայն պատժից ազատելու սույն տեսակի կիրառման կարգն ու պայմանները:

Ուստի մեր համոզմամբ, արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատիժը կրելուց ազատելը պայմանական բնույթ չի կրում, անձն ամբողջությամբ ազատվում է նշանակված պատժից և որևէ պարագայում չի կարող հետ ուղարկվել այն կրելու, հետևաբար պատժից ազատվելու պահից վերջինս պետք է համարվի դատվածություն չունեցող:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև համաներման ակտի կիրառման դեպքում դատվածության առկայության խնդիրը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 82-ի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:* Մեջբերված նորմի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ երբ անձը համաներման ակտի ընդունմամբ ազատվում է քրեական պատասխանատվությունից կամ պատժից ամբողջությամբ, ապա համարվում է դատվածություն չունեցող, իսկ եթե պատժից ազատվում է մասնակիորեն, կամ պատժի չկրած մասը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, ապա պետք է համարվի դատվածություն ունեցող, քանի դեռ այն չի մարվել կամ հանվել օրենքով սահմանված կարգով: Հետևապես այդ ընթացքում նոր հանցանք կատարելու պարագայում առկա կլինի հանցագործությունների ռեցիդիվ:

Այս առումով, սակայն, դատական պրակտիկայում հաճախ սխալներ են թույլ տրվում: Մասնավորապես մի շարք դատավճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համաներման ակտի

կիրառմամբ անձին ամբողջությամբ պատիժը կրելուց ազատելու պարագայում դատարանները վերջինիս համարում են դատվածություն ունեցող և նրա կողմից նոր հանցանք կատարվելու դեպքում այն գնահատում որպես հանցագործությունների ռեցիդիվ՝ անտեսելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 84-ի 3-րդ մասի համաձայն՝ պատիժը կրելուց ազատվելու դեպքում անձը համարվում է դատվածություն չունեցող[1]: Դատարանների հիմնական փաստարկն այն է, որ մեջբերված նորմը պարտավորեցնում է, որ անձը պատիժը կրելուց ազատվի դատարանի դատավճռով, իսկ եթե ազատվում է որոշմամբ, ապա պետք է համարվի դատվածություն ունեցող: Վերոնշյալի կապակցությամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավացիորեն արձանագրել է. այն հանգամանքը, որ հանցավորը պատժի կրումից ազատվում է ոչ թե դատարանի դատավճռով, այլ որոշմամբ, չի կարող որևէ կերպ սահմանափակել նրա իրավունքները և ազատությունները[2]:

Այսպիսով՝ դատվածության և ռեցիդիվի ինստիտուտները սերտորեն փոխկապված են. դատվածությունը հանցագործությունների ռեցիդիվի հիմնական տարրն է, և այն բազմակիության մյուս տեսակներից տարբերակող հիմնական չափանիշը: Միաժամանակ պետք է նկատել, որ ցանկացած դատվածություն չէ, որ առաջացնում է հանցագործությունների ռեցիդիվ: Մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի 4-րդ մասի համաձայն՝ այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը կամ անզգույշ հանցագործությունների դատվածությունը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում:

---

[1] Տե՛ս Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի հունիսի 16-ի թիվ ԱՎԴ2/0010/01/15 գործով, Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ ԱՎԴ2/0025/01/15 գործով, Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԿԴ1/0130/01/14 գործով դատավճիռները:

[2] Տե՛ս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 28-ի թիվ ԱՎԴ2/0010/01/15 գործով որոշումը:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СООТНОШЕНИЯ РЕЦИДИВА ПРЕСТУПЛЕНИЙ И СУДИМОСТИ

Женя Степанян
Ассистент кафедры уголовного права ЕГУ,
кандидат юридических наук

В настоящей статье рассматриваются вопросы соотношения рецидива преступлений и института судимости. В частности, нами были изучены правовая природа и сущность института судимости, ее соответствие фундаментальным принципам уголовного права, рассмотрены соотношение рецидива, судимости и ряда институтов уголовного права (в частности: освобождение от наказания, амнистия и т.д.), возникающие основные проблемы, а также соответствующая судебная практика и наиболее часто допускаемые судебные ошибки. В результате были сделаны рекомендации, направленные на совершенствование норм о рецидиве преступлений.

SOME QUESTIONS OF RELATIONSHIP BETWEEN CRIME RECIDIVISM AND FORMER CONVICTION

Zhenya Stepanyan
Assistant Professor at the YSU
Chair of Criminal law, Candidate of Legal Sciences

This article deals with the issues of relationship between crime recidivism and institute of former conviction. Particularly, it reveals legal nature and the essence of the institute of former conviction, its relevance to fundamental principles of the criminal law. Connection of recidivism, former conviction and a number of criminal law institutes (in particular: exemption from punishment, amnesty, etc.), the main problems encountered, as well as relevant jurisprudence, and most often occurred judicial errors were also considered. As a result, recommendations were made to improve the legal norms on recidivism.

Բանալի բառեր – *դատվածություն, ռեցիդիվ, պատժից ազատել, փորձաշրջան, հանցագործություն, համաներում, արդարության սկզբունք:*

Ключевые слова: *судимость, рецидив, освобождение от наказания, испытательный срок, преступление, амнистия, принцип справедливости.*

Key words: *former conviction, recidivism, exemption from punishment, probation, crime, amnesty, the principle of justice.*

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԴԵՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գոհար Հակոբյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս

2017 թվականի դեկտեմբերի 13-ին Ազգային Ժողովի կողմից «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) ընդունմամբ առավել քան երբևէ արդիական դարձան ընտանիքում բռնության համար քրեական պատասխանատվության հիմնահարցերը: Իսկ 2018 թվականի հունվարի 18-ին «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Ստամբուլի կոնվենցիա) ստորագրմամբ ևս մեկ անգամ ընդգծվեց ընտանիքում բռնության և կանանց դեմ բռնության համար քրեական պատասխանատվությունը միջազգային իրավական չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը: Հաշվի առնելով մատնանշված հարցերի արդիականությունը՝ սույն հոդվածում քննարկման ենթակա հարցերն են՝ (1) արդյո՞ք ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է ընտանիքում բռնության դրսևորումների համար պատասխանատվության առանձնահատկություններ, (2) որո՞նք են խնդրո առարկա բնագավառում միջազգային իրավական չափանիշները, (3) արդյո՞ք բռնաբարության համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվությունը համապատասխանում է միջազգային իրավական չափանիշներին և ժամանակակից միտումներին, (4) ինչպիսի՞ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել քրեական օրենսգրքում՝ ներպետական օրենսդրությունը միջազգային պարտավորություններին համապատասխանեցնելու նպատակով:

Առաջին հարցին անդրադառնալիս ակնհայտ է, որ քրեական օրենսդրությունը չի նախատեսում որևէ առանձնահատուկ կարգավորում ընտանիքում բռնության դեպքերի համար: Փոխարենն այն պարունակում է հոդվածներ, որոնք կիրառելի են նաև ընտանիքում

բռնության պարագայում՝ սպանությունից մինչև ծեծ:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ որևէ խնդիր չի առաջանա հիշյալ ընդհանուր հոդվածները նաև ընտանիքում բռնության դեպքերի նկատմամբ կիրառելիս: Սակայն, խնդիրն այն է, որ ընտանիքում բռնությանը ներհատուկ են մի շարք առանձնահատկություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես քրեական ներգործության միջոցներ կիրառելիս, այնպես էլ քննություն իրականացնելիս: Երկար ժամանակ ընդունված է եղել համարել, որ հանցագործությունները, որոնք տեղի են ունենում ընտանեկան միջավայրում, նվազ հանրային վտանգավորություն ունեն, մասնավոր բնույթի են, և այդ հիմքով սահմանվում էին որպես մասնավոր մեղադրանքի գործեր, կամ գործնականում դրանց ընթացք չէր տրվում: Սակայն ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ ընտանեկան միջավայրում գործադրվող բռնությունը, ընդհակառակը, ավելի վտանգավոր է, քան բռնության շատ այլ տեսակներ, քանի որ այդ պարագայում անձը բռնության է ենթարկվում այն անձի կողմից, որից ինքն ունի տնտեսական, սոցիալական, հոգեբանական կախվածություն, և այն միջավայրում, որը պետք է ամենաանվտանգը լիներ իր համար: Բացի դրանից՝ ընտանիքում բռնությունը սովորաբար մեկ իրադարձություն չէ, այլ գործընթաց: Այլ խոսքերով՝ այն գրեթե երբեք չի սահմանափակվում մեկ անգամով, տուժողն ապրում է բռնության շղթայում՝ կրելով շարունակական ֆիզիկական և հոգեկան տառապանք: Նման իրավիճակում տուժողն ավելի խոցելի վիճակում է, նրա համար ավելի դժվար է դիմել իրավապահ մարմիններին, մինչդեռ մյուս հանցատեսակների դեպքում անձը կարող է միանգամից պաշտպանություն խնդրել իրավապահներից: Այս փաստարկները հաշվի առնելով՝ Եվրոպայի խորհրդի շուրջ 10 երկրներում, այդ թվում՝ Վրաստանում, Իսպանիայում, Շվեդիայում, Մոլդովայում, ընտանիքում բռնությունն առանձնացվել է հատուկ հանցակազմերում[1]: Նման մոտեցումը միգուցե և արդարացված է՝ ընտանիքում բռնությանն անհրաժեշտ առանձնահատուկ կարգավորման ապահովման և այդ երևույթի նկատմամբ հանրության ան-

[1] Տե՛ս Խավիեր Թրուչերո, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով սահմանված չափանիշների տեսանկյունից ՀՀ քրեական օրենսդրության վերլուծություն, 2017, Ստրասբուրգ, էջ 17:

հանդուրժողականության արտահայտման տեսանկյունից, սակայն չի տեղավորվում հայրենական քրեաիրավական համակարգի տրամաբանության մեջ և խախտում է օրենսգրքի կառուցվածքը: Փոխարենն արդարացված է թվում Ստամբուլի կոնվենցիայով առաջին անգամ իրավաբանորեն ամրագրված պահանջը, որ բռնությունն ընտանիքում կատարելը պետք է համարել պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք: Ճիշտ է, գործող օրենսգիրքը նմանատիպ ծանրացնող հանգամանք է նախատեսում հանցանքը հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ կատարելը, սակայն իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են գործերը, երբ հիշյալ ձևակերպումը դատարանների կողմից չի մեկնաբանվում որպես ծանրացնող հանգամանք ընտանիքում բռնության համատեքստում[1]: Անհրաժեշտ է կա՛մ դատավորներին վերապատրաստել՝ արդեն նախատեսված ձևակերպումը նաև ընտանիքում բռնության գործերով որպես ծանրացնող հանգամանք դիտելու մասով, կա՛մ ծանրացնող հանգամանքների ցանկը լրացնել ավելի հստակ և միանշանակ մեկնաբանվող ձևակերպմամբ, ինչը և պահանջում է Ստամբուլի կոնվենցիայի 46-րդ հոդվածը:

Հետաքրքրական է քննարկել բռնաբարության հանցակազմի հատկանիշների և դրանց մեկնաբանության հարցը միջազգային իրավական զարգացումների համատեքստում: Այսպես՝ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածը սահմանում է. «*Բռնաբարությունը՝ տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով…*»: Ինչպես հետևում է մեջբերված ձևակերպումից, հանցակազմի պարտադիր հատկանիշներ են բռնությունը կամ դրա սպառնալիքը կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելը[2], ինչպես նաև այն, որ սեռական հարաբերութ-

[1] Հասմիկ Խաչատրյանի, Թագուհի Մանսուրյանի, Սիրանուշ Աղաբեկյանի և մի շարք այլ գործերով:

[2] Քանի որ անօգնական վիճակում գտնվելը վերաբերում է քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խիստ սահմանափակ դեպքերին և ըստ էության չի լուծում բարձրաձայնված խնդիրները, հետագա քննարկման ընթացքում դրան չենք անդրադառնա:

յունը լինի տուժողի կամքին հակառակ: Հարկադրանքի այլ ձևերով, օրինակ՝ բռնություն գործադրելու հետ չկապված սպառնալիքներով, տուժողի կախվածությունն օգտագործելով սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններին հարկադրելը որակվում է ոչ թե որպես բռնաբարություն, այլ 140-րդ հոդվածով, ինչը միանգամայն ավելորդ և արհեստական բաժանում է, իսկ այդ հոդվածով նախատեսված պատիժը՝ անարդարացիորեն մեղմ: Բացի դրանից՝ դիսպոզիցիայի առկա ձևակերպումն ինքնին ենթադրում է, որ տուժողը պարտավոր է հանցավորին որևէ կերպ հասկացնել, որ տվյալ սեռական ակտն իր կամքին հակառակ է: Ավելին՝ ավանդաբար դատական պրակտիկայում բռնաբարության վերաբերյալ գործերով ապացուցման առարկան համարվում է հենց բռնության կամ դրա սպառնալիքի, ինչպես նաև տուժողի կողմից դիմադրության առկայությունը: Այս հայեցակարգն արդեն մի քանի տասնյակ տարիներ առաջ խիստ քննադատության է արժանացել մասնագետների կողմից: Բանն այն է, որ մի շարք դեպքերում տուժողը կարող է ի վիճակի չլինել արտահայտելու իր անհամաձայնությունը, առավել ևս դիմադրություն ցույց տալու տարբեր պատճառներով՝ ամոթի, վախի, հանցավորից կախվածության մեջ լինելու, «սառեցված վախ» (frozen fright) հոգեբանական երևույթի[1] և այլ պատճառներով: Սեռական բռնության հետ կապված հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ միջազգային փաստաթղթերում պատասխանատվությունն արդեն տուժողից փոխվում է դեպի հանցանք կատարած անձը: Ոչ թե տուժողն է պարտավոր ցույց տալ, որ ինքը դեմ է տվյալ սեռական հարաբերությանը, դիմադրել, այլ հանցավորն է պարտավոր նրա համաձայնությունը ստանալ: Իսկ բռնությունը կամ դրա սպառնալիքն ընդհանրապես պարտադիր չէ բռնաբարության առկայության համար: Հետևաբար, Ստամբուլի կոնվենցիայում շեշտվում է, որ սեռական բռնություն, այդ թվում՝ բռնաբարություն պետք է համարել սեռական բնույթի դիտավորյալ բռնի գործողությունը, որը կատարվել է «առանց տվյալ անձի համաձայնության»: Կոնվենցիան նաև պարզաբանում է, որ համաձայնությունը պետք է տրվի կամովին՝ անձի ազատ կամա-

[1] Տե՛ս Michal Buchhandler-Raphael, The Failure of Consent: Re-Conceptualizing Rape as Sexual Abuse of Power// Michigan Journal of Gender and Law, Michigan Journal of Gender and Law, Vol. 18, Issue 1, 2011, էջ 160:

հայտնության հիման վրա, պետք է գնահատվեն վերաբերելի բոլոր հանգամանքներն իրենց ամբողջության մեջ դիտարկելու արդյունքում:

Ինչո՞վ է տարբերվում գործող կարգավորումն «առանց համաձայնության» չափանիշից: Ի տարբերություն նախկինում տարածված դատական պրակտիկայի, երբ գործում էր «ոչ-ը նշանակում է ոչ» սկզբունքը, հիմա առաջարկվում է առաջնորդվել «միայն այո-ն է նշանակում այո» սկզբունքով: Տեսական հարթության մեջ խնդրո առարկա սկզբունքը թվում է կանանց դեմ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի առավել արդյունավետ միջոց և ընդհանրապես մարդու իրավունքների տեսանկյունից առավելագույնս արդարացված: Այնուամենայնիվ, երբ խոսքը հիշյալ սկզբունքի գործնական կիրառության մասին է, պարզ է դառնում, որ ամեն ինչ այդքան էլ հարթ չէ: Մասնավորապես, այն պայմաններում, երբ կնոջ հագուստը, ուշ ժամին միայնակ տանից դուրս գալը, ալկոհոլ օգտագործելը, հանցավորի հետ որևէ տեղ գնալը, նախկին սեռական կյանքի պատմությունը մեկնաբանվում են որպես պրովոկացիա և սեռական ակտի համաձայնություն[1], իրավակիրառ պրակտիկայում, որը զերծ չէ գենդերային կարծրատիպերից, կարող են դժվարություններ առաջանալ «որոշակի համաձայնության» (affirmative consent) չափանիշի կիրառության հետ կապված: Խնդիրներ կարող են առաջանալ մեղքի հաստատման հետ կապված, հատկապես երբ խոսքը վերաբերում է ոչ թե տղամարդու և կնոջ միջև առաջին սեռական ակտին, այլ, օրինակ, ամուսինների և զուգընկերների միջև հարաբերություններին: Ինչպե՞ս է ապացուցվելու հանցավորի մեղքը տուժողի կողմից լռության, չդիմադրելու, պասիվ վարքագծի պարագայում: Բարձրացված հարցերն արդեն իսկ քննարկման առարկա են դարձել այն երկրներում, որտեղ օրենսդրորեն ամրագրվել է առանց «որոշակի համաձայնության» չափանիշը, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային ատյաններում: Մի բան պարզ է.

[1] *«Karen Tayag Vertido v. the Philippines»* 2010 թվականի թիվ 18/2008 գործով որոշման մեջ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեն (CEDAW) նկարագրել է այն գենդերային կարծրատիպերը և բռնաբարության վերաբերյալ միֆերը, որոնք թույլ չեն տվել ներպետական դատարանին անկողմնակալ վճիռ կայացնել, դրանց շարքում՝ ֆիզիկական բռնությունը և տուժողի կողմից դիմադրություն ցույց տալը:

առաջարկվող կարգավորումը կարող է գործել միայն կարծրատիպերից զերծ, տուժողակենտրոն, օբյեկտիվ քննության պարագայում:

Առաջին հերթին արժե անդրադառնալ քննարկման առարկա հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ կամ Դատարան) ձևավորած իրավական դիրքորոշմանը: Այսպես՝ Էմ ՍԻ-ն ընդդեմ Բուլղարիայի[1] գործով Դատարանն առաջին անգամ համակողմանիորեն անդրադարձել է բռնաբարության հանցակազմի հատկանիշներին և ամրագրել, որ ինչպես եվրոպական մայրցամաքում, այնպես էլ մի շարք այլ երկրներում իրավունքը զարգանում է այն ուղղությամբ, որ բռնությունը կամ դրա սպառնալիքը, ինչպես նաև տուժողի կողմից դիմադրություն ցուցաբերելն այլևս չեն համարվում հանցակազմի պարտադիր հատկանիշ: Բողոքի քննության արդյունքներով Դատարանը սահմանում է. «*Ժամանակակից չափանիշների և զարգացումների համաձայն՝ պետությունների պոզիտիվ պարտականությունն է 3-րդ և 8-րդ հոդվածների համատեքստում քրեականացնել ցանկացած սեռական ակտ, որը տեղի է ունեցել առանց համաձայնության, անգամ եթե զոհը դիմադրություն ցույց չի տալիս*»: Այնուհետև, ՄԻԵԴ-ն արձանագրում է. «*Դատարանը գտնում է, որ թեպետ գործնականում երբեմն կարող է բարդություն ներկայացնել համաձայնության բացակայության ապացուցումը բռնաբարության «ուղղակի» ապացույցների բացակայության պայմաններում, ինչպիսիք են բռնության հետքերը կամ ականատես վկաները, սակայն (…) քննությունը և դրա եզրահանգումները պետք է կառուցված լինեն համաձայնության բացակայության հարցի շուրջ*»[2]: Թեև Ստրասբուրգի դատարանն ուղղակիորեն չի արձանագրում, որ բռնաբարության հանցակազմից պետք է հանվեն բռնության և դրա սպառ-

[1] Տե՛ս «ECtHR M.C. v Bulgaria», Application no. 39272/98, 04.12.2003: Տվյալ գործը վերաբերում էր մի խումբ անձանց կողմից 17-ամյա աղջկա վստահությունը չարաշահելու միջոցով նրան ամայի վայր տանելու և այնտեղ ենթադրաբար առանց նրա համաձայնության նրա հետ սեռական հարաբերություն ունենալու իրավիճակին: Դատարանը քննում էր կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման հարցը՝ դիմողի մարմնի վրա բռնության հետքերի և դիմադրության ապացույցների բացակայության պատճառաբանությամբ գործի վարույթը կարճելու պայմաններում:

[2] Տե՛ս «ECtHR M.C. v Bulgaria», § 166, 181:

նալիքի հատկանիշները, և փոխարենը նախատեսվի համաձայնության բացակայությունը, սակայն միանշանակորեն ընդգծում է, որ գործի քննությունը պետք է լինի այդպիսին:

Միջազգային քրեական ատյաններն ավելի լայն մեկնաբանություն են առաջարկում: Մասնավորապես, հենց նշված վճռում Դատարանի կողմից հիշատակված Դատախազն ընդդեմ Կունարաչի, Կովաչի և Վուկովիչի գործով[1] նախկին Յուգասլավիայի միջազգային քրեական տրիբունալի վերաքննիչ պալատն ընդգծում է. «*…Բռնաբարության actus reus-ը միջազգային քրեական իրավունքում ընդգրկում է… սեռական ակտը…, որը տեղի է ունեցել առանց զոհի համաձայնության: Այս դեպքում համաձայնությունը պետք է տրված լինի կամավոր, լինի զոհի ազատ կամքի դրսևորում, որը գնահատվում է շրջակա պայմանների համատեքստում: Սուբյեկտիվ կողմը սեռական ակտն իրականացնելու դիտավորությունն է և գիտակցելը, որ այն տեղի է ունենում առանց զոհի համաձայնության … Բռնությունը կամ բռնության սպառնալիքը համաձայնության բացակայության պարզորոշ ապացույց է, սակայն բռնությունը բռնաբարության per se հատկանիշ չէ …. Կան այլ գործոններ, որոնք կարող են նպաստել ոչ կամավոր, զոհի կողմից առանց համաձայնության սեռական ակտին*»: Եզրահանգումն այն է, որ բռնությունը և բռնության սպառնալիքը չպետք է գործնականում նեղ մեկնաբանության արժանանան, քանի որ զոհի կամքի ազատությունը սահմանափակող այլ գործոնները հաշվի չառնելը կարող է անարդարացիորեն մեղմ իրավիճակ ստեղծել այն անձանց համար, որոնք սեռական հարաբերություն են ունեցել զոհի հետ առանց նրա համաձայնության՝ ուժ գործադրելու փոխարեն օգտվելով նրա կամքը սահմանափակող այլ հանգամանքներից:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն կանանց դեմ բռնությունից պաշտպանելու վերաբերյալ (2002) 5 հանձնարարականում սահմանում է, որ *պետությունները պետք է քրեականացնեն յուրաքանչյուր սեռական ակտ, որը կատարվել է համաձայնություն չտված անձանց նկատմամբ, անգամ եթե նրանք դիմադրության նշաններ ցույց չեն տվել, ինչպես նաև հանցանք կատարած անձի կարգավիճակի ցանկացած չարաշահում, հատկապես չափահասի*

[1] Տե՛ս «Prosecutor v. Kunarac, Kovač and Vuković», IT-96-23, 22.02.2001, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.icty.org/case/kunarac/4:

կողմից անչափահասի նկատմամբ[1]:

Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում կարևոր լրացուցիչ շեշտադրում է կատարվում. համաձայնության առկայությունը պետք է գնահատվի տվյալ գործի ենթատեքստի նկատմամբ զգայունությամբ (context-sensitive assessment): Կարևոր է ապահովել, որպեսզի սեռական բռնության և մասնավորապես բռնաբարության վերաբերյալ օրենսդրության մեկնաբանությունը հիմնված չլինի գենդերային կարծրատիպերի և տվյալ իրավիճակին բնորոշ վարքագծի վերաբերյալ ենթադրությունների վրա[2]:

Մի շարք երկրներում՝ Բելգիա, Իռլանդիա, Խորվաթիա, Իսպանիա, Մեծ Բրիտանիա, Շվեդիա, Կանադա, ԱՄՆ մեկ տասնյակից ավելի նահանգներ, բռնաբարության հանցակազմերից հանվել են բռնությունն ու դրա սպառնալիքը՝ փոխարենն ավելացնելով համաձայնության բացակայությունը՝ որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ: Այս կապակցությամբ հարց է առաջանում, թե ինչը պետք է համարել համաձայնություն: Մի շարք օրենքներում, դատական նախադեպերում, ռազմավարական և կրթական ծրագրերում ընդգծվում է այն դրույթը, որ առարկության կամ դիմադրության բացակայությունը դեռևս չի նշանակում համաձայնություն: Այսպես՝ Էմ. Թի. Էս-ի գործով վճռում Նյու Ջերսիի Գերագույն դատարանը հետևյալ կերպ է բնութագրել համաձայնությունը. «*Նման թույլտվությունը կարող է դրսևորվել բառերով կամ գործողություններով, որոնք, գնահատվելով շրջակա հանգամանքների լույսի ներքո, ողջամիտ անձին ի ցույց կդնեն հաստատակամ և ազատորեն տրված թույլտվություն տվյալ սեռական ակտի համար*»[3]:

Կանադայի Գերագույն դատարանն Իվանչուկի բեկումնային գործով սահմանել է, որ բռնաբարության հանցակազմն ունի երեք հատկանիշ՝ հպում, հպման սեքսուալ բնույթ և համաձայնության բացակայություն[4]: Համաձայնությունը բնորոշվում է որպես դիմողի

---

[1] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2612:

[2] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://rm.coe.int/16800d383a, § 192:

[3] Տե՛ս Jonathan Witmer-Rich, Unpacking Affirmative Consent: Not as Great as You Hope, Not as Bad as You Fear, Law Faculty Articles and Essays, Cleveland State University, 2016, էջ 61:

[4] Տե՛ս «R. v. Ewanchuk», [1999] 1 S.C.R. 330, § 25:

կամավոր համաձայնությունը՝ մասնակցելու տվյալ սեռական գործողությանը: Հատկանշական է, որ դատարանը նաև հստակեցրել է, թե ինչը չի կարելի համարել համաձայնություն. «համաձայնությունը ձեռք բերված չէ, եթե մեղադրյալը դիմողին դրդել է մասնակցելու սեռական գործողությանը վստահությունը, իշխանությունը կամ հեղինակությունը չարաշահելու միջոցով»: Միևնույն ժամանակ, Կանադայի քրեական օրենսգիրքը տվյալ բնագավառի համար աննախադեպ հստակությամբ կարգավորում է, թե մեղադրյալն ինչը չի կարող օգտագործել որպես պաշտպանություն. մեղադրյալը չի կարող հիմնվել համաձայնության առկայության վերաբերյալ իր թյուր ընկալման վրա, եթե այդ ընկալումը պայմանավորված է կամավոր կերպով առաջացած հարբածությամբ, անփութությամբ կամ կամավոր կուրությամբ, կամ եթե մեղադրյալը ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել պարզելու համար, թե արդյոք տուժողը համաձայն է: Կանադայի Գերագույն դատարանը նաև շատ կարևոր անդրադարձ է կատարել սուբյեկտիվ կողմին՝ շեշտելով, որ մեղադրյալի այն համոզմունքը, որ դիմողը ցանկացել է, որ նա իրեն դիպչի, սակայն չի բարձրաձայնել այդ մասին, չի կարող գնահատվել որպես պատշաճ պաշտպանություն: Եթե մեղադրյալը ցանկանում է իր պաշտպանությունը կառուցել նրա վրա, որ ինքը սխալմամբ կարծել է, թե տուժողի համաձայնությունն առկա է, նա պետք է այդ համաձայնության արտահայտման վերաբերյալ ապացույց ներկայացնի: Համոզմունքը, որ լռությունը կամ պասիվությունը համաձայնության նշան է, չի կարող պատշաճ պաշտպանություն համարվել[1]:

Ամփոփելով նշենք, որ համաձայնությունը պետք է տրվի կամավոր, այլ ոչ թե որևէ ճնշման, սպառնալիքների, կարգավիճակի չարաշահման արդյունքում: Վերը հիշատակված հատկանիշներն ամփոփելով՝ ձևավորվել են «որոշակի համաձայնության» հետևյալ հատկանիշները՝

- կամավոր պայմանավորվածություն՝ մասնակցելու սեռական ակտին,
- անգործունակ անձը չի կարող համաձայնություն տալ,
- անցյալում տրված համաձայնությունն անպայմանորեն չի ենթադրում նաև ապագայում համաձայնության առկայություն,

[1] Տե՛ս «R. v. Ewanchuk», § 46-51:

- լռությունը կամ դիմադրության բացակայությունը չի ենթադրում համաձայնություն,
- մեկ անձի հետ սեռական հարաբերություն ունենալու համաձայնությունը չի նշանակում մեկ այլ անձի հետ նման հարաբերություն ունենալու համաձայնություն,
- համաձայնությունը կարող է չեղարկվել ցանկացած պահի,
- հարկադրանքը, բռնությունը կամ սպառնալիքը համաձայնությունը դարձնում է անվավեր[1]:

Անդրադառնալով սուբյեկտիվ կողմին՝ պետք է նշել, որ բռնությունը կամ դրա սպառնալիքը հանցակազմի պարտադիր հատկանիշների ցանկից հանելով և փոխարենը համաձայնության բացակայությունը նախատեսելով՝ որոշակիորեն փոխվում է նաև սուբյեկտիվ կողմի գնահատումը: Խնդրո առարկա հանցակազմի բովանդակությունից հետևում է, որ բռնաբարությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, ինչը և համարվում է ապացուցման առարկա պրակտիկայում[2]: Սակայն, վերը շարադրված նոր մոտեցումների համատեքստում պարզ է դառնում, որ դիտավորության առկայության հարցը պետք է ավելի լայն մեկնաբանության արժանանա և ընդգրկի նաև անուղղակի դիտավորությունը: Այլ կերպ ասած՝ հարկադրանքը կարող է առկա լինել ոչ միայն այն դեպքում, երբ հանցավորն իմացել է, որ տուժողը համաձայնություն չի տվել տվյալ սեռական ակտի համար, այլև այն պարագայում, երբ նրա համար միևնույն է՝ համաձայնություն առկա է, թե ոչ, նա այդ մասին չի մտածում կամ գիտակցում է, որ տուժողը հնարավոր է համաձայն չլինի: Նման կարգավորում են պարունակում Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի, Կանադայի, Շվեդիայի օրենսդրությունները: Հակառակ դեպքում մեղադրող կողմի համար չափազանց բարդ կլինի ապացուցելը, որ ոչ միայն տուժողը համաձայն չի եղել տվյալ սեռական հարաբերությանը, այլև հանցավորը գիտակցել է, որ նա համաձայն չի: Հանցանք կատարած անձը միշտ կարող է պնդել, որ ին-

[1] Տե՛ս White House Task Force to Protect Students from Sexual Assault, Checklist for Campus Sexual Misconduct Policies, DEP'T JUST. 1, 4, https://www.justice.gov/ovw/page/file/910271/download:

[2] Տե՛ս Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, 3-րդ հրատարակություն, Երևան, 2007, էջ 242:

քը չի գիտակցել, որ գործում է տուժողի կամքին հակառակ, քանի որ նա դիմադրություն ցույց չի տվել, իր հետ սիրալիր է եղել և բազմաթիվ այլ պատրվակներ բերել՝ խուսափելով քրեական պատասխանատվությունից: Իսկ նոր կարգավորումը թույլ կտա ապահովել արդարացի պատասխանատվություն սեռական բռնության համար:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև 105-րդ հոդվածի համատեքստում «տուժողի հակաբարոյական վարքագիծ» եզրույթի մեկնաբանությունն ընտանիքում բռնության և կանանց դեմ բռնության գործերով: Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկայի վերլուծությունը, ամենավտանգավոր դատական կարծրատիպերից մեկը, որը խաթարում է բռնության զոհ կանանց արդարադատության մատչելիության իրավունքը, դատական ակտերի կայացումն է՝ հիմնվելով ոչ թե ապացույցների օբյեկտիվ գնահատման, այլ կնոջ բարոյականության գնահատման վրա: Այսպիսի կարծրատիպերի տրամաբանությունը ենթադրում է, որ «անբարոյական» կինն արժանի է բռնության ենթարկվելու: Այսպիսի դեպքերում կիրառվող պատիժն անհամեմատ ավելի մեղմ է լինում: Կնոջ սեռական կյանքի պատմությունը կամ նրան ամուսնական դավաճանության մեջ մեղադրելը կարող է հիմք ծառայել ամուսնու արարքի արդարացման համար, որին հասցրել են «հոգեկան խիստ հուզմունքի վիճակի»: Օրինակ՝ հետաքրքիր է քննարկել Դիանա Նահապետյանի՝ 2012 թ. տեղի ունեցած սպանության գործը, որով Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի դատարանը նրա փաստական ամուսնուն դատապարտել էր 3,6 տարվա ազատազրկման: Գործի փաստական հանգամանքների շարադրանքից պարզ է դառնում, որ հանցավորը՝ Վոլոդյա Մ.-ն, սպանել է կողակցին՝ Դիանա Նահապետյանին՝ վերջինիս դուստրերի ներկայությամբ, քանի որ, նրա խոսքերով, «նա իրեն մի քանի ամիս շարունակ դավաճանել է»: Վոլոդյա Մ.-ն սպանել է կնոջը նրա հետ առաջացած ծեծկռտուքի ժամանակ՝ երկու դանակով վերջինիս հասցնելով 21 հարված, որից անմիջապես հետո դիմել է փախուստի: 2015 թ. (երեք տարի անց) դատարանը վճռել է, որ ամբաստանյալը գտնվել է տուժողի հակաբարոյական վարքագծի հետևանքով առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում՝ ամբաստանյալին դատապարտելով ընդամենը 3 տարի 6 ամիս ազատազրկման: Հատկանշական է, որ ի սկզբանե խնդրո առարկա հանցագործությունը որակվել էր որպես

սովորական սպանություն ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով: Այնուհետև, այն վերաորակվել էր որպես առանձին դաժանությամբ կատարված սպանություն 104-րդ հոդվածի 2-րդ մասով՝ այն հիմքով, որ սպանությունը կատարվել է տուժողի դուստրերի առջև, և որ հանցագործը տուժողին երկու դանակի միջոցով բազմաթիվ հարվածներ է հասցրել: Ի վերջո, այն վերաորակվել է 105-րդ հոդվածով՝ որպես «հոգեկան խիստ հուզմունքի վիճակում» կատարված սպանություն: Գործով նշանակվել է երեք դատահոգեբանական փորձաքննություն, որոնցից առաջինը չի հաստատել աֆեկտի վիճակը, երկրորդը հաստատել է, իսկ երրորդով եզրակացություն է տրվել դրա բարձր հավանականության մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի այն դրույթը, որն ընկած է տվյալ դատավճռի հիմքում, սահմանված է հետևյալ կերպ. «*Տուժողի գործադրած բռնության, ծաղրուծանակի, ծանր վիրավորանքի կամ այլ հակահրավական կամ հակաբարոյական գործողությունների (անգործության), ինչպես նաև տուժողի՝ պարբերաբար դրսևորած հակահրավական կամ հակաբարոյական վարքագծի կապակցությամբ առաջ եկած երկարատև հոգեձնշող իրավիճակի հետևանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարած սպանություն*»: Ինչպես պարզորոշ երևում է մեջբերված դրույթի ձևակերպումից, այն չափազանց անորոշ է՝ «հակաբարոյական գործողություններ» կամ «պարբերական հակաբարոյական վարքագիծ» հասկացությունների մասով: Այս ձևակերպումների մեկնաբանությունն առավելապես կախված է դատավորի սուբյեկտիվ ընկալումներից, որոնց հիմքում կարող են լինել նաև գենդերային կարծրատիպերը: Արդյո՞ք միևնույն հանգամանքներում կնոջ կողմից տղամարդու սպանությունը նույնպիսի մեղմ վերաբերմունքի կարժանանար: Համեմատության համար կարելի է բերել տուժող Մանուկ Սիմոնյանի գործի օրինակը: Մասնավորապես, քննությամբ պարզվել է, որ տուժողը կնոջը տարիներ շարունակ բռնության է ենթարկել: Ավելին՝ վիճաբանություն է եղել նաև դեպքի օրը: Այնուամենայնիվ, կնոջը մեղադրանք է առաջադրվել 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես հասարակ սպանություն[1]: Մեղադրյալ Ռ. Մկրտչյանի նկատմամբ ևս արդեն իսկ նշանակվել է երկու դատահոգեբանա-

[1] Տե՛ս https://www.azatutyun.am/a/28971132.html:

կան-դատահոգեբուժական փորձաքննություն, որոնցից մեկի եզրակացությամբ աֆեկտ չի եղել, իսկ երկրորդի եզրակացությամբ հաստատվել է, որ ամբաստանյալը գտնվել է աֆեկտի վիճակում: Այնուամենայնիվ, մեղադրանքը դեռևս չի փոխվել: Այնինչ այս գործում, ի տարբերություն նախորդի, քննությամբ հաստատվել է, որ տուժողը ոչ միայն հակաբարոյական վարքագիծ է դրսևորել, այլև ամբաստանյալի նկատմամբ պարբերաբար այնպիսի բռնություն է գործադրել, որ վերջինս ունեցել է լուրջ առողջական խնդիրներ: Անշուշտ, ընդամենը երկու գործերի հիման վրա հնարավոր չէ հանգել գիտականորեն հավաստի ընդհանրական հետևությունների, այն էլ, երբ երկրորդի քննությունը դեռ ավարտված չէ: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ հասարակության մեջ կնոջ և տղամարդու բարոյականության գնահատման չափորոշիչները տարբեր են, և դրանք չեն կարող իրենց ազդեցությունը չունենալ դատական պրակտիկայում: Նման կարծրատիպերի՝ արդարադատության մատչելիությանը չխոչընդոտելու նպատակով Ստամբուլի կոնվենցիան կարևոր դրույթ է սահմանում: Այսպես՝ կոնվենցիայի 42-րդ հոդվածը սահմանում է. «*Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայի առարկա համարվող բռնության որևէ գործողության առթիվ հարուցված վարույթի ընթացքում մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված, «պատիվը» չդիտվեն որպես նման գործողությունների արդարացում: Սա վերաբերում է, մասնավորապես, այն պնդումներին, որ տուժողի կողմից խախտվել են պատշաճ վարքագծի մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդութային նորմերը կամ սովորույթները*»: Կոնվենցիայի բացատրական զեկույցում[1] պարզաբանվում է, որ որևէ ավանդույթ, մշակույթ կամ պատվի մասին պատկերացումներ, որոնք ուղղված են տուժողին համապատասխան վարքագծի կանոններից շեղվելու համար վրեժխնդիր լինելուն կամ պատժելուն, չեն կարող դիտվել որպես բռնություն գործադրած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու կամ պատիժը մեղմացնելու հիմք:

Ամփոփելով վերը շարադրված վերլուծությունը՝ ներկայացնում

[1] Տե՛ս Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույց, §216-217:

ենք հետևյալ եզրահանգումները և առաջարկները.

- Բռնությունն ընտանիքի անդամի նկատմամբ գործադրելը պետք է դիտվի որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք՝ հաշվի առնելով ընտանիքում բռնության զոհերի առավել խոցելիությունը, հանցավորի կողմից իր կարգավիճակը չարաշահելը, ընտանիքում բռնության շարունակականությունը և պատճառված վնասի բազմաբնույթ լինելը (ֆիզիկական, հոգեկան, սոցիալական, տնտեսական):
- Հետևելով միջազգային իրավունքում առկա զարգացումներին՝ քրեական օրենսգիրքը պետք է հրաժարվի բռնությունն ու բռնության սպառնալիքը որպես բռնաբարության պարտադիր հատկանիշ համարելուց: Փոխարենը նշված հանցակազմի հատկանիշ պետք է համարվի տուժողի կողմից տվյալ սեռական հարաբերության համար համաձայնության բացակայությունը: Այս պարագայում կվերանա նաև 140-րդ հոդվածի անհրաժեշտությունը, քանի որ ոչնչով արդարացված չէ 138-րդ և 140-րդ հոդվածների տարբերակումն ըստ օբյեկտիվ կողմի՝ հատկապես երկրորդում նախատեսված անարդարացիորեն մեղմ սանկցիայի պայմաններում: Ի՞նչ տարբերություն, թե տուժողը սեռական հարաբերությանը հարկադրվել է բռնության սպառնալիքով, թե, օրինակ, անվանարկող տեղեկություններ հրապարակելու կամ աշխատանքից ազատելու սպառնալիքով: Բռնությունը և դրա սպառնալիքը, փոխարենը, կարող են նախատեսվել որպես որակյալ հանցակազմի հատկանիշ, իսկ մեկ ուրիշի հետ սեռական հարաբերություն ունենալուն հարկադրելը՝ որպես բռնաբարության հանցակցության համապատասխան տեսակ: Ինչ վերաբերում է բռնաբարության սուբյեկտիվ կողմին, ապա այն նոր կարգավորման պարագայում կարող է դրսևորվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:
- Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածում օգտագործվող «հակաբարոյական գործողություններ» և «հակաբարոյական վարքագիծ» եզրույթները չափազանց վերացական են և լայն, սուբյեկտիվ, անկանխատեսելի մեկնաբանության տեղիք են տալիս: Հաշվի առնելով կանանց նկատմամբ կարծրատիպերի տարածվածությունը և դատական պրակտիկայում դրանց վերարտադրության հիմնավոր մտավախությունը՝ կարծում եմ, որ այդ եզրույթները պետք է հանվեն քրեական օրենսգրքից:

ОТНОСИТЕЛЬНО ОТДЕЛЬНЫХ ВОПРОСОВ, КАСАЮЩИХСЯ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА НАСИЛИЕ В СЕМЬЕ И НАСИЛИЕ В ОТНОШЕНИИ ЖЕНЩИН

Гоар Акопян
Преподаватель кафедры уголовного права ЕГУ

Вопросы, касающиеся насилия в семье и насилия в отношении женщин, стали особенно актуальными после принятия Закона о насилии в семье и подписания Стамбульской конвенции Республикой Армения. Данная статья направлена на обсуждение следующих аспектов уголовной ответственности за гендерное насилие: (1) предусматривает ли Уголовный кодекс РА какие-либо особенные правила урегулирования насилия в семье?; (2) каковы международные правовые стандарты в данной области?; (3) соответствует ли действующее урегулирование Уголовного кодекса в области изнасилования международным правовым стандартам и современным тенденциям?; (4) какие изменения необходимо внести для согласования национального законодательства с нашими международными обязательствами?

ON CERTAIN ISSUES CONSERNING CRIMINAL LIABILITY FOR DOMESTIC VIOLENCE AND VIOLENCE AGAINST WOMEN

Gohar Hakobyan
Lecturer at YSU Chair of Criminal Law

Issues regarding domestic violence and violence against women have become particularly timely to discuss after the adoption of domestic violence legislation and signature of the Istanbul Convention by the Republic of Armenia. This article is aimed at discussing the following aspects of criminal liability for gender-based violence: (1) does the Criminal Code of RA provides for any special regulations for domestic violence? (2) what are the internation legal standards in the given area?

(3) does the current Criminal Code regulation on rape comply with the international legal standards and contemporary developments? (4) what changes need to be adopted in order to harmonize the national legislation with our international obligations?

Բանալի բառեր – *ընտանիքում բռնություն, կանանց նկատմամբ բռնություն, բռնաբարություն, հակաբարոյական վարքագիծ, գենդերային կարծրատիպեր:*
Ключевые слова: *насилие в семье, насилие в отношении женщин, изнасилование, аморальное поведение, гендерные стереотипы.*
Keywords: *domestic violence, violence against women, rape, immoral behavior, gender stereotypes.*

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Սամվել Դիլբանդյան
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտ., պրոֆեսոր

Հանցագործությունների քննությունը և բացահայտումը բարդ գործընթաց են պայմանավորված ենթադրյալ հանցանք կատարած անձանց քրեական հետապնդումից խուսափելու ձգտումով: Քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է քրեական գործերի քննության այնպիսի ձև, որը պետք է ապահովի հանցագործությունների արդյունավետ քննությունը: Ի տարբերություն դատական քննության, որն ըստ էության հիմնականում իրականացվում է հրապարակայնորեն մինչդատական վարույթն իրականացվում է գաղտնի, այսինքն՝ տեղեկությունները, որոնք վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք են բերվում, չեն հրապարակվում կամ հրապարակվում են այնքանով, որքանով դրանք չեն խանգարում գործի հետագա քննությանը: Մինչդատական վարույթում հրապարակայնության զարգացումը պահանջում է նախաքննության տվյալների գաղտնիության նորովի բնութագրում:

Քրեական դատավարության հանրայնությունը պահանջում է քրեական վարույթի իրականացման դատավարական այնպիսի ձևի նախատեսում, որը կապահովի քրեական դատավարության խնդիրների իրականացումը (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 2): Քրեական դատավարության խնդիրներն անկասկած բխում են նրա հանրային բնույթից: Հանրայնությունը՝ որպես գաղափար և սկզբունք, քրեական դատավարության շարժիչ ուժն է, առանց որի չի կարող քրեական վարույթ իրականացվել: Վ. Կ. Սլուչևսկին նշում է. «Այդ սկզբունքի էությունն այն է, որ պետության կողմից պաշտպանվող իրավական նորմի նկատմամբ կիրառվող հանցավոր ոտնձգությունը պետությանը իրավունք է տալիս քրեական պատիժ կիրառելու օրենքներով սահմանված դատական կարգով, դրա համար լիազորված անձանց միջոցով՝ անկախ տուժած անձի կամքից: Այդ սկզբունքի էությունը քրեական դատավարության հանրային բնույթն է, ըստ որի՝ քրեական դատարանն իր մասնագիտական գործունեությունը ծավալում է ոչ թե մասնավոր շահերին, այլ հան-

րային շահերին համապատասխան, որոնք պահանջում են քրեական պատժի անշեղորեն կիրառում հանցանք գործելու մեջ մեղավորի նկատմամբ, եթե միայն չկան օրինական հիմքեր նրա պատասխանատու չլինելու վերաբերյալ»:

Հանրայնության սկզբունքի և դրա էության վերաբերյալ դատողություններից ելնելով՝ որոշ դատավարագետներ եզրակացրել են, որ այդ սկզբունքի լիակատար իրացումը հանգեցնում է մասնավոր շահի և առանձին քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը: Այսպես՝ Մ. Ս. Ստրոգովիչն ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ հանրայնության սկզբունքը ենթադրում է քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, այսինքն՝ պաշտպանում է մասնավոր հիմքը: Ընդ որում՝ հաճախ անձնական և հանրային շահերը հարաբերակցվել են որպես առանձին և ընդհանուր շահեր: Քրեական դատավարության մեջ հանրայնության սկզբունքի բազմաթիվ սահմանումներից կասկած չի հարուցում միայն այն, որ հանրայնության սկզբունքը հանրային հիմքի, հանրային շահի արտացոլումն է քրեական դատավարության մեջ: Այսպես, Մ. Վ. Դուխովսկու կարծիքով, քրեական դատավարությունը «…ծառայում է պետական շահերին: Դատախազությունը (երբեմն՝ ոստիկանությունը) հետապնդում հարուցելիս և մեղադրանք պաշտպանելիս … գործում է ոչ թե իր անձնական, այլ հանրային շահերին համապատասխան, ուստի այն չի կարող կամայականորեն հրաժարվել մեղադրանքից»: Նույն կարծիքին է նաև Ն. Ն. Ռոզինը. «…ժամանակակից դատավարությունը հաստատապես յուրացրել է լոկ մեկ համընդհանուր սկզբունք, որով քրեական հետապնդումը միշտ պահպանում է հանրային-իրավական, պաշտոնական բնույթը: Այդ հետապնդումն իրականացնում է պետությունը մեղադրյալի նկատմամբ»: Նա շեշտում է այն, որ անձը մեղադրվում է պետության կողմից, այսինքն՝ ուղղակիորեն մատնանշում է պետական շահը կոնկրետ քրեական գործերի վարույթում: Հանրայնության սկզբունքի վերաբերյալ այս տեսակետը ներկայումս ևս չի վիճարկվում: Իրոք, հանրայնությունը պետական շահի արտացոլումն է յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործի նախաքննության ու դատական քննության ժամանակ: Այն արտահայտվում է քրեական դատավարության իրավունքի ամենատարբեր նորմերում: Հանրային շահերի պաշտպանությունից է բխում նաև քրեա-

կան դատավարության օրենսգրքով նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիության ընդհանուր պայմանի նախատեսումը: Քրեական դատավարության մինչդատական վարույթում նշված ինստիտուտի նախատեսումը բխում է քրեական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության անհրաժեշտությունից: Նախաքննության տվյալների հրապարակումը կարող է խանգարել գործով ճշմարտության բացահայտմանը, հանգեցրել է հանցագործության համար մեղադրվող անձի փախուստի, քրեական պատասխանատվությունից անհիմն ազատելու, ապացույցների ոչնչացման կամ ապացույցների ձեռք բերման անհնարինության: Իրականում նման սահմանափակման կիրառումը նպատակ ունի լուծելու հետևյալ խնդիրները՝ 1) նպաստել հանցագործության բացահայտմանը և կանխել հետագա հանցավոր գործողությունները, 2) ապահովել անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսվում է քրեական պատասխանատվություն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար:

Անձին նշված հիմքով քրեական պատասխանատվության ենթարկելու դատավարական հիմքերն ամրագրված են ՀՀ քր. դատ. օր.-ի 201-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերականերին, պաշտպաններին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են՝ նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին»: Ինչպես տեսնում ենք, քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում տեղ գտած կարգավորումներում կան տարբերություններ, որոնք իրավակիրառ պրակտիկայում կարող են առաջացնել խնդիրներ: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի 342-րդ հոդվածի դիսպոզիցիայում չկա պահանջ դատա-

խազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից դատավարության մասնակիցներին նախաքննության տվյալների հրապարակման համար քրեական պատասխանատվության ենթարկելու նախազգուշացված լինելու մասին, մինչդեռ դա պետք է կազմի նշված հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից մեկը:

Միանշանակ է, որ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածը, որն անձի իրավունքների սահմանափակում է բովանդակում, պետք է լինի բավարար չափով որոշակի, որպեսզի այդ հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Անորոշ իրավական կարգավորման արդյունքում առաջանում են բազմաթիվ հարցեր.

նախ՝ չի սահմանվում այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող է կիրառվել,

երկրորդ՝ որևէ պահանջ չի նախատեսում, թե ինչպիսի վնասի մասին է խոսքը,

երրորդ՝ պարզ չէ, թե անձն արդյոք պետք է նախազգուշացված լինի նախաքննության տվյալների հրապարակման համար քրեական պատասխանատվության մասին,

չորրորդ՝ նախազգուշացվող անձի համար պետք է պարզ լինի, թե նախաքննության որ տվյալներն են գաղտնիք,

հինգերորդ՝ անձը ենթակա է պատասխանատվության, եթե հրապարակված նյութերն արդեն հրապարակվել են վարույթն իրականացնող մարմնի կամ այլ անձի կողմից: Այդ հարցերի իրավական կարգավորման բացակայությունն անձին զրկում է իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից, և խնդիրներ է առաջացնում դատավարության մասնակցի կողմից իր շահերի պաշտպանության համար:

Ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածն ակնհայտորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին, որի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վար-

քագիծ»: Ինչպես տեսնում ենք, անձի իրավունքների վերը նշված սահմանափակումները, որոնք տեղ են գտել քրեական և քրեադատավարական օրենսգրքերում, հիմքերի և ծավալի առումով կարգավորված են թերի: Նշված անորոշ իրավական կարգավորման պայմաններում դատավարության մասնակիցներն ի վիճակի չեն դրսևորելու համապատասխան վարքագիծ, որովհետև օրենքով հաշվի է առնվում միայն մեկ փաստ՝ նախաքննության տվյալի հրապարակումը՝ անկախ այդ տվյալի էության, քրեական գործի քննության վրա ունեցած ազդեցության:

Օրենսդրությամբ անձի իրավունքների պաշտպանությունից ելնելով որևէ սահմանափակում նախատեսված չէ վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի վերաբերյալ այնպիսի տեղեկությունների հրապարակման համար, որոնք հանգեցրել են անձի վարկաբեկման, նրա պատվի և արժանապատվության ստորացման կամ այլ իրավունքների խախտման: Պետք է նշել, որ այս տեսանկյունից հանրային և մասնավոր շահերի պաշտպանության համաչափության սկզբունքը խախտված է:

Փաստաբանների համար բավականին ծանր է քրեական օրենսգրքի վերը նշված հոդվածի գոյությունը, որը պատասխանատվություն է նախատեսում նախաքննության տվյալների հրապարակման համար: Այսօր այն նախաքննության մարմնի ձեռքին լուրջ միջոց է դարձել՝ փաստաբանին լռեցնելու համար: Մասնավորապես, հասարակական հնչեղություն ունեցող գործերով փաստաբանը պետք է ցուցաբերի բավական զգուշավորություն, հակառակ պարագայում նրան կարող են մեղադրել տվյալ գործով նախաքննության գաղտնիք կազմող տվյալների հրապարակման մեջ: Այսինքն՝ տվյալ դեպքում հարց է առաջանում՝ ինչ ենք հասկանում նախաքննության գաղտնիք ասելով, արդյոք ցանկացած տեղեկատվություն, որն առկա է քրեական գործում, և որի հրապարակումն անհրաժեշտ է՝ պաշտպանական նկատառումներից ելնելով հրապարակելու համար, արդյոք կարող են քրեական պատասխանատվության ենթարկել:

Նախաքննության գաղտնիքի բնորոշման վերաբերյալ դատավարական գրականության մեջ չկա միասնական կարծիք: Այսպես, Ա. Դ. Բոյկովի կարծիքով, նախաքննության գաղտնիքի առարկան պետք է սահմանափակվի ստուգում պահանջող քննչական վար-

կածներով, ապացուցողական և տակտիկական այն տեղեկություններով, որոնք վերաբերում են ապացույցների հավաքման եղանակին (օրինակ՝ նախատեսվող խուզարկության օբյեկտները, նպատակը և ժամանակը): Նախաքննության գաղտնիքի մեջ չպետք է մտնեն այն տեղեկությունները, որոնք վերաբերում են հանցագործության փաստին, դրա հետևանքներին, այն անձին, որի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, կամ առաջադրվել է մեղադրանք[1]:

Անհրաժեշտ է նշել, որ օրենսդրությամբ սահմանված չէ նախաքննության գաղտնիք կազմող տեղեկությունների շրջանակը: Կոնկրետ ինչպիսի տեղեկություններն են համարվում նախաքննության գաղտնիք, յուրաքանչյուր գործով որոշում է վարույթն իրականացնող մարմինը: Պաշտպանում ենք դատավարական գրականության մեջ տեղ գտած այն կարծիքը, որ նախնական քննության գաղտնիք են կազմում հետևյալ տեղեկությունները.

1. Նախաքննության պլանավորման և քննչական վարկածների մասին:

2. Այն ապացույցների մասին, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի բացակայությամբ, ինչպես նաև քննության որոշակի մասերում ապացույցների գնահատման արդյունքների մասին[2]:

Կարծում ենք, որ միայն գաղտնիք համարվող տեղեկության հրապարակումը չպետք է հանգեցնի անձին քրեական պատասխանատվության ենթարկելուն: Դատավարության մասնակիցը քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն դեպքում, երբ դատական քննության ընթացքում ապացուցվել է, որ հրապարակված տվյալներն իրական վնաս են հասցրել նախաքննությանը կամ դատավարության մասնակիցների իրավունքներին ու օրինական շահերին: Այսինքն՝ միայն նախաքննության տվյալների հրապարակումը բավարար չէ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար, եթե բացակայում է դրա արդյունքում վնաս պատճառած լինելու հանգամանքը: Բոլոր դեպքերում

[1] Տե՛ս **Бойков А.Д.**, Гластность и правосудие //Сов. государство и право, 1989, N 8, էջ 17:

[2] Տե՛ս **Соловьев А.Б., Токарева М.Е., Власова Н.А.**, Общие условия предварительного расследования, М., 2005, էջ 113:

պետք է հաստատվի, թե վնասն ում է հասցվել, և ինչով է այն արտահայտվել:

Վիճարկվող նորմերը մի կողմից վարույթն իրականացնող մարմնին ընդարձակ հնարավորություն են տալիս հանրությանը համոզելու մեղադրյալին ենթադրյալ հանցանքի մեղավորության մեջ, մյուս կողմից՝ այդ նորմերը պաշտպանության կողմին զրկում են հրապարակայնորեն իր հակառակորդների փաստարկները հերքելու հնարավորությունից: Այսօր բավական տարածված պրակտիկա է պաշտպաններին նախազգուշացնել նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիության մասին: Պետք է նշել, որ նման նախազգուշացումը նաև խոչընդոտ է պաշտպանի կողմից ապացույցների հավաքմանը մասնակցելուն, մասնավորապես նման սահմանափակման պայմաններում պաշտպանը չի կարող դիմել մասնագետի և կարծիք ստանալ իրեն հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

Կարծում ենք, որ փաստաբանը չպետք է ստորագրի աբստրակտ որոշման տակ, այսինքն՝ եթե կոնկրետացված չէ, թե նախաքննության ինչ տվյալների մասին է խոսվում, ինչ ժամկետներում: Փաստաբանը պետք է ստորագրություն տա միայն համապատասխան քննչական և դատավարական գործողություններից իրեն հայտնի դարձած տեղեկությունների մասին, եթե տեղեկությունները այլ աղբյուրներից են ստացվել, ապա դրա համար նա չի կարող զգուշացվել:

Քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված չեն այն հիմքերը, որոնց առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը կարող է նախազգուշացնել նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիության մասին: Պետք է նշել, որ այս կարևոր պահանջն իր ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում, որի 186-րդ հոդվածի համաձայն՝ «Վարույթի մասնավոր մասնակիցները, վկան և նրա փաստաբանն իրավունք ունեն հրապարակելու պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում իրեն հայտնի դարձած նախաքննության տվյալները, եթե քննիչը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով գրավոր չի արգելել դրանց հրապարակումը: Այս դեպքում քննիչը պարտավոր է վարույթի մասնավոր մասնակցին, վկային և նրա փաստաբանին գրավոր նախազգու-

շացնել նախաքննության տվյալների հրապարակման համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, եթե դա կարող է՝

1) խոչընդոտել մինչդատական վարույթի բնականոն ընթացքին,

2) դառնալ հանցանքի կատարման պատճառ,

3) վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը,

4) հանգեցնել օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակման:

3. Նախաքննության տվյալների հրապարակման՝ սույն հոդվածով սահմանված արգելքները չեն տարածվում փաստաբանի և նրա վստահորդի միջև տեղեկությունների փոխանակման վրա»: Կարծում ենք, որ այսպիսի կարգավորումն անհրաժեշտ է, որովհետև գործող օրենսդրական կարգավորումը կամայականության լայն հնարավորություն է տալիս: Իհարկե, Նախագծում ցանկալի կլիներ առանձին թվարկել դատավարության այն մասնավոր մասնակիցներին, ում նկատմամբ այդ սահմանափակումը կարող է կիրառվել: Չենք կարծում, որ ողջամիտ է այդ սահմանափակումը կիրառել նաև մեղադրյալի նկատմամբ, որովհետև դրանով մեղադրյալին ընդհանրապես զրկում ենք օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանվելու հնարավորությունից: Նախաքննության տվյալների հրապարակման սահմանափակումն ուղղված է այն բանին, որ մեղադրյալին հայտնի չդառնան նախաքննության մարմնի տրամադրության տակ եղած նյութերը, և դրանք նրա կողմից չօգտագործվեն ի վնաս գործի քննության:

Կարևոր է նաև նախաքննության տվյալների գաղտնիության պահպանման ժամկետների սահմանումը, քանի որ խոսքը վերաբերում է հետաքննության և նախաքննության գաղտնիքին, հետևաբար այդ տվյալները նախաքննության ավարտին պետք է դադարեն գաղտնիք լինելուց: Իհարկե կան տեղեկություններ, որոնք մնում են որպես գաղտնիք նաև նախաքննությունը կամ դատաքննությունն ավարտելուց հետո (օրինակ՝ եթե դատավարության մասնակցի նկատմամբ կիրառվել է պաշտպանության միջոց):

Խոսելով նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիության մասին՝ պետք է նշել, որ քրեադատավարական օրենսդրությունը չի բացառում նախաքննության տվյալների հրապարակման հնարավորությունը: ՀՀ քր. դատ. օր.-ի 201-րդ հոդվածի համաձայն՝ «Նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ»: Նշված հոդվածից հետևում է, որ նախաքննության տվյալները կարող են հրապարակվել հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի կողմից: Նրանք են որոշում նախաքննության տվյալների հրապարակման շրջանակը: Օրենսդիրը չի բացառում հրապարակայնության սկզբունքի կիրառումը նախաքննության ընթացքում, քանի որ հասարակությունը որոշակի պահանջ ունի տեղեկացված լինելու քրեական գործերի քննության ընթացքի մասին:

Նախաքննության տվյալների հարապարակումը կարող է նաև նպատակ հետապնդել ստանալու հասարակության աջակցությունը, մասնավորապես՝ տեղեկություններ ձեռք բերել դեպքի հանգամանքների մասին, հետախուզվող անձանց բացահայտելու, նմանատիպ արարքներից այլ տուժածների ի հայտ բերելու համար: Բոլոր դեպքերում նախաքննության տվյալների հրապարակումը չպետք է հանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի խախտման: Այսինքն՝ պետք է նկատի ունենալ, որ նախաքննության տվյալների հրապարակմամբ կարող է խախտվել անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, էապես վնաս հասցվել նրա բարի համբավին ու հեղինակությանը:

Սույն աշխատանքում քննարկվել են նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիության քրեաիրավական և քրեադատավարական հիմնահարցերը, որոնք էական նշանակություն ունեն քրեական գործի քննության ընթացքում դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Ուշադրության են արժանացել այնպիսի հարցեր, որոնք օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն ունեն, ինչպես քրեական, այնպես էլ քրեական դատավարության օրենսգրքերում:

НЕДОПУСТИМОСТЬ РАЗГЛАШЕНИЯ ДАННЫХ ПРЕДВАРИТЕЛЬНОГО РАССЛЕДОВАНИЯ

Самвел Дилбандян
Заведующий кафедрой уголовного процесса и криминалистики, доктор юридических наук, профессор

В данной работе анализируются уголовно-правовые и уголовно-процессуальные вопросы недопустимости разглашения данных предварительного расследования, которые необходимы для защиты прав и законных интересов участников процесса в ходе расследования уголовного дела. В частности, нами рассмотрены такие вопросы, которые требуют законодательного регулирования.

THE INADMISSIBILITY OF DISCLOSING PRELIMINARY INVESTIGATION DATA

Samvel Dilbandyan
Head at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, Doctor of Legal Sciences, Professor

This paper discusses criminal law and criminal procedural issues of the inadmissibility of disclosing preliminary investigation data that are necessary to protect the rights and legitimate interests of participants in the process during the investigation of a criminal case. Particularly addressed such issues that require legislative regulation.

Բանալի բառեր - *գաղտնիք, նախաքննության տվյալ, հրապարակել, դատավարության սուբյեկտ:*
Ключевые слова: *секрет, данные предварительного расследования, опубликовать, субъект уголовного процесса.*
Key words: *secret, preliminary investigation data, publish, subject of criminal process.*

ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ՉԵՐԲԱԿԱԼԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ՀԵՌԱԿԱ (ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ) ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ, ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Սերգեյ Մարաբյան
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Անձնական ազատության իրավունքը՝ որպես մարդու հիմնարար իրավունք, կարող է սահմանափակվել բացառապես այնպիսի ընթացակարգին համապատասխան, որը պաշտպանում է անձին կամայականությունից և անօրինականությունից: Քրեական դատավարության զարգացման ընթացքում նման ընթացակարգի համար հիմք է ծառայել «habeas corpus» (լատիներենից թարգմանաբար. «թե-կուզ դու ունես մարմին») ինստիտուտը: Պատմականորեն «habeas corpus» ընթացակարգն իրենից ներկայացնում է անձին ազատությունից զրկելու նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգ, որը յուրաքանչյուր անձի երաշխավորում է դատարանի առաջ կանգնելու և լսված լինելու իրավունքը, որպեսզի դատարանը ստուգի ազատությունից զրկելու օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Հենց «habeas corpus»-ի սկզբունքների վրա է կառուցված մասնավորապես ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված այն պահանջը, որ եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի[1] հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազա-

[1] Ըստ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝ անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինե-

տությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

«Habeas corpus» սկզբունքն ընկած է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 5-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքում, որի համաձայն՝ յուրաքանչյուր ձերբակալված անձ սույն հոդվածի 1 (գ) կետի[1] դրույթներին համապատասխան անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է դատական գործառույթներ իրականացնել, և իրավունք ունի դատաքննության ենթարկվել խելամիտ ժամկետի ընթացքում կամ ազատվել մինչև դատը՝ երաշխիք տրամադրելով:

Պետք է նկատել, որ թեև Սահմանադրության և Կոնվենցիայի վերոնշյալ ձևակերպումներում առկա են էական տարբերություններ, սակայն էության մեջ երկուսն էլ պահանջում են, որ պետությունը ճյուղային օրենսդրությամբ սահմանի հատուկ ընթացակարգ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քրեական հետապնդման մարմինների միջնորդությունների քննարկման և լուծման համար, ընդ որում՝ այնպիսի կարևոր երաշխիքի ապահովմամբ, ինչպիսին մեղադրյալի պարտադիր մասնակցությունն է իր նկատմամբ կալանավորում կիրառելու մասին միջնորդության քննարկման դատական նիստին կամ դատարանում լսված լինելու իրավունքն է: Սակայն, ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությունը, հակառակ սահմանադրա-

---

լու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):

[1] Ըստ այդ կետի՝ ոչ ոք չի կարող ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝ անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումն այն նկատառումով, որ նա կանգնի իրավասու դատական մարմնի առջև՝ հիմնավոր կերպով կասկածվելով իրավազանցություն կատարելու մեջ, կամ այն դեպքում, երբ հիմքեր կան ենթադրելու, որ անհրաժեշտ է կանխել նրա կողմից իրավազանցության կատարելը կամ այն կատարելուց հետո նրան խանգարել թաքնվելու:

կան և միջազգային չափանիշներին, չի սահմանում կալանավորման մասին միջնորդությունների քննարկման դատական նիստին մեղադրյալի պարտադիր մասնակցության կամ դատարանում լսված լինելու իրավունքի ապահովման իմպերատիվ պահանջ, այլ, որոշ դեպքերում, թույլատրում է առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորման կիրառման հարցի քննարկում և լուծում: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասի և 285-րդ հոդվածի 2-րդ մասի համալիր վերլուծությունից հետևում է, որ մեղադրյալի նկատմամբ նրա բացակայությամբ կարող է կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննարկվել, երբ՝

1) ազատության մեջ է և պատշաճ կարգով ծանուցված լինելով՝ չի ներկայանում դատական նիստին,

2) գտնվում է հետախուզման մեջ:

Առավել խնդրահարույց է այն հանգամանքը, որ քրեական դատավարության օրենսգրքում որևէ դրույթ առկա չէ այն մասին, որ, այնուամենայնիվ, եթե դատարանի որոշումից հետո մեղադրյալը հայտնաբերվում և հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, այսինքն՝ դատարանի որոշման հիման վրա վերցվում է արգելանքի, ապա ինչ կարգով պետք է ապահովվի ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասում և ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ անձի դատարանի առաջ կանգնելու և դատարանի կողմից լսված լինելու իրավունքի իրացումը: Հանգամանք, որը վկայում է այն մասին, որ քրեադատավարական օրենսդրության նման կանոնակարգումներն ուղղակի հակասության մեջ են գտնվում ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջների հետ:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը և մասնավորապես 285-րդ հոդվածի 2-րդ մասը և 259-րդ հոդվածի 3-րդ մասը քննարկվող առումով ՄԻԵԿ-ին և դրա հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) ձևավորած չափանիշներին հակասելու կամ չհամապատասխանելու հանգամանքը հաստատել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը Տ. Վահրադյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 որոշմամբ, որում դատարանը մասնավորապես արձանագրել է, որ *«(...) [Օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասի և*

285-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում ամրագրված դրույթները] հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ խափանման միջոցի ընտրության առումով չեն բխում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջից (...)(կետ 30)»:

Վճռաբեկ դատարանի քննարկվող որոշման վերլուծությունից պարզ է դառնում, որ դատարանի նման հետևությունները հիմնված են ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթներին Եվրոպական դատարանի կողմից տարբեր գործերով տրված մեկնաբանությունների վրա:

Այսպես՝ *«Լադենտն ընդդեմ Լեհաստանի»* գործով վճռում Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմանը, նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը չի նախատեսում որևէ հնարավոր բացառություն այն պահանջից, որ անձը ձերբակալվելիս կամ կալանավորվելիս պետք է բերվի դատավորի կամ այլ պաշտոնյայի մոտ («Ladent v. Poland», 2008 թ., գանգատ N 11036/03, կետ 75): Սա նշանակում է, որ կալանավորման հարցի քննարկմանը մեղադրյալի մասնակցությունն ազատությունից զրկելու օրինականության ապահովման հիմնական երաշխիքներից է, որը չի կարող սահմանափակվել որևէ պարագայում *(այս հանգամանքը հաստատել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը Տ. Վահրադյանի վերաբերյալ որոշման մեջ, տե՛ս կետ 26):*

Առավել ուշագրավ է Եվրոպական դատարանի *«Գարաբանն ընդդեմ Ռուսաստանի»* գործով վճիռը, որում դատարանը քիչ այլ կերպ է մեկնաբանել 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, քան *«Լադենտն ընդդեմ Լեհաստանի»* գործով, սակայն դրանում տվել է այնպիսի մեկնաբանություններ, որով, ըստ էության, զարգացրել է նախկին դիրքորոշումը: Եվրոպական դատարանը մասնավորապես նշել է, որ *«ինքնին անձին կալանքի տակ վերցնելը հեռակա կարգով [կամ նրա բացակայությամբ], երբ նա թաքնվում է արդարադատությունից, հատկապես երբ նրա նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում, չի հակասում Կոնվենցիայի դրույթներին»*, սակայն դրանից հետո դատարանը վերապահում է անում և հստակ արձանագրում, որ *«երբ 2003 թվականի փետրվարի 1-ին դիմումատուն վերադարձվել էր Թուրքմենստանից և արգելանքի վերցվել Ռուսաստանի Դաշնության տարածքում, ապա Կոնվենցիայի 5-րդ*

հոդվածի 3-րդ մասի հիմքով պետք է անհապաղ տարվեր դատավորի մոտ, մինչդեռ դիմումատուին մինչև 2003 թվականի մարտի 19-ը, այսինքն՝ մեկ ամիս 19 օրվա ընթացքում չեն ներկայացրել դատավորի մոտ: Այդ ձգձգումը չի կարող դիտարկվել որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խստագույն պահանջներին համապատասխան» («Garabaev v. Russia», 2007 թ., բողոք N 38411/02, կետ 101):

Արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը ոչ միայն արձանագրել է, որ առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՀՀ քրեադատավարական օրենսդրության կանոնակարգումները հակասում են եվրոպական չափանիշներին, այլև իրացնելով իրավունքի զարգացման և օրենքի միատեսակ կիրառության իր սահմանադրական լիազորությունը՝ սահմանել է այդ հակասությունը վերացնելուն ուղղված հստակ իրավական դիրքորոշում, դրանով իսկ երաշխավորել նաև անձի՝ դատարանի առաջ կանգնելու և լսված լինելու իրավունքի իրացումը:

Վճռաբեկ դատարանի որոշման մեջ մասնավորապես ամրագրված է հետևյալը. *«(...) Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնելու կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը: ... Հետևաբար՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ (...)»:*

Թե՛ Եվրոպական դատարանի, թե՛ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից ակնհայտ է, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասով և ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրավունքի տեսանկյունից էականն այն չէ, որ անձը դատարանի առաջ կանգնի ի սկզբանե կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը քննարկելիս, հատկապես, որ կարող է գտնվել միջազգային հետախուզման մեջ, այլ էական է այն, որ անձն ազատությունից փաստացի զրկվելու դեպքում 72 ժամվա ընթացքում տարվի դատավորի մոտ՝ անկախ նրանից, որ փաստացի դա հիմնված է դատարանի կողմից նախապես տրված որոշման վրա:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի կողմից ազատությունից զրկված անձին «անհապաղ» դատավորի մոտ տանելու պահանջը «72 ժամվա» ժամանակահատվածին նույնացնելուն՝ պետք է արձանագրել, որ այն պայմանավորված է ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված այն պահանջներով, որ առանց դատարանի որոշման անձը կարող է ձերբակալման արդյունքում անազատության մեջ մնալ մինչև 72 ժամ, որի լրանալուց հետո, եթե դատարանը որոշում չի կայացնում անձին կալանավորելու վերաբերյալ, ապա վերջինս պետք է անհապաղ ազատ արձակվի[1]:

Թեև այս մոտեցումը ձևական-իրավաբանական առումով հակասության մեջ է գտնվում ՀՀ Սահմանադրության և քրեադատավարական օրենսդրության հետ, քանի որ 72 ժամը վերաբերում է առանց դատարանի որոշման անձին ազատությունից զրկելու առա-

[1] Այս առումով ուշագրավ է մասնավորապես ՀՀ Վճռաբեկ դատարանի Հ. Գյուրջյանի վերաբերյալ 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ԵԷԴ/0004/06/09 որոշմամբ ձևավորած իրավական դիրքորոշումը, որտեղ դատարանը, վերահաստատելով Տ. Վահրադյանի որոշմամբ ձևավորած մոտեցումը, ամրագրեց, որ մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանավորման մասին որոշման վերահաստատման մասին միջնորդությունը պետք է ներկայացվի դատարան 72 ժամվա ընթացքում՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության և քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ առանց դատարանի առաջ կանգնելու անձը չի կարող անազատության մեջ մնալ 72 ժամից ավելի:

վելագույն ժամկետին, ընդ որում՝ ձերբակալման հիմքով ազատությունից զրկելուն, իսկ քննարկվող իրավիճակում առկա է դատարանի որոշում անձին ազատությունից զրկելու մասին, ընդ որում՝ կալանավորման հիմքով, սակայն էականն այստեղ այն է, որ Վճռաբեկ դատարանը կարևորել է ոչ թե հարցի ձևական-իրավաբանական կամ քրեադատավարական կողմը, այլ անձի՝ Սահմանադրությամբ և ՄԻԵԿ-ով ամրագրված և երաշխավորված՝ դատարանի առաջ կանգնելու և դատարանում լսված լինելու իրավունքը:

Պետք է նաև արձանագրել, որ Վճռաբեկ դատարանի որոշման կայացման արդյունքում ձևավորվել է այնպիսի իրավակիրառական պրակտիկա, երբ առանց մեղադրյալի մասնակցության դատարանում քննարկվում է նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը, և եթե դատարանի կողմից բավարարվում է քննիչի միջնորդությունը, ապա հետագայում, երբ անձին հայտնաբերում և արգելանքի են վերցնում, քննիչը 72 ժամվա ընթացքում կրկին միջնորդություն է ներկայացնում դատարան կալանավորման հարցը կրկնակի քննարկելու համար: Ի դեպ, այս կարգը գործում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալը հետախուզման մեջ է, իսկ եթե ազատության մեջ է և լինելով պատշաճ ծանուցված՝ չի ներկայանում դատական նիստին, ապա նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում կրկնակի քննարկման պրակտիկա դեռևս չի ձևավորվել:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ եզակի դեպքերում է, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմինների միջնորդությունները մերժվում են դատարանների կողմից, հիմնականում դրանք բավարարվում են, ընդ որում՝ ինքնին հետախուզում հայտարարելու հիմք հանդիսացած հանգամանքներն էլ դրվում են խափանման միջոց կալանավորման կիրառման հիմքում: Արդյունքում, ձևավորվել է այնպիսի իրավակիրառական պրակտիկա, երբ որևէ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն ներկայացնելուն նախորդում է՝

ա) նրան նախաքննության մարմին հարցաքննության կանչելու մասին ծանուցագրի ուղարկումը, որը տարբեր պատճառներով չի

ստացվում անձի կողմից, օրինակ՝ տանը չլինելու, այլ հասցեում բնակվելու և այլն,

բ) դրան անմիջապես հետևում է այդ անձին բերման ենթարկելու մասին որոշման կայացում, որը հաճախ չի կատարվում՝ մի դեպքում այն պատճառով, որ անձի բնակարանի դուռը փակ է լինում, տանը չի լինում, մեկ այլ դեպքում՝ ոստիկանությունը դիտավորյալ չի կատարում, թեև նրանց հայտնի է լինում անձի գտնվելու տեղը, որը հաճախ պատճառաբանվում է աշխատանքային բարձր արդյունավետություն (դրական ցուցանիշ) ցույց տալու անհրաժեշտությամբ, մասնավորապես այն, որ հետախուզում հայտարարելու դեպքում արդեն իսկ հետախուզվող է հայտնաբերվում,

գ) դրանից հետո քննիչի կողմից հայտարարվում է հետախուզում, և, որպես կանոն, վերջինս միջնորդություն է ներկայացնում դատարան կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, որը դատարանի կողմից բավարարվում է:

Այլ կերպ ասած՝ հաճախ արհեստականորեն հետախուզում հայտարարելու հիմքեր են ստեղծվում, այնուհետև ձևական հետախուզում հայտարարվում, որից հետո կալանավորման միջնորդություն է ներկայացվում դատարան, իսկ դատարաններն էլ բավարարում են նախաքննության մարմինների միջնորդությունները և որոշում կայացնում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, քանի որ հետախուզում հայտարարելու փաստն ինքնին բավարար է անձի ոչ պատշաճ վարքագծի մասին հետևություն անելու համար, որը բարձրացնում է կալանավորման կիրառման հավանականությունը:

Կարևոր է նաև նկատել, որ գործող քրեադատավարական օրենսդրությամբ որևէ իմպերատիվ կանոն նախատեսված չէ, որ հետախուզում հայտարարելու հետ միաժամանակ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն պետք է ներկայացվի դատարան, ըստ 259-րդ հոդվածի 3-րդ մասի՝ քննիչին տրված է նման միջնորդություն ներկայացնելու իրավունք, ոչ թե պարտականություն, այսինքն՝ այն թողնված է քննիչի հայեցողությանը, որը սակայն գործնականում հաճախ չարաշահվում է:

Այլ կերպ ասած՝ հենց օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հայեցողական լիազորության մեջ է թաքնված այն «չա-

րիքի արմատը», որը գործնականում հանգեցնում է չարաշահումների և կամայականությունների: **Հետևաբար, իրավաչափ հարց է ծագում, թե որ դեպքում պետք է պարտադիր լինի հետախուզում հայտարարելու հետ միաժամանակ կալանավորման կիրառումը, իսկ որ դեպքում չպետք է լինի:**

Մենք այն կարծիքին ենք, որ միայն այն դեպքում կարող է իրավաչափ լինել առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորում կիրառելու հարցի քննարկումը, երբ նա գտնվում է միջազգային (միջպետական) հետախուզման մեջ, իսկ այն դեպքում, երբ նրա նկատմամբ հայտարարվել է ներպետական (տեղական) հետախուզում, կամ ազատության մեջ է, սակայն պատշաճ ծանուցված լինելով՝ չի ներկայացել դատական նիստին, ապա նրա նկատմամբ կալանավորման հարցի քննարկում չպետք է իրականացվի առանց նրա մասնակցության կամ հեռակա կարգով: Այդ դեպքում հարցը կարող է ունենալ այլ լուծում, որին դեռ կանդրադառնանք, այստեղ փաստենք, որ բացառապես միջազգային հետախուզում հայտարարելու հիմքով առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորում, որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ՝ մեր դիրքորոշումը նախևառաջ պայմանավորված է ՀՀ կողմից վավերացրած միջազգային իրավական ակտերի և մասնավորապես՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թ. Մինսկի և 07.10.2002 թ. Քիշնևի կոնվենցիաների (այսուհետ՝ Մինսկի և Քիշնևի կոնվենցիա), ինչպես նաև 13.12.1957 թվականի «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Հանձնման մասին կոնվենցիա) **պահանջների կատարման անհրաժեշտությամբ:**

Մինսկի, Քիշնևի և Հանձնման մասին կոնվենցիաների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հետախուզման մեջ գտնվող անձի հանձնման մասին պահանջը կարող է իրականացվել, եթե առկա է կալանավորման մասին դատարանի որոշումը *(Մինսկի կոնվենցիայի 58-րդ հոդված, Քիշնևի կոնվենցիայի 67-րդ հոդված, Հանձնման մասին կոնվենցիայի հոդված 1-ին, հոդված 12-րդ, մաս 2-րդ, կետ «ա», հոդված 16-րդ, մաս 2-րդ և այլն)*, ավելին՝ Քիշնևի կոնվենցիայի 69-րդ հոդվածը սահմանում է, որ հետախուզում իրականացնելու մասին խնդրանքին ևս պետք է կցված լինի կալանա-

վորման մասին իրավասու արդարադատության մարմնի որոշումը, հակառակ դեպքում՝ ոչ միայն հանձնումը, այլև հետախուզումը չի կարող իրականացվել (Մինսկի կոնվենցիան նման իրավակարգավորում չունի): Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ Քիշնևի կոնվենցիայի 70-րդ հոդվածում խոսվում է նաև միջազգային (միջպետական) հետախուզման մասին և այդ հիմքով կալանավորման ու հանձնման հարցերի մասին, որոնք սկզբունքային նշանակություն ունեն սույն իրավական վերլուծության համատեքստում:

Այսպիսով՝ միջազգային չափանիշների տեսանկյունից միջազգային (միջպետական) հետախուզում հայտարարելու դեպքում առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելն իրավաչափ է և պայմանավորված առնվազն ՀՀ կողմից վավերացրած Մինսկի, Քիշնևի և Հանձնման մասին կոնվենցիաների պահանջների կատարման անհրաժեշտությամբ, քանի որ առանց կալանավորման մասին իրավասու մարմնի որոշման հնարավոր չէ իրականացնել մեղադրյալի միջազգային հետախուզում, նրա կալանավորում և հանձնում հայցող պետությանը: Հետևաբար, սա այն եզակի դեպքն է, որը թույլ է տալիս անձի նկատմամբ կալանավորման հարց քննարկել նրա բացակայությամբ: Ի դեպ, հենց այս հանգամանքով էր պայմանավորված Եվրոպական դատարանի *«Գարաբաևն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության»* գործով վճռում ձևավորած մոտեցումը, որով դատարանը հնարավոր է համարում առանց մեղադրյալի նրան կալանավորելը, սակայն պայմանով, որ նրա ի հայտ գալու դեպքում անհապաղ տարվի դատավորի մոտ: Նշված գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հենց Մինսկի կոնվենցիայի պահանջներին համապատասխան Գարաբաևի նկատմամբ առանց նրա մասնակցության կիրառված է եղել խափանման միջոց կալանավորումը, սակայն երբ նա հանձնվել է ՌԴ իրավասու մարմիններին, ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան անհապաղ չի տարվել դատարան, որը և հիմք է դարձել ՄԻԵԴ-ի համար խախտում արձանագրելու:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը ոչ միայն ՄԻԵԿ-ի և քրեադատավարական օրենսդրության հակասությունն է լուծել, այլև տարբեր միջազգային պայմանագրերի (ՄԻԵԿ, Մինսկի և Քիշնևի կոնվենցիաներ և այլն):

Կարևոր է նաև նշել, որ թեև ՀՀ Վճռաբեկ դատարանը տեղայնացրեց Եվրոպական դատարանի կողմից ձևավորած չափանիշը, սակայն խնդիրն այն է, որ չտարանջատեց հետախուզման տեսակը, արդյունքում ստացվեց այնպես, որ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումներին համապատասխան՝ էական չէ, թե անձի նկատմամբ հայտարարված է միջազգային, թե ներպետական հետախուզում նրա նկատմամբ կալանավորման հարցը քննարկվում է նրա բացակայությամբ, և եթե դատարանը բավարարում է քննիչի միջնորդությունը և կիրառում է կալանավորումը, ապա նրա ի հայտ գալու դեպքում քննիչը կրկին միջնորդություն է ներկայացնում դատարան կալանավորման հարցը վերստին քննարկելու համար:

Կարծում ենք՝ նման պրակտիկան ոչ միայն իրավաչափ չէ և ըստ էության քրեադատավարական օրենսդրությունը շրջանցելու միջոց է, այլև դրա արդյունքում ավելորդ ծանրաբեռնվում և կրկնակի աշխատանք են կատարում թե՛ նախաքննության մարմինները, թե՛ դատարանները, ավելին՝ հաճախ վտանգվում են անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Հետևաբար գտնում ենք, որ այն պետք է ենթարկել որոշակի սահմանափակումների և կիրառելի դարձնել միայն այն դեպքում, երբ անձը գտնվում է **միջազգային (միջպետական) հետախուզման մեջ**, քանի որ մնացած բոլոր դեպքերում քրեադատավարական օրենսդրությունն ունի այնպիսի կառուցակարգ, որը ճիշտ մեկնաբանելու և կիրառելու դեպքում կարող է բացառել առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքերը և լուծել ներպետական հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ նրա ներկայությունն ապահովելու հարցերը: Այլ կերպ ասած՝ ներպետական (տեղական) հետախուզման դեպքում առկա է քրեադատավարական այլ կառուցակարգ, որը կարող է լիարժեք փոխարինել հեռակա կալանավորմանը, խոսքը մասնավորապես վերաբերում է մեղադրյալին հետախուզելու և մեղադրյալին ձերբակալելու ինստիտուտներին:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածում, որը կարգավորում է մեղադրյալի հետախուզման հետ կապված հարաբերությունները, ամրագրված է, որ՝ *«1. Քննիչի կող-*

միջ մեղադրյալի հետախուզում կարող է հայտարարվել ինչպես գործով նախաքննության կատարման ժամանակ, այնպես էլ քրեական գործով վարույթը կասեցնելու հետ միաժամանակ:

2. Եթե մեղադրյալի գտնվելու վայրը պարզ չէ, կամ մեղադրյալը թաքնվում է քննությունից, քննիչն իր որոշմամբ հետախուզում կատարելը հանձնարարում է հետաքննության մարմիններին:

3. Մեղադրյալի հետախուզումը նրա գտնվելու տեղի բացահայտումն է, մեղադրյալին ձերբակալելը և վարույթն իրականացնող մարմնի տրամադրությանը հանձնելն է (...)»:

Վերոգրյալ նորմերի համակարգային մեկնաբանությունից և վերլուծությունից պարզ է դառնում, որ եթե մեղադրյալի գտնվելու տեղը պարզ չէ, կամ մեղադրյալը թաքնվում է քննությունից, ապա քննիչն իրավունք ունի նրա նկատմամբ հայտարարելու հետախուզում: Ընդ որում՝ առավել կարևոր է հենց մեղադրյալի հետախուզում հասկացության մեկնաբանությունը, որի տակ հասկացվում է իրար հաջորդող հետևյալ երեք գործողությունների կատարումը՝

1) մեղադրյալի գտնվելու տեղի բացահայտումը (այսինքն՝ մեղադրյալին հայտնաբերելը),

2) մեղադրյալին ձերբակալելը,

3) վարույթն իրականացնող մարմնի տրամադրությանը հանձնելը:

Այսինքն, ըստ Օրենսգրքի 259-րդ հոդվածի, հետախուզումը ներառում է նաև **հետախուզվող մեղադրյալին ձերբակալելը**, որը թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ քրեադատավարական օրենսդրությամբ կարող է տևել մինչև 72 ժամ, ինչը նշանակում է, որ առանց հեռակա կալանավորման հնարավոր է հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերել, **ձերբակալել** և ընդհանուր կարգով՝ մինչև 72 ժամը լրանալը միջնորդություն ներկայացնել դատարան կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը քննարկելու, եթե նախաքննության մարմինը դրա անհրաժեշտությունը կտեսնի: Այսինքն՝ այն, ինչ ներկայումս դատական պրակտիկայում իրականացվում է կալանավորման մասին կրկնակի միջնորդություններ ներկայացնելու միջոցով, կարող է իրականացվել առավել պարզ ձևով և առանց ավելորդ քաշքշուկների ու կրկնակի աշխատանք կատարելու:

Պետք է նկատի ունենալ, որ քննարկվող հարցը միանշանակ մոտեցում չունի տեսության մեջ, քանի որ կան հեղինակներ, որոնք ևս գտնում են, որ առանց մեղադրյալի մասնակցության խափանման միջոց կալանավորման հարցի քննարկումն ուղղակի հակասության մեջ է մտնում ՄԻԵԿ չափանիշների հետ[1], ուստի առաջարկում են համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել և նախատեսել հնարավորություն քննությունից թաքնվող մեղադրյալների նկատմամբ հեռակա կարգով կիրառել կալանավորման մասին որոշում, իսկ երբ նրանք կհայտնաբերվեն, ապա 48 ժամվա ընթացքում կրկին կանգնեն դատարանի առաջ, որը կայացրել է հեռակա կալանավորման մասին որոշումը՝ միաժամանակ գտնելով, որ նրանք կարող են նաև բողոքարկել այդ որոշումը[2]: Որոշ հեղինակների կարծիքով էլ, որևէ հակասություն առկա չէ, քանի որ, ըստ նրանց, Կոնվենցիան պարտավորեցնում է լսել մեղադրյալին միայն այն դեպքում, երբ նա ներկայանում է դատարան և պնդում է, որ իրեն լսեն: Բայց եթե մեղադրյալը թաքնվում է կամ չի ներկայանում վարույթն իրականացնող մարմնին, ապա Կոնվենցիան որևէ արգելք չի նախատեսում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու առումով:

Այս տեսակետը պնդող հեղինակները, չհամաձայնելով ՌԴ քրեական դատավարության օրենսդրությամբ ամրագրված այն կանոնին, որը հնարավորություն է տալիս առանց մեղադրյալի կալանավորման հարց քննարկելու բացառապես այն դեպքում, երբ նա գտնվում է միջազգային հետախուզման մեջ, նշում են, որ պարզապես ռուսական օրենսդիրը նպատակահարմար է գտել ապահովագրել իրեն և սահմանափակվել է միայն միջազգային հետախուզման մեջ գտնվող մեղադրյալների նկատմամբ կալանավորման հարցերը առանց նրանց մասնակցության քննարկելու կանոնակարգում սահմանելով, իսկ այն պատճառաբանությունները, թե նման օրենսդրա-

[1] Տե՛ս Гаврилов Б.Я., Современное досудебное производство и меры по его деформализации // Вестник Восточно-Сибирского института МВД России, 1 (76), 2016, էջեր 9-19:

[2] Տե՛ս Гаврилов Б.Я., О некоторых проблемных вопросах совершенствования УПК РФ // Проблемы предварительного следствия и дознания: Сб. научных трудов, М., 2006, էջեր 7-8:

կան լուծումը պայմանավորված է Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի դրույթներով, այս հեղինակների կարծիքով իրավաչափ չեն, քանի որ դրանում որևէ նորմ նախատեսված չէ ներպետական հետախուզման մասին[1]:

Այս մոտեցման կողմնակիցներից Օ. Ցոկոլովան գտնում է, որ հարցի լուծման առավել արդյունավետ տարբերակ է, երբ օրենքով հնարավորություն տրվի մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով կալանք կիրառելու և միաժամանակ հետախուզում հայտարարելու, որից հետո կալանքը ռեալ կիրառելու դեպքում այդ անձին հնարավորություն տրվի երեք օրվա ընթացքում բողոքարկելու այն փաստացի արգելանքի վերցնելու պահից: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ այս հեղինակը նշում է, որ անհրաժեշտ է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 5-րդ մասից «միջազգային» բառը բացառել, որպեսզի առանց անձի մասնակցության հնարավոր լինի կալանավորման հարց քննարկել ցանկացած հետախուզման դեպքում[2]:

Չհամաձայնվելով այս մոտեցումներին՝ նշենք, որ առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և հետագայում, երբ անձը հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, նրան դատարան չներկայացնելու հանգամանքը՝ որպես ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում, արձանագրել է Եվրոպական դատարանը հենց ՌԴ դեմ կայացրած Գարաբաևի գործով վճռում: Իհարկե, Եվրոպական դատարանը նշել է, որ որևէ խնդիր չկա, երբ անձի նկատմամբ հեռակա կարգով որոշում է կայացվում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին, սակայն դատարանը խնդիր է տեսնում այն առումով, որ անձի հայտնաբերման դեպքում նա անհապաղ չի տարվում դատարան՝ լսված լինելու և դատավորի առաջ կանգնելու ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս Цоколова О. И., Теория и практика задержания, ареста и содержания под стражей в уголовном процессе: Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, М., 2007, էջեր 337-342:

մասով նախատեսված պահանջն ապահովելու համար: Հետևաբար, բոլոր պնդումները հակասություն չլինելու մասով անհիմն են:

Ինչ վերաբերում է այն պնդումներին, որ մեղադրյալը կարող է բողոքարկել հեռակա կալանավորման մասին որոշումը և ըստ այդմ՝ իրացնել իր՝ դատարանի առաջ կանգնելու իրավունքը, ապա այն հիմնավոր չէ, քանի որ ազատությունից զրկելու իրավաչափության վիճարկումն անձի համար երաշխավորված է ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 4-րդ մասով, մինչդեռ դատարանի առաջ կանգնելու և լսված լինելու իրավունքը՝ 5-րդ հոդվածի 3-րդ մասով: Ասվածից կարող ենք եզրակացնել, որ այն դեպքում, երբ մեղադրյալը գտնվում է հետախուզման մեջ, և նրա նկատմամբ կալանավորում կիրառելու մասին միջնորդություն է ներկայացվում դատարան, քննիչը պետք է դատարան ներկայացնի լրացուցիչ նյութեր և հիմնավորումներ առ այն, որ մեղադրյալի նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում, եթե նման նյութեր չեն ներկայացվում և չի հիմնավորվում, որ մեղադրյալը գտնվում է միջազգային հետախուզման մեջ, ապա դատարանը պետք է որոշում կայացնի քննիչի միջնորդությունը մերժելու մասին, որը սակայն չպետք է խոչընդոտ լինի կալանավորման հարցը կրկին քննարկելու համար[1]: Այն դեպքում, երբ հայտարարվում է ներպետական հետախուզում, ապա առանց կալանավորման մասին որոշման հնարավոր է լուծել անձին բացահայտելու և ձերբակալելու հարցը, ավելին՝ ըստ անհրաժեշտության քննիչն իրավունք ունի նաև հետախուզում հայտարարելու հետ միաժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ

[1] Գտնում ենք, որ այս դեպքում չի կարող կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված այն կանոնը, որ տվյալ խափանման միջոցն ընտրելու նպատակով հարուցված միջնորդությունը դատավորի կողմից մերժելու մասին որոշումից հետո նույն գործով նույն անձին կալանավորելու միջնորդությամբ կրկին դատարան դիմելը հնարավոր է միայն կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում, քանի որ միջազգային հետախուզում հայտարարելու դեպքում կալանավորման կիրառումը, ըստ էության, պարտադիր է, այլընտրանք չունի: Հակառակ դեպքում հնարավոր չի լինի իրականացնել ինչպես հետախուզումը, այնպես էլ անձին ձերբակալելը, կալանավորելը և հանձնելը:

հոդվածի կարգով ձերբակալելու մասին որոշում կայացնել[1]: Սա նշանակում է, որ ներպետական հետախուզման դեպքում անհրաժեշտություն չկա առանց անձի քննարկել նրա նկատմամբ կալանավորում կիրառելու հարցը, իսկ նրան հայտնաբերելու դեպքում ներկայացնելու դատարան՝ կրկին քննարկելու կալանավորման հարցը, ինչպես սահմանել է ՀՀ Վճռաբեկ դատարանը Տ. Վահրադյանի վերաբերյալ որոշմամբ: Մեր կողմից առաջարկվող այս մոտեցումն, առնվազն բացառելու է արհեստական հետախուզումները և կրկնակի կալանավորման միջնորդությունների քննարկումը՝ դրանով իսկ որոշակիորեն նվազեցնելով նախաքննության մարմինների և դատարանների ծանրաբեռնվածությունը:

Կարծում ենք՝ նպատակահարմար է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել, որ կալանավորման վերաբերյալ միջնորդությունները կարող են քննարկվել առանց մեղադրյալի բացառապես այն դեպքում, եթե նրա նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում: Դրա համար անհրաժեշտ է նաև օրենքում սահմանել միջազգային և տեղական հետախուզում հասկացությունները, դրանց հայտարարման հիմքերը, պայմանները, ժամկետները, մեղադրյալի նկատմամբ, կախված դրա տեսակից, կիրառման ենթակա քրեադատավարական հարկադրանքի միջոցների տեսակները և այլն:

Հաճախ պրակտիկ աշխատողները հարց են բարձրացնում առ այն, թե արդյոք ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Տ. Վահրադյանի վերաբերյալ որոշմամբ ձևավորած դիրքորոշումները պետք է տարածվեն նաև դատական քննության փուլում գտնվող գործով քննությունից թաքնվող ամբաստանյալի նկատմամբ հետախուզում հայտարարելու և կալանավորման մասին որոշման կայացման դեպքում, երբ վերջինը հայտնաբերվում է:

Թեև ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 3-րդ մասը որևէ բացառություն չի սահմանում, սակայն կարծում ենք՝ դատական քննության փուլում գտնվող գործերով իրավիճակն այլ է: Դատական քննության փուլում

[1] Այս հիմքով ձերբակալման մասին որոշում է կայացվում, եթե քրեական գործով հավաքված ապացույցները հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք, ընդ որում՝ նա գտնվում է այլ տեղանքում, կամ նրա գտնվելու վայրը հայտնի չէ:

կիրառված կալանավորումների դեպքում, քանի որ վարույթն իրականացնում է դատարանը, և հենց դատարանն էլ կայացնում է կալանավորման մասին որոշում, ուստի Վճռաբեկ դատարանի ձևավորած դիրքորոշումը չի կարող միանշանակ կիրառվել: Այս դեպքում չկա այն պաշտոնատար անձը, որն ունի պարտականություն դատարանի վարույթում գտնվող քրեական գործով կալանավորված անձին ներկայացնելու դատարան, պարզապես դատարանի որոշումը կատարող ՀՀ ոստիկանության և համապատասխան քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները, հայտնաբերելով հետախուզման մեջ գտնվող ամբաստանյալին, պարտավոր են նրան տեղավորել կալանավորվածներին պահելու վայրում և այդ մասին գրավոր իրազեկել դատարանին, որպեսզի վերջինը վերսկսի քրեական գործի կասեցված վարույթը (եթե կասեցրել է) և նիստ նշանակի, որի ժամանակ արդեն կքննարկի նաև կալանավորման կիրառման հարցը: Սակայն, մեր կարծիքով, այս դեպքում չի կարող կիրառելի լինել դատարանի առաջ կանգնելու՝ Սահմանադրությամբ ամրագրված 72 ժամվա ռեժիմը, քանի որ քրեական դատավարությունում այն վերաբերում է մինչդատական վարույթում և ձերբակալման հիմքով ազատությունից զրկելուն, որը դատական քննության փուլում չի կիրառվում, ինչը նշանակում է, որ դատարանի վրա չի կարող պարտականություն դրվել 72 ժամվա ընթացքում ապահովել անձի լսված լինելու իրավունքը: Այն կարող է նաև տեխնիկական խնդիրներ առաջացնել, մասնավորապես նիստ նշանակելու, այդ մասին դատավարության կողմերին ծանուցելու և այլնի հետ կապված, ինչը նախաքննության փուլում առկա չէ: Պետք է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ դատական քննության փուլում գտնվող գործով անձի կարգավիճակն այլ է, վարույթն այլ սկզբունքների և կանոնների վրա է հիմնված (հրապարակայնություն, անմիջականություն, կողմերի մասնակցություն և այլն), քան նախաքննության փուլում, ուստի այդ առանձնահատկություններով պայմանավորված՝ անձը, դատական քննության փուլում դիմելով փախուստի կամ թաքնվելով քննությունից, ինքն է իրեն զրկում օրենքով իրեն տրված երաշխիքներից, որոնք նախատեսված են մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերով անձին ազատությունից զրկելու օրինականության ապահովման համար:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է այս հարցը ևս իրավական կարգավորման ենթարկել և հստակ ամրագրել, որ ամբաստանյալի հայտնաբերման դեպքում, երբ դատարանը տեղեկացվում է այդ մասին, դատական նիստը պետք է նշանակվի ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում: Ինչ վերաբերում է ամբաստանյալին, ապա նա կարող է բողոքարկել դատարանի որոշումը վերադաս դատարան և այդ կերպ իրացնել իր լսված լինելու իրավունքը, քանի որ այն դատարանի կողմից է կալանավորվել, որը նաև նիստ է իրականացնում, և նույն դատարանի առաջ կանգնելը կալանավորման վերահաստատման տեսանկյունից իրավաչափ չէ:

ЗАДЕРЖАНИЯ ОБВИНЯЕМОГО, НАХОДЯЩЕГОСЯ В РОЗЫСКЕ В КАЧЕСТВЕ АЛЬТЕРНАТИВЫ ЗАОЧНОМУ (ПРИ ОТСУТСТВИИ ОБВИНЯЕМОГО) АРЕСТУ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ (ПРАВОВОЙ АНАЛИЗ МЕЖДУНАРОДНЫХ СТАНДАРТОВ, ДЕЙСТВУЮЩЕГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА И СУДЕБНОЙ ПРАКТИКИ)

Сергей Марабян
Ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, кандидат юридических наук

В данной статье рассматриваются вопросы, связанные с применением содержания под стражей в качестве меры пресечения без участия обвиняемого, и делается вывод, что судебные заседания по поводу содержания под стражей без участия обвиняемого могут считаться законными только в том случае, если обвиняемый был объявлен в международный розыск. В связи с этим автор статьи соглашается с правовыми позициями Кассационного суда, однако считает, что сфера их действия должна быть ограничена во избежание злоупотреблениям и произвола.

В результате проведенного исследования мы пришли к выводу, что в случае объявления внутригосударственного розыска человек

может быть задержан, но не арестован. Это не только исключит практику произвольного и искусственного объявления розыска, но и уменьшит объем работы судов вдвое.

THE ARREST OF THE WANTED DEFENDANT AS AN ALTERNATIVE TO DETENTION (IN THE ABSENCE OF HE DEFENDANT) IN THE CRIMINAL PROCEEDINGS (LEGAL ANALYSIS OF INTERNATIONAL STANDARDS, CURRENT LEGISLATION AND JUDICIAL PRACTICE)

Sergey Marabyan
Assistant at the Chair of Criminal Procedure and Criminalistics,
Candidate of Legal Sciences

Within the scope of this article, the author has raised the issues of imposing detention as a preventive measure without the involvement of the defendant in the proceedings and concluded that without the defendant's participation, the hearings on the detention may be considered legitimate only when the international reconnaissance has been declared. In this respect, the author agrees with the legal positions of the Court of Cassation, but he believes that its scope should be limited, as it often causes abuses and arbitrariness.

The author finds that, in the case of domestic reconnaissance, arrest but not a detention may be imposed on a person, which will not only exclude the practice of arbitrary and artificial declaration of reconnaissance, but also the double workload of the courts.

Բանալի բառեր - *հետախուզում, ձերբակալում, կալանավորում, լսվելու իրավունք, դատարանի առաջ կանգնելու իրավունք:*
Ключевые слова: *розыск, арест, содержание под стражей, право быть выслушанным, право предстать перед судом.*
Key words: *reconnaissance, arrest, detention, the right to hearing, the right to stand trial.*

ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Վահե Ենգիբարյան
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր

Քննչական գործողությունների էությունը, դրանց կրիմինալիստիկական բնութագիրն ամբողջական բացահայտելու և լիարժեք ուսումնասիրելու տեսնակյունից նախևառաջ հարկ է պարզաբանել քննչական գործողության հասկացությունն ու դրա բովանդակությունը:

Քննչական գործողությունն իրենից ներկայացնում է խիստ իրավական կարգավորման ենթարկված քրեադատավարական գործունեության մեկնարկային տարր: Մինչև քրեադատավարական օրենսդրության բարեփոխումը դատավարական գործողություններ հասկացության բնորոշման, դրա համակարգը կազմող տարրերի հարցում չկար միասնական մոտեցում: Այս հարցում որոշակիություն չմտցրեց նաև ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետև՝ ՔԴՕ), որի 6-րդ հոդվածի 6-րդ կետում դատավարական գործողությունները մեկնաբանվում են որպես գործով վարույթի ընթացքում քրեադատավարական օրենքով նախատեսված գործողություններ: Այս բնորոշումն ընդհանուր է: Խնդիրը բարդանում է նրանով, որ օրենքն օգտագործում է քննչական գործողություն, անհետաձգելի քննչական գործողություն հասկացությունները՝ դրանք հստակ չտարանջատելով դատավարական գործողություններից ընդհանրապես, ինչպես նաև միմյանցից: Այս ամենով պայմանավորված՝ քրեադատավարական իրավունքի տեսության մեջ մինչ օրս չկա մեկ միասնական մոտեցում նշված հիմնախնդիրների հարցում[1]:

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Դասագիրք բուհերի համար, Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր՝ ***Գ. Ս. Ղազինյան***, 3-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 102:

Վերլուծելով քննչական գործողությունների հասկացության վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետներն ու մոտեցումները[1]՝ կարող ենք փաստել, որ անկախ քննչական գործողության այս կամ այն սահմանումից՝ հնարավոր է առանձնացնել քննչական գործողության բովանդակության երկու հիմնական ասպեկտներ՝ դինամիկ (ֆունկցիոնալ) և ստատիկ (փաստական): Ընդ որում՝ վերջինս կարելի է անվանել նաև իրավական, քանզի այն վերաբերում է քննչական գործողության կատարման հիմքերին, պայմաններին ու կանոններին, թեև գործնական առումով այն առավելապես բնորոշվում է որպես մարդու նպատակաուղղված գործունեության տեսակ, հաջորդական միջոցառումների ամբողջություն: Վերջինս առավել բնորոշ է դրա կրիմինալիստիկական բնութագրին: Այս տեսանկյունից կարող ենք նշել, որ **քննչական գործողությունը քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչդատական և դատական քննության փուլում հետքաոաջացման մեխանիզմի շրջանակում իրականացվող որոնողական և ճանաչողական գործողությունների համակարգ է, որը նպատակաուղղված է ապացուցողական տեղեկության ձևավորմանը**[2]:

Ի տարբերություն քննչական գործողությունների քրեադատավարական էությանը՝ դրանց կատարման տակտիկայի ուսումնասիրման նպատակով անհրաժեշտ է քննչական գործողությունները

---

[1] Տե՛ս ***Соловьев А.Б.,*** Система следственных действии как средство уголовно-процессуального доказывания (проблемы уголовного процесса и криминалистики), М., 2006, էջ 35; ***Шейфер С.А.,*** Следственные действия. Система и процессуальная форма, М., 2001, էջեր 5-6; ***Герасимов И.Ф.,*** Некоторые проблемы раскрытия преступлений, Свердловск, 1975, էջեր 64-70; ***Ларин А.М.,*** Следственные действия (определение понятия, терминология)//Оптимизация расследования преступления, Иркутск, 1982, էջեր 147-150; ***Победкин А.В., Яшин В.Н.,*** Следственные действия. Тула, 2003, էջ 5; ***Белкин Р.С.,*** Криминалистическая энциклопедия, М., изд. БЭК, 1997, էջ 205; ***Россинский С.Б.,*** Следственные действия: монография, М., «Норма», 2018, էջեր 7-42:

[2] Մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.,*** Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը, Մենագրություն, Երևան, «Անտարես» հրատ., 2016, էջեր 31-38:

դիտարկել հետևյալ փուլերի հաջորդական իրականացման տեսանկյունից՝

- ***առաջին կամ նախապատրաստական փուլ*** ՝ քննչական գործողության նախապատրաստում,
- ***երկրորդ կամ կատարողական փուլ*** ՝ քննչական գործողության անմիջական կատարում,
- ***երրորդ կամ եզրափակիչ փուլ*** ՝ քննչական գործողության արդյունքների ամրագրում:

Որոշ հեղինակներ[1] այս փուլերին ավելացնում են չորրորդ՝ քննչական գործողության արդյունքների գնահատման և օգտագործման փուլը, սակայն, մեր խորին համոզմամբ, նշված փուլի հիմնական խնդիրն առավելապես քրեադատավարական բնույթ ունի, ուստի նպատակահարմար չէ այն ընդգրկել տակտիկական խնդիրների լուծման ընդհանուր համակարգի մեջ:

Միայն վերը ներկայացված փուլերի հաջորդական իրականացման միասնականության պայմաններում կարելի է խոսել պատշաճ քննչական գործողության կամ տակտիկապես գրագետ կազմակերպված քննչական գործողության մասին: Այլ կերպ ասած՝ քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է քննչական գործողության պայմանները (կանոնները), իսկ կրիմինալիստիկական տակտիկան՝ դրա գործնական իրականացումը՝ կենսագործումը: Այսպիսով՝ քննչական գործողության կրիմինալիստիկական ընկալումն առավել լայն է, քան դրա՝ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված ձևակերպման բովանդակությունը:

Քննչական գործողության իրականացման նախապատրաստական փուլում ձևավորվում է խնդիրների լուծման անհրաժեշտության գաղափարը՝ վերջնական որոշակի նպատակը և խնդիրների համակարգը: Հենց այս փուլում է կազմվում խնդրի լուծման պլանը՝ հաշվի առնելով այն բոլոր հանգամանքները, որոնք կարող են ազդել որոշումների ընթացքի և արդյունքների վրա:

---

[1] Տե՛ս **Аверьянова Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г., Российская Е.Р.,** Криминалистика. Учебник для вузов. Под ред. *Р.С. Белкина,* 2-е изд., перераб. и доп., М., Норма, 2006, էջ 470; **Балашов Н.М., Балашов Д.Н., Маликов С.В.,** Криминалистика: Учебник для вузов, М., «ИНФРА М», 2005 և այլն:

Քննչական գործողության նախապատրաստական փուլում, նախևառաջ, հստակորեն որոշվում են այն բոլոր խնդիրները, որոնք պետք է լուծվեն: Միայն նախօրոք մտովի որոշելով խնդիրները՝ քննիչը կկարողանա գրագետ և արդյունավետ օգտագործել քննչական գործողության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը և հետագայում այն ճիշտ մշակել: Ինչպես նշում է Ա. Վ. Դուլովը, քննչական գործողության նախապատրաստման պարտադիր պայմաններից է քննչական գործողության իրականացման դինամիկ մոդելի մտավոր կառուցումը[1]: Որպես հետագա քայլերի՝ այս մոդելը պետք է օգնի քննիչին մտովի ստեղծել ապագա գործողության միջավայրը, օբյեկտների և մասնակիցների շարժը, կատարվելիք գործողությունների բոլոր մասնակիցների վարքագիծը, սեփական ձեռնարկումներն ու պահվածքը: *«Այսպիսի երևակայական մոդելի կառուցումը հնարավորություն կտա վաղօրոք կանխատեսելու տարբեր իրավիճակները և մշակելու քննչական գործողության զարգացման, սեփական վարքագծի տարբերակներ՝ ըստ նախապես գնահատված հանգամանքների»*,- նշում է Ա. Ա. Կուզնեցովը[2]:

Նախօրոք կառուցված մոդելի լիարժեքությունը և դրա տարբերակների քանակն ուղղակիորեն կախված են այն տեղեկատվության ծավալից, որը քննիչը քննչական գործողության սկզբում ունի հանցագործության դեպքի, իրականացվելիք քննչական գործողության մասնակիցների մասին: Որքան ծավալուն է տեղեկատվությունը, այնքան ավելի քիչ մտավոր մոդելներ կառուցելու անհրաժեշտություն ունի քննիչը: Եվ ընդհակառակը՝ որքան քիչ է տեղեկատվությունը, այնքան ավելի շատ մտավոր մոդելների կարիք կա՝ կանխատեսելու բոլոր հնարավոր իրավիճակները:

Նախապատրաստական փուլը ներառում է նաև՝

---

[1] Տե՛ս **Дулов А.В.,** Основы расследования преступлений, совершенных должностными лицами, Минск, Белорус. ун-т., 1985, էջ 62:

[2] Տե՛ս **Кузнецов А.А.,** Понятие и система криминалистической тактики, ее роль в раскрытии и расследовании преступлений, 1993, http://webcache.googleusercontent.com/search?q=cache:KjEE-HQ6QzwJ:ndki.narod.ru/liblary/lectures/lectures_docs/Kuznecov_AALecture.doc+&cd=1&hl=ru&ct=clnk&gl=am- (30.03.2016):

- քննչական գործողության օբյեկտների վերաբերյալ տվյալների ձեռքբերումը,
- անհրաժեշտ գիտական-տեխնիկական միջոցների նախապատրաստումը,
- բոլոր այն անձանց ներգրավումն ու նախապատրաստումը, որոնք կարող են նպաստել քննչական գործողության նպատակներին հասնելու, ինչպես նաև դրա ընթացքն ու արդյունքներն ամրագրելու համար:

Այսպիսով՝ նախապատրաստական փուլի հիմնական խնդիրը քննչական գործողության կատարման համար անհրաժեշտ պայմանների ապահովումն է: Այս փուլում հիմնականում լուծվում են քննչական գործողության կատարման տեղի, ժամանակի, մասնակիցների, տեխնիկական միջոցների և այլնի վերաբերյալ հարցերը: Այլ կերպ ասած՝ նշված փուլի ընթացքում վարույթն իրականացնող մարմինը մտավոր մոդելավորում է կատարվելիք քննչական գործողությունը՝ նախանշելով նպատակներն ու ձեռքբերումները: Այս փուլն ավարտվում է քննչական գործողության կատարման անհրաժեշտության հարցի լուծմամբ:

Երկրորդ կամ կատարողական փուլը, ըստ էության, քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով բուն գործողությունների կատարումն է: Թեև պետք է խոստովանել, որ կրիմինալիստիկական տեսանկյունից քրեադատավարական օրենսդրությամբ ոչ թե նկարագրվում է քննչական գործողության ընթացքը, այլ սահմանվում են դրա իրականացման հիմնական պայմանները:

Այս փուլին բնորոշ է մշակված պլանի, նախորդ փուլում ուրվագծված խնդիրների իրագործումը, այս փուլում կիրառվում են տակտիկական հնարքներ, և ստուգվում են քննչական վարկածները՝ դրանցից բխող հետևանքների հաստատման կամ հերքման ճանապարհով[1]:

Այս փուլում իրականացվում է բուն քննչական գործողությունը նախօրոք մշակված պլանով՝ առաջացած խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկությունները հայտնաբերելու, հետազոտելու միջոցով:

[1] Տե՛ս Криминалистика, Под ред. **Е.П. Ищенко**, М., 2000, էջ 319:

Քննչական գործողության իրականացման ժամանակ խնդիրների լուծման առարկայական առանձնահատկությունն այն է, որ դա հիմնականում իրականացվում է քրեական դատավարության մասնակիցների հետ անմիջական շփման ընթացքում: Որոշակի քննչական գործողության իրականացման ժամանակ կիրառվում են անձի ուսումնասիրության, նրա վրա ազդեցություն գործելու մեթոդները: Տակտիկական արդյունավետ հնարք է քննիչի կողմից հոգեբանական կապի հաստատումը: Ընդգծենք, որ մասնակիցների վերաբերյալ նախօրոք հավաքվող, համակարգվող տեղեկությունների կարևորությունը և անհրաժեշտությունը պայմանավորված են նրանով, որ այս փուլում, բոլոր մասնակիցների վարքագծի հնարավոր տարբերակների մտավոր մոդելներն ի մի բերելով, հնարավոր է դառնում նրանց վարքագիծն առավել կանխատեսել և քննչական գործողությունն իրականացնել նախօրոք պլանավորված ուղով:

Պետք է նշել, որ այս փուլի ընթացքում կիրառվող տակտիկական հնարքներն ամենաբազմազան են, որոնց հասկացությանը, ընդհանուր պայմաններին ու տեսակներին կանդրադառնանք հաջորդիվ:

Երրորդ կամ եզրափակիչ փուլի էությունն ու նշանակությունն արտահայտվում են նրանում, որ ինչքան էլ տակտիկապես գրագետ և պատշաճ մակարդակով կատարվեն նախորդ փուլերը, միևնույն է, դրանք ցանկալի արդյունքներ չեն կարող տալ, կամ էլ այդ արդյունքների քրեադատավարական արժեքը կնվազի, եթե քննչական գործողության եզրափակիչ փուլի տակտիկական պահանջները չպահպանվեն: Կրիմինալիստիկական տեսանկյունից քննչական գործողությունների ընթացքը և արդյունքներն ամրագրվում են երկու հիմնական եղանակով՝

1. *հիմնական* (արձանագրությունների կազմումը),
2. *լրացուցիչ* (արձանագրությունների կցվող հավելվածների պատրաստումը):

Արձանագրություն կազմելու համար քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է որոշակի պահանջներ՝ արձանագրության անվանման, գործողության կատարման տեղի, ամսաթվի, այն սկսելու և ավարտի, քննչական գործողությունը կատարողի անձի, այլ մասնակիցների, կիրառված գիտատեխնիկական միջոցների և այլ մանրամասների հստակ արտացոլման համար:

Արձանագրության մեջ նկարագրվում են քննչական գործողությունների ընթացքն ու արդյունքները, ամրագրվում են դրա կատարման ընթացքում պարզված և գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները, որոնք հետագայում օգտագործվում են որպես ապացույց: Արձանագրության մեջ պարտադիր նշում է արվում կիրառված գիտատեխնիկական միջոցների վերաբերյալ (դրանց անվանումը, կիրառման նպատակը, օգտագործման պայմաններն ու կարգը, ստացված արդյունքները): Արձանագրությունը ստորագրում են քննչական գործողության կատարման մասնակիցները. վերջիններս իրավունք ունեն նաև դիտողություններ ներկայացնելու դրանում ներառված գրառումների ճշմարտացիության և լրիվության մասին: Այդ դիտողությունները և այլ հայտարարություններն արտացոլվում են արձանագրության մեջ և հաստատվում քննչական գործողություն կատարող անձի ստորագրությամբ: Արձանագրությունը ստորագրելուց հրաժարված անձին հնարավորություն է տրվում բացատրություններով հանդես գալու, որոնք ևս մտցվում են արձանագրության մեջ: Եթե անձը ֆիզիկական խնդիրների պատճառով ի վիճակի չէ ստորագրելու արձանագրությունը, ապա այդ մասին արվում է համապատասխան նշում, որը հաստատվում է քննչական գործողությունը կատարած անձի և ընթերակաների ստորագրությամբ:

Որպես ամրագրման լրացուցիչ միջոցներ՝ քննչական գործողության արձանագրությանը կարող են կցվել լուսանկարներ, տեսաժապավեններ, տեսանյութերի, ձայնագրությունների կրիչներ, գծագրեր, պլաններ, սխեմաներ, հետքերի կաղապարներ, դրոշմվածքներ և այլն[1]:

Կրիմինալիստիկական տեսանկյունից վերը նշված հավելվածները, բացի քրեադատավարական ճիշտ ձևակերպման պահանջների պահպանումից, պետք է օժտված լինեն նաև արժանահավատությամբ: Դա նշանակում է, որ քննչական գործողության արձանագրությանը կցվող հավելվածների պատրաստումը և «վավերացումը»

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Դասագիրք բուհերի համար, Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր՝ **Գ. Ս. Ղազինյան**, 3-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջեր 117-118:

պետք է համապատասխանեն կամ համահունչ լինեն կատարված քննչական գործողության բնույթին և ընթացքին: Որպես ընդհանուր պայման կարելի է դիտարկել, օրինակ, քննչական գործողության կատարման արդյունքում հայտնաբերված իրերի, առարկաների հայտնաբերելու, վերցնելու և ամրագրելու գործընթացի ներքին տրամաբանական միասնականության ապահովումն ու դրա հնարավորինս լիարժեք նկարագրումն արձանագրության մեջ: Նույնը վերաբերում է նաև հավելվածներում տեղ գտած տեսագրության, ձայնագրության, սխեմաների և այլնի պատրաստմանը: Այս իմաստով մասնագիտական գրականության մեջ տարբեր մոտեցումներ կան. մասնավորապես, դեպքի տեղի զննության արձանագրությունը կազմելիս արդյոք անհրաժեշտ է այն ձևակերպել զննությանը զուգահեռ, թե դրա ավարտից հետո, օրինակ, քննիչի աշխատասենյակում առավել հանգիստ պայմաններում[1]:

Քննչական գործողության արձանագրությունը և հավելվածները կոչված են փոխլրացնելու միմյանց՝ դրանով ապահովելով քննչական գործողության և ստացված արդյունքների արժանահավատությունը:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ արձանագրության մեջ քննչական գործողության ընթացքը պետք է շարադրվի «վերականգնելիության» սկզբունքով, այսինքն՝ գործողությունների հաջորդականության մանրամասն շարադրման աստիճանը հնարավորություն պետք է ընձեռի, անհրաժեշտության դեպքում, վերարտադրելու՝ «կրկնելու» քննչական գործողությունը՝ առանց կասկածի տակ դնելու դրա իսկությունն ու արժանահավատությունը: Դա նշանակում է, որ ճիշտ չէ արձանագրությունը շարադրել մակերեսային կամ էլ այն անհարկի ծանրաբեռնել տարաբնույթ մանրամասներով:

Այսպիսով՝ կարող ենք հավաստել, որ քննչական գործողության կրմինալիստիկական բովանդակությունը, ի տարբերություն դրանցից յուրաքանչյուրի քրեադատավարական սահմանման, առավել լայն է և ներառում է ներկայացված երեք հաջորդող փուլերը միասին, որոնք նպատակաուղղված են քրեադատավարական և կրիմինալիստիկական խնդիրների միասնական լուծմանը:

---

[1] Մանրամասն տե՛ս **Սահակյան Վ. Մ.,** Դեպքի տեղի զննության տակտիկան (դասախոսություն), Երևան, ԵՊՀ հրատ., 1975, էջեր 31-32:

Ինչ վերաբերում է քննչական գործողությունների տեսակներին, հարկ է նշել, որ դրանց համակարգը սահմանված է քրեադատավարական օրենսդրությամբ:

Մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ ՀՀ ՔԴՕ-ով սահմանված որոշ քննչական գործողություններ (արտաշիրմումը[1], գույքի վրա կալանք դնելը, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը և ձայնագրելը), իրենց բնույթով լինելով դատավարական գործողություններ, զուրկ են քննչական գործողություններին բնորոշ հիմնական հատկանիշներից[2]:

Հարկ է նշել, որ տակտիկական տեսանկյունից սկզբնական քննչական գործողությունների, ինչպես նաև ՕՀՄ-ների կատարման անհրաժեշտության հարցը որոշվում է՝ կախված քննվող դեպքի առանձին հանգամանքներից ու քննչական իրավիճակի առանձնահատկություններից:

Թեև քրեադատավարական իրավունքի գիտության մեջ և կրիմինալիստիկայում գոյություն ունեն քննչական գործողությունների դասակարգման տարբեր չափանիշներ, այնուամենայնիվ, տակտիկական տեսանկյունից առավել կարևորվում է քննչական գործողությունների դասակարգումը՝ ըստ քննության փուլերի՝ հիմք ընդունելով դրանցից յուրաքանչյուրին բնորոշ խնդիրների համակարգը: Ըստ այդմ՝ քննչական գործողությունները դասակարգվում են հետևյալ տեսակի՝

- *սկզբնական անհետաձգելի քննչական գործողություններ,*
- *հետագա քննչական գործողություններ:*

Սկզբնական քննչական գործողությունները, բացառությամբ ՀՀ ՔԴՕ-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 57-րդ հոդվածի

---

[1] Արտաշիրմումը՝ որպես առանձին քննչական գործողություն սահմանելու աննպատակահարմարության մասին մանրամասն տե՛ս **Օհանյան Լ. Պ.,** Առաջարկություններ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որոշ հոդվածների վերաբերյալ, Պետություն և իրավունք, թիվ 3, Երևան, 1998, էջեր 13-14:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Դասագիրք բուհերի համար, Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր՝ **Գ. Ս. Ղազինյան**, 3-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 106:

2-րդ մասի 2-րդ կետով սահմանված քննչական գործողությունների (դեպքի վայրի զննություն, հետազոտման համար նմուշներ վերցնելը և փորձաքննություն նշանակելը), կատարվում են քրեական գործի հարուցման պահից սկսած:

Պետք է նշել, որ թեև վերը նշված նորմը հնարավորություն է տալիս մինչև քրեական գործ հարուցելը կատարելու որոշակի քննչական գործողություններ, սակայն ՀՀ ՔԴՕ-ն առանձին քննչական գործողություն՝ «դեպքի վայրի զննություն», չի նախատեսում, իսկ «փորձաքննության նշանակումը» չի համապատասխանում նույն ՀՀ ՔԴՕ-ի 35-րդ գլխի վերնագրին ու շարադրանքին, այն է՝ «Փորձաքննություն նշանակելը և կատարելը»:

Ինչևէ, քրեական գործի հարուցման ներքո ընդունված է հասկանալ՝

1. քրեական դատավարության ինքնուրույն փուլ,
2. քրեադատավարական ակտ՝ որոշում,
3. քրեական դատավարության ինստիտուտ:

Վերջիններից յուրաքանչյուրն ունի իր ինքնուրույն իմաստը[1]:

Քննության այս փուլում կատարվող քննչական գործողություններն ու օպերատիվ-հետախուզական միջոցառումները կրիմինալիստիկական մեթոդիկայի ինքնուրույն տարր են, ընդ որում՝ դրանց թվարկումը կրում է օրինակելի, տիպային բնույթ:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ քննչական գործողությունների կատարման հաջորդականությունը որոշում է վարույթն իրականացնող մարմինը՝ ելնելով ստեղծված քննչական իրավիճակից և դրանց կատարման տակտիկայի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, քրեադատավարական օրենսդրությունն օգտագործում է «անհետաձգելի քննչական գործողություններ» հասկացությունը: Մասնավորապես ՀՀ ՔԴՕ-ի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում թվարկված են քննչական անհետաձգելի այն գործողությունները, որոնք հետաքննության մարմինը պարտավոր է կատարել քրեական գործը հարուցելուց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում: Այդպիսիք են զննությունը, խուզարկությունը, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկու-

[1] Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, Հատուկ մաս, խմբագրությամբ **Գ. Ս. Ղազինյանի,** Երևան, «Տիգրան Մեծ», 2003, էջ 9:

մը, հեռախոսային խոսակցությունների լսումը, առգրավումը, քննումը, կասկածյալի ձերբակալումն ու հարցաքննությունը, տուժողների ու վկաների հարցաքննությունը, առերեսումը, փորձաքննության նշանակումը:

Քննչական գործողությունների կատարման հերթականությունը մանրամասն ուսումնասիրել է Ա. Վ. Ռագուլինը և հանգել եզրակացության, որ (…) ցանկացած հանցագործություն քննելիս առաջնահերթության կարգով իրականացման առավելություններ ունեն այն գործողությունները, որոնք՝

1. ուղղված են այն ապացույցների հավաքմանը, որոնք, հապաղման դեպքում, հավանական է, որ կանհետանան,
2. ուղղված են հանցանք կատարած անձի հայտնաբերմանը, հետախուզմանը կամ մեկուսացմանը, եթե վերջինիս ազատության մեջ լինելը վտանգ է ներկայացնում հասարակության համար,
3. նպաստում են ձերբակալված կամ կալանավորված անձին մեղադրանք առաջադրելու հանգամանքների բացահայտմանը,
4. անհրաժեշտ են մյուս քննչական գործողությունների կատարումն ապահովելու համար,
5. նպաստում են միանգամից մի քանի քննչական վարկածների ստուգմանը,
6. կապված են ժամանակի մեծ կորուստների հետ,
7. չեն խախտում նախաքննության գաղտնիության սկզբունքը,
8. կապված են անձանց, առարկաների, փաստաթղթերի հետ, որոնց առկայությունը հնարավոր չի լինի ապահովել հետագայում[1]:

Սակայն մասնագիտական գրականության մեջ քննադատվում է որոշակի քննչական գործողությունները որպես «անհետաձգելի» բնորոշելը[2], քանի որ ցանկացած քննչական գործողություն, քննության առանձնահատկություններից ելնելով, կարող է համարվել անհետաձգելի:

---

[1] Տե՛ս **Рагулин А.В.,** Хулиганство, уголовно-правовые аспекты: Учебное пособие, изд-во Восточного института экономически, гуманитарных наук, управления и право, Челябинск, 2005, էջ 245:

[2] Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, Հատուկ մաս, խմբագրությամբ **Գ. Ս. Ղազինյանի,** Երևան, «Տիգրան Մեծ», 2003, էջ 116:

Միանգամայն համաձայնելով վերը նշված տեսակետի հետ՝ այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել, որ տակտիկական տեսանկյունից որոշ քննչական գործողություններ (օրինակ՝ դեպքի տեղի զննությունը, փորձաքննության նշանակումը և կատարումը և այլն), որոնք հետաձգում չեն հանդուրժում, իրականացվում են անհապաղ, նույնիսկ կարող են կատարվել մինչև քրեական գործի հարուցումը, մինդեռ այլ քննչական գործողություններ, իրենց բնույթով և բովանդակությամբ պայմանավորված, նպատակահարմար չէ համարել անհետաձգելի, թեև գործնականում չի բացառվում դրանց կատարումը նաև քննության սկզբնական փուլում: Այսպես՝ առերեսում կատարելու համար անհրաժեշտ են առնվազն երկու անձանց արդեն կատարված և ավարտված հարցաքննություններ, ընդ որում՝ նրանց տված ցուցմունքների միջև պետք է առկա լինեն էական հակասություններ: Հասկանալի է, որ հարցաքննությունների կատարումը, այնուհետև դրանց արդյունքում ստացված ցուցմունքների վերլուծությունը՝ էական բնույթի հակասությունների պարզաբանման նպատակով, վարույթն իրականացնող մարմնից պահանջում են որոշակի ժամանակ և լրացուցիչ միջոցներ, որոնք բացառում են դրա կատարման անհետաձգելիությունը: Ավելին՝ նշված քննչական գործողության կատարումն առավել համահունչ է քննության հետագա փուլի խնդիրներին: Նույնը վերաբերում է նաև ճանաչման ներկայացնելուն, քննչական փորձարարությանը, որոնց կատարման համար, որպես կանոն, պահանջվում են այլ՝ (անհետաձգելի) կատարված (ավարտված) քննչական գործողությունների արդյունքներ:

Ուստի կարող ենք հավաստել, որ կրիմինալիստիկական տակտիկայի համակարգային դիտարկման տեսանկյունից միանգամայն արդարացված է քննչական գործողությունների բնույթով և քննչական իրադրությամբ պայմանավորված, դրանց շարքում անհետաձգելի քննչական գործողությունների առանձնացումը:

Հարկ է նշել, որ ՀՀ քննչական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհետաձգելի քննչական գործողությունների՝ օրենքով սահմանված կարգով կատարումը ցանկացած դեպքում վարույթն իրականացնող մարմնին չի ազատում քննության հաջորդ փուլում դրանց կրկնակի կատարման անհրաժեշտությունից: Ընդ որում՝ ուշադրություն է դարձվում կատարված քննչական գործողությունների որակի և արդյունքների նկատմամբ «անվստահությա-

նը» և պատասխանատվությանը, որը քննիչը ստանձնում է: Ինչպես ցույց են տալիս ՀՀ քննչական մարմինների շրջանում անցկացված հարցման արդյունքները, քննիչների 95%-ից ավելին, որպես կանոն, քննչական և այլ դատավարական գործողությունները կատարում են կրկնական[1]:

Որոշ գիտնականներ էլ անհետաձգելի քննչական գործողությունների իրականացումը համարում են հետաքննության նախնական փուլ, որտեղ հետաքննության մարմինը քննիչի փոխարեն սկսում է դատավարական գործողություն իրականացնել անհետաձգելի իրավիճակներում[2]: Իրականում, թեև որոշակի առումով կարելի է խոսել հետաքննության մարմնի կողմից անհետաձգելի քննչական գործողությունների՝ որպես քրեական դատավարության հատուկ փուլի կատարման մասին, սակայն, մեր կարծիքով, այն չի կարելի դիտարկել նախնական քննությունից զատ՝ որպես ինքնուրույն ինստիտուտ:

Ի տարբերություն քննության սկզբնական փուլում իրականացվող քննչական գործողությունների՝ այս փուլում դրանց իրականացումը հիմնականում ուղղված է փաստական տվյալների ստուգմանն ու գնահատմանը՝ կրելով առավելապես ստուգող և հաստատող բնույթ: Ընդ որում՝ դրանց կատարման տակտիկան նույնպես կարող է էապես փոփոխվել, քանզի փոխվում են քննության խնդիրները, ստացվող տվյալների ծավալը, քննչական իրադրությունը և այլն: Դա նշանակում է, որ քննիչի աշխատանքային գործունեությունը կրում է ստեղծագործական բնույթ, և հետագա փուլի ընթացքն առավելապես կանխորոշվում է սկզբնական փուլի առանձնահատկություններով:

Այսպիսով՝ քննչական գործողությունները՝ որպես քրեական դատավարության արդյունավետ գործիքներ, պետք է ապահովեն դրա նպատակի նվաճումը, քանի որ հակառակ պարագայում քրեա-

---

[1] Տե՛ս **Казинян Г.С.,** Актуальные проблемы уголовно-процессуального законодательства в третьей Республике Армения (сравнительно-правовое исследование), Ереван, 1999, էջեր 160-163:

[2] Տե՛ս Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации, под ред. **А.В. Смирнова,** СПб., Питер, 2003, էջ 416:

դատավարական օրենսդրության կարևորագույն սոցիալական խնդիրները լուծելն անհնար կլինի:

КРИМИНАЛИСТИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЙ

Ваге Енгибарян
профессор кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, доктор юридических наук

Статья посвящена раскрытию и анализу соотношения понятия и содержания следственных действий. Анализ понятия «следственные действия», а также теоретических и правовых основ их производства и, тем самым, выявление криминалистических особенностей имеет как научное, так и практическое значение и способствует также выбору оптимальной тактической линии следствия.

С этой целью автор проанализировал совпадающие, а иногда противоречащие точки зрения разных авторов, правовые положения уголовно-процессуального законодательства, и как следствие сформулировал понятие «следственные действия».

Следовательно, по мнению автора статьи, нужно выделять криминалистические особенности следственных действий. С учетом этого, следственные действия, с точки зрения их содержания, производятся по следующим этапам: подготовительный этап, основной или рабочий этап и завершающий этап. Каждый из данных составляющих этапов имеет важное значение для определения тактической линии следствия, а также для выбора конкретных тактических приемов.

FORENSIC NATURE OF INVESTIGATIVE ACTIONS

Vahe Yengibaryan
Professor at the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, Doctor of Legal Sciences

The Article is dedicated to the interaction of notion and nature, disclosure and analyze of typical features of investigative actions. By the

way, the analyze and disclosure of the features of the notion and theoretical and legal grounds of the implementation of the investigative actions has both scientific and practical importance, for clarifying the circle of its core tasks and aims, as well as for choosing productive tactical line.

To that end, the author has analyzed in the article coinciding, but sometimes contradicting standpoints of different authors, legal provisions of criminal process legislation, and as a result – has formulated the notion of the investigative action.

Thus – investigative actions, inpoint of view of their content, can be implenented within the three stages: preparation stage; acting or the main stage; concluding stage. Each of these stages has graet importance not only for definition of the tactical line of the whole investigation, but also for choosing of the effective tactical measure for certain investigation action.

Բանալի բառեր - *քննչական գործողություն, կրիմինալիստիկա, քրեական դատավարություն, մինչդատական վարույթ, քննիչ, քրեական դատավարության օրենսգիրք:*

Ключевые слова: *следственные действия, криминалистика, уголовный процесс, досудебный процесс, следователь, уголовно-процессуальный кодекс.*

Key words: *investigative action, forensic, criminal procedure, investigator, pretrial investigation criminal procedure code.*

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Նելլի Աղաբաբյան
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս

Քրեական գործերով անչափահասների իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերում տեղ գտած պահանջները վերաբերում են ոչ միայն անչափահաս կասկածյալներին և մեղադրյալներին, այլև անչափահաս տուժողներին և վկաներին:

Անչափահաս տուժողների և վկաների խոցելիությունը նույնպես պայմանավորված է վերջիններիս տարիքային, հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական և այլ առանձնահատկություններով, որոնք պահանջում են նրանց իրավունքների իրականացումն ապահովող լրացուցիչ երաշխիքներ: Դրանով պայմանավորված միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում սահմանված են քրեական վարույթին անչափահաս տուժողների մասնակցությամբ առանձնահատուկ ընթացակարգեր:

Ներպետական քրեադատավարական օրենսդրությունն անչափահաս տուժողների և վկաների՝ որպես քրեական դատավարությանը մասնակցող հատուկ սուբյեկտների համար սահմանել է որոշակի իրավական առանձնահատկություններ, որոնք տարբերակում են դնում այս ոլորտը կարգավորող իրավական նորմերի միջև: Մասնավորապես, ՔԴՕ-ի 59-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը», 153-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ *«Չի թույլատրվում բերման ենթարկել մինչև 14 տարեկան անչափահասներին, ...բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ կասկածվելու դեպքերի»*, 205-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ *«Արգելանքի տակ չգտնվող անչափահասները, որպես կանոն, կանչվում են*

իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով», 205.1-ին հոդվածը սահմանում է, որ «Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի... հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: ...Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի... համար՝ վեց ժամը: ...Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ», 207-րդ հոդվածը սահմանում է, որ «Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը, անկախ տարիքից, կարող է հարցաքննվել՝ պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ: ...Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը»:

Քրեական դատավարությունում տուժողի ակտիվությունը բխում է նրա իրավական վիճակի օրենսդրական ճիշտ կարգավորումից: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է ինչպես այդ հասկացության, այնպես էլ նրա իրավունքների և պարտականությունների ու դրանց իրականացումն ապահովող երաշխիքների հստակ կարգավորում: Այսօր փոփոխության են ենթարկվում քրեական դատավարության գրեթե բոլոր ինստիտուտները, այդ թվում նաև «տուժող» հասկացությունը և նրա կարգավիճակը: Տուժողի հասկացության ճիշտ բնորոշումը կարևոր է նաև անչափահաս անձանց իրավունքների պաշտպանության համար: Քրեական դատավարության օրենսգրքում չկա անչափահաս տուժողի առանձին բնորոշում կամ նրա իրավական վիճակի հատուկ կարգավորում[1]:

Քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ ՔԴՕ-ն անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից ունի բացթողումներ ու թերություններ, այսինքն՝ ամբողջությամբ հաշվի չեն առնվել քրեական գործերով անչափահաս տուժողների պաշտպանության համար առ-

[1] Տե՛ս Ս. Դիլբանդյան, Անչափահաս տուժողի իրավունակության և գործունակության կարգավորումը քրեական դատավարությունում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2018, թիվ 2(26), էջ 37:

կա խնդիրներն ու պահանջները[1]: Ընդհանուր առմամբ, քրեական դատավարության օրենսգրքում պակասում են տուժող երեխաների վերաբերյալ միջազգային պայմանագրերում տեղ գտած չափորոշիչները: Մասնավորապես, ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի 2005/20 (Ուղեցույց անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ քրեական գործերով արդարադատության վերաբերյալ (այսուհետ՝ ուղենիշ)) (ECOSOC Resolution 2005/20 Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime) բանաձևում սահմանված է, որ անչափահասներին պետք է վերաբերվեն հոգատար և զգայուն ձևով, արժանապատվությամբ և կարեկցանքով, ինչպես նաև տրամադրվի միջազգային չափանիշներին համապատասխան պաշտպանություն: ՄԱԿ-ի վերը նշված ուղենիշների 7-րդ կետի համաձայն՝ «Հանցագործությունից տուժած և վկա երեխաները կարող են ենթարկվել լրացուցիչ զրկանքների, եթե սխալմամբ դիտարկվեն որպես հանցագործներ՝ իրականում լինելով տուժածներ և վկաներ»[2]:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում (այսուհետև՝ ՀՀ) շարունակվող դատահրավական բարեփոխումների գործընթացի շրջանակում առանձնակի կարևորվում են երեխաների իրավունքներն ու դրանց պաշտպանությունը[3]:

---

[1] Տե՛ս Անչափահասների արդարության համատեքստում ՀՀ-ում անչափահասների հանդեպ դաժան վերաբերմունքի և խոշտանգումների ուսումնասիրություն, Երևան, 2013 թ. (ուսումնասիրությունն իրականացվել է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից), Անչափահասների գործերով դատավարությունների դիտարկում (հաշվետվություն), Երևան, 2011 (ծրագիրն իրականացրել է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ), http://hra.am/upload/JJ_FINAL_Arm.pdf:

[2] http://www.un.org/en/ecosoc/docs/2005/resolution%202005-20.pdf

[3] Այսպես՝ 2017 թվականի փետրվարի 2-ին ուժի մեջ է մտել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որի 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կան-

Սույն հոդվածի ուսումնասիրության շրջանակում քննարկման առարկա են դարձել հետևյալ հարցերը, որոնց հետազոտությունը հիմնված է քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետև՝ Նախագիծ) առկա կարգավորումների և միջազգային իրավական փաստաթղթերում սահմանված չափորոշիչների, ինչպես նաև արտասահմանյան երկրների օրենսդրական փորձի, մոդելների և դատական որոշումների վրա:

- Երեխայի լավագույն շահը և վարույթային ձևական պահանջները հաղթահարելու հնարավորությունները:
- Սեռական հանցագործությունների զոհ հանդիսացող անչափահաս երեխաների ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունից ելնելով՝ ներպետական օրենսդրությամբ պաշտպանողական դատավարական կառուցակարգերի նախատեսման անհրաժեշտությունը:

Երեխայի լավագույն շահը և վարույթային ձևական պահանջները հաղթահարելու հնարավորությունները:

Միջազգային չափանիշներին համապատասխան պետք է հավասարության նշան դրվի անչափահաս մեղադրյալների և տուժողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջև, մինչդեռ ինչպես գործող քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ Նախագծով այդ տարբերությունն ակնհայտ է:

խարգելում և պաշտպանություն: Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև երեխաների լավագույն շահի հաշվառմամբ նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությունից՝ Պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է երեխաների իրավունքների պաշտպանության բաժին: http://www.ombuds.am/resources/ombudsman/ upload

2015 թ. ՀՀ արդարադատության նախարարությանը կից գործում է «Անչափահասների արդարադատության» խորհուրդ: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303 որոշմամբ 51-րդ կետի պահանջն է քրեական դատավարության օրենսգրքով անչափահասի մասնակցությամբ առերեսման և այլ քննչական գործողությունների հատուկ կարգի սահմանումը՝ մասնավորապես հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը բացառելու համար (double victimization), /files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf:

Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշներում, որոնք հաստատվել են ՄԱԿ-ի 2005/20 բանաձևում, սահմանված է, որ հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատությունը պետք է իրականացվի մեղադրվող անձանց իրավունքների երաշխավորման պայմաններում: Այս գաղափարը զարգացնելով ՄԱԿ-ի 2005/20 բանաձևի հավելվածի 3-րդ բաժնի 8-րդ կետի (գ) ենթակետում՝ որպես սկզբունք սահմանված է, որ մեղադրյալ և դատապարտյալ իրավախախտների իրավունքները երաշխավորելու հետ մեկտեղ յուրաքանչյուր երեխա (խոսքը հատկապես տուժողի մասին է) իրավունք ունի պահանջելու, որպեսզի ուշադրություն դարձվի իր լավագույն շահի պաշտպանությանը:

ՄԱԿ-ի ուղենիշների հիման վրա ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Երեխաների իրավունքների միջազգային բյուրոյի հետ համատեղ մշակել ու շրջանառության մեջ են դրել «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխայի մասնակցությամբ արդարադատության վերաբերյալ» մոդելային օրենքը[1], որն ըստ էության իրավական պարտադիր ուժ չունի, սակայն առաջին համապարփակ իրավական աղբյուրն է այն մասին, թե ինչ հիմնական սկզբունքների վրա պետք է հենված լինի անչափահասների, հատկապես հանցագործություններից տուժած կամ հանցագործություններին վկա անձանց մասնակցությամբ վարույթները:

Միջազգային նշված փաստաթղթի վերլուծությունից կարելի է հանգել այն հետևության, որ անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանությունը պետք է հիմնված լինի հետևյալ գաղափարների վրա՝ 1) երեխայի լավագույն շահը[2] պետք է լինի վարույթն

[1] http://www.unicef.org/ceecis/UNDOC-UNICEF Model Law on CHildren.pdf

[2] «Երեխայի լավագույն շահ» - երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունք, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ հետապնդելով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն ու խնամքը: Ըստ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ «երեխայի

իրականացնող մարմնի առաջնային մտահոգության առարկան, 2) անչափահասի նկատմամբ վերաբերմունքը պետք է հենված լինի խտրականության արգելքի սկզբունքի վրա, այսինքն՝ վերաբերմունք՝ անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, կրոնից, համոզմունքներից, տարիքից, ընտանեկան կարգավիճակից, մշակույթից, լեզվից, ծագումից, ազգային կամ սոցիալական ծագումից, քաղաքացիությունից, սեռից, սեռական կողմնորոշումից, քաղաքական կամ այլ հայացքներից, հաշմանդամության առկայությունից, գույքային կամ այլ դրությունից, 3) անչափահասի նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի խիստ զգայուն և հոգատար, այն է՝ ամբողջ վարույթի ընթացքում հարգել վերջինիս արժանապատվությունը՝ հաշվի առնելով նրա կոնկրետ իրավիճակը, մասնավորապես՝ տարիքը, սեռը, հաշմանդամությունը, եթե այն առկա է, ինչպես նաև հասունության աստիճանը, 4) անչափահասի մասնավոր (անձնական) կյանքին միջամտությունը պետք է լինի նվազագույն, և այն պետք է տեղի ունենա միայն օրենքով սահմանված կարգով՝ նպատակ ունենալով ապահովելու ապացույցներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև արդար դատական քննության իրավունքի իրացումը, 5) անչափահաս տուժողի կամ վկայի գաղտնիությունը պետք է պաշտպանվի: Մասնավորապես, այն տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել որպես վկա կամ տուժող հանդիսացող անչափահասին, պետք է հրապարակվեն միայն դատարանի թույլտվությամբ:

Ինչպես ՀՀ ՔԴՕ-ով, այնպես էլ Նախագծով անչափահաս տուժողների մասնակցությամբ վարույթում նախատեսված չեն մոդելային օրենքում տեղ գտած վերը թվարկված սկզբունքները, որոնք,

---

լավագույն շահ» գնահատել նշանակում է գնահատել բոլոր այն տարրերը, որոնք անհրաժեշտ են երեխայի կյանքում որևէ միջամտություն իրականացնելու համար: Ընդ որում՝ այդ որոշումը բավական անհատական է, քանի որ յուրաքանչյուր դեպք, յուրաքանչյուր երեխա անհատ է և պահանջում է առանձնահատուկ մոտեցում: Երեխայի լավագույն շահի գնահատումը ենթադրում է *հարցազրույցների* իրականացում երեխայի և նրա ծնողների/խնամակալների հետ, *տնային այցելությունների* իրականացում, տեղեկատվության ստացում բոլոր այն կառույցներից, որտեղ երեխան ընդգրկված է եղել նախկինում կամ ընդգրկված է տեղեկատվության ստացման պահին:

կարծում ենք, որ ունեն առանցքային նշանակություն անչափահաս տուժողների իրավաչափ շահերի պաշտպանության ապահովման համար: Օրինակ՝ դահլիճը պետք է փորձել կահավորել այնպես, որ անչափահասի մոտ չառաջանա վախի ու անհանգստության զգացում, կամ հեռացվեն պետության խորհրդանիշները, հնարավորինս փոփոխվի կահավորանքը, այդ թվում նաև հաշվի առնել դատավորի կողմից առանց պատմուճանի նիստ անցկացնելու հնարավորության հարցը, ինչպես նաև անչափահասին հնարավորություն տալ նստելու իր ներկայացուցչի կողքին, ինչպես նաև վարույթն իրականացնել դատավարական ձևի ոչ խստիվ պահպանմամբ և մասնագիտական եզրաբանության հնարավորինս սակավ առկայությամբ:

ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքով հնարավոր է համարել որոշակի դատավարական ձևը չպահպանելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանցագործություններից տուժել են երեխաներ: Նման դատավարությունները համարվում են դաժան փորձություն, քանի որ երեխաները ստիպված են այդ ընթացքում «շփվել» իրենց նկատմամբ հանցանք կատարած անձանց հետ: *ՄԻԵԴ-ն «Մ. Մ.-ն ընդդեմ Իտալիայի»* գործով [4] գտել էր, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին և 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետերի խախտում, քանի որ Իտալիայի ներպետական դատարանը հիմնվել էր միայն այն հայտարարությունների վրա, որոնք կատարվել էին ԱՄՆ-ում դատավարության ընթացքում, և դիմումատուն դատավարության ոչ մի փուլում վկայի ներկայությամբ չէր կարողացել դրանց հակափաստարկ ներկայացնել: Սակայն այն դեպքերում, երբ մեղադրյալի պաշտպանը կարողացել է անգամ միջնորդավորված կերպով հարցեր հղելու տուժողին, ապա այդ դեպքում դատարանը գտել է, որ արդար դատաքննության իրավունքը չի խախտվել [4]: ՄԻԵԴ-ը հնարավոր է համարում տուժող երեխայի հարցաքննության կատարումը գրավոր եղանակով՝ հոգեբանի ներկայությամբ, առանց մեղադրյալի կամ նրա պաշտպանի ներկայության, կամ այնպիսի սենյակում, որը պաշտպանության կողմին հնարավորություն կտա ներ-

կա լինելու դատավարությանն անուղղակի կերպով, օրինակ՝ միակողմանի հայելու կամ տեսանկարահանման միջոցով [5, 6][1]:

Ինչպես տեսնում ենք, երեխայի լավագույն շահը պետք է հաշվի առնել վարույթի բոլոր փուլերում՝ վարույթային ձևի պահանջները հաղթահարելու հնարավորությամբ, սակայն բովանդակային կանոնները պահպանելու երաշխիքների չոտնահարմամբ: Այսպիսով՝ առկա են բավականին միջազգային իրավական հիմքեր *դատավարական ձևի պահանջների չպահպանման վերաբերյալ,* և անչափահաս տուժողի շահերի պաշտպանությունից ելնելով՝ անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել և գործնականորեն կիրառել դրանք:

Սեռական հանցագործությունների զոհ հանդիսացող անչափահաս երեխաների ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունից ելնելով՝ ներպետական օրենսդրությամբ պաշտպանողական դատավարական կառուցակարգերի նախատեսման անհրաժեշտությունը:

Անչափահաս տուժողների մասնակցությամբ քրեական վարույթի իրականացումը պահանջում է առանձնահատուկ մոտեցում, հատկապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է սեռական բռնությունից տուժած երեխաներին:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի 2010-2017 թթ. պաշտոնական հաշվետվության՝ 139 քրեական գործերով մասնակից տուժող երեխաներից 59-ը տուժել են սեռական բռնությունից: Պաշտոնական վիճակագրության համաձայն սեռական բնույթի հանցագործությունների 2/3-ը կատարվել է երեխաների դեմ, ինչը, իհարկե, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մեծահասակ տղամարդկանց և կանանց դեմ կատարվող սեռական հանցագործությունները լատենտային են, քանի որ շատ հաճախ վերջիններս այդ մասին չեն հայտնում: Կարևոր է նշել, որ երեխաների նկատմամբ կատարված սեռական ոտնձգություններն իրականում նույնպես շատ ավելին են, քան այդ մասին վկայում է պաշտոնական վիճակագրությունը: Պատճառներից հիմնականն ամոթն է, ստիգմայից, պիտակավորվե-

[1]https://hudoc.echr.coe.int/eng#{%22fulltext%22:[%22\%22CASE%20OF%20A.M.%20v.%20ITALY\%22%22],%22documentcollectionid2%22:[%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22],%22itemid%22:[%22001-58379%22]}

լուց խուսափելը: Նշված երևույթը բնութագրական է ոչ միայն Հայաստանի, այլև շատ այլ, այդ թվում նաև՝ զարգացած երկրների համար: Լատենտայնության պատճառներից է նաև դատավարությունից խուսափելը. այն կրկնակի, եռակի, քառակի վիկտիմիզացնում[1] է տուժողին և ստիպում վերջինիս հրաժարվել այդ ծանր, նույնաբովանդակ, վարույթային ընթացակարգն անցնելուց:

Կարևոր ենք համարում նշել, որ այսօր Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը վերջին 30 տարիների ընթացքում աշխարհի տարբեր երկրներում կատարում է «Մանկության բացասական փորձառություններ» (Adverse Childhood Experiences/ASEs) վերտառությամբ հետազոտություն, որը հանգում է հետևյալին՝ յուրաքանչյուր անբարենպաստ փորձառություն երեխայի նկատմամբ, ինչպիսիք են ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկվելը, ընտանիքում ամուսնալուծված ծնողներ ունենալը, ընտանիքում թմրամիջոցներ կամ ալկոհոլ օգտագործող ունենալը, դատավարական նույնաբովանդակ ծանր ընթացակարգերի միջով անցնելը և այլ ազդեցությունները, որոնք կրել է երեխան իր փոքր տարիքում, ձևավորում է իր՝ մարդկային բացասական ազդեցությունների գործակիցը: Այս հետազոտությունն առավել քան հատկանշական է, որովհետև արվել է աշխարհի բազմաթիվ երկրներում, բնակչության ամենատարբեր տարիքային խմբերի շրջանում և շատ երկար ժամանակահատվածում:

Վերոգրյալից կարող ենք հետևություն անել, որ առողջ, կենսունակ սերունդ, հասարակություն ունենալու համար անհրաժեշտ

[1] Երկրորդային վիկտիմիզացիա և ռեվիկտիմիզացիա – մոդելային օրենքի 1-ին գլխում նշված հասկացությունների համաձայն՝ երկրորդային վիկտիմիզացիա նշանակում է վիկտիմիզացիա, որին ենթարկվում է հանցագործությունից տուժած անձը ոչ թե որպես հանցավոր արարքի ուղղակի հետևանքի, այլ պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների արդյունքում, իսկ ռեվիկտիմիզացիան՝ իրավիճակ, երբ անձը որոշակի տևական ժամանակահատվածի ընթացքում ենթարկվում է մեկից ավելի քրեական միջադեպերի: Երբեմն հնարավոր է իրավիճակ, երբ երկրորդային վիկտիմիզացիան կարող է ավելի լուրջ հետևանքներ ունենալ երեխայի հոգեբանության վրա, քան ռեվիկտիմիզացիան:

է բացառել երեխաների նկատմամբ կիրառվող ցանկացած անբարենպաստ փորձառություն[1]:

Անչափահաս տուժողների երկրորդային վիկտիմիզացիայի (double victimization) կանխարգելման հիմնական եղանակը երեխայի մասնակցությամբ նույնաբովանդակ դատավարական գործողությունների կատարման սահմանափակումն է[2]:

Ինչպես նշվեց, ՀՀ ՔԴՕ-ն չի պարունակում նորմեր անչափահաս տուժողների հարցաքննությունների քանակի հնարավոր նվազեցման, հարցաքննությունների տեսաձայնագրառումն և այդ տեսաձայնագրությունները քրեական դատավարության մյուս փուլերում հնարավորության դեպքում օգտագործելու, քննչական գործողությունները նրանց գտնվելու վայրում կատարելու, անչափահաս տուժողին ապացույցներ հետազոտելիս դատական նիստերի դահլիճից ժամանակավորապես հեռացնելու, ինչպես նաև անչափահաս տուժողին կրկին չվնասելուն միտված միջազգային հանրության կողմից ընդունելի մի շարք վերապահումներ:

Քննարկվող հարցի առավել ամբողջական բացահայտման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ոլորտի՝ միջազգային չափանիշների, մոդելների և արտասահմանյան երկրների օրենսդրական փորձի վկայակոչումը:

Այսպես՝ ՄԱԿ-ի ուղենիշների 24-րդ կետն ուղղակիորեն նախատեսում է, որ անչափահաս տուժողներն ու վկաները պետք է ստանան *օժանդակ անձանց օգնությունը*, ինչպիսիք կարող են լինել, օրինակ, անչափահաս տուժողների կամ վկաների հոգեբանությունն ուսումնասիրած մասնագետները (հոգեբաններ). վերջիններս գործին պետք է ներգրավվեն անչափահաս տուժողի կամ վկայի ներգրավվածության սկզբնական պահից և իրենց լիազորությունները շարունակեն մինչև նմանատիպ ծառայության անհրաժեշտութ-

---

[1] https://www.samhsa.gov/capt/practicing-effective-prevention/prevention-behavioral-health/adverse-childhood-experiences

[2] Տե՛ս Ա. Ղամբարյան, Ս. Սիմոնյան, Ցուցմունքների դատական դեպոնացումը՝ որպես անչափահաս տուժողի շահերի և մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի հավասարակշռման միջոց, «Օրինականություն. ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես», Երևան, 2015, թիվ 87, էջ 18:

յան բացակայությունը:

Մանկավարժի կամ հոգեբանի մասնակցության պարտադիրության մասին նորմեր է պարունակում նաև մոդելային օրենքը, մասնավորապես՝ մոդելային օրենքի առաջին գլխի (ա) ենթակետում «օժանդակող անձ» հասկացությունը բացատրում է որպես հատուկ գիտելիքներ ունեցող, վերապատրաստված այն անձինք, որոնք պետք է օժանդակեն անչափահաս տուժողներին դատավարության ողջ ընթացքում:

Մոդելային օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է, որ անչափահասների ներգրավվածությամբ քրեական գործերի քննությունն իրականացվի *հատուկ վերապատրաստված քննիչի կողմից*, որը հարցաքննություններն իրականացնելիս անչափահասների նկատմամբ կցուցաբերի հատուկ մոտեցում: Մոդելային օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ երեխաների ցուցմունքները ներառում են նաև այն ցուցմունքները, որոնք երեխան տվել է *տեխնիկական հաղորդակցության միջոցների կամ երեխայի հոգեբանությունը հասկացող մասնագետի օգնությամբ:*

«Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպական խորհրդի 2007 թվականի կոնվենցիայի 35-րդ հոդվածը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ նրա համար, որ.

ա) երեխայի հետ հարցաքննություններն անցկացվեն առանց անհարկի ձգձգումների,

բ) երեխայի հետ հարցաքննությունները, անհրաժեշտության դեպքում, անցկացվեն այդ նպատակի համար նախատեսված կամ հարմարեցված տարածքներում,

գ) երեխայի հետ բոլոր հարցաքննությունները, անհրաժեշտության և հնարավորության դեպքում, անցկացվեն միևնույն անձանց կողմից,

դ) հարցաքննությունների թիվը լինի հնարավորինս քիչ, և անցկացվեն քրեական հետաքննության նպատակների խիստ անհրաժեշտության դեպքում(…)»[1]:

[1] http://www.coe.int/t/dghl/standardsetting/children/Lanzarote%20Convention_En.pdf

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Սեռական շահագործումից երեխաների պաշտպանության վերաբերյալ» 2001 թվականի N R(2001) 16 հանձնարարականի (On the Protection of Children against Sexual Exploitation) 33-րդ կետը սահմանում է, որ անդամ պետությունները սեռական շահագործումից տուժած երեխաներից և անչափահաս վկաներից ցուցմունքներ վերցնելիս պետք է ապահովեն այնպիսի հատուկ պայմաններ, որոնք կնպաստեն ցուցմունքներ տալու քանակի կրճատմանը, ինչն իր հերթին կհանգեցնի տուժողներին, վկաներին, նրանց ընտանիքի անդամներին պատճառված վնասի նվազեցմանը և կբարձրացնի նրանց ցուցմունքների արժանահավատությունը՝ հարգելով վերջիններիս արժանապատվությունը[1]:

Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2011/92EU «Երեխաների սեռական չարաշահման և սեռական շահագործման, մանկական պոռնոգրաֆիայի և Խորհրդի 2004/68/JHA շրջանային որոշումը փոխարինելու վերաբերյալ» հրահանգի (On combating the sexual abuse and replacing Council Framework 2004/68/JHA Decision) 20-րդ հոդվածը (Մինչդատական վարույթում և դատական քննության փուլում երեխա տուժողների պաշտպանությունը) սահմանում է.

«(…) 5. Անդամ պետությունները պետք է հավաստիանան, որ 3-ից 7-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների դատական քննության փուլում՝

ա) դատական քննություններն անցկացվեն դռնփակ,

բ) դատական նիստերի դահլիճում երեխայի հարցաքննությունը հնարավորության դեպքում անցկացվի այնպես, որ երեխան անձամբ ներկա չգտնվի դատական նիստերի դահլիճում. հարցաքննությունը պետք է անցկացվի, մասնավորապես, համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ (…)»[2]:

Անհրաժեշտ ենք համարում խոսել *«Barnahus»*[3] մոդելի մասին, որը բավականին տարածում է ստացել եվրոպական երկրներում:

---

[1] http://www.ibcr.org/editor/assets/thematik_report/2/2005_compilation_en_1.pdf

[2] http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32011L0093

[3] «Barnahus» սկանդինավյան տերմին է, որը թարգմանաբար նշանակում է «երեխայի տուն»:

Մոդելը հիմնադրվել է Իսլանդիայում, հետագայում տարածվել է նաև Շվեդիայում, Դանիայում, Նորվեգիայում, իսկ 2017 թվականի վերջին՝ նաև Արևելյան Եվրոպայում[1]: *«Barnahus»* -ի մոդելը ոգեշնչված է հետաքրքիր ամերիկյան փորձով: Տարբերությունն այն է, որ ԱՄՆ-ում երեխաների շահերի պաշտպանության կենտրոնները (Children's Advocacy Center(CAC)) իրենցից ներկայացնում են ՀԿ-ներ, որոնք համագործակցում են նահանգային իշխանությունների հետ՝ դատարանների, դատախազության, և իրականացնում են համապատասխան ծառայություններ[2]: "Barnahus"-ը, որը կառուցված է նույն այս (CAC) մոդելով, պետականացվեց. այն իր բնույթով եզակի, բազմաոլորտային, միջսեկտորալ պետական հաստատություն է, որի շրջանակում համագործակցում են առողջապահության նախարարությունը, դատարանները, դատախազությունը, քննչական մարմինները, ոստիկանությունը, ինչպես նաև սոցիալական հարցերի նախարարությունը՝որպես երեխայի պաշտպանության հիմնական խնդիրներով զբաղվող կառույցներ: Այս մոդելի հիմնական նպատակը և իմաստը հետևյալն է՝ երեխան, որը ենթարկվել է սեռական բռնության, պետք է *հարցաքննվի մեկ անգամ և հնարավորինս քիչ վիկտիմիզացվի:* Այս կապակցությամբ Մոդելն առաջարկում է, որ երեխայի հարցաքննութունն իրականացվի ոչ թե ոստիկանությունում կամ դատարանում, այլ բնակարանային պայմաններում՝ երեխաների համար հարմարեցված մանկական հատուկ կենտրոններում, որտեղ աշխատում են հատուկ վերապատրաստված պետական աշխատողներ՝սոցիալական աշխատողներ, մանկական հոգեբաններ, առողջապահության ոլորտի աշխատակիցներ և, ամենակարևորը, վերապատրաստված հարցաքննություն իրականացնող անձինք:

«Barnahus» մոդելը տարբեր երկրներում գործում է տարբեր կերպ: Օրինակ՝ Իսլանդիայում սահմանված է, որ հարցաքննությունը պետք է իրականացվի հատուկ արդարադատության ոլորտում հարցաքննություն իրականացնելու համար վերապատրաստված հոգեբանի կողմից: Հարցաքննությունն իրականացվում է հայելային

[1] https://childhub.org/en/promising-child-protection-practices/what-barnahus-and-how-it-works

[2] http://www.cac-ottawa.org/

սենյակում, որտեղ հայելու մյուս կողմում ներկա են գտնվում քրեական գործի քննություն իրականացնող մարմինները՝ քննիչը, դատախազը, դատավորը, որի վարույթում գտնվում է քրեական գործը, ինչպես նաև երեխայի շահերը ներկայացնող անձինք՝ փաստաբանը, օրինական ներկայացուցիչը և մեղադրյալի պաշտպանը:

Շվեդիայում այն ստացավ հետևյալ կարգավորումը՝ հարցաքննությունն իրականացվում է մանկական հոգեբանության հատուկ կուրս անցած և հմտությունների տիրապետող մասնագիտացված քննիչի կողմից: Կարելի է ասել, որ բոլոր այն երկրներում, որտեղ կիրառվում է վերը նշված մոդելը, հարցաքննությունը ձայնագրվում է, որպեսզի հետագայում այն որպես ապացույց օգտագործվի դատաքննության ժամանակ:

Անկասկած քննարկվող հարցը սերտորեն առնչվում է մրցակցության, ինչպես նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների հետ, քանի որ նախատեսվող կարգավորումներն ինչ-որ չափով սահմանափակում են մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Սակայն Մոդելն այս խնդրի հետ կապված տվել է լուծման իր տարբերակները: Օրինակ՝ Դանիայի օրենսդրությամբ սահմանված է, որ երեխան հարցաքննվում է նույն անձի կողմից, նույն կենտրոնում և նույն պայմաններում՝ առանց ժամանակահատվածի էական տարբերության, ոչ թե մեկ, այլ երկու անգամ: Առաջին հարցաքննության արդյունքներից հետո մեղադրյալի պաշտպանը կազմում է այն հարցերի ցանկը, որոնք պետք է տրվեն երեխային երկրորդ հարցաքննության ժամանակ: Իսկ դատավորի ներկայությունը հարցաքննությանը հնարավորություն է տալիս անչափահաս տուժողի ցուցմունքները հետագայում օգտագործելու որպես ապացույց: Ինչպես տեսնում ենք, մոդելն այս եղանակով փորձել է լուծել մրցակցության սկզբունքի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման պահպանման խնդիրները:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք արձանագրել, որ Մոդելի ներդրմամբ 80-ական թթ. վերջից մինչ այսօր մոտ երեք անգամ աճել է սեռական բռնության զոհ դարձած երեխաների մասնակցությամբ՝ բացահայտվող հանցագործությունների թիվը: Պատճառն այն է, որ երեխայի ծնողը գիտակցում է, որ իրականում անցնելու է բավականին ոչ ցավոտ ընթացակարգերի միջով և այս առումով ավելի պատ-

րաստակամ է հաղորդելու տեղեկություններ հանցագործության մասին, որի արդյունքում բացահայտելիության աստիճանը բարձրանում է, իսկ բացասական հետևանքները երեխայի նկատմամբ պակասում են:

Արտասահմանյան երկրների օրենսդրական փորձն անչափահաս տուժողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ոլորտում:

Սեռական հանցագործությունների զոհ անչափահաս երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով՝ առանձին պետությունների քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսվում են դատավարական կառուցակարգեր, որոնք կոչված են ապահովելու երեխայի ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը:

Գերմանիա: Գերմանիայի ՔԴՕ-ի 247-րդ հոդվածը սահմանում է՝ դատարանի կողմից ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելու հիմքերից մեկը, այն է՝ 18 տարին չլրացած անձանց հարցաքննությունը, այն դեպքերում, երբ առկա է վտանգ, որ ամբաստանյալի ներկայությունը բացասաբար կանդրադառնա հարցաքննվողի ֆիզիկական և հոգևոր առողջության վրա: Բացի դրանից՝ Գերմանիայի ՔԴՕ-ի 58-րդ գլխում ամրագրված է, որ տուժողի և վկայի հարցաքննությունը պետք է տեսաձայնագրվի և դատարանում հետազոտվի որպես ապացույց[1]:

ՄԻԵԴ-ը «Պ. Ս.-ն ընդդեմ Գերմանիայի» գործով նշել է, որ անչափահաս տուժողների, մասնավորապես՝ սեռական հանցագործությունների անչափահաս զոհերի մասնակցությամբ իրականացվող քրեական դատավարության ընթացքում պետք է հաշվի առնել նրանց շահերի պաշտպանությունը, սակայն հաստատել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, քանի որ առաջին ատյանի դատարանը մերժել է երեխային հոգեբանական փորձաքննության ենթարկելու միջնորդությունը, իսկ վերաքննիչ դատարանն այդ փորձաքննությունը նշանակել է դեպքից ութ ամիս անց: Ս.-ի ծնողները հրաժարվել են երեխային ներկայացնել դատարան, քանի որ վերջինս ոտնձգության հետևանքով ձեռք է բերել նեյրոդերմիտ հիվանդություն, և նրա առողջական վիճակի վատթարացման վտանգ է

[1] http://www.gesetze-im-internet.de/englisch_stpo/englisch_stpo.html

եղել: Ներպետական դատարաններն թեև նշել են, որ դատարանում Ս.-ի հարցաքննության բացակայությունը էական բացթողում է, սակայն նրան չեն հրավիրել դատարան՝ հիմք ընդունելով երեխայի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանքը և հոգեբանի եզրակացությունը, ըստ որի՝ դատարան ներկայանալու դեպքում կատարվածը վերհիշելու պատճառով երեխայի հոգեբանական վիճակը կրկին կվատթարանա[1]:

Ուկրաինա: Ուկրաինայի ՔԴՕ-ն ևս նորմեր է պարունակում անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման առանձնահատկությունների վերաբերյալ: Մասնավորապես, Ուկրաինայի ՔԴՕ-ի 224-րդ հոդվածի 9-րդ կետի 5-րդ պարբերության համաձայն, սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև բռնությամբ կատարվող հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթով նախկինում հարցաքննված երկու և ավելի անձանց ցուցմունքների միջև հակասությունները լուծելու նպատակով փոքրահասակ կամ անչափահաս երեխայի ու կասկածյալի միջև հարցաքննություն չի կարող անցկացվել: Իսկ ՔԴՕ-ի 226-րդ հոդվածը սահմանում է, որ մանկահասակի կամ անչափահասի հարցաքննությունն անցկացվում է օրինական ներկայացուցչի, մանկավարժի կամ հոգեբանի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև բժշկի մասնակցությամբ[2]:

Ռուսաստանի Դաշնություն: ՌԴ ՔԴՕ-ում 2013 թվականի կատարված փոփոխությունների արդյունքում անչափահաս տուժողի մասնակցությամբ դատավարական ձևի առանձնահատկություններ սահմանված են ոչ միայն հարցաքննությունների, այլև առերեսման և ճանաչման ներկայացնելու համար: Այսպես՝ՌԴ ՔԴՕ-ի 191-րդ հոդվածը սահմանում է.

«(…) Հարցաքննությանը, առերեսմանը, ճանաչման ներկայացմանը և ցուցմունքների հետազոտմանը 16 տարին չլրացած կամ 16 տարին լրացած, սակայն հոգեկան խանգարման կամ հոգեկան թեր-

[1]https://hudoc.echr.coe.int/eng#{%22fulltext%22:[%22\%22CASE%20OF%20P.S.%20v.%20GERMANY\%22%22],%22documentcollectionid2%22:[%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22],%22itemid%22:[%22001-59996%22]}

[2] http://www.kalinovsky-k.narod.ru/zakon/UPK_UkrainiI_2012.htm

զարգացմամբ տառապող անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցությամբ սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում հոգեբանի մասնակցությունը պարտադիր է:

5. Սույն գլխով նախատեսված՝ քննչական գործողությունների տեսաձայնագրումը պարտադիր է անչափահաս տուժողի կամ վկայի մասնակցության դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ եթե տուժողը կամ վկան կամ նրանց օրինական ներկայացուցիչը դեմ են»:

Ռուսաստանի Դաշնության ՔԴՕ-ի 280-րդ հոդվածը նախատեսում է.

«(…) 6. Կողմերի միջնորդությամբ, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ՝ 18 տարին չլրացած անչափահաս տուժողի կամ վկայի իրավունքների պաշտպանության նպատակով հարցաքննությունը կարող է անցկացվել ամբաստանյալի բացակայությամբ, ինչի մասին դատարանը կայացնում է համապատասխան որոշում[1]:

Լատվիա: Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2011/92EU «Երեխաների սեռական չարաշահման և սեռական շահագործման, մանկական պոռնոգրաֆիայի և Խորհրդի 2004/68/ՀՀԱ շրջանային որոշումը փոխարինելու վերաբերյալ» հրահանգի պահանջներն իմպլեմենտացնելու նպատակով Լատվիայում 2014 թվականին նախաձեռնվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց արդյունքում ՔԴՕ-ի 152-րդ հոդվածը համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին: Մասնավորապես, հոդվածում ավելացվել է, որ անչափահասների հարցաքննությունը պետք է իրականացվի անհապաղ, այնպիսի անձանց կողմից, որոնք հատուկ վերապատրաստված են և ունեն այս ոլորտում հատուկ գիտելիքներ: Սույն հոդվածում սահմանվել է նաև դրույթ, ըստ որի՝ անչափահասի հարցաքննությունը, հնարավորության դեպքում, պետք է անցկացվի միևնույն անձի կողմից[2]:

---

[1] http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/28254ddfdbdb15e1dc9fa2ad2066769e1a44e903/

[2] http://www.coe.int/t/dghl/standardsetting/children/Latvia_Addendum_e.pdf

Էստոնիա: Էստոնիայի ՔԴՕ-ում կատարված փոփոխությունների համաձայն՝ դատարանն իրավասու է անչափահասին չհրավիրել դատարան և թույլատրել որպես ապացույց ներկայացնել նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, եթե՝ 1. պաշտպանության կողմը հնարավորություն է ունեցել նախաքննության ընթացքում հարցեր տալու վկային, 2. եթե վկան 10 տարեկանից փոքր է, իսկ հարցաքննությունը կվնասի նրա հոգեբանությանը, 3. եթե վկան փոքր է 14 տարեկանից, իսկ հարցաքննությունը վերաբերում է սեռական հանցագործություններին[1]:

Կանադայի Գերագույն դատարանն անդրադարձել է սեռական հանցագործություններով անչափահաս երեխաների՝ մինչև դատարան տրված ցուցմունքների թույլատրելիությանը: Այսպես՝ «Ռ.-ն ընդդեմ Խանի» ((1990) 2 S.C.R.531) գործով Կանադայի Գերագույն դատարանը նշել է, որ գործը քննող դատավորը թույլ է տվել դատական սխալ՝ արգելելով երեք ու կես տարեկան սեռական բռնության զոհին առանց երդման վկայություն տալ, ինչպես նաև այն, որ դատավորը թույլ չէր տվել մեղադրանքի կողմին ներկայացնել սեռական ոտնձգության ենթարկվելուց 15 րոպե հետո երեխայի՝ իր մայրիկին տված վկայությունը: Եթե առանց երդման տրված վկայությունը չէր կարող օգտագործվել, ապա կստեղծվեր մի վտանգավոր իրավիճակ, որի դեպքում փոքր երեխաների հանդեպ սեռական հանցանքներով հնարավոր չի լինի իրականացնել հետապնդում: Երեխայի մայրիկի ցուցմունքի առնչությամբ Կանադայի Գերագույն դատարանը գտել է, որ կարելի է դրսևորել «ասեկոսե» ապացույցի վերաբերյալ ավելի ճկուն, բայց «սկզբունքային» մոտեցում: Անկախ զգուշության կարիքից՝ «ասեկոսե» ապացույցը կարող էր ընդունվել, եթե բավարարված էին երկու հիմնական պահանջները՝ անհրաժեշտությունը և արժանահավատությունը[2]:

Սեռական հանցագործության զոհ անչափահասին դատարանում առերես հարցաքննելու հարցին անդրադարձել է նաև ԱՄՆ Գերագույն դատարանը: Այսպես՝ 1988 թվականին «Coy ն. Lowa» գործով Գերագույն դատարանը գտել է, որ խախտվել է մեղադրյալի

[1] https://www.legislationline.org/documents/section/criminal-codes/country/33/Estonia/show

[2] https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/642/index.do

հակընդդեմ հարցման իրավունքը, քանի որ սեռական հանցագործության երկու զոհերը հարցաքննվել են միակողմանի տեսակապի միջոցով՝ պաշտպանիչ էկրանի հետևում, որի պայմաններում երեխաները չեն տեսել մեղադրյալին, իսկ մեղադրյալը ոչ պարզ տեսանելի պայմաններում է հետևել հարցաքննությանը: Մեղադրյալը բողոքարկել է, որ պաշտպանիչ էկրանի կիրառմամբ երեխաների հարցաքննությամբ խախտվել է դեմ առ դեմ՝ հակընդդեմ հարցման իրավունքը: ԱՄՆ Գերագույն դատարանը նշված գործով հաստատել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտման փաստը և սահմանել, որ հակընդդեմ հարցումը պետք է իրականացվի դեմ առ դեմ: Սակայն երկու տարի անց ԱՄՆ Գերագույն դատարանը Maryland v. Craig գործով վերը նշված ընդհանուր կանոնից սահմանել է բացառություն: ԱՄՆ Գերագույն Դատարանն ուժի մեջ է թողել Մերիլենդ նահանգի օրենսդրական կարգավորումը, որի համաձայն՝դատավորը հնարավորություն ունի երեխայի հարցաքննությունն իրականացնելու միակողմանի տեսակապի միջոցով: Այս դեպքում երեխան, դատախազը և մեղադրյալի փաստաբանը գտնվել են առանձին սենյակում, իսկ դատավորը, երդվյալ ատենակալները և մեղադրյալը՝ դատական նիստերի դահլիճում: Երեխան ուղղակի և առերես հարցաքննության է ենթարկվել առանձին սենյակում, իսկ դատական նիստերի դահլիճում գտնվող դատավարության մասնակիցները հարցաքննությանը հետևել են տեսակապի միջոցով[1]:

Քննարկվող հարցերի վերաբերյալ էական փոփոխություններ է նախատեսում Նախագիծը, որում ներկայացված կարգավորումները սկզբունքորեն տարբերվում են գործող ՔԴՕ-ից: Այս առաջընթացը, իհարկե, ողջունելի է, սակայն միջազգային չափանիշների տեսանկյունից՝ ոչ բավարար: Նախագծում նախատեսված է հոգեբանի մասնակցության հնարավորություն երեխայի մասնակցությամբ կատարվող քննչական գործողություններին: Մասնավորապես՝ Նախագծի 112-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված է, որ «Անչափահասի կամ անգործունակի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը ներգրավվում է հոգեբանի որակավորում ունեցող անձ (հոգեբան): Անչափահաս կամ անգործունակ

[1] https://supreme.justia.com/cases/federal/us/497/836/

տուժողի կամ վկայի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանն իրավունք ունի մասնակցել նրա օրինական ներկայացուցիչը», «Քննչական գործողությունը սկսելուց առաջ օրինական ներկայացուցչին և հոգեբանին պարզաբանվում են քննչական գործողությանը մասնակցելու և դիտողություններ շարադրելու իրավունքները: Ցուցմունք տալու հետ կապված՝ քննչական գործողությանը մասնակցող օրինական ներկայացուցչին և հոգեբանին բացատրվում է նաև հարցեր տալու նրանց իրավունքը: Օրինական ներկայացուցչին և հոգեբանին բացատրվում է անչափահասին հարցեր տալու, իսկ հոգեբանին՝ նաև անչափահասի մասնակցությամբ կատարվող քննչական գործողության վերաբերյալ մասնագիտական առաջարկներ ներկայացնելու իրավունքը: Քննիչն իրավունք ունի հանել տրված հարցերը կամ չընդունել ներկայացված առաջարկները,սակայն, ամեն դեպքում, դրանք պետք է ներառվեն արձանագրությունում»:

Նախագծի կարգավորումների համաձայն՝ հոգեբանը կմասնակցի նաև դատական քննության փուլում անչափահաս տուժողի հարցաքննությանը (Նախագծի հոդված 329): Ճիշտ է, հոգեբանի մասնակցության նախատեսումն անչափահաս երեխայի մասնակցությամբ գործերի քննությանը սկզբունքային, առաջադիմական մոտեցում է[1], սակայն պետք է նշել, որ հոգեբանի դերը և նրա ներկայության նպատակը հստակ սահմանված չեն Նախագծի համապատասխան հոդվածներում:

Նախագծի 9-րդ գլուխը վերաբերում է քրեական վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանությանը. 228-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված է. «Եթե վկայի կամ տուժողի նկատմամբ կիրառված է սույն օրենսգրքի 76-րդ հոդվածով նախատեսված հատուկ պաշտպանության միջոց, ապա հարցաքննությունը կատարվում է դատական վարույթի մյուս մասնակիցների տեսողական դիտարկումից դուրս և առանց վկայի կամ տուժողի իրական անձնական տվյալները բացահայտելու, ինչի վերաբերյալ կայացվում է որոշում: Նախագծի այս հոդվածներում երեխաները չեն հիշատակ-

[1] Տե՛ս նաև « ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1047-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի որոշման նախագիծ:

վում: Ընդհանրապես, տուժող երեխաների դեպքում խորհուրդ են տրվում քրեական վարույթի կողմ հանդիսացող անձի կամ նրա ընտանիքի անդամի կյանքին, առողջությանը կամ օրինական շահերին «իրական վտանգ» սպառնալու դեպքում ձեռնարկվելիք միջոցներից մի քանիսը, օրինակ՝ «հատուկ միջոցառումների» կիրառումը, որոնք տուժողին թույլ են տալիս ցուցմունք տալ, որոնցով դատական նիստերը դռնփակ են լինելու հասարակության համար (Նախագծի 73.1-ին և 74.1.8-9-րդ հոդվածներ): Բացի դրանից՝ թեև «հատուկ միջոցառումներից» մի քանիսը կարող են էական հետևանքներ ունենալ տվյալ անձի ընտանիքի համար, սակայն սահմանված չէ պահանջ առ այն, որ հարկավոր է հաշվի առնել այդ միջոցին առնչություն ունեցող երեխաների շահերը: Նպատակահարմար կլիներ «պաշտպանության հատուկ միջոցներից» մի քանիսը հանցագործությունից կամ, առնվազն, բռնությամբ զուգորդված հանցագործություններից տուժած երեխաների նկատմամբ սովորական հիմունքներով կիրառելի դարձնելու հնարավորությունը Նախագծում նախատեսելը:

Նախագիծն առաջին անգամ սահմանում է քննչական գործողությունների կատարման ժամանակ տեսակապի օգտագործման հնարավորություն: Նախագծի 327-րդ հոդվածի համաձայն՝ «Այն բացառիկ դեպքերում, երբ հարցաքննության ենթակա անձի ներկայությունը դատարանում անհնար է կամ կարող է սպառնալ հարցաքննվողի անվտանգությանը կամ վտանգել ցուցմունքի արժանահավատությունը, կամ երբ առկա է անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտություն դատարանը, կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, իրավասու է հարցաքննությունը կատարել տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով) (…)»:

Անչափահաս վկայի և տուժողի մասնակցությամբ հարցաքննությունների տեսաձայնագրման առաջնային նպատակներից է այն, որ դրանք դատավարության հետագա փուլերում, մասնավորապես՝ դատական քննության փուլում, փոխարինեն անչափահաս վկայի կամ տուժողի հարցաքննությանը, եթե, իհարկե, դա չի վտանգի արդարադատության շահը, և առկա է կողմերի համաձայնությունը:

Անհրաժեշտ է նշել, որ ՔԴՕ-ն պետք է պարունակի այնպիսի նորմեր, որոնք վերը նշված միջազգային փաստաթղթերում ներկայացված պահանջները կիրառելու հնարավորություն ունենան բոլոր անչափահաս տուժողների նկատմամբ, իսկ սեռական հանցագործության զոհ անչափահաս երեխաների համար այդ պահանջները լինեն ոչ թե հայեցողական, այլ պարտադիր: Այսինքն՝ սեռական հանցագործության զոհ անչափահաս երեխաների մասնակցությամբ քրեական գործի քննության ընթացքում երեխաների հետ տարվող ցանկացած գործողություն իրականացնելիս հոգեբանի մասնակցությունը, երեխայի՝ դատական նիստին ներկա չգտնվելու իրավունքը, հարցաքննությունը և այլ քննչական գործողությունները պետք է պարտադիր իրականացվեն հատուկ վերապատրաստում անցած քննիչների կողմից, տեսաձայնագրառվեն՝ հետագայում դատարանում որպես ապացույց օգտագործելու նպատակով:

Այսպիսով՝ պետք է փաստել, որ թեպետ անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության վերաբերյալ ՀՀ ՔԴՕ-ն առանձին գլուխ չի պարունակում, սակայն առկա են որոշակի իրավական դրույթներ, որոնք հնարավորություն են տալիս վարույթն իրականացնող մարմնին, հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, պոզիտիվ իմաստով տարբերակված մոտեցում ցուցաբերելու անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ կատարվող քննչական և դատավարական գործողություններին:

НЕКОТОРЫЕ ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ЗАЩИТЫ ПРАВ МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОГО И УГОЛОВНОГО СУДОПРОИЗВОДСТВА И ЗАКОННЫХ ИНТЕРЕСОВ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ ПОСТРАДАВШИХ

Нелли Агабабян
Преподаватель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

Статья посвящается изучению методов защиты прав и законных интересов несовершеннолетнего пострадавшего, представлены основные вопросы, касающиеся наилучших интересов ребенка и возможностей преодоления формальных требований производства, а также необходимости судопроизводственных структур защиты, исхо-

дя из физической и психологической безопасности несовершеннолетних, ставших жертвами сексуальных преступлений. Правосудие в отношении несовершеннолетних – это основной компонент процесса национального развития каждой страны. В статье подробно изучены урегулирования, существующие в проекте действующего уголовного судопроизводства и нового законодательства, критерии, установленные в международных правовых документах, а также законодательный опыт, модели и судебные постановления зарубежных стран.

В рамках затронутых вопросов в результате исследований было выявлено, что в Кодексе уголовного судопроизводства РА, с точки зрения защиты прав несовершеннолетних пострадавших имеются пробелы и недостатки, поскольку система правосудия в стране не учитывает наличие требований и особых задач несовершеннолетних пострадавших по уголовному делу.

В результате исследования сделано заключение, что Кодекс уголовного судопроизводства РА должен включать в себя нормы, представленные в международных документах, применяемые в отношении несовершеннолетних пострадавших, а если речь идет о несовершеннолетних, являющихся жертвами сексуальных преступлений, то эти требования должны быть не выборочными, а обязательными.

SOME OF THE MAIN ISSUES OF PROTECTION OF THE RIGHTS OF INTERNATIONAL LEGAL AND CRIMINAL JUSTICE AND THE LEGAL INTERESTS OF MINORS AFFECTED

Nelly Aghababyan
Lecturer of Chair of Criminal Processing and Criminalistics of YSU

The article is devoted to the protection of the rights and legal interests of the victim's minor, where the main issues concerning the best interests of the child and the possibilities of overcoming the formal requirements of production, as well as the need for legal protection structures based on the physical and psychological safety of minors who are victims of sexual crimes are presented. Juvenile justice is the main

component of each country's national development process. The article examines in detail the settlements existing in the draft of the existing criminal procedure and the new legislation, the criteria established in international legal documents, as well as legislative experience, models and judicial decisions of foreign countries.

In the framework of the issues raised, as a result of the research, it was revealed that the Code of Criminal Procedure of the Republic of Armenia, from the point of view of protecting the rights of juvenile victims, has gaps and shortcomings, since the justice system in the country does not take into account the requirements and special tasks of juvenile victims in the criminal case.

As a result of the study, it was concluded that the Code of Criminal Procedure of the Republic of Armenia should include the norms presented in international documents applicable to minors affected, and if we are talking about minors who are victims of sexual crimes, these requirements should not be selective but mandatory.

Բանալի բառեր – *անչափահաս, տուժող, երեխա, լավագույն շահ, հարցաքննություն, սեռական հանցագործության զոհ, վարույթ:*
Ключевые слова: *несовершеннолетний, пострадавший, ребенок, наилучший интерес, допрос, жертва сексуального преступления, производство.*
Keywords: *minor, victim, child, best interest, interrogation, victim of a sexual offense, proceedings.*

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆՈՐՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Արման Սարգսյան
Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Ցանկացած իրավական բաղադրատարր ունեցող ինտեգրացիոն գործընթացի հաջողություն մեծապես կախված է դրա շրջանակում ստեղծված իրավանորմերի կիրառման գործուն մեխանիզմների առկայությունից: Սա այն հիմնական գրավականն է, որը թույլ է տալիս ապահովել ինտեգրացիոն կազմավորման առջև հռչակված խնդիրների և նպատակների ձեռքբերումը և ինտեգրացիոն գործընթացի շարունակականությունը: Դրա մասին է վկայում Եվրոպական միության հաջող փորձը, որտեղ վերպետական իրավանորմերի կենսագործումն ինտեգրացիոն գործընթացների հենց մեկնակետից ապահովվեց գործուն արտադատական և դատական մեխանիզմներով:

Քննարկվող համատեքստում հետաքրքրական է հատկապես Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ նաև Միություն) օրինակը, քանի որ Հայաստանի Հանրապետությունը ևս այս ինտեգրացիոն կազմավորման անդամ է և շահագրգռված է այդ գործընթացի հաջողությամբ ու արդյունավետությամբ, ինչը մեծապես կախված է այդ կառույցի շրջանակում ստեղծված իրավանորմերի կիրառումից: Ունենալով ստեղծման և գործունեության բավականին կարճատև ժամանակաշրջան՝ Եվրասիական տնտեսական միությունն իրավական տիրույթում հասցրել է դառնալ գիտական ուսումնասիրությունների և խորհրդածությունների ուշագրավ օբյեկտ: Թերևս, առավել քիչ ուսումնասիրված իրավական ասպեկտներից են Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի կիրառման հետ կապված հիմնահարցերը, որոնց՝ ժամանակին ուսումնասիրումը և խնդիրների վեր հանումը թույլ կտան որոշակիացնել Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի կիրառման գործընթացում առկա բացթողումները և վաղօրոք վերացնել ինտեգրման գործընթացների ճանապարհին առկա խոչընդոտները:

Որքան էլ Եվրասիական տնտեսական միությունը որակվի որպես վերպետական հատկանիշներով օժտված կառույց, Եվրասիական տնտեսական միության շրջանակում առաջացող հասարակական հարաբերությունների իրավակարգավորումը չի կարող իրականացվել միայն վերացական մակարդակում՝ սոսկ իրավանորմերի ամրագրմամբ, այլ այն պետք է տեղի ունենա ստույգ հասարակական հարաբերությունների մակարդակում, այսինքն՝ այդ նորմերի կիրառմամբ, ինչի համար անհրաժեշտ են գործուն իրավական կառուցակարգեր:

Խոսելով Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի կիրառման մեխանիզմների մասին՝ հարկավոր է առաջին հերթին անդրադառնալ այն հարցին, թե ինչ մոտեցում է գործում այս կառույցի շրջանակում վերպետական իրավանորմերի միատեսակ ընկալման և միատեսակ կիրառման հարցում: Ինչու ենք տարանջատում իրարից այս երկու գործողությունները, քանի որ իրավանորմերի միատեսակ ընկալումը ամենևին չի ենթադրում դրանց միատեսակ կիրառում, և այս հարցը գտնվում է Եվրասիական տնտեսական միության առջև անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների տիրույթում: Իրավանորմերի կիրառման մեխանիզմների շարքում այս երկու իրավական կոմպոնենտների առկայությունը կարևոր է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում իրավական որոշակիության սկզբունքի ապահովման և իրավական միատեսակ կանոնակարգված միջավայրի ստեղծման տեսանկյունից, որպեսզի բացառվի միևնույն իրավանորմի տարաբնույթ ընկալումն անդամ պետություններում, և ապահովվի դրա միատեսակ կիրառությունը: Ինչպես ցույց է տալիս քննարկվող հարցի վերաբերյալ միջազգային փորձը, վերպետական իրավունքի նորմերի մեկնաբանման բացառիկ իրավունքը վերապահվում է կազմակերպության բարձրագույն դատական մարմնին, որի ընդունած պարզաբանող որոշումները հասցեատերերի համար ունեն համընդհանուր պարտադիր բնույթ[1]:

Եվրասիական տնտեսական միության բարձրագույն դատական մարմինը Եվրասիական տնտեսական միության դատարանն է:

[1] Տե՛ս Article 31 of the Treaty establishing the European Coal and Steel Community, signed in Paris on 18 April 1951:

Դատարանի իրավական վիճակը սահմանված է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով և դրան կից թիվ 2 Հավելվածի տեսքով ընդունված Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտով /Ստատուտ/: Վերջինիս համաձայն՝ Դատարանի գործունեության նպատակն անդամ պետությունների և Միության կողմից Պայմանագրի, Միության շրջանակում կնքված միջազգային պայմանագրերի, Միության կողմից երրորդ պետությունների հետ կնքվող միջազգային պայմանագրերի և Միության որոշումների միատեսակ կիրառման ապահովումն է[1]:

Եվրասիական տնտեսական միության հիմնադիր պայմանագրով ևս որդեգրվել է կազմակերպության բարձրագույն դատական մարմնին Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերը մեկնաբանելու իրավունքով օժտման մոտեցումը: Մասնավորապես, Ստատուտի 46-րդ կանոնի համաձայն, Դատարանը անդամ պետությունների դիմումի հիման վրա իրականացնում է Պայմանագրի, Միության շրջանակում կնքված միջազգային պայմանագրերի և Միության մարմինների որոշումների մեկնաբանում[2]: Նշված իրավական ակտերի նորմերի մեկնաբանման արդյունքում ընդունվող որոշումները, ինչպես բխում է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի թիվ 2 Հավելվածի 47-րդ կետից, ունեն խորհրդատվական բնույթ[3]: Սա նշանակում է, որ Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերի մեկնաբանմանն ուղղված որոշումները պարտադիր չեն անդամ պետությունների համար և կրում են սոսկ կողմնորոշիչ բնույթ: Նման կարգավորումը, անշուշտ, չի կարող ծառայել այն նպատակին, որը դրված է Դատարանի առջև: Եվրասիական տնտեսական միության հիմնադրման մասին պայմանագիրը մի կողմից Դատարանի առաքելությունն է

[1] Տե՛ս Приложение N 2, Глава IV, пункт 2 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):

[2] Տե՛ս Приложение N 2, Глава IV, пункт 46 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014),
(http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163855/):

[3] Տե՛ս Приложение N 2, Глава IV, пункт 47 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014),
(http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163855/):

հռչակում անդամ պետությունների և Միության կողմից Պայմանագրի, Միության շրջանակում կնքված միջազգային պայմանագրերի, Միության կողմից երրորդ պետությունների հետ կնքվող միջազգային պայմանագրերի և Միության որոշումների միատեսակ կիրառման ապահովումը, իսկ մյուս կողմից Դատարանին չի օժտում նշված իրավական ակտերի մեկնաբանման արդյունքում պարտադիր որոշումներ կրելու իրավասությամբ: Նման իրավասության առկայությունը շատ կարևոր է Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերի կիրառման միասնականության ապահովման հարցում, քանի որ դա պետք է լինի այն լծակը, որի միջոցով պետք է զսպվեն ինտեգրացիոն գործընթացների ընթացքում անդամ պետությունների իշխանության տարբեր մարմինների կողմից Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի տարաբնույթ մեկնաբանման հնարավոր նկրտումները: Դատարանի նման պարտադիր իրավասության բացակայությունը կարող է էական խոչընդոտ լինել ինտեգրացիոն կազմակերպության առջև հռչակված խնդիրների և նպատակների իրականացման համար: Դրա մասին է վկայում Եվրոպական միության ինտեգրման հաջող փորձը, որտեղ ինտեգրման գործընթացների գրեթե սկզբնական շրջանից վերպետական իրավանորմերի մեկնաբանման բացառիկ իրավունքը, չնայած անդամ պետությունների բարձրագույն դատական մարմինների նկրտումներին, հաջողվեց վերապահել մեկ սուբյեկտի՝ Եվրոպական միության արդարադատության դատարանին[1]: Ընդ որում՝ Եվրոպական միության դեպքում նրա հիմնադիր պայմանագրերն ընդհանրապես լռում էին, թե որ սուբյեկտը պետք է իրականացնի հիմնադիր պայմանագրերի և ի կատարումն դրա ընդունված օրենսդրական ակտերի մեկնաբանումը, և այս իրավական բացը լրացվեց ոչ թե հիմնադիր պայմանագրերի մեջ լրացում կատարելու տարբերակով, այլ հիմնադիր պայմանագրի որոշ դրույթներ հիմք ընդունելով Եվրոպական միության բարձրագույն դատական մարմինն իրեն վերապահեց այդ բացառիկ իրավունքը: Հենց այս հանգամանքն արմատական դեր խաղաց հետագայում Եվրոպական միության իրավական համակարգի հենքը հանդիսացող մի շարք կարևոր իրավա-

[1] Տե՛ս Case 26/62 of European Court of Justice, *Gend en Loos v Nederlandse Administratie der Belastingen* (1963):

կարգավորումների կյանքի կոչման և այդ համակարգի ամրապնդման հարցում:

Ավելին՝ Եվրասիական տնտեսական միության դեպքում իրավիճակն ավելի է վատթարանում Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի թիվ 2 Հավելվածի 47-րդ կետի հիման վրա անդամ պետությունների կողմից միջազգային պայմանագրերի համատեղ մեկնաբանում իրականացնելու իրավունքի առկայության պայմաններում, ինչը նշանակում է, որ դա կարող է վերաբերել նաև Եվրասիական տնտեսական միության հիմնադրման մասին պայմանագրի դրույթների մեկնաբանմանը, քանի որ դա անդամ պետությունների համար միջազգային պայմանագիր է[1]: Այս հանգամանքն էլ ավելի է խորացնում Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի միատեսակ ընկալման հարցում իրավական որոշակիությունը: Ճիշտ է, նշված իրավանորմը նախատեսում է անդամ պետությունների կողմից համատեղ մեկնաբանման իրավունք, սակայն ոչ հստակեցնում է այդ մեկնաբանման արդյունքում ընդունված պարզաբանող ակտի իրավական բնույթը, այսինքն՝ որքանով է այն պարտադիր անդամ պետությունների համար, ոչ էլ հստակեցնում է նման մեկնաբանում իրականացնելու մեխանիզմները: Անշուշտ, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները չեն կարող Եվրասիական տնտեսական միության ինտեգրման գործընթացների խթանիչ այն հիմնական ազդակը լինել, որը պետք է լույս սփռի այս կառույցի շրջանակում ստեղծված իրավանորմերի ընկալման հարցում, քանի որ նրանք մարմնավորում են ոչ թե վերպետական շահը, այլ ներպետական շահը և միշտ կաշկանդված են նման պարզաբանումներ տալու հարցում: Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի մեկնաբանման բացառիկ իրավունքն աներկբայորեն պետք է վերապահվի մի մարմնի, որն ինչպես իր ձևավորման կարգով, այնպես էլ իր իրավական վիճակով անկախ է և բացառապես շահագրգռված է վերպետական շահերի արտահայտմամբ: Նման մարմին կարող է լինել միայն Եվ-

[1] Տե՛ս Приложение N 2, глава IV, пункт 47 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014), (http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163855/):

րասիական տնտեսական միության արդարադատության դատարանը:

Եվրասիական տնտեսական միության հիմնադրման մասին պայմանագրի 112-րդ հոդվածի համաձայն՝ դրա մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով[1]: Սա ևս մեկ անգամ վկայում է այն հանգամանքի մասին, որ Եվրասիական տնտեսական միության հիմնադրման մասին պայմանագիրը կերտողներն ի սկզբանե չեն ցանկացել այս կառույցի մարմիններին փոխանցել Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի մեկնաբանման իրավունքը: Այս ինտեգրացիոն գործընթացների ապագան վտանգող իրավական բացի լրացնողը պետք է լինել հենց Եվրասիական տնտեսական միության արդարադատության դատարանը, որը, հետևելով Եվրոպական միության օրինակին, պետք է Եվրասիական տնտեսական միության հիմնադիր պայմանագրի դրույթների լույսի ներքո բխեցնի իր այդ բացառիկ իրավունքը:

Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերի հիմնական կիրառումն առավելապես թողնված է անդամ պետությունների ներպետական ընթացակարգերին: Դրանց հարկադիր իրագործումն ապահովող հիմնական սուբյեկտներն անդամ պետությունների դատական մարմիններն են: Ընդ որում՝ նշվածը վերաբերում է անդամ պետությունների բոլոր դատական մարմիններին՝ անկախ անդամ պետության դատական մարմինների համակարգում այս կամ այն մարմնի զբաղեցրած տեղից: Որպես Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի հիմնական կիրառողներ՝ անդամ պետությունների դատական մարմինները պետք է մշտական իրավական հաղորդակցության հնարավորություն ունենա Եվրասիական տնտեսական միության դատարանի հետ, ինչը կնպաստի Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի կիրառման արդյունավետության բարձրացմանը:

Եվրոպական միության իրավական համակարգում այդ կապն ապահովվում է նախնական կարգավորման ընթացակարգի միջո-

[1] Տե՛ս Раздел XXVII, статья 112 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014),
(http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163855/):

ցով, որը թույլ է տալիս անդամ պետության դատական մարմնին Եվրոպական միության իրավունքի նորմի կիրառմանը վերաբերող և դրա մեկնաբանման անհրաժեշտություն առաջացնող գործերի քննության ընթացքում կասեցնել դրա վարույթը և համապատասխան հարցմամբ դիմել Եվրոպական միության արդարադատության դատարանին: Ճիշտ է, համանման հարցման հնարավորություն նախատեսված է նաև Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով, սակայն ի տարբերություն Եվրոպական միության՝ այստեղ հարցման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը որոշվում է անդամ պետության կողմից և կարող է չներառել դատական մարմիններին, որոնք իրենց ամենօրյա գործունեության ընթացքում կարող են առնչվել Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի կիրառման հետ: Նման հայեցողական մոտեցումն անդամ պետություններին ընձեռում է ազատություն հարցումը ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը որոշելու հարցում և սպառնալիք է առաջացնում Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի հիմնական կիրառողներին Դատարանի հետ իրավական հաղորդակցության հնարավորությունից մեկուսացված մնալու համար: Իրերի նման վիճակն ամենևին չի ծառայի Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերի միասնական կիրառման նպատակին:

Այս խնդիրն ի սկզբանե պետք է կարգավորվեր Եվրասիական տնտեսական միության հիմնադիր պայմանագրով, և ի վերուստ ապահովվեր դատական մարմինների քննարկվող իրավունքը՝ Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով: Ընդ որում՝ հարկավոր էր ոչ միայն հիմնադիր պայմանագրերի մակարդակով կարգավորել հարցում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, այլև ամրագրել հստակ ընթացակարգային կարգավորումներ հարցում ներկայացնելու կանոնների և հարցումը ներկայացնելու պարտադիր դեպքերի վերաբերյալ:

Եվրոպական միության իրավանորմերի կիրառման հետ կապված հաջորդ հիմնախնդիրն այդ նորմերի այն հասցեատերերի իրավագիտակցության ցածր մակարդակն է, որոնց համար այդ նորմերն առաջացնում են իրավունքներ և արտոնություններ: Այդ մասին է վկայում Եվրասիական տնտեսական միության արդարադատութ-

յան դատարան և անդամ պետությունների դատական մարմիններ մասնավոր իրավունքի սուբյեկտների կողմից ներկայացվող գանգատների ցածր քանակը: Սա ամենևին չի նշանակում, որ գործնական կյանքում պարզապես չեն ոտնահարվում Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի հասցեատերերին ընձեռված իրավունքները, այլ պարզապես ցածր իրավագիտակցության պատճառով այդ անձինք չեն գիտակցում իրենց տրված արտոնության առկայությունը, բովանդակությունն ու հնարավոր պաշտպանության եղանակները: Ցանկացած իրավակարգի ամրապնդման հարցում շատ կարևոր գործոն է այդ իրավակարգի շահառուների իրավագիտակցության մակարդակը, ինչը թույլ է տալիս ավելի արդյունավետ ապահովել իրավանորմերի կիրառման գործընթացը: Այս առումով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի շահառուների իրավագիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչն ինքնին կբարձրացնի իրավանորմերի կիրառման արդյունավետությունը և կնպաստի Եվրասիական տնտեսական միության իրավակարգի ամրապնդմանը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, պետք է առանձնացնենք Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի կիրառման հետ կապված այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են Եվրասիական տնտեսական միության արդարադատության դատարանի միության իրավանորմերի մեկնաբանմանը վերաբերող պարզաբանող որոշումների ոչ պարտադիր բնույթը, Եվրասիական տնտեսական միության արդարադատության դատարանի և անդամ պետությունների դատական մարմինների իրավական հաղորդակցության վերպետական իրավական մեխանիզմների բացակայությունը և Եվրասիական տնտեսական միության իրավանորմերի շահառուների իրավագիտակցության ցածր մակարդակը, որոնց՝ ժամանակին կարգավորումը կարևոր նշանակություն ունի Եվրասիական տնտեսական միության ինտեգրացիոն գործընթացների արդյունավետության բարձրացման և հռչակված խնդիրների ու նպատակների ձեռքբերման համար:

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ПРАВОВЫХ НОРМ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА

Арман Саргсян
доцент кафедры европейского и международного права ЕГУ, кандидат юридических наук

Статья посвящена исследованию проблем реализации правовых норм Евразийского экономического союза (ЕАЭС). В статье выделяются три основные проблемы на пути реализации правовых положений ЕАЭС: необязательный характер решения судов ЕАЭС относительно толкования законодательства ЕАЭС, отсутствие внутренних механизмов правовой связи между Судом ЕАЭС и судами государств-членов ЕАЭС и низкий уровень правосознания бенефициаров права ЕАЭС. В заключение автор отмечает, что если вовремя не устранить указанные проблемы, то это может стать серьезным препятствием на пути интеграции в ЕАЭС.

MODERN PROBLEMS OF EURASIAN ECONOMIC UNION LEGAL NORMS APPLICATION

Arman Sargsyan
Docent at YSU Chair of European and International Law, Candidate of Legal Sciences

The article is dedicated to the investigation of problems of Eurasian Economic Union /EEU/ legal provisions implementation. The author separates three main problems on the way of EEU legal provisions implementation, namely non compulsory nature of EEU Courts' decision concerning the interpretation of EEU law, the absence of internal mechanisms of legal communication between EEU Court and the courts of EEU member states and the low level of legal conscious of EEU law shareholders. As a conclusion the author mentions that non elimination in time of the mentioned problems could be a serious obstacle on the way of EEU integration.

Բանալի բառեր – *ԵՏՄ իրավունքի նորմերի կիրառում, ԵՏՄ իրավունքի նորմերի մեկնաբանում, ԵՏՄ դատարան, ԵՏՄ անդամ պետությունների դատական մարմիններ, իրավագիտակցություն:*
Ключевые слова: *реализация правовых положений ЕАЭС, толкование правовых положений ЕАЭС, суд ЕАЭС, судебные органы государств-членов ЕАЭС, правосознание*.
Key words: *Implementation of EEU legal provisions, Interpretation of EEU legal provisions, EEU Court, Judicial bodies of EEU member states, Legal conscious*

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2(2) 2018

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Հ. Ասլանյանի

Տպագրված է «Քոփի փրինթ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 02.05.2019:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 29:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am